Այսպիսով, ըստ էության, դեռևս մինչև Կենտրոնական Ասիայի թյուրքական ցեղերի զանգվածային տեղաշարժը դեպի Փոքր Ասիա, այդ թվում՝ նաև Արևմտյան Հայաստան, այդ գործը սկսել էին վաչկատուն քրդական ցեղերը: Արդեն X դարում Ջազիրայում, Ատրպատականում, Աղվանքում և Մեծ Հայ-

---

[24] Տեր-Ղևոնդյան. 1965, 191:
[25] Տեր-Ղևոնդյան. 1965, 191:
[26] Տեր-Ղևոնդյան. 1965, 193:
[27] Փոլադյան. 1999, 56:
[28] Տեր-Ղևոնդյան. 1965, 191:

քում ստեղծվել էին քրդական ամիրայական տներ: Այդ տներից առավել հայտնի էին Հասանվայհիների իշխանությունը (959–1095), որի հիմնադիրն էր քուրդ հզոր ավատատեր, Բարզիքանի ցեղի առաջնորդ Հասանվայհ իբն ալ-Քուրդին[29]: Առավել մեծ հզորության տեր էր Մարվանյանների՝ Բանու Մարվան ամիրայությունը (984–1083), որի տիրույթները տարածվում էին Դիարբեքիրի շրջանից մինչև Ջազիրա և Քերմանշահից մինչև Շահրեզուր[30]: Այդ ամիրայության կենտրոնը Մայաֆարեքինն էր (պատմական Նփրկերտը): Մեծ Հայքի հարավարևմտյան մասում մարվանյանները հիմնեցին մի ամիրայություն, որի հիմնադիրն էր Բաթը (Բաթ Աբու Աբդուլլահ իբն Դուսթաք ալ-Խարբութի): Այդ ամիրայության տիրապետությունը տարածվեց Արճեշի, Խլաթի, Նփրկերտի, Մանազկերտի, Աղձնիքի և Վանա լճի հյուսիսային ու արևմտյան կողմի գավառների վրա: 983 թ. մարվանյանները նվաճեցին նաև Ամիդը (Դիարբեքիր), Մծբինը (Նիսիբին) և Մոսուլը: Բաթը ասպատակեց նույնիսկ բյուզանդացիների ձեռքում գտնվող Տարոնը, կողոպտեց, կոտորեց ամբողջ գավառն ու ավարի մատնեց Մուշ քաղաքը[31]:

X դարի վերջերին ծնունդ է առնում Շադդադյանների ամիրայությունը (951–1088): Հիմնավորվելով Դվինում և Գանձակում՝ Շադդադյանները վերահսկում էին ողջ Հարավային Կովկասը, մասնավորապես՝ Արաքս և Քուր գետերի միջև ընկած տարածքը, ինչպես նաև Անատոլիայի, Իրանի և Հյուսիսային Իրաքի սահմանամերձ ողջ շրջանը: Այդ դինաստիայի մեկ այլ ճյուղը ընդհուպ մինչև XII դարի վերջը վերահսկում էր Անի քաղաքի շրջակայքը և Հայաստանի սահմանամերձ գոտին[32]:

Քրդերի ներթափանցումը Հայաստան

Քրդերի՝ դյուրին, անաղմուկ ու խաղաղ ներթափանցմանը Հայաստան, այսպիսով նպաստեց այն հանգամանքը, որ արաբական ամիրայական տները չկարողացան պահպանել իրենց գերիշխանությունը և նրանց տիրույթներն անցան ոչ թե երկրի բնիկ տերերին, այլ քրդական տարրերին: «Այն ճեղքվածքը,– գրում է Ա. Տեր-Ղևոնդյանը,– որ բաց էին արել արաբական ամիրայությունները Հայաստանում, նպաստեց քրդերի դյուրին ներթափանցմանը: Արաբ ամիրայական տները չկարողացան պահպանել իրենց գոյությունը, բայց նրանց տիրույթները ոչ թե վերանվաճվեցին երկրի բնիկ տերերի կողմից, այլ անցան քրդական տարրերի ձեռքը, որը իսլամացած և մասամբ արաբացած էր: Երկրի բնիկ իշխանները վերանվաճման որոշ փորձեր կատարեցին, բայց մեծ հաջողություն չունեցան, քանի որ Հայոց թագավորության մեջ չկար կենտրոնական ուժեղ իշխանություն»[33]:

Հայաստանի քրդական ամիրայություններն ու կողմնապետություններն իրենց ներքին կյանքում անկախ էին: Ամիրներն օժտված էին ոչ միայն հարկային, այլև վարչական ու դատական ինքնավարության իրավունքներով:

[29] Minorsky. 1913, 512–513.
[30] Minorsky. 1913, 512–513.
[31] *Մարվանյան ամիրայության մասին տե՛ս* Amedroz. 1903, 123–131.
[32] Minorsky. 1953.
[33] *Տեր-Ղևոնդյան. 1965, 191:*

Նրանցից յուրաքանչյուրն ուներ իր արքունիքը, որը կենտրոնական արքունիքի մանրանկար պատճենն էր: Կենտրոնական կառավարության պաշտոնյաները մուտք չունեին ինքնավար այս շրջաններում: Ամիրներն ինքնուրույն դատում էին հանցագործներին, նույնիսկ մահվան վճիռ արձակում և կամ դատը հանձնում շարի դատաստանին, որին մասնակցում էին տվյալ վայրի մահմեդական բարձրաստիճան հոգևորականները՝ ղադու գլխավորությամբ: Թովմա Մեծոփեցին պատմում է, որ ամիրայությունների կյանքում մեծ դեր էին կատարում նրանց երկրամասերում տեղակայված քոչվորական ցեղապետերը և շրջանների կառավարիչները[34]*:*

Ուշագրավ է, որ միջնադարյան աղբյուրներում վերոհիշյալ ամիրայությունները համարվում են ոչ թե քրդական, այլ արաբական[35]*: Անդրադառնալով այդ հարցին՝ Ա. Տեր-Ղևոնդյանը գրում է՝ քրդական ծագում ունեցող ամիրայական տները, որոնք գոյություն ունեին Հայաստանում վերջին Բագրատունիների օրոք, վերջին հաշվով արաբական ամիրայություններ էին: Նրանց օգտագործած գրական լեզուն արաբերենն էր: «Հայաստանի հողի վրա քուրդն ու արաբը, ինչպես նաև այլ մահմեդական տարրերը հանդես էին գալիս որպես միաձույլ ամբողջություն, ընդհանուր ճակատ կազմելով երկրի բնիկ հայ ազգաբնակչության դեմ: Եվ հայերենում «տաճիկ» արդեն նշանակում էր ոչ միայն «արաբ», այլև «մահմեդական» առհասարակ»*[36]*:*

Այդ նույն հարցի վերաբերյալ Ա. Փոլադյանը հայտնում է հետևյալ տեսակետը. «Քրդական այդ իշխանությունները իրենց կառուցվածքով, ինստիտուտներով և նկարագրով, անկասկած, մահմեդական-ժառանգական իշխանություններ էին, որոնք սերտորեն կապված էին արաբամահմեդական աշխարհի հետ: Արաբերենը հանդիսանում էր այդ իշխանությունների պաշտոնական և հաղորդակցության հիմնական լեզուն»[37]*:*

Ամիրայությունները, որոնք, ըստ էության, ավատատիրական ժամանակավոր միավորումներ էին, շլացուցիչ հաջողությունների հետ մեկտեղ ի վիճակի չէին երկար կյանք ունենալու: Ներքին հակասությունների, անվերջանալի և հյուծիչ երկպառակտությունների ու արտաքին հարձակումների հետևանքով աստիճանաբար թուլանում, անկում էին ապրում և, ի վերջո, մեկը մյուսի հետևից դադարում գոյություն ունենալուց:

Եզրակացություն

XI–XV դդ. շարունակվում էին քրդական ցեղերի գաղթային շարժումները, այդ թվում նաև դեպի հյուսիս՝ Հայաստանի կողմերը: Դրանք առավելապես պայմանավորված էին Մոսուլի, Դիարբեքիրի ու քրդաբնակ այլ շրջաններում տեղի ունեցող անընդհատ պատերազմներով, ավերածություններով և բնակչության սրածությամբ[38]*: Քրդական ցեղերը Տավրոսյան լեռնաշղթայի կողմերից հետզհետե տարածվում էին հայկական նահանգներում: Ի դեպ, XII դա-*

---

[34] *Մ ե ծ ո փ ե ց ի. 1999, XXVI:*

[35] J a m e s. 2006.

[36] *Տ ե ր-Ղ և ո ն դ յ ա ն. 1965, 192:*

[37] *Փ ո լ ա դ յ ա ն. 1999, 250:*

[38] B r u i n e s s e n. 1992, 137.

ում առաջին անգամ «Քրդստան» անվանումը, որպես աշխարհագրական անուն և ազգագրական միավոր, շրջանառության մեջ է մտել: Մատթեոս Ուռհայեցու կողմից «Քրդստան» երկրանվանման հիշատակումը համարվում է ամենահինը ողջ միջնադարյան բազմալեզու մատենագրության մեջ[39]*: Հետագայում այդ տերմինը հիշատակվում է XIV դարի պարսիկ պատմիչ Համդուլլահ Մոստուֆիի կողմից նրա «Նուզհաթ ալ-Քուլուբ» աշխատության մեջ*[40]*, ինչպես նաև նույն դարի պատմիչ Ռաշիդ ադ-դին Ֆազլուլլահ Համադանիի «Ջավան ութ-թամրիխ» աշխատությունում:*

Այդ բոլորով հանդերձ, ընդհուպ մինչև XVI դարը Հայաստանի տարածքում զանգվածային քուրդ բնակչություն չի եղել. բացակայում են տեղեկություններ ինչպես հայկական, այնպես էլ օտար աղբյուրներում: Այդ հարցը հետաքրքրել է նաև Ն. Ադոնցին, որն իր մանրակրկիտ պրպտումներից հետո հանգել է հետևյալ եզրակացության. «Բացառությամբ Վանի և Բիթլիսի (քրդական – Վ. Բ.) իշխողների, որոնք գալիս են Թամուրի (Լենկ-Թեմուրի – Վ. Բ.) ժամանակներից, մնացյալ քրդական տիրույթները Հայաստանի նշված շրջաններում՝ Եփրատի երկայնքով և Տիգրիսի ակունքներում առաջացել են ավելի ուշ՝ թուրք-պարսկական պատերազմների ժամանակ XV–XVI դարերի սահմանագծին»[41]*:*

Վահան Բայբուրդյան – պ. գ. դ., պրոֆ. ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի Իրանի բաժնի առաջատար գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունները՝ Իրանի և Թուրքիայի պատմություն, հայագիտության հարցեր, Մերձավոր և Միջին Արևելքի երկրների պատմություն, քրդագիտություն, հայ գաղթօջախների պատմություն, միջազգային հարաբերություններ: Հեղինակ է 13 մենագրության և շուրջ 200 հոդվածի: vbayburdyan1933@gmail.com

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ադոնց Ն. 2012, Երկեր, հ. Զ (լրացուցիչ հատոր): Հրապարակախոսություն, Երևան, ԵՊՀ հրատ., 540 էջ:

Դավրիժեցի Ա. 1990, Գիրք պատմութեանց, աշխատ.՝ Լ. Ա. Խանլարյանի, Երևան, ՀԳԱ հրատ., 592 էջ:

Զաքարեայ Սարկաւագի Պատմագրութիւն. 1870, հ. Ա, ի Վաղարշապատ, ի տպ. սրբոց կաթողիկէ էջմիածնի, 87 էջ:

Թովմա Մեծոփեցի. 1999, Պատմագրություն (աշխատ.՝ Լևոն Խաչիկյանի), Երևան, «Մագաղաթ», 310 էջ:

Մատթեոս Ուռհայեցի. 1991, Ժամանակագրություն, աշխարհաբար թարգմ. և ծանոթ. Հր. Բարթիկյանի, Երևան, 540 էջ:

Մարգարյան Հ. 1992, Զաքարյանների ծագման ավանդությունը միջնադարյան հայ պատմագրության մեջ. – ՊԲՀ, № 2–3, էջ 146–149:

Մարգարյան Հ. 2019, Քրդերը XII–XIII դարերի հայ մատենագրության մեջ. – Քրդագիտական հետազոտություններ, հ. I, Երևան, ԵՊՀ հրատ., էջ 244–245:

[39] *Ուռհայեցի. 1991, 68–69, 156–157:*

[40] Никитин. 1964, 72.

[41] *Ադոնց. 2012, 193:*

Փոլադյան Ա. 1999, Քրդերը Աբբասյան խալիֆայության ժամանակաշրջանում (X–XI դդ.), Երևան, «Զանգակ-97», 302 էջ:

Տեր-Ղևոնդյան Ա. 1965, Արաբական ամիրայությունները Բագրատունյաց Հայաստանում, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 311 էջ:

Лазарев М. С., Мгои Ш. Х., Васильева Е. И., Гасратян М. А., Жигалина О. И. 1999, История Курдистана. М., Ин-т востоковедения Рос. акад. наук, 261 с.

Поладян А. 1987, Курды в VII–X веках по арабским источникам. Ереван, Изд. АН АрмССР, 129 с.

Никитин В. 1964, Курды. М., «Прогресс», 226 с.

Amedroz H. F. 1903, The Marwanid Dynasty at Mayyafariqin in the Tenth and Eleventh Centuries A. D.- "Journal of the Royal Asiatic Society", January. Royal Asiatic Society, pp. 123–131.

Anthony D. S. 1991, The Nation: Invented, imagined, Reconstructed?.- "Millenium Journal of international Studies", vol. 20, no. 3, pp. 353–368.

Asatrian G. 2003, Prologomena to the Study of Kurds. – "Iran and Caucasus", vol. 13, pp. 1–58.

Bruinessen M. Van. 1992, Agha, Shaikh and State: The Social and Political Structures of Kurdistan. London, Zed Books, 373 p.

Eppel M. 2016, A People without a State. The Kurds from the Rise of Islam to the dawn of Nationalism. Austin, University of Texas Press, 188 p.

James B. 2006, Uses and Values of the Term Kurd in the Arabic Medieval Literary Sources. Seminar of the American University of Beirut (AUB), Center for Arab and Middle Eastern Studies (CAMES), April. Beyrouth, Lebanon.- http://halshs/archives-ourertesfr/halsis00350119.

Limbert J. 1968, The Origins and Appearance of the Kurds in Pre-Islamic Iran.- "Iranian Studies", vol. 1, no. 2, Cambridge University Press, pp. 41-51.

Minorsky V. 1913, Anazids. – "Encyclopaedia of Islam" (London), vol. I, pp. 512–513.

Minorsky V. 1940, Les origines des Kurdes.– "Actes du XX Congres International des Orientalistes" (ACIO). Bruxelles, S. 144–145.

Minorsky V. 1953, Studies in Caucasian History. London, Cambridge, 196 p.

Minorsky V. 1954, "Kurds". – "Encyclopaedia of Islam", 2 edition, vol. I. Leyden, pp. 1134–1135.

Ivanov V. 1940, The Gabri Dialect Spoken by the zoroastrians of Persia. Roma, Libreria di Scienze e Lettere, 164 p.

Ozoglu H. 2007, The Impact of Islam on Kurdish Idendity Formation in the Middle East. – "The Evolution of Kurdish Nationalism". Costa Mesa, Mazda Pub, 315 p.

Sharaf al-Din Bitlisi. 2005, The Sharafname, or the History of the Kurdish Nation, Book 1, Translation into English and commentaries by M. R. Irady. Costa Mesa.

Nöldeke Th. 1898, Kurdü und Kurden. In.: Beitrage zur alten Geschichte und Geographie für H. Kilepert. Berlin, S. 78–79.

Ibn-Hawqal, Abi Al-Qasim al-Nusuibi, Kitab Surat al ard. 1979, Beirut, pp. 239–241.

Ibn al-Athir, Al Kamil fi al-Ta'rikk, vol. 6, Beirut, 1966, pp. 506–507.

НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ ИСТОРИИ КУРДОВ И КУРДИСТАНА СРЕДНЕВЕКОВОЙ ЭПОХИ В КРИТИЧЕСКОМ СВЕТЕ

ВААН БАЙБУРТЯН

Р е з ю м е

Ключевые слова: курды, халифат, востоковед, Ураеци, Тигрис, Армения.

История курдов средневековой эпохи изучена сравнительно плохо. Основная причина этого – недостаточность или почти полное отсутствие источников. Средневековые арабские источники приводят данные об истории курдов только начиная с эпохи Омеядского халифата (661–750 гг.). По этому вопросу более ранние упоминания не дошли до нас, вероятно, по причине отсутствия. Из средневековых армянских авторов Маттеос Ураеци является первым автором, который в своем труде под названием «Хронология» упоминает этническое название «курд». В дальнейшем, начиная с XII века, этноним «курд» регулярно употребляется в армянских источниках.

В период раннего средневековья на территории Армении отсутствовали следы курдского населения. Только начиная с VIII века, когда начались миграционные движения курдских племен в разные части обширного арабского халифата, в числе разных направлений, начиная с X века, начались миграционные движения курдских племен также в северном направлении, то есть, в сторону Армении. Этот процесс продолжался и в дальнейшем, в течение последующих веков. Однако все же вплоть до XVI века на территории Армении отсутствовало массовое курдское население. Только в указанном столетии, благодаря прокурдской политике Османской империи, проникновение курдского населения в Западную Армению приняло массовый характер.

Ваан Байбуртян – д. и. н., проф., ведущий научный сотрудник отдела Ирана Института востоковедения НАН РА. Научные интересы: история Ирана и Турции, вопросы арменоведения, история стран Ближнего и Среднего Востока, курдоведение, история армянских поселений, международные отношения. Автор 13 монографий и около 200 статей.
vbayburdyan1933@gmail.com

Պատմաբանասիրական հանդես • Историко-филологический журнал • Historical and Philological Journal • 2023 № 2

SEVERAL ISSUES SHEDDING LIGHT ON THE HISTORY OF KURDS AND KURDISTAN IN THE MEDIEVAL PERIOD

VAHAN BAIBOURTIAN

S u m m a r y

Keywords: Kurds, Caliphate, orientalist, Urhaetsi, Tigris, Armenia.

The medieval period of the Kurdish people is relatively less studied. The main reason for this is the scarcity or almost complete absence of sources. The Arabic medieval sources referred to the history of kurds since the period of Umayyad Caliphate (661–750 CE). Earlier references, on this issue, have not come down to us, probably, due to their lack.

Among the medieval Armenian authors, Matteos Urhaetsi was the first to mention ethnic name "kurd" in his "Chronicle". In the future, beginning from the XII century, the ethnonym "kurd" was regularly used in the Armenian sources.

In the early Middle Ages, there were no traces of Kurdish population in the territory of Armenia. Only starting from the VIII century, when Kurdish tribes began to migrate to different parts of the vast Arab Caliphate, starting from the tenth century, Kurdish tribes, along with other directions, headed north, that is, towards Armenia.

This process continued in the consequent centuries. Nevertheless, the mass Kurdish population was nonexistent in the Armenian territory until the sixteenth century. Only due to pro-kurdish policy of the Ottoman Empire in the mentioned century, penetration of the Kurdish tribes into Western Armenia took on a mass character.

Vahan Baibourtian – Doctor of Historical Sciences, Professor, Leading Researcher at the Iran Department of the Institute of Oriental Studies of the National Academy of Sciences of the Republic of Armenia. Scientific interests: history of Iran and Turkey, issues of Armenian studies, history of Near and Middle Eastern countries, Kurdish studies, history of Armenian settlements, international relations. Author of 13 monographs and about 200 articles. vbayburdyan1933@gmail.com

ՀՏԴ : 947.925«1915»

Doi:10.54503/0135-0536-2023.2-65

ԱԴԱՆԱՅԻ ՆԱՀԱՆԳԻ ՀԱՅԵՐԻ 1915 Թ. ԲՆԱՋՆՋՈՒՄԸ ԵՎ ՈՒՆԵՁՐԿՈՒՄԸ*

ԱՆԻ ՈՍԿԱՆՅԱՆ

Բանալի բառեր՝ Հայոց ցեղասպանություն, Օսմանյան կայսրություն, Կիլիկիա, Ադանայի նահանգ, Օսմանյան իշխանություններ, երիտթուրքական կառավարություն, անհատական ու ազգապատկան գույք, բռնագաղթ, բնաջնջում, բռնագրավում:

Նախաբան

1908 թ. երիտթուրքական հեղաշրջումից հետո 1909 թ. Ադանայի կոտորածն օսմանյան իշխանությունների կողմից իրականացվելիք ծրագրի նախանշանը հանդիսացավ: Դեռևս իշխանություն պահպանած համիդեականները և երկրի քաղա-քական իրադրությանը տիրապետող «սահմանադրական» երիտթուրքերը հայերի նկատմամբ հերթական ոճրագործությունն իրականացրեցին[1]:

Ադանայի կոտորածը կազմակերպվել և իրականացվել է միաժամանակ և՛ հին, և՛ նոր վարչակազմերի կողմից: Աբդուլ Համիդի վարչախումբն այդ փաստն արդեն իսկ հաստատել էր 1890-ական թվականների հայերի զանգվածային կոտորածներով, իսկ երիտթուրքերի կառավարությունը դա ապացուցում է Սալոնիկի 1911 թ. գաղտնի ժողովում իր ընդունած ցեղասպանական ծրագրով և 1915 թ. դրա իրականացումով[2]:

Ցեղասպանության նախապատրաստություն

1914 թ. հունվարից Օսմանյան կայսրության Ներքին գործերի, Արդարադատության ու Կրոնի (Դավանանքների) նախարարությունների հրամաններով և հրահանգներով նահանգներում ու գավառներում, պետական և վարչական շրջանակներում պաշտոնավարող հայերը, չնչին բացառություններով, պաշտոնանկ են արվում, և նրանց փոխարինում են իսլամադավան ու թուրք պաշտոնյաները[3]: Սա կարելի է բացատրել արդեն իսկ ծրագրված հայերի բնաջնջումը իրականացնելու համար պատրաստակամ և վստահելի ենթականեր ձեռք բերելու մտադրությամբ:

** Ներկայացվել է 11. V. 2023 թ.: Հոդվածը տպագրության է երաշխավորել գիտական ղեկավար, պ. գ. դ. Ա. Մարուքյանը (24. II. 2023 թ.): Ընդունվել է տպագրության 19. VI. 2023 թ.:*

[1] Սիմոնյան. 2009, 4:

[2] Հայոց պատմություն. 2015, 133:

[3] Գրիկէր. 1980, 198:

Տարբեր նահանգներից Կ. Պոլսի Հայոց պատրիարքարան եկած նամակներն ու տեղեկագրերն ահազանգում էին հայերի նկատմամբ համակարգված և հետևողականորեն իրականացվող առևտրական, տնտեսական բոյկոտի մասին[4], ինչն ընդամենը հայկական տնտեսությունը թուլացնող ու կազմալուծող գործողություններից մեկն էր: «Հորիզոն» թերթը նշում էր, որ թուրքական ազգայնամոլության և համախլամության այս նոր «թէօրիան» թելադրում էր առանձին ուժով հալածել հայ մրցակցին[5]: Միևնույն ժամանակ 1914 թ. հուլիսից երիտթուրքերը սկսում են կազմակերպել «Թէշքիլաթ-ը Մահսուսա»[6]-ի («Հատուկ կազմակերպություն») խմբերը, որոնց կարճ ժամանակ անց լիազորվում է «հայ կարաաններ կոտորել եւ յափշտակել ինչքերն ու գոյքերը»[7]:

Առաջին աշխարհամարտի սկսվելու նախընթաց ամիսներին Աղանայի Հայոց առաջնորդ Գևորգ ծ. վրդ. Արսլանյանը գտնվում էր Կ. Պոլսում՝ 1909 թ. Աղանայի ջարդի ընթացքում հրդեհված ազգապատկան կալվածքների ապահովագրության գումարները գանձելու համար: Սակայն պատերազմի սկսվելուց հետո՝ օգոստոսի առաջին օրերին, վերադառնում է Աղանա: Նույն ամսվա կեսին Աղանայի 42 թաղերում, ինչպես ամենուր, հայտարարվում է 22–40 տարեկանների զինվորագրության[8] մասին որոշումը[9]: Առաջին աշխարհամարտի սկզբին, ինչպես կայսրության բոլոր նահանգներում, այնպես էլ՝ Աղանայում, օսմանյան բանակի հաջողության համար մաղթանքի արարողություններ են անցկացվում: Աղանայի Սբ. Աստվածածին մայր տաճարում Կիլիկիո Սահակ Բ Խապայան կաթողիկոսն (1902–1939) Աղանայի նահանգապետ Իսմայիլ Հաքքը բեյի և այլ պաշտոնյաների ներկայությամբ հանդիսավոր մաղթանքներ է հղում՝ կայսեր ու օսմանյան բանակի հաջողության համար[10]:

Չնայած հայերի դիրքորոշմանը և համապատասխան գործողություններին՝ սկսած 1914 թ. նոյեմբերի 1-ից՝ մասնակի մահափորձեր են տեղի ունենում ինչպես Աղանայի նահանգում, այնպես էլ՝ այլուր: 1914 թ. դեկտեմբերի վերջին Աղանայում ավելի ու ավելի բացահայտ էր դառնում կոտորածի ենթարկվելու տագնապը[11]: Կիլիկիան այն վայրն էր, որ «առաջին թափով պիտի մաքրուէր: Ռազմագիտական և տնտեսական տեսակէտով ասիկա Փոքր-Ասիոյ ամենա-

---

[4] *«Ազատամարտ» (Կ. Պոլիս), 16. II. / 01. III. 1914:*

[5] *«Հորիզոն» (Թիֆլիս), 25. XII. 1915:*

[6] *«Թէշքիլաթ-ը Մահսուսա» անվան տակ գործել է երկու գաղտնի կազմակերպություն: Մեկը զինվորական կազմակերպություն էր և գործել է Ռազմական նախարարության հրամանով՝ Սուլեյման Ասքերի բեյի ղեկավարությամբ: Երկրորդը գտնվել է Ներքին գործերի նախարարության անմիջական տրամադրության տակ: Այն Բեհաեդդին Շաքիրի ղեկավարությամբ իրականացնում էր արևմտահայերի տեղահանությունն ու կոտորածները (Հայերի Ցեղասպանությունը ըստ երիտթուրքերի դատավարության փաստաթղթերի. 1989, 18):*

[7] *Գ ր ի կ է ր. 1980, 35:*

[8] *Ռազմական նախարար Էնվեր փաշայի հրամանով հայտարարվում է զորահավաք, զորակոչի են ենթարկվում 18–50 տարեկան տղամարդիկ: Որոշ տվյալներով Առաջին համաշխարհային պատերազմի սկզբին օսմանյան բանակ է զորակոչվել 100.000 հայ զինվոր (Մ ն ա ց ա կ ա ն ե ա ն. 1987, 31):*

[9] *Ե ղ ի ա յ ե ա ն. 1970, 314–315:*

[10] *Ե ղ ի ա յ ե ա ն. 1970, 320, Ե ղ ի ա յ ե ա ն. 1975, 41–42:*

[11] *Ղ ա զ ա ր ե ա ն. 1968, 176:*

կենսական կէտն էր, և անոր խիտ հայ ազգաբնակչութիւնը Երիտասարդ Թուրք ազգայնականներու աչքին սուր փուշ մըն էր»[12], որի գործադրմանն էլ անցնում է օսմանյան պետական մեքենան:

Հայերի նկատմամբ հալածանքներ, ձերբակալություններ և տեղահանություն

1914 թ. հոկտեմբերին Կիլիկիո կաթողիկոս Սահակ Բ-ն Բեյրութում ստանում է «Ատլիյէի»[13] հեռագրական հրամանը՝ Գևորգ ծ. վրդ. Արսլանյանի պաշտոնանկության մասին: Կաթողիկոսն անմիջապես մեկնում է Ադանա, որտեղ առաջնորդական խնդրին նպաստավոր լուծում տալով՝ վերադառնում է Սիս: Կարճ ժամանակ անց մեկնում է Հաճըն՝ կարիքի և չքավորության չափն անձամբ ճշտելու համար: Փետրվարի սկզբին կրկին վերադառնում է Սիս, սակայն մի քանի օր անց, Ադանայի առաջնորդարանից ստանալով շատ կարևոր պաշտոնագիր ստեղծված բարդ իրավիճակի մասին՝ շտապում է Ադանա[14]: Ժամանակային համադրությամբ կարելի է ենթադրել, որ նման շտապողականության պատճառն Ադանայի հայոց առաջնորդ Գևորգ ծ. վրդ. Արսլանյանի՝ 1915 թ. փետրվարի 12-ի նամակով հաղորդած տեղեկություններն էին. «... իբր թէ զրահաւորէն պաշտոնով ցամաք ելած է հայ մը» և գնացել է Զորք-Մարզպան (Զոք-Մարզվան): Այնտեղ երկու գիշեր մնալուց հետո երկու ջորեպանի հետ մոտեցել է ափին ու մտել շոգեմակույկը: Այս ամենը մեծ կասկածի և տարբեր ենթադրությունների տեղիք է տվել. արդյունքում՝ հինգ մարդ ձերբակալվել է և բանտարկվել: Նրանց տարել են Օսմանիե, ապա՝ Էրզին. «... ուր Վալի պէյի կողմէն իբր թէ հարցաքննուած են»[15]: Առաջնորդը հաղորդում է նաև՝ խնդրել է Օսմանիե մեկնող նահանգապետին, որ հնարավորության դեպքում Զորք-Մարզպան այցելի ու անձամբ տեղեկանա տեղի կացությանը և, բուն ճշմարտությանն իրազեկ դառնալով, համապատասխան կարգադրություններ կատարի[16]:

Զորք-Մարզպանի խնդիրը քննարկվել է նաև Ադանայի քաղաքական ժողովի փետրվարի 20-ի նիստում: Մասնավորապես, ժողովականներն անդրադարձել են ամբողջական տեղահանության, զինվորագրության, ճանապարհաշինության և ձերբակալությունների հարցերին[17]: Փետրվարի 15-ի նամակում հոգևոր առաջնորդը նույնպես նշում է՝ մոտ 650 տղամարդ ուղարկվել է ճանապարհաշինության և, որ զինվորագրման «տարիք ունեցողներու ստուար մասն ալ զօրագրուած ու ծառայելու վրայ են»[18]:

1915 թ. փետրվարի 15-ին Գևորգ ծ. վրդ. Արսլանյանը Սահակ Բ կաթողիկոսին հաղորդում է, որ Զորք-Մարզպանի Քելեկյան որբանոցն արդեն մի

---

[12] *Հայկական ջարդերու փաստաթուղթերը. 1920, 64:*

[13] Adliye ve Mezahip Nezareti *(թրք.) – Արդարադատության և Կրոնի (Դավանանքների) նախարարություն:*

[14] *Կիլիկեան կսկիծներ. 1927, 130–131:*

[15] *Մ. Մաշտոցի անվան Մատենադարան (այսուհետ՝ ՄՄ). 1915, Ադանայի Հայոց առաջնորդարանի արխիվ (անմշակ), 264:*

[16] *ՄՄ. 1915, Ադանայի Հայոց առաջնորդարանի արխիվ (անմշակ), 265:*

[17] *Ատենագրութիւն Քաղաքական Ժողովոյ Ատանայի. 2022, 444:*

[18] *ՄՄ. 1915, Ադանայի Հայոց առաջնորդարանի արխիվ (անմշակ), 274:*

քանի անգամ խուզարկվել է, ու թեև ոչինչ չեն հայտնաբերել, այնուամենայնիվ, տնօրեն Կարմիրյանն ու մեկ ուսուցիչ բանտարկվել են[19]: Աղանայից Զավեն պատրիարքին ուղղված 1915 թ. փետրվարի 15-ի նամակում առաջնորդը, կրկին նշելով խուզարկության մասին, հաղորդում է, որ հարցաքննության են ենթակվել և բանտարկվել ևս 22 անձ[20]: Չնայած պարբերաբար արվող խուզարկություններին՝ որբանոցը մինչև հունիսի վերջը բաց է մնում, այնուհետև՝ որբերին հեռացնելուց հետո, այն վերածում են «Սուլթանիէ» անունով թուրքական վարժարանի[21]:

Աղանայում Գերմանիայի հյուպատոսը՝ Բյուգեն, 1915 թ. փետրվարի 28-ին (մարտի 13) Կ. Պոլսում Գերմանիայի դեսպանին ուղղված հեռագրում նշում էր, որ Զորք-Մարզպանի պատմությունը չինծու է, սակայն տվյալ հեռագիրն արդեն ժամանակավրեպ էր, քանի որ Զորք-Մարզպանի հայ տղամարդկանց ձերբակալել և հեռացրել էին[22]: Սեպուհ Ակունին, քննելով Զորք-Մարզպանում դեպքերի հաջորդականությունը, իրավամբ նշում է, որ այդ դեպքերը կառավարության կողմից օգտագործվեցին հայերի դեմ հալածանքներ սկսելու համար[23]:

Հալեպի գաղթականների տեսչության նախորդ գլխավոր-քարտուղար Նաիմ բեյի՝ Արամ Անտոնյանին փոխանցած փաստաթղթերի մեջ ներառված է վերջինիս պետի՝ Աբդուլահատ Նուրի բեյի գաղտնի թղթերի մի մասը, որոնց մեջ երկու նամակ ուղղված էր Ջեմալ բեյին: Վերջինս «Միություն և Առաջադիմություն» կուսակցության Աղանայի, այնուհետև Հալեպի պատվիրակն[24] էր[25]: Նամակներից առաջինը գրված է 1915 թ. փետրվարի 18-ին, որն, ինչպես նշում է Անտոնյանը, ինքնին ջարդերի ծրագիրն է[26], մյուս նամակը՝ գրված մարտի 25-ին, կրկին հստակ հրահանգներ է պարունակում հայերի ձերբակալությունների, բռնագաղթի, ջարդերի և բռնագրավվող գույքերի մասին[27]: Ջեմալ բեյի ստացած «ցեղասպանական ստիճանական քայլերու մասին» նամակներին անդրադառնում է նաև Հայոց ցեղասպանության ականատես, իրավաբան, զինվորական Հայկազն Ղազարյանը՝ նշելով, որ դրանք ստացվել էին Բեհաեդդին Շաքիրից[28]:

1915 թ. գարնան սկզբին՝ Ներքին գործերի նախարարության հրահանգով, տեղահանություն գործադրելու նշանակված հրամանատարությունն անջատվում է Աղանայի նահանգապետի ու ոստիկանապետի հրամանատարութ-

---

[19] *ՄՄ. 1915, Աղանայի Հայոց առաջնորդարանի արխիվ (անմշակ), 272:*

[20] *ՄՄ. 1915, Աղանայի Հայոց առաջնորդարանի արխիվ (անմշակ), 275:*

[21] *«Կոչնակ» (Նիւ Եորք), 27. XI. 1915:*

[22] *Ղ ա զ ա ր ե ա ն. 1968, 176:*

[23] *Ա կ ո ւ ն ի. 1920, 294:*

[24] *«Միություն և առաջադիմություն» կուսակցությունը բոլոր գավառներում մասնավոր պատվիրակներ ուներ, որոնք կոչվում էին «Պատասխանատու-Քարտուղարներ»: Նրանք կոչված էին վերահսկելու հայերի տեղահանությունն ու ջարդերը (տե՛ս Ա ն տ ո ն յ ա ն. 1990, 137–138):*

[25] *Ա ն տ ո ն յ ա ն. 1990, 126:*

[26] *Ա ն տ ո ն յ ա ն. 1990, 129–133:*

[27] *Ա ն տ ո ն յ ա ն. 1990, 134–137:*

[28] *Ղ ա զ ա ր ե ա ն. 1968, 177:*

յունից: Այն հանձնում ուղղակի կենտրոնական կառավարությանը ենթակա Զինվորական ատյանի հրամանատարությանը: Այս կերպ բոլորովին չեզոքացվում էին տեղական քաղաքային ու ոստիկանական ուժերը: Ոստիկանապետի իրավասության ներքո էր միայն քաղաքի ապահովության վերահսկումը[29]:

Հաճընում հայերի նկատմամբ հալածանքները սաստկանում են 1915 թ. հունվարի սկզբին: Սբ. Գևորգ եկեղեցու բակում ոչ նպաստավոր բովանդակությամբ գրություն է փակցվում: Հաճընի Հայոց առաջնորդ Պետրոս եպիս. Սարաճյանը գրությունն անմիջապես պատռել է տալիս, որ այն չհասնի կառավարությանը, սակայն քաղաքի հայտնի լրտեսները հասցնում են տեղեկացնել ոստիկանությանը: Ենթադրվում է՝ այդ նույն լրտեսները ոստիկանապետի հետ խորհրդակցելով են պատրաստել հայատառ թուրքերենով այդ գրությունը և հանձնել Արամ Պոյաճյանին, որ վերջինս գիշերն այն փակցնի եկեղեցու պատին[30]: Կառավարչատուն են հրավիրում Սարաճյան սրբազանին և հրամայում պարզել հարցի մանրամասները: Հայերի կատարած հետաքննության արդյունքում բռնված Արամ Պոյաճյանը խոստովանում է դեպքի իսկությունը, սակայն ոստիկանապետի կողմից հարցաքննության ընթացքում հայտարարում է, որ գրությունն իրեն են հանձնել հնչակյանները: Կառավարությունը բանտարկում է Հնչակյան կուսակցության 35 անդամների, որոնցից 24-ը Հարություն Թերզյանի ջանքերով ազատ են արձակվում, իսկ 11-ը՝ ուղարկվում Ադանայի Ռազմական ատյան: Դատավարությունից հետո Ռազմական ատյանի կողմից մահվան դատապարտվածների թվում էր նաև Արամ Պոյաճյանը: Նա և Կարապետ Կիզիրյանը՝ Զիհանում, Նազարեթ Շգրրտըմյանը, Տրդատ Մելքոնյանը՝ Ադանայում կախաղան են բարձացվում, Արմենակ Տեր-Վահան Մանուկյանը ցմահ բանտարկվում է, իսկ Սարգիս Գոփուշյանը, Սիմոն Պահատրյանը, Վարդեվար Ճերեճյանը, Արշակ Կեչիճյանը և Տիգրան Շգրրտըմյանը դատապարտվում են ցմահ աքսորի:

Ձերբակալվածներից Արամ Սանթուրը վերադարձվում է Հաճըն՝ մեկ տարի ոստիկանության հսկողության տակ մնալու պայմանով, քանի որ խոստացել էր համագործակցել Ռազմական ատյանի նախագահ Ավնի բեյի հետ, իսկ վերջինս, նման լրտեսի կարիք ունենալով, չէր մերժել նրա առաջարկը: Ադանայում հայերի մահվան դատավճիռները ստորագելուց հետո Ավնի բեյը մեկնում է Հաճըն և հայերից պահանջում հանձնել զենքն ու զինամթերքը: Այստեղ են հաստատվում նաև Զեյթունի տարագրությունն իրականացրած 3.000[31] զինվորները: Նրանք տեղավորվում են դպրոցներում, եկեղեցիներում, Սբ. Հակոբի վանքում և այլուր: Ավնի բեյը, հրամանատար Ղալիբ բեյի հետ համագործակցությամբ, Ռազմական ատյան է հաստատում: Մոտ 200 հայեր բանտարկվում են Սբ. Հակոբի վանքում, 50 մարդ՝ կառավարչատանը, իսկ մյուսները տարվում են այլ վայրեր[32]:

---

[29] Ե ղ ի ա յ ե ա ն. 1970, 340:

[30] Սեպուհ Ակունին նշում է, որ գրությունը կառավարությանը հանձնել է 1914–1915 թթ. դեկտեմբեր–հունվար ամիսներին Հաճընում գտնվող Սահակ Բ կաթողիկոսը (Ա կ ո ւ ն ի. 1920, 302):

[31] Հ. Ղազարյանը Ղալիբ բեյի հրամանատարությանը ենթակա զինվորների թիվը նշում է 2.000 (Ղ ա զ ա ր ե ա ն. 1968, 175):

[32] Պ օ ղ ո ս ե ա ն. 1942, 585–590:

1915 թ. հունիսի 5-ին Հաճընից աքսորվում է առաջին քարավանը՝ մոտ 200 ընտանիք, ինչից կարճ ժամանակ անց տեղահանվում է ևս ավելի քան 270 ընտանիք: Քաղաքում մնում են միայն մոտ 250 զինվորների ընտանիքներ, ծերեր և հիվանդներ: Տեղահանությունից հետո կառավարությունը հավաքում է տներում եղած ողջ գույքը և վաճառում[33]: Առաջին քարավանը շարժվում է Քիրազի դժվարանցանելի լեռնային ճանապարհով[34]: 1915 թ. աշնանը թուրքերն ավերում են քաղաքը: Միայն Հայկական դպրոցի քարաշեն եռահարկ շենքն է կանգուն մնում[35]: Հաճընի 32.000 տարագրյալների երեք քառորդը կոտորվում է Դեր-Զորի շրջակայքում[36]:

1915 թ. մարտի սկզբին Էմեր Նաճին՝ «Իթթիհատի գրգռիչ շրջուն պրոպագանդիստը», այցելում է Ադանա: Այնտեղ էր նաև «Միություն և առաջադիմություն» կուսակցության պատասխանատու քարտուղար Ջեմալ բեյը, «որուն հետ խորհրդակցութիւններ եւ կարգադրութիւններ կը կատարուէին ցեղասպանական գործերու մասին»[37]: 1915 թ. մարտի կեսերին արդեն լուրեր են ստացվում Ադանայում ջարդերի մասին, քանի որ օսմանյան բանակի 16-րդ դիվիզիան գտնվում էր քաղաքում[38]: Միևնույն ժամանակ օսմանյան կառավարությունը բռնագրավվում է Աբգարյան վարժարանը և վերածվում զինվորական առաքումների կայանի՝ «Սէվգիյաթ Շէօպէսի»[39]:

1915 թ. ապրիլի 17-ին Ադանայում ժողովրդին հրահանգվում է երեկոյան 5 անց կեսից ուշ և առավոտյան 11 անց կեսից շուտ տներից դուրս չգալ, իսկ հաջորդ օրը կախաղան է բարձրացվում Քեոշկերյան ազգանունով մի չորք-մարզպանցի: Ապրիլի 20-ին բոլոր հայերի տները խուզարկության են ենթարկվում՝ զենք և պայթուցիկ նյութեր փնտրելու պատրվակով. «...հազիւ երկու հարիւր կտորի չափ հասարակ զէնքեր կը գտնուին», սկսվում են ձերբակալությունները: Այնուհետև ձերբակալություններն իրականացվում էին պարբերաբար: Խուզարկվում է նաև օսմանյան որբանոցը. տնօրեն Վահագնի թղթերը բռնագրավվում են, նախապես նրան մի քանի ժամ արգելափակում են, այնուհետև՝ ձերբակալում: Ապրիլի 23-ին կրկին կախաղան են բարձացվում երկու չորք-մարզպանցի հայեր, մեկը՝ Տարսոնում, մյուսը՝ Օսմանիեում: Ապրիլի 26-ին խուզարկության է ենթարկվում Սբ. Աստվածածին եկեղեցին և առաջնորդարանը[40]:

Մայիսի 1-ին Սսում ևս տեղի են ունենում խուզարկություններ, անգամ՝ Մայրավանքում. ձերբակալվում է 50–80 հոգի, որոնք այնուհետև ազատ են արձակվում[41]: Խուզարկվում են Աթմաճայանի, Աբրահամ Խաչիկյանի, Մկրտիչ Գույումճյանի տները: Առաջին երկուսին, ինչպես նաև Սեթո անունով մի

---

[33] «Հաճըն» (Մարսել, Փասադենա), 1935, հոկտեմբեր – 1936, հունվար:
[34] Պ ո ղ ո ս ե ա ն. 1942, 592:
[35] Պ ա լ ա ք յ ա ն. 1991, 291:
[36] Ղ ա զ ա ր ե ա ն. 1968, 175:
[37] Ղ ա զ ա ր ե ա ն. 1968, 176:
[38] Ղ ա զ ա ր ե ա ն. 1968, 176:
[39] Ե ղ ի ա յ ե ա ն. 1970, 650:
[40] Կիլիկեան կսկիծներ. 1927, 166–168:
[41] Կիլիկեան կսկիծներ. 1927, 169:

հնչակյան սարաճի, ուսուցիչ Հարությունն Օհանյանին և Կյոքտերելիյանին բանտարկում են[42]:

1915 թ. մայիսին Կ. Պոլսից Ադանա է ժամանում Ներքին գործերի նախարարի օգնական աղանացի դերեբեյի[43] *Կյուլեկօղլուներից մեկը. հերթական նիստն է գումարվում Իթթիհատի կենտրոնում: Այլևս որոշված էր նահանգի բոլոր հայերին տարագրել և ուղարկել «Ներքին Գործոց Նախարարութեան որոշելիք կողմերը»: Հայերի տեղահանությունն իրականացնելու էր նահանգի զորքերի հրամանատար, Ռազմական դատարանի նախագահ Ավնին*[44]:

Մայիսի 4-ին Սահակ Բ կաթողիկոսն Ադանայից գրում է՝ նահանգապետի մոտ խնդրանքների հետևանքով որոշ աղանացիների գնացքով տարագրումը մի քանի օրով հետաձգվել է, ինչպես նաև հաղորդում է նույն օրվա լուսաբացին Գևորգ ծ. վրդ. Արսլանյանի կաթվածահար լինելու մասին[45]: *1915 թ. մայիսի 5/18-ին Ադանայի բանտերն արդեն լցված էին հայերով*[46]:

Մայիսի 6-ին Ադանայում ազդարարվում է դեպի Քոնիա գաղթելու հրամանի մասին, հաջորդ օրն արդեն առաջին քարավանը տարագրվում է 226 համարի ներքո[47]: *Այն բաղկացած էր ավելի քան 4.000 հայից: Մայիսի 7/20-ին աքսորյալներն Ադանայի 30 (այլ տվյալներով՝ 40*[48]*) ամենահարուստ ընտանիքներն էին: Նրանց թույլատրվում է իրենց հետ վերցնել շարժական գույքի վաճառքից ստացված գումարները: Շատերը երեք շաբաթ անց կրկին վերադարձվում են՝ ԱՄՆ-ի դեսպանի միջնորդությամբ*[49]:

Մայիսի 22-ին 18 երևելիների ձերբակալում և աքսորում են Օսմանիե ու Հալեպ: Դրան հետևում է ամռան սկզբին գաղթին պատրաստվելու հայտարարությունը: Ադանայի հրամանատարությունը մի քանի հարյուր հայի ուղարկում է Յենիճե և Պելեմետիկ, Բաղդատի երկաթուղային գծի նախակիլիկյան կայարաններ[50]: *Արդեն 1915 թ. մայիսի 13-ին Հալեպում Գերմանիայի հյուպատոս Վալտեր Ռյոպերը հեռագրում է, որ Ադանայի նահանգից 10.000 հայ է տարագրվել*[51]: *Թեև 1915 թ. հուլիսի սկզբին Ադանայից Պելեմետիկի կողմերն աքսորված գաղթականները վերադառնում են, սակայն կառավարությունը հայտնում է՝ վերադարձը ժամանակավոր է, և նրանք առաջիկայում պետք է կրկին աքսորվեն: Ադանայի հայերի տարագրումն իրականացվում էր խումբ առ խումբ. մինչև Օսմանիեի աքսորականը՝ շոգեկառքով, իսկ այնտեղից՝ կառքերով և հետիոտն, Ինթիլլիի կիրճերի ճանապարհով՝ մինչև Գաթմայի գաղթականը, որտեղից էլ՝ Հալեպ, ապա՝ Դեր-Զոր կամ Դամասկոսի ուղղությամբ՝ «ըստ բախտի»*[52]:

---

[42] *Կիլիկեան կսկիծներ. 1927, 161:*
[43] Derebeyi *(Թրք.) – ավատ:*
[44] *Ե ղ ի ա յ ե ա ն. 1970, 334:*
[45] *Կիլիկեան կսկիծներ. 1927, 163:*
[46] *Ղ ա զ ա ր ե ա ն. 1968, 117, 177:*
[47] *Կիլիկեան կսկիծներ. 1927, 170–171:*
[48] *Ե ղ ի ա յ ե ա ն. 1970, 334:*
[49] К е в о р к я н. 2015, 673–674.
[50] *Ե ղ ի ա յ ե ա ն. 1970, 335:*
[51] *Ղ ա զ ա ր ե ա ն. 1968, 177:*
[52] *Ե ղ ի ա յ ե ա ն. 1970, 337:*

Մայիսի վերջին Սահակ Բ կաթողիկոսը խառը ժողով է գումարում Ադանայում գտնվող Գավառական ժողովի անդամների, մի քանի երևելիների, իրավագետների և օտար հաստատությունների (Բանկ Օտտոման, Ռեժի) բարձր պաշտոնյաների մասնակցությամբ: Կաթողիկոսը տեղահանության անխուսափելիության մասին հայտնելուց հետո մի քանի կարգադրություններ է անում առևտրականներին և հողատերերին՝ ավելացնելով. «Կ'իմանամ նաեւ որ ներքին նահանգներէն տարագրեալներու անպատսպար խլեակներ, կիներ ու մանուկներ, խումբ-խումբ թշուառ վիճակի մէջ Հալէպ կը հասնին ... Միւս կողմէն՝ կը խորհիմ, որ եթէ ես ալ աստեղէն տարագրեալ ղրկուիմ օր մը Հալէպ՝ ատիկա ամբողջ ժողովուրդին բարոյական եւ հոգեկան վիճակին ծանր հարուած մը պիտի ըլլայ ... Ուստի, նախընտրելի կը համարեմ՝ փոխանակ օր մը որպէս աքսորեալ երթալու՝ այժմէն իսկ կամովին երթալ Հալէպ»[53]: Նա, նահանգապետի հավանությամբ, մայիսի 25-ին մեկնում է Ադանայից և 28-ին հասնում Հալեպ[54]:

Աքսորյալ հայերի նախնական տվյալները Հալեպում, ապա՝ համակենտրոնացման ճամբարներում

Կիլիկիայից մինչև հունիսի կեսը 30.000 հայեր են տեղահանվում, հունիսի 14-ին նրանց հետևում են մինչև 32.000-ի հասնող աքսորախմբեր[55]: Այլ տվյալներով 1915 թ. հունիսի վերջին Ադանայի նահանգից և Մարաշի գավառից աքսորյալների թիվը 50.000 էր[56]: 1915 թ. ամռանն Ադանայի նահանգապետը Ներքին գործերի նախարարությանը հաղորդում է, որ Ադանայի նահանգի չորս գավառներից տարագրվել է 46.119 մարդ: Այնուհետև թուրքական հեռագրի տակ ավելացված է. «Ատանայի մէջ մնացողներուն սեւգ ըլլալը (բռնագաղթը) նոր սկսած ըլլալով, տեղեկութիւնները թերի են: Զհաշուելով տակաւին չղրկուածները, (հայ) տարագրեալները ղրկուած են Օսմանիէի եւ Ռաճուի (Ռաճո) ճամբով, դէպի Հալէպ»[57]:

Հատկապես կարևոր են Սահակ Բ կաթողիկոսի՝ Հալեպ աքսորված, այնուհետև տարբեր համակենտրոնացման ճամբարներ ուղարկված գաղթականներին վերաբերող տվյալները: Ցուցակներում նշվում է աքսորվածների բնակավայրը, թիվը, սեռը, ապա և՝ նրանց Հալեպից ուղարկված վայրերը: Սկսած մայիսի 5-ից՝ Զորք-Մարզպանից աքսորվել է 318 տուն՝ 885 տղամարդ, 758 կին,

Էոզերլիից՝ 42 տուն՝ 113 տղամարդ, 113 կին,
Օջաքլրից՝ 72 տուն՝ 172 տղամարդ, 159 կին[58],
Հասանբեյլիից՝ 187 տուն՝ 1.118 անձ,
Մարաշից՝ 8 տուն՝ 67 անձ,
Կարս Փազարից՝ 6 տուն՝ 35 անձ,
Հաճընից՝ 70 տուն՝ 495 անձ[59]:

---

[53] Ե ղ ի ա յ ե ա ն. 1970, 342:
[54] Կիլիկեան կսկիծներ. 1927, 176:
[55] Ն ա զ լ ե ա ն Յ ո վ հ ա ն ն է ս Ա ր ք. 1960, 430:
[56] Լ ե փ ս ի ո ւ ս. 1919, 18:
[57] Ղ ա զ ա ր ե ա ն. 1968, 167–168:
[58] Կիլիկեան կսկիծներ. 1927, 179:
[59] Կիլիկեան կսկիծներ. 1927, 180, «Հայաստան» (Սոֆիա), 01. VII. 1915:

Ընդհանուր հաշվով վերոնշյալ բնակավայրերից 3.915 գաղթական է հասել Հալեպ, որոնք կրկին աքսորվել են, մասնավորապես՝

Բաբ – հասանբեյլեցի՝ 266, չորք-մարզպանցի՝ 51,

Մունպուճ – հասանբեյլեցի՝ 129, չորք-մարզպանցի՝ 99,

Մաղարա (Մաարրա) – հասանբեյլեցի՝ 65, չորք-մարզպանցի՝ 24,

Ընդհանուր՝ 634 անձ:

1915 թ. հուլիսի 5-ին Հալեպում կար 3.281 անձ, որոնք հետզհետե տարբեր վայրեր էին աքսորվելու[60]:

1915 թ. հուլիսի 6-ին Սահակ Բ կաթողիկոսը կրկին ներկայացնում է տվյալները, որ հունիսի 4-ից ևեթ Հալեպ հասած գաղթականներն էին՝

Չորք-Մարզպանից՝ 78 տուն՝ 216 տղամարդ, 195 կին,

Օջաքլրից՝ 43 տուն՝ 99 տղամարդ, 105 կին,

Էոզերլիից՝ 61 տուն՝ 164 տղամարդ, 196 կին,

Կարս Փազարից՝ 24 տուն՝ 79 տղամարդ, 74 կին,

Հաճընից՝ 443 տուն՝ 1.606 տղամարդ, 1.424 կին,

Հարունիեից՝ 83 տուն՝ 248 տղամարդ, 278 կին,

Ռումլուից՝ 51 տուն՝ 201 տղամարդ, 187 կին,

Շար Դերեից՝ 140 տուն՝ 606 տղամարդ, 568 կին,

Սսից՝ 231 տուն՝ 685 տղամարդ, 630 կին,

Ընդհանուր՝ 1154 տուն՝ 3.904 տղամարդ, 3.657 կին[61]:

Այսինքն՝ նախապես Հալեպում եղած 3.281 անձին գումարվել է 7.561-ը, ընդամենը՝ 10.842 մարդ: Այնուհետև նրանցից կրկին աքսորվել են՝

Բաբ– հասանբեյլեցի՝ 204, չորք-մարզպանցի՝ 116, օջաքլրցի՝ 11, էոզերլիցի՝ 22 հաճընցի՝ 290:

Մունպուճ– հասանբեյլեցի՝ 107, չորք-մարզպանցի՝ 494, օջաքլրցի՝ 132, էոզերլիցի՝ 94, հաճընցի՝ 730, ռումլուցի՝ 264, շար-դերեցի՝ 311: Ընդհանուր՝ 2.775 մարդ[62]:

Բռնագաղթ, բնաջնջում, ունեզրկում

Ադանա քաղաքի հայերի հիմնական բռնագաղթը սկսվում է սեպտեմբերի կեսերից՝ շարունակվելով մինչև հոկտեմբերի վերջը[63]: Տեղի հայերի աքսորն իրականացվում է թաղ առ թաղ: Հարուստ դասակարգն է միայն կարողանում սայլեր գործածել, իսկ աղքատները լցվում են վագոնների կամ կենդանիների համար նախատեսված բեռնակառքերի մեջ: Աքսորյալներին միայն 30 կգ բեռ վերցնելու իրավունք էր տրվում[64]: Բռնագաղթյալներին նախ հավաքում էին Գաթմայում, որտեղից մի մասը ուղարկվում էր Դամասկոս, իսկ մյուս մասը՝ Դեր-Զոր: Որոշ թվով հայեր կաշառքով հաջողել են մտնել Հալեպ[65]: 1915 թ. սեպտեմբերին, մի օտարերկրացի անհայտ կնոջ վկայությամբ, երբ Կիլիկիայի քաղաքներից մեկից, ամենայն հավանականությամբ՝ Ադանայից, բնակիչների

[60] *Կիլիկեան կսկիծներ. 1927, 181:*
[61] *Կիլիկեան կսկիծներ. 1927, 193:*
[62] *Կիլիկեան կսկիծներ. 1927, 193:*
[63] *Ե ղ ի ա յ ե ա ն. 1970, 346:*
[64] *Ն ա զ լ ե ա ն Յ ո վ հ ա ն ն է ս Ա ր ք. 1960, 430:*
[65] *Զ ո ր մ ի ս ե ա ն. 1975, 474:*

առաջին խումբն է աքսորվում, նրանց ասում է, որ միայն կարճ ժամանակով են մեկնում, և անհրաժեշտ չէ մտահոգվեն իրենց շարժական և անշարժ գույքի համար, որոնք պետք է կնքվեին և պահպանվեին. « … (բայց) հազիւ թէ (հայերը) քաղաքէն դուրս էին ելած՝ զինուորներ տեղաւորուեցան մեծ շէնքերուն մէջ, որոնցմէ ոմանք, վարձքը պետութեան վճարուելու պայմանով, ոչինչով վարձու տրուեցան: (Իսկ) աղքատիկ տուները տրուեցան աւելի խեղճ թուրքերուն»[66]: Աղանայի առաջնորդը տարագրվում է 1915 թ. հոկտեմբերի վերջին՝ կիրակի օրը. «Ս. Աստուածածին Մայր Եկեղեցիին մէջ լացող հաւատացեալներու ներկայութեան՝ վերջին պատարագը մատուցուելէ ետքը …»[67]:

1915 թ. ապրիլի 11/24-ին Կ. Պոլսի մտավորականների աքսորին զուգահեռ Մերսինից վեց մարդ աքսորվում է Ադանա, որտեղ նրանց ևս 30 աղանացիների հետ բանտարկում են ֆրանսիական վարժարանում: Մերսինում սկսվում են խուզարկություններն ու տեղահանությունը: Մերսինից տեղահանվում է մոտ 600 տուն հայ: Տարագրությունից զերծ է մնում 30 տուն հայ՝ որպես զինվորականի ընտանիք կամ որպես արհեստավոր ու գործարանատեր: Գործարաններ Մկրտիչ Զելվեյանին և Հակոբ Մանուելյանին կառավարությունը ստիպված է լինում չհեռացնել քաղաքից՝ երկրի ռազմական կարիքները բավարարելու համար նրանց աշխատեցնելու նպատակով: Տեղահանված հայերից վերապրում է հազիվ 100 տուն, մյուսները սպանվում են Ռա ուլ-Այնի ջարդի ընթացքում[68]:

1915 թ. սեպտեմբերի 3-ին ստացվում է Կիլիկիո կաթողիկոսության տարագրման մասին Սսի կառավարչի հրահանգը: Հալեպ տեղափոխվելու համար տրվում էր ընդամենը 10 օր ժամանակ: Այդ կարճ ժամանակում հնարավոր չէր հավաքել և տեղափոխել կաթողիկոսարանի ամբողջ շարժական գույքը, ուստի միաբանները փորձում էին առանձնացնել ամենաարժեքավոր ու կարևոր գույքերը: Կաթողիկոսության ամբողջ անշարժ գույքը՝ Սսի բազմադարյա Աթոռի հոյակապ Մայրավանքն իր վեհաշուք կաթողիկոսարանով և հարակից շենքերով, մնում է թուրքերի հայեցողությանը[69]:

Բռնագրավվում է հայերի անշարժ գույքը, կողոպտվում, յուրացվում կամ վաճառքի է հանվում ողջ շարժական գույքը: Հայկական կալվածքների գրավման մասին տեղեկացնում է նաև Նյու Յորքի «Կոչնակը»՝ նշելով, որ, պաշտոնական հայտարարության համաձայն, բոլոր տարագրված հայերի կալվածքները, ինչպես նաև հայերի անուններով արձանագրված գույքը պետք է վաճառվի Իթթիհատի հանձնախմբերի կողմից: Թերթը հավելում է. «Հայապատկան այդ կալուածներէն գոյանալիք արդիւնքը պիտի դրուի կառավարութեան կալուածոց դիւանի սնտուկը»[70]: 1915 թ. դեկտեմբերի նույն տեղեկությունն արդեն հրապարակվել էր «Արև» թերթը[71]:

Հայոց ցեղասպանությունը վերապրած Գրիգորիս ծ. վրդ. Բալաքյանը նշում է՝ Սսի 800 տուն հայերից ազատվել են 50–60 տուն, որոնք 1915 թ.

---

[66] Լ ե ւ ո ն Վ ա ր դ ա ն. 1970, 166:
[67] Ե ղ ի ա յ ե ա ն. 1970, 350:
[68] Ա կ ո ւ ն ի. 1920, 296–298:
[69] Մ ա ր ո ւ ք յ ա ն. 2015, 94–95:
[70] «Կոչնակ» (Նիւ Եորք), 15. I. 1916:
[71] «Արև» (Աղեքսանդրիա), 03. XII. 1915:

վերջերին դեռևս գտնվում էին քաղաքում: Սսի Մայրավանքը վերածվել էր թուրքական վարժարանի, իսկ հայերի տները հատկացվել էին ներքին գավառներից Կիլիկիա եկած մուսուլման փախստականներին[72]: Կարս Փազարում ոչ մի հայ չէր մնացել: Իր արգասաբերությամբ հայտնի, Սսից մինչև Ջիհան ձգվող Անարզաբայի դաշտը 1916 թ. գարնանն ամբողջությամբ ամայի էր. իթթիհատական կառավարությունը բռնագրավել էր ամեն ինչ: Օսմանիեի մի քանի հարյուր տուն հայեր ամբողջապես բռնագաղթի էր ենթարկված: Նրանց տները, խանութները, պարտեզները հանձնված էին թուրք հին և նոր փախստականներին[73]:

Քանլը-Քեչիտով[74] (Արյան-անցք) անցան Էդիրնեի, Ռոդոսթոյի, Բիլեջիքի, Բուրսայի ու շրջակայքի, ինչպես նաև՝ Քոնիայի և երկաթգծի երկայնքով բնակվող ու 1915 թ. դեպի Դեր-Զոր տարագրվող հարյուր հազարավոր հայեր. «Ասկե անցան նաև Կիլիկիո քաղաքներեն տարագրվող 200.000-ի հասնող ամբողջ հայությունը»[75]:

1915 թ. նոյեմբերի 5-ին Աթենքից անգլիական տեղեկատվական ծառայության կողմից Ռազմական նախարարությանը զաղտնի հղված թիվ 380 զեկուցագրում ներկայացվում է հայերի արտաքսմանը վերաբերող Ադանայի գործակալի զեկուցագիրը, որը թողել է Մերսինը 1915 թ. հոկտեմբերի 12-ին: Զեկուցագրում ասվում է, որ Ադանայի նահանգից արտաքսվել են գրեթե բոլոր հայերը՝ 100.000–300.000 մարդ[76]:

Հայոց ցեղասպանության տարիներին ազգայնամոլ ու ցեղասպան քաղաքականությամբ երիտթուրքական կառավարությանը հաջողվեց կիսով չափ նվազեցնել Կիլիկիայի հայերի թիվը[77]: 1918 թ. զինադադարի առաջին ամիսներից մինչև 1919 թ. կեսերը շուրջ 150.000 վերապրած հայեր հաստատվեցին Կիլիկիայում[78]: Հարկավոր է նշել, որ նրանք ոչ միայն Ադանայի նահանգի կամ Մարաշի, Այնթապի ու Ուրֆայի գավառների նախկին հայ բնակիչներ էին, այլ՝ Արևմտյան Հայաստանի և կայսրության այլ վայրերից բռնագաղթված հայեր:

Եզրակացություն

1915 թ. վերջին Արևմտյան Հայաստանի, Կիլիկիայի և կայսրության այլ նահանգների հայերը գրեթե ամբողջությամբ աքսորվել էին: Շարունակվում էր հայերի անհատական ու ազգապատկան կալվածքների բռնագրավումը, շարժական գույքի կողոպուտը, մշակութային արժեքների յուրացումն ու ոչնչացումը: Հայերի աքսորը, կողոպուտն ու բնաջնջումը տեղի էր ունենում կենտրոնական կառավարության հրամաններով, տեղական իշխանություն-

---

[72] Պ ա լ ա ք յ ա ն. 1991, 319:

[73] Պ ա լ ա ք յ ա ն. 1991, 326–332:

[74] Քանլը-Քեչիտը ձոր է Օսմանիյե – Հասան Բեյլի ճանապարհին՝ Ամանոսի լեռներում: Քանի որ Ամանոսի գետնուղին դեռևս բացված չէր, Հալեպ տանող միակ ճանապարհն անցնում էր Քանլը–Քեչիտով (Պ ա լ ա ք յ ա ն. 1991, 335– 336):

[75] Պ ա լ ա ք յ ա ն. 1991, 336–337:

[76] Պ ե յ լ ե ր յ ա ն. 2005, 226:

[77] Ս ա հ ա կ յ ա ն. 1970, 109:

[78] 1915–1965 Յուշամատեան Մեծ Եղեռնի. 1987, 833:

ների և հատուկ այդ նպատակով ստեղծված կառույցների ու խմբերի ջանքերով, մուսուլման հասարակ բնակչության լայն ներգրավվածությամբ: Մասշտաբային այդ հանցագործությունն իրականացվում էր հստակ ժամանակացույցով, գործողությունների ճշգրիտ հերթականությամբ, որն ինքնին փաստում է նախապես կազմված ծրագրի առկայությունը՝ ապացուցելով Հայոց ցեղասպանության կանխամտածված լինելու հանգամանքը:

Այսպիսով՝ Հայոց ցեղասպանության արդյունքում Օսմանյան կառավարությունը վերջ դրեց Հայկական հարցի գոյությանը՝ ոչնչացնելով հայերին:

Անի Ոսկանյան – ԵՊՀ Հայագիտական հետազոտությունների ինստիտուտի կրտսեր գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունները՝ Հայոց ցեղասպանություն, Օսմանյան կայսրության պատմություն (XIX–XX դդ.), տնտեսության պատմություն: Հեղինակ է 1 մենագրության, 1 կոլեկտիվ մենագրության և 15 հոդվածի: ani.h.voskanyan@ysu.am

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

«Ազատամարտ» (Կ. Պոլիս), 16. II. / 01. III. 1914:

Ակունի Ս. 1920, Միլիոն մը հայերու ջարդի պատմութիւնը, Կ. Պոլիս, տպ. «Յ. Ասատուրեան որդիք», 319 էջ:

Անտոնյան Ա. 1990, Մեծ ոճիրը, Երևան, «Արևիկ», 304 էջ:

Ատենագրութիւն Քաղաքական Ժողովոյ Ատանայի (սկիզբ՝ 2 մարտ 1905, վերջ՝ 10 ապրիլ 1915). 2022, խմբ.՝ Մալխասեան Ա. Ա., աշխատ.՝ Մալխասեան Ա. Ա., Աստոյեան Ա. Խ., Աւետիսեան Ա. Ժ., Ֆահրադեան Ս. Մ., Դաւթեան Լ. Դ., Անթիլիաս, «Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութիւն», 543 էջ:

«Արեւ» (Աղեքսանդրիա), 03. XII. 1915:

Գրիկէր. 1980, Եոզղատի հայասպանութեան վաւերագրական պատմութիւնը, Նիւ Եորք, «Ոսկետառ» հրատ., 468 էջ:

Եղիայեան Բ. 1970, Ատանայի հայոց պատմութիւն, Անթիլիաս, «Ատանայի հայրենակցական միութեան» հրատ., 1062 էջ:

Եղիայեան Բ. 1975, Ժամանակակից պատմութիւն Կաթողիկոսութեան Հայոց Կիլիկիոյ 1914–1972, Անթիլիաս, «Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ», 946 էջ:

Լեւոն Վարդան. 1970, Հայկական տասնհինգը եւ Հայերու լքեալ գոյքերը, Պէյրութ, «Ատլաս», 344 էջ:

Լեփսիուս Ե. 1919, Հայաստանի ջարդերը, Գաղտնի տեղեկագիր, թարգմ.՝ Շամտանճեան Մ., Կ. Պոլիս, պագր. «Յ. Ասատուրեան եւ որդիք», 315 էջ:

Կիլիկեան կսկիծներ. 1927, Վաւերագրեր Կիլիկիոյ կաթողիկոսական դիւանէն 1903–1915, հրատ. և առաջաբ.՝ Զ. Պզտիկեան, Պեյրութ, տպ. «Հրազդան», 207 էջ:

«Կոչնակ» (Նիւ Եորք), 27. XI. 1915, 15. I. 1916:

«Հայաստան» (Սոֆիա), 01. VII. 1915:

«Հաճըն» (Մարսել, Փասադենա), 1935, հոկտեմբեր – 1936, հունվար:

Հայկական ջարդերու փաստաթուղթերը. 1920, աշխատ.՝ Միրազենց Վ., Կ. Պոլիս, տպգ. «Ֆ. Ճարեան», 175 էջ:

Հայերի Ցեղասպանությունը ըստ երիտթուրքերի դատավարության փաստաթղթերի. 1989, առաջ. թարգմ. և ծանոթ.՝ Ա. Հ. Փափազյանի, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 256 էջ:

Հայոց պատմություն. 2015, Նոր ժամանակաշրջան (XVII դարի երկրորդ կես–1918 թ.), հ. III, գիրք II, Երևան, «Զանգակ», 760 էջ + 36 էջ ներդիր:

«Հորիզոն» (Թիֆլիս), 25. XII. 1915:

Ղազարեան Հ. Գ. 1968, Ցեղասպան թուրքը, Պէյրութ, «Համազգային» տպ., 424 էջ:

Մարուքյան Ա. 2015, Հայոց ցեղասպանության նյութական հետևանքների հաղթահարման հիմնահարցը, Երևան, ՀՀ ԳԱԱ, ՊԻ, 135 էջ:

Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը ֆրանսիական արխիվներում (1914–1918). 2005, Փաստաթղթերի ժողովածու, հ. 1, աշխատ. է. Ա. Պեյլերյանի, թարգմ.՝ Վ. Պողոսյանը, Երևան, «Հայաստան», 484 էջ:

Մ. Մաշտոցի անվան Մատենադարան. 1915, Ադանայի Հայոց առաջնորդարանի արխիվ (անմշակ):

Մնացականեան Ա. Ն. 1987, Հայ ժողովրդի Մեծ Եղեռնը և ազգային վերածնունդը. – 1915–1965 Յուշամատեան Մեծ Եղեռնի, խմբ.՝ Գ. Ահարոնեան, Պեյրութ, հրատ. «Զարթօնք», էջ 11–71:

Նազլեան Յովհաննէս Արք. 1960, Յուշեր, Մերձաւոր Արեւելքի 1914–1928 շրջանի քաղաքական-կրօնական դէպքերուն մասին, Ա. հատոր, Պէյրութ–Լիբանան, տպ. «Հայ Կաթողիկէ», 690 էջ:

Չորմիսեան Լ. 1975, Համապատկեր արեւմտահայոց մէկ դարու պատմութեան, հ. Գ. (1908–1922), Պէյրութ, տպ. «Սեւան», 750 էջ:

Պալաքյան Գ. 1991, Հայ Գողգոթան, Բեռլինեն դեպի Զոր (1914–1920), Երևան, «Հայաստան», 391 էջ:

Պօղոսեան Յ. Պ. 1942, Հաճընի ընդհանուր պատմութիւնը եւ շրջակայ Գօզան–Տաղի հայ գիւղերը, Լօս Անճէլըս, Քալիֆօրնիա, տպ. «Պօզաճեան», 857 էջ:

Սահակյան Ռ. Գ. 1970, Թուրք-Ֆրանսիական հարաբերությունները և Կիլիկիան 1919–1921 թթ., Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 324 էջ:

Սիմոնյան Հ. 2009, Հայերի զանգվածային կոտորածները Կիլիկիայում (1909 թ. ապրիլ), Երևան, ԵՊՀ հրատ., 436 էջ + 96 էջ ներդիր:

Кеворкян Р. 2015, Геноцид армян, Полная история. М., Центр Арменоведческих исследований, 912 с.

ИСТРЕБЛЕНИЕ АРМЯН И ЭКСПРОПРИАЦИЯ ИХ СОБСТВЕННОСТИ В 1915 ГОДУ В ПРОВИНЦИИ АДАНА

АНИ ВОСКАНЯН

Резюме

Ключевые слова: Геноцид армян, Османская империя, Киликия, провинция Адана, османские власти, младотурецкое правительство, частное и национальное имущество, депортация, истребление, конфискация.

К концу 1915 года почти все армяне Западной Армении, Киликии и других провинций (вилайетов) империи были депортированы. Как в

Адане, так и в других местах турки продолжали экспроприацию собственности, грабеж, присвоение и уничтожение культурных ценностей армян. Депортация, грабеж и истребление армян осуществлялись по приказам центрального правительства, при содействии местных властей и специально созданных организаций и групп, при активном участии обычных граждан. Все слои общества были заинтересованы в депортации армян и грабеже их имущества: обычные граждане-турки использовали награбленное для улучшения условий жизни, местные власти, другие госучреждения, банки, разные страховые компании и т. д. накопили огромный капитал, а османское государство, кроме истребления и конфискации огромного национального богатства армян, решило самый важный экзистенциальный вопрос для турок – вопрос территории, земли. Четкий график и последовательность действий масштабного преступления указывают на то, что оно было заранее спланировано – доказательство того, что Геноцид армян был преднамеренным.

Ани Восканян – младший научный сотрудник Института арменоведческих исследований ЕГУ. Научные интересы: Геноцид армян, история Османской империи (XIX–XX вв.), история экономики. Автор 1 монографии, 1 коллективной монографии и 15 статей. ani.h.voskanyan@ysu.am

EXTERMINATION OF ARMENIANS AND EXPROPRIATION OF THEIR PROPERTY IN ADANA PROVINCE IN 1915

ANI VOSKANYAN

S u m m a r y

Keywords: Armenian Genocide ,Ottoman Empire, Cilicia, Adana Province, Ottoman authorities, Young Turk government, private and national property, deportation, extermination, confiscation.

By the end of 1915, almost all Armenians of Western Armenia, Cilicia and other provinces (vilayets) of the Ottoman Empire had been deported. Both in Adana and other places, Turks continued expropriation of property, plunder, appropriation and destruction of cultural values of Armenians. Deportation, plunder and extermination of Armenians were carried out by the orders from the central government, with the strenuous efforts of the local provincial authorities as well as groups and organizations that had been formed for that purpose, also the common people being actively involved in these actions. All levels of society were interested in deporting Armenians and pillaging their property: ordinary Turkish citizens used the loot to improve their living conditions, local authorities, other state institutions, banks, different insurance companies, etc. accumulated immense capital. Moreover, the Ottoman state, in addition to the

extermination and confiscation of the huge national wealth of Armenians, solved the most important existential issue for Turks - the issue of territory and land. This large-scale crime was committed according to a clearly set schedule and in an exact order of actions, which shows that the Armenian Genocide had been carefully planned and was perpetrated in accordance with an accurately worked out programme.

Ani Voskanyan – Junior Researcher of the Institute for Armenian Studies at Yerevan State University (YSU). Scientific interests: Armenian Genocide, History of the Ottoman Empire (XIX–XX), History of the economy. Author of 1 monograph, 1 collective monograph, and 15 research articles.
ani.h.voskanyan@ysu.am

ՀՏԴ : 327(44+475.25)

In 1920 the French implemented an active and generally pragmatic policy aimed at their economic penetration into the Republic of Armenia and the Transcaucasia as a whole. They also consolidated independence of all regional States. The political course of this Power elaborated by the Prime Ministers A. Millerand and G. Leygues had been aimed at the support to and the implemen-tation of the Treaty of Sevres concluded on August 10, 1920. At the same time, France did everything possible to reach a compromise with the Sultan's Cabinet and the Kemalists in order to weaken the role of the latters. Obstructing the military cooperation of Kemalists anf Bolsheviks was another imperative of their policy in the region.

Gayane Makhmourian – Doctor of Sciences in History, Leading Scientist at the Department of Contemporary History, Institute of History of the NAS RA. Scientific interests: the Armenian Question, the Armenian Genocide, politics of the Great Britain, France and the USA in regard to the Republic of Armenia in 1918–1920, the Karabakh movement and the Soviet society in 1988-1994. Author of 6 monographs, of the compilation of documents, of 68 articles and translator of 2 scientific books.

LITERATURE

Archive du ministère de l'Europe et des Affaires etrangères, Centre des Archives diplomatiques, La Courneve, France; Correspondance politique et commerciale (1918–1940), série Z – Europe, cote 46 Arménie 1918–1940, articles 7, 10; cote 117 USSR 1918–1929, articles 311–1, 628, 641, 644–645, 657

Archives de la guerre 1914–1918, service historique du ministère d'État chargé de la défense nationale, État-major de l'Armée de terre, Vincennes, France; groupe 20N Front Oriental, carte 181 Russie, 1919–1921, dossier 1

Armenia in Documents of the U.S. Department of State 1917-1920. 2020, comp. G. Makhmourian. Yerevan, Institute of History, NAS RA, 560 p.

Bournoutian G. A. 1999, The Politics of Demography: Misuse of Sources on the Armenian Population of Mountainous Karabakh. – «Journal of the Society for Armenian Studies» (Dearborn MI), vol. IX, pp. 99–103.

Documents diplomatiques français 1920–1932, 1920. 1997, tome I (10 Janvier – 18 Mai). Paris, Imprimerie Nationale, 689 p.

Documents diplomatiques français 1920–1932, 1920. 1999, tome II (19 Mai – 23 September). Paris, Imprimerie Nationale, 750 p.

Documents diplomatiques français 1920–1932, 1920. 2002, tome III (24 Septembre 1920 – 15 Janvier 1921). Bruxelles, P.I.E.-P. Lang, 722 p.

Documents on British Foreign Policy 1919–1939. 1952, 1st Series, vol. IV, ed. by E. L. Woodward, R. Butler. London, HMSO, 1277 p.

Documents on British Foreign Policy 1919–1939. 1962, 1st Series, vol. XII, ed. by E. L. Woodward, R. Butler. London, HMSO, 841 p.

National Archives of Armenia (NAA), f. 57, reg. 5, f. 222; f. 200, reg. 1, f. 249, 412, 427, 546, 556, 563, 576; f. 275, reg. 5, f. 184, 212; f. 276, reg. 1, f. 131, 218; collection of microfilms № 46, 1975. T1192 Records of the Department of State Relating to Internal Affairs of Armenia, 1910–1929, Roll 6, US National Archives and Records Service Administra-tion, Washington

Papers Relating to the Foreign Relations of the United States, 1920. 1936, vol. II, ed. J. V. Fuller. Wash., US GPO, 980 p.

United Nations Library and Archives, Geneva, Fond League of Nations Secretariat/ Political Section/Armenia/Registry Files 1919–1927/Political – General/Armenia/File R566/11/3538/3421/

United States National Archives, Washington D.C., Record Group 59 General Records of the Department of State, class 860J.4016P81/document 125

Kemal M. Atatürk'ün Kurtuluş Savaşi Yazişmalari. 1995. II, derl. M. Onar, Ankara, T. C. Kültür Bakanliği, 497 p.

Hovannisian R. G. 1982, The Republic of Armenia, vol. II From Versailles to London, 1919–1920, Berkeley & Los Angeles, University of California Press, 603 p.

Hovannisian R. G. 1996, The Republic of Armenia, vol. III From London to Sèvres, February – August 1920, Berkeley & Los Angeles, University of California Press, 534 p.

Hovannisian R. G. 1996, The Republic of Armenia, vol. IV From London to Sèvres, February – August 1920, Berkeley & Los Angeles, University of California Press, 496 p.

Huré F. 2006, Portraits de Pechkoff, Paris, de Fallois, 192 p.

Jevakhoff A. 2011, Les russes blancs, Paris, Tallandier, 605 p.

Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества, Документы и комментарий. 2003, т. 2, ч. 1, ред. и сост. Ю. Г. Барсегов. М., «Гардарики», 912 с.

К истории образования НКАО АзССР, 1918–1925, Документы и материалы. 1989. Баку, «Азернешр», 193 с.

Махмурян Г. Г. 2002, Политика Великобритании в Армении и Закавказье в 1918–1920 гг., Бремя белого человека. Ереван, «Лусакн», 309 с.

Махмурян Г. Г. 2017, Армянская дипломатия на I Лондонской конференции и вопросы границ (12 февраля – 10 апреля 1920 г.). – «Вестник общественных наук» НАН РА, № 2, с. 48–69.

Махмурян Г. Г. 2018, Армения и ее территориальный вопрос на Парижской мирной конференции (18 января – 2 июня 1919 г.). – ИФЖ, № 3, с. 104–124.

Ованнисян Р. 2007, Международные отношения Республики Армения 1918–1920 гг. Ереван, «Тигран Мец», 912 с.

Туманян М. 2012, Дипломатическая история Республики Армения 1918–1920 гг. Ереван, Национальный архив Армении, 473 с.

Ահարոնյան Ա. 2001, Սարդարապատից մինչև Սևր և Լոզան, Երևան, ԵՊՀ հրատ., 252 էջ:

Զոհրաբյան Է. Ա. 2010, Նախիջևանի հիմնահարցը (1920–1921), Երևան, ԵՊՀ հրատ., 430 էջ:

Մախմուրյան Գ. Գ. 2001, Անգլիական ռազմական վարչակարգը Անդրկովկասում և Հայաստանի կառավարությունը (1918 թ. դեկտեմբեր – 1919 թ. օգոստոս). – ՀՀ ԳԱԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», № 2, էջ 62–80:

Մախմուրյան Գ. Գ. 2018, Սևրի դաշնագիրը և ԱՄՆ-ի քաղաքականությունը Հայաստանի Հանրապետության նկատմամբ (1919–1920 թթ.). – «Հայաստանի Հան-

ռապետություն–100» միջազգային գիտաժողովի զեկուցումների ժողովածու, Երևան, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, էջ 284–294:

Սաֆրաստյան Ռ. Ա. 2019, Մուսթաֆա Քեմալ. Պայքար Հայաստանի Հանրապետության դեմ (1919–1921 թթ.), Երևան, Տիր, 140 էջ:

Վրացյան Ս. 1993, Հայաստանի Հանրապետություն, Երևան, «Հայաստան», 704 էջ:

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԵՎ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ 1920 Թ.

ԳԱՅԱՆԵ ՄԱԽՄՈՒՐՅԱՆ

Ամփոփում

Բանալի բառեր՝ Հայաստանի Հանրապետություն, Ֆրանսիա, Թուրքիա, Անդրկովկաս, արտաքին քաղաքականություն, Ալ. Միլյերան, Ժ. Լեյգ, 1920 թ. Սևրի պայմանագիր, բարձրագույն հանձնակատար Դ. դը Մարտել, ՌԽՖՍՀ:

Ֆրանսիայի վարչապետեր ու արտաքին գործոց նախարարներ Ալեքսանդր Միլյերանի և Ժորժ Լեյգի՝ Կովկասում Գերագույն հանձնակատարներին հասցեագրած 1920 թ. փետրվարի 12-ի, սեպտեմբերի 20-ի ու նոյեմբերի 4-ի հրահանգները Անդրկովկասում և Հայաստանում նրանց վարած քաղաքականության նպատակների ու խնդիրների մասին էին: 1920 թ. հունվարի 19-ին Դաշնակիցների կողմից Հայաստանի Հանրապետության փաստացի ճանաչումից հետո, Ֆրանսիան դիվանագիտական աշխատանք ծավալեց այստեղ: Այդ աշխատանքը հիմնականում ուղղված էր առևտրի զարգացման, ռազմական մասնակի օգնության և որոշ զինատեսակների վաճառքի հարցերի, բոլշևիզմին ու քեմալա-խորհրդային համագործակցությանը դիմակայման, ֆրանսիական դպրոցների բացման ու Երևանի հայկական համալսարանի հետ փարիզյան հավատարմագրման հիմնահարցերին:

Ֆրանսիական կառավարությունը գտնում էր, որ 1920 թ. օգոստոսի 10-ի Սևրի պայմանագիրը նպաստում էր Արևելքում իրենց դիրքերի ամրապնդմանը: Միևնույն ժամանակ ձգտում էր մեղմացնել Հայաստանի օգտին տարածքային պահանջները՝ թուրքական կողմից վավերացնելու և կատարելու նպատակով: 1920 թ. թուրք-հայկական պատերազմն ու Հայաստանի Հանրապետության ծանր պարտությունն արմատապես փոխեցին Ֆրանսիայի վարած քաղաքականությունը և, փաստորեն, տարածաշրջանում հանգեցրին նրա դիվանագիտական գործունեության դադարեցմանը:

Գայանե Մախմուրյան – պ. գ. դ., ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի նորագույն պատմության բաժնի առաջատար գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունները՝ Հայկական հարց, Հայոց մեծ եղեռն, Մեծ տերությունների վարած քաղաքականությունը 1918–1920 թթ. ՀՀ-ի նկատմամբ, Ղարաբաղյան շարժումը 1988–1994 թթ.: Հեղինակ է 6 մենագրության, փաստաթղթերի ժողովածուի և 68 հոդվածի: ggmakhm@hotmail.com

ФРАНЦУЗСКАЯ ПОЛИТИКА В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ И ЗАКАВКАЗЬЕ В 1920 Г.

ГАЯНЭ МАХМУРЯН

Р е з ю м е

Ключевые слова: Республика Армения, Франция, Турция, Закавказье, внешняя политика, А. Мильеран, Ж. Лейг, Севрский договор 1920 г., Верховный комиссар Д. де Мартель, РСФСР.

Инструкции премьер-министров и министров иностранных дел Франции Александра Мильерана и Жоржа Лейга для Верховных комиссаров на Кавказе от 12 февраля, 20 сентября и 4 ноября 1920 г. излагают цели и задачи политики, осуществлявшейся ими в Закавказье и Армении. После признания Союзниками Республики Армения де факто 19 января 1920 г. Франция развернула здесь дипломатическую работу. В список поручений входили вопросы развития торговли, частичной военной помощи и продажи ряда боеприпасов, проблемы противодействия большевизму и кемало-советскому сотрудничеству, открытие на месте французских школ и парижская аккредтация Ереванского армянского университета.

Французское правительство считало, что Севрский договор от 10 августа 1920 г. способствовал укреплению его позиций на Востоке. В то же время оно стремилось смягчить его территориальные требования в пользу Армении, чтобы турецкая сторона ратифицировала и выполнила этот документ. Турецко-армянская война 1920 г. и тяжелое поражение в ней Республики Армения кардинально изменили французскую политику и практически привели к прекращению ее дипломатической деятельности в регионе.

Гаянэ Махмурян – д. и. н., ведущий научный сотрудник отдела новей-шей истории Института истории НАН РА. Научные интересы: Армянский вопрос, Геноцид армян, политика Великих держав в отношении Республики Армения 1918–1920 гг., Карабахское движение 1988–1994 гг. Автор 6 монографий, сборника документов и 68 статей.
ggmakhm@hotmail.com

Պատմաբանասիրական հանդես • Историко-филологический журнал • Historical and Philological Journal • 2023 № 2

ՀՏԴ : 050/070(=919.81)(56)+947.925

Doi:10.54503/0135-0536-2023.2-100

ՊՈԼՍԱՀԱՅ ՊԱՐԲԵՐԱԿԱՆՆԵՐԸ «ՆԵՄԵՍԻՍ» ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ (1920–1922 թթ.)*

ՄԱՐԻԱՄ ՀՈՎՍԵՓՅԱՆ

Բանալի բառեր՝ պոլսահայ պարբերականներ, «Նեմեսիս» գործողություն, օսմանյան ռազմական դատարան, հայ վրիժառուներ, Հայոց ցեղասպանություն, Հայոց ցեղասպանության կազմակերպիչներ:

Նախաբան

1919 թ. սեպտեմբերի 27-ից հոկտեմբերի 30-ը Երևանում տեղի ունեցած ՀՅԴ 9-րդ Ընդհանուր ժողովում որոշում է ընդունվում Հայոց ցեղասպանության կազմակերպիչների նկատմամբ իրականացնել «Նեմեսիս» պատժիչ գործողությունը[1]: Այդ ձեռնարկներն ունեցել են հասարակական մեծ հնչեղություն, որը ներկայացված է նաև 1920–1922 թթ. պոլսահայ պարբերականների էջերում:

Մեծ եղեռնի կազմակերպիչների սպանությունների անդրադարձը պոլսահայ օրաթերթերի էջերում

Հայաստանի առաջին հանրապետության անկումը, նախկին Խորհրդային Հայաստանում ապրող «Նեմեսիս» գործողության մեջ ընդգրկված գործիչների նկատմամբ սկված հալածանքներն ու նրանց մի մասի պարտադրված արտագաղթն օտար երկրներ մեծապես խանգարում են «Նեմեսիսի» իրագործմանը: Այն մնում է անավարտ:

1920–1922 թթ. պոլսահայ բարձր վարկանիշ ունեցած կոնկրետ երեք օրաթերթերի՝ ՀՅԴ ոչ պաշտոնական օրգան «Ճակատամարտի»[2], ռամկավարների ոչ պաշտոնական խոսափող «Ժողովուրդի ձայնը. Ժամանակի», չեզոք պարբերական «Վերջին լուրի» նյութերի քննական վերլուծությունը վկայում է, որ այդ պարբերականների աշխատակիցներն ու ընթերցողների լսարանը

---

* Ներկայացվել է 08. VI. 2023 թ., գրախոսվել է 11. VI. 2023 թ., ընդունվել է տպագրության 19. VI. 2023 թ.:

[1] Հայոց պատմություն. 2010, 233–234:

[2] «Ճակատամարտը» համարվում է 1909–1915 թթ. Կ. Պոլսում լույս տեսած ՀՅԴ Արևմտյան բյուրոյի «Ազատամարտ» պաշտոնաթերթի իրավահաջորդը, թեև հրատարակվել է արդեն որպես ՀՅԴ ոչ պաշտոնական մամուլի օրգան:

գրեթե անտարբերությամբ են կարդացել դավաճան Վահե Իհսանի[3] սպանության լուրը: Չկա որևէ արձագանք կամ հոդված դրա կապակցությամբ: Միայն «Ճակատամարտի» համարներից երկուսում՝ «Ընթացիկ կյանք» խորագրի ներքո, փոքրիկ լուրեր են տպագրվել այդ մասին, որոնցում դա չեն դիտարկել իբրև վրեժխնդրության արտահայտություն, այլ զուտ որպես ընթացիկ տեղեկատվություն է ներկայացվել, թեև այս ձեռնարկը[4] «Նեմեսիս» գործողության դրվագների շարքում էր[5]: Այդ անձնավորության սպանության հաջորդ օրը «Ճակատամարտը» գրում էր. «Երէկ առտու ժամը ութի ատենները Բերա, Թարլա Պաշի պողոտայէն անցած ժամանակ, անծանօթի մը կողմէ սպաննուած է Վահէ Իհսան անուն անձ մը: Սպաննիչը չէ ձերբակալուած»[6]: Թերթի հաջորդ համարում նույն թեմայի վերաբերյալ ծաղկաքաղ էր արված մայրաքաղաքի նաև թուրքական թերթերից[7]: Թուրք լրագրողներն առաջ էին քաշում այդ սպանության ընույթի վրեժխնդրական վարկածը, ինչը «Ճակատամարտը» ո՛չ հաստատում էր, ո՛չ՝ հերքում[8]: Թուրք լրագրողներից մեկը նշում էր, որ Վահե Եսայանի կամ Իհսանի սպանության՝ «վրէժխնդրական արարք մը ըլլալը կը հաստատուի անով, որ սպաննուածը գէշ համբաւ կը վայելէր պատերազմի շրջանին և իր պաշտօնն ու ազդեցութիւնը չարաչար գործածած էր, մեծ վնաս հասցնելով իր հայ հայրենակիցներուն»[9]: Թուրքական մեկ այլ թերթ կառավարության լրտես էր համարում Իհսանին, որը, իբրև այդպիսին, «նուազ համակրութիւն կը վայելէր»[10]:

Վերոնշյալ պոլսահայ պարբերականների էջերում Վահե Իհսանի սպանության լուրի հպանցիկ անդրադարձը և միևնույն ժամանակ Հայոց ցեղասպանության պատճառահետևանքային կապերի վերհանմանը նվիրված բազմաթիվ հրապարակումները կարծես ցույց էին տալիս, թե տվյալ պարագայում

---

[3] Դավաճան Վահե Իհսանին (Եսայանին) «Նեմեսիսի» շրջանակում 1920 թ. մարտի 27-ին Կ. Պոլսում սպանել է Արշավիր Շիրակյանը. տե՛ս «Նեմեսիս» գործողություն.– Հայկական հարց հանրագիտարան. 1996, 354–355:

[4] Մ ե լ ք ո ն յ ա ն. 2021:

[5] «Ճակատամարտ» (Կ. Պոլիս), 28, 30. III. 1920:

[6] «Ճակատամարտ», 28. III. 1920:

[7] «Ճակատամարտ», 30. III. 1920:

[8] «Ճակատամարտի» խմբագրակազմի այս կեցվածքը հասկանալի է, քանի որ վերջին տարիներին վերհանված արխիվային փաստաթղթերից և ուսումնասիրություններից պարզվել է՝ օրաթերթի խմբագրատունը «Նեմեսիսի» կազմակերպչական ընդհատակյա կենտրոնատեղիներից մեկն է եղել՝ Բոստոնի «Հայրենիք» պարբերականի խմբագրության հետ (Խ ա ն ո ւ մ յ ա ն. 2019, 67): Բնական է, որ Օսմանյան կայսրության մայրաքաղաքում տպագրվող «Ճակատամարտը» պետք է չափազանց զգույշ լիներ «Նեմեսիս» գործողությանն անդրադառնալիս, որպեսզի թուրքական հատուկ ծառայությունների թիրախում չհայտնվեր, և չբացահայտվեր բուն ծրագիրը:

[9] Հայոց պատմություն. 2010, 233:

[10] Հայոց պատմություն. 2010, 233:

հայ հասարակությունը հասկանում էր, որ արևմտահայերի տեղահանությունն ու ջարդերը նախապես ծրագրված էին թուրքական իշխանությունների կողմից:

Այս առումով բոլորովին այլ էր օրաթերթերի վերաբերմունքը Սայիդ Հալիմի[11], Մեհմեդ Թալեաթի[12] ու Հայոց ցեղասպանության մնացած կազմակերպիչների[13] սպանությունների նկատմամբ: Այս կապակցությամբ կարևոր մի քանի հանգամանքի վրա պետք է ուշադրություն դարձնել:

- *Թե՛ Վահե Իհսանի, թե՛ Սայիդ Հալիմի, թե՛ Մեհմեդ Թալեաթի սպանությունների մասին գրելիս կամ թուրքական ու արտասահմանյան մամուլի օրգաններից թարգմանաբար նյութեր տպագրելիս «Ճակատամարտը», «Ժողովուրդի ձայնը. Ժամանակը», «Վերջին լուրը», թեև արտահայտում էին զուտ իրենց խմբագրությունների կամ համակիրների կարծիքն ու մոտեցումները, բայց դրանք ներկայացնում էին որպես ողջ հայության տեսակետներ, քանի որ այդ վրիժառության ձեռնարկներն անմիջականորեն կապված էին Հայոց ցեղասպանության կազմակերպման, ծրագրման և իրագործման հետ:*
- *Պարբերականների աշխատակիցների մտքով, հավանաբար, չէր անցնում (բացառությամբ՝ «Ճակատամարտի»), որ այդ սպանությունները կատարվում էին «Նեմեսիս» գործողության շրջանակում, և ամենևին պատահական չէին ընտրված զոհերը:*
- *Երեք օրաթերթն էլ միակարծիք էին այն հարցում, որ Սայիդ Հալիմի և Մեհմեդ Թալեաթի սպանությունները կատարող անձինք անմեղ էին. նրանք ի կատար էին ածել 1918 թ. հոկտեմբերի 30-ին կնքված Մուդրոսի զինադադարից հետո օսմանյան ռազմական դատարանի կողմից երիտթուրքական պարագլուխների համար կայացված մահվան դատավճիռները[14]: Համաձայն օսմանյան ռազմական դատարանի 1919 թ. հուլիսի 5-ի դատավճռի՝ «Միութ-*

---

[11] *Սայիդ Հալիմը 1913–1918 թթ. Օսմանյան կայսրության վարչապետն էր, «Միություն և առաջադիմություն» կուսակցության գլխավոր քարտուղարը (Հայկական հարց հանրագիտարան. 1996, 397):*

[12] *Մեհմեդ Թալեաթը 1918 թ. եղել է Օսմանյան կայսրության վարչապետն ու «Միություն և առաջադիմություն» կուսակցության Կենտրոնական կոմիտեի նախագահը, մինչ այդ ներքին գործերի, փոստի ու հեռագրության նախարարն էր, Հայոց ցեղասպանության կազմակերպիչների եռյակում էր Իսմայիլ Էնվերի ու Ահմեդ Ջեմալի հետ (Հայկական հարց հանրագիտարան. 1996, 137):*

[13] *Արամ Երկանյանը Թիֆլիսում 1920 թ. հունիսի 19-ին գնդակահարում է Ֆաթալի խան Խոյսկուն, իսկ 1921 թ. հուլիսի 19-ին Միսաք Թորլաքյանը Կ. Պոլսում սպանում է Բեյբուդ խան Ջիվանշիրին: Նրանցից առաջինը 1918 թ. սեպտեմբերին Բաքվում և 1920 թ. մարտին Շուշիում հայերի կոտորածների կազմակերպիչն էր, իսկ երկրորդը Բաքվի հիշյալ ջարդերի ծրագրողներից էր (Հայոց պատմություն. 2010, 234–235): Վրեժխնդրության այս ձեռնարկների մասին պոլսահայ պարբերականների էջերում հիմնավոր անդրադարձի չենք հանդիպել:*

[14] *Թուրքիայի Հանրապետության պատմություն. 2018, 16:*

յուն և առաջադիմություն» կուսակցության և թուրքական իշխանության պարագլուխներ Թալեաթը, Էնվերը, Նազիմը, Ջեմալը, Բեհաէդդին Շաքիրը և ուրիշներ մեղադրվեցին Թուրքիան պատերազմի մեջ ներքաշելու, հայերի տեղահանությունն ու ցեղասպանությունը կազմակերպելու մեջ և հեռակա կարգով դատապարտվեցին մահվան[15]:

Ուշադրություն է գրավում այն, որ Վահե Իհսանի սպանության մասին լուրերում վերոհիշյալ պարբերականները չէին անդրադառնում նրան գնդակահարողի ազգային պատկանելության հարցին, այնինչ Սայիդ Հալիմի և Մեհմեդ Թալեաթի սպանությունների դեպքում արդեն պարբերաբար շեշտվում էր նրանց սպանողների հայ լինելու հանգամանքը:

1921 թ. մարտի 15-ին Բեռլինում Թալեաթ փաշայի գնդակահարությունն արդեն բացում է գրեթե բոլոր խաղաքարտերը, քանի որ նրան սպանող Սողոմոն Թեհլիրյանը ձերբակալվում է և դատարանի կողմից արդարացվում: «Ժողովուրդի ձայնը. Ժամանակ» օրաթերթի վերնագիրն էլ շատ խոսուն է՝ «Վրիժառուն»[16]*: Թղթակցության մեջ նշվում էր, որ աշխարհը սահմռկեցնող սարսափազդու ոճիրը՝ հայոց Մեծ եղեռնը, անպատիժ չէր մնացել. «Թալէաթ ոչ ևս է: Ան, որ հազարաւոր անմեղներու արիւնը թափելով, չէր յափրացած և իր թաքստոցին մէջ նորանոր դժոխային ծրագիրներ յղանալու ետեւէ էր, ինկաւ վրիժառու հայ գնդակին տակ»*[17]*: Լրագրողը պնդում էր, որ Թեհլիրյանը լուծել էր հազարավոր անթաղ մնացած իր հայրենակիցների սպանության վրեժը: Մեջբերում էր հարցաքննության ժամանակ նրա ասած խոսքերն՝ ուղղված հարցաքննող ոստիկաններին. «Ես կատարեցի իմ պարտականութիւնը, ինծի համար միեւնոյնն է, եթէ նոյնիսկ ասկէ յետոյ գլուխս ալ կտրելու ըլլաք»*[18]*:*

«Վերջին լուր» պարբերականի լրագրող Հովհաննես Ասպետը գրում էր. «Երբ իմացա վայրագ տիքթաթորին սպանութիւնը, անմիջապէս խորհեցայ, որ շանթահարիչ ձեռքը միմիայն վշտահար հայու մը վրէժխնդիր ձեռքը կրնար ըլլալ»[19]*: Նա վստահեցնում էր ընթերցողներին, որ Թալեաթի ոճրակից ընկերները շարունակ պետք է հետ նայեին՝ «տեսնելու համար մօտենալը վերահաս Արդարութեան սուրին, որ մութին մէջ կը շողշողայ»*[20]*: Հեղինակը չի անդրադարձել Սողոմոն Թեհլիրյանի կյանքին, քանի որ գտնում էր, թե այդ արդար պատժիչ ձեռնարկը ուրիշ հայեր նույնպես երազում էին ի կատար ածել: Նա վկայակոչում էր իր ընկերոջ հետևյալ խոսքերը. «Գաւառացի բարեկամ մը*

[15] *Հայկական հարց հանրագիտարան. 1996, 354–355:*
[16] *«Ժողովուրդի ձայնը. Ժամանակ», 23. III. 1921:*
[17] *«Ժողովուրդի ձայնը. Ժամանակ», 23. III. 1921:*
[18] *«Ժողովուրդի ձայնը. Ժամանակ», 23. III. 1921:*
[19] *«Վերջին լուր», 23. III. 1921:*
[20] *«Վերջին լուր», 23. III. 1921:*

ունիմ, որուն բոլոր ազգականները տարագրուած ու մեռած են, միտքը դրած է Թալէաթը սպաննել, և կընէ, որովհետև վիշտէն գրեթէ խենդի պէս եղած է»[21]:

«Ճակատամարտ» օրաթերթը 1921 թ. մարտի 18-ի համարում տպագրել է Բեռլինից ստացած երկու հեռագիր, որոնցում մանրամասներ էին հաղորդվում Թալեաթի սպանության մասին[22]: «Իր սպաննիչը հայ ուսանող մըն է Սողոմոն Թէյլիրեան անունով, 24 տարեկան ... Սպաննիչը չարաչար կերպով խոշտանգուեցաւ ամբոխին կողմէ: Համառօտակի հարցաքննուելով՝ յայտարարեց.— «Թալէաթ փաշան սպաննեցի՝ վրէժը առնելու համար իմ ծնողքիս, որ սպաննուեցան իր հրամանովը ... Պերլին եկած էի զայն սպաննելու վճռական դիտաւորութեամբ»»[23], — կարդում ենք դրանցից մեկում: Նույն համարում «Օրը օրին» խորագրի ներքո Երվանդ Օտյանը գրում էր, որ Թալեաթի կամ Էնվերի սպանությունները «վրէժխնդրական որ և է յագեցում չեն տար մեզի, գիտնալով հանդերձ, որ այդ երկու չարագործները պատասխանատուութեան մեծ բաժին մը ունեցած են հայաջինջ սարսափներուն մէջ ... Մէկ միլիոնէ աւելի կիներու, մանուկներու և ծերերու բռնաբարումը, բնաջնջումը և սպանութիւնը, ամբողջ ժողովուրդի մը թալանն ու կողոպուտը վերագրել մէկ քանի տասնեակ արիւնարբու դիւահարներու, և զանոնք պատժելով՝ արդարութիւնը գործադրուած նկատելը առնուազն ծիծաղելի պիտի ըլլար, և բնաւ պիտի չհամապատասխանէր գործուած ահաւոր ոճիրին մեծութեան»[24]:

«Ճակատամարտը» համամիտ էր ֆրանսիացի լրագրող Օգյուստ Կովեի կարծիքի հետ, որը նա ներկայացրել էր ֆրանսիական թերթերից մեկում: Այն թարգմանաբար տպագրվել էր «Ճակատամարտ»-ում: Հեղինակը հեշտ մահ էր համարում Թալեաթի մահկանացուն կնքելը, թեև գտնում էր՝ դա քիչ էր նրա համար: Նա դա պատճառաբանում էր հետևյալ կերպ. «Թալէաթը մէկուկէս միլիոն հայերու բնաջնջման հրաման տուողն է: Անտարակոյս, իբրև հաւանող և մեղսակից ունեցած է Իթթիհատի կառավարութեան և քոմիթէին միւս անդամները և գերման դեսպանատունը: Առանձին չէր գործեր ... Որոշած էր ջնջել հայկական խնդիրը կայսրութեան մէջէն, հայերը բնաջնջելով ... Ան անձնատուր եղաւ համիսլամական և թուրանական քաղաքականութեան»[25]:

Պոլսահայ վերոհիշյալ պարբերականներն իրենց հրապարակումների մեջ տեղ են հատկացրել նաև Սողոմոն Թեհլիրյանի դատավարությանը[26]: Դրանցում հավատ կար եվրոպական արդարադատության նկատմամբ: Պարզ է, որ

---

[21] «Վերջին լուր», 23. III. 1921:
[22] «Ճակատամարտ», 18. III. 1921:
[23] «Ճակատամարտ», 18. III. 1921:
[24] «Ճակատամարտ», 18. III. 1921:
[25] «Ճակատամարտ», 23. III. 1921:
[26] «Ժողովուրդի ձայնը. Ժամանակ» օրաթերթը, թեև Սողոմոն Թեհլիրյանին հերոս էր համարել («Ժողովուրդի ձայնը. Ժամանակ», 13. VI. 1921), բայց թռուցիկ էր անդրադարձել նրա դատավարությանը:

Թեհլիրյանի արդարացումը դատարանի կողմից և 1921 թ. հունիսի 4-ին նրա ազատ արձակումը ցնծության առիթ էին ոչ միայն այս թերթերի խմբագրությունների աշխատակիցների, այլև աշխարհասփյուռ հայության համար: Տեղին է մեջբերել հետևյալ հատվածը «Վերջին լուր» օրաթերթի հոդվածներից մեկից. «Մենք կը սպասէինք այս վճիռին, քանի որ ... Թուրքիա գտնուող բազմաթիւ գերման սպաներ ու քաղաքացիներ աչքովնին տեսած էին անլուր խժդժութիւնները, և երբ զոհերէն մին, հրաշէնը բարձրացնելով, իր կորսուած ընտանիքին վրէժը լուծեց ամբողջ ազգի մը ջարդարարէն, Պէրլինի դատաւորները չէին կրնար արդարութենէ շեղիլ, դատապարտելով Աստուծոյ կողմէ զինուած այդ մարդը, որ կուգար միջոցն ըլլալ թէ՛ մարդկութեան և թէ՛ իր կառավարութեան կողմէ վճռուած մահապարտի մը պատիժին գործադրութեան»[27]: Նշվում էր, որ Թալեաթը, թեև «մարդկութեան առջեւ արդէն դատապարտեալ մըն էր, իբր հայոց մեծագոյն ոճրագործներէն մին»[28], բայց նա նաև մահվան էր դատապարտվել Օսմանյան կայսրության դատարանի կողմից:

«Ճակատամարտ» օրաթերթում Սողոմոն Թեհլիրյանի դատավարության մասին առաջին թղթակցություններից մեկում նույնպես մեջբերել էին քրեական այդ գործով ընդհանուր դատախազի խոսքերը, թե «նոր թուրք կառավարութեան կողմէ Թալէաթ մահուան դատապարտուած էր»[29]: Տպագրել էին նաև դատավարության սղագրությունից կարևոր հատվածներ: Դրանց մեջ էր մասնավորապես Թեհլիրյանի պատասխանն այն հարցին, թե չգիտե՞ր, որ գերմանական օրենքով արգելված է մարդասպանությունը: Նա իրեն մեղավոր չէր համարել. «Ես մարդասպան մը չեմ»[30]: Իսկ հայկական մամուլն ու հայ ժողովուրդը նրան առ այսօր հերոս է համարում, հերոս, ում նմանների շնորհիվ հայությունը գլխահակ չի կանգնում իրեն հայրենիքի մեծ մասից ժամանակավորապես զրկած, իր բազմահազար ազգակիցներին կոտորած թուրք հանրույթի առաջ:

Պարբերականների անդրադարձը «Նեմեսիսի» ձեռնարկների մասին թուրքական մամուլի արձագանքներին (1921–1922 թթ.)

«Նեմեսիս» գործողության մեջ ընդգրկված անվեհեր վրիժառու Արշավիր Շիրակյանը, ինչպես նշվեց, 1920 թ. մարտի 27-ին Կ. Պոլսում Վահե Իհսանին մահապատժի ենթարկելուց հետո 1921 թ. դեկտեմբերի 5-ին գնդակահարում է Հռոմում թաքնվող Սայիդ Հալիմ փաշային: «Վերջին լուրը» հակիրճ ներկայացնելով թուրքական թերթերի տեսակետներն այս դեպքի առիթով նաև իր կարծիքն էր հայտնում իշխանությունների հակահայ քաղաքակա-

[27] *«Վերջին լուր», 06. VI. 1921:*
[28] *«Վերջին լուր», 06. VI. 1921:*
[29] *«Ճակատամարտ», 05. VI. 1921:*
[30] *«Ճակատամարտ», 05. VI. 1921:*

նության մասին[31]: Թուրքական թերթերից մեկը գրում էր. «Հալիմ փաշայի սպանութեամբ մէկ տարուան մէջ երկու եպարքոս վրէժխնդրութեան զոհ կ'երթան: Նախկին եպարքոս Թալէաթ փաշա ալ Պերլինի մէջ Թէհլիրեանի կողմէ նահատակուեցաւ, և գերման երդուեալները անպարտ արձակեցին զայն ... Հայ մըն է սպաննիչը»[32]: Մեկ այլ թուրքական պարբերականից թարգմանված թղթակցության մեջ հայ վրիժառուներին մեղադրում էին արևմտահայերի տարագրությանը և ջարդերին իբրև թե անմասն մնացած Սայիդ Հալիմի սպանության համար[33]: Սպանված նախկին վարչապետի որդին՝ Հալիմ Սայիդը, թուրքական մամուլին հայտնել էր. «Անկասկած ոճրագործը հայ քոմիթէնեռուն մէկ գործիքն է»[34]:

«Վերջին լուրն» այսպես էր դրանց արձագանքում. «Մենք ճանճրացանք պատասխանելէ թուրք թերթերու հակահայ հրատարակութեանց, որոնք կը թոյլատրուին զարմանալի մտայնութեամբ մը ... Ի՛նչպէս, այսքան աղէտներէ ետք, թուրք թերթերը կը համարձակին տակաւին պաշտպանել և արդարացնել տեղահանութեան և հետեւաբար ջարդի քաղաքականութիւնը»[35]:

Իր հերթին «Ժողովուրդի ձայնը. Ժամանակ» օրաթերթը, թարգմանաբար տպագրելով մայրաքաղաքի թուրքական թերթերի արձագանքը Սայիդ Հալիմի սպանությանը, առանց մեկնաբանության ներկայացնում էր դրանց տեսակետն առ այն, որ այդ ձեռնարկը «Հայ գաղտնի ընկերութեան մը անդամներուն գործն է»[36]: Թուրքական թերթերը մտածում էին, որ «Էնվէր և Ճէմալ փաշաներն ալ այդ կերպով պիտի սպաննուին, ինչ-որ այդպիսի ընկերութեան մը գոյութիւնը իրապէս դապացուցանէ»[37]:

«Ճակատամարտը» ներկայացրել է թուրքական շրջանակներում շրջանառվող «սև ցանկի» ոչ պաշտոնական վարկածին, որն արտահայտված էր թուրքական մամուլում մասնավորապես 1922 թ. ապրիլի 17-ին Բեռլինում Արշավիր Շիրակյանի և Արամ Երկանյանի կողմից Ջեմալ Ազմիի ու Բեհաէդդին Շաքիրի սպանություններից հետո: Թարգմանաբար տպագրված այդ թղթակցության մեջ նշվում էր. «Այս ոճիրներուն շարունակութիւնը և յաջորդականութիւնը այլևս ոչ մէկ կասկած կը թողուն, թէ կազմակերպուած և կանոնաւոր ծրագրով մարմին մը գոյութիւն ունի: Սախտ փաշայի սպանութենէն ետք «Պոսֆոր» խօսած էր սեւ ցանկի մը մասին, որուն մէջ յիշուած էին նաեւ Պէհաէտտին Շաքիր և Ճէմալ Ազմի պէյերու անունները»[38]: Առաջարկվում էր նաև ամեն կերպ նպաստել թուրքական պետության անկախությանը և անձեռնմխելիությանը, որպեսզի կարողանային դեմն առնել սպանված նախկին

[31] «Վերջին լուր», 10. XII. 1921:
[32] «Վերջին լուր», 10. XII. 1921:
[33] «Վերջին լուր», 10. XII. 1921:
[34] «Վերջին լուր», 27. XII. 1921:
[35] «Վերջին լուր», 10. XII. 1921:
[36] «Ժողովուրդի ձայնը. Ժամանակ», 08. XII. 1921:
[37] «Ժողովուրդի ձայնը. Ժամանակ», 08. XII. 1921:
[38] «Ճակատամարտ», 21. IV. 1922:

«անմեղ»[39] բարձրաստիճան պաշտոնյաների դեմ իրականացված «հանցագործությունները»[40]:

«Ժողովուրդի ձայնը. Ժամանակ» օրաթերթը վերոհիշյալ սպանությունների առիթով նույնպես ներկայացնում էր թուրքական մամուլի արձագանքը, որտեղ Ջեմալ Ազմիին և մյուս սպանվածներին համարում էին նահատակներ, հայրենիքին ծառայած նվիրյալներ ու անմեղ զոհեր[41]: Ջեմալ Ազմիի և Բեհաէդդին Շաքիրի սպանությունները կատարած երկու անձանց, որոնք խույս էին տվել ոստիկանների հետապնդումից, հայ էին համարում թե՛ թուրքական թերթերը, թե՛ Բեռլինի ոստիկանությունը: Հետաքրքիրն այն է, որ ակամա ընդունում էին սպանվածների մեղավոր լինելը հայության առջև, գրելով, թե նրանք իբրև թե խաղաղության վերջնական պայմանագրի կնքվելուց հետո պետք է վերադառնային Կ. Պոլիս՝ «թուրք արդար դատարանի մը առջեւ տալու համար պատերազմի ընթացքին իրենց գործունէութեան հաշիւը»[42]:

Պարբերականների ավելի զգուշավոր ընթացքը երիտթուրք պարագլուխների սպանություններին անդրադառնալիս (1922 թ. կեսեր)

Խնդրո առարկա ժամանակահատվածում աշխարհաքաղաքական նոր հանգամանքներն էին ստիպում աշխարհասփյուռ հայությանը, այդ թվում՝ Թուրքիայում դեռևս մնացած հայերին, ավելի զգուշավոր լինել իրենց քաղաքական պահանջների մեջ: Թվարկենք այդ պատճառներից հիմնականները. քեմալականների վերջնական հաղթանակը երկրում, Հայաստանի խորհրդայնացումն ու խորհրդային կայսերապետության կայացումը, Հայկական հարցի լուծման հետ կապվող հույսերի թուլացումը:

Բնական էր այն ինքնապաշտպանական մղումը, որով պոլսահայ վերոնշյալ պարբերականները գրում էին 1922 թ. հուլիսի 25-ին Թիֆլիսում Ստեփան Ծաղիկյանի, Պետրոս Տեր-Պողոսյանի և Արտաշես Գևորգյանի կողմից[43] «Նեմեսիսի» թիրախներից՝ Ահմեդ Ջեմալի[44] սպանության մասին: Պոլսահայ երեք օրաթերթն էլ դա վերագրում էին ոչ թե հայ վրիժառուների, այլ խորհրդային իշխանությունների կողմից ուղարկված մարդասպանների: Այդ ժամանակահատվածում, ինչպես վկայում էին պարբերականների հրապարակումները, խորհրդային իշխանությունները պայքարում էին համիսլամական ընդհանուր ընդվզման դեմ, և այդ ծիրում նաև Էնվեր ու Ջեմալ փաշաների գործունեությունն էր նրանց անհանգստացնում: Ահա թե ինչ էր թուրքական թերթերից

[39] *«Ճակատամարտ», 21. IV. 1922:*
[40] *«Ճակատամարտ», 21. IV. 1922:*
[41] *«Ժողովուրդի ձայնը. Ժամանակ», 29. IV. 1922:*
[42] *«Ժողովուրդի ձայնը. Ժամանակ», 29. IV. 1922:*
[43] *Հ ա կ ո բ յ ա ն. 2010, 236:*
[44] *Ահմեդ Ջեմալը եղել է Օսմանյան կայսրության ծովային նախարար և երիտթուրքական իշխող եռյակի անդամ՝ Թալեաթ ու Էնվեր փաշաների հետ (Հայկական հարց հանրագիտարան. 1996, 382):*

թարգմանաբար արտատպել «Վերջին լուրը». «Շատ կարելի է, որ Ճէմալ սպաննուած ըլլայ Իսլամական միութեան թշնամի քոմիթէի անդամի մը կողմէ: Կը թուի, թէ այդ քոմիթէն շատ կը վախնար, որ Ճէմալ Աֆղանիսթանի մէջ կը խաղայ այն դերը, զոր կը խաղայ Էնվէր Պուխարայի մէջ: Եթէ այս լուրը ճիշդ է, սպաննիչին անձը բնաւ կարևորութիւն չունի: Այս պարագային անիկա Սովիէթներու մէկ գործիքն է միայն»[45]:

Գրեթե նման եզրակացությամբ նյութ կար «Ժողովուրդի ձայնը. Ժամանակ» օրաթերթում[46]: «Ճակատամարտը» ևս համակարծիք էր. «Կըսուի, թէ Սովիէթներու կողմէ մասնաւոր մարմին մը խիստ կերպով կը հետապնդէ համաթուրանականութեան առաջնորդները»[47]: Պարբերականը տպագրել էր նաև թուրքական թերթերի կարծիքներն այդ սպանության վերաբերյալ: Ըստ թուրք լրագրողների՝ հայերն էին վրեժ լուծել Ահմեդ Ջեմալից. «Գալով հայերէն թերթերուն, անոնք աւելի շատ կը զբաղին ոճրագործով և սպանութիւնը կը վերագրեն պոլշեւիկներուն: Բացայայտ է, թէ ասիկա որքան անիմաստ է ... Նկատելով, որ Իթթիհատի ղեկավարները մէկիկ-մէկիկ սպաննուած են հայերու կողմէ, կարելի է վճռել, որ Ճէմալ փաշա ևս զոհ եղած է հայերու ոխակալութեան և վրէժին»[48]:

Ահմեդ Ջեմալի սպանության մասին բավական հետաքրքիր էր «Վերջին լուր» օրաթերթի թղթակցություններից մեկի վերնագիրը՝ «Դաշնակցականներու ձերբակալում և Հայաստանի ցավակցությունը»[49]: Այս թղթակցության մեջ կարդում ենք, որ ցավակցելու նպատակով Թուրքիայի դեսպանատուն էր գնացել Ալեքսանդր Մյասնիկյանը, իսկ Խորհրդային Հայաստանի «արտաքին գործավար Մռավեան Արեւելեան ճակատի հրամանատարին ուղղած հեռագրով մը իր կառավարութեան ցաւակցութիւնը յայտնած է Ջէմալ փաշայի մահափորձին առթիւ»[50]: Նրանք նաև հայտնել էին, որ խիստ միջոցներ էին կիրառում՝ ոճրագործներին հայտնաբերելու և պատժելու համար՝ արդեն ձերբակալելով բազմաթիվ հայերի, այդ թվում՝ դաշնակցականների[51]:

«Ժողովուրդի ձայնը. Ժամանակ» օրաթերթում թուրքական մամուլից թարգմանաբար մեջբերված հատվածներում բացահայտ սպառնալիք կար՝ ուղղված այդ սև շարքի դեմ շարունակվող ձեռնարկների հեղինակ հայ գաղափարական խմբակի անդամների և հանձինս նրանց՝ հայ ժողովրդի հասցեին: Դրանցից մեկում կարդում ենք. «Այս մահափորձերը նոր խմորումներ, նոր ջղաձգումիններ, նոր պայքարներ պիտի հրաւիրեն ... Այսպիսի քաղաքական

---

[45] «Վերջին լուր», 27. VII. 1922:
[46] «Ժողովուրդի ձայնը. Ժամանակ», 28. VII. 1922:
[47] «Ճակատամարտ», 27. VII. 1922:
[48] «Ճակատամարտ», 29. VII. 1922:
[49] «Վերջին լուր», 07. VIII. 1922:
[50] «Վերջին լուր», 07. VIII. 1922:
[51] «Վերջին լուր», 07. VIII. 1922:

ու ցեղային դէպքերու ուրիշ մէկ երեւոյթն ալ պէտք է նկատողութենէ չհեռացնել. տրամաբանական է, որ ամէն գործ իր հակազդեցութիւնը կ'ունենայ: Հետեւաբար վախ կայ, որ Պաքուի կամ Պերլինի մէջ մարդ սպաննողներուն պատիժը ուրիշ անմեղներ կրեն»[52]: Թուրք լրագրողները պահանջում էին, որ օրենքի առաջ պատասխան տային թուրք պետական ու կուսակցական գործիչներին սպանող հայերը՝ մոռանալով, որ միլիոնից ավելի հայ էր դաժանաբար սպանվել, հազարավորներն էլ բռնի տեղահանվել էին հայրենի երկրից, հայրենազրկվել էին ու անվերադարձ վտարվել հարազատ եզերքից՝ հայոց հայրենիքի տարածքներում թուրքական պետության պահպանման մոլուցքին և մարդկության դեմ ուղղված ցեղասպանության հանցագործությանը զոհ գնալով:

Եզրակացություն

Ամփոփելով՝ կարող ենք փաստել.

- *թեև «Նեմեսիս» գործողությունը մնաց անավարտ, բայց Մեծ եղեռնի գլխավոր պատասխանատուների սպանությունները կարծես վերահաստատեցին հայ ժողովրդի հանդեպ գործված հանցագործության կազմակերպիչների նկատմամբ արդար դատի անհրաժեշտությունը:*
- *Օսմանյան Թուրքիայի մայրաքաղաքում հրատարակված ռամկավարների ոչ պաշտոնական գաղափարախոս «Ժողովուրդի ձայնը. Ժամանակ», չեզոք «Վերջին լուր» և ՀՅԴ ոչ պաշտոնական մամուլի օրգան «Ճակատամարտ» օրաթերթերն անդրադարձել են «Նեմեսիս» գործողության գրեթե բոլոր առանցքային ձեռնարկներին՝ հիմնականում լուրի և թղթակցության ժանրերի միջոցով: Զեն նշել, թե ինչ կառույցի նախաձեռնությամբ են դրանք կյանքի կոչվել, քանի որ, բացի վերջին պարբերականից, մյուսները հնարավոր է, որ չգիտեին բուն կազմակերպիչ կառույցի անունը:*
- *Խնդրո առարկա թերթերն այդ ձեռնարկները համարել են ոչ թե մարդասպանություն, այլ հայոց Մեծ եղեռնի կազմակերպիչների արդար պատիժ, որի համար հայ վրիժառուները չպետք է ենթարկվեն պատասխանատվության օրենքի առաջ, քանզի նրանք, վրեժից բացի, իրագործել են օսմանյան ռազմական դատարանի կողմից այդ մարդասպանների համար ընդունված մահապատժի որոշումները: Պարբերականների հրապարակումները վկայում են, որ հենց նման կերպ նաև հայ հանրությունն էր ընկալել Թալեաթի ու նրա գործընկերների սպանությունները:*
- *Պարբերականների նյութերում որպես հերոս են ներկայացվել Թալեաթի և մյուսների մահվան դատավճիռներն իրականացրած հայորդիները, որոնք ոչ միայն անձնական վրեժ են լուծել նրանցից, այլև կարծես դարձել են հայրենա-*

[52] *«Ժողովուրդի ձայնը. Ժամանակ», 27. VII. 1922:*

զրկված ու ցեղասպանված մի ողջ ժողովրդի օրհնությունն ստացած անձինք՝ հայության դահիճների հանդեպ հավաքական պատժիչ գործողությունը կատարելու համար:

• *«Նեմեսիս» գործողությունն իր հնչեղությամբ արդիական է նաև այսօր: Մենք տեսնում ենք, թե թուրքական իշխանություններն որքան են մտահոգված այդ գործողությունները կատարած հայորդիներին նվիրված և Հայաստանի Հանրապետության մայրաքաղաք Երևանում տեղադրված հուշակոթողի հանդեպ հայ հասարակության ցուցաբերած վերաբերմունքից ու աշխարհասփյուռ հայության ոգևորությամբ լեցուն արձագանքից: «Պաշտոնական Անկարան պահանջում է ապամոնտաժել Երևանում տեղադրված «Նեմեսիս» գործողության մասնակիցների հիշատակին նվիրված հուշարձանը»*[53]*,–* «Sputnik *Ադրբեջան»-ի հաղորդմամբ՝ այս մասին հայտարարել էր Թուրքիայի արդեն նախկին արտգործնախարար Մևլութ Չավուշօղլուն թուրքական հեռուստաալիքներից մեկի եթերում: Թուրքիայի Հանրապետության առաջին դեմքերի մակարդակով հնչեցված չհիմնավորված մեղադրանքներն այդ հուշարձանը տեղադրելու կապակցությամբ առ ոչինչ են հայ քաջորդիների կատարած ձեռնարկների առումով: Մինչ օրս թուրք պաշտոնյաները այն հորինված տեսակետներն են տարածում, որ հայերն իբրև թե դավաճան և վախկոտ են, որ իրենք նրանց կարող են ոչխարի պես մորթել, գերեվարել, տեղահանել ու վտարել հայրենի երկրից, քանզի դիմադրության չեն հանդիպելու: Այդ կեղծ պնդումները, սակայն, հօդս են ցնդում թեկուզ միայն «Նեմեսիս» գործողության փաստը հիշատակելով:*

Մարիամ Հովսեփյան – բ. գ. թ., ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի հայ պարբերական մամուլի և հասարակական մտքի պատմության բաժնի ավագ գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունները՝ հայ և հասարակական-քաղաքական մտքի ու մամուլի պատմություն: Հեղինակ է 4 գրքի, մեթոդական 1 ձեռնարկի և ավելի քան 50 հոդվածի: mariamhovsepian@mail.ru

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Անկարան պահանջում է ապամոնտաժել «Նեմեսիս»-ին նվիրված հուշարձանը Երևանում. – https://armeniasputnik.am/20230508/ankaran-pahanjum-e-apamvon

[53] *Անկարան պահանջում է ապամոնտաժել «Նեմեսիս»-ին նվիրված հուշարձանը Երևանում.–* https://armeniasputnik.am/20230508/ankaran-pahanjum-e-apamvontazhel-nemesisin-nvirvats-hushardzany-erevanum-59319275.html *(դիտում՝ 05. II. 2023):*

tazhel-nemesisin-nvirvats-hushardzany-erevanum-59319275.html (դիտում 05. II. 2023):

Թուրքիայի Հանրապետության պատմություն. 2018, Երևան, «ՎՄՎ-պրինտ», 396 էջ:

«Ժողովուրդի ձայնը. ժամանակ» (Կ. Պոլիս), 1921, 1922:

Խանումյան Գ. 2019, Սողոմոն Թեհլիրյանը և «Նեմեսիս» գործողությունը. – «Վէմ» (Երևան), թիւ 4, էջ 67–84:

Հակոբյան Ա. 2010, Հայկական «Նեմեսիսը» գործողության մեջ. – Հայոց պատմություն, հ. 4, գիրք 1, Երևան, «Զանգակ-97», էջ 231 –237:

Հայկական հարց. հանրագիտարան. 1996, Երևան, «Հակոբ Մեղապարտ», 528 էջ:

«Ճակատամարտ» (Կ. Պոլիս), 1920, 1922:

Մելքոնյան Ա. Դավաճանները հայոց պատմության մեջ. – «Հորիզոն» (Կանադա), 11. I. 2021:

«Նեմեսիս» գործողություն. – Հայկական հարց. հանրագիտարան. 1996, էջ 354–355:

«Վերջին լուր» (Կ. Պոլիս), 1921, 1922:

АРМЯНСКИЕ ГАЗЕТЫ КОНСТАНТИНОПОЛЯ ОБ ОПЕРАЦИИ «НЕМЕСИС» (1920–1922 гг.)

МАРИАМ ОВСЕПЯН

Р е з ю м е

Ключевые слова: армянские газеты Константинополя, операция «Немесис», османский военный суд, армянские мстители, Геноцид армян, организаторы Геноцида армян.

На проходившем в Ереване 27 сентября – 30 октября 1919 г. 9-м Общем собрании АРФ Дашнакцутюн было принято решение о проведении карательной операции «Немесис» против организаторов Геноцида армян. Эти акты имели большое общественное звучание, что нашло отражение и на страницах константинопольских армянских периодических изданий «Жоговурды дзайн: Жаманак», «Верчин лур» и «Чакатамарт» в 1920–1922 гг. Газеты считали эти акты справедливым наказанием организаторов Геноцида армян, поскольку армянские мстители также привели в исполнение принятые после заключения 30 октября 1918 г. Мудросского перемирия османским военным судом смертные приговоры в отношении главарей младотурок. Согласно приговору от 5 июля 1919 г. главари партии «Еди-

нение и прогресс» и представители турецкой власти Талаат, Энвер, Назим, Джемаль, Бехаэддин Шакир и другие были обвинены в вовлечении Турции в войну, депортации армян, организации геноцида и заочно приговорены к смертной казни. Карательные акты были совершены и в отношении предателей-армян. Операция «Немесис» осталась незавершенной.

Константинопольские армянские газеты представили как героев членов «Немесис», приведших в исполнение смертные приговоры организаторов и пособников Геноцида армян.

Мариам Овсепян – к. филол. н., старший научный сотрудник отдела истории армянской периодики и общественной мысли Института истории НАН РА. Научные интересы: история армянской общественно-политической мысли и периодической печати. Автор 4 книг, 1 методического пособия и более 50 статей. mariamhovsepian@mail.ru

ARMENIAN NEWSPAPERS OF CONSTANTINOPLE ON "NEMESIS" OPERATION (1920–1922)

MARIAM HOVSEPYAN

S u m m a r y

Keywords: Armenian newspapers of Constantinople, "Nemesis" operation, Ottoman military court, Armenian avengers, Armenian Genocide, organizers of the Armenian Genocide.

At the 9th General Meeting of the ARF - Dashnaktsutyun, held in Yerevan on September 27-October 30, 1919, a decision was made to conduct a punitive operation "Nemesis" against the organizers of the Armenian Genocide. These acts had a great public response, which was reflected on the pages of the Constantinople Armenian periodicals "Zhoghovurdy dzayn, Zhamanak", "Verjin lur", and "Chakatamart" in 1920-1922. The newspapers considered these acts a just punishment for the organizers of the Armenian Genocide, as the Armenian avengers carried out the death sentences against the leaders of the Young Turks, adopted by the Ottoman military court, after the conclusion of the Armistice of Mudros on October 30, 1918. According to the verdict of July 5, 1919, the leaders of the "Unity and Progress" party and representatives of the Turkish authorities Talaat, Enver, Nazim, Jemal, Behaeddin Shakir and others were accused of involving Turkey in the war, deporting Armenians and

organizing genocide and were sentenced to death in absentia. Punitive acts were also committed against traitors-Armenians. Operation “"Nemesis” remained incomplete.

Armenian newspapers of Constantinople presented the members of “Nemesis” as heroes who carried out the death sentences of the organizers and accomplices of the Armenian Genocide.

Mariam Hovsepyan – Candidate of Philological Sciences, Senior Researcher at the Department of History of Armenian Periodicals and Public Mind of the Institute of History of NAS RA. Scientific interests:history of the Armenian social and political thought and periodical press, Armenian Genocide, Armenian Question. Author of 4 books, 1 study guide, and more than 50 articles. mariamhovsepian@mail.ru

ՀՏԴ : 93(=919.81)(479.22)+947.925

Doi:10.54503/0135-0536-2023.2-114

ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՅ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԴԻՆԱՄԻԿԱՆ 1959–2014 ԹԹ. (Ըստ պաշտոնական մարդահամարների տվյալների)*

ՎԱՀԵ ՍԱՐԳՍՅԱՆ

Բանալի բառեր՝ Վրաստան, Աբխազիա, Հարավային Օսիա, հայություն, մարդահամար, պաշտոնական վիճակագրություն, դինամիկա, ուծացում:

Նախաբան

Վրաստանը ոչ միայն Հայաստանի Հանրապետության հարևանն է, այլև՝ ռազմավարական ու տարանցիկ կարևոր նշանակություն ունեցող երկիր: Բնականաբար, այդտեղ ապրող հայությունը չի կարող դիտվել սոսկ, դասական իմաստով, համայնք. այն, իբրև մտավոր, հոգևոր-մշակութային, ֆինանսատնտեսական պատկառելի ներուժ ունեցող և Վրաստանի պատմության մեջ ամենամեծ դերակատարություն ունեցած էթնիկ միավոր, էական ազդեցություն կարող է ունենալ ՀՀ–Վրաստան զարգացող հարաբերություններում: Ելնելով այդ հանգամանքից՝ հույժ կարևոր է և՛ պաշտոնական վիճակագրության միջոցով ի ցույց դնել Վրաստանի հայության թվապատկերը, և՛ փաստերի ու իրողությունների հենքի վրա ներկայացնել դինամիկան՝ հընթացս վերլուծելով հայության թվի փոփոխությունների խորքային պատճառներն ու դրանց վրա ազդող գործոնները:

ԽՍՀՄ և Վրաստանի պաշտոնական մարդահամարների տվյալների հենքի վրա ներկայացնենք Վրաստանի հայության (առանց Ջավախքի) ժողովրդագրական պատկերի փոփոխությունը՝ 1959–2014 թթ. ժամանակափուլում:

1959–2014 թթ. հայությունը և պաշտոնական մարդահամարները Վրաստանում

Երկրորդ աշխարհամարտից հետո Վրաստանի տարածքում ապրող հայության թիվն աճի փոխարեն, ընդհակառակը, ունեցավ նվազման միտումներ: Այսպես, 1959 թ. Վրաստանում հայության թիվը կազմում էր 442,9 հազար[1], 1970 թ.՝ 452,3 հազար[2], 1979 թ.՝ 448,0 հազար[3], իսկ 1989 թ.՝ 437,2 հազար մարդ[4]: Հետաքրքրական է, որ այս նույն տարիներին աղրբեջանցի-

---

* *Ներկայացվել է 05. III. 2023 թ., գրախոսվել է 16. IV. 2023 թ., ընդունվել է տպագրության 19. VI. 2023 թ.:*

[1] *Ալեքսանյան. 2013, 46:*

[2] *Տե՛ս* Итоги Всесоюзной переписи населения 1970 года. 1973, 324.

[3] Новикова, Дашко. 2002, 237; *հմմտ. Ավագյան. 1994, 109:*

[4] Национальный состав населения РСФСР: по данным Всесоюзной переписи населения 1989 г. 1990, 5.

ների թիվը, համապատասխանաբար, կազմում էր 153,6 հազար, 217,8 հազար, 225,7 հազար, 307,6 հազար մարդ, այսինքն՝ աճել է ավելի քան երկու անգամ: Ադրբեջանցիների թվի ավելացման փաստն այստեղ մեծապես կապված է վրացական միջավայրում կրոնական անհամատեղելիության, հետևաբար՝ նաև ձուլման վտանգից բացարձակապես հեռու լինելու հանգամանքի հետ:

1959 թ. Վրաստանում անցկացված մարդահամարի արդյունքներով՝ 442.916 հայերից միայն 364.381-ն են իրենց մայրենի լեզուն համարում հայերենը, մնացած 78.535 հայերից 44.184-ն իրենց մայրենի լեզուն համարել են վրացերենը, 33.342-ը՝ ռուսերենը, 1.009 հայեր էլ՝ այլ լեզուներ[5]:

Ինչպես տեսնում ենք, տասնյակ հազարավոր հայեր արդեն իսկ XX դարակեսին կորցրել էին իրենց ազգային ինքնագիտակցությունը և կանգնել ձուլման եզրին: Դրան, իհարկե, մեծապես նպաստում էր նաև Վրաստանի «ստեղծած» համապատասխան միջավայրը, որը կարող ենք անվանել վրացականացում կամ քարթվելիզացում: Գործընթաց, որին մասնակցել են ինչպես իբերա-կովկասյան էթնոլեզվաընտանիքի ճյուղերին պատկանող (քարթվելական ճյուղ՝ աջարներ, մեգրելներ, սվաններ, լազեր, աբխազաադղական ճյուղ՝ աբխազներ), այնպես էլ՝ հնդեվրոպական (հայեր, սլավոնական ժողովուրդներ, հույներ, քրդեր, եզդիներ) և սեմական (հրեաներ, ասորիներ) ժողովուրդները: Պատահական չէ, որ, օրինակ, 1959 թ. ԽՍՀՄ պաշտոնական մարդահամարի տվյալներով Վրաստանում [այդ թվում՝ Հարավօսական Ինքնավար Մարզում (ԻՄ)] ապրող 141 հազար օսերից 16.933-ը որպես մայրենի լեզու նշել է վրացերենը, 62.878 աբխազներից՝ 1.187-ը, 72.938 հույներից՝ 1937-ը, 51.582 հրեաներից՝ 35.322-ը (վրացական հրեաներ) և այլն[6]: Այս ճանապարհով XIX դարավերջին և XX դարի առաջին տասնամյակներին հազարավոր հայեր ձուլվեցին Կախեթում, Գորիի գավառում և Վրաստանի բազմաթիվ այլ մարզերում[7]: Ուսումնասիրողները ցույց են տվել, որ բազմաթիվ ենթաէթնոսներ պարունակող վրաց ժողովուրդը միշտ ավելացել է ոչ թե ի հաշիվ բնական աճի, այլև այլ ժողովուրդներին ձուլելու ճանապարհով:

ԽՍՀՄ փլուզումը, անկախացող Վրաստանում բռնկված պատերազմներն ու երկրում նոր թափ ստացած այլամերժման, ազգայնամոլական ու ձուլման քաղաքականությունն իր ծանր հետքը թողեց Վրաստանում ապրող հայության թվաքանակի, ազգային գիտակցության և դիմադրողականության վրա: Այսպես, համեմատելով 1989 և 2002 թվականների Վրաստանի պաշտոնական մարդահամարի տվյալները՝ փաստենք, որ 13 տարվա ընթացքում կտրուկ նվազել է երկրում ապրող ազգային փոքրամասնությունների թվաքանակը՝

[5] *«Ազատամարտ» (Երևան), 1994, թիվ 47, հմմտ.՝* Джаошвили. 1968, 55.

[6] *«Ազատամարտ», 1994, թիվ 49, 50:*

[7] *Այս մարզերի էթնիկ հայության պատմական անցյալի և նրանց հետ տեղի ունեցած սպիտակ եղեռնի մասին հանգամանորեն տե՛ս* Կարապետյան. *2004,* Սարգսյան. *2013:*

29,9 %-ից հասնելով 16,2 %-ի[8]*: Կտրուկ իջել էր հայերի թիվը, և, չնայած այդ հանգամանքին, հայերը Վրաստանում թվաքանակով երրորդ տեղում էին (վրացիներից ու աղրբեջանցիներից հետո)*[9]*: Այստեղ պետք է հաշվի առնել այն, որ 2002 թ. մարդահամար չի անցկացվել ինչպես Աբխազիայում*[10]*, այնպես էլ Հարավային Օսիայում: Աբխազիայում, ինչպես հայտնի է, ապրում են մեծ թվով հայեր: Այսպես, որոշ ուսումնասիրողների տվյալներով՝ 1995 թ. (վրաց-աբխազական արյունալի պատերազմի ավարտից հետո) Աբխազիայում բնակվում էր 91,16 հազար աբխազ, 89,9 հազար վրացի (մեգրելներ), 61,96 հազար հայ, 51,56 հազար ռուս, 3,5 հազար հույն*[11]*: Հայերի փոքր թվաքանակ ապրում է նաև Հարավային Օսիայում, որտեղ ևս գրեթե չի անցկացվել 2002 թ. մարդահամարը*[12]*:*

---

[8] Սաքարթվելոյի մոսախլեոբության 2002 წլոյի პիրվելի երովնული սայովելթաո աღწերիս შեդեგեբი, ტომი I, თბილისი, 2003 წ., III. մոսախլեոբության განაწილება სქესის, ასაკის, երովնեբիս, ქალაქეობის, სარწმუნოების, ქორწინებისა და განათლების მიხედვით, ცხრილი N 20, Սաքարթվելոյի մუდმივი մոսախլեոբა ცალკეული երովნებების მიხედვით.

[9] თბილისი, 2003 წ., III. մոսախլեոբության განაწილება სქესის, ასაკის, երովնեբիս, ქალაქეობის, სარწმუნოების, ქორწინებისა და განათლების მიხედვით, ცხრილი N 22, մуդմივი մոսախլեոբության განაწილება ცალკეული երովნებების მიხედვით ადმინისტრაციულ – ტერიტორიული ერთეულების (մხարեեբիս), ქალაქებისა და რაიონების ჭრილში.

[10] *Աբխազիայի տարածքում 2002 թ. մարդահամար է անցկացվել միայն Կոդորի կիրճում, որի վրա մինչ 2008 թ. տարածվում էին Թբիլիսիի իրավասությունները: Ըստ այդ տվյալների՝ կիրճում բնակվում էր 1956 մարդ, որից վրացիներ՝ 1912, աբխազներ՝ 9, օսեր՝ 2, հայեր՝ 1, ռուսներ՝ 23, աղրբեջանցիներ՝ 6, ուկրաինացիներ՝ 2,* Սաքարթվելոյի մոսախլեոբության 2002 წլոյի պիրվելի երովնული սայովելթաո աღწերիս შեդեგեբი, ტომი I.

[11] *Տե՛ս* С к а к о в. 2002, 132.

[12] *1989 թ. ԽՍՀՄ մարդահամարի տվյալներով՝ Հարավօսական ԻՄ-ի 98.527 բնակչից հայերի թիվը կազմել է 984 (1,0 %): 2002 թ. Վրաստանի պաշտոնական մարդահամարը Հարավային Օսիայի նախկին ԻՄ-ի տարածքում անցկացվել է միայն Ախալգորի (նախկին՝ Լենինգորի) շրջանի արևելյան՝ Վրաստանի կողմից վերահսկվող հատվածում, ըստ որի՝ 7703 բնակչից 6520-ը վրացիներ են, 1110-ը՝ օսեր, 37-ը՝ հայեր, 20-ը՝ ռուսներ, մնացածը՝ այլազգեր (տե՛ս* Սաքարթվելոյի մոսախլեոբության 2002 წլոյի պիրվելի երովնული սայովելթաո աღწերիս შեդեგեբი, ტომი I, ცხრილი № 22)*: 1989 թ. ի վեր՝ մինչ 2015 թ., Հարավային Օսիայում պաշտոնական մարդահամար չէր անցկացվել: 2008 թ. վրաց-օսական պատերազմի արդյունքում նախկին ինքնավար մարզի ամբողջ տարածքի վրա վերահսկողություն ունենալուց, անկախության հռչակումից և մասամբ ճանաչվելուց հետո Հարավային Օսիայում պաշտոնական մարդահամար անցկացվեց 2015 թ., որի տվյալներով՝ այդտեղ բնակվում էր 378 հայ (տե՛ս* Республика Южная Осетия, Управление государственной статистики, Итоги всеобщей переписи населения республики Южная Осетия 2015 года, официальное издание, раздел 4. На-

Վրաստանի բնակչության ազգային կազմը և թվաքանակը 1989 և 2002 թթ. մարդահամարների տվյալներով[13]

	1989 թ.	2002 թ.	Բնակչության աճի տեմպերը	1989 թ. ընդհանուր բնակչության հարաբերակցությունը (%)	2002 թ. ընդհանուր բնակչության հարաբերակցությունը (%)
Բնակչության ընդհանուր թիվը	5.400.841	4.371.535	–1.029.306 (80,9%)	100	100
Վրացիներ	3.787.393	3.661.173	–126.220 (96,7%)	70,1	83,8
Հայեր	437.211	248.929	–188.282 (56,9%)	8,1	5,7
Ադրբեջանցիներ	307.556	284.761	–22.795 (92,6%)	5,7	6,5
Ռուսներ	341.172	67.671	–273.501 (19,8%)	6,3	1,5
Օսեր	164.055	38.028	–126.027 (23,2%)	3,0	0,9
Հույներ	100.324	15.166	–85.158 (15,1%)	1,9	0,3
Աբխազներ	95.853	3.527	–92.326 (3,7%)	1,8	0,1
Ուկրաինացիներ	52.443	7.039	–45.404 (13,4%)	1,0	0,2
Այլ ազգություններ	114.834	45.241	–69.593 (39,4%)	2,1	1,3

Ինչպես երևում է աղյուսակից, 13 տարվա ընթացքում Վրաստանի հայության թիվը նվազել է 188.282-ով: Եթե նույնիսկ հաշվի առնենք, որ ավելի քան 60–70 հազար հայեր 2002 թ. չեն հաշվառվել Վրաստանի վերահսկողության տակ չգտնվող Աբխազիայի ու Հարավային Օսեթիայի տարածքում, ապա հայության թվի 120–130 հազարով նվազումը ևս խոսում է ժողովրդագրական լրջագույն փոփոխությունների, Վրաստանի հայության շրջանում առկա «ժողովրդագրական ճմռան» և դրանից բխող մարտահրավերների մասին:

циональный состав населения, родной язык и гражданство, 4.1. Национальный состав населения. 2016, 98)*:*

[13] საქართველოს მოსახლეობის 2002 წლის პირველი ეროვნული საყოველთაო აღწერის შედეგები, ტომი I, ცხრილი N 20, საქართველოს მუდმივი მოსახლეობა ცალკეული ეროვნებების მიხედვით.

2002 թ. մարդահամարի տվյալներով՝ Վրաստանում ապրող 248.929 հայերից մայրենի լեզուն հայերենն են համարել 235.531-ը, 5.692 հայեր որպես մայրենի նշել են վրացերենը, 37-ը՝ աբխազերենը, 12-ը՝ ադրբեջաներենը, 3-ը՝ օսերենը, 7525-ը՝ ռուսերենը, 129-ը՝ այլ լեզուներ[14]*:*

2014 թ. նոյեմբերի 5–19-ը Վրաստանում անցկացված պաշտոնական մարդահամարի արդյունքների համաձայն՝ երկրի ընդհանուր բնակչության թիվը կազմել է 3.713.804 [նախորդ՝ 2002 թ. մարդահամարի համեմատ (4.371.535 մարդ) նվազել է 657.731-ով կամ 15,1 %-ով]: Պաշտոնական տվյալներով՝ հայ ազգաբնակչությունը կազմում է երկրի բնակչության 4,53 %-ը[15] *կամ 168.100 մարդ*[16]*, կրկին զբաղեցնելով երրորդ տեղը (վերտին զիջելով վրացիներին ու ադրբեջանցիներին): 3.713.804 բնակչից 3.224.600-ը վրացիներ են (86,8 %), 233.000-ը՝ ադրբեջանցիներ (6,3 %), 168.100-ը՝ հայեր (4,5 %), 26.500-ը՝ ռուսներ (0,7 %), 14.400-ը՝ օսեր (0,4 %), 12.200-ը՝ եզդիներ (0,3 %), 6.000-ը՝ ուկրաինացիներ (0,2 %), 5.700-ը՝ քիստեր (չեչեններ) (0,2 %), 5.500-ը՝ հույներ (0,1 %), 2.400-ը՝ ասորիներ (0,1%), 14.300-ը՝ այլ ազգություններ (0,4%), 500 մարդ հրաժարվել է նշել իր ազգությունը*[17]*:*

2014 թ. պաշտոնական վիճակագրական տվյալների համաձայն՝ Վրաստանում ապրող 168.100 հայերից 109.000-ը կամ Վրաստանի ընդհանուր ազգաբնակչության 2,9 %-ը Հայ Առաքելական եկեղեցու հետևորդ է[18]*, որից*

---

[14] Սաքարթվելոյի մոսախլեոբության 2002 წլոյի პირველი ეროვნული საყოველთაო აღწერის შედეგები, ტომი I, ცხრილი N 24, Սաքարթվելոյի մոսախլեոբության განაწილება ეროვნების, მშობლიური და სხვა ენების მიხედვით.

[15] Սաքարթվելոյի სტატისტიკის ეროვნული სამსახური, Սաքարթվելոյի 2014 წლის մոսախլեոբության საყოველთაო აღწერის ძირითადი შედეგები, თბილისი, 2018, გვ. 7, 9, դիագրամա 5: մոսախլեոբության განაწილება (%) ეროვნების მიხედვით, hմմտ.՝ 2014 წლის մոսախլեոբության საყოველთაო აღწერა Սաքարթվելոյում, გვ. 2 (https://georgia.unfpa.org/sites/default/files/pub-pdf/full%20calendar_geo_0.pdf).

[16] Ազգությունների և քաղաքացիական հասարակության հարցերով նախարարության, դեմոգրաֆիական վիճակագրություն, մոսախլեոբության 2014 թվականի մարդահամարի տվյալներ, Սաքարթվելոյի մոսախլեոբության ազգային պատկանելության գրաֆիկ 10 ամենաբազմաազգանի ազգությունների մասին (https://smr.gov.ge/uploads/prev/__72a21b22.pdf).

[17] Վիճակագրության ազգային ծառայություն (Սաքստատ), մոսախլեոբության 2014 թվականի մարդահամարի հիմնական արդյունքներ, ընդհանուր տեղեկություններ, Սաքարթվելոյի մոսախլեոբության ազգային պատկանելության գրաֆիկ 10 ամենաբազմաազգանի ազգությունների մասին (http://census.ge/files/results/Census%20Release_GEO.pdf).

[18] Ազգությունների և քաղաքացիական հասարակության հարցերով նախարարության, դեմոգրաֆիական վիճակագրություն, մոսախլեոբության 2014 թվականի մարդահամարի տվյալներ, Սաքարթվելոյի մոսախլեոբության ազգային պատկանելության գրաֆիկ մասնակցության մասին (https://smr.gov.ge/uploads/prev/__98482047.pdf). *3.097.600 մարդ Ուղղափառ եկեղեցու հետևորդ է (83,4 %), 398.700-ը՝ մուսուլմաններ են (10,7 %), 19.200-ը՝ կաթոլիկներ (0,5 %), 12.400-ը՝*

29.368-ը բնակվում է մայրաքաղաք Թբիլիսիում, 1.082-ը՝ Աջարիայի ԻՀ-ում, 144-ը՝ Գուրիայում, 67-ը՝ Իմերեթում, 182-ը՝ Կախեթում, 35-ը՝ Մցխեթա-Մթիանեթում, 2-ը՝ Ռաճա-Լեչխումի և Քվեմո Սվանեթում, 23-ը՝ Սամեգրելո-Զեմո Սվանեթում, 64.115-ը՝ Սամցխե-Ջավախքում, 13.926-ը՝ Քվեմո Քարթլիում, 97-ը՝ Շիդա Քարթլիում[19]:

Վրաստանում ապրող 168.100 հայերից հայոց լեզուն մայրենի լեզու է նշել 144.812-ը: Այսինքն՝ 23.288 հայ արդեն իսկ չի խոսում ազգային լեզվով և բռնել է ուծացման ուղին: 144.812 հայերից 57.316-ը մայրենի լեզվի հետ տիրապետում է նաև վրացերենին, 74.258-ն ազատորեն չի տիրապետում վրացերենին, 13.238-ը չի նշել՝ տիրապետո՞ւմ է վրացերենին, թե՞ ոչ: Մայրենին հայերենը համարող 144.812 հայերից 37.500-ը բնակվում է մայրաքաղաք Թբիլիսիում, 3.237-ը՝ Աջարիայի ԻՀ-ում, 998-ը՝ Գուրիայում, 528-ը՝ Իմերեթում, 1.483-ը՝ Կախեթում, 150-ը՝ Մցխեթա-Մթիանեթում, 2-ը՝ Ռաճա-Լեչխումի և Քվեմո Սվանեթում, 117-ը՝ Սամեգրելո-Զեմո Սվանեթում, 79.878-ը՝ Սամցխե-Ջավախքում, 20.095-ը՝ Քվեմո Քարթլիում, 824-ը՝ Շիդա Քարթլիում[20]:

Ինչպես երևում է ստորև բերվող աղյուսակից, 2002 թ. հետ համեմատած՝ 12 տարվա ընթացքում Վրաստանի հայության թիվը, համաձայն պաշտոնական տվյալների, կրճատվել է 80.829-ով՝ 248.929-ից դառնալով 168.100[21]:

Եհովայի վկաներ (0,3 %), 8.600-ը՝ եզդիական կրոնի հետևորդ (0,2 %), 2.500-ը՝ բողոքականներ (0,1 %), 1.400-ը՝ հուդայականներ (0,0 %) և այլն:

[19] Ծերոգցեցիսա և սամոքալաքո տանասწորոբձի սաքոտեցեցեցի սաքարթվելոս սახելմწիֆո մինիստրիս აპარატი, დემოგრაფიული სტატისტიკა, մոսախլեոբձի 2014 წლის საყოველთაო აღწერის მონაცემები, մոսախլեոբձի գանաწիլեցա რეგიონებისა და აღმარეგლობის მიხედვით (დეტალური მონაცემები) (https://smr.gov.ge/uploads/prev/_22___9e6277bd.xls).

[20] Ծերոգցեցիսա և սամոքալաքո տանասწորոբձի սաքոտեցեցեցի սաքարթվելոս սახელმწიფო მინისტრის აპარატი, დემოგრაფიული სტატისტიკა, մոսախլեոբձի 2014 წლის საყოველთაო აღწერის მონაცემები, մոսախլեոբձի գանաწիլեցա რეგიონების, მშობლიური ენისა და ქართული ენის თავისუფლად ფლობის მიხედვით (https://smr.gov.ge/uploads/prev/_20_1___a40096f8.xls).

[21] *Ավելի մանրամասն քննության հարց համարելով Ջավախքից դուրս ապրող Վրաստանի հայության դինամիկայի խորհրդային ժամանակափուլը՝ նշենք, որ, տիրող համընդհանուր մթնոլորտին համահունչ, Խորհրդային Վրաստանի հայության մի ստվար հատված իր միջնակարգ կրթությունը ստացավ ռուսական դպրոցներում, իսկ ահա հետխորհրդային շրջանում հակառուսական տրամադրությունների պայմաններում իրար հետևից փակվող ռուսական դպրոցները հայության՝ դեռևս գոյատևող հատվածներին ևս վերջնականորեն ուղղորդեցին վրացական դպրոցներ: Ռուսական դպրոցներ հաճախող հայության վերջին բեկորները ևս հայտնվեցին մշտապես առկա ուծացման գործընթացի վերջնահանգրվանին: Դժվար է միանշանակորեն ռուսական դպրոցները համարել վրացականացման հորձանքի պատնեշ. այնուամենայնիվ, այն մի միջոց էր, որով սեփական լեզվին չտիրապետող հայության այդ հատվածը տարբերվում էր վրացիներից, որով էլ, ինչ-որ տեղ, զերծ էր մնում վերջնական տարրալուծումից: Հետխորհրդային շրջանում փակվող ռուսական դպրոցների հետ մեծ թափով վերանում է նաև հայության նշյալ հատվածի այս «տարբերակիչ» գործոնը:*

Վրաստանի հայ ազգաբնակչության ազգաբաշխական պատկերը՝ 2014 թ. վիճակագրական տվյալների համաձայն[22]

Մայրաքաղաք / նահանգ	Բնակչության ընդհանուր թիվ	Հայ բնակչության թիվ (արտահայտված %-ով)	Հայ բնակչության բացարձակ թիվ
Թբիլիսի (մայրաքաղաք)	1.108.717	4,82	53.440
1. Ռաճա-Լեչխումի և Քվեմո Սվանեթի	32.089	0,03	10
2. Քվեմո Քարթլի	423.986	5,07	21.496
3. Սամեգրելո-Զեմո Սվանեթ	330.761	0,04	132
4. Գուրիա	113.350	1,08	1224
5. Իմերեթ	533.906	0,13	694
6. Աջարիայի ԻՀ	333.953	1,64	5.477
7. Շիդա Քարթլի	263.382	0,79	2.081
8. Կախեթ	318.583	0,69	2.198
9. Սամցխե-Ջավախք	160.504	50,52	81.087
10. Մցխեթա-Մթիանեթ	94.573	0,31	293

Վրաստանի հայ բնակչության ձուլման մասին որոշ վիճակագրական դիտարկումներ

Վրաստանի հայության շրջանում XX դարում տեղի ունեցած էթնոձուլման (փոխակերպման) ահեղ գործընթացը ցույց տանք Գորիի գավառի օրինակով: Այսպես՝ 2002 թ. Վրաստանում տեղի ունեցած մարդահամարի արդյունքնե-

[22] Սաքարթվելոս տատիստիկոսի ազգային ծառայության, Սաքարթվելոս տատիստիկոսի ազգային ծառայության 2014 թվականի բնակչության մարդահամարի հիմնական արդյունքներ, Թբիլիսի, 2018, էջ. 11–12. *Վրաստանի ազգային վիճակագրական գրասենյակի սույն՝ «2014 թվականի Վրաստանի բնակչության մարդահամարի հիմնական արդյունքները» խորագրով ծավալուն ժողովածուում ևս բացակայում են Վրաստանում ապրող ազգությունների վերաբերյալ բացարձակ թվերը. այդ ցուցանիշները տրված են միմիայն տոկոսների տեսքով: Ավելին՝ նշված ժողովածուում առանձին ազգությունների տոկոսային հարաբերակցությունը ներկայացնող տասնորդական կոտորակները տրված են տասնորդական ճշտությամբ: Հաշվի առնելով դա՝ հիմք ենք ընդունել ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի ներկայացրած վիճակագրական փաստաթուղթը («Վրաստանում 2014 թվականի ընդհանուր մարդահամար»,* UNFPA / Forset, 2019. – https://georgia.unfpa.org /sites/default /files/pub-pdf/full% 20calendar_geo_0.pdf), *որտեղ նույն տասնորդական կոտորակները ներկայացված են հարյուրերորդական ճշգրտությամբ: Քանի որ Վրաստանի հայ բնակչության ինչպես ընդհանուր, այնպես էլ այս կամ այն մարզի բացարձակ թիվը հաշվարկել ենք՝ հիմնվելով տոկոսային հարաբերակցության վրա, ապա հարյուրերորդական ճշտությամբ տասնորդական կոտորակների վրա կատարված հաշվարկներով հայ բնակչության թիվը և՛ առավել մոտ է իրական թվին, և՛ ավելի մեծ է, քան առաջին դեպքում:*

րով՝ Ստորին (Շիդա) Քարթլի նահանգի 4՝ Գորիի, Կասպի, Քառելի և Խաշուրի շրջանների[23] հայության թիվը կազմում էր ընդամենը 3.521[24]: Սա այն պայմաններում, երբ 1886–1914 թթ. Գորիի գավառի հայությունն աճել է 38,14 %-ով, իսկ տարեկան աճը կազմել՝ 1,36 %[25]: Աճի առավել մեծ տեմպեր է գրանցել հատկապես Գորի քաղաքի հայությունը՝ նշված թվականների համար գրանցելով 140,0 %. այստեղ տարեկան աճը կազմում է 5 %: Գորիի գավառի՝ Հարավօսական ԻՄ-ի կազմում ներառված տարածքներում հայության թիվը մեծ տոկոս չէր կազմում (1886 թ.՝ 750 կամ գավառի հայ ազգաբնակչության 4,1 %-ը): Հետևաբար՝ ԻՄ-ի հայության թիվը 2002 թ. հաշվարկների մեջ չներառելն[26] այնքան էլ չի խանգարում պատկերացում կազմելու ժողովրդագրական այն տեղաշարժերի մասին, որոնք տեղի են ունեցել Գորիի գավառում:

Հետաքրքրական մի փաստ ևս. 2002 թ. մարդահամարի արդյունքում Շիդա Քարթլիի հայ-լուսավորչականների թիվը նշվում է 399[27]: Էական փոքր թիվ՝ համեմատած հայության պաշտոնական՝ 3.521 թվի հետ: Պատճառները պարզելու խնդիր այստեղ ևս կա: 2002 թ. մարդահամարի արդյունքում Վրաստանի պետական վիճակագրական դեպարտամենտի հրատարակած և Վրաստանի գյուղական ազգաբնակչությունը ներկայացնող ստվարածավալ հատորում[28] տեղ գտած՝ Գորիի, Կասպի, Քառելի և Խաշուրի շրջանների գյուղերի շարքում հիշատակություն չկա հայերի մասին. մեզ արդեն ծանոթ և մինչ XX դարա-

---

[23] *Այս 4 շրջանները ձևավորվել են նախկին Գորիի գավառի մեծագույն հատվածի վրա, գավառի հյուսիսային, փոքրագույն հատվածը մտել էր Հարավօսական ԻՄ-ի մեջ: Հետխորհրդային շրջանում՝ 1990-ական թվականների կեսերին, Վրաստանի մարզային բաժանման արդյունքում նշյալ 4 և Հարավօսական ԻՄ-ի տարածքի մեծ մասի հենքի վրա կազմավորվեց Շիդա Քարթլի նահանգը: Հավելենք նաև, որ Վրաստանի նշված վարչատարածքային բաժանմամբ՝ Հարավային Օսիայի նախկին ԻՄ-ի տարածքները ներառվեցին 4 նորաստեղծ նահանգների մեջ. արևելյան հատվածը ներառվեց Մցխեթա-Մթիանեթի, կենտրոնական հիմնական հատվածը՝ Շիդա Քարթլիի, արևմտյան մի փոքր հատված մտցվեց Իմերեթի և, վերջապես, հյուսիսարևելյան ևս մի փոքր հատված ներառվեց Ռաջա-Լեչխումի ու Քվեմո Սվանեթիի նահանգների մեջ: Հավելենք, որ մինչ օրս Վրաստանի փաստացի տիտղոսը տարածվում է միայն Գորիի, Կասպի, Քառելի և Խաշուրի շրջանների վրա:*

[24] Ծերոգցությունների և սամոքալաքո տանասկրորության հաշվառումների մասին տեղեկությունների՝ Վրաստանի տեղեկատվության ազգային գրասենյակ, դեմոգրաֆիկական վիճակագրություն, մոսանեցությունների 2002 թվի ամենամյա ամբողջական տվյալներ, ազգաբնակչության գրանցման և ազգաբնակչության գրանցման տվյալներ (https://smr.gov.ge/uploads/prev/d769d8f4.pdf).

[25] *Ի շ խ ա ն ե ա ն. 1919, 226:*

[26] *Նշենք, որ Հարավօսական ԻՄ-ում տարբեր պատճառներով հայերի աճ տեղի չի ունեցել, ընդհակառակը, այդ թիվը նվազել է՝ կազմելով՝ 1.374 (1926 թ.), 1.537 (1939 թ.), 1.555 (1959 թ.), 1.254 (1970 թ.), 953 (1979 թ.), 984 (1989 թ.):*

[27] Population by religious beliefs (By Major Adminstrative-Territorial Units) (http://upload.wikimedia.org/wikipedia/commons/5/5b/POPULATION_BY_RELIGIOUS_BELIEFS.pdf).

[28] Վրաստանի ազգաբնակչության գրանցման ազգային գրասենյակ, Վրաստանի ազգաբնակչության գրանցման ազգային գրասենյակ, Վրաստանի ազգաբնակչության գրանցման ազգային գրասենյակ (Վրաստանի գյուղական ազգաբնակչություն), Թբիլիսի, 2003 թվական.

սկիզբը երբեմնի հայաբնակ բոլոր գյուղերը ներկայացված են որպես մարդաշատ՝ 98, 99, 100 %-ով վրացաբնակ գյուղեր[29]*: Այդպիսիներից կուզենայինք առանձնացնել երբեմնի հայաբնակ* Կարպեթը *(Գորիի շրջ., 4501 շունչ, 98 % վրացաբնակ),* Տղվիավը *(Գորիի շրջ., 2845 շունչ, 99 % վրացաբնակ),* Քվախրեւը *(Գորիի շրջ., 2374 շունչ, 99 % վրացաբնակ),* Նաղարբազևը *(Գորիի շրջ., 269 շունչ, 91 % վրացաբնակ),* Ախալքալաքը *(Կասպի շրջ., 1233 շունչ, 94 % վրացաբնակ),* Դոեսը *(Կասպի շրջ., 2818 շունչ, 98 % վրացաբնակ),* Ատոցը *(Քարելի շրջ., 311 շունչ, 99 % վրացաբնակ),* Դիրբը *(Քարելի շրջ., 3028 շունչ, 99 % վրացաբնակ),* Ռուիսը *(Քարելի շրջ., 6032 շունչ, 99 % վրացաբնակ),* Ալը *(Խաշուրի շրջ., 1375 շունչ, 99 % վրացաբնակ),* Վաղա *(Խաշուրի շրջ., 1423 շունչ, 99 % վրացաբնակ) և մի շարք գյուղեր ու ավաններ*[30]*: Թվարկված և չթվարկված՝ երբեմնի վիրախոս հայաբնակ գյուղերը, ինչպես տեսնում ենք, ներկայումս բավականին խոշոր վրացական գյուղեր են, որից ենթադրելի է գորիահայության աճման բավականին մեծ տեմպերը. այն եղել է դարասկզբի աճման ընթացքին համահունչ:*

Զննելով 2002 թ. պաշտոնական վիճակագրությունը՝ պարզորոշ նկատվում է մուսուլման տարրի, հատկապես՝ ադրբեջանական զանգվածի առկայություն, սա՝ այն դեպքում, երբ, ինչպես վկայում են մեր կողմից վկայակոչված՝ XIX դարավերջի և XX դարասկզբի ժողովրդագրական պատկերը ներկայացնող աղբյուրները, այդ զանգվածն խապառ բացակայում էր Գորիի գավառից: Այսպես, 1886 թ. Անդրկովկասի բնակչության ընտանեկան ցուցակներից քաղված վիճակագրական տվյալների ժողովածուի՝ ազգությունների աղյուսակում թուրքերն ընդհանրապես բացակայում են, իսկ թաթարներ Գորի քաղաքում հիշատակվում է 2 անձ, գավառում՝ 3 ծուխ (17 անձ), նույն աղբյուրի՝ կրոնական հետևորդների բաժնում ևս Գորիի գավառում (քաղաքով հանդերձ) հիշատակվում են ընդամենը 10 մուսուլման սուններ և 17 մուսուլման շիաներ: Իսկ ահա Վրաստանի 2002 թ. մարդահամարի տվյալներով՝ Գորիի, Կասպի, Քառելի և Խաշուրի շրջաններում, միասին վերցրած, ադրբեջանցիների թիվը հասնում է 5768-ի կամ ամբողջ նահանգի բնակչության 1,84 %-ն է: Շրջանների մի շարք գյուղեր ամբողջովին կամ մասամբ բնակեցված են ադրբեջանցիներով՝ Լևիտանա *(Գորիի շրջ., 290 շունչ, ամբողջությամբ),* Թեղոծմինդա *(Գորիի շրջ., 541 շունչ, կիսով չափ),* Սաքադագիանո *(Կասպի շրջ., 1.095 շունչ, 62 %),* Խիդիսղուռի *(Կասպի շրջ., 899 շունչ, ամբողջությամբ),* Ախալսոփել *(Կասպի շրջ., 105 շունչ, 35 %),* Կալոուբանի *(Կասպի շրջ., 140 շունչ, 39 %),* Ֆերմա *(Կասպի շրջ., 1025 շունչ, 87 %),* Զանգիլարի *(Կասպի շրջ., 300 շունչ, ամբողջությամբ)*[31]*:*

---

[29] *Շուրջ 76 գյուղ ամբողջությամբ կամ մասամբ օսաբնակ են:*

[30] Սաքարթվելոս Տիտիստիկոյի Սահելմիֆիոյ Դեպարտամենտի, Սաքարթվելոս Մոսահլեոբիս 2002 ֆլիս Պիրվելի Երովնուլի Սայովելթաո Աղֆերիս Միրիտադի Շեդեգեբի (Սաքարթվելոս Սոֆլեբիս Մոսահլեոբա), Տոմի II, Թբիլիսի, 2003 ֆելի, գգ. 220–240.

[31] Սաքարթվելոս Տիտիստիկոյի Սահելմիֆիոյ Դեպարտամենտի, Սաքարթվելոս Մոսահլեոբիս 2002 ֆլիս Պիրվելի Երովնուլի Սայովելթաո Աղֆերիս Միրիտադի

Վրաստանի՝ Ջավախքի շրջաններից դուրս ապրող հայության պատմությունն իր պատմափուլերով օրինաչափորեն հար և նման է հայկական մի շարք գաղթօջախների անցած ուղուն՝ հիմնավորում, ազգային, մշակութային, կրոնական, հասարակական-քաղաքական կյանքի այս կամ այն կերպ կազմակերպում, պայքար օտարախոսության, օտարացման, ուծացման և սեփական տեսակի գոյության վերացման դեմ և, ի վերջո, պարտություն ու անհետացում պատմության ասպարեզից: Ինչո՞ւ օրինաչափորեն, քանի որ հիմնականում այդպիսին է իր Հայրենիքից դուրս դեգերող յուրաքանչյուր ազգի բնական ընթացքը, և գաղթօջախներում տարբեր ժամանակներում պայքարող հայ մտավորականությունն ինչքան էլ ջանք թափեր, կարող էր ընդամենն այս կամ այն չափով երկարացնել սեփական ազգի կյանքը, բայց փրկել այն մահվանից ի զորու է միայն Հայրենիքը:

Եզրակացություն

Երկրորդ աշխարհամարտից հետո ընկած ժամանակահատվածում Վրաստանի տարածքում ապրող հայության թիվն ունեցավ նվազման միտումներ՝ 1959–1989 թթ. ընթացքում 442,9 հազար մարդուց հասնելով 437,2 հազար մարդու (նվազել է 5,7 հազարով): Այս նույն տարիներին ադրբեջանցիների թիվը 153,6 հազարից հասել է 307,6 հազար մարդու՝ աճելով ավելի քան երկու անգամ:

Վրաստանի հայության թվաքանակն առավել կտրուկ անկում է ապրել հետխորհրդային շրջանում: 1989 և 2002 թթ. Վրաստանի պաշտոնական մարդահամարի տվյալներով՝ 13 տարվա ընթացքում Վրաստանի հայության թիվը նվազել է 188.282-ով: Եթե նույնիսկ հաշվի առնենք, որ ավելի քան 60–70 հազար հայեր 2002 թ. չեն հաշվառվել Վրաստանի վերահսկողության տակ չգտնվող Աբխազիայի ու Հարավային Օսեթիայի տարածքում, ապա հայության թվի՝ 120–130 հազարով նվազումը ևս խոսում է ժողովրդագրական լրջագույն փոփոխությունների, Վրաստանի հայության շրջանում առկա «ժողովրդագրական ճմռան» և դրանից բխող մարտահրավերների մասին:

2014 թ. պաշտոնական մարդահամարի արդյունքների համաձայն՝ հայ ազգաբնակչությունը կազմում է երկրի բնակչության 4,53 %-ը կամ 168.100 մարդ: 2002 թ. հետ համեմատած՝ 12 տարվա ընթացքում Վրաստանի հայության թիվը, համաձայն պաշտոնական տվյալների, կրճատվել է 80.829-ով՝ 248.929-ից դառնալով 168.100:

Եթե խորհրդային հետպատերազմյան ժամանակաշրջանում Վրաստանի հայությունն իր թվաքանակով գրավում էր երկրորդ տեղը՝ տիտղոսային ազգությունից՝ վրացիներից հետո, ապա ԽՍՀՄ փլուզումից հետո տեղի ունեցած որոշ «վերադասավորումների» արդյունքում, երբ հայության թիվը կտրուկ նվազեց (նվազման վրա ազդող նախորդ գործոններին գումարվեց նաև Աբխազիայի ու Հարավային Օսիայի հայության թվակազմերի՝ Վրաստանի պաշտոնական վիճակագրությունից դուրս մնալու իրողությունը), Վրաստանում ապրող հայությունն իր թվաքանակով զբաղեցրեց արդեն երրորդ տեղը՝ զիջելով ադրբեջանցիներին:

შედეგები (საქართველოს სოფლების მოსახლეობა), ტომი II, თბილისი, 2003 წელი, გვ. 220–240.

Վահե Սարգսյան – պ. գ. թ., ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի Սփյուռքի և հայ գաղթօջախների պատմության բաժնի գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունները՝ Վրաստանի հայության, մասնավորապես՝ ջավախահայության հիմնախնդիրներ, Հայաստան–Վրաստան հարաբերություններում առկա բազմաբնույթ հիմնահարցեր, Վրաստանի տեղաբնիկ ժողովուրդների ու ազգային փոքրամասնությունների խնդիրներ: Հեղինակ է 1 մենագրության և ավելի քան 20 հոդվածի: Vsargsyan83@gmail.com

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

«Ազատամարտ» (Երևան), 1994, թիվ 47, 49, 50:

Ալեքսանյան Հ. 2013, Հայ ազգաբնակչությունը միութենական հանրապետություններում՝ ըստ 1959–1989 թթ. մարդահամարների տվյալների. – «Սփյուռքագիտություն», տարեգիրք, Երևան, ԵՊՀ հրատ., էջ 44–55:

Ավագյան Գ. 1994, Հայաստանը և հայերս աշխարհում, Երևան, «Օմեգա-Ն», 168 էջ:

Իշխանեան Բ. 1919, Վիճակագրական ուսումնասիրութիւն անդրկովկասեան ժողովուրդների: Մաս 1: Առաջին մաս. Ժողովուրդների տերրիտորիական բաժանումները եւ նրանց աճումը Անդրկովկասում, Բագու, տպարան «Ուրարդիա», 252 էջ:

Կարապետյան Ս. 2004, Հայերը Կախեթում, Երևան, «Գիտություն» հրատ., 224 էջ:

Սարգսյան Վ. 2013, Հայերը Գորիի գավառում և սահմանակից շրջաններում. – «Գլոբուս», հատուկ թողարկում, թիվ 10, Երևան, «Գասպրինտ», 70 էջ:

Джаошвили В. Ш. 1968, Население Грузии, экономико-географическое исследование. Тбилиси, «Мецниереба», 399 с.

Итоги Всесоюзной переписи населения 1970 года. 1973, т. IV, Национальный состав населения СССР, союзных республик, краев, областей и национальных округов. М., «Статистика», 648 с.

Национальный состав населения РСФСР: по данным Всесоюзной переписи населения 1989 г. 1990. М., Республиканский информационно-издательский центр, 747 с.

Новикова Г. В., Дашко В. И. 2002, Самцхе-Джавахети: в эпицентре интересов, Российский институт стратегических исследований. – Грузия: проблемы и перспективы развития, т. 1. М., РИСИ, с. 229– 256.

Республика Южная Осетия, Управление государственной статистики, Итоги всеобщей переписи населения республики Южная Осетия 2015 года, официальное издание. 2016, Цхинвал, Управление государственной статистики, 456 с.

Скаков А. Ю. 2002, Абхазия: Социально-демографические проблемы, экономика, политика, Российский институт стратегических исследований. – Грузия: проблемы и перспективы развития, т. 1. М., РИСИ, с. 131– 166.

საქართველოს სტატისტიკის სახელმწიფო დეპარტამენტი, საქართველოს მოსახლეობის 2002 წლის პირველი ეროვნული საყოველთაო აღწერის შედეგები, ტომი I, თბილისი, 2003 წ., გვ. 222.

საქართველოს სტატისტიკის სახელმწიფო დეპარტამენტი, საქართველოს მოსახლეობის 2002 წლის პირველი ეროვნული საყოველთაო აღწერის ძირითადი შედეგები (საქართველოს სოფლების მოსახლეობა), ტომი II, თბილისი, 2003 წელი, გვ. 359.

საქართველოს სტატისტიკის ეროვნული სამსახური, საქართველოს 2014 წლის მოსახლეობის საყოველთაო აღწერის ძირითადი შედეგები, თბილისი, 2018, გვ. 380.

2014 წლის მოსახლეობის საყოველთაო აღწერა საქართველოში, გვ. 2 (https://georgia.unfpa.org/sites/default/files/pub-pdf/full%20calendar_geo_0.pdf).

შერიგებისა და სამოქალაქო თანასწორობის საკითხებში საქართველოს სახელმწიფო მინისტრის აპარატი, დემოგრაფიული სტატისტიკა, მოსახლეობის 2014 წლის საყოველთაო აღწერის მონაცემები, საქართველოს მოსახლეობის რაოდენობის განაწილება 10 ყველაზე მრავალრიცხოვანი ეროვნების მიხედვით (https://smr.gov.ge/uploads/prev/__72a21b22.pdf).

სტატისტიკის ეროვნული სამსახური (საქსტატი), მოსახლეობის 2014 წლის საყოველთაო აღწერის ძირითადი შედეგები, ზოგადი ინფორმაცია, საქართველოს მოსახლეობის რაოდენობის განაწილება 10 ყველაზე მრავალრიცხოვანი ეროვნების მიხედვით (http://census.ge/files/results/Census%20Release_GEO.pdf).

შერიგებისა და სამოქალაქო თანასწორობის საკითხებში საქართველოს სახელმწიფო მინისტრის აპარატი, დემოგრაფიული სტატისტიკა, მოსახლეობის 2014 წლის საყოველთაო აღწერის მონაცემები, საქართველოს მოსახლეობის რაოდენობის განაწილება აღმსარებლობის მიხედვით (https://smr. gov.ge/uploads/prev/__98482047.pdf).

შერიგებისა და სამოქალაქო თანასწორობის საკითხებში საქართველოს სახელმწიფო მინისტრის აპარატი, დემოგრაფიული სტატისტიკა, მოსახლეობის 2014 წლის საყოველთაო აღწერის მონაცემები, მოსახლეობის განაწილება რეგიონებისა და აღმსარებლობის მიხედვით (დეტალური მონაცემები) (https://smr.gov.ge/uploads/prev/_22___9e6277bd.xls).

შერიგებისა და სამოქალაქო თანასწორობის საკითხებში საქართველოს სახელმწიფო მინისტრის აპარატი, დემოგრაფიული სტატისტიკა, მოსახლეობის 2014 წლის საყოველთაო აღწერის მონაცემები, მოსახლეობის განაწილება რეგიონების, მშობლიური ენისა და ქართული ენის თავისუფლად ფლობის მიხედვით (https://smr.gov.ge/uploads/prev/_20_1___a40096f8.xls).

შერიგებისა და სამოქალაქო თანასწორობის საკითხებში საქართველოს სახელმწიფო მინისტრის აპარატი, დემოგრაფიული სტატისტიკა, მოსახლეობის 2002 წლის საყოველთაო აღწერის მონაცემები, საქართველოს მუდმივი მოსახლეობის განაწილება სქესისა და უპირატესი ეროვნებების მიხედვით (https://smr.gov.ge/uploads/prev/__d769d8f4.pdf).

Population by religious beliefs (By Major Adminstrative-Territorial Units) (http://upload.wikimedia.org/wikipedia/commons/5/5b/POPULATION_BY_RELIGIOUS_BELIEFS.pdf).

ДИНАМИКА АРМЯНСКОГО НАСЕЛЕНИЯ ГРУЗИИ ЗА 1959– 2014 ГГ. (По данным официальных переписей)

ВАЭ САРКИСЯН

Резюме

Ключевые слова: Грузия, Абхазия, Южная Осетия, армяне, перепись, официальная статистика, динамика, ассимиляция.

После Второй мировой войны количество армян, проживающих на территории Грузии, имело тенденцию к снижению: с 442,9 тыс. до 437,2 тыс. человек в 1959–1989 годах (уменьшение на 5,7 тыс.). За эти же годы численность азербайджанцев увеличилась более чем в два раза: с 153,6 тыс. до 307,6 тыс. человек.

Численность армян в Грузии резко сократилась в постсоветский период. Согласно официальной переписи населения Грузии 1989 и 2002 годов, количество армян в Грузии за 13 лет уменьшилось на 188.282 человека. Даже если учесть, что более 60–70 тыс. армян Абхазии и Южной Осетии в 2002 г. не учитывались, так как эти территории не подконтрольны Грузии, то уменьшение численности армян на 120–130 тысяч так-же говорит о серьезнейших демографических изменениях, о «демографической зиме» среди армян Грузии и вытекающих из этого вызовах.

По результатам официальной переписи 2014 г. армянское население составляет 4,53 % населения страны или 168.100 человек. По сравнению с 2002 годом, в течение 12 лет количество армян в Грузии, по официальным данным, уменьшилось на 80.829 человек: с 248.929 до 168.100 человек.

Если в советский послевоенный период армяне Грузии занимали второе место по численности после грузин – титульной нации, то в результате неких «перестановок», произошедших после распада СССР, когда численность армян резко уменьшилась (к прежним факторам, повлиявшим на снижение, добавилось и то, что из официальной статистики Грузии были исключены цифры армян Абхазии и Южной Осетии), армяне, проживающие в Грузии, заняли третье место по численности, уступая также и азербайджанцам.

Ваэ Саркисян – к. и. н., научный сотрудник отдела истории диаспоры и армянских колоний Института истории НАН РА. Научные интересы: проблемы армянства Грузии, в частности Джавахка, разные вопросы отношений Армения–Грузия, проблемы коренных народов и национальных меньшинств Грузии. Автор 1 монографии и более 20 статей.
Vsargsyan83@gmail.com

DYNAMICS OF THE ARMENIAN POPULATION OF GEORGIA IN 1959 – 2014
(According to the official census data)

VAHE SARGSYAN

S u m m a r y

Keywords: Georgia, Abkhazia, South Ossetia, Armenians, census, official statistics, dynamics, assimilation.

After the Second World War, from 1959 to1989, the number of Armenians living in the entire territory of Georgia decreased from 442.9 thousand to 437.2 thousand people (decrease by 5.7 thousand). During the same period, the number of Azerbaijanis increased more than twice: from 153.6 thousand to 307.6 thousand people.

The number of Armenians in Georgia sharply declined in the post-Soviet period. According to the official census of Georgia in 1989 and 2002, the number of Armenians in Georgia decreased by 188,282 people in 13 years. Even if we consider that more than 60-70 thousand Armenians of Abkhazia and South Ossetia were not taken into account in 2002, since these territories are not controlled by Georgia, the decrease in the number of Armenians by 120-130 thousand also speaks of the most serious demographic changes, of the "demographic winter" among Armenians of Georgia and of the consequent challenges.

According to the results of the official census of 2014, the Armenian population makes up 4.53% of the country's population or 168,100 people. In comparison with 2002, the number of Armenians in Georgia, according to the official data, decreased by 80,829 people within 12 years: from 248,929 to 168,100.

If in the Soviet post-war period, Armenians in Georgia occupied the second place in terms of their number after Georgians, the titular nation, then as a result of some "rearrangements" that took place after the collapse of the USSR, when the number of Armenians sharply decreased (in addition to the previous factors that influenced the decline, the figures of Armenians of Abkhazia and South Ossetia were excluded from the official statistics of Georgia) Armenians living in Georgia took the third place in terms of their number, giving way to Azerbaijanis as well.

Vahe Sargsyan – Candidate of Sciences in History, Researcher at the Department of the History of Diaspora and Armenian Colonies of the Institute of History of NAS RA. Scientific interests: the problems of Armenians of Georgia, particularly, Javakhk, various issues on relations between Armenia and Georgia, issues of indigenous peoples and national minorities of Georgia. Author of 1 monograph and over 20 articles. Vsargsyan83@gmail.com

Պատմաբանասիրական հանդես • Историко-филологический журнал • Historical and Philological Journal • 2023 № 2

ՀՏԴ : 891.981+396

Doi:10.54503/0135-0536-2023.2-128

ԱՐՏԱՏԵՐ ՊԱՌԱՎԻ ԿԵՐՊԱՐԸ «ՍԱՍՆԱ ԾՌԵՐ» ԷՊՈՍՈՒՄ*

ԱԼԻՆԱ ՂԱՐԻԲՅԱՆ

Բանալի բառեր՝ Արտատեր Պառավ, «Սասնա ծռեր» էպոս, պատում, Սասունցի Դավիթ, դիպաշար, գործառույթ, մոտիվ, առասպել, վարուցանք, անեծք:

Նախաբան

Պառավի կերպարը հաճախ է հանդիպում ընդհանուր առասպելաբանության մեջ: Այն դիպաշարերի և գործառույթների բավականին հարուստ ընդգրկում ունի նաև «Սասնա ծռեր» էպոսում: Հանդես է գալիս էպոսի չորս ճյուղերում էլ՝ յուրաքանչյուր դեպքում հանդես բերելով հերոս-պառավ փոխհարաբերությունների յուրօրինակ որակներ՝ ճյուղի ներքին տրամաբանությանը համապատասխան գործառույթներով: Կայուն մոտիվաշարերով ու կարևոր դերակատարմամբ առանձնանում է Արտատեր Պառավի կերպարը էպոսի երրորդ ճյուղում:

Արտատեր Պառավի կերպարին անդրադառնում ենք ինչպես պատումների ընձեռած նյութի քննությամբ, այնպես էլ ընդհանուր առասպելաբանական պատկերացումների համատեքստում, հաշվի ենք առնում նաև հայ բանագիտության մեջ եղած դիտարկումներն ու տեսակետները[1]: Կարևորում ենք, որ ի տարբերություն հեքիաթների պառավների՝ Արտատեր Պառավի կերպարը, ինչպես ընդհանուր առասպելաբանության մեջ հանդիպող նման այլ կերպարներ (Դեմետրե, Էրդա, Անահիտ), առնչվում է վարուցանքի իրողությանը[2]: Պառավի այս գործառույթը դիտարկել ենք նաև կելտերի Պառավ-մայր Թայլտիուն աստվածուհու[3], հունական առասպելաբանության մեջ հայտնի Պառավ Հեկալեսի[4] հետ զուգահեռների համատեքստում: Բացի այդ՝ թե՛ Արտատեր Պառավը, թե՛ Թայլտիուն և Հեկալես աստվածուհիները, լինելով Պառավի կերպարի՝ իբրև Կույս և Մայր աստվածությունների երրորդ դրսևորում[5], հանդես

---

* *Ներկայացվել է 08. VI. 2023 թ., գրախոսվել է 14. VI. 2023 թ., ընդունվել է տպագրության 19. VI. 2023 թ.:*

[1] *Օրբելի. 1956, 121–124, Բդոյան. 1972, 452–459, Սահակյան, Փահլևանյան. 1996, 28–31 և այլն:*

[2] *Դոլուխանյան. 2015, 18–19:*

[3] *Տե՛ս* https://vk.com/@fiannafail-lughnasadh.

[4] Мифы народов мира. 1980, 269; *Կուն. 1989, 279–280:*

[5] *Առասպելաբանական մակարդակում Պառավը կարող է Մեծ մայր կամ Մայր դիցուհի հանդես գալ՝ որպես Կույս և Մայր դիցուհիների երրորդ դրսևորում: Այսինքն՝ «Բոլոր աստվածուհիները մեկ աստվածուհի են»: Այնուհետև, ըստ անգլիացի մարդաբան Ս. Դ՝ Էստեի, այս Աստվածուհին ունի երեք դեմքեր կամ կյան-*

են բերում մայր դիցուհիներին բնորոշ՝ հերոսներին դաստիարակող, նվիրագործման փորձությունների մղող մայրացուների գործառույթներ: Ի դեպ, տարբեր ժողովուրդների առասպելներում երկրի, հողի պաշտամունքը մարմնավորող մայր դիցուհիներին նվիրվել են երկրագործական տոներ: Այսպես, մեր էպոսում Դավիթը գրեթե միշտ գինի է խմում, այլ կերպ՝ «քեֆ է անում» հենց Արտատեր Պառավի արտում, որը ինչ-որ առումով տոնախմբություն է հիշեցնում: Ըստ կելտերի առասպելի՝ Լուգնասադի տոները[6] *կազմակերպվում էին այն բլրի վրա, որտեղ թաղված էր Պառավ աստվածուհին, իսկ հույների դյուցազնական հերոս Թեսեն «Հեկալեսյան տոները» սահմանեց պառավ Հեկալեսի պատվին՝ նրա մահից հետո: Եվ, վերջապես, պետք է նշել, որ երկրագործության հետ ուղիղ կապ ունեցող Պառավ-մայր դիցուհիները ներկայացնում են պառավի «բարի ասպեկտը», մանավանդ որ նրա «մյուս էթիկական համոզմունքներն այն են, որ կյանքի փոխկապակցված ցանցը չպետք է վնասվի, և որ նպատակները պետք է լինեն խաղաղությունն ու գործընկերությունը, ոչ թե պատերազմն ու իշխումը»*[7]*:*

Պառավը «Արտատեր Պառավ և Դավիթ» դիպաշարում

Արտատեր Պառավի կերպարը էպոսի երրորդ ճյուղում գալիս է լրացնելու «Սասնա ծռեր» վեպի էպիկական կերպարների շարքը (Ջենով Հովան, Քեռի Թորոս, Իսմիլ խաթուն), որոնք կոչված էին պաշտպանելու Սասնա ճրագ մանուկ Դավթին: Այս կերպարը եզրափակում է Դավթին ծնող, սնող, դաստիարակող-պաշտպանող մայրերի եռյակը (ծնող՝ Ջոջ Մհերի կին /Արմաղան/, սնող՝ Ջոջ Մելիքի կին /Իսմիլ խաթուն/, որդեգիր-դաստիարակ՝ Պառավ[8]*), որոնք այս*

քի փուլեր (https://vk.com/@ignis_nox-profanaciya-gekaty-deva-mat-ili-boginya-staruha)*:*

[6] *Տե՛ս* https://vk.com/@fiannafail-lughnasadh.

[7] *«Քանի որ Պառավ աստվածուհու ասպեկտը երբեմն կործանարար է, ոմանք կարծում են, որ այն պարունակում է և՛ դրական, և՛ բացասական պատկերացումներ, ներկայացնում վարքագծի բարդություններ ...» (տե՛ս* https://ru.wikibrief.org/wiki/God dess_movement*):*

[8] *Սա հիշեցնում է Մայր աստվածուհիների եռյակը՝ Կույս, Մայր, Պառավ: Նրանցից Պառավի արքետիպին բնորոշ են իմաստնությունը, փոփոխությունները, փոխակերպումները (տե՛ս* https://ru.wikibrief.org/wiki /Goddess_ movement*): «Մայրերի» սույն եռյակը բնորոշ է նաև այլ ժողովուրդների առասպելաբանությանը: Այդպիսի հետաքրքիր տարբերակներ ունի, օրինակ, սելկուպերենը (սելկուպները Սիբիրի ժողովուրդ են): Այդտեղ «մայր» հասկացությունը իմաստային չորս տարբերակներով է դրսևորվում: Ենթադրվում է՝ սելկուպների մոտ գլխավոր աստվածը եղել է երկնային Պառավ Մայր-աստվածը, և* ama *տերմինը նշանակում է Մայր-աստվածուհի, որը կերակրողն է, հավանաբար, ամբողջ մարդկային ցեղի:* ema/äma *տերմինով կոչում էին երիտասարդ կնոջը, մորը, հարսին կամ ծննդկանին,* awa *տերմինով՝ ֆիզիկական մորը, էգին, ով պահպանում էր «տոհմական բույնը»,* äwä *տերմինով՝ ոչ արյունակից մորը, Մայր-աստվածուհուն* (тетя), *ով սնում և դաստիարակում էր «Աստծո որդուն» (հոգեզավակին) (տե՛ս* Зеремская.– https://cyberleninka.ru/article/n/ponyatie-mat-v-selkupskom-yazyke/; Байдак, Тучкова. 2004, 51–64)*:*

կամ այն կերպ առնչվում են Դավթի կյանքի առաջին երեք փուլերին. ա) ծնունդ, մանկության շրջան Մսրում, բ) մանկություն Սասունում, գ) մուտք պատանեկություն, ավելի լայն աշխարհահանաչողության ձեռքբերում: Նկատենք, որ սրանք «Սասնա ծռերում» իրացվող ամենակայուն դիպաշարերն ու մոտիվներն են:

Արտատեր Պառավի շուրջ հյուսված մոտիվները «Սասնա ծռերի» երրորդ ճյուղի և, ընդհանրապես, ողջ էպոսի ամենակայուն մոտիվաշարերից պիտի համարել: «Սասնա ծռերի»՝ մեր կողմից դիտարկված շուրջ իննսունչորս տպագրված պատումներում[9]*, բացառությամբ սոսկ «Սանասար և Բաղդասար» ճյուղն ունեցող 6 պատումների*[10]*, Արտատեր Պառավի կերպարը դրսևորվում է, և եթե անգամ Դավթի ճյուղն ավարտվում է Մելիքի հետ կռվի տեսարանով (ու չկա «Դավիթ և Խանդութ» շարունակությունը), այս դիպաշարը միշտ նախորդում է կռվին: Իհարկե, կան պատումներ, որոնցում պառավի փոխարեն գործում է ծերունին, սակայն պատումներում «Արտատեր Պառավ և Դավիթ» դիպաշարը հիմնականում գործում է գրեթե անխաթար հաջորդականությամբ, ինչը, թերևս, այս առասպելական սյուժեի հարացուցային գործառույթի*[11] *դրսևորում պիտի համարել: Այսպիսով, փակվում է հերոսի՝ Դավթի մանկության կամ մայրերից կախվածության շրջանը, և սկսվում է հասունության շրջանը, երբ ինքն է որոշումներ կայացնողը*[12]*:*

Պետք է նկատել, որ վիպասառասպելաբանական բանահյուսության մեջ Արտատեր Պառավի կերպարի գուգահեռները (իբրև՝ արտ ունեցող, երկրագործության հետ ուղիղ կապ ունեցող կերպար) տարածված չեն, այդպիսին հաճախ հանդիպող կերպար չէ նաև հեքիաթներում[13]*: Փոխարենը, այս կերպարը հաճախադեպ է երկրագործական ծիսական բանահյուսության և երգերի մեջ, որոնցում հանդես է գալիս Հացի ոգիների*[14]*, տոների և ծիսական արարողությունների ժամանակ՝ տարբեր խորհրդանիշ իրերի և մարդկանց տեսքով: Մինչդեռ «Սասնա ծռերում» Արտատեր Պառավի կերպարը հետաքրքիր զարգացումներ ունի, բնութագրվում է գործառույթների բազմազանությամբ: Այն*

---

[9] *Սասնա ծռեր. 1936, 1944, 1951, 1979, 1999, Մոկս. Հայոց բանահյուսական մշակույթ. 2015:*

[10] *Սասնա ծռեր. 1936, 123–136, 137–156, 301–325, 871–885, Սասնա ծռեր. 1951, 551–560, Սասնա ծռեր. 1979, 443–455:*

[11] Мелетинский. 1980, 294–297.

[12] *Ըստ չվեյցարացի մարդաբան Ջ. Բախոֆենի՝ «Երբ տղամարդը ազատագրվեց Մորից և նրա իգական* (Gynaikokratie) *բարոյականությունից, նա դադարեց երեխա լինելուց և հասուն դարձավ: Աշխարհի ժողովուրդները թոթափեցին մանկությունը և մտան հասունության ու պատասխանատվության դարաշրջան: Այդպես սկսվեց հոր իշխանությունը և «հայրական օրենքը»»* (Bachofen. 1948, 2, 53)*:*

[13] *Հեքիաթներում շատ տարածված պառավի կերպարներից քչերի դեպքում նա արտ ունի: Օրինակ՝ Սյունիքի «Դաՙրվիշին խոխեքը» հեքիաթում պառավը բոստան ունի, որտեղ մտած հերոսին անիծելով՝ խորհուրդ է տալիս գնալ, կորած հորը փնտրել ու նաև մորից խնդրել դերվիշի տված ձին ու ասպագենը (Հայ ժողովրդական հեքիաթներ. 1979, 434):*

[14] *Ֆրեզեր. 1989, 482–483, 492–496:*

դրսևորվում է և՛ կենսափորձ ունեցող կնոջ, և՛ դաստիարակիչ մոր տեսքով[15], *նաև ընդհանրություններ է հանդես բերում հեքիաթի՝ խրատատու, նվիրագործման ծիսարար, միջնորդ պառավի հետ*[16]:

Նշենք, որ «Արտատեր Պառավ և Դավիթ» դիպաշարում գործում են Պառավի հետ կապված երեք կայուն մոտիվներ. Պառավն արտ ունի, Պառավն անիծում է հերոսին, Պառավը խորհուրդ է տալիս հերոսին: Այս երեք մոտիվներն ընդգծում են կերպարի արարողակարգային բնույթը, պառավ-հերոս՝ մայր-որդի կապի հզորությունը: Հատկանշական է, որ Դավիթն ամեն անգամ վերադառնում է Պառավի արտ՝ ինչ-որ բան նորից սկսելու ներքին մղումով, որը նախորդ արարքից մեկ աստիճան բարձր է և ենթադրում է հերոսի պատասխանատվության ավելի բարձր գիտակցում իր երկրի և ժողովրդի հանդեպ: Պառավն ամեն անգամ նրան նախատում է՝ անիծելով, երբեմն նաև հերոսին համեմատում նրա փառավոր հոր հետ: Սակայն անեծքից կամ նախատինքից հետո Պառավն ուղղորդում կամ խորհուրդ է տալիս Դավթին, թե նախորդ արարքին ինչը պիտի հաջորդի: Այսպես, արտում որս անելու փոխարեն նա պետք է հոր որսասարում որս անի, արտը տրորելու փոխարեն հոր գանձերն ու սասունցիներին պաշտպանի հարկահաններից և, վերջապես, արտն ավերելու կամ գինի խմելու փոխարեն պետք է գնա, հոր զենքերին ու ձիուն տեր լինի՝ նախապատրաստվելով հերոսական մենամարտին: Պառավն ավարտում է իր՝ այսպես կոչված, երկրային առաքելությունը, իսկ հերոսը, «թոթափելով մանկությունը», մտնում է հասունության և պատասխանատվության շրջան: Սկսվում է «հայրական օրենքի» փուլը, որտեղ հերոսի կողքին որպես խորհրդատու և պաշտպան այսուհետ պիտի լինի հորեղբայրը կամ քեռին:

Հետաքրքիր է, որ առաջին ու երկրորդ մոտիվներում Պառավի և հերոսի գործողություններն ու խոսքերը գրեթե նույնությամբ կրկնվում են, ինչը, կարծում ենք, նույնպես ծիսական-արարողակարգային իմաստ ունի: Երրորդ մոտիվից՝ Պառավի խորհրդից հետո հերոսը գործում է ինքնուրույն, առանց նրա մասնակցության (որսի գնալը, վանք չինելը կամ վերաշինելը, վանքը քանդողներին, ապա հարկահաններին պատուհասելը, հորեղբորից հոր զենքերն ու սարքերը պահանջելը, հորեղբորից վիրավորվելը, հրաժեշտը և այլն):

Վեպում այս մոտիվաշարերի կայուն և անխախտ հերթագայությունը, կարծում ենք, կարելի է բացատրել՝ դրանք դիտարկելով և՛ հայկական, և՛ ընդհանուր առասպելաբանական սյուժեների շրջանակներում: Այն, որ Պառավը Դավթին պատանեկությունից հասունություն, անգիտությունից պատասխանատվության գիտակցում տանող ճանապարհին մաքրագործման փորձությունների մղող Պառավ-Մոր կերպար է, ակներև է: Ընդհանրապես, տարբեր ժողովուրդների մշակույթներում հանդիպող արխաիկ կերպարներից մեկը լինելով՝ Պառավն իր կենսափորձով ու գործառույթներով կարևոր դերակատարում ունի պատանիների տարիքային մեկ խմբից մյուսին անցման գործընթացում՝ իբրև մայր աստվածության, արարողական մոր կերպար[17]: *Ինչպես նշում է Հ. Օրբելին, «Այս պառավ կնոջ կերպարի հիմքում ընկած է ոչ թե պատկերա-*

[15] Рабинович. 1980, 178–180.

[16] *Ղարիբյան. 2023, 269–287:*

[17] Иванов, Топоров. 1980, 149; Рабинович. 1980, 178–180.

ցումը մայր-հողի մասին, այլ այն տարերքի պատկերացումը, որը բազմաթիվ ժողովուրդների մոտ ընդունել է մայր-կնոջ կերպարանքը, դարձել է իմաստուն խրատներ չնորհող և ծնել լիովին մարդկայնացված մարգարեուհիներ»[18]:

Հետազոտությունները ցույց են տվել՝ «հերոսների հասունության առաջին նշանների հայտնվելուն պես սկսվում է նրանց նվիրաբերության նախապատրաստական փուլը, որի ժամանակ նրանց առևանգում, հեռացնում կամ մեկուսացնում էին միջավայրից: Այս փուլում նվիրագործման փորձություններ իրականացնողը կարող է լինել աստվածային հայրը, ցեղի առաջնորդը կամ հորեղբայրը/քեռին, ինչը պայմանավորված է հերոսի կողմից տաբուի խախտումով կամ հերոսի գործողությունները վտանգ են ներկայացնում առաջնորդի կամ հոր համար»[19]: Էպոսում այդ գործառույթն իրացվում է Ձենով Հովանի, երբեմն նաև՝ Քեռի Թորոսի կողմից, որոնք Դավթին հեռացնում, մեկուսացնում են. ուղարկում են սարերը՝ որսի: Այսպիսով, մեկուսացումն ու հեռացումը պարտադիր պայման են անհատականության ձևավորման գործընթացի սկզբում պոտենցիալ ամբողջականության ապահովման համար[20]: Դավթի անհատականացման հետ կապված՝ այսպիսի մոտիվաշարերը նախորդում են նվիրագործման բուն ծեսի իրացմանը: Սա, իսկապես, նախապատրաստական փուլ է բուն ծեսի համար: Այդ փուլում, ինչպես նկատում է Կ. Յունգը, հերոսի «անհատականությունը (այսինքն՝ «Եսը») դեռևս բազմակի վիճակում է. այսինքն՝ էգոն կարող է ներկա լինել, բայց այն կարող է զգալ իր ամբողջականությունը միայն համայնքի այնպիսի ձևերում, ինչպիսին է ընտանիքը, ցեղը կամ ազգը, բայց ոչ իր սեփական շրջանակում»[21]:

Ահա Դավիթը հայտնվում է Արտատեր Պառավի արտում. իրողություն, որն առասպելաբանական արխաիկ պատկերացումներով նշանակում է վերադարձ հարազատ միջավայր, որտեղ հերոսին միշտ սպասում է մեկը, ով պետք է սնուցի և պաշտպանի նրան[22]: Նկատվել է, որ սնուցող կենդանիներին ուշ ժամանակների պատկերացումներում եկել են փոխարինելու կին-դայակները կամ որդեգիր-մայրերը[23], նաև՝ որսորդները, հովիվները, ազնվատոհմիկ դաստիարակ «հայրերը»[24]: Եվ այս առումով՝ չափազանց ընութագրական են այստեղ պառավ-դայակի կամ պառավ-մոր և հերոսի փոխհարաբերությունների ձևերը: Նկատենք, որ մայրաստվածությունների արքետիպերին բնորոշ երեք կարևոր հատկանիշները՝ «մայրական սերը, իմ փորձը, իմ գաղտնիքը[25]», էպոսում

---

[18] *Օրբելի. 1956, 124:*

[19] Мелетинский. 1980, 294–297.

[20] Юнг. 1996, 101.

[21] Юнг. 1996, 102.

[22] Noldeke. 1920, 130–211, 132–135.

[23] *Այս մոտիվներն առկա են նաև մի շարք հեքիաթներում («Կարմիր կովի խեքիաթ», «Պոլտով կեով», «Ոսկեմազիկը»), երբ որբերին պաշտպանող Կարմիր կովը, որպես հնագույն տոտեմ-մայր, իր մորթվելուց առաջ նրանց հանձնում է պառավին, որպեսզի նա հոգ տանի և պաշտպանի որբերին (Հայրապետյան. 2016, 225):*

[24] *Օրինակ՝ Արտաշեսի դայակ Սմբատը (Խորենացի. 1991, 162–163), մանուկ Տրդատի և մանուկ Գրիգորի դայակները (Ագաթանգեղոս. 1983, 32):*

[25] Юнг. 1996, 229.

առավել բնորոշ են Պառավի կերպարին, քանի որ Դավիթը հայտնվում է Պառավի հոգացողության ու պաշտպանության ներքո: Նա է ճիշտ ձևով և խստությամբ հերոսին նվիրագործման փորձությունների ուղղորդում, ցեղի, գերդաստանի համար տաբու հանդիսացող գաղտնիքը բացում՝ հերոսին հայտնելով հոր հագուստների, Թուր-կեծակի, Քուռկիկ Ջալալու, Խաչ պատրազի մասին: Պառավը նախ անիծում է, հետո՝ նախատական-խրատական ձևով հերոսին ներկայացնում անցյալը՝ պատմելով փառավոր հոր և անցյալի հարստության մասին: Եվ հակադրամիասնության մեջ ներկայացնելով ցեղի փառավոր անցյալն ու փառազուրկ ներկան՝ նրա՝ դեռևս անկանոն վարքագիծը զսպելու, անգիտակից ես-ը ճնշելու, նվաստացնելու միջոցով Պառավը նրան մղում է արկածների, փորձությունների, որպեսզի վերջապես ամբողջանա հերոսի անհատականությունը. անգիտակցականը նահանջի, և հաղթի հերոսական ես-ը[26]*:*

Հերոսը, հարազատ մայր չունենալով, հասկանում է, որ հայտնվել է «մայրական խնամքի ներքո» («Ես մեր չունիմ, մերություն արե ինձ»), ուստի առանձնապես մեծ սրությամբ չի ընդունում պառավի նախատինքներն ու անեծքը: Մյուս կողմից՝ սա արարողակարգ է, որը նա պիտի անցնի, ինչը երևում է եռակի կրկնության ձևից: Նվիրաբերության ծեսն անցնող հերոսը, սակայն, այստեղ գրավում է ամենացածր և «ստորագույն դիրքը»[27]*: Չնայած հերոսական նախնիներին և նրանց փառավոր անցյալին՝ ցեղը կամ միջավայրը դեռևս չի վստահում Մանուկ-հերոսին, ավելին՝ նվիրագործման ծեսի ներքին պահանջով հաշվի չեն առնվում կամ գրեթե «չեղյալ են հայտարարված հիերարխիկ հասարակարգը և նրա հետ կապված վախի ձևերը, պատկառանքի, ակնածանքի, բարոյականության և այլն, այսինքն՝ մարդկանց հասարակական հիերարխիկ և տարբեր (այդ թվում՝ տարիքային) այլ արգելքները»*[28]*: Եվ Պառավն է միայն հավատում մանուկ հերոսին, նրա հերոսական էությանը, ինչպես մայրը կհավատար իրենից ծնված որդու ուժին: Նա է «կանխագուշակում երիտասարդ հսկայի ապագան, թաքցրած գաղտնիքներ է բաց անում և հարևանցիորեն մայրական խրատներ տալիս ...» (չէ՞ որ նա նաև Մհերի սիրուհին է եղել, անցյալի, գաղտնիքի կրողն է)*[29]*: Փորձությունները հաղթահարելու համար հերոսը պիտի անցնի բոլոր «անցումային ծեսերը» արդեն վեպի տրամաբանությամբ և թելադրանքով, երբ յուրաքանչյուր նախորդ մոտիվը դառնում է հաջորդի դրդապատճառը: Պատումներում Դավիթը որքան անգամ լինում է Պառավի արտում, Պառավն այդքան անգամ անիծում է, ընդ որում՝ պարտադիր նույն անեծքով, ինչով սկսել էր առաջին անգամ: Անեծքը պառավի «հզոր զենքն» է, անեծքի հմայական ներգործությամբ պառավը (այնպես, ինչպես նաև որոշ հեքիաթներում*[30]*) պատժելու փոխարեն հանդես է գալիս որպես նվիրատու, խորհրդատու: Ի դեպ, ժողովրդական պատկերացումնե-*

[26] Юнг. 1996, 103.
[27] Андреев. 1976, 87–86.
[28] Бахтин. 1972, 207–208.
[29] *Орбели. 1956, 123:*
[30] *Խեմչյան. 2021, 62–63:*

ում ծնողական անեծքի զորության հավատալիքն[31] արտահայտվել է տարբեր ձևերով, ինչպես, օրինակ, «Մոր անեծքը օրհնանք է, հոր անեծքը անեծք է», որով կարող է բացատրվել նաև այն նուրբ բովանդակային ենթաշերտը, ըստ որի՝ Պառավի անեծքը, որպես մոր անեծք ընկալելը, ավելի շատ ենթադրում է անիծվողին նախատելու, նվիրագործման փորձությունների մղելու, քան անեծքի զորությամբ պատժելու ենթատեքստ. այն կարելի է անգամ որպես ծիսական-արարողական սովորություն համարել: Վ. Բդոյանը նկարագրել է մինչև XIX դ. Ագուլիսում նշվող Վարդավառի տոնակատարությունը, որը մի տեսակ զոհաբերության ծես է հիշեցնում[32], և կոչել են Խնդում[33]: Ըստ նրա՝ Խնդումի Պառավը նույնանում է Սասնա կորեկմչակ Պառավի հետ: Վերջինս անիծում է Դավթին նրա համար, որ նա իր արտն է ավերում, իսկ Ագուլիսի պառավն՝ իր Խնդումը քանդողներին: Երկուսն էլ անօգնական են և ներկայացնում են մերժված ու ծպտված Անահիտին[34]: Պետք է ենթադրել, որ ինչպես Խնդումի ծեսի ժամանակ, այնպես էլ էպոսում զոհաբերության ծեսի հնագույն արձագանքներն են դրսևորվում. Պառավը, որպես Մայր-երկրի, Մայր-հողի անձնավորում, իր ունեցած և մշակած բարիքներն է զոհաբերում ամպրոպային դիցին՝ դյուցազնական Մանուկ-հերոսին, որպեսզի վերականգնվի բնական կարգը: Պառավի անեծքին հաջորդում է բնական կարգի խաթարումը, որի վերականգնմանն են ուղղված հերոսի գործողությունները[35]:

Այս կերպարի հետ կապված կարևորագույն մոտիվ է կորեկի կամ շաղգամի արտ ունենալու փաստը[36] (ընդ որում՝ արտը երբեք ցորենի չի լինում, քանի որ Սասունում ցորեն չի աճում): Ըստ Հ. Օրբելու՝ Պառավը հեռավոր ձևով հիշեցնում է հունական Դեմետրային, այսինքն՝ հանդես է բերում մայր հողի գծերը, ինչպես նաև՝ հին գերմանացիների Էրդայի՝ Վոթանի սիրածի բնավորության գծերը, և նրանց ընդհանրացնում է ընդգծված հոգատարությունը վարուցանքի նկատմամբ[37]:

Շատ կարևոր է, թե ինչով է սնուցվում մանուկ հերոսը մեկուսացման մեջ, որսորդական, հովվական միջավայրում: Նրա սնունդը թռչնի միս է, ըմպելիքը՝ գինի: Անգամ շաղգամը, որը մշակովի բույս է, Դավիթն ուտում է ցեխոտ, հողոտ, այսինքն՝ վայրի բնությանը մոտ, չմշակված վիճակում: Սարերում «հացակերությունը» բացառվում է, քանի որ հացը, լինելով մարդու աշխատանքի արդյունք, չի համապատասխանում էպիկական հերոսի իդեալին[38]:

---

[31] *Աբեղյան. 1966, 441–442, Հարությունյան. 1975, 13–14: Էպոսում, ինչպես նաև ժողովրդական առասպելներում ու զրույցներում, առանձնապես շեշտվում է հայրական անեծքի զորությունը. Դավթի անեծքը՝ Մհերին, Արտաշեսի անեծքը՝ Արտավազդին:*

[32] *Տյառնընդառաջը հիշեցնող այս ծեսը մի տեսակ զոհաբերության արարողություն էր՝ նվիրված հովանավոր ոգիներին (Բդոյան. 1972, 497–499):*

[33] *Բդոյան. 1972, 497–499:*

[34] *Բդոյան. 1972, 497–499:*

[35] *Խեմչյան. 2016, 193–200:*

[36] *Աբեղյան. 1966, 451–452:*

[37] *Օրբելի. 1956, 124:*

[38] Степанян. 1991, 143–153.

Էպոսում Արտատեր Պառավի հետ կապված դիպաշարերում կարևոր մոտիվ է «քեֆ անելը», գինի խմելը: Մեր հերոսների սիրելի խմիչքը հատկապես «նռան գինին» է (նուռը Սասունի ձորերի գլխավոր պտուղներից մեկն է)[39]: Ընդհանրապես, խնջույքի մոտիվները կարևոր են հերոսի կյանքում. «...խմել աստվածային խմիչք, նշանակում է կլանել աստվածային կյանք և ուժեր»[40]: Սա նույնպես նվիրագործման ծեսի մաս է կազմում, քանի որ խնջույքից հետո հերոսը գնում է կռվի և ոչնչացնում է թշնամիներին: Այլ կերպ՝ գինի խմելը, խնջույքը հերոսի հաստատության աստիճանի առաջին ցուցիչներն են. այդպես էլ Դավիթը վանքը վերաշինելուց հետո գինի է խմում, հարբում, բայց լսելով մի կերպ փրկված սարկավագին կամ տերտերին՝ բարդու ծառը դնում է ուսին և ջնջում Մսրա բոլոր զինվորներին: Նույն մոտիվը կա Նարթական էպոսում, երբ ամպրոպային հերոս Բատրազը գնում է խնջույքի և ոչնչացնում նարթերին[41]:

Արտատեր Պառավի գործառույթներն ընդհանուր առասպելաբանության համատեքստում

Արտատեր Պառավի կերպարը վարուցանքի հետ իր առնչակցությամբ ընդհանրություններ է երևան բերում Դեմետրե, Անահիտ դիցուհիների հետ, որոնք ունեն նաև հողագործության հովանավոր աստվածուհու գործառույթ[42]: Գրեթե նման գործառույթ ունի կելտերի Պառավ-մայր դիցուհի Թայլտիուն, որի կերպարը կապված է երկրի, պտղաբերության հետ, իսկ նրա անունը՝ Tailtiu, *ծագել է* talam՝ *«հող, երկիր» բառից[43]: Կարելի է ասել, որ Թայլտիուն մեր Արտատեր Պառավի կերպարի զուգահեռն է կելտական առասպելաբանության մեջ: Համանման մի գործառույթ է իրականացնում հույների Պառավ-մայր դիցուհի Հեկալեսը, որին նույնպես երկրագործության հովանավոր աստվածուհու գործառույթի կրող կարելի է համարել, քանի որ պաշտպան դառնալով Մարաթոնի երկրագործներին՝ իր խորհրդով նրանց ազատում է արտերն ամայացնող վայրի ցուլից:*

Արտատեր Պառավի՝ Դավթի համար դաստիարակ-մոր, նվիրագործման ծիսարարի, խորհրդատուի դերը նույնպես իր զուգահեռն ունի Պառավ Թայլտիուի պարագայում: Վերջինս կելտերի Լուգ աստծո համար որդեգիր-մայր է եղել: Հունական առասպելաբանության մեջ Պառավ Հեկալեսը ոչ միայն մայրական ջերմությամբ է հյուրընկալում հերոսին՝ Թեսեին, այլև նրա խորհրդով է հերոսը կարողանում սպանել վայրի ցուլին: Վերջինիս մղելով փորձության՝ Հեկալեսը նույնպես իրացնում է Պառավ մոր կամ մայրացուին բնորոշ գործառույթ: Նկատենք, որ Պառավ մայրերի հետ առնչություն ունեցող հերոսները

---

[39] *Աբեղյան. 1966, 542:*

[40] Купер. 1995, 247.

[41] Дюмезиль. 1976, 60.

[42] *Այդ ընդհանրությունը նկատել են Հ. Օրբելին, Վ. Բդոյանը, Կ. Մելիք-Փաշայանը (Մելիք-Փաշայան. 1963, 65–66):*

[43] *Ըստ լեգենդի՝ նա մահացել է հոգնածությունից Իռլանդիայի հարթավայրերը քարերից մաքրելուց հետո՝ ջանալով կղզին հարմարեցնել հողագործության համար:*

(Դավիթ, Լուգ, Թեսե) նաև հողագործության, մեռնող-հառնող աստվածությունների հատկանիշների կրողներ են:

Հետաքրքրական մի օրինաչափություն է նկատվում տոների առնչությամբ. դրանք, ըստ էության, սահմանվում են հերոսների կողմից, երբ նրանք կատարում են հերոսական որևէ արարք, և նվիրվում են Պառավ-դաստիարակ մայրերին: Այսպես, մեր Դավիթը, վերաշինելով հոր վանքը, վերադառնում է Պառավի արտ՝ խնջույք անելու: Գրեթե նույն կերպ են վարվում Թեսեն[44], որը սպանում է վայրի ցուլին, և Լուգը, որը հայտնի էր իր սխրագործություններով: Հետաքրքրական է ոչ միայն տոնի գաղափարը, այլ նաև՝ թե երբ, տարվա որ եղանակին է այն նշվում: Եթե Դավթի, Թեսեի պարագայում կոնկրետ ժամանակ չի նշվում, ապա հայտնի է, որ կելտերը Լուգնասադը[45] նշել են կոնկրետ օր՝ օգոստոսի 1-ին: Ըստ լեգենդի՝ օգոստոսի 1-ի տոնը սահմանել է հենց ինքը՝ Արևի աստված Լուգը: Օգոստոսի 1-ի ամենատարածված անվանում «Լուգնասադը» բառացի թարգմանվում է որպես «Լուգի հավաքույթ» կամ «Լուգի հարսանիք»: Հին կելտական աղբյուրներում Լուգնասադի օրը մեկնաբանվել է որպես «բերքահավաքի սկզբի ժամանակ». այն ժամանակաշրջանը, երբ «Երկիրը տառապում է իր պտուղների ծանրությունից»[46]:

Այսպիսով՝ Արտատեր Պառավի կերպարը, ինչպես և իր մի շարք զուգահեռներ, ներառում է հողի, երկրի, բուսականության, պտղաբերության հատկանիշներ, իսկ դյուցազնական Մանուկ-հերոսի (հերոսների) հետ հարաբերություններում հանդես է բերում նվիրագործման ծեսը կատարողի, դաստիարակ-մոր կամ որդեգիր-մայրացուի հատկանիշներ, մանավանդ եթե դյուցազնական հերոսը մորից հեռու է կամ մայր չունի (վերջինը նաև առասպելական հերոսի կերպարին բնորոշ առանձնահատկություններից է): Ի վերջո, այստեղ գործ ունենք Պառավի «բարի ասպեկտի» հետ, որը բխում է նաև այս առասպելների էտիոլոգիական բնույթից. մի բան, որ սովորաբար բնորոշ է տիեզերածին առասպելներին:

---

[44] Т а х о-Г о д и. 1982, 502–504.

[45] *Հետաքրքրական է՝ հին ժամանակներում օգոստոսի 1-ը համարվում էր մեծ տոն Լիոնում (Ֆրանսիա) և կոչվում էր* Lugudunum, *որը նշանակում է «դուն (քաղաք) Լուգի»: Լուգնասադ տոնը նշանավորում էր տարվա մի եղանակից անցումը մյուսին (տե՛ս* https://vk.com/@fiannafail-lughnasadh)*:*

[46] *Շատ ընդհանրություններ են հանդես բերում հայերի Նավասարդ ու կելտերի Լուգնասադ տոները: Նախ՝ հին հայերը Նավասարդը նույնպես տոնել են օգոստոսի 1-ին, երբեմն՝ 11-ին: «Ինչպես կը տեսնուի՝ հին Հայոց Նոր տարին հայկական Նաւասարդ ամսոյն 1-ին կը տօնուէր, որ միանգամայն «Նորոց պտղոց» կամ Հունձքի տօն էր եւ այդ օրը ազգային յատուկ դից նուիրուած էր ու աշխարհախումբ տօնախմբութիւն տեղի կ՚ունենար թէ՛ իբրեւ Նոր տարւոյ եւ թէ՛ իբրեւ Հունձքի տօն» (Պ ո ղ ո ս ե ա ն. 1952, 6): Հենվելով Ագաթանգեղոսի տեղեկությունների վրա («Ի ժամանակի Դիցն Ամանորայ՝ ամենաբեր, Հիւրընկալ դիցն Վանատրի, զոր յառաջագոյն իսկ ի նմին տեղւոջ պաշտէին՝ յուրախութեան Նավասարդ աւուր»)՝ Հայր Ղ. Ալիշանը կարծում է, որ «կվայելեր» ամենաբեր Ամանորայ դիցը լիներ «փոխարինողը հռոմեացիների Պամոնա գեղեցիկ հավերժահարսի՝ պակված որթով և ողկույզներով, ձեռքին նույն առատության կամ ամենաբեր եղջյուրը ...» (Ա լ ի շ ա ն. 2002, 156):*

Արտատեր Պառավի գործառույթները «Սասնա ծռեր» էպոսում

Պառավի գործառույթները ընդհանուր են հեքիաթներում և առասպելներում, իսկ «Սասնա ծռեր»-ում Արտատեր Պառավը ենթարկվում է էպոսի վիպական թելադրանքին, կերպավորման էպիկական ձևերին, երրորդ ճյուղում հանդես եկող հերոսի գործառույթներին ու վերջնական նպատակին: Այդ իմաստով՝ Արտատեր Պառավը, կարելի է ասել, մանուկ Դավթին որպես միջնորդ «ուղեկցում է» ժամանակային երեք միավորների՝ անցյալի, ներկայի և ապագայի միջով: Իրողություն, որը վեպում դրսևորվում է չինարարության, հարկահանության և հոր զենքերի ու ձիու ձեռքբերման մոտիվաշարերով: Այսպես իրագործվում է վեպում վերջին կին-մայր հերոսուհուն՝ Պառավ-մորը վերապահված առաքելությունը:

Առաջին մեծ շրջանը, որը կատարում է Դավիթը Պառավի միջնորդությամբ, հաղորդակցումն է անցյալին կամ նախնիների հետ: Երբ Պառավը Մանուկ-հերոսին հայտնում է «Հոր որսասարի մասին», նա գնում է գտնելու այդ որսասարը, բայց գտնում է լույս, որը ճառագում է հոր գերեզմանից: Տեղի է ունենում ամենասուրբ և կարևոր ծիսակարգը՝ հաղորդակցում երկնային լույսի, նախկին փառքի, նախնիների անհանգիստ հոգու հետ: Նախնիների հետ հաղորդակցումն ընկալվում է իբրև պատվիրան, և Դավիթը գիտի, թե ինչ պիտի անի: Նա հորեղբորից քարտաշներ և վարպետներ է խնդրում, որ հոր գերեզմանի վրա կառուցի կամ վերաշինի վերջինիս ավերված վանքը: Այսպես, Դավիթը, հանգստություն պարգևելով հոր անհանգիստ հոգուն և նրանից ստանալով երկնային օրհնություն, կյանքի կոչելով անցյալի սրբացված, թաքցված արժեքները, միևնույն ժամանակ կարծես վերագտնում է իր ինքնության, ամբողջականության մի մասը, որը նախնիներից է գալիս:

Հաջորդ փորձություն-շրջանը, որը պիտի անցնի հերոսը, ներկայի մեջ է, մանավանդ որ ոչ միայն յուրայինները, այլ նաև թշնամիները չեն հավատում նրա ուժին և կոչումին: Նրա անունը դեռևս սարսափ չի առաջացնում հակառակորդների մոտ, ինչի պատճառով նրանք անարգել ավերում են հերոսի կառուցած վանքը և սպանում վանականներին: Դավիթը նրանց դեմ դուրս է գալիս կռվելու՝ քեֆից հետո, գինի խմած, և արմատահան արված ծառով պատուհասում է բոլորին: Սակայն նրան չեն վստահում նաև յուրայինները, քանի որ մանուկ է: Դարձյալ հանդես է գալիս պառավը և հայտնում, որ հարկահանները եկել են՝ տանելու իր հոր հարստությունը, գանձերը, նաև՝ կույս աղջիկներին, որոնք առասպելաբանական մակարդակում «ոչ այլ ինչ են, եթե ոչ Դաւթի տոհմի եւ Դաւթի էութիւնը՝ արեւային յատկանիշների գումարը, ոսկի, կոյս աղջիկ եւ անծին երինջ: Կոյս աղջիկների մեջ է նաեւ Արտատէր Պառաւի միակ աղջիկը. Պառաւ-Դեմետրէ զուգահեռը խորացնում է»[47]: Դավթին պարզապես պետք էր իմանալ, թե ինքը որքա՞ն պատասխանատվություն է կրում Սասունի և սասունցիների համար կամ ընդհանրապես՝ կրո՞ւմ է, թե՝ ոչ: Պառավը նրան մղում է այդ պատասխանատվության գիտակցմանը և իրականացմանը: Եվ երբ նա հասկանում է, որ ինքն է այդ գանձերի, հարստության տերը, ինքն է պատասխանատուն սասունցիների կյանքի ու ճակատագրի համար, հորեղբոր ձեռքից վերցնում է ոսկու կոտը և իր ձևով կշռում, ապա պա-

[47] *Սահակյան, Փահլևանյան. 1996, 31:*

տուհասում է Կոզբադինին ու մյուսներին: Դավիթը վերջապես հասկանում է, թե ով է ինքը. նա գիտի, որ ինքը սասունցիների և Սասունի ներկայի համար պատասխանատուն է: Բայց նա դեռևս չի վաստակել իր ցեղի, ավագների վստահությունը, ուստի նորից վերադառնում է իր նախկին շրջանը՝ Պառավի արտը: Երբ Մելիքը զորքով գալիս, նստում է Սասնա դաշտում, ոչ ոք չի մտածում Դավթի մասին. ավելին՝ Հովանը դժգոհում է՝ ասելով. «Էնու պերան կոտրի, որ քեզի ասիր ի»: Պառավը, վերջին անգամ անիծելով իր արտը ոտնատակ անող Դավթին, հայտնում է ոչ միայն Մելիքի զորքի, այլ նաև հոր հագուստի, զենքերի և ձիու մասին (Դավիթը պատրաստվում էր Մելիքի դեմ կռվի գնալ խաչերկաթով, շեղբիկով, ժանգոտ թրով, էշով և այլն): Այդպես Պառավը Դավթին ի վերջո ուղղորդում է դեպի երրորդ շրջանը՝ ապագան կամ հերոսական մենամարտը, ինչը էպոսի գլխավոր նպատակն է: Դավիթը գնում է դեպի իր առաքելությունը, այն «շրջագիծը, շրջանը կամ գունդը, նաև քառանկյունին՝ որպես ամբողջականության մեկ այլ ձև»[48], որը Դավթի հերոսական ինքնության, ամբողջականության պատկերն է, և նա պիտի ծառայի միայն իր երկրի և իր ժողովրդի անվտանգությանն ու բարեկեցությանը:

Ինչպես նշում է բանագետ Ա. Սահակյանը, «Պառաւը Դաւթին հաղորդակից է անում տոհմական այն գերագոյն զօրութեանը, որին ընտրեալը պիտի հաղորդակցուէր յարաբերութիւնների, երկու ուժերի բախման ծայրագոյն պահին, երբ հակոտնեայ երկու ուժերի բախումը դառնում է անխուսափելի և օրհասական»[49]: Պառավը նաև պահպանում է թվարկման կարգը: Ինչպես նկատում է բանագետը, թվարկման այս կարգը կրկնվում է երեք անգամ՝ նա հայտնում է հերոսին հոր հանդերձի, զենքի և ձիու մասին, Դավիթը նույն հերթականությամբ այդ ամենը պահանջում է հորեղբորից, որը տոհմական զորության պահապանն է: Հովանն իր ափսոսանքի մեջ պարտավոր է պահպանել թվարկման այդ կարգը: Եվ նա ծիսական կարգ է կատարում՝ ամենավերջում թողնելով տոհմական ամենամեծ, ամենաթանկ հարստությունը՝ Սասնա ճրագ Դավթին, դարձյալ բանաձևային արտահայտությամբ. «Ափսոս, խազար ափսոս ... Մըր նորելուկ մեկ տակ մանուկին»[50]:

Պետք է նկատել, որ Արտատեր Պառավի կերպարը «Սասնա ծռերում» մոտիվների ծավալով և կայունությամբ բացառիկ է նաև այլ ժողովուրդների առասպելաբանությունների հետ համեմատության մեջ: Տարբեր ժողովուրդների վիպական բանահյուսության մեջ հանդիպում ենք պառավի կերպարների, սակայն մոտիվների և գործառույթների ծավալի տեսանկյունից դրանք նույնչափ հարուստ չեն, թեպետ տիպաբանորեն նույն շարքի հերոսներ են: Այն բացառիկ դերակատարումը, որ էպոսի երրորդ ճյուղում ունի Արտատեր Պառավը, ցույց է տալիս վերջինիս կապը երկրի, հողի պաշտամունքային շերտերի հետ: Պառավը Մայր-երկրի, Մայր-հողի առկայացումն է, հայկական Դեմետրան: Ինչպես նկատում է Հ. Օրբելին, «Պառավ կնոջ հուսահատությունը, որի պատճառն իր աղջկա առևանգումն է, շատ է նման առևանգված

---

[48] Юнг. 1996, 101.

[49] *Սահակյան, Փահլևանյան. 1996, 31–32:*

[50] *Սահակյան, Փահլևանյան. 1996, 32:*

Պերսեփոնեի մոր՝ Դեմետրեի վշտին»[51]*: Սակայն այստեղ բացակայում է աստվածուհու մեռնող-հառնող գործառույթը, փոխարենն ընդգծվում է կապը մեռնող-հառնող աստվածության հետ՝ Դավիթի հետ, մյուս կողմից՝ նա նաև ապահովում է հզոր, երկնային, լուսաբևային և դյուցազնական հերոսների կապը երկրի հետ՝ նույն Դավթի և նրա հոր՝ Մհերի հետ: Համանման մոտիվներ ենք տեսնում նաև կելտական էպոսի ամենակարևոր երկրորդ՝ Ֆիննների ցիկլում*[52]*, Ֆիննի որդու՝ Օիսինի և թոռան՝ Օսգարի մասին լեգենդներում: Այստեղ Պառավ Կամայը հոգ է տարել հոր՝ առասպելական հերոս Ֆիննի մասին, հետո նրա որդու՝ հայտնի դյուցազնական հերոս Օիսինի և նրա զինակից Կայլտենի մասին, ընդ որում՝ Ֆիննների իշխանության ավարտից հետո: Այդպես է նաև Արտատեր Պառավը, որը նախ հոր՝ Մհերի հետ էր կապված, հետո հոգ է տանում նրա որդու՝ Դավթի մասին, երբ Սասունի նախկին փառքից քիչ բան էր մնացել:*

Բացի այն, որ Պառավը դյուցազնական հերոսների հովանավորն է (քանի որ այդ ցեղի, գերդաստանի փորձի, անցյալի կրողն է), նա նաև իրեն ապավինած հերոսի մոր կամ դաստիարակիչ-մայրացուի արքետիպի մարմնավորումն է, որի կարևորագույն հատկանիշը մայրական սերն է: Դեռևս անցյալ դարի սկզբներին, այսպես կոչված, «Քեմբրիջյան դպրոցի» նշանավոր ներկայացուցիչ, հունական առասպելաբանության լավագույն գիտակ Ջեյն Հարիսոնը Բախովենից հետո անտիկ առասպելաբանության փաստարկներով հաստատում է, որ պարզագույն հասարակությունը մայրիշխանական էր, բայց այն նա կոչում է ոչ թե մայրիշխանական («матриархатным»), *այլ մայրագիծ* («матрилинейным»)*: Ըստ նրա՝ կինը չի եղել գերիշխող ուժ, սակայն շնորհիվ «մոր» և «որդիների դաստիարակի» կարգավիճակի՝ հասարակության մեջ կենտրոնական դիրք է գրավել*[53]*: Եվ նա առաջինն էր, ով կարծում էր՝ նման հասարակության մոդելում եղել է կին աստվածուհի* (kourotrophos)՝ *երիտասարդներին դաստիարակող աստվածուհի* (kouroi)[54]*: Կարելի է ասել, որ էպոսի երրորդ ճյուղի Արտատեր Պառավն այն կին աստվածուհին է, որն իրացնում է դաստիարակիչ-մոր գործառույթը՝ նախապատրաստելով Մանուկ-Փրկչին հերոսական մենամարտի՝ ի տարբերություն առաջին ճյուղի Պառավի, որը հերոսին ուղղորդում էր դեպի ամուսնություն:*

Ավելի վաղ ժամանակների պատկերացումներով՝ Պառավը նաև հերոսին հավատացողն է ու սրբացնողը: Նա հավատում է հերոսի աստվածային, երկնային զորությանը: Ըստ էության՝ Պառավ-Դավիթ հարաբերություններում նույնպես առկա է խորհրդանշական բանաձևը՝ հավատ, զոհաբերություն և սրբացում: Հավատը դյուցազնական հերոսի կամ Նորամանուկի նկատմամբ Պառավի արքետիպին բնորոշ ամենաարխաիկ շերտերից մեկն է էպոսում, ինչը դրսևորում է մի շարք մոտիվներում. Պառավը Դավթին ասում է. «Երի՛, մի թըղնի … Տու կտրիճ իս», «Ուրըշները գասին՝ Դավիթ ճուռ ը, Բառաբ գըսեր. –Դավիթ ճուռ չէ, Դավիթ հուռ ը, Գոյիններու փրգող ը»: Զոհաբերության

[51] *Օրբելի. 1956, 124:*
[52] Мелетинский. 1984, 460–467.
[53] Harrison. 1927, 492.
[54] Harrison. 1922, 260.

ծեսի հեռավոր հիշողություն կարելի է համարել Պառավի արտում գտնվելն ու նրա բարիքներից օգտվելը: Սրբացման պարագայում կարելի է անդրադառնալ ջրին և սյանը, որոնք առասպելաբանական պատկերացումներով հնագույն աստվածությունների արձագանքներ են համարվում: Ձենով Հովանի փոխարեն էպոսի մի շարք պատումներում Պառավն է խորհուրդ տալիս Դավթին՝ խմի Կաթնաղբյուրի ջուրը, ջրում լողանա և անպայման քնի, որից հետո միայն Թուր Կեծակիով կտրի Պողպատե սյունը[55]*: Այս կերպ Պառավը հանդես է բերում նաև հեքիաթներից հայտնի հրաշագործ օգնականի գործառույթը:*

Այսպիսով, պետք է կարծել, որ Սասուն աշխարհի «երջանիկ և խաղաղ» կյանքը երաշավորված է չորս հզոր առասպելաբանական երևույթների շնորհիվ, որոնք են՝ հողը՝ մայրը-Պառավը, ջուրը՝ հայրը-Կաթնաղբյուրը, որից սերվեցին և հզորացան Սասնա հերոսները, Պողպատե կամ պահապան սյունը՝ Սասուն աշխարհի խաղաղության և երջանկության երաշխավորը և դյուցազնական հերոսը՝ իր արևային հանդերձով, թրով, ձիով ու Խաչ պատրազով: Եվ միայն այսպես է ամբողջանում դյուցազունի հերոսական Ես-ը, որպեսզի գնա դեպի իր երկրային առաքելությունը, ծառայի իր երկրին և ժողովրդին՝ դառնալով Սասունի անվտանգության ու հզորության խորհրդանիշը հերոսական մենամարտի շնորհիվ:

Եզրակացություն

Ընդհանուր առասպելաբանության մեջ հաճախ հանդիպող Պառավի կերպարը դիպաշարերի և գործառույթների բավականին հարուստ ընդգրկում ունի «Սասնա ծռեր»-ում՝ հանդես գալով էպոսի չորս ճյուղերում էլ: Կայուն մոտիվաշարերով ու կարևոր դերակատարմամբ առանձնանում է Արտատեր Պառավի կերպարը հատկապես էպոսի երրորդ ճյուղում: Այս կերպարը առնչակցվում է նախ և առաջ վարուցանքի հետ ու այդպիսով ընդհանրություններ է երևան բերում Դեմետրե, Անահիտ դիցուհիների հետ: Տարբեր ժողովուրդների մշակույթներում կան այլ զուգահեռներ Լա. գրեթե նման գործառույթ են իրականացնում կելտերի Պառավ-մայր դիցուհի Թայլտիուն, հույների Պառավ-մայր դիցուհի Հեկալեսը և այլն: Սրանց հետ դարձյալ ընդհանրություններ են ի հայտ գալիս, երբ դիտարկում ենք Արտատեր Պառավի մյուս՝ Դավթի համար դաստիարակ-մոր, նվիրագործման ծիսարարի, խորհրդատուի գործառույթները: Պետք է փաստել, որ Արտատեր Պառավի կերպարը ներառում է հողի, երկրի, բուսականության, պտղաբերության հատկանիշներ, իսկ դյուցազնական հերոսի հետ հարաբերություններում հանդես է բերում դաստիարակ-մոր կամ որդեգիր-մայրացուի հատկանիշներ:

Այս կերպարը հետաքրքիր զարգացումներ ունի, ընութագրվում է գործառույթների բազմազանությամբ, նաև ընդհանրություններ է հանդես բերում հեքիաթի՝ խրատատու, նվիրագործման ծիսարար, միջնորդ պառավի հետ: Արտատեր Պառավը էպոսի հերոսների պես ենթարկվում է վիպական թելադ-

---

[55] *Հին հռոմեացիների մոտ պաշտվել է Տերմինա սահմանային սյան աստվածը, որը «ապահովում և երաշխավոր էր կանգնում երջանիկ աշխարհին, հսկելով ներքին ու արտաքին սահմանները: Նա կողոպուտից, գավթումից, դատավեճից ազատում է նրան, ով հարգում է իրեն»* (Дюмезиль. 1986, 127)*:*

բանքին, կերպավորման էպիկական ձևերին, երրորդ ճյուղում գործող հերոսի գործառույթներին ու վերջնական նպատակին: Նա, կարելի է ասել, Մանուկ Դավթին «ուղեկցում է» ժամանակային երեք մեծ միավորների՝ անցյալի, ներկայի ու ապագայի միջով: Այսպես իրագործվում է էպոսում վերջին կին-մայր հերոսուհուն՝ Պառավ-մորը վերապահված առաքելությունը՝ փակելով իգական խնամակալության կամ «մայրական օրենքի» փուլը հերոսի կյանքում: Այն բացառիկ դերակատարումը, որ էպոսի երրորդ ճյուղում ունի Արտատեր Պառավը, ցույց է տալիս նրա կապը երկրի, հողի պաշտամունքային շերտերի հետ: Ի տարբերություն Դեմետրեի՝ Արտատեր Պառավը մեռնող-հառնող աստվածության հատկանիշների կրողը չէ, այլ այն մայրն է, որը մեռնող-հառնող աստվածությանը՝ Դավթին, ուղեկից և ուղղորդող է, նվիրագործման մղող:

Ալինա Ղարիբյան – Մ. Հերացու անվան ԵՊԲՀ հայոց լեզվի ամբիոնի ու Գավառի պետական համալսարանի հայոց լեզվի և գրականության ամբիոնի դասախոս: Գիտական հետաքրքրությունները՝ հայ գրականություն, էպոսագիտություն, ժամանակակից հայոց լեզու, գրաբար: Հեղինակ է 20 հոդվածի:
alinagharibyan@rambler.ru

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Աբեղյան Մ. 1966, Երկեր, հ. Ա, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 571 էջ:

Ագաթանգեղոս. 1983, Հայոց պատմություն, Երևան, Երևանի համալսարանի հրատ., 551 էջ:

Ալիշան Ղ. 2002, Հայոց հին հավատքը կամ հեթանոսական կրոնը, Երևան, «Հրազդան» ՍՊԸ, 295 էջ:

Բդոյան Վ. 1972, Երկրագործական մշակույթը Հայաստանում, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 510 էջ:

Դոլուխանյան Ա. 2015, Հովսեփ Օրբելին «Սասունցի Դավիթ» էպոսի գնահատող. – «Հովսեփ Օրբելին և «Սասունցի Դավիթ» հայ ժողովրդական էպոսը»: Հայ հին և միջնադարյան գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի հոդվածների ժողովածու, Երևան, էջ 13–22:

Խեմչյան Է. 2016, Անեծք-սպառնալիքների և օրհնանք-բարեմաղթությունների կիրառումը Կարսի հեքիաթներում. – Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի գիտական աշխատություններ, հ. XIX, էջ 193–200:

Խեմչյան Մ. 2021, Նվիրատուն և խորհրդատուն հայ ժողովրդական հեքիաթներում, Երևան, ՀԱԻ հրատ., 238 էջ:

Խորենացի Մ. 1991, Պատմութիւն Հայոց, Երևան, ՀԽՍՀ ԳԱ հրատ., 485 էջ:

Կուն Ն. 1989, Հին Հունաստանի լեգենդներն ու առասպելները, Երևան, «Լույս» հրատ., 633 էջ:

Հայ ժողովրդական հեքիաթներ. 1979, VII. Արցախ-Սյունիք, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 768 էջ:

Հայրապետյան Թ. 2016, Արքետիպային հարակցումները հայկական հրաշապատում հեքիաթներում և վիպապատմական բանահյուսության մեջ, Երևան, «Գիտություն» հրատ., 462 էջ:

Հարությունյան Ս. 1975, Անեծքի և օրհնանքի ժանրը հայ բանահյուսության մեջ, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 270 էջ:

Ղարիբյան Ա. 2023, Պառավի կերպարը «Սասնա ծռեր» էպոսի առաջին ճյուղում. – Գավառի պետական համալսարան. գիտական հոդվածների ժողովածու, № 14, Գավառ, էջ 269–287:

Մելիք-Փաշայան Կ. 1963, Անահիտ դիցուհու պաշտամունքը, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ.,163 էջ:

Մոկս. Հայոց բանահյուսական մշակույթ. 2015, Երևան, «Գիտություն» հրատ., 707 էջ:

Պողոսեան Ե. 1952, Նոր տարուոյ տոնը հին և նոր հայոց քով, Վիեննա, Մխիթարեան հրատ., 160 էջ:

Սահակյան Ա., Փահլևանյան Ա. 1996, Սասնա ծռեր դիւցազնավէպ. Առասպելական ընդերք, վիպական կառոյց, վիպասանական եղանակ, Փասատենա, «Դրազարկ» հրատ., 125 էջ:

Սասնա ծռեր. ժողովրդական վեպ. 1936, հ. Ա, Երևան, Պետհրատ., 1128 էջ:

Սասնա ծռեր. ժողովրդական վեպ. 1944, հ. Բ, մաս Ա, Երևան, Պետհրատ., 405 էջ:

Սասնա ծռեր. ժողովրդական վեպ. 1951, հ. Բ, մաս Բ, Երևան, Պետհրատ., 1005 էջ:

Սասնա ծռեր. ժողովրդական վեպ. 1979, հ. Գ, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 583 էջ:

Սասնա ծռեր. 1999, հ. Դ, Երևան, «Գիտություն» հրատ., 582 էջ:

«Սասնա ծռեր» 7 նորահայտ պատումներ. 2000, Երևան, «Գիտություն» հրատ., 280 էջ:

«Սասունցի Դավիթ» նոր պատումներ. 1977, Երևան, «Սովետական գրող» հրատ., 366 էջ:

Օրբելի Հ. 1956, Հայկական հերոսական էպոսը, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատարակչություն, 138 էջ:

Ֆրեզեր Ջ. 1989, Ոսկե ճյուղը, Երևան, «Հայաստան» հրատ., 879 էջ:

Андреев Ю. 1976, Ранне-греческий полис (Гомеровский период). Л., Изд. ЛГУ, 141 с.

Байдак А., Тучкова Н. 2004, Эпизоды «Эпоса об Итте» в чумылькупском диалектном ариале. – Коренные народы Сибири: проблемы историографии, истории, этнографии, лингвистики. Материалы регион. науч.-прак. конф. Томск, с. 51–64.

Бахтин М. 1972, Проблемы поэтики Достоевского. М., «Художественная литература», 167 с.

Дюмезиль Ж. 1976, Осетинский эпос и мифология. М., «Наука», 283 с.

Дюмезиль Ж. 1986, Боги верховные индоевропейцев. М., «Восточная литература», 234 с.

Зеремская Ю. Понятие «Мать» в селькупском языке. – https://cyberleninka.ru/ article/n/ponyatie-mat-v-selkupskom-yazyke.

Иванов В., Топоров В. 1980, Баба-Яга. – Мифы народов мира, т. 1. М., «Советская энциклопедия», с. 149.

Купер Дж. 1995, Энциклопедия символов, книга IV. М., Ассоциация Духовного Единения «Золотой век», 397 с.

Мелетинский Е. 1984, Кельтский эпос. – История всемирной литературы, т. 2. М., «Наука», 325 с.

Мелетинский Е. 1980, Герой. – Мифы народов мира, т. 1. М., «Советская энциклопедия», с. 294–297.

Мифы народов мира. 1980, т. 1. М., «Советская энциклопедия» с. 269.

Прокофьева Е. 1976, Старые представления селькупов о мире. – Природа и человек в религиозных представлениях народов Сибири и Севера (вторая половина XIX – начало XX в.). Л., с. 106–128.

Рабинович Е. 1980, Богиня-Мать. – Мифы народов мира, т. 1, М., «Советская энциклопедия», с. 178–180.

Сорита Д'Эсте, Профанация Гекаты: Дева, Мать или Богиня Старуха?. – Draco Scandere, https://vk.com/@ignis_nox-profanaciya-gekaty-deva-mat-ili-bogin ya-staruha).

Степанян А. 1991, Развитие исторической мысли в древней Армении. Миф, рационализм, историописание. Ереван, Изд. АН Армении, 251 с.

Тахо-Годи А. 1982, Тесей. – Мифы народов мира, т. 2. М., «Советская энциклопедия», с. 502–504.

Юнг К. 1996, Душа и миф, Шесть архетипов. Киев, Государственная библиотека Украины для юношества, 251 с.

Bachofen J., 1948, dos Mutterrecht, Eine Untersuchwig uber die Gynaikokratie der Alten Welt nach ihrer religiusen und rechtlichen Natur. – J. J. Bachofen, Gesammelte Werke, Basel, ed. By Karl Meuli, 2, 53 ff.

Noldeke T. 1920, Das iranische Nationalepos, in Grundriss II; new ed., Leipzig, pp. 130–211.

Harrison J., 1922, Prolegomena to the Study of Greek Religion, Cambrige: Canbrige University Press, p. 260 ff.

Harrison J., 1927, Themis. A Study of the Sosial Origins of Greek Religion, Camrbige: Canbrige University Press, p. 492 ff.

Сорита Д'Эсте, Профанация Гекаты: Дева, Мать или Богиня Старуха?. –Draco Scandere // https://vk.com/@ignis_nox-profanaciya-gekaty-deva-mat-ili-boginya-staruha

https://ru.wikibrief.org/wiki/Goddess_movement:

https://vk.com/@fiannafail-lughnasadh:

ОБРАЗ ХОЗЯЙКИ ПОЛЯ-СТАРУХИ В ЭПОСЕ «САСНА ЦРЕР»

АЛИНА ГАРИБЯН

Резюме

Ключевые слова: хозяйка поля-старуха (Артатер Парав), эпос «Сасна црер», сказ, Давид Сасунский, сюжет, функция, мотив, миф, полевые работы, проклятие.

Фигура старухи имеет в эпосе «Сасна црер» довольно богатый набор мотивов и функций, проявляясь во всех его четырех ветвях. Образ Артатер Парав (хозяйки поля-старухи) выделяется в третьей ветви эпоса устойчи-

выми мотивами и важной ролью. По своему отношению к полевым работам, а также по другим признакам эта фигура имеет сходство с богинями Деметрой и Анаит, кельтской богиней Старухой-Матерью Тайтиун и знаменитой Старухой Гекалес в греческой мифологии. В эпосе «Сасна црер» Артатер Парав характеризуется многообразием функций, проявляется как в образе женщины с жизненным опытом, так и в образе заботливой матери, а также имеет общие черты с поучающей старухой из сказки. Старуха – персонаж Старой Матери, которая подталкивает Давида к испытаниям на пути от юности к зрелости, от невежества к осознанию ответственности. Образ Артатер Парав, как и ряд ее параллелей, включает в себя характеристики почвы, земли, растительности, плодородия, а во взаимоотношениях с богатырским Младенцем она представляет характеристики исполнителя обряда освящения, а также матери-наставницы или приемной матери. Старуха также является той, кто верит в божественную, небесную силу героя и освящает его. В «Сасна црер» Артатер Парав подчинена эпическим диктатам эпоса, эпическим формам характеристики, функций и конечной цели героя, действующего в третьей ветви. Исключительная роль Артатер Парав в третьей ветви эпоса показывает связь Старухи с культовыми слоями земли.

Алина Гарибян – преподаватель кафедры армянского языка ЕГМУ им. М. Гераци и кафедры армянского языка и литературы Государственного университета Гавара. Научные интересы: армянская литература, эпиковедение, современный армянский язык, грабар. Автор 20 статей.
alinagharibyan@rambler.ru

THE IMAGE OF THE MISTRESS OF THE FIELD – THE OLD WOMAN IN THE EPIC “SASNA TSRER’’

ALINA GHARIBYAN

S u m m a r y

Keywords: the old woman, epic “Sasna Tsrer”, tale, David of Sasun, plot, function, motif, myth, field work, curse.

The figure of an old woman in the epic “Sasna Tsrer” has a rather rich set of motifs and functions manifesting itself in all four branches of the epic. The image of Artater Parav (the mistress of the field - the old woman) stands out in the third branch of the epic with stable motifs and an important role. In her attitude to field work, as well as in other ways, this figure resembles the goddesses Demeter and Anahit, the Celtic goddess Old Mother Taitiun and the famous Old Woman Hecales in Greek mythology. In the epic "Sasna Tsrer", the image of Artater Parav has an interesting development and is characterized by a

variety of functions. She manifests herself both in the image of a woman with life experience and in the image of a caring mother; she has common features with the instructive old woman from the fairy tale. The old woman is an Old-Mother character who pushes David through purification tests on the way from youth to maturity, from ignorance to awareness of responsibility. The image of Artater Parav, as well as a number of her parallels, includes the characteristics of soil, land, vegetation, fertility, while in her relationship with the heroic Infant, she represents the characteristics of the performer of the rite of consecration, as well as the mother-mentor or foster mother. The old woman is also the one who believes in the divine, heavenly power of the hero and sanctifies him. In the epic "Sasna Tsrer", Artater Parav is subject to the plot dictates of the epic, the epic forms of characterization, the functions and the final goal of the hero acting in the third branch. The exclusive role of Artater Parav in the third branch of the epic shows the connection of the Old Woman with the cult layers of the earth.

Alina Gharibyan – Lecturer at the Department of the Armenian Language of YSMU after M. Heratsi and the Department of Armenian Language and Literature of Gavar State University. Scientific interests: Armenian literature, epic studies, modern Armenian language, Grabar. Author of 20 articles.
alinagharibyan@rambler.ru

ՀՏԴ : 281.6(091)

Doi:10.54503/0135-0536-2023.2-146

ԳՐԻԳՈՐ Բ. ՎԿԱՅԱՍԵՐԻ ՁԵՌԱԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ (Ըստ մատենագրական և հիշատակարանային տեղեկությունների)*

ՔՆԱՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Բանալի բառեր՝ հայերեն ձեռագիր մատյան, կաթողիկոս, կաթողիկոսների ձեռագրական ժառանգություն, Գրիգոր Բ. Վկայասեր, հիշատակարան, հայ մատենագրություն, ձեռագրացուցակ:

Նախաբան

Դարեր շարունակ հայոց կաթողիկոսների բազմարդյուն գործունեության կարևոր ասպարեզներից մեկը հայ գրքի ու մատենագրության ստեղծման հովանավորությունն ու մեկենասությունն է: Հայոց հայրապետները ոչ միայն հովանավորել են հայ գրի ու դպրության զարգացումը, այլև շատերը թողել են մատենագրական հարուստ ժառանգություն, պատվիրել և ստացել են ձեռագրեր (ապա՝ տպագիր գրքեր) իրենց, կաթողիկոսական գրադարանի, վանքերի ու այլոց համար, իսկ ոմանք էլ ժամանակ են գտել՝ անձամբ ընդօրինակելու ձեռագիր մատյաններ: Հետագա ուսումնասիրությունները, սակայն, առավելապես քննել են կաթողիկոսների մատենագրական ժառանգության հարցերը, հայ գրքի ստեղծման ու պահպանման գործում նրանց ձեռնարկումները և ավելի քիչ ուշադրություն դարձրել բուն ձեռագրական ժառանգությանը, միայն երբեմն այս կամ այն կաթողիկոսի գործունեությունը ուսումնասիրելու առիթով անդրադարձել դրանց: Ըստ էության, բաց է մնացել հայոց կաթողիկոսների ձեռագրական ժառանգության քննությունն իբրև գիտական մի խնդիր ներկայացնելու, հետևաբար, քննության համապատասխան սկզբունքները, եղանակները ու ելակետերը մշակելու հարցը, ինչպես նաև՝ հայոց կաթողիկոսներից շատերի ձեռագրական վաստակի բացահայտումը: Իսկ դա ոչ միայն կաթողիկոսների գործունեությունը լիարժեք ներկայացնելու և գնահատելու համար է անհրաժեշտ, այլև հայ ձեռագիր մատյանի պատմության:

Ծիսական ու դավանաբանական գրականության թարգմանության գործում մեծ ավանդ ունեցած կաթողիկոս Գրիգոր Բ. Վկայասերի (1066–1105 թթ.) ձեռագիր մատյանները, դրանց մասին մեզ հասած տեղեկությունները ևս մինչ օրս քննված և ներկայացված չեն:

Գրիգոր Բ. Վկայասեր կաթողիկոսի ձեռագրական գործունեության քննության խնդիրները

Գրիգոր Բ. Վկայասերի ձեռագրական գործունեության ուսումնասիրության աղբյուրներն են ձեռագրերը, ձեռագրացուցակներն ու հիշատակարաննե-

---

* *Ներկայացվել է 21. XI. 2022 թ., գրախոսվել է 23. XI. 2022 թ., ընդունվել է տպագրության 19. VI. 2023 թ.:*

րի ժողովածուները, հայ մատենագրությունը: Քննության համար կարևոր է նկատի ունենալ հետևյալ ընդհանուր հանգամանքները՝

ա. վաղ շրջանից մեզ հասած ամբողջական ձեռագրերի քանակը բավականին քիչ է. միայն Մ. Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտի (Մատենադարան) հայերեն ամբողջական ձեռագրերի 11363 միավոր ունեցող հավաքածուի IX–XII դդ. թվագրվողների քանակը 116 է[1]:

բ. «Միջնադարյան հայերեն հնագույն ձեռագրերի մի զգալի մասն անթվական է. անհայտ են շատերի գրչության վայրի, գրչի, ծաղկողի, ստացողի և ձեռագրի ստեղծմանը մասնակցած մյուս մարդկանց անունները»: Վերը նշված 116 ձեռագրից հայտնի են միայն «73-ի գրչի, 58-ի ստացողի, 38-ի գրչության վայրի և 16-ի ծաղկողի անունները»[2]:

Սա արդեն նշանակում է, որ XI–XII դդ. գործունեություն ծավալած կաթողիկոսի ձեռագրերի՝ մեզ հասած լինելու հավանականությունն առարկայական պատճառներով շատ քիչ է: Եվ, իրոք, ձեռագրացուցակների ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ Գրիգոր Բ. Վկայասերի անունով որևէ ձեռագիր մեզ չի հասել:

գ. Քննությունը կատարում ենք ըստ ցուցակագրված ձեռագրերի տվյալների: Թեև աշխարհում այսօր ունենք հայերեն ձեռագրեր պարունակող մեծ և փոքր գրեթե բոլոր հավաքածուների ու կենտրոնների ձեռագրացուցակները[3] կամ գոնե դրանց մատյանների նկարագրությունները, այնուամենայնիվ մնում են չցուցակագրված և չնկարագրված ձեռագրեր, որոնք գրադարաններում, արխիվներում, տարբեր հաստատություններում, ինչպես նաև անհատական հավաքածուներում պահվելով՝ առայժմ հասու չեն գիտական հանրությանը: Ուստի զուտ քանակային առումով, դեռ կարող են ի հայտ գալ նոր ձեռագրեր:

դ. Մյուս կողմից, քննությունը կատարում ենք ըստ հայերեն ամբողջական ձեռագրերի տվյալների, հաշվի չենք առել պատառիկ պահպանակները[4], որոնց նկարագրությունները չկան[5]: Մինչդեռ պատառիկները, որպես կանոն, ավելի

---

[1] *Քանակագրել ենք՝ հիմք ունենալով Մատենադարանի գլխավոր ավանդապահ, պ. գ. դ. Գևորգ Տեր-Վարդանյանի՝ դեռևս 1986 թ. կատարած հաշվարկը, ըստ որի այն ժամանակ Մատենադարանի հայերեն ամբողջական մատյանների 10970 միավոր հավաքածուի ձեռագրերից IX–XII դդ. թվագրվողների քանակը 115 էր (տե՛ս Վարդանյան. 1986, 173–181): Օգտվելով Մատենադարանի ձեռագրատան՝ դեռևս չնկարագրված ձեռագրերի քարտարաններից՝ պարզել ենք՝ դրանից հետո այդտեղ մուտք գործած 393 ձեռագրից վերը նշված դարերին վերաբերում է ընդամենը 1 ձեռագիր՝ № 11350 Ավետարանը (1176 թ.):*

[2] *Վարդանյան. 1986, 173:*

[3] Coulie. 2020. *Տե՛ս նաև՝* http://serials.flib.sci.am/matenagitutyun/test/index.html (20. XI. 2022)*:*

[4] *Բացառություն է «Ցուցակ Վիեննայի Մխիթարեան մատենադարանի հայերէն ձեռագրերի պատառիկների»-ն, որի տվյալները հաշվի ենք առել քննության ժամանակ:*

[5] *Անգամ Մատենադարանի՝ հայերեն առանձին պատառիկների հավաքածուի նկարագրությունը դեռևս ավարտված չէ, ընթացքի մեջ է, իսկ ձեռագրերի կազմում գտնվող պատառիկ պահպանակները նկարագրվում են ըստ ձեռագրերի*

հին են լինում այն ձեռագրերից, որոնց կազմում լինում են, իսկ որոշների թվագրումը հասնում է V–VI դարեր: Լիահույս ենք, որ դրանց նկարագրության հրատարակումից հետո կարող են ի հայտ գալ նոր տվյալներ՝ հնարավորություն տալով լրացնելու և ամբողջացնելու մեր քննությունը:

Ե. Երբեմն չպահպանված ու մեզ չհասած հնագույն ձեռագրերի մասին արժեքավոր տեղեկություններ են հաղորդում այլ ձեռագրերի հիշատակարանները, մատենագրական աղբյուրները և թարգմանության, հեղինակային կամ նախագաղափար օրինակների այն հիշատակարանները, որոնք գրիչները աշխատությունների հետ ընդօրինակել են իրենց հիմք ձեռագրերից:

Զ. Կաթողիկոսներից շատերը, այդ թվում՝ Գրիգոր Բ. Վկայասերը, թողել են մատենագրական ժառանգություն: Ու թեև մատենագրական ու ձեռագրական ժառանգությունները սերտորեն առնչվող ասպարեզներ են, սակայն նույնը չեն և սահմանազատելի են: Այսպես, հնարավոր է ընդօրինակությունների շնորհիվ մեզ հասած լինեն կաթողիկոսի աշխատությունները, սակայն նրա ձեռքով կամ պատվերով գրված բուն ձեռագիրը հասած չլինի: Ուստի կաթողիկոսների ձեռագրական ժառանգության դիտակետից մատենագրությունը կարող է միայն ուղղորդող լինել կամ լրացուցիչ տեղեկատվության աղբյուր, բայց ոչ նույնական նրա հետ:

Քանի որ Գրիգոր Բ. Վկայասերի դեպքում մատենագրական ժառանգությունը տարբեր առիթներով ու մանրամասնությամբ, սկսած XIX դարից, ներկայացված և քննված է[6], ապա ըստ հարկի կօգտվենք առկա քննություններից:

Այս ամենը նկատի ունենալով՝ մեր գլխավոր խնդիրը (նաև՝ V–XII դդ. մյուս կաթողիկոսների դեպքում) դառնում է ոչ այնքան Գրիգոր Բ. Վկայասերի ձեռագրական գործունեության գնահատումը՝ առկա տվյալների վերլուծությամբ, որքան այդ տվյալների հայթայթումը, առանձնացումն ու ներկայացումը՝ մանրամասն քննելով բոլոր հնարավոր աղբյուրներն ու փաստերը:

Վկայություններ հայ մատենագրության մեջ Գրիգոր Բ. Վկայասերի ձեռագրական գործունեության մասին

Գրիգոր Բ. Վկայասեր կաթողիկոսի մասին կան ինչպես աղբյուրագիտական տեղեկություններ, այնպես էլ հետագայում դրանց հիման վրա կատարված բավական շատ հետազոտություններ[7]: Թե՛ մատենագրական աղբյուր-

---

կարգի: Հետևաբար առայժմ նկարագրված են մինչև 3400 համարի ձեռագրերում առկաները:

[6] *Տե՛ս* Ալիշան. 1873, 27–36, Զարբհանալեան. 1897, 599–604, Ալիշան. 1901, 243–260, Ակինեան. 1953, 229–338, Ծովական. 1967, 430–432, Ավդալբեգյան. 1982, 29–52, Տեր-Պետրոսյան. 1989, Վարդանյան. 1999, 267–279, 283–287, Օրմանյան. 2001, 1498–1500:

[7] *Գրիգոր Բ. Վկայասեր կաթողիկոսի կյանքի և գործունեության մասին եղած մատենագիտությունը տե՛ս Հայ եկեղեցու հանրագիտարան. 2008, 52–54, Խաչատրեան. 2016, 112–114, Պողարեան. 1971, 194–197,* Thomson. 1995, 136; Thomson. 2007, 190; *Քյոսեյան. 2018, 329–332 (այն ուսումնասիրությունները կամ մատենագիտությունները, որոնք տրված են այս մատենագիտություններում առանձին չենք բերում): Մատենագիտություններում չընդգրկված տե՛ս* Ակինեան. 1953: *Մատենագիտության տպագրութ-*

ները, թե՛ արված ուսումնասիրությունները չեշտում են կաթողիկոսի՝ ժամանակի ուսյալ անձնավորություններից մեկը լինելու և, հատկապես, ծավալած թարգմանական գործունեության մասին: Այսպես, Մատթեոս Ուռհայեցին Գրիգոր Բ. Վկայասերի մասին գրում է. «Սա լուսաւորեաց զՀայաստան աշխարհս բազում և ազգի ազգի մեկնութեամբ, որ և յամենայն ազգաց թարգմանութիւնս արարեալ, և լցեալ առհասարակ զեկեղեցի Աստուծոյ ամենայն աստուածային կտակարանացն ...», ապա՝ «Սա նորոգեաց զկարգ հաւատոյց Հայաստանեայց և անհանգիստ թարգմանութեան էր պարապեալ, և զամենայն պակասութիւն կտակարանացն Աստուծոյ առ մեզ կարգաւ կատարեալ զարդարեաց ի Յունաց և յԱսորւոց թարգմանութենէ. հոգս տարեալ անդադար խորհրդով, և ամենայն պայծառութեամբ սուրբ գրոց ելից զեկեղեցի Հայաստանեայցս» (ընդգծումը մերն է – Գ. Հ.)[8]:

Ներսես Շնորհալին ևս իր «Վիպասանության» մեջ վկայում է.

Երկրորդ Մեսրոպ մեզ երեւեալ,
Զգիրս բազումս թարգմանեալ,
Առ ի Յունաց և Ասորւոց
Ճառս սրբոց վերաբերեալ...[9]

Գրիգոր Բ. Վկայասերի կրտսեր ժամանակակից և «Տաղ գերեզմանական վասն փոխման երանեալ եւ սուրբ կաթողիկոսին հայոց Գրիգորի Վկայասիրի» բանաստեղծության հեղինակ Վարդան Հայկազնը գրում է.

Նոր ճառերով ներբողինաց,
Բերկրեալ զոգիսըն լըսողաց:
Պատուող ամէն սուրբ վըկայաց,
Քրիստոսունակ նահատակաց...
Մըտաւք ի տես գրոց շընորհաց,
Լոյս ամենայն գիտնականաց...

Թարգմանութեանցն պարապէր,
Զամէն ազգաց գիրըս քըննէր,
Զորս պիտանի բանս ճանաչէր,
Զայնս ի լեզու մեր փոխարկէր[10]:

Ըստ «Յայսմավուրք»-ի Ծերենցի խմբագրության՝ հուլիսի 30-ը կամ հրոտից ԻԳ-ն (23) Գրիգորիսյան հայրապետների և Պետրոսի հիշատակի օրն է[11]*: Այստեղ ևս մի քանի անգամ նշվում է Գրիգոր Բ. Վկայասերի կրթության և թարգմանական գործունեության մասին. «Զի էր վարժեալ ի մանկութենէ*

յունից հետո հրատարակված և մեզ հայտնի տե՛ս Գրիգոր Վկայասեր. 2016, 81–97, Թորոսյան. 2018, Բալդրյան. 2015, 30–39:

[8] *Պատմութիւն Մատթէոսի Ուռհայեցւոյ. 1869, 187, 370–371:*

[9] *Շնորհալի. 2018, 122:*

[10] *Մատենագիրք հայոց. 2016, 775, 777–778:*

[11] *Տե՛ս Յայսմաւուրք. 1730, զճհդ-զճհզ:*

յուսումն աստուածային գրոց», «... պայծառացոյց զեկեղեցիս Հայոց ազգիս թարգմանութեամբ յունաց և յասորոց ճառս բազումս ի հայ լեզուս: Զվարս սրբոցն և զպատմութիւնս վկայիցն մինչ զի Վկայասէր անուանեցաւ»[12]*:*

Քանի որ Գրիգոր Բ. Վկայասերին նվիրված, վերը նշված ուսումնասիրություններում այս և մյուս աղբյուրները մանրամասն ներկայացված ու քննված են, հարկ չկա կրկնելու՝ այդ աղբյուրները կդիտարկվեն ըստ անհրաժեշտության՝ մեր հիմնական խնդրի հետ ունեցած առնչություններով, այն է՝ կա՞ն արդյոք մատենագրական վկայություններ Գրիգոր Բ. Վկայասերի՝ ոչ թե թարգմանական կամ գրական գործունեության, այլև՝ ձեռագրեր գրելու, գնելու կամ ստանալու մասին: Այս դիտակետից հետաքրքիր են նախ վերոհիշյալ Վարդան Հայկազնի բանաստեղծության հետևյալ հատվածները՝

Նա նորոգաւղ սուրբ մատենաց
Սիրող տառից պատմագրաց,
Որ հաւաքէր ի տըգիտաց,
Գնէր ըզգիրս ի գերաւղաց...

Նա յամենայնսըն յառաջէր
Բայց առաւել ընթերցասէր,
Միշտ ի ձեռին մատեան պահէր,
հրեշտակաբար ձայնիւ քերդէր:
Այլ ժողովէր եւ նորոգէր,
Պահեստ ի տուն Տեառն աւանդէր...
(ընդգծումը մերն է – Ք. Հ.)[13]

Թեև այս տողերը կարող են համարվել կաթողիկոսին ուղղված սոսկ դրվատանքի խոսքեր, բայց դրանք՝ ձեռքում միշտ գիրք ունենալը, գրքեր հավաքելն ու նորոգելը (չեշտված է 2 անգամ), գերողներից գրքեր գնելը, այնքան բնական են միջնադարյան հոգևորականի, առավել ևս՝ գրքի հետ կապ ունեցող անձնավորության համար, որ դժվար է կասկածի որևէ հիմք գտնել: Փաստորեն, Վարդան Հայկազնը հայ մատենագրության մեջ մեզ հայտնի ժամանակագրորեն առաջին հեղինակն է, ով որոշ տեղեկություն է հաղորդում Գրիգոր Բ. Վկայասերի՝ ձեռագրերին առնչվող գործունեության մասին:

Մատենագրական մյուս անուղղակի վկայությունը հայտնում է Կիրակոս Գանձակեցի պատմիչը. «Սա խնդրեաց ի հօրէ իւրմէ մեկնել զարուեստն քերականի, զի էր նա իմաստասէր. և մեկնեաց զնա արուեստաւոր բանիւ»[14]*: Թեև «Մեկնութիւն քերականի» գործի բուն ձեռագիրը կամ նախագաղափար օրինակի հիշատակարան այս մասին մեզ չի հասել, սակայն այժմ ընդունված է, որ այդ գործը «Մագիստրոսը գրել է իր որդի Վահրամի՝ ապագա կաթողիկոս Գրիգոր Վկայասերի խնդրանքով, հավանաբար 1045 թուականից յետոյ»*[15]*: Այս դեպքում կարող ենք նաև ասել, որ Գրիգոր Բ. Վկայասերը, մինչ*

---

[12] *Յայսմաւուրք. 1730, զճհե:*
[13] *Մատենագիրք հայոց. 2016, 775, 777:*
[14] *Գանձակեցի. 1961, 95:*
[15] *Մուրադեան. 2012, 113:*

կաթողիկոս լինելը, խնդրել և ստացել է քերականական բովանդակությամբ ձեռագիր:

Հաջորդ տեղեկությունը հայտնում է Ներսես Շնորհալու վարքի հեղինակը, ըստ որի Գրիգոր Բ. Վկայասերը գնում է Կոստանդնուպոլիս և թագավորից ու պատրիարքից մեծ պատվի արժանանում. «...մեծաւ պատուով ընկալան զնա. մանաւանդ յորժամ խօսեցան ընդ միմեանս ի հարց և ի փորձ բանի, ըստ օրինի իմաստնոց, և գտին զնա անթերի լրմամբ լցեալ ի շնորհաց Հոգւոյն Սրբոյ, քանզի քաջ տեղեակ էր յունական լեզուին և դպրութեանն, և յիրս և ի բանս ըստ ամենայնի վարժ և կիրթ...»[16]: Կաթողիկոսը խնդրում է որոշ ժամանակ մնալ նրանց մոտ և «ընթեռնուլ զմատեանս նոցա և օգտել»[17]: Համաձայնություն ստանալով՝ «առեալ թարգմանէր զՎարս սուրբ հարց և զՊատմութիւնս վկայից, և զմատեանս ուղղափառ վարդապետաց, և զճառս ներբողենից, որ ի տօնս տէրունիս և յիշատակս Սրբոց. և տայր ցայնոսիկ, որ ընդ նմայն էին՝ արք ճարտարք և իմաստունք՝ յարագագիր գրչութիւն և ի գիտութիւն բանի, զոր առեալ վաղվաղակի փոխարկէին ըստ մերումս բայի՝ զորկս ամենևին և քերեալս ըստ քերթողացն արհեստի»[18]: Ավարտելով, սակայն, Գրիգոր Բ. Վկայասերը կասկածում է՝ «...զի թէ իմասցին, ոչ տացեն հանել ի նոցանէ զթարգմանեալ մատեանսն (ընդգծումը մերն է – Ք. Հ.)»[19], դիմում է հնարամտության և բերում ձեռագրերը: Եթե անգամ Կոստանդնուպոլսում Վկայասերն ու իր գործակիցները ժամանակ խնայելու համար ամբողջական ու վերջնական ձեռագիր չկազմեին, այլ միայն հնարավորինս արագ և շատ թարգմանություններ ու ընդօրինակություններ անեին, տրամաբանական է, որ հետո դրանք կամ առնվազն դրանց մի մասը ձեռագիր գիրք կդառնար:

Փաստորեն, համաձայն մատենագրական վկայությունների՝ Գրիգոր Բ. Վկայասերը, մինչ կաթողիկոս դառնալը, իր հորից՝ Գրիգոր Մագիստրոսից, խնդրել ու ստացել է «Մեկնութիւն քերականի» աշխատությունը (ուրեմն և՝ ձեռագիր), Կոստանդնուպոլսից իր հետ բերել է ձեռագրեր ու, առհասարակ, իր գործունեության ընթացքում ձեռագրեր էր փրկագնում թշնամիներից, նաև հավաքում էր մատյաններն անգետներից կամ ոչ լավ պահողներից, նորոգում և պահպանում:

Ձեռագրական վկայություններ Գրիգոր Բ. Վկայասերի գրական-ձեռագրական գործունեության մասին

Հայերեն ձեռագրերի հիշատակարանների ժողովածուների[20] տվյալների քննությունը ցույց է տալիս, որ կաթողիկոսի անունով, այսինքն՝ նրա գրած, պատվիրած կամ ստացած ամբողջական ձեռագիր մեզ չի հասել:

---

[16] *Սոփերք հայկականք. 1854, ԺԴ, 21:*

[17] *Սոփերք հայկականք. 1854, ԺԴ, 22: Վարդան Արևելցին ևս գրում է այս մասին, հետևյալ ձևակերպումով. «Եւ էր առաջի նորա արարեալ աննախանձաբար զտունս մատենից եւ զիւանաց գրչաց, յորոց քաղէր զկարեւորն եւ զպիտանացուն իբրեւ զմեղու իմաստուն զմանանայն կենաց, որով թագաւորք եւ ռամիկք բերկրին» (Արևելցի. 2000, 366):*

[18] *Արեւելցի. 2000, 22:*

[19] *Արեւելցի. 2000, 22:*

[20] *Գարեգին Ա. կաթողիկոս. 1951, Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. 1988:*

Այս դեպքում նրա ձեռագրերի մասին վկայություններ կարող են պարունակել նաև նույն ժամանակում կամ հետագայում գրված ձեռագրերը: Ընդ որում, այդ ձեռագրերը կարող են պարունակել.

I Գրիգոր Բ. Վկայասերի գրական-թարգմանական գործերի հիշատակարանները (կամ հիշատակարանային բնույթի այլ հատվածներ և տեղեկություններ), որոնք հետագա ընդօրինակությունների ժամանակ գրիչներն արտագրելով՝ փոխանցել են հաջորդ դարեր այն դեպքում, երբ դրանց բուն ձեռագրերն այլևս գոյություն չունեն:

II Ուղղակի վկայություններ կաթողիկոսի անունով ձեռագրի գոյության մասին (օրինակ՝ տեղեկություն այն մասին, որ գրիչն այս կամ այն նյութն ընդօրինակել է Գրիգոր Բ. Վկայասերին պատկանող ձեռագրից կամ տեսել է նրան պատկանող որևէ ձեռագիր և այլն):

I Նախ քննենք Գրիգոր Բ. Վկայասերի թարգմանությունների հետ մեզ հասած հիշատակարանները և հիշատակարանային բնույթի խորագրերն ու ավարտները:

Այս հիշատակարանները ևս կարելի է բաժանել 2 խմբի.

- *հիշատակարաններ, որոնք կաթողիկոսի՝ իբրև ստացողի, պատվիրատուի կամ թարգմանչի են՝ առաջին դեմքով շարադրված,*
- *հիշատակարաններ, հիշատակարանային արժեք ունեցող խորագրեր կամ ավարտներ, որոնք ուղղակի հայտնում են տվյալ երկի թարգմանության հանգամանքների մասին՝ նշելով Գրիգոր Բ. Վկայասերի անունը:*

Դիտարկենք այս 2 խմբերն առանձին-առանձին:

1. Վկայասերի անունով մեզ հասած հիշատակարաններն են Հովհան Ոսկեբերանի և Եփրեմ Ասորու «Մեկնություն գործոց առաքելոց» աշխատության մեջ եղած հիշատակարանը, «Պատմություն Հովհաննու Ոսկեբերանի» գործի հիշատակարանը և «Ճաշոցինը» կամ «Տոնամակինը»:

Առաջինը պահպանվել է նույն՝ Գևորգ Սկևռացու խմբագրության մեջ և մեզ է հասել այդ գործի ձեռագրերով, ինչպես օրինակ՝ Մատենադարանի № 1315 (էջ 452ա), № 1362 (էջ 80ա), № 2605 (էջ 210բ) և այլն[21]: Իսկ Գրիգոր Բ. Վկայասերի պատվերով թարգմանված ո՛չ գործը, ո՛չ առավել ևս ձեռագիրը մեզ չեն հասել: Մեջբերենք հիշատակարանից մի հատված. «Աղերս նորոգ<ող> ստացողի եւ աշխատասիրաբար նորոգողի - Յամի վեց հազարերորդի հինգհարիւրերորդի առաջներորդի (6501) արարածոց աշխարհի եւ ի հազարերորդի եւթանասներորդի եւթներորդի (1077) կենարարին մերո գալստեանն, և ըստ Խոսրովային թուոյ Հայկազանցս հինգհարիւրերորդի քսաներորդի հինգերորդի (1076), ի թագաւորութեանն Միքայէլի Դուկի և ի պատրիարգութեան Կոզմայի երկաբնակի, ես՝ Գրիգորիս, որդի Գրիգորի Պալհաւունոյ ողորմութեամբ մեծին Աստուծոյ արժանացեալ աթոռաց հաւոյն իմոյ սրբոյն Գրիգորի, և ըստ յառաջատես տեսլեան սրբոյն Սահակայ, ի սաստկացեալ սրոյ Սկիւթացւոցն հալածանաւք հասի ի պայծառաշէն կայանս սրբոյն Կոստանդիանոսի և մեծաւ ըղձմամբ հայցեալ գտի զտենչալիս յոքունց, զգերահրաշ Մեկնութիւն Գործոց առաքելոցն մեծին Յովհաննու Ոսկեբերանի լուսաւոր և ոգեշահ վարդապետութեամբ: Եւ հանդիպեալ հմտագոյն հռետորին Կիւրակոսի

[21] *Տե՛ս նաև Ակինեան. 1953, 250–272:*

յունական և հայկական ոսմամբն պերճացեալ և առատաձեռն արգասեալք, ետու թարգմանել տենչալիս ոգւոյ իմոյ: Եւ ընկալեալ սրտալիր ուրախութեամբ իբրև զտախտակն նախամարգարէին, և մեծաւ տաժանմամբ հատեալ զհամատարածն Լիբիա և Ասիական ծոցոյն, /452բ/ խնամաւք Հոգւոյն հասի ի բաժինս Սեմայ, ի ստորոտս Տորոսի ... (ընդգծումը մերն է – Գ. Հ.)»[22]:

Իսկ «Պատմութիւն Հովհաննու Ոսկեբերանի» թարգմանյալ գործը պահպանվել է, արտագրվել իբրև առանձին երկ և հասել մեզ նախագաղափար օրինակի հիշատակարանով, սակայն Գրիգոր Բ. Վկայասերի ձեռագիրը դարձյալ չկա: Հիշատակարանն ընդօրինակված է մի շարք ձեռագրերում, ինչպես՝ Մատենադարանի №1785 (էջ 183 աբ), №1913 (էջ 485 ա), Երուսաղեմի № 787 (էջ 140) և այլն: Այն ամբողջովին ներկայացված է և՛ Գ. Հովսեփյանի, և՛ Ա. Մաթևոսյանի կազմած հիշատակարանների ժողովածուներում, ուստի բերենք միայն մի հատված. «Յամի հազարերորդի հարիւրերորդի երկրորդի (1102) Աստուծոյ մերոյ և տեառն Յիսուսի Քրիստոսի գալստեանն և ի հինգ հարիւրերորդի յիսներորդի (1101) մերում թուականութեանս և յեւթն և ի տասներորդ թագա[ւորու]թեան Կոմինոսի Ալէքսի բռնակալի, ես [Գրի]գոր՝ որդի Գրիգորի Մագիստրոսի ի հայ[կազուն]ւոյ ըստ աշխարհի պարթեւ, ըստ ժառանգութեան պահլաւիկ, ըստ ցեղ ընտիր լինելոյ յազգէ Արշակունի, որ եւ ողորմութեամբն Աստուծոյ կոչեցա ի դիտապետութիւն Ասքանազեանս ի բնիկ աթոռ հայրապետութեան նախնեացն իմոց, եւ բազում նեղութիւն կրեալ մեր յայլասեռ ազգաց հեթանոսաց եւ ի յե[րկ]աբնակաց: Եւ ապա ի յառաջասացեալ ամդ հասաք ի սուրբ լեառնն, զոր Սեաւն կոչեն, ի մեր սեփհական պարգեւական եկեղեցիքն յուխտն սուրբ, զոր ըստ ասորի բարբառոյ Պաղահոյ կոչի, որ թարգմանի դրախտ Աստուծոյ, եւ անդ յերեսուն և ի վեց ամի մերոյ աթոռակալութեանս՝ թարգմանեցի զվարս ճգնութեան մեծ եւ սքանչելի առնն Աստուծոյ Յովհաննու Ոսկեբերանի Կոստանդինուպալսի հայրապետի, ի ձեռն առն մի[ոյ], որում անուն էր Թէոփիստէ, ազգաւ յոյն ...»[23]:

Վերջինը Գրիգոր Բ. Վկայասերի «Տոնամակի» հիշատակարանն է, որը մանրամասն ուսումնասիրված է «Տոնամակին» առնչվող ուսումնասիրություններում, հատկապես՝ Ն. Ակինյանի, Մ. Ավդալբեգյանի, Ռ. Վարդանյանի՝ արդեն հիշատակված աշխատություններում: Ինչպես հայտնում է գործի շարունակող Կիրակոս վարդապետը, Գրիգոր Բ. Վկայասերը չի հասցրել ավարտել այն և հանձնարարել է իրեն. «Բայց ոչ ի գլուխ աւարտեաց զամենայն՝ զոր պարտ եւ արժան էր տաւնելոյ: Ապա ինձ, որ միշտ ընդ նմա էի, եւ յամենայն իրս աստուածայինս կցորդ եւ յորդորիչ, եւ փոյթ յաշխատութիւն հոգեւորաց եւ Աստուծոյ սիրելեաց, հոգ եդ ի վախճանելն իւրում մի անփոյթ առնել զամանէ, այլ յանկել ընթերցուածովք ըստ արժանին, զոր եւ արարի»[24]: *Ըստ էության, ինչպես նշում են այս հարցով զբաղվողներից շատերը, Գրիգոր Բ. Վկայասերը չի ավարտել «Տոնամակը», հետևաբար, ամբողջական վերջնական*

[22] *Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. 1988, 108–109, հմմտ. Գարեգին Ա. կաթողիկոս. 1951, 255–256:*

[23] *Գարեգին Ա. կաթողիկոս. 1951, 285, Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. 1988, 135–136:*

[24] *Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. 1988, 140, հմմտ. Ակինեան. 1953, 298:*

ձեռագիր մատյան այս բովանդակությամբ ևս չի թողել: Այս առիթով Մ. Օրմանյանը գրում է. «Վկայասէրին գործէն ամբողջական հաւաքածոյ մը հասած չէ մեզի, եւ կ'երեւի թէ եղած ալ չէ, որովհետեւ նա գոհացած է ձեռքն անցած հայացնել, առանց անոնցմով ամբողջական մարմին մը կազմելու»[25]:

Ամենայն հավանականությամբ, այս երեք աշխատություններից Գրիգոր Բ. Վկայասերը ունեցել է Հովհան Ոսկեբերանի և Եփրեմ Ասորու՝ «Մեկնություն գործոց առաքելոց» և «Պատմություն Հովհաննու Ոսկեբերանի» գործերի ձեռագիր մատյանները:

2. Երկրորդ խմբի հիշատակարանները (հիշատակարանային արժեք ունեցող խորագրեր կամ ավարտներ) համեմատաբար շատ են, սակայն ավելի սուղ տեղեկություններով. հիմնականում հայտնում են գործի թարգմանչի կամ թարգմանության պատվիրատուի անունը, թարգմանության լեզուն, ժամանակը կամ վայրը: Օրինակ. «Անբաժանելի Սուրբ Երրորդութիւն, պարգեւեա՛ զողորմութիւն և զթողութիւն մեղաց ասացողաց և լսողաց, և փափագողին Ներբողինիս տեառն Գրիգորիսի Վկայասերի, թարգմանողի ճառիս, ի Քրիստոսի փառք» կամ «Թարգմանեցաւ լուսազարդ և վայելչազարդ ճառս այս ի յունականէն ի մերս, հրամանաւ երիցս երանեալ հայրապետին տեառն Գրիգորիսի Հայոց Մեծաց կաթողիկոսի, ի ձեռն իմաստուն և հանճարեղ թարգմանչին Թէոփիստէի»[26]:

Հին շրջանի ձեռագրերի համար ընորոշ առանձնահատկություն է այն, որ հաճախ հիշատակարանային բնույթի նման տեղեկություններ ներկայացվում են նաև տվյալ գործի առաջաբանում (օրինակ՝ երկի ստեղծման հետ կապված տվյալները) կամ խորագրում[27]: Հետագայում ընդօրինակելիս գրիչները, նույնությամբ վերարտադրելով խորագիրը, դրանք ևս փոխանցում են: Այսպիսի օրինակներ ունենք նաև Վկայասերի պարագայում. «Պատմութիւն վարուց երանելւոյն Եփրեմի Ասորոյ վարդապետի, որ թարգմանեցաւ յասորոց ի մերս, հրամանաւ Գրիգորիսի Վկայասէր Հայոց կաթողիկոսի, ի հինգհարիւրորդի, [յիս]ներորդի (1101) թուականութեանս մերում» կամ «Կանոն մեծի հինգշաբթին ոտնալուային, զոր արարեալ է տեառն Եփրեմի Խորին Ասորոյ, զոր թարգմանեաց սուրբ դիտապետն Հայոց Մեծաց Գրիգորիս Վկայասէր»[28]:

Գրիգոր Բ. Վկայասերի անունով մեզ հասած հիշատակարանները՝ թե՛ հեղինակային, թե՛ թարգմանության, ամբողջովին ներկայացված են հիշատակարանների ժողովածուներում, ձեռագրացուցակներում, ինչպես նաև՝ Գ. Զարբհանալյանի, Ն. Ծովականի, Ռ. Վարդանյանի գործերում: Հատկապես Ն. Ծովականը «Գրիգոր Վկայասէր եւ թարգմանութիւնք վարուց սրբոց»[29] հոդվածում և Ռ. Վարդանյանը «Հայոց տոնացույցը»[30] աշխատության մեջ ամբողջովին առանձնացրել են Վկայասերի անունով մեզ հասած թարգմանական վարքերն ու վկայաբանությունները, առաջինն ըստ թվականի, երկրորդն ըստ ձեռագրերի՝ դրանք բերելով իրենց հիշատակարաններով և աղբյուրներով:

---

[25] *Օրմանյան. 2001, էջ 1499:*
[26] *Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. 1988, 134–135:*
[27] *Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. 1988, ԺԱ–ԺԵ:*
[28] *Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. 1988, 134:*
[29] *Ծովական. 1967, 430–432:*
[30] *Վարդանյան. 1999, 267–279, 283–287:*

Ամեն դեպքում թե՛ հիշատակարանների ժողովածուներում, թե՛ ձեռագրացուցակներում, թե՛ նշված ուսումնասիրություններում ներկայացված հիշատակարաններն ու հիշատակարանային բնույթի տեղեկություններն առավելապես վերաբերում են տվյալ երկի թարգմանությանը՝ որպես կանոն թվականին, հեղինակին և, թե որ լեզվից է կատարված թարգմանությունը, այլ կերպ ասած՝ արժեքավոր են Գրիգոր Բ. Վկայասերի մատենագրական ժառանգության տեսակետից: Իսկ այդ հիշատակարանները սկզբնապես պարունակող ձեռագրերի մասին որևէ տեղեկություն չեն հայտնում: Եվ առանց որևէ հստակ նշման այժմ արդեն դժվար է պատասխանել մի քանի էական հարցերի.

ա. արդյո՞ք այս բոլոր հիշատակարանները գրվել են Վկայասերի ժամանակ, նրա պատվիրած ձեռագրերո՞ւմ, թե՞ հետագայի գրիչներն են ավելացրել՝ իմանալով տվյալ վկայության թարգմանչին:

բ. Եթե ամեն դեպքում հիշատակարանը Վկայասերի օրոք է գրվել, ապա այն վերաբերում էր միայն տվյալ վարքին կամ վկայաբանությա՞նը, թե՞ ամբողջ ձեռագրին: Կարո՞ղ ենք այդ հիշատակարաններով դատել, թե այն պարունակող ամբողջ ձեռագիրը կապ ուներ նրա հետ:

գ. Ինչպե՞ս կարող ենք որոշել, թե ի՞նչ ձեռագրերում են սկզբնապես գրվել այս հիշատակարանները, արդյո՞ք մեկ ամբողջական, թե՞ տարբեր կամ արդյո՞ք Վկայասերի թարգմանած կամ պատվիրած վկայությունները, պատմությունները նրա պատվերով մի ձեռագրում են հավաքվել, թե՞, ամեն դեպքում, զատ-զատ կամ տարբեր ձեռագրերով են եղել:

Այս հարցերը քիչ թե շատ չեն վերաբերում Հովհան Ոսկեբերանի «Մեկնություն գործոց առաքելոց»-ին, որը, թերևս, ամբողջական ձեռագրի տեսքով պետք է թարգմանված լիներ՝ հաշվի առնվելով գործի ծավալն ու ամբողջականությունը:

II Այժմ քննենք այն ձեռագրերը, որոնք պարունակում են հստակ տեղեկություններ Գրիգոր Բ. Վկայասերի ձեռագրերի մասին: Աղբյուրների քննությունից մեզ հաջողվեց գտնել միայն 2 ձեռագիր, որոնք նման տեղեկություններ են հայտնում:

• 1298–1299 թթ. Կիլիկիայում գրված Գիրք թղթոցի (գրիչ և ստացող՝ Թովմաս Հռոմկլայեցի)[31] «Կոմիտասու հայոց կաթողիկոսի վասն հաւատոյ» միավորից հետո՝ 290–291 էջերի ստորին լուսանցին, ըստ ձեռագրացուցակի, կա հիշատակագրություն՝ «Աւրինակ գրոցս որ լեալ էր Տէր Գրիգորիսի Վկայասիրին մինչեւ ցայս վայր էր (այս է Յովհաննու իմաստասիրի Հայոց կաթուղիկոսի սակս ժողովոց, որ եղեն ի Հայք) և նա այսպէս էր գրեալ. զՎահրամ որդի Գրիգորոյ Մագիստրոսի յիշեսջիք յաղօթս ձեր ով երջանիկ դասք ուղ(ղ)ափառաց խմբիցդ Ագքանագեան սեռի Շիէ. (=1078) թուական»[32]: Սա նշանակում է, որ գրիչն արտագրել է մի ձեռագրից, որը Գրիգոր Բ. Վկայասերինն էր: Անհասկանալի է մնում՝ ձեռագիրը պատկանե՞լ է նրան, ուղղակի ստացո՞ղն էր, թե՞ գրիչը, քանի որ երկուսն էլ հավասարապես կարող էին նման հիշատակարան թողնել: Սակայն սա չի խանգարում ըստ այս հիշատակարանի ասելու,

[31] *Ցուցակ հայերէն ձեռագրաց Զմմառի վանքի մատենադարանին. 1971, 21–26:*

[32] *Ցուցակ հայերէն ձեռագրաց Զմմառի վանքի մատենադարանին. 1971, 26, Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. 1988, 111: Հմմտ. Գիրք թղթոց. 1901, 219:*

որ առնվազն 1078 թվականից գոյություն է ունեցել Վկայասերի անունով մի ձեռագիր՝ վերը բերված հիշատակարանով:

- *Մյուս հիշատակարանը Հովհան Օձնեցու «Ընդդէմ երեւութականաց» ճառի ավարտին է, որը տպագրված է այս ճառի՝ Մկրտիչ վրդ. Ավգերյանի կազմած բնագրի հրատարակություններում*[33]*: Ըստ Ավգերյանի՝ այն առկա է Հովհան Օձնեցու «Ատենաբանությունը» և ճառերը պարունակող միակ ձեռագիր օրինակում, որը պահվում է Փարիզի արքունական գրադարանում. «Իսկ օրինակ ճառիս առաւ ի մեծ դրատանէ Փարիզու՝ յընտիր և իր վաւերական օրինակէ Գորգայ*[34]*, որ գաղափարեալ է զսա ի Սկևռայ անապատան՝ այն է վանք Լամբրոնացւոյն, ի մատենէ անտի՝ զոր ի ձեռին ունէին, և յարկեղս գրոց իւրեանց պահէին սուրբն Գրիգոր Վկայասէր՝ մեծն և փոքրն, սուրբն Ներսէս Կլայեցի, սուրբն Ներսէս Լամբրոնացի, և Գրիգոր կաթողիկոս մականուն Տղայ...»*[35] *և «... յածեալ առ օտար ազգս, և ի մայրաքաղաքին գաղղիացւոց ի Լուտետիա քաղաքի յարքունական մատենադարանին պահի: Յորմէ ամենայն զգուշութեամբ, և երրակի բաղդատութեամբ յայլ և այլ անձանց առեալ զգաղափարն, ըստ նմին օրինակի զտպագրութիւնս զայս արարաք»*[36]*: Այս ձեռագրից Հովհան Օձնեցու «Ընդդէմ երեւութականաց» ճառը գրչի և նախագաղափար հիշատակարաններով ընդօրինակվել է XVIII–XIX դդ. և պահվում է Վիեննայի Մխիթարյան մատենադարանում 303 (հին թիվ՝ 57) համարի ներքո*[37]*: Հիշատակարանները հետևյալներն են.*

1. *«Այս է Գիրք կտակի ուղղափառութեան հաւր մերոյ սրբոյն Յովհաննու կաթողիկոսի Հայոց և իմաստասիրի Աւձնեցւոյ: Եւ ես Գրիգորիս նուաստս՝ նորին հաւատոց որդի և աշակերտ՝ ձայնակի՛ց եմ այսմ խոստովանութեան և աւանդման. և որք այլապէս դաւանեն քան զայսոսիկ, և նորաձեւս առնեն /// (1,5 տող քերուած)»*[38]*:*

2. *«Ես տրուպս Գորգ, որ ի թիկունս լերինս Արմենի նստիմ յանապատս Յովանիսի, պատահեցայ օրինակի գրոցս Յովհաննու Օձնեցւոյն, յարկեղս մեծ վանացն Սկևռայի, և խոշոր գրով փոխեցի զսա. և ի վերջս օրինակին կայր գրեալ՝ թէ տեառն Գրիգորիսի է գիրքս՝ հայոց քահանայապետի. և այլ ի խոնարհ՝ իւրովք ձեռօքն գրեալ փոքր յիշատակարանդ՝ զոր տեսանես և տողուկէս*

---

[33] *Յովհաննու Իմաստասիրի եւ կաթողիկոսի հայոց Օձնեցւոյ Ճառ ընդդէմ երեւութականաց. 1807, 69–71, Օձնեցի. 1816, 114–115, Յովհաննու Իմաստասիրի Աւձնեցւոյ Մատենագրութիւնք. 1833, 80, Տեառն Յովհաննու Իմաստասիրի Աւձնեցւոյ Մատենագրութիւնք. 1834, 176–179:*

[34] *Մեզ հաջողվեց գտնել այս ձեռագիրը Փարիզի հայերեն ձեռագրերի ձեռագրացուցակում. այն է՝ հայկական ֆոնդի 73 (տե՛ս* Manuscrits arméniens de la Bibliothèque Nationale de France: catalogue. 1998, 478–479)*:*

[35] *Յովհաննու Իմաստասիրի եւ կաթողիկոսի հայոց Օձնեցւոյ Ճառ ընդդէմ երեւութականաց. 1807, Ե:*

[36] *Յովհաննու Իմաստասիրի Աւձնեցւոյ Մատենագրութիւնք. 1833, 6:*

[37] *Տե՛ս Ցուցակ հայերէն ձեռագրաց կայսերական Մատենադարանին ի Վիեննա. 1891, 730:*

[38] *Յովհաննու Իմաստասիրի եւ կաթողիկոսի հայոց Օձնեցւոյ Ճառ ընդդէմ երեւութականաց. 1807, 70: Հմմտ. Ցուցակ հայերէն ձեռագրաց կայսերական Մատենադարանին ի Վիեննա. 1891, 730:*

քերած էր. և յայտ է թէ բ[անա]դրանքն է ք[երա]ծն, թէ որ այլապէս դաւանէ՝ նզովեալ է: Արդ փոխեցի զսա ի յօգտնութիւն պիտանացուաց իրաց պէսպէս աւանդից ի զգուշութիւն ինձ, և համաշունչ յարակցի եղբօր Խաչատրոյ վարդապետի և Աստուածատրոյ, և զկնի մեր որոց Տէր յաջողեսցէ: Գրեցաւ Զխէ. թուին ի փառս Աստուծոյ. ամէն»[39]:

Փաստորեն, 1298 թ. Գորգ գրիչը Սկևռայի վանքում մեծ արկղով մատյաններ է գտնում, որոնցից մեկից ընդօրինակում է Հովհան Օձնեցու ճառը: Գրիչը հավաստում է, որ ձեռագիրը պատկանել է Գրիգոր Բ. Վկայասերին և բերում նրա ձեռքով գրված փոքրիկ հիշատակարանը:

Վկայասերի այս հիշատակարանը կա նաև Մատենադարանի № 699 ձեռագրի (XVI դար, Ժողովածու) 65բ[40] էջում: Հետաքրքիր է, որ այստեղ չկա Օձնեցու ճառը: Հիշատակարանը գտնվում է 61ա-81ա էջերում եղած անխորագիր նյութի մեջ, որը Մայր ցուցակում, ըստ բովանդակության, վերնագրված է «Վասն մի բնութեան Բանին մարմնացելոյն»[41]: Այն հատվածներ և բացատրություններ է պարունակում աստվածային էության վերաբերյալ, ապա անանուն հեղինակը բերում է առաջավոր պահքի մասին մի պատմություն, որ եղել է Տարոնում, և եզրակացնում «Որով յայտ է, թէ և զպահսն են յառաջս կալեալ որպէս և փռանգք և այլ ազգք և յետոյ ի չարեացն է բարձեալ. և հին է սովորութիւնս այս ճշմարտապէս և առաքելադիր և շնորհաւքն Քրիստոսի առ մեզ հաստատ մնաց, և ոչ է այնպէս որպէս յաւդեն չարահաւատքն, որ ի մէնջ ելին, թէ յԱւանեցւոյն է եղեալ պահք առաջաւորաց...»[42], և ապա անցում է արվում Հովհան Օձնեցուն: Հեղինակը 65աբ էջերում գրում է. «... զոր գտաք յԱւանեցւոյն գիրքն, տէր Գրիգորիսի կաթողիկոսի Վկայասիրի ձեռացն գիրն գրրած, զոր ինքնին տէր Գրիգորիս էր գրեալ ի մագաղաթեայ գիրք Աւանեցւոյն, որպէս ասացաք /65բ/ առ ի վկայութիւն ճշմարտութեան զայս:

Այս Գիրք կտակի ուղղափառության հաւր մերոյ սրբոյն Յովհաննու կաթողիկոսի Հայոց և իմաստասիրի Աւանեցւոյ, և ես Գրիգորիս նուաստս նորին հաւատոց որդի և աշակերտ, ձայնակից եմ այսըմ խոստովանութեան և աւանդման, և որ այլապէս դաւանեն քան զայսոցիկ և նորաձևս առնեն:

Այս տէր Գրիգորիսի կաթողիկոսի Վկայասիրի ձեռացն գրած էր ի մագաղաթեայ յԱւանեցւոյն գիրքն, ըստ վերոյգրելոցդ, և զոր այլ ի հետ կացեալ էր տուղուկէս քերած էր /66ա/ յետոյ ի հակառակորդաց, զի յանդիմանութիւնն էր ստութեան իւրեանց»[43]:

Ինչպես երևում է, տրված է վկայություն այն մասին, որ Գրիգոր Բ. Վկայասերի ձեռքով ընդօրինակվել է Հովհան Օձնեցու ինչ-որ գործ, ապա մեջբեր-

---

[39] *Յովհաննու Իմաստասիրի եւ կաթողիկոսի հայոց Օձնեցւոյ Ճառ ընդդէմ երևութականաց. 1807, 70–71: Հմմտ. Յուցակ հայերէն ձեռագրաց կայսերական Մատենադարանին ի Վիեննա. 1891, 730, Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. 1984, 830:*

[40] *Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. 1988, 111:*

[41] *Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի. 2007, 387:*

[42] *Մատենադարանի ձեռագիր № 699, 64աբ:*

[43] *Մատենադարանի ձեռագիր № 699, 65աբ: Հմմտ. Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. 1988, 111:*

ված է Վկայասերի՝ մեզ արդեն ծանոթ հիշատակարանը: Անհայտ է մնում, թե որտեղի՞ց է այս անմիտարը նյութի հեղինակին ծանոթ հիշատակարանը, արդյո՞ք XVI դարում նա տեսել է 1298 թ. Գորգի ձեռքով գրված ձեռագիրը, թե՞ մի այլ ձեռագիր, կամ որտեղի՞ց գիտի, թե Վկայասերի ձեռագիրը մագաղաթյա է եղել և այլն:

Մկրտիչ Ավգերյանի տպագրի միջոցով այս հիշատակարանը ծանոթ է նաև Գ. Զարբհանալյանին[44]: Խոսելով Հովհան Օձնեցու «Ճառ ընդդէմ երեւութականաց» գործի մասին՝ նա գրում է. «Ուստի և իրաւամբ զմայլած էին այս գրուածքիս վրայ մեր հին հայրապետքն. և Գրիգորիս Վկայասէր՝ իրեն համար մասնաւոր օրինակ մը գաղափարել տալով, ճառին վերջը իր ձեռքով ասանկ գրած էր. «Այս է գիրք կտակի ուղղափառութեան ...», և մեջբերում է նույն հիշատակարանը[45]: V–XII դդ. հիշատակարանների ժողովածուն կազմելիս Ա. Մաթևոսյանն այս հիշատակարանը ներառել է՝ ըստ Մատենադարանի № 699 ձեռագրի[46]:

Եզրակացություն

Այսպիսով, քննելով հայերեն ձեռագրերի հիշատակարանների ժողովածուները, ձեռագրացուցակները, վերլուծելով մեզ հայտնի մատենագրական աղբյուրները և մինչ օրս Գրիգոր Բ. Վկայասեր կաթողիկոսի մասին եղած ուսումնասիրությունները, ինչպես նաև նկատի ունենալով այս ժամանակաշրջանում հայերեն ձեռագիր մատյանների հետ կապված որոշ էական հանգամանքներ՝ կարելի է փաստել.

ա. Գրիգոր Բ. Վկայասեր կաթողիկոսից մեզ ձեռագիր մատյան հասած չլինելու (կամ հասած, սակայն առայժմ մեզ անհայտ լինելու փաստը) բացատրելի է միանգամայն առարկայական պատճառներով: Ընդ որում, կարևորելով հայերեն ձեռագրերի պատառիկների աղբյուրագիտական արժեքը V–XII դդ. ձեռագրերի վերաբերյալ կատարվող քննություններում՝ կարծում ենք, որ դրանց նկարագրության ավարտին կրկին պետք է անդրադառնալ կաթողիկոսի ձեռագրերի հարցին:

բ. Գրիգոր Բ. Վկայասերի գրած, պատվիրած կամ ստացած ձեռագրերի մասին պահպանվել են տեղեկություններ, որոնք բաժանվում են 2 խմբի՝ անուղղակի կամ մատենագրական և ուղղակի կամ ձեռագրական-հիշատակարանային:

գ. Մատենագրական տեղեկությունները հիմնականում ընդհանուր բնույթի են: Ըստ դրանց՝ Գրիգոր Բ. Վկայասերը, մինչև կաթողիկոս դառնալը, խնդրել և իր հորից՝ Գրիգոր Մագիստրոսից ստացել է քերականական ձեռագիր, Կոստանդնուպոլսից իր հետ բերել է թարգմանված ձեռագրեր ու, ընդհանրապես, իր գործունեության ողջ ընթացքում հավաքել, փրկագնել, նորոգել և հոգ է տարել ձեռագրերի մասին:

դ. Ձեռագրական-հիշատակարանային տեղեկություններն առավել կոնկրետ են, թեև մեծ մասը վերաբերում է կաթողիկոսի մատենագրական ժառանգութ-

---

[44] *Զարբհանալեան. 1865, 373:*
[45] *Զարբհանալեան. 1865, 373:*
[46] *Տե՛ս Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. 1988, 111:*

յանը, սակայն կան արժեքավոր տեղեկություններ նաև ձեռագրերի մասին: Ըստ այդ տեղեկությունների՝ 1078 թ. նա ունեցել է մի ձեռագիր, որում Կոմիտաս կաթողիկոսի «Վասն հաւատոյ» գործից հետո թողել է հիշատակարան, ևս մի ձեռագիր մատյան էլ է ունեցել, որը պարունակել է Հովհան Օձնեցու «Ընդդէմ երևութականաց» ճառը: Այս ձեռագրերի ընդհանուր բովանդակության մասին տեղեկություն չունենք. ամենայն հավանականությամբ, եղել են ժողովածուներ, այսինքն՝ տարբեր նյութերի հավաքածուներ են:

Ե. Դատելով կաթողիկոսի թողած գրական ժառանգությունից՝ միանգամայն հավանական է, որ նա ունեցել է նաև Հովհան Ոսկեբերանի և Եփրեմ Ասորու «Մեկնություն գործոց առաքելոց», «Պատմություն Հովհաննու Ոսկեբերանի» աշխատությունները պարունակող մատյանները:

Քնար Հարությունյան – Մ. Մաշտոցի անվ. Մատենադարանի ձեռագրագիտության բաժնի գիտաշխատող, ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի Հայոց լեզվի պատմության ամբիոնի ասպիրանտ: Գիտական հետաքրքրությունները՝ ձեռագիր մատյաններ, հայերեն մատյանների նկարագրություն-ուսումնասիրություն, հայոց կաթողիկոսների ձեռագրական ժառանգություն, գրաբարի բառապաշար: Համահեղինակ է 1 գրքի և 4 ձեռագրացուցակի, հեղինակ՝ 15 հոդվածի: knarbanaser@gmail.com

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ալիշան Ղ. 1873, Շնորհալի եւ պարագայ իւր, Վենետիկ, Ս. Ղազար, 538 էջ:

Ալիշան Ղ. 1901, Հայապատում, Վենետիկ, Ս. Ղազար, 649 էջ:

Ակինեան Ն. 1953, Մատենագրական հետազօտութիւններ, հ. Ե., Վիեննա, Մխիթարեան տպարան, 430 էջ:

Ավդալբեգյան Մ. 1982, «Յայսմաւուրք» ժողովածուները և նրանց պատմական արժեքը, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 152 էջ:

Բալդրյան Ս. 2015, Գրիգոր Բ. Վկայասերի աթոռակալության և ճանապարհորդությունների քաղաքական ծալքերը. – ԵՊՀ ՈՒԳԸ գիտական հոդվածների ժողովածու, 1.6, Երևան, էջ 30–39:

Գարեգին Ա. կաթողիկոս. 1951, Յիշատակարանք ձեռագրաց, հ. Ա (Ե. դարից մինչև 1250 թ.), Անթիլիաս, տպարան կաթողիկոսութեան Հայոց Կիլիկիոյ, 1256 էջ:

Գիրք թղթոց. 1901, Թիֆլիս, տպ. Տ. Ռօտինեանց եւ Մ. Շարաձե, 584 էջ:

Գրիգոր Վկայասեր. 2016, պատրաստեց Գ. Մուրադեան. – Մատենագիրք հայոց, ԺԱ. դար, հ. ԺԷ., Երեւան, էջ 81–97:

Զարբհանալեան, Գ. 1865, Պատմութիւն հայերէն դպրութեանց. Ա. Հին մատենագրութիւն, Վենետիկ, Ս. Ղազար, 649 էջ:

Զարբհանալեան Գ. 1897, Հայկական հին դպրութեան պատմութիւն (Դ.–ԺԳ. դար), Վենետիկ, Մխիթարեան տպարան, 822 էջ:

Թորոսյան Վ. 2018, Հայոց կաթողիկոսական իշխանությունը (ԺԱ. դարերի կեսեր – ԺԲ. դարի սկիզբ), Երևան, «Նաիրի», 271 էջ:

Խաչատրեան Պ. 2016, Հայ հին գրականութեան մատենագիտութիւն, Երեւան, «Տիգրան Մէծ» հրատ., 613 էջ:

Ծովական Նորայր եպիսկոպոս. 1967, Գրիգոր Վկայասէր եւ թարգմանութիւնք վարուց սրբոց. – «Սիոն» (Երուսաղէմ), թիւ 9-10, էջ 430–432:

Կիրակոս Գանձակեցի. 1961, Պատմություն Հայոց, աշխատ.՝ Կ. Մելիք-Օհանջանյանի, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 426 էջ:

Հայ եկեղեցու հանրագիտարան. 2008, պր. Ա. Ամենայն Հայոց կաթողիկոսներ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հրատ., 252 էջ:

Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. 1988, Ե–ԺԲ. դարեր, աշխատասիրությամբ Ա. Մաթևոսյանի, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 366 էջ:

Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. 1984, ԺԳ. դար, կազմեց Ա. Մաթևոսյան, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 987 էջ:

Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի. 2007, հ. Գ., կազմեց՝ Օ. Եգանեան, Երևան, «Մագաղաթ» հրատ., 2004 էջ:

Մատենագիրք հայոց. 2016, հ. ԺԷ, ԺԱ. դար, Երևան, 1023 էջ:

Մուրադեան Գ. 2012, Գրիգոր Մագիստրոսի մատենագրութիւնը. – Մատենագիրք հայոց, հ. ԺԶ, ԺԱ դար, Երեւան, 1121 էջ:

Յայսմաւուրք. 1730, Կ. Պոլիս, տպ. Գր. Մարզուանեցու, 731 էջ:

Յովհաննէս Օձնեցի. 1816, Ճառ ընդդէմ երեւութականաց, Վենետիկ, Ս. Ղազար, 115 էջ:

Յովհաննու Իմաստասիրի Աւծնեցւոյ Մատենագրութիւնք. 1833, Վենետիկ, Ս. Ղազար, 194 էջ:

Յովհաննու Իմաստասիրի եւ կաթողիկոսի հայոց Օձնեցւոյ Ճառ ընդդէմ երևութականաց. 1807, յառաջաբան և հետևորդ ծանօթութեամբք հ. Մկրտիչ վարդապետի Աւգերեան, Վենէտիկ, Ս. Ղազար, 85 էջ:

Ներսէս Շնորհալի. 2018, գիրք Ա., Մատենագիրք հայոց, հ. ԻԱ, ԺԲ. դար, Երևան, 1360 էջ:

Պատմութիւն Մատթէոսի Ուռհայեցւոյ. 1869, Երուսաղէմ, Ս. Յակովբեանց տպ., 597 էջ:

Պողարեան Ն. 1971, Հայ գրողներ, Երուսաղէմ, Ս. Յակոբեանց, 616 էջ:

Սոփերք հայկականք. 1854, ԺԴ, Վենետիկ, Մխիթարեան տպ., 87 էջ:

Վարդան Արեւելցի. 2000, Ճառք, ներբողեանք, աշխատ. Հ. Քյոսեյանի, Երևան, «Ոսկան Երևանցի» հրատ., 387 էջ:

Վարդանյան Յու. 1986, Հովհաննավանքի Ճառընտիր ձեռագրի մասին. –ՊԲՀ, № 4, էջ 173–181:

Վարդանյան Ռ. 1999, Հայոց տոնացույցը, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 645 էջ:

Տեառն Յովհաննու Իմաստասիրի Աւծնեցւոյ Մատենագրութիւնք. 1834, Վենետիկ, Ս. Ղազար, 313 էջ:

Տեր-Պետրոսյան Լ. 1989, Ասորիների դերը հայկական Կիլիկիոյ մշակութային կեանքում ԺԲ-ԺԳ դարերում, Վենետիկ, Ս. Ղազար, 89 էջ:

Ցուցակ հայերէն ձեռագրաց Զմմառի վանքի մատենադարանին. 1971, հ. Բ, Անտոնեան հաւաքածոյ, կազմեցին՝ հ. Ն. Ակինեան և հ. Հ. Ոսկեան, Վիեննա, Մխիթարեան տպ., 321 էջ:

Ցուցակ հայերէն ձեռագրաց կայսերական Մատենադարանին ի Վիեննա. 1891, հ. Ա, տետր Ա., կազմեց հ. Յակովբոս Տաշեան, Վիեննա, Մխիթարեան տպ., 49 էջ:

Ցուցակ Վիեննայի Մխիթարեան մատենադարանի հայերէն ձեռագրերի պատառիկների. 2012, կազմեցին Գ. Մուրադեան, Ա. Թոփչեան, Երեւան, «Անկիւնաքար» հրատ., 373 էջ:

Քյոսեյան Հ. 2018, Ներածություն հայ եկեղեցական մատենագրության, Երևան, հեղ. հրատ., 736 էջ:

Օրմանյան Մ. 2001, Ազգապատում, հ. Ա, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 1870 էջ:

Coulie B. 2020, Armenian Manuscripts: Catalogues, Collections, Libraries, Brepols, 462 p.

Manuscrits armèniens de la Bibliothèque Nationale de France: catalogue. 1998, [red. Par] Raymond H. Kevorkian; Armen Ter-Stepanian; avec le concours de Bernard Outtier et de Guévorg Ter-Vardanian; Bibliothèque Nationale de France. Paris, 1072 p.

Thomson R. 1995, A Bibliography of Classical Armenian Literature to 1500 AD, Brepolis-Turnhout, 324 p.

Thomson R. 2007, Supplement to a Bibliography of Classical Armenian Literature to 1500 AD: Publications 1993–2005. “Le Museon”, tome 120 – Fasc. 1-2, Louvain-La-Neuve, pp. 162 –223.

http://serials.flib.sci.am/matenagitutyun/test/in dex.html (20.11. 2022)*:*

РУКОПИСНОЕ НАСЛЕДИЕ ГРИГОРА II ВКАЯСЕРА
(По литературным и колофонным сведениям)

КНАР АРУТЮНЯН

Р е з ю м е

Ключевые слова: армянский манускрипт, католикос, наследие манускриптов католикосов, Григор II Вкаясер, колофон, армянская литература, каталог рукописей.

Католикосы Армении сыграли большую роль в создании и развитии армянских рукописных и печатных книг, будучи меценатами, получателеми, а многие и писцами. Поэтому для всесторонней оценки их роли, а также для изучения истории армянской книги важно представить эту сферу их деятельности. В этом отношении примечательна деятельность католикоса Григора II Вкаясера (1066–1105), сыгравшего большую роль в переводе агиографической литературы. Хотя до нас не дошли его рукописи, но изучение источников выявило прямые и косвенные свидетельства его участия в создании рукописей. Так, согласно литературным данным, Григор II Вкаясер попросил и получил от своего отца Григора Магистра труд «Толкования грамматики», а значит и рукопись. Также он привез с собой рукописи из Константинополя. По свидетельству поэта XII века Вардана Айказна, он собирал рукописи и выкупал их у врагов. Изучение колофонов и рукописных источников также дает информацию о конкретных рукописях Вкаясера. Так, в одной рукописи, написанной в 1298–1299 гг., есть сведения о том, что ее часть скопирована с рукописи католикоса и

в ней цитируется колофон, написанный самим Вкаясером в 1078 г. Другое свидетельство дает рукопись, хранящаяся в Париже, которая тоже содержит колофон католикоса. Еще о двух рукописях можно предположить на основании его сочинений («Толкование на деяния святых апостолов», «История Иоанна Златоуста»), дошедших до нас лишь в копиях.

Кнар Арутюнян – научный сотрудник отдела кодикологии Матенадарана им. М. Маштоца, аспирантка кафедры истории армянского языка факультета армянской филологии ЕГУ. Научные интересы: рукописи, описание-изучение армянских рукописей, рукописное наследие армянских католикосов, лексика грабара. Соавтор 1 книги и 4 каталогов рукописей, автор 15 статей. knarbanaser@gmail.com

THE MANUSCRIPT HERITAGE OF GRIGOR II VKAYASER
(According to the literary and colophon data)

KNAR HARUTYUNYAN

S u m m a r y

Key words: Armenian manuscript, Catholicos, the manuscript heritage of Catholicoses, Grigor II Vkayaser, colophon, Armenian literature, catalogue of manuscripts.

The Catholicoses of Armenia played a great role in the creation and development of Armenian manuscripts and printed books, being patrons, recipients and many of them even scribes. Therefore, for a comprehensive assessment of their work, as well as for the study of the history of the Armenian book, it is important to present this area of their activity. In this regard, the activity of Catholicos Grigor II Vkayaser (the Martyrophile, 1066-1105) is noteworthy as he played a great role in translation of hagiographic literature. Although his manuscripts did not survive, the study of the sources revealed direct and indirect evidences that he had been involved in the process of making a manuscript. So, according to literary data, Grigor II Vkayaser asked and received from his father Grigor Magistros the work “Meknutyun qerakani” (Interpretation of grammar) and hence the manuscript. He also brought with him manuscripts from Constantinople. According to the XII century poet Vardan Haykazn, he collected manuscripts and bought them from enemies. The study of colophons and handwritten sources also provides information about the specific manuscripts of Vkayaser. So, in one manuscript written in 1298-1299, there is information that its part was copied from the Catholicos’s manuscript and it quotes a colophon written by Vkayaser himself in 1078. Another piece of evidence gives a manuscript kept in Paris, which also contains

Grigor II Vkayaser's colophon. About his two more manuscripts, we can assume on the basis of his writings ("Interpretation on the Acts of the Holy Apostles", "History of John Chrysostom"), which have come down to us only in copies.

Knar Harutyunyan – Researcher at the Department of Codicology of Matenadaran after M. Mashtots, Ph.D. student at the Chair of Armenian Language History, YSU Faculty of Armenian Philology. Scientific interests: manuscripts, description and study of Armenian manuscripts, the manuscript heritage of Armenian Catholicoses, the lexicon of Grabar. Coauthor of 1 book and 4 catalogues of manuscripts, author of 15 articles. knarbanaser@gmail.com

ՀՏԴ : 929:1(56) Տեմիրճիպաշյան + 891.981

Doi:10.54503/0135-0536-2023.2-164

ԳՈՅՈՒԹՅԱՆ ԱՌԵՂԾՎԱԾԻ ԽՆԴԻՐԸ ԵՂԻԱ ՏԵՄԻՐՃԻՊԱՇՅԱՆԻ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ*

ՊԵՏՐՈՍ ԴԵՄԻՐՃՅԱՆ

Բանալի բառեր՝ Եղիա Տեմիրճիպաշյան, նյութ, հոգի, կյանք, մահ, սեր, գոյություն, պարզ, բարդ, առեղծված, Նիրվանա:

Նախաբան

Արևմտահայ բանաստեղծ, արձակագիր, իմաստասեր Եղիա Տեմիրճիպաշյանի (1851–1908 թթ.) գործունեության ակտիվ շրջանում՝ XIX դ. վերջին քառորդին, գոյության առեղծվածի՝ նյութի և հոգու, կյանքի, մահվան ու անմահության հարցերը տևական քննարկման էին ենթարկվում ժամանակի հայ և համաշխարհային գրական-գիտական-իմաստասիրական մտքի կողմից: «Իմաստասէրք ոմանք կ'ենթադրեն, թէ մարդկային մեծ ամբողջն միայն անկորնչելի,– գրում էր Եղիշէ վրդ. Այվազեանը,– եւ թէ անձնիւր կեանք, իւր անհատութեան մէջ, երեւոյթ մի է անցաւոր եւ խաբուսիկ: Երբ մարդ կը մեռնի, ընութիւն կ'առնու վերստին իւր փոխ տուած նիւթն. մարմինն կը լուծուի»[1]: Բայց թեև «դիոյն պատառներն կը խառնուին եւ կը ցրուին ի հող, (...) իւր գլուխն կը մնայ միշտ կենդանի, եւ դարուց ի դարս կը խօսի անլռելի»: «Բայց ա՞յս է միթէ ճշմարիտ անմահութիւնն», – հարցնում է Եղիշե վրդ. Այվազյանը, ըստ էության, մերժելով այդ գաղափարը, քանզի այդ դեպքում «գործն աւելի անմահ պիտի լինէր քան գործողն. կենաց մի վայրկեանն աւելի զօրութիւն պիտի ունենար քան ամբողջ կեանքն»[2]: Բազմանշանակ էր նաև Գրիգոր Օտյանի բացականչությունը. «Երանի՜ որք կը մեռնին ու կրնան ըսել մնացողաց. «Ինտռեցէք հիմա ու գտէք ի՛նչն ու ինչուն այս կեանքին, այս աշխարհին». ահա իմ փիլիսոփայութիւնս ...»[3]: Իսկ Ռեթեոս Պերպերյանը, մխիթարական խոսքեր հղելով Եղիայի հորեղբորորդի Գարեգին Տեմիրճիպաշյանին, եղբոր՝ Գալուստի մահվան կապակցությամբ, գրում էր. «Կը մտածես թէ ի՛նչ եղաւ այն հոգին որ այդ փարելի մարմինը կը շնչաւորէր, որ այդ աչերուն մէջ կը ժպտէր, որ այդ գանկին մէջ կը խորհէր, որ գքեզ կը սիրէր, որ չքնաղ ձրիւք

---

* Ներկայացվել է 19. XII. 2022 թ., գրախոսվել է 20. XII. 2022 թ., ընդունվել է տպագրության 19. VI. 2023 թ.: Հոդվածը, որպես զեկուցում, ընթերցվել է ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվ. գրականության ինստիտուտում 2022 թ. ապրիլի 26–27-ին տեղի ունեցած Վ. Կիրակոսյանի մահվան տարելիցին և հիշատակի ոգեկոչմանը նվիրված հանրապետական գիտաժողովում:

[1] Այվազեան. 1887, 101:

[2] Այվազեան. 1887, 102:

[3] Օտեան. 1888, 241:

կը զարդարուէր, որ յոյսեր ու փափաքներ կը տածէր յինքեան, յո՛յս ու փափա՛ք, երազ ու մոխիր ամենայն»[4]:

Ե. Տեմիրճիպաշյանը՝ Մահվան, Վերջի, Ոչնչի Մեծ Առեղծվածի առջև

Վերը նշված հարցադրումները, բառի բուն իմաստով, կեղեքում էին նաև Ե. Տեմիրճիպաշյանի միտքն ու հոգին: Նա նույնպես իր մտերմի՝ Ռ. Պերպերյանի նման երանի էր տալիս «երջանիկ» այն ժամանակներին, երբ խոսքեր չէին պակասում «սգաւոր մը մխիթարելու համար»: Մինչդեռ արդի մարդը «որպէս զի կարենայ մխիթարուիլ, պէտք է մխիթարուած ըլլայ»: Իսկ «ի՞նչ բան կարող է մխիթարել իննեւտասներորդ դարու մարդն»: Այս հարցին պատասխանելու համար, ըստ Եղիայի, պիտի նախ և առաջ պատասխանել նաև այն «տենդալիր հարցման», թե՝ «Ի՞նչ կայ յայնկոյս գերեզմանին»: Ըստ նրա, սակայն, ցավալի իրողությունն այն է, որ նույնիսկ արդի գիտության կարկառուն դեմքերը շփոթմունքի մեջ են: «Դեռ մօտ ժամանակներս՝ Բասդէօռ մեծ բնալոյծն, Սբէնսէր մեծ ընկերաբանին արձագանգ ըլլալով՝ որ արձագանգ էր եղած Թաղէսին ու Պիւթագորոսին,– գրում է Ե. Տեմիրճիպաշյանը,– կը հարցնէր ապշութեամբ ու մտատանջութեամբ. «Անկէ անդին ի՞նչ կայ»: Զը գիտենք …»[5]:

Մարդկային մտքի առջև ծառացող ամենախրթին այս հարցադրումների հանդեպ Ե. Տեմիրճիպաշյանը, ըստ էութեան, նույնպես կարող էր կրկնել Էմիլ Լիտրեի խոսքերը, թե՝ «Ես ի նոցանէ եմ որք կարեւորութիւն կու տան կենաց եւ կը խորհին թէ կ'արժէ լաւ գործածուիլ: Այլ մահուան վրայ ծանօթութիւն չը կրնար ունենալ կենդանի էակն. որովհետեւ երբ այն կը սկսի, ինք կ'աներեւի»[6]: *Այսպես, Ե. Տեմիրճիպաշյանը, ի վերջո, կանգ է առնում Մահվան, Վերջի, Ոչնչի Մեծ Առեղծվածի առաջ. «… կեանքն ի՞նչ է, մահն ի՞նչ է,– Հայկուհի սանուհուն՝ նրա մանկիկի մահվան առիթով գրած մխիթարական նամակում մտորում է Եղիան,– ի՞նչ է մարդն՝ որ՝ հողեղէն էակ մահկանացու՝ հրեշտակաց գոյութեան ու հոգւոյ անմահութեան գաղափարն ունեցաւ …»: Հավաստելով «միայն բանական» մարդու տգիտությունը ոչ բանական հյուլեի «հրաշալի կարողութեան» հետ, գրում է. «Այս մեր փոքրիկ երկրագունտն, որուն՝ տիեզերաց մէջ կետի մը չափ կարեւորութիւն ունենալուն՝ ուր ուրեմն համոզուեցանք, այդ փոքրիկ կետն անգամ, այո՛, մարդոյն համար անհունութիւն մ'է տակաւին. (…) դեռ մեծաւ մասամբ առեղծուած մ'է հողագունտն. ինչ թաքուն բաներ ունի, դեռ հողն ի՞նչ խորհուրդներ ունի մեր մտաց համար, զոր աստուածային կ'անուանենք. Ահաւասիկ մեր մտաց առջեւ կը կանգնի մեծ հարցական կետ մը,– փոքրիկ մանուկ մը: (…) Ի՞նչպէս ծնաւ, ի՞նչպէս մեռաւ նա …»*[7]:

Անցավորի ու անանցի, մարմնի և հոգու հարցերն է շոշափում Եղիան նաև «Առ մեծ. Եղնիկ էֆէնտի Փափազեան» գրած նամակում՝ վերջինիս «սիրելի եղբայր» և իր «սիրելի բարեկամ» Գարեգին Փափազյանի մահվան կապակ-

[4] Պ է ր պ է ր ե ա ն. 1887, 514–515:
[5] Տ է մ ի ր ճ ի պ ա շ ե ա ն. 1884, 127:
[6] Լ ի դ ռ է. 1886, 218:
[7] Տ է մ ի ր ճ ի պ ա շ ե ա ն. 1885, 95

ցութեամբ: «Կրօնք եւ դիցաբանութիւնք կը նկարագրեն մեզ այն խնկաւէտ հեշտաւէտ բնագաւառներն, ուր անթառամ ծաղկունք կը փթթին ամեն վայրկեան ու կը բուրեն յաւիտեան», գրում է նա՝ միաժամանակ հարցնելով. «Իրա՞ւ է թէ մարմինն անցաւոր է, և հոգին անանց ...»: Խնդրում է Եղնիկին, ով ունկնդրում է բնութեան ձայներին և մարդկային լեզվի թարգմանում «աղի ալեաց և աստեղալի երկնից խորհրդաւոր ձայներն», մեկնաբանել, թե «ի՛նչ կը յայտնեն այդ ձայնք խորախորհուրդ՝ կենաց ու մահուան առեղծուածներուն վրայ ...»[8]:

Որքան էլ անքննելի ու առեղծվածային, բայց Տեմիրճիպաշյանը, իհարկե, ուներ խրթնագույն այդ հարցերի ի՛ր պատասխանները, որոնք, սակայն, միշտ չէ որ ընդունվում էին նաև իր մտերիմների կամ գիտուն ու բանիմաց անձանց կողմից: Եղիան խոստովանում է, որ Կրոնական ժողովը նույնիսկ «դիտողութիւն ըրած է Արփիարեան էֆէնտիին թէ է՞ր հիւրընկալած է Հանդիսից խմբագրապետին[9] Փոշի խորագրով քերթուածն, յորում (...) հռչակած էի ամենայնի ոչնչութիւնն»: Իսկ երբ դոկտ. Արծրունու գերեզմանի վրա ևս արտասանել է «այդ մեծ բառն՝ ոչնչութիւն», իր ուսուցիչ Ներսես Վարժապետյանն ընդարձակ մի գրութեամբ «բացատրութիւն ու լոյս» է խնդրել իրենից՝ «հոգւոյ անմահութեան խնդրոյն վրայ»[10]:

Մեծ Ոչնչի իմաստասիրությունից դեպի «գերագույն հանգիստը»՝ Նիրվանա

Ե. Տեմիրճիպաշյանի տեսակետը, իհարկե, չէր հանգում Մեծ Ոչնչի իմաստասիրությանը: Այս հարցի վրա լույս է սփռում, մասնավորապես, Նուրանիա ստորագրությամբ նրա հրապարակած «Պուտտային ազդեցութիւնն», ինչպես ինքն է բնորոշում՝ «իմաստասիրական վէպ»-ը: Այդտեղից իմանում ենք, որ Տեմիրճիպաշյանը, դեռևս դպրոցական նստարանից ուսումնասիրելով Հնդկաստանի պատմությունը, լեզուն, կրոնն ու իմաստասիրությունը, թարգմանություններ կատարելով Վեդաներից, խորապես հրապուրվել է Նիրվանայի գաղափարով: Ու նրան թվացել է, թե խորախորհուրդ այդ գաղափարը՝ «Քրիստոնէութեան օրհնաւէտ օրրանին վրայէն ու Սինա լերան մշտավառ մորենւոյն ընդմէջէն», հմայելով տանում է իրեն «... հո՛ն ուր (...) երկիւղած հոգին հագագ մը միայն ունի, հառաչանք մը միայն – Նիրվանա՛»[11]: Նիրվանայի այս կարոտը Եղիայի միջոցով տարածվում էր նաև իր շրջապատի, մտերիմների մեջ, տիրում նրանց մտքերին ու հոգիներին: Բնորոշ է մանկության տարիներից նրա հոգեհարազատ բանաստեղծի՝ Հովհաննես Սեթյանի անկեղծ խոստովանությունը՝ երկարաշունչ քերթվածի տեսքով: «Է՞ր զայս հուր բոց արկիր ի կուրծս իմ, Եղիա», – բացականչում է նա. «Զի՞նչ արարիր. է՞ր, անխոհեմ դու տղայ», «Է՞ր հրպեցիր քո մատն իմ խեղճ ճակատուն // Եւ խորհրդով օծեցիր»[12]:

---

[8] *Տ է մ ի ր ճ ի պ ա շ ե ա ն. 1887, 42–43:*

[9] *Նկատի ունի իրեն՝ Ե. Տեմիրճիպաշյանին՝ «Երկրագունտ»-ի տնօրեն-խմբագրապետին:*

[10] *Ե. 1887, 227:*

[11] *Ն ո ւ ր ա ն ի ա. 1888, 236:*

[12] *Ս ե թ ե ա ն. 1887, 225:*

Հ. Սեթյանի հետ Տեմիրճիպաշյանի հոգեկան-բանաստեղծական երկխոսությունը վաղուց էր սկսվել: Ուղիղ մեկ տարի առաջ՝ 1886 թ., նույն «Երկրագունտ» հանդեսում լույս էր տեսել Հ. Սեթյանի՝ Ե. Տեմիրճիպաշյանին ձոնված «Գոհութիւն» քերթվածը, ուր դիմելով վերջինիս՝ ուղղակի հայտարարում էր.

… Ընդէ՞ր չասեմ թէ յաճախ դու ես պատճառ
Որ համակուիմ խորհուրդներով վեհ, անճառ,
Ոյց իշխան սուրբն է թախիծ:
… Ունիս բառեր որ տան՝ 'դերկա՛ր յերազել:

Եվ մի հարցում. «… Ընդէ՞ր արդեօք մեծ տրտմութիւնն ես, Եղիա՛…»[13], *որ պատճառ էր դարձել Եղիայի չափածո պատասխանին: Ե. Տեմիրճիպաշյանի «Նիրվանա» վերնագրով ծավալուն քերթվածը բացվում էր Սաքիա Մունիի՝ բուդդայական վարդապետության հիմնադրի մի բնորոշ ասույթով՝ «Հոգիս համակ լցուած է կարեկցութեամբ աշխարհի հիւանդութեան համար: Կը խնդրեմ ես դերագոյն հանգիստն, անփոփոխ բնակարանն, յաղթանակն ի վերայ ժամանակին եւ ի վերայ միջոցին»*[14]*: Եվ, քանի որ Հ. Սեթյանն իր բանաստեղծության մեջ հիշել էր իրենց մանկությունը, Եղիան ևս նախ անդրադարձ է կատարում դեպի այդ տարիները, երբ «Տըղա՛յ էի: Ծընընդավայրն իմ – այն դրա՛խտ – // Էր լի բուրմամբք, երգօք, շողիւք, սո՛ւրբ շընչովք …», երբ ժպիտն անպակաս էր իր դեմքից, «եւ հուր վառէր սեաւ յիմ աչս …»*[15]*: Ապա սկսվել են տանջալից որոնումներն անհասանելի թվացող հարցերի՝ Կյանքի ու Տիեզերքի խորհրդավոր Արարչի, ծնունդի ու մահվան, գոյության իմաստի … Փորձել է «ըզբաւ առեղծուածոցն աշխարհի» գտնել հին գրությունների, իմաստունների /«Թաղէս, Սոկրատ, Պղատոն, // Արիստոտել, Անաքսաքոր եւ Կատոն»/ մտքերի մեջ, բայց … «Ի զո՛ւր: Ոչ ոք գիտէր …»: Արևմուտքից հուսախաբված՝ դիմել է դեպի Արևելք՝ «Հըրէաստան, ի Հընդիկըս», ուր հիվանդ ու տառապալից Հոբն էր միայն, որ «Գիտեր թէ՝ ո՛ւր գընայ մարդ // Յետ իւր մահուան՝ երկիր է մութ խաւարին, // Ուստ դառնայցէ ոչ. հանգիցէ՛ յաւէտ անդ»: Եվ պաշտել է Հոբին. «Որ ինձ ուսոյց թէ բնաւից է վախճանն հող»: Այստեղից էլ նրա մեջ բույն է դրել Ոչնչի գաղափարը, որով «Մեծ ըզգայի գիս եւ հրգօր …»*[16]*:*

Նոր ճշմարտության՝ Մեծ Սիրո գաղափարը

Բայց դա դեռ ամենը չէր: Հանդիպելով Հիսուսին՝ կանգնել է մի նոր ճշմարտության՝ Մեծ Սիրո *գաղափարի քարոզի առջև, ըստ որի՝ «Սէր՝ ճշմարիտ. ա՛յլ ամենայն է ոչինչ»: Սակայն խաչված Հիսուսի ոտքերի մոտ խորհրդավոր մի ձայն դարձյալ կանչում է նրան ավելի հեռուն, ավելի բարձր ոլորտներ, ուր ամեն բան շուրջը, բնության մեջ՝ «Աղաղակեն (…) // Յանհուն ի ձայն ըզբաւն անհուն – Նիրվանա՛»: Ու թվում է՝ գտել է այն, ինչ որոնում էր տենդա-*

[13] Սեթեան. 1886, 269:
[14] Ե. 1886, 329:
[15] Ե. 1886, 330:
[16] Ե. 1886, 331–332:

գին ու թափառական՝ «զանէացո՛ւմն իմ եսին // Յանհատակ ծոց տիեզերաց անպարոյր, /.../ Զոչընչութիւնն անգիւտ, անճա՛ռ, անվախճա՛ն ...»[17]*: Այս տողերից կարելի է կարծել, թե հենց Ոչնչությունն է Տեմիրճիպաշյանի իմաստասիրության միջուկն ու էությունը: Մինչդեռ քերթվածը դեռ չի ավարտվել. Սիտտարթա – բուդդայի և «չքնաղագեղ Եազօտարայ» պատմությունը շարունակվում է. « ... արբշիռ սիրով, երգօք ու խընկօք» ննջող Սիտտարթան հանկարծ զարթնում է «ընդոստ. տըրտո՛ւմ ընդմիշտ», ծանր հոգոցով: Եվ «արեգածին» կնոջ մտահոգ հարցին՝ «Զի՞նչ պակասի իշխանին», պատասխանում է կարճ ու դիպուկ մի բառով՝ «Զը գիտե՛մ»: Եվ հենց սա՛ է նաև Եղիայի բուն պատասխանը Հ. Սեթյանին.*

... Գիշերախառն, Յովհա՛ն, ի ձայնդ յարուցեալ,
Ցը մա՛հ տըրտում, պատասխան տամ. «Զը գիտե՛մ»[18]:

Եվ ահա մեկ տարի անց՝ 1887 թ., նույն «Նիրվանա» վերնագրված Հ. Սեթյանի քերթվածին Եղիան պատասխանում է մեկ այլ չափածոյով, որի խորագիրը՝ «Բանաստեղծութիւն»[19]*, առաջին հայացքից չեզոք էր թվում քննարկվող խրթին հարցերի տեսակետից, սակայն, ըստ էության, պարունակում էր նաև (վերը նշված) Հարցի նոր պատասխանը՝ խտացված վերջին տան տողերում.*

... Ե՛ւ քո, Յովհա՛ն, եւ քո՛ մայրն է Քերթուութիւն,
Որ եւ մայրն իմ: Եղբարք եմք մեք համածնող:
Մեր ճակատն, ո՛հ, մերթ ողողէ մըթութիւն,
Այլ է հոգին մեր յաւիտեան լուսողող:
Մեր նո՛յն է սէր. աչք մեր ի նո՛յն կէտ յառին.
Տաղք մեր են մութ, այլ հրոչակեն ըղբարի՛ն[20]:

Ահա և հոգու էության Եղիայի դիպուկ բնորոշումը. «... բիւրեղ մ'է հոգին, որ երկնային ճաճանչէ մը կը գունաւորի, որ սիրային շունչէ մը կ'որորի, ուր կ'անդրադառնան եթերին թրթռմունք, ուր արձագանգ կը գտնեն բնութեան բիւր ներդաշնակութիւնք»[21]*: Նուրանիան վկայում է նաև հոգու նյութական էությունը. «Բան մ'որ շարժեմ, հոգիս ալ միասին կը շարժի,– գրում է նա,– ինչ որ աննիւթ կը նկատենք, հոգին, զայն յիս, այո՛, կը զգամ շարժիլ ...»*[22]*:*

---

[17] *Ե. 1886, 334:*

[18] *Ե. 1886, 334–335:*

[19] *Ե. 1887, 349–350: «Ընթերցողք կը յիշեն Գոհութիւն վերնագրեալ ա՛յն գեղեցիկ բանաստեղծութիւն, զոր անցեալում Հանդիսիս մէջ ինձ ուղղեց ազգային առաջին բանաստեղծներէն Յովհաննէս էֆէնտի Սեթեան: Ի պատասխանի գրած տաղերէս մին՝ Նիրվանան՝ անցեալ տարի հրատարակեցի. միւսն ալ այսօր կուտամ ի հրատարակութիւն՝ Սեթեան էֆէնտիի վերջին վսեմ քերթուածոյն առթիւ» (տե՛ս Ե. 1887, 349):*

[20] *Ե. 1887, 350:*

[21] *Ե. 1888, 469:*

[22] *Ն ո ւ ր ա ն ի ա. 1888, 463:*

Շարժում՝ պարզից դեպի բարդը, ծանոթից դեպի անծանոթը

Այդպես, պարզից դեպի բարդը, ծանոթից դեպի անծանոթը, մակերեսից դեպի խորքն անկասելի ու անվերջանալի ընթացքի մեջ մարդու էությունն ու հոգին, ի վերջո, հասնում են գերբնական մի վիճակի, ուր «Մարդս ա՛յնքան կը վսեմանայ, ո՛րքան խորհուրդն՝ որ զայն կը պակուցանէ՝ կը մեծանայ»: Այդ մակարդակում այլևս, ըստ Ե. Տեմիրճիպաշյանի, «մեր խօսքն ներդաշնակութիւն մ'է, մեր աչքն անհունութիւն մ'է, երբ մեր միտքն՝ էութեան գերագոյն խնդիրն յուզէ»[23]*: Դա այն վիճակն է, ըստ Հակոբ Օշականի, «բացառիկ այն հոգեհարդարումը, ջիղերը լարելու, հանդերձելու այն կերպը, որով կարգ մը մարդիկ երկինքը ու յարակից լրութիւնները, զգայութիւնները, անդրադարձները կ'իրացնեն …»: Այլ խոսքով՝ «հանդէս մը զգայութիւններու (գրեթէ ֆիզիք), ուր այդ մարդոց հոգիի աչքերը կը տեսնեն մեզի անհաս ձեւեր, պատկերներ: Դէպի զգայախաբական տեսիլքները և անոնց իրականութեան տեղ ամրանալը՝ մէկ է ճամբան հանճարին, ինչ-պէս յիմարին համար (ընդգծումը մերն է – Պ. Դ.)»*[24]*: Երկու վիթխարի ծայրակետերի միացման կենտրոնում լինելու պարագան չեչտում էին նաև Եղիայի ժամանակակիցները: Գրիգոր Զոհրապը գրում էր. «Այն բարձանց վրայ կամ այն անդունդներուն մէջ ուր ներեալ է Եղիային խոյանալ կամ գահավիժիլ, վհուկ մը կամ վարդապետ մը ըլլայ պէտք է և Եղիան երկուքն ալ է միանգամայն (ընդգծումը մերն է – Պ. Դ.)»*[25]*: Կարևոր է նաև այն եզրահանգումը, որն անում է արձակագիր, լրագրող Մկրտիչ Շահնազարը. «Իրմէ զատ իր գաղափարները չդաւանող մին երբ տեսնուէր այդ վիճակին մէջ,– գրում է նա,– չպիտի վարանէինք անտարակոյս անուանել զայն յիմար, այլ Եղիայի մասին ի՞նչ կայ անբնական (ընդգծումը մերն է – Պ. Դ.)»*[26]*:*

Ե. Տեմիրճիպաշյանի իմաստասիրական հայացքների գնահատության ընթացքը

Այնուամենայնիվ, ժամանակակիցներն ու հետագա հետազոտողները միշտ չէ, որ ամբողջության մեջ իրավացի կամ արդարացի էին Տեմիրճիպաշյանի իմաստասիրական հայացքների և, ավելի ընդհանուր, նրա ստեղծագործական անհատականության էության ամբողջական գնահատության հարցում: «Զեմ գիտեր թէ քերթող Տէմիրճիպաշեան՝ Նիրվանա ըսելով, ի՛նչ է հասկցած, իր հիացումները միշտ մեկնութեան կարօտ են»[27]*,– գրում է Հ. Սիմեր – Երեմյանը: Մինաս Չերազի կարծիքով՝ «Լիդռէի տաղանդը կրցաւ պահ մը հակազդել, /…/ Գրական դպրոցի այդ իմաստասէրին ազդեցութիւնը Ազատախոհեան ըրաւ զայն ու ծնունդ տուաւ Փիլիսոփայական Բառարանին ու Գրական եւ Իմաստասիրական Շարժումին: Սակայն Պուտտայի Նիրվանային ներգործութիւնը աւելի հզօր եղաւ յեղյեղուկ նկարագրին վրայ»*[28]*:*

---

[23] Տ է մ ի ր ճ ի պ ա շ ե ա ն. 1887, 44:
[24] Օ շ ա կ ա ն. 1980, 44–45:
[25] Զ օ հ ր ա պ. 1892, թիւ 124:
[26] Շ ա հ ն ա զ ա ր. 1891, թիւ 2190:
[27] Ե ր ե մ ե ա ն. 1913, 32:
[28] Չ ե ր ա զ. 1929, 30:

Սակայն պետք է նկատել, որ ժամանակի հետ գնահատականներն ավելի ու ավելի հավասարակշռված են դառնում՝ առավելագույնս մոտենալով Ե. Տեմիրճիպաշյանի՝ նման բարդ և խոր անհատականության էության բուն ընկալմանն ու մեկնաբանմանը: Նորագույն հետազոտողներից Ալբերտ Կոստանյանը, տասնամյակներ անց, այն համոզմունքն էր հայտնում, թե «Եղիան գիտնական փիլիսոփա չէ, այլ իմաստասեր է, բառի հայկական ու նախնական իմաստով: (...) Եղիայի փառքը չի կազմում այս կամ այն գրքային փիլիսոփայական ըմբռնման հետևելը»[29]: Ստեփան Թոփչյանը, նույնպես փորձելով ի մի բերել գրեթե մեկ դարի ընթացքում Տեմիրճիպաշյանի մտածողությանը տրված բազմազան, հաճախ իրարամերժ գնահատականները, նկատում է. «Տեմիրճիպաշյանը հայ մշակույթի պատմության մեջ ներկայացվել է իբրև ամենահակասական մտածողներից մեկը, էկլեկտիկ», սակայն, գրականագետի համոզմամբ, «համենայն դեպս ամեն տեսակ հակասությունների մեջ կա մի միասնություն և հետևողականություն (ընդգծումը մերն է – Պ. Դ.)»[30]: Ինչ վերաբերում է Նիրվանային, ապա Ստ. Թոփչյանն այս հարցում ևս, մեր կարծիքով, իրավացիորեն գտնում է, որ «Տեմիրճիպաշյանը Նիրվանան չէր շփոթում ոչնչի հետ: Նիրվանայի գաղափարը բարձրագույն հարմոնիայի հասնելու միջոց է նրա ըմբռնումով, «անդրաշխարհային մեղեդի», որ մարդկային ոչ մի նվագով հնարավոր չէ արտահայտել»[31]:

Ինքը՝ Եղիան, չէր թաքցնում իր հոգեկան որոնումների էությունը, որի արդյունքը դեռևս մշուշոտ էր նաև իր համար: Բոլոր տեսակի՝ նույնիսկ մինչև հոգու խորքը խոցող ու վիրավորական քննադատություններից և թյուրատեսական մեկնաբանություններից նա փորձում էր պաշտպանվել ամենաանմեղ միջոցներով՝ դիմելով մինչև անգամ ինքնաքննությամբ ինքնարդարացման եղանակին: «Եթէ նոր սերունդն,– գրում է նա,– որ Եւրոպացի յոռետես հեղինակաց ծանօթանալէ յառաջ զիս կարդաց եւ զիս լսեց, օր մ՚ամբաստանէ զիս եւ անիծէ, անձինս արդարացման համար պիտի կրնամ ըսել երկու բան, զորս այժմէն իսկ կ՚ըսեմ ահա»[32]: Հետագա շարադրանքի մեջ նա հավաստում է, որ նախ՝ հոռետեսության հետևելու հակումը իր մեջ չի ձևավորվել իր կամքով ու գիտակցական ընտրությամբ: Պարզապես «բնական տրամադրութիւն մը կամ՝ աւելի գիտական բառով՝ իմ խառնուածքս, իմ կազմուածքս զիս մղեց՝ գրագիտաց, բանաստեղծից եւ իմաստասիրաց մէջէն ընտրել յոռետեսներն ...»: Երկրորդ փաստարկն այն էր, թե «յոռետեսութիւնն յառաջացեալ եւ յառաջացուցիչ վարդապետութիւն մ՚է»: Եղիան մեկնաբանում է, թե միայն լավատեսությամբ միտքը միակողմանի, միօրինակ է զարգանում, ահա թե ինչու, «Պարզ աչաց ներքեւ, ոյք կը տեսնեն իրաց մակերեւոյթն, իրաց գուարթ կերպարանքն», բնությունը դրել է նաև «ներքին աչք մը խորատես, որ կը թափանցէ իրաց վերօթեաց, վրիպուկ, անտեսանելի կողմն. ի մի բան՝ լաւատես աչաց ներքեւ դրած է բնութիւնն յոռետես աչքն (ընդգծումը մերն է – Պ. Դ.)»: Հետևապես, հոռետեսությունը՝ «առաւել քան զլաւատեսութիւն», նպաստում է մտավոր զարգացմանը, քանզի նրա աղբյուրը «զգայնութեան կամ մանա-

[29] Կ ո ս տ ա ն յ ա ն. 2004, 90:
[30] Թ ո փ չ յ ա ն. 1987, 21–22:
[31] Թ ո փ չ յ ա ն. 1987, 57:
[32] Ե. 1888, 490–491:

ւանդ նրբազգայութեան մէջ է»: Այդպիսով, եզրակացությունն այն էր, թե նախ՝ «յոռետեսութիւնն ի ընութեան իսկ է», և ապա՝ «յոռետեսութիւնն ոչ է դժիսեմ դուստրն իննեւտասներորդ դարուն, որ սնոյց այլ ոչ ծնոյց զայն»:

Վերջապես, այդ ամենն ամենևին չէր հակասում Տեմիրճիպաշյանի կողմից միանգամայն ընդունելի զարգացման բարեշրջային սկզբունքին, որը, իր հերթին, հիմնված էր դիալեկտիկական հակադրամիասնության օրենքի վրա, այն է՝ «Լաւատեսութենէ Յոռետեսութիւն կ'երթանք, Յոռետեսութենէ Լաւատեսութիւն պիտի վերադառնանք»[33]:

Եզրակացություն

Այսպիսով, XIX դ. վերջին քառորդին Եղիա Տեմիրճիպաշյանի մտածողության համակարգում արտահայտվող «Գոյության Առեղծվածի» խնդրի քննությունը բերում է այն համոզման, որ նա, թեև դիմել է հնդկական Վեդաներում ավանդված Նիրվանայի գաղափարին, սակայն, ի վերջո, հանգել է ոչ թե, այսպես կոչված, Մեծ Ոչնչի, այլ՝ քրիստոնեական Մեծ Սիրո ճշմարտության, ըստ որի՝ «Սէր՝ ճշմարիտ. ա՛յլ ամենայն է ոչինչ»: Իրողություն, որը հաստատվում է նաև Ե. Տեմիրճիպաշյանի իմաստասիրական հայացքների, ստեղծագործական վաստակի գնահատության ընթացքի վերլուծությամբ:

Պետրոս Դեմիրճյան – բ. գ. դ., ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի Հայ նոր գրականության բաժնի առաջատար գիտաշխատող, Հայաստանի գրողների միության վարչության քարտուղար: Գիտական հետաքրքրությունը՝ դասական և ժամանակակից գրականություն: Հեղինակ է 3 մենագրության, գրականագիտական և գրաքննադատական բազմաթիվ հոդվածների: pdemirchyan@mail.ru

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Այվազեան Ե. 1887, Հոգւոյ անմահութիւն.– «Երկրագունտ» (Կ. Պոլիս), թիւ 3–4, էջ 101–105:

Ե. 1886, Նիրվանա. Պատասխան առ Յովհաննէս Սեթեան.– «Երկրագունտ», թիւ 7, էջ 329 – 335:

Ե. 1887, Բանաստեղծութիւն. Առ Յովհաննէս Սեթեան.– «Երկրագունտ», թիւ 7–8, էջ 349–350:

Ե. 1887, Եկեղեցական բարեկարգություն. – «Երկրագունտ», թիւ 5–6, էջ 227:

Ե. 1888, Սփոփանք ռամկին.– «Երկրագունտ», թիւ 10, էջ 468–474:

Ե. 1888, Յոռետեսութիւնն ի գաւառս.– «Երկրագունտ», թիւ 11, էջ 490–491:

Երեմեան Ս. 1913, Եղիա Տէմիրճիպաշեան.– Վենետիկ, տպագր. Ս. Ղազար, 1–10 շարքեր, շարք 4-րդ, 484 էջ:

Զօհրապ Գր. 1892, Եղիա Տէմիրճիպաշեան.– «Բիւզանդիոն» (Կ. Պոլիս), թիւ 124:

Թոփչյան Ստ. 1987, Կերպ և իսկություն, Երևան, «Սովետական գրող» հրատ., 487 էջ:

Լիդռէ է. 1886, Կեանք եւ մահ.– «Գրական եւ Իմաստասիրական Շարժում», տետր երկոտասաներորդ, Կ. Պոլիս, տպագր. Պաղտատլեան (Արամեան), էջ 218:

[33] *Տ է մ ի ր ճ ի պ ա շ ե ա ն. 1891, 40:*

Կոստանյան Ա. 2004, Բացարձակի որոնումը, Երևան, «Սարգիս Խաչենց», հրատ., 804 էջ:

Նուրանիա. 1888, Պուտտային ազդեցութիւնն.– «Երկրագունտ», թիւ 5, էջ 233–238:

Նուրանիա. 1888, Պուտտային ազդեցութիւնն. – «Երկրագունտ», թիւ 10, էջ 462–468:

Շահնազար Մ. 1891, Եղիա Տէմիրճիպաշեան ի Գատըգիւղ.– «Արեւելք» (Կ. Պոլիս), տպագր. «Արեւելք լրագրոյ», թիւ 2190:

Չերազ Մ. 1929, Կենսագրական միւսիոններ. – «Ամբողջական երկեր», թիւ Գ, Փարիզ, Օշական հրատ., 74 էջ:

Պէրպէրեան Ռ. 1887, Գալուստ Տէմիրճիպաշեան.– «Երկրագունտ», թիւ 11–12, էջ 514–515:

Սեթեան Յ. 1886, Գոհութիւն.– «Երկրագունտ», թիւ 6, էջ 268–270:

Սեթեան Յ. 1887, Նիրվանա.– «Երկրագունտ», թիւ 5–6, էջ 222–226:

Տէմիրճիպաշեան Ե. 1884, Առ որդեկորոյս հայրն Տ. Հովհաննէս աւագ քահ. Մկրեան.– «Գրական եւ Իմաստասիրական Շարժում», տետր յոթներորդ, Կ. Պոլիս, էջ 127:

Տէմիրճիպաշեան Ե. 1885, Մարդ եւ մահ (Թուղթ առ սանուհին).– «Երկրագունտ», թիւ 2, էջ 93–96:

Տէմիրճիպաշեան Ե. 1887, Գարեգին էֆէնտի Փափազեան.– «Երկրագունտ», թիւ 1–2, էջ 41–45:

Տէմիրճիպաշեան Ե. 1891, Տարերք Պատմութեան Իմաստասիրութեան, Կ. Պոլիս, տպագր. Գ. Պաղտատլեան, 40 էջ:

Օշական Յ. 1980, Համապատկեր արեւմտահայ գրականութեան, հ. 8, Անթիլիաս (Լիբանան), հրատ. Կաթողիկոսութիւն Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, 506 էջ:

Օտեան Գր. 1888, Իմաստասիրութիւն մահուան.– «Երկրագունտ», թիւ 6, էջ 241:

ПРОБЛЕМА ЗАГАДКИ БЫТИЯ В СИСТЕМЕ МЫШЛЕНИЯ ЕГИИ ТЕМИРЧИПАШЯНА

ПЕТРОС ДЕМИРЧЯН

Резюме

Ключевые слова: Егия Темирчипашян, материя, душа, жизнь, смерть, любовь, бытие, простое, сложное, загадка, Нирвана

В активный период деятельности Егии Темирчипашяна (1851–1908), в последней четверти XIX века, загадки бытия: вопросы материи – души, жизни, смерти и бессмертия, постоянно обсуждались тогдашней литературно–научно–философской мыслью. Упомянутые вопросы буквально угнетали также разум и душу Егии Темирчипашяна. В конце концов, он останавливается перед тайной Смерти, Конца, Огромного Ничто. Точка зрения Е. Темирчипашяна, конечно, не сводилась к философии этого Огромного Ничто. На этот вопрос проливает свет, в частности, изданный под

псевдонимом Нурания, по определению самого автора, его философский роман «Влияние Бутты». Оттуда узнаем, что он, еще со школьной скамьи, изучая индийскую историю, язык, религию и философию, был глубоко увлечен идеей Нирваны. Потом начались мучительные поиски смысла бытия… Он пытался найти ответы на тайны мира в древних писаниях, в мыслях мудрецов Запада и Востока, но тщетно: «Никто не знал». В конце концов, встретив Иисуса, он столкнулся с новой истиной, проповедью идеи Великой Любви, согласно которой «Истинная любовь есть все …». Таким образом, по Темирчипашяну, в неудержимом и бесконечном процессе от простого к сложному, от поверхности к глубине, человеческая сущность и душа достигают сверхъестественного состояния, где «Человек настолько становится величавым, насколько тайна, устрашающая его, возрастает».

Петрос Демирчян – д. филол. н., ведущий научный сотрудник отдела новой армянской литературы Института литературы им. М. Абегяна НАН РА, секретарь правления Союза писателей Армении. Научные интересы: классическая и современная литература. Автор 3 монографий, многочисленных литературоведческих и литературно-критических статей.
pdemirchyan@mail.ru

THE PROBLEM OF THE MYSTERY OF EXISTENCE IN THE THINKING SYSTEM OF YEGHIA TEMIRCHIPASHYAN

PETROS DEMIRCHYAN

S u m m a r y

Keywords: Yeghia Temirchipashyan, matter, soul, life, death, love, existence, simple, complex, mystery, Nirvana

During the active period of Yeghia Temirchipashyan's activity (1851-1908), in the last quarter of the 19th century, the mysteries of existence: the issues of matter and soul, life, death and immortality were the subject of permanent discussions of the literary, scientific and philosophical thought of the time. The mentioned questions in the true sense of the word were oppressing Yeghia Temirchipashyan's mind and soul. In the end, he stops before the Mystery of Death, the End, the Mystery of Nothing. Yeghia Temirchipashyan's point of view, of course, did not end with the wisdom of the Great Nothing. Particularly, his work "The influence of the Buddha", published under the name Nuria and defined as philosophical novel by the author himself, sheds light on this issue. From this we learn that he was deeply fascinated by the idea of Nirvana while studying Indian history, language, religion and philosophy at school. Then the torturous search for the meaning of existence began… He tried to find the answers to the

mysteries of the world in the ancient writings, in the minds of the wise men of the West and the East, but in vain. “Nobody knew”. Eventually, meeting Jesus, he faced a new truth, the preaching of the idea of the Great Love, according to which “True love is everything”. Thus, according to Temirchipashyan, in an unstoppable and endless process from the simple to the complex, from the surface to the depths, the essence and soul of a human reaches a supernatural state, where “The human becomes as majestic as the mystery, that frightens him, grows”.

Petros Demirchyan – Doctor of Philological Science,. Leading Researcher at the Department of Modern Armenian Literature of the Institute of Literature after M. Abeghian of NAS RA, Executive Secretary at Writer’ Union of Armenia. Scientific interests: classical and modern literature. Author of 3 monographs, numerous literary and literary-critical articles.
pdemirchyan@mail.ru

ՀՏԴ : 929:947.925 Տեր-Դանիելյան (Դավիթ Անանուն)+891.981 (Թումանյան)

Doi:10.54503/0135-0536-2023.2-175

ԴԱՎԻԹ ԱՆԱՆՈՒՆ ԵՎ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆ. ԳՐԱԿԱՆ-ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐ*

ԱՆՈՒՇԱՎԱՆ ԶԱՔԱՐՅԱՆ

Բանալի բառեր՝ Դ. Անանուն, Հովհ. Թումանյան, նամակներ, Հայ գրողների կովկասյան ընկերություն, «Մշակ» թերթ, հոդվածներ, Քննիչ հանձնաժողով, «Հայաստանի կոոպերացիա» երկշաբաթաթերթ, քառյակներ:

Նախաբան

Պատմաբան-տնտեսագետ, փիլիսոփա-սոցիոլոգ, հրապարակագիր-խմբագիր, գրականագետ, միով բանիվ հայագետ Դավիթ Անանունը [Դավիթ Օհանի (Հովհաննեսի) Տեր-Դանիելյան, 1880–1943] XX դարի առաջին երեսնամյակի հայ հասարակական-քաղաքական, գրական-մշակութային կյանքի կարևոր դեմքերից է: Իր բազմաբովանդակ գործունեության ընթացքում նա շփվել, համագործակցել, սերտ կապեր է ունեցել ժամանակի հայ իրականության բազմաթիվ դեմքերի հետ[1], մասնավորապես՝ առանձնահատուկ հետաքրքրություն են ներկայացնում նրա գրական-հասարակական առնչությունները Ամենայն հայոց բանաստեղծ Հովհաննես Թումանյանի հետ:

Թումանյանն Անանունի գրական հետաքրքրությունների համատեքստում (1911–1913 թթ.)

Մեզ հայտնի չէ, թե երբ, ինչ պայմաններում են ծանոթացել Դավիթ Անանունը և Հովհաննես Թումանյանը: Միայն գիտենք, որ Անանունը Թումանյանին և նրա ստեղծագործությանն առաջին անգամ անդրադարձել է «Անցյալի մեծարանքը (Հովհ. Թումանյանի քնարը)» վերնագրով հոդվածում: Դրա մասին ահա թե ինչ է գրում նա 1911 թ. հոկտեմբերի 14-ին Բաքվից Մոսկվա՝ գրական-հասարակական և մշակութային գործիչ, արձակագիր, դրամատուրգ, թարգմանիչ, «Գարուն» գրական-քննադատական ալմանախի խմբա-

---

* *Ներկայացվել է 18. IV. 2023 թ., գրախոսվել է 26. V. 2023 թ., ընդունվել է տպագրության 19. VI. 2023 թ.: Հոդվածը որպես զեկուցում ընթերցվել է 2023 թ. ապրիլի 12–14-ին ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվ. գրականության ինստիտուտի, Երևանի պետական համալսարանի, Հովհ. Թումանյանի թանգարանի, Հայաստանի գրողների միության կազմակերպած՝ Ամենայն հայոց բանաստեղծ Հովհ. Թումանյանի մահվան 100-րդ տարելիցին և հիշատակի ոգեկոչմանը նվիրված հանրապետական գիտաժողովում:*

[1] *Տե՛ս* Աբրահամյան. 2001, 198–213, Զաքարյան. 2010 ա, 245–252, Զաքարյան. 2020 ա, 90–127, Զաքարյան. 2020 բ, 430–436, Զաքարյան. 2023 ա, 207–246, Զաքարյան. 2023 բ, 106–113, Հակոբյան. 2012, 123–135, Հակոբյան. 2020, Հակոբյան. 2021, 206–218 և այլն:*

գրակազմի անդամ Կ. Միքայելյանին. «Սիրելի Կարեն! // Ստացա այսօր նամակդ և շտապում եմ պատասխանելու: // Հովհ. Թումանյանի մասին ես պատրաստել էի հոդված մեր ամսագրի[2] համար, որ պիտի անպայման հրատարակենք նոյեմբերից, բայց ստանալով քո նամակը՝ ես հոդվածս[3] ուղարկում եմ քեզ: ... Զգիտեմ «Գարունի» խմբագիրներին[4] որքան պիտի ախորժ թվա իմ գրելու և դատելու եղանակը: Մենք այնքան քիչ առիթ են<ք> ունենում տպելու մեր խոհերը, որ երբ առիթ է լինում արտահայտվելու, ապա ջանում ենք շատ բան ասել նվազ էջերում: Դա հայ մարքսիստների թերությունն է ընդհանրապես և իմը մասնավորապես: Օրինակ, ներկա դեպքում իմ Հովհ. Թումանյանին նվիրած հոդվածում կա մի գլուխ «Գյուղի քարոզը»[5], որը կարելի էր այլ կերպ խմբագրել, բայց, կրկնում եմ, նպատակահարմարությունը և արտահայտվելու տենչը ինձ դրդեցին գրել այնպես, ինչպես որ նա կա:

Այդ հոդվածը ես քեզ ուղարկում եմ որպես սևագրություն: Դրա սպիտակագրության օրինակը չունեմ: Իմ ձեռքը դյուրընթեռնելի է, և Դուք դժվարության չեք հանդիպիլ: Հոդվածս բաղկացած է 5 թերթից ... Եթե «Գարունը» չընդունի, խնդրում եմ անմիջապես հետ ուղարկել, որ նա հասնի մեր թերթին: Եթե կան ձեր ականջին անախորժ էպիտետներ, ապա խնդրում եմ այդ մասին խմբագրական նկատողություն անեք և ոչ թե ջնջեք»[6]:

Հոդվածն ընդունվում և տպագրվում է «Գարուն» գրական-քննադատական ալմանախում[7]: Նյութի հիմնական դրույթն այն էր, թե Թումանյանը

---

[2] *Ամենայն հավանականությամբ, նկատի ունի «Նոր կյանք» (Բաքու, 1911–1912) գրական, հասարակական և քաղաքական երկշաբաթաթերթը, որի խմբագիր-հրատարակիչն էր՝ «Դավիթ Տեր-Դանիելյան» ստորագրությամբ:*

[3] *Խոսքն «Անցյալի մեծարանքը (Հովհաննես Թումանյանի քնարը)» վերնագրով հոդվածի մասին է:*

[4] *«Գարուն» գրական-գեղարվեստական, ապա գրական-քննադատական ալմանախը 3 գրքով լույս է տեսել Մոսկվայում 1910–1912 թթ.: Մոսկվայի գրական խմբակի հրատարակություն, խմբագրակազմ Վ. Տերյան, Ա. Ծատուրյան, Ց. Խանզադյան, Պ. Մակինցյան, Կ. Միքայելյան, Կ. Կուսիկյան, Ա. Մյասնիկյան և ուրիշներ: Ալմանախի տիտղոսաթերթը ձևավորել է Մ. Սարյանը:*

[5] *Սա եռամաս հոդվածի առաջին գլուխն է. հաջորդներն են՝ «Հայրենի գյուղը» և «Հովհ. Թումանյանի քնարի հմայքը»:*

[6] *Հայաստանի Հանրապետության գրականության և արվեստի թանգարան (այսուհետ՝ ԳԱԹ), Կ. Միքայելյանի ֆ., թիվ 732, 2 թ.: Ինքնագիր: Տե՛ս նաև Զ ա ք ա ր յ ա ն. 2023 ա, 208–209:*

[7] *Տե՛ս «Գարուն» (Մոսկվա), 1912, գիրք III, 99–128: Հմմտ. Հովհաննես Թումանյանը ժամանակի գրաքննադատական մտքի գնահատությամբ (1890–1913). 2019, 354–371: Ի դեպ, Թումանյանի մասին «Գարուն»-ի այս ժողովածուում տպագրված հոդվածները, այդ շարքում նաև Անանունի նյութն արժանացել է թե՛ դրական և թե՛ բացասական արձագանքների (այդ մասին մանրամասն տե՛ս «Հովհաննես Թումանյան. հանրագիտարան». 2020, 764–765): Մասնավորապես, սուր քննադատության է ենթարկվել մանկավարժ Մարտիրոս Հարությունյանի «Դասակարգային արշինը գեղարվեստական քննադատության մեջ» վերնագրով հոդվածում [«Հորիզոն» (Թիֆլիս), 07, 08. IX. 1912]: Ինչպես նկատվել է, «Հոդվածագիրը իրավացիորեն շեշտում էր, որ թե՛ գրողը, թե՛ քննադատը կարող են ունենալ քաղաքական այս կամ այն դավանանքը, դա նրանց իրավունքն է, բայց «գեղարվեստը և պրոպագանդը պիտի իրարից զանազանել» ...: Նա (Մարտ. Հարությունյանը – Ա. Զ.) անտեղի է համարում անվերջ Մարքսից քաղվածքներ անելը, ամեն տեղ բուրժուական, մանր բուրժուական կամ մեչչանական հայացքներ որո-*

«հայկական առանձնահատկության բանաստեղծ» է, որը պատկերել ու մեծարել է «ժողովրդի այսպես ասած ջահել հասակը»՝ նահապետական գյուղի իրականությունը[8]:

Այս հոդվածի հիմնական դրույթներով 1913 թ. ապրիլի 6-ին Դ. Անանունը Բաքվի գրական-գեղարվեստական ակումբում դասախոսություն է կարդում[9]: Հոդվածն ու դասախոսությունն արժանանում են քննադատ Սիմեոն Հակոբյանի[10] ու մանավանդ «Գրասեր» ստորագրությամբ հանդես եկող գրաքննադատ, թարգմանիչ Յոլակ Խանզադյանի «Գրական թյուրիմացություն» վերնագրով սուր քննադատությանը[11]: Վերջինիս Դ. Անանունը պատասխանում է «Անառագաստ և անղեկ» վերնագրով հոդվածով[12]: Բանավեճին միջամտում է գրաքննադատ Հարություն Սուրխաթյանը՝ պաշտպանելով Դ. Անանունին[13]: Յ. Խանզադյանը (դարձյալ «Գրասեր» ստորագրությամբ) վերջիններիս պատասխանում է «Գրական քննադատությունը» վերնագրով երկմասանոց հոդվածով[14]: Բանավեճը շարունակվում է. Դ. Անանունն անմիջապես արձագանքում է՝ «Գրական շամանիզմ (վերջին խոսքս Գրասերին)» վերնագրով հոդվածով[15]: Զծավալվելով՝ նշենք. հետագայում բանավեճին[16] անդրադարձել են անվանի գրականագետներ: Այսպես, Էդ. Ջրբաշյանը մի քանի տողով ներկայացրել է այն, ապա մանրամասն շարադրել իր կարծիքը խնդրո առարկա հարցի վերաբերյալ: Ուշագրավ դիտարկումներ ունի նաև Ս. Սարինյանը[17]:

նելը և դրանք գեղարվեստական ստեղծագործության չափանիշ դարձնելը» (Քալանթարյան. 2020–1, 258–259): Հավելենք՝ «Մտքի փիղ» հոդվածագրին՝ Մարտ. Հարությունյանին, Դ. Անանունը պատասխանել է «Պարծենկոտ շաղակրատը (իմ պատասխանը «Հորիզոնի» քննադատին)» հոդվածով [տե՛ս «Մշակ» (Թիֆլիս), 26. IX. 1912]:

[8] «Գարուն», 1912, գիրք III, 99, 126:

[9] Տե՛ս «Բաքվի ձայն», 09. IV. 1913:

[10] «Բաքվի ձայն», 09. IV. 1913:

[11] Տե՛ս «Բաքվի ձայն», 18, 21. IV. 1913: Թումանյանագետ Ե. Մնացականյանը գրում է, որ Յ. Խանզադյանի այս հոդվածը «Նվիրված է Դավիթ Տեր-Դանիելյանի (Անանուն)՝ 1913 թ. ապրիլի 6-ին Բաքվի գրական-գեղարվեստական ակումբում կարդացած դասախոսությանը» [Հովհաննես Թումանյանը ժամանակի գրաքննադատական մտքի գնահատությամբ (1890–1913). 2019, 641]:

[12] «Բաքվի ձայն», 26. IV. 1913:

[13] Սուրխաթյան. Դարձյալ գրական քննադատության առիթով.– «Մշակ», 15, 16. V. 1913:

[14] «Բաքվի ձայն», 19. V. 1913, 02. VI. 1913:

[15] «Բաքվի ձայն», 05. VI. 1913:

[16] Ե. Մնացականյանը մանրամասն ներկայացրել է Անանունի հոդվածի տպագրությունից հետո ծավալված բանավեճը (Մնացականյան. 2016, 159–172) և բանավիճող կողմերի հոդվածները ներառել է իր կազմած «Հովհաննես Թումանյանը ժամանակի գրաքննադատական մտքի գնահատությամբ (1890–1913)» վերնագրով վերը նշված ժողովածուում:

[17] Տե՛ս Ջրբաշյան. 1964, 83–95, Ջրբաշյան. 1979, 39, Ջրբաշյան. 1982, 102–103, Սարինյան. 1989, 186: Բանավեճի մասին նաև տե՛ս Քալանթարյան. 2020–1, 260–263, Մնացականյան. 2020, 763–765: Ի դեպ, վերջինս գրում է. «Թ<ումանյանը> ոչ մի անգամ, ոչ մի ակնարկով չի հիշել այս բանավեճի մասին: Միայն դատեր՝ Նվարդի հետ զրույցներում երբեմն նկատել է, որ

1912 թ. դեկտեմբերի 6-ին Դ. Անանունը («Դ. Տեր-Դանիելյան» ստորագրությամբ) Բալախանից նամակ է գրում Հովհ. Թումանյանին, որում «Ցանկություն է հայտնում անդամագրվել Հայ գրողների կովկասյան ընկերությանը: Ներկայացնում է մամուլում և առանձին հրատարակությամբ լույս տեսած իր գործերը և կեղծանունները (Արամայիս, Ա-ս, Այիս, Արամ, Մասիս, Մարատ, Մայիս, Մ, Ա, Դ և այլն)»[18]:

Դ. Անանունի ծավալած գրական-գրաքննադատական-հրապարակախոսական, թարգմանական բեղուն գործունեությունը[19] չէր կարող անուշադրության մատնվել և շուտով ստանում է արժանի գնահատություն: 1913 թ. հունվարի 17-ին Հայ գրողների կովկասյան ընկերության (ՀԳԿԸ) վարչության նախագահ Հովհ. Թումանյանը և անդամ-քարտուղար Գյուտ քահ. Աղանյանը նրան տեղեկացնում են. «Մեծարգո պ. Դավիթ Տեր-Դանիելյան, // Վարչությունս սրանով հայտնում է Ձեզ, որ Ընկերությանս ընդհանուր ժողովը, համաձայն իր կանոնադրության 4-րդ հոդվածի, գաղտնի քվեարկությամբ ընտրեց Ձեզ Ընկերության անդամ»[20]:

Ի դեպ, Հայ գրողների կովկասյան ընկերությունը մտադիր է եղել բաժանմունք բացել նաև Բաքվում: Այս առումով ուշադրության է արժանի Հովհ. Թումանյանի 1913 թ. փետրվարի 12-ի նամակը Դ. Անանունին: «Հարգելի պ. Տեր-Դանիելյան, // Ըստ երևույթին, երկար է ձգձգվելու հայ գրողների Բաքվում ճյուղ ունենալու գործը: ... Լավ կլինի, որ դուք այժմյանից գործի անցնեք, կազմեք, ձեր գրական շրջանը և սկսեք ձեր գրական երեկույթներն ու բանախոսությունները: Երբ իրավունք կստանաք, հեշտ է, իսկույն էդպես էլ կհայտարարեք, որպես մի ընկերություն: Կմիացնենք մեր ուժերը և առաջ կբերենք մի հոսանք, – մասնավորապես գրում է Թումանյանը: – ... Լավ կլինի միշտ հարաբերության մեջ լինենք, արձագանք տանք իրար: Հաշիվ տանք իրար: Նկատողություններ անենք իրար: Խրախուսենք իրար: Միացնենք Բաքուն ու Թիֆլիսը»[21]:

իրեն չեն հասկացել իր ժամանակակիցները, չեն հասկանալու նաև հետնորդները» («Հովհաննես Թումանյան. հանրագիտարան». 2020, 765):

[18] Հովհաննես Թումանյանի կյանքի և ստեղծագործության տարեգրություն (1909–1914). 2016, 471:

[19] Տե՛ս Զ ա ք ա ր յ ա ն. 2020ա, 94–96:

[20] ԳԱԹ, Դ. Անանունի ֆ., թիվ 68, թ. 1: Հմմտ. Դավիթ Անանունի նամակագրությունից. 1984, 171:

[21] Թ ո ւ մ ա ն յ ա ն. 1999, 172–173: Նկատենք, որ դեռևս 1912 թ. հոկտեմբերի 25-ին Բաքվից Դ. Անանունը («Դ. Տեր-Դանիելյան» ստորագրությամբ) գրությամբ դիմել է Հովհ. Թումանյանին, որտեղ «խնդրում է ընկերության (Հայ գրողների կովկասյան ընկերության – Ա. Զ.) վարչության համաձայնությունը՝ ՀԳԿԸ մասնաճյուղ կամ «մնայուն քարտուղարություն» հիմնել Բաքվում և լիազորելու իրեն այդ նպատակով տեղի գրասերների շրջանում աշխատանքներ տանել» [Հովհաննես Թումանյանի կյանքի և ստեղծագործության տարեգրություն (1909–1914). 2016, 435]: Նաև՝ «... 1912 թ. հոկտեմբերի 27-ին Բաքվի մի խումբ գրասերներ դիմել էին ՀԳԿԸ (Հայ գրողների կովկասյան ընկերության – Ա. Զ.) վարչությանը՝ տեղում հիշյալ ընկերության ճյուղ բացելու առաջարկով: Ընկերության նույն թվականի նոյեմբերի 18-ի նիստում որոշվում է ընդունել այդ առաջարկը և ստեղծել ՀԳԿԸ գործակալություն կամ ճյուղ ...: Սակայն, չնայած վարչության գործ դրած ջանքերին,

Մարտի 3-ին Դ. Անանունը, պատասխանելով Հովհ. Թումանյանի այս նամակին, «... կարծում է, որ նրա խորհուրդներն անպայման իրագործելի են և նպատակահարմար: ... Մանրամասնորեն ներկայացնում է Բաքվում տեղի ունեցած գիտական միջոցառումների և հավաքույթների ցուցակը՝ նվիրված Թուրքահայ դատին, Ավ. Ահարոնյանին, Ստ. Նազարյանին, Շանթին, հայոց թատրոնին, գեղարվեստ և կյանք թեմայով: Տեղեկացնում է նաև, որ պատրաստվում են զրուցատրություններ, դասախոսություն և գրական բանավեճ Թումանյանի և Վահան Տերյանի մասին ..., բանախոսելու է ինքը: Ծրագրված են դասախոսություններ նաև լեզվի և Միքայել Նալբանդյանի մասին: ... Ընդունում է Թումանյանի այն տեսակետը, թե գրական-մշակութային կազմակերպություններում բացառված պիտի լինի կուսակցական կողմնակալությունը, և որ «ամենագլխավորը՝ մուրացկանություն չլինի»: // Վերջում գրում է, որ ուղարկել է իր խմբագրած «Մեր ուղին» հանդեսի համարը»[22]*:*

Հովհ. Թումանյանը «<1913> ապրիլի 24, Թիֆլիս» թվակիր նամակով Անանունին հայտնել է. «Ազնիվ բարեկամ, // Ստացա Ձեր ուղարկած «Ուսանող» («Մեր ուղին»— Ա. Զ.) հանդեսը: Շնորհակալ եմ և ցավում եմ, որ իմ գրքերից չունեմ Ձեզ ուղարկելու: Հինը վաղուց է սպառված, իսկ Բաքվի տպագրությունն էլ էնքան է լիքը պակասություններով ու սխալներով, որ չեմ ուզում ուղարկել: Շատ է ուշագրավ և ուրախալի էն գրական հոսանքը, որ կարողացել եք առաջ բերել Բաքու մի խումբ մարդիկ (գրական այդ շարժմանը մասնակցում էին Դ. Անանունը, Յ. Խանզադյանը, Ս. Հակոբյանը, Ռ. Օհանջանյանը և ուրիշներ— Ա. Զ.), և, ըստ երևույթին, մեծ մասամբ սոցիալ-դեմոկրատներ: ...»[23]*: Նամակի ծանոթագրության մեջ գրված է. «Բնագրում՝ «Ուսանողը», որը հասցեատիրոջ ձեռքով ծանոթագրված է այսպես. «Թումանյանը այստեղ ի նկատի ունի «Մեր ուղին» հանդեսը: Նա սխալվել է»:*

«Մեր ուղին» Դ. Անանունի նախաձեռնությամբ և խմբագրությամբ տպագրված «իրական, քաղաքական, տնտեսագիտական ժողովածու է» (1912, Բաքու): Այստեղ խմբագիրը հրապարակել էր մի շարք հետաքրքրական հոդվածներ Մ. Օրմանյանի, Իսահակյանի, Տերյանի, Կ. Միքայելյանի, Հ. Հակոբյանի ստեղծագործության մասին, ինչպես նաև տպագրել տարբեր հեղինակների բանաստեղծություններ, քաղաքագիտական, տնտեսագիտական հոդվածներ և այլ նյութեր»[24]*:*

Գրաքննության հետ կապված մի դրվագ (1914 թ.)

Դ. Անանունի «Բանվորական նոր օրենքները» վերնագրով գրքույկը, որը վերաբերում էր բանվորների ապահովագրության հարցին, գրաքննիչի կար-

---

ճյուղի հիմնադրումը ձգձգվում է մինչև 1915-ի մայիս ամիսը, թեպետ կանոնադրությունը հաստատվել է 1914 թ. հունիսին» (Թ ո ւ մ ա ն յ ա ն. 1999, 561): Բաքվում Հայ գրողների կովկասյան ընկերության մասնաճյուղ բացելու մասին տե՛ս նաև Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. 2007, 233–234:

[22] *Հովհաննես Թումանյանի կյանքի և ստեղծագործության տարեգրություն (1909–1914). 2016, 517–518:*

[23] *Տե՛ս Թ ո ւ մ ա ն յ ա ն. 1999, 175: Ի դեպ, նամակն ավարտվում է հետևյալ ձևակերպումով՝ «Ձեր բարեկամը՝ Հովհ. Թումանյան» (էջ 175):*

[24] *Թ ո ւ մ ա ն յ ա ն. 1999, 565:*

գաղրությամբ 1913 թ. վերջերին բռնագրավվում է: Այդ կապակցությամբ Անանունը 1914 թ. հունվարի 3-ին Բաքվից խնդրանքով դիմում է Հովհ. Թումանյանին՝ միջնորդել գրքույկի վրա դրված կալանքը վերացնելու համար: Նամակը բերենք ամբողջությամբ: «Մեծարգո բարեկամ պ. Հովհաննես, // Շնորհավոր Նոր տարի: // Դիմում եմ Ձեզ մի չափազանց կարևոր խնդիրքով: Ես այստեղ մի բրոշյուր եմ հրատարակել «Բանվորական նոր օրենքները» վերնագրով: Բրոշյուրն արտատպություն է «Եռանդ» շաբաթաթերթից և «Բաքվի ձայնից» և վերաբերում է բանվորների ապահովագրության հարցին: Սպասում էի այս օրերս թույլտվություն գրաքննությունից՝ վաճառքի հանելու և փոխարեն ստացվում է կարգադրություն կոնֆիսկացիայի ենթարկելու, – գրում է Անանունը:– Այժմ ամբողջ հրատարակությունը ձերբակալված է և ես դեռ սպասում եմ, որ կարող է պատահել, որ ինձ էլ պատասխանատվության ենթարկեն: Պիտի ասեմ, որ բրոշյուրի բովանդակությունը ոչինչ գրգռիչ բան չի ներկայացնում: Նման բրոշյուրներ ռուսերեն տասնյակ տարբեր հրատարակություններ կարելի է հաշվել: Սակայն ինչ արգելված չէ ռուս հեղինակին և ընթերցողին, այն արգելվում է մեզ:

Իմ Թիֆլիս եղած ժամանակ ինձ ասացին, որ հայ գրքերի գրաքննիչն է Քալանթարյան անունով մի պարոն, որ այդ պարոնը միևնույն ժամանակ խառնվում է մեր ազգային գործերին և նույնիսկ հոգաբարձու է մի ծխական դպրոցում: Այստեղից ես եզրակացնում եմ, որ այդ պարոնը՝ անմատչելի անձ չպիտի լինի և հավանորեն որոշ միջոցներ կլինին ազդելու նրա վրա, որ ձերբակալությունից ազատե գրքույկը և ազատ թողնե իմ օձիքը:

Արդ՝ շատ ու շատ խնդրում եմ մտահոգվել գրածիս մասին: Եթե Դուք անձամբ հնարավորություն չունենաք ազդելու պ. Քալանթարյանի վրա, ապա գուցե այդ անեք Ձեզ ծանոթ բարեկամների միջոցով: Համենայն դեպս ջանացեք համոզելու այդ մարդուն, որ նա իզուր է խոչընդոտներ հարուցանում հայ խոսքի առաջ. ինչ կարգելվի հայ բանվորին կարդալ հայերեն՝ նա կկարդա ռուսերեն: Դրանից ի՞նչ շահ: Կամ ի՞նչ շահ, որ մի հայ հեղինակ պիտի նեղություններ մատնվի:

Համոզված եմ, մեծարգո բարեկամ, որ Դուք կաշխատեք վերացնել գրքույկի վրա դրած արգելքը, որ դրանով Դուք ինձ կազատեք քաղաքական արգոսներից: Կանխորեն շնորհակալություն եմ հայտնում Ձեր կրելիք նեղությունների համար:

Սեղմում եմ Ձեր աջը: Ամենայն հարգանքով // Դ. Տեր-Դանիելյան

P. S. Գրքույկը, որպես վերնագիր, կրում է իմ պսևդոնիմը»[25]*:*

Հայտնի չէ, թե գործն ինչ ընթացք է ստացել. գրքույկի օրինակները չկան, որից կարելի է ենթադրել, որ արգելքը չի վերացել:

Դ. Անանունի – Հայ գրողների կովկասյան ընկերության – «Մշակ» թերթի փոխհարաբերության շուրջ (1916–1917 թթ.)

Ինչպես հայտնի է, ռուս նշանավոր բանաստեղծ, թարգմանիչ, գրականագետ, գրաքննադատ և պատմաբան Վալերի Բրյուսովը (1873–1924), Մոսկվա-

[25] *Դավիթ Անանունի նամակագրությունից … . 1984, 171–172:*

յի Հայկական կոմիտեի հանձնախմբի խնդրանքով 1915 թ. կեսերից ձեռնամուխ լինելով «Հայաստանի պոեզիան» ժողովածուն կազմելու և խմբագրելու աշխատանքներին, դրան զուգընթաց լայն գործունեություն է ծավալել հայ գրականությունը, մշակույթը, պատմությունը ռուս և հայ լայն հասարակայնության մեջ տարածելու ուղղությամբ: Այդ նպատակով 1915–1917 թթ. նա բազմաթիվ դասախոսություններ է կարդացել ոչ միայն Մոսկվայում, Պետրոգրադում, այլև՝ Անդրկովկասում՝ Բաքվում, Թիֆլիսում, Էջմիածնում ու Երևանում: «Հայ գրասերների ընկերության» խորհրդի հրավերով 1916 թ. հունվարի 7-ին Վ. Բրյուսովը ժամանում է Բաքու: Հունվարի 8-ին Մայիլյանների լեփ-լեցուն թատրոնում նա հանդես է գալիս «Հայոց բանաստեղծությունը» վերնագրով դասախոսությամբ: Այնուհետև՝ հունվարի 13-ին, Հայ գրողների կովկասյան ընկերության հրավերով նույն դասախոսությունը կրկնում է Թիֆլիսի Արտիստական ընկերության դահլիճում, հունվարի 17-ին հանդես է գալիս Էջմիածնի Գևորգյան ճեմարանի ուսուցչական դահլիճում, հունվարի 18-ին՝ Երևանի քաղաքային ակումբի դահլիճում: Վերադառնալով Թիֆլիս՝ ռուս բանաստեղծը հունվարի 22-ին «Հայաստանի պատմական շրջանները և հայ բանաստեղծության զարգացումը» թեմայով դասախոսություն է կարդում Արտիստական ընկերության դահլիճում: Հունվարի 24-ին նա մեկնում է Մոսկվա[26]:

Վ. Բրյուսովի անդրկովկասյան դասախոսությունների վերաբերյալ ժամանակի հայկական և ռուսական մամուլի օրգաններում եղել են բազմաթիվ արձագանքներ: Դրանց շարքում առանձնանում է Դ. Անանունի խոսքը: Բաքվում կայացած Վ. Բրյուսովի դասախոսության վերաբերյալ նա («Դ. Ա.» ստորագրությամբ) Թիֆլիսում հրատարակվող «Մշակ» թերթի հունվարի 13-ի համարում տպագրում է «Հայ բանաստեղծությունը (Վ. Բրյուսովի դասախոսությունը Բաքվում)» վերնագրով բովանդակալից տեղեկատվություն: Եվ քանի որ Թիֆլիսում Վ. Բրյուսովի կայանալիք դասախոսության մասին հայտարարությունը «Մշակ» թերթում չէր տպագրվել, Դ. Անանունը, լինելով Հայ գրողների կովկասյան ընկերության անդամ և Բաքվում «Մշակ»-ի աշխատակից, պարզաբանման նպատակով հունվարի 13-ին «Բաց նամակ»-ով դիմում է ընկերության խորհրդին. «Մեծապատիվ պարոններ. // Դուք հրավիրել եք Վ. Ե. Բրյուսովին հայ բանաստեղծության մասին դասախոսություն կարդալու Թիֆլիսում: Միանգամայն գեղեցիկ ձեռնարկ: Սակայն ինձ անհասկանալի է մնում, թե ինչո՞ւ դասախոսության մասին ծանուցում տպագրվում է միմիայն Թիֆլիսի երկրորդ հայ օրաթերթում («Հորիզոն»-ում– Ա. Զ.): Մի՞թե «Մշակը» հրաժարվել է ընդունել և տպագրել ձեր հայտարարությունը: Ես՝ իբրև Ընկերության անդամ՝ առաջադրում եմ այս հարցը և սպասում հրապարակական պատասխանի»[27]:

Նկատենք, որ նամակին կցված է «Մշակ»-ի խմբագրության հետևյալ ծանոթագրությունը. «Հայ Գրողների վարչությունը ոչ միայն հայտարարություն չէ ուղարկել «Մշակին» տպելու, այլ նույնիկ դասախոսության օրը մուտքի տոմսակ չէ ուղարկել «Մշակին», մինչ ուղարկել է այլ լրագիրներին: Մեր կարծիքով, նա իր այդ քայլերով կամեցել է միայն հաստատել մեր մեղադրանքը,

[26] *Մանրամասն տե՛ս* Закарян. 2016, 13–53.
[27] *«Մշակ», 17. I. 1916:*

որ նա ոչ թե հայ գրողների, այլ կուսակցական գրողների ընկերություն է: Հետևաբար, մեր հարգելի աշխատակցին (Դ. Անանունին – Ա. Զ.) միամտացնել կարող ենք, որ մենք եթե հայտարարություն ստացած լինեինք, կտպեինք»[28]*:*

Ի դեպ, թեպետ Վ. Բրյուսովի դասախոսության մասին ՀԳԿԸ-ն հայտարարություն չէր ուղարկել «Մշակին», սակայն թերթի հունվարի 15-ի համարում տպագրվել է «Վալերի Բրյուսովի դասախոսությունը» վերնագրով նյութ, որտեղ մասնավորապես կարդում ենք. ««Մշակի» նախորդ №-ում մեր աշխատակից Դ. Ա.-ն Բաքվից գրած իր թղթակցության մեջ տվել էր արդեն համակրելի բանաստեղծի գեղեցիկ դասախոսության գրեթե ողջ էությունը, հետևաբար, կրկնություն չանելու համար, մենք կբավականանանք դասախոսության (խոսքը Թիֆլիսում հունվարի 13-ին տեղի ունեցած դասախոսության մասին է – Ա. Զ.) նկարագրությամբ»:

Ինչևէ. Դ. Անանունի վերը բերված նամակին հաջորդում է փետրվարի 1-ին նրա գրած «Երկրորդ բաց նամակ Հայ Գրողների Կովկասյան Ընկ. խորհրդին» վերնագրով նյութը: Քանի որ այն առաջին անգամ է դրվում գիտական շրջանառության մեջ, ուստի այդ ուշագրավ ու բովանդակալից նամակը բերում ենք ամբողջությամբ. «Մեծապատիվ պարոններ. // «Մշակի» № 10-ում (հունվարի 17-ին – Ա. Զ.) ես՝ իբրև Ընկերության անդամ, հարցապնդում էի արել ձեզ, թե ինչո՞ւ Վ. Ե. Բրյուսովի դասախոսության մասին ծանուցում տպագրվել է միմիայն Թիֆլիսի երկրորդ հայ օրաթերթում և անգիտացվել «Մշակը»: Ես խնդրել էի ձեզնից հրապարակական պատասխան տալ ինձ: Սակայն անցել է ահա երկու շաբաթ, և դուք լռություն եք պահպանում: Ո՛չ միայն այդ: Բրյուսովը ձեր հրավերով Թիֆլիսում կարդաց իր երկրորդ դասախոսությունը[29]*, և դուք նորից այդ մասին ծանուցում տպագրեցիք թերթերում՝ դարձյալ անգիտանալով «Մշակը»: Այս հանգամանքը, իմ առաջին բաց նամակի երևալուց հետո, մի վիրավորանք էր, որ դուք հասցրիք ինձ, իբրև Ընկերության անդամի: Եվ ահա ձեր այդ ընթացքը ստիպում է ինձ մի քանի դիտողություններ անել ձեր՝ ըստ իս՝ սխալ ու պառակտիչ գործունեության մասին:*

1) Էն գլխից դուք չկարողացաք Ընկերության անդամների շարքում պահել մի եռանդուն հայ բանասերի ու աշխատավորի՝ պ. Երվանդ Լալայանին:

2) Ընկերության գործունեության առիթով անհաճո վեճ ծագեց խորհրդի նախագահի և «Մշակի» խմբագրի միջև: Անվանի բանաստեղծը և 45-ամյա հրապարակախոսը, գրողը և վաստակավոր հասարակական գործիչը դուրս եկան իրար դեմ ծանր մեղադրանքներով, որ միայն հրճվանք պատճառեն ամբոխին: Այդ վեճից հայ խոսքը, հայ գրականությունը ոչինչ չշահեց, այլ կորցրեց: Եթե խորհուրդդ տակտի տեր լիներ, նա հենց իր բնումը կխեղդեր մղձավանջի չափ անհաճո վեճը[30]*:*

---

[28] *«Մշակ», 17. I. 1916, Հովհաննես Թումանյանի կյանքի և ստեղծագործության տարեգրություն (1915–1919). 2019, 158:*

[29] *Ինչպես վերը նշվեց, առաջին դասախոսությունը՝ «Հայոց բանաստեղծությունը» վերնագրով, տեղի է ունեցել հունվարի 13-ին, երկրորդը՝ հունվարի 22-ին, «Հայաստանի պատմական շրջանները և հայ բանաստեղծության զարգացումը» թեմայով:*

[30] *Զծավալվելով՝ նկատենք. Հովհ. Թումանյանի և «Մշակ» թերթի խմբագիր Համբարձում Առաքելյանի միջև երկար տարիներ տեղի ունեցած գրական, հասարակական, քաղաքական հարցերի շուրջ սուր բանավեճի մասին մանրամասն տե՛ս*

3) Դուք նույնչափ անշնորհք եղաք Լեոյի և հայ դերասանների միջև ծագած վեճի ժամանակ: Ձեր արածը ստիպեց հայ պատմաբանին, գրողին և Ընկերության հիմնադիր անդամին հեռանալու Ընկերությունից:

4) Դուք ստորագրեցիք մի ուղերձ, մոռանալով որ Ընկերությունը արհեստակցական-լուսավորական միություն է և իր մեջ ամփոփում է տարբեր աշխարհահայացքի մարդկանց, որոնք կարող են տարբեր վերաբերմունք ունենալ դեպի քաղաքական հարցերը: Ձեր այդ արածը, հարկավ, ծանր սխալ է:

5) Ահա և ձեր կողմից տրվող հայտարարությունների խնդիրը: Դուք վարում եք խտրական քաղաքականություն, մոռանալով որ դա չի միացնում, այլ բաժանում է: Այո՛, դուք մոռանում եք, որ մեր փրկությունը կազմակերպված կյանքի մեջ է, և անում եք այն ամենը, որ քայքայվեն նույնիսկ եղած կազմակերպությունները:

Վերջացնում եմ: Հինգ կետերում հիշածս ձեր կատարած գործերը չեն սատարում հայ գրողների միաբանելու գործին, այնինչ դա պիտի լինի ձեր մտահոգությունը: Իբրև Ընկերության անդամ և ջերմ փափագող կազմակերպված կյանքի՝ ես այժմ էլ աչք եմ գոցում եղած ծանր սխալների վրա և հրավիրում ձեզ հրաժարվել գրգռիչ ու պառակտիչ գործելակերպից»[31]*:*

Նամակին «Մշակ»-ի խմբագրությունը դարձյալ կցել է ծանոթագրություն. «Մենք կարծում ենք, որ մեր աշխատակից Դ. Անանունը զուր ջանքեր է գործադրում: «Горбатого могила справит», *— ասում է ռուս ժողովրդական առածը»*[32]*:*

Դ. Անանունի վերոգրյալ նամակներին հաջորդում է փետրվարի 7-ին տեղի ունեցած ՀԳԿԸ վարչության նիստը՝ Հովհ. Թումանյանի նախագահությամբ: Վարչության անդամներից ներկա են եղել Մինաս Բերբերյանը, Անուշավան Աբովյանը և Դերենիկ Դեմիրճյանը: Նիստում «Քննարկվում է նաև մի ընթացիկ հարց: Դավիթ Անանունը «Մշակի» մեջ հարց է բարձրացրել, թե պատճառն ի՞նչ է, որ Բրյուսովի դասախոսության մասին հայտարարությունը տպված է «Հորիզոնում», իսկ «Մշակում»՝ ոչ: Որոշվում է հայտնել, որ վարչությունը «Հորիզոնի» այդ համարում տալիս է պատճառաբանված բացատրություն: Հրավիրում են պ. Անանունին կարդալ այդ բացատրությունը»[33]*:*

Այնուհետև «Հորիզոն»-ում տպագրվում է ՀԳԿԸ վարչության նամակը՝ ի պատասխան Դ. Անանունի վերոհիշյալ հարցապնդման: Մասնավորապես ասվում է. «Պ. Դ. Անանունին // Մեծարգո պարոն. // Դուք, ինչպես Կովկասյան Հայ Գրողների ընկերության անդամ, «Մշակ» թերթի մեջ Վարչությանս հարցապնդում եք ուղղել, թե Վ. Բրյուսովի դասախոսության ժամանակ ինչո՛ւ է սա միայն «Հորիզոն»-ին տվել հայտարարություն ու զանց է արել «Մշակը»: Ձեր հարցապնդումին ի պատասխան Վարչությունս հայտնում է, որ այդ մասին Վարչական որոշում է եղած՝ կտրել ամեն հարաբերություն «Մշակ»

Թումանյանագետ Սուսաննա Հովհաննիսյանի «Առաքելյան Համբարձում Աստվածատուրի» բառահոդվածը («Հովհաննես Թումանյան. հանրագիտարան». 2020, 772–776):

[31] *«Մշակ», 06. II. 1916:*

[32] *«Մշակ», 06. II. 1916:*

[33] *Հովհաննես Թումանյանի կյանքի և ստեղծագործության տարեգրություն (1915–1919). 2019, 179:*

թերթի հետ և այդ որոշումը իր պատճառաբանությունով տպված է «Հորիզոն»-ի 1914 թ. № 40-ի մեջ»[34]*:*

Հետագա իրադարձությունները զարգանում են հետևյալ կերպ: Փետրվարի 25-ին Դ. Անանունը հանդես է գալիս «Պատասխան Հայ գրողների կովկասյան ընկերության վարչության» վերնագրով հրապարակումով: Այս նյութը ևս գիտական շրջանառության մեջ է դրվում առաջին անգամ, ուստի բերում ենք ամբողջությամբ: «Մեծապատիվ պարոններ, // Իմ երկրորդ բաց նամակից հետո դուք բարեհաճեցիք ինձ պատասխանել, թե ինչո՛ւ Վ. Բրյուսովի դասախոսության համար ծանուցումն չի տրվել «Մշակին»: Ձեր պատասխանից դուրս եկավ, որ դեռ 1914 թ. փետրվար ամսին վարչությունդ որոշել է՝ «կտրել ամեն հարաբերություն «Մշակ» թերթի հետ»*: Այդ տարօրինակ որոշումն էլ կայացել է այն պատճառով, որ «Մշակի» մեջ «անարդարացի կերպով զրպարտված է» վարչությանդ նախագահը և «Ընկերությանդ սկզբնավորությունից ի վեր «Մշակի» խմբագրությունը բացարձակ թշնամական դիրք է բռնել նրա (այսինքն՝ Ընկերության) դեմ»:*

Այժմ լսեցեք իմ դիտողությունները ձեր տարօրինակ *որոշման առիթով: Ես կարծում եմ, որ վարչությանդ իրավասությունից վեր է բանադրել որևէ հայ թերթ կամ հայ հաստատություն և իրան բացահայտ մի կողմն հռչակելով՝ պայքարի բռնվել այդ հիմնարկությունների հետ:* Ընկերության կանոնադրութ-

---

[34] *«Հորիզոն», 14. II. 1916, Հովհաննես Թումանյանի կյանքի և ստեղծագործության տարեգրություն (1915–1919). 2019, 180: Կարծում ենք՝ հարկ է մեջբերել ՀԳԿԸ վարչության 1914 թ. փետրվարի 20-ի նիստում ընդունված որոշումը. ««Մշակ» լրագրի այս տարվա 36-րդ համարում տպված էր մի հոդված, ուր, ի միջի այլոց, ասված էր, թե «Սա (Հովհաննես Թումանյանը) իբրև ղեկավար Հայ Գրողների Ընկերության, գործում է մի որոշ սիստեմով, աննկատելի ուրիշների համար. օրինակի համար նա նկատում է, որ մեկը, շատ էլ մեծ կարծիք չունի բանաստեղծ Ծատուրյանի մասին և ահա նրան խկույն հրավիրում է դասախոսություն կարդալու» և այլն, և այլն:*

Հայ Գրողների Կով. Ընկերության Վարչությունը հարկավոր է համարում առ այդ հայտնել, որ թեպետ ինքը լիազորել է իր նախագահ պ. Հովհաննես Թումանյանին դասախոսներ գտնել Ընկերությանս գրական երեկույթների համար, բայց այս անգամ պ. Թումանյանը իմանալով, որ պ. Մակինցյանը կարող է բացասական կերպով արտահայտվել պ. Ա. Ծատուրյանի գրական գործունեության վերաբերմամբ, այդ խնդիրը հատկապես առաջարկեց վարչությանս քննության, որը ի նկատի ունենալով, որ Հայ Գրողների Ընկերության ամբիոնը ազատ բեմ է գրական քննադատության համար, մանավանդ որ ամենքին էլ թույլ է տրվում ընդդիմախոսել, որոշեց հրավիրել պ. Մակինցյանին դասախոսելու:

Վարչությունս գտնելով, որ «Մշակ»-ի մեջ անարդարացի կերպով զրպարտված է իր նախագահը և աչքի առաջ ունենալով, որ Ընկերությանս սկզբնավորությունից ի վեր «Մշակ»-ի խմբագրությունը բացարձակ թշնամական դիրք է բռնել նրա դեմ և որ՝ չնայելով որ Վարչությունս իր որոշումներն ու հաղորդագրությունները միշտ ուղարկել է հրատարակելու Թիֆլիսի 3 հայ օրաթերթերին, նրանցից միայն «Մշակն» է սիստեմաբար մերժել տպագրել, որի պատճառով էլ վարչությունս իր նախորդ նիստերում խորհրդակցություն է ունեցել իր հայտարարություններն ու որոշումները այլևս չհրատարակել «Մշակ»-ի մեջ, իր՝ ամսույս 20-ի նիստում որոշեց վերոհիշյալ հերքումն ուղարկել խմբագրությանդ և խնդրել տպագրել «Հորիզոնի» մեջ» («Հորիզոն», 23. II. 1914):

յամբ՝ վարչությանդ նման իրավունք չի վերապահված: Ուրեմն, դուք, պարզն ասած, խախտել եք կանոնադրությունը: Սա հարցի ձևական կողմն է:

Գանք հիմա էականին:

Վարչությունդ ընդունակություն պիտի ունենա հասկանալու, որ Ընկերության նախագահը անսխալական մարդ չէ, որ նրա դեմ եղած հարձակումները չպետք է կապվեն Ընկերության գործերի հետ: Ոմանք կարող են խորին հարգանքով վերաբերվել դեպի նախագահը, ոմանք կարող են ղանալ այդ հարգանքը, և դա առիթ չպիտի ծառայե, որ նրա շնորհիվ բանադրանք հանվի մի հասարակական օրգանի դեմ: Այս՝ մեկ, – գրում է Դ. Անանունը: – Երկրորդ՝ «Մշակը» չի կարող «բացարձակ թշնամական դիրք բռնել» դեպի Ընկերությունը: Դա կնշանակե, թե հայ օրգանը պայքարում է հենց իրան դեմ: Եթե գրողները պիտի հալածվեն, ապա էլ ո՞վ պիտի ապրեցնե «Մշակը»: Սակայն «Մշակը» կարող է վիրավորված լինել գրողների մի կուլտուրական-լուսավորական ընկերությունից, որը անբարյացակամության մթնոլորտ է ստեղծում դեպի նրա անմիջական վարիչները: Ահա այստեղ վարչությանդ վրա պարտք էր ընկնում բարձր լինել ինտրիգայից և ղանալ բոլոր հայ գրողներին առանց ուղղության և դավանանքի խտրության համախմբել Ընկերության շուրջը: Այդ անելու փոխարեն՝ դուք շտապել եք բանադրանք հանել: Բանադրանք ո՞ւմ կողմից և ո՞ւմ դեմ: Հայ գրողների կողմից հայ գրողների մի օրգանին: Մի՞թե սա նշանակում է միացնել: Ոչ: Սա նշանակում է պառակտել: Դուք չեք կարող ուրանալ, որ «Մշակի» մեջ աշխատում են մի քանի տասնյակ հայ գրողներ: Այդ գրողները շարունակում են արգասավորել հայ մտքի կաճառը, նրանք սպասավոր են կանգնած հայ ժողովրդի հասարակական զարգացմանը: Եվ երբ վարչությունդ «կտրում է իր հարաբերությունները «Մշակի» հետ», նա մի բոպե մտածո՞ւմ է, որ դրանով անհաճելի մթնոլորտ է ստեղծում իր և «Մշակի» աշխատակից հայ գրողների միջև: Եթե նա այդ մտածում է և իրոք մտահոգում է սպասավորել հայ խոսքին, ապա պիտի չեղյալ համարե իր տարօրինակ որոշումը և բնականոն հարաբերություններ ստեղծե «Մշակի» հետ: Այս է պահանջում թե հայ խոսքի և թե հայ գրողների անխարդախ հասկացված շահը:

«Մշակի» խմբագրությունը իմ երկրորդ նամակին կցել էր մի նկատողություն, թե սպատավորին միայն գերեզմանը կարող է ուղղել: Սպատավորը իբրև թե Հայ Գրողների Ընկերությունն է: Ես համաձայն չեմ խմբագրության այդ մտքի հետ: Ընկերությունը կարող է հիվանդագին շրջան ապրել, բայց նա չպիտի գերեզման մտնի: Նա կուղղե իր սխալը և պայծառ երկնակամար կստեղծե հայ խոսքի համար»[35]*:*

Սրան հաջորդում է ՀԳԿԸ վարչության մարտի 4-ին կայացած նիստը՝ Հովհ. Թումանյանի նախագահությամբ ու վարչության անդամներ՝ Ա. Աբովյանի, Ն. Աղբալյանի, Մ. Բերբերյանի և Դ. Դեմիրճյանի մասնակցությամբ: Նիստում «վերստին բացատրվում է, որ ՀԳԿԸ վարչության «կարգադրության պատճառը ոչ թե որևէ թշնամություն է, այլ թերթի («Մշակ»-ի – Ա. Զ.) բռնած դիրքն է, ընկերությանս ու վարչությանս հայտարարությունների և գրությունների մերժումը»: Հանձնարարվում է նախագահին (Հովհ. Թումանյանին – Ա. Զ.)

[35] *«Մշակ», 01. III. 1916:*

«պատասխանել պ. Անանունին և ցույց տալ նրան վարչության որոշման իսկական պատճառը»[36]*:*

Այս «հանձնարարության» կատարման մասին տեղեկություն չունենք: Սակայն, նկատենք, Բորժոմից 1916 թ. օգոստոսի 12-ին Բաքու՝ Ցոլակ Խանզադյանին Հովհ. Թումանյանի գրած նամակում ասվում է. «Անանունը էստեղ էր, կարճ տեսնվեցինք»[37]*:*

Հավելենք. Հայ գրողների կովկասյան ընկերության և «Մշակ» թերթի հետագա փոխհարաբերության մասին հայտնի է հետևյալը: Ընկերության վարչությունը 1916 թ. նոյեմբերի 17-ին «Մշակ»-ի «հարգելի» խմբագրությանը նամակով հայտնել է. «Վարչությունս, կարդալով «Մշակի» 256-րդ համարում «Աչխատակից Ս-ի» իրան («Մշակ»-ին – Ա. Զ.) ուղղած հոդվածը և խմբագրության ծանոթությունը, որոշեց առանց անցյալի քննության մեջը մտնելու՝ վերականգնել իր խզած հարաբերությունները թերթիդ հետ»[38]*:*

---

[36] *Հովհաննես Թումանյանի կյանքի և ստեղծագործության տարեգրություն (1915–1919). 2019, 189:*

[37] *Թ ո ւ մ ա ն յ ա ն. 1999, 248:*

[38] *«Մշակ», 18. XI. 1916, Հովհաննես Թումանյանի կյանքի և ստեղծագործության տարեգրություն (1915–1919). 2019, 295: Նկատենք՝ «Մշակ»-ի «Աչխատակից Ս»-ն «Հրավիրում ենք կողմերին վերջ տալ» վերնագրով նյութում գրում է. «Ահա ամսից ավելի է, ինչ, 1914–16 թթ. դադարից հետո, վերակվել են Հայ Գրողների Ընկերության գրական երեկոները, որոնց մասին սակայն «Մշակում» ոչ հայտարարություններ և ոչ հաշվետվություն է տպվում՝ շնորհիվ փոխադարձ հարաբերությունների խզման, որ տեղի է ունեցել մոտ 3 տարի սրանից առաջ:*

Երևույթը աննորմալ է վերջին ծայր և արդյունք տխուր թյուրիմացությունների:

Մենք հրավիրում ենք կողմերին վերջ տալ այս անհաճո կացության՝ առանց սակայն կրկին անդրադառնալու հարաբերությունների խզման պատմությանը, և հանուն գրականության շահերի, հանուն և այն գրական ուժերի ու աշխատակիցների, որոնք խմբված են «Մշակի» շուրջը, այլև մայրենի գրականությունը սիրող բազմաթիվ ընթերցողների, վերսկսել թե՛ հայտարարությունների առաքումը և տպագրությունը և թե՛ պարբերական հաշվետվությունների զետեղումը «Մշակում»:

Դեռ մի շաբաթ առաջ հաճույքով կարդացինք «Մշակի» խմբագրական վերջին ծանոթությունը (տե՛ս «Մշակ» № 245) (խոսքը «Մշակ»-ի նոյեմբերի 2-ի համարում «Հին գրասեր» ստորագրությամբ տպագրված «Հայ Գրողների Ընկ. Վարչության մասին» վերնագրով հոդվածին կցված խմբագրության ընդարձակ ծանոթագրության մասին է – Ա. Զ.), որի իմաստն այն էր, թե՝ եթե Հայ Գրողների Ընկ. վարչությունը շարունակեր և շարունակե «նախկին ձևով իր երեկույթների և ժողովների հայտարարությունները տպագրել տալ նաև «Մշակում», անկասկած է, որ համաձայն 1911 թ. խմբագրության որոշման, այդ երեկույթների և ժողովների լուրերն ևս կտպվեին» և կտպվեն քրոնիկոնի բաժնում:

Ուրեմն ի՞նչ է մնում անել: Մնում է վերսկսել թե հայտարարությունների առաքումը և տպագրությունը և թե պարբերական ամփոփ հաշվետվությունների զետեղումը «Մշակում», բայց, կրկնում ենք, առանց կրկին անդրադառնալու հարաբերությունների խզման պատմությանը:

Դա համապատասխան կլինի թե՛ Հայ Գրողների Ընկերության նպատակներին ու դիրքին և թե՛ հինավուրց «Մշակի» գրական ուժերի, աշխատակիցների ու ընթերցողների տրամադրություններին»: Խմբագրությունը հոդվածին կցել է հետևյալ ծանոթությունը. «Ինչպես ներկա տարվա «Մշակի» № 53-ում, ապա № 245-ում, այժմ էլ

Կարծում ենք, որ ՀԳԿԸ վարչության ընդունած այս որոշմանը մեծապես նպաստել են նաև Դ. Անանունի վերը բերված նամակներում տրված սթափ գնահատականներն ու դիտարկումները:

Ինչևէ. 1917 թ. ապրիլի 23-ին ՀԳԿԸ վարչության անունից նախագահ Հովհ. Թումանյանը և անդամ քարտուղար Գյուտ ա. ք. Աղանյանը հետևյալ նամակն են ուղարկել նաև «Մշակ»-ի խմբագրությանը: «Այս օրերս բացվելու է Թիֆլիսում Հայկազյան անունով մի ընկերություն, որի նպատակն է պաշտպանել հայ գրականությունը, գիտությունն ու գեղարվեստը, կազմել հայոց ակադեմիա և հայոց համալսարանի հիմքը դնել: Ընկերության հիմնադիրներն են լինելու մի կողմից դրամատերեր և մյուս կողմից հայ գրողներ, գիտնականներ ու գեղարվեստագետներ: Դրամատերերը վճարելու են միանվագ 5000 ռուբլի, իսկ գրողները, գիտնականներն ու գեղարվեստագետները լինելու են այնպիսի անձեր, որոնց հեղինակությունը անվիճելի է լինելու ազգի ընդհանրության համար, – ասվում է նամակում: – Հայ գրողների ընկերության վարչությունը, որին հանձնված է կազմել վերջինների ցուցակը, խնդրում է խմբագրությանդ օժանդակել այս կարևոր աշխատանքին և մի շաբաթվա ընթացքում ուղարկել մեզ այսպիսի անձերի մի ցուցակ»[39]*:*

Այս նամակին ի պատասխան՝ մայիսի 1-ին «Մշակ»-ի խմբագրությունը խմբագիր Հ. Առաքելյանի և ի. տ. քարտուղար, գրող Ստ. Զորյանի ստորագրությամբ ՀԳԿԸ վարչությանը գրությամբ ներկայացնում է « … իր կարծիքով անվիճելի գրողների, հրապարակախոսների և գիտնականների» ցուցակը, որի 22-րդ համարի տակ նշված է Դավիթ Անանունի անունը[40]*:*

Դ. Անանունի «Հարգանքի խոսք Հովհ. Թումանյանին» վերնագրով հոդվածը (1919 թ.)

Դ. Անանունը ոչ միայն հետևում էր Անդրկովկասում, մասնավորապես՝ հայ ժողովրդի կյանքում տեղի ունեցող հասարակական-քաղաքական զարգացումներին, այլև ակտիվորեն մասնակցում և ուշադրության կենտրոնում էր պահում գրական-մշակութային իրադարձությունները:

1919 թ. սկզբների գրական-մշակութային մեծ իրադարձությունը Հովհ. Թումանյանի ծննդյան 50-ամյակն էր. փետրվարից մայիս փառավորապես տոնվում է Ամենայն հայոց բանաստեղծի հոբելյանը[41]*: «Թումանյանի 50-ամյակը, կարելի է ասել, եղավ մի երկարատև հոբելյան, մի շարունակական հանդես, որ Թիֆլիսի հայ (նաև՝ վրաց, ռուս – Ա. Զ.) հասարակությունը տալիս էր ի պատիվ իր սիրելի պոետի»*[42]*,– վերհիշում է Ստ. Զորյանը:*

կրկնում ենք, որ «Մշակը» դեմ չէ եղել և դեմ չէ թե՛ Հայ Գրողների Ընկ. հայտարարությունների և թե՛ հաշվետվությունների տպագրության» [«Մշակ», 15. XI. 1916, Հովհաննես Թումանյանի կյանքի և ստեղծագործության տարեգրություն (1915–1919). 2019, 292–293]:

[39] *Հովհաննես Թումանյանի կյանքի և ստեղծագործության տարեգրություն (1915–1919). 2019, 373:*

[40] *Հովհաննես Թումանյանի կյանքի և ստեղծագործության տարեգրություն (1915–1919). 2019, 388–389:*

[41] *Տե՛ս Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. 2007, 248–253, նաև՝ Զ ա ք ա ր յ ա ն. 2010 բ, 142–146, Մ ն ա ց ա կ ա ն յ ա ն. 2017, 91–103:*

[42] *Զ ո ր յ ա ն. 1985, 32:*

Փետրվարի 14-ին «Մշակ»-ը «Գրական տոն» խորագրով հաղորդում էր. «Փետրվարի 20-ին լրանում է բանաստեղծ Հովհ. Թումանյանի ծննդյան հիսնամյակը[43]*:*

Այս տարի լրանում է նաև նրա գրական գործունեության երեսնամյակը: Գրական պայծառ տոն է կանգնած հայ ժողովրդի առաջ՝ նրա արդի դաժան կացության մեջ:

Փետրվարի 20-ին «Մշակը» լույս կտեսնի հատուկ հոդվածներով՝ նվիրված մեր բանաստեղծի քանքարին»:

Խոստմանը հավատարիմ՝ այդ օրը թերթի էջերում գետեղված ենք տեսնում Հովհ. Թումանյանին նվիրված բազմաթիվ նյութեր[44]*: Դրանց շարքում առանձնանում է Դ. Անանունի «Հարգանքի խոսք Հովհ. Թումանյանին» վերնագրով հոդվածը, որով բացվում է «Մշակ»-ի այդ համարը: Բերենք սթափ գնահատականներով լեցուն և բովանդակալից հոդվածն ամբողջությամբ. «Այսօր լրանում է հիսուն տարին այն մարդու, որի գլուխը վաղաժամ ալեհեր է դարձել, իսկ հոգին մնում է միշտ արի: Դա բանաստեղծ Հովհ. Թումանյանն է, բանաստեղծ՝ առանց որակումների: Ածականը այստեղ կարող է նսեմացնել, այլ ոչ թե բարձրացնել: Բայց ինչ որ մենք պիտի չեշտենք այնուամենայնիվ՝ դա այն է, որ Հովհ. Թումանյանի քնարը հենց սկզբից ներդաշնակ կապ և հնչյուններ է փնտրել իր և հայության հոգևոր աշխարհի մեջ, փնտրել և, որ ամենից գլխավորն է, գտել: Ազգային քանքար իր ողջ էությամբ՝ Հովհ. Թումանյանը հեռու է, շատ հեռու ինքնագոհ ազգամոլությունից: Նրա ստեղծած հայը հարազատ է ամենիս: Այդ հայի հոգեկան աշխարհը մերն է իր գունագեղ բովանդակությամբ: Եվ մենք հրճվում ենք, երբ բանաստեղծի պատկերած հայը անցնում է մեր մտքի ու տեսողության դաշտով: Եթե ժպտում ենք նրա վրա՝ մեզ վրա ենք ժպտում: Եթե լաց ենք լինում նրա համար՝ մեզ համար ենք լալիս: Հովհ. Թումանյանը գերազանցապես ժողովրդական բանաստեղծ է, ժողովրդի խորքից ելած և՝ իբրև զանգվածային ընդերքի պտուղ՝ նա խոսքի գոհար է,– գրում է Անանունը: – Դաժան հասարակական պայմանների մեջ է լրանում մեր բանաստեղծի ծննդյան հիսնամյակը: Մի ուրիշ բանաստեղծի– Խրիմյան Հայրիկի–քնարը արդեն տվել է մեր այսօրվա վիճակի պատկերը.*

Կանցնի ձմեռ, կուգա գարուն
Մեռելոց դաշտ ծաղկազարդի,
Անջատ, անջատ ոսկերոտիք
Շարժին հրաշիվք, կցին իրար
Շունչ մի շնչե կենդանարար
Հառնի կանգնե մեռելոց դաշտ ...

«Մեռելոց դաշտը» – դա մեր հայրենիքն է, որ դեռ պիտի «հառնի» ու «կանգնե»: Սակայն այդ մեռելոց դաշտը այդպիսին է ոչ միայն ֆիզիկապես, այլև հոգեպես: Պատերազմը և մեր գլխին տեղացած արհավիրքները ավերել

---

[43] *Ի դեպ, Հովհ. Թումանյանի ծննդյան ամսաթվի հետ կապված մանրամասն տե՛ս* Սուքիասյան. *2019 բ, 47–56:*

[44] *Նկատենք՝ Թիֆլիսում հրատարակվող* «Закавказское слово» *թերթը ևս մեծ տեղ է հատկացրել բանաստեղծի հոբելյանին. տե՛ս* Закарян. 2019, 205–226; Սուքիասյան. *2019 ա, 227–235:*

են նաև հայի հոգին, մի վերք, որ ամենից կսկծալին է: Կարելի է կառուցել «բրած ու հատակած» քաղաքներն ու գյուղերը, կարելի է հերկել ու մշակել դաշտերն ու պարտեզները, բայց դժվարին գործ է վերականգնել հայի ավերված հոգու ունակությունները, նրան առաջնորդել դեպի հասարակական իդեալների և այլասիրության տաճարը: Այստեղ ընտիր հայ միտքն ու խոսքը ունեն կատարելու ամենից ծանր աշխատանքը: Պահ մի վարանում ենք և չենք հավատում հայ խոսքի այդ հրաշունչ ու բուժարար առաքելությանը, բայց երբ հիշում ենք խոսքի վարպետ Թումանյանին և նրա մյուս սակավաթիվ ընկերներին՝ այլևս ուղղվում է մեր կորացած մեջքը և մենք հավատում ենք հայի պայծառ աստղին:

Մենք դեռ կպայքարենք!

Մեզ մխիթարող և առաջնորդող մարգարեներ են հարկավոր: Թող Հովհ. Թումանյանը՝ իմաստուն դարձած իր հիսուն տարվա կյանքի փորձից՝ այսուհետ ևս կերտե ընտիր հայ խոսք՝ սփոփելու մեր վիշտը և ոգևորություն հաղորդելու մեր սրտին: Թող նա մեզ ուժ տա՝ մաքառելու երջանիկ ապագայի համար:

Պայծառ օրեր ենք մաղթում մեր Պառնասի զարդին»[45]*:*

Դ. Անանունի այս հոդվածին է նաև վերաբերում անվանի գրականագետ-գրաքննադատ Ավ. Զաքարյանի հետևյալ միտքը. «Բնորոշ է, որ դեռևս 1919-ին՝ մի կողմ թողած «նահապետականության երգիչ», «նահապետականության արտահայտիչ» մտայնությունները, գրականագիտությունը Թումանյանին գնահատում էր համազգային, համամարդկային չափանիշներով, չափանիշներ, որոնցից գռեհիկ սոցիոլոգիական հովերով, դժբախտաբար, հետագայում շատ նահանջեց գրականագիտությունը»[46]*:*

1919 թ. վերջին Թիֆլիսում հրատարակված «Գրական-գեղարվեստական ալմանախ»-ի 5-րդ համարն ունի հետևյալ ընծայագիրը՝ «Հովհ. Թումանյանին՝ նրա ծննդյան 50-ամյակի առիթով»: Այլ նյութերի թվում՝ այստեղ տպագրվել են նաև Շիրվանզադեի, Հովհ. Թումանյանի, Նար-Դոսի, Վ. Փափազյանի, Դ. Դեմիրճյանի, Տ. Հովհաննիսյանի, Դ. Անանունի, Հ. Սուրխաթյանի կարծիքները հայ գրականության արդի վիճակի ու ապագայի մասին՝ ի պատասխան Ստ. Զորյանի կազմած հարցարանի, որը կրում էր «Հայ գրականության վիճակը (հայ գրողների կարծիքով)» խորագիրը: Վերը նշված գրողների պատասխանների շարքում առանձնանում է Անանունի ծավալուն, բովանդակալից և ուշագրավ դիտարկումներով նյութը[47]*:*

Դ. Անանունի մասնակցությունը Հովհ. Թումանյանի ղեկավարած Քննիչ հանձնաժողովի աշխատանքներին (1918–1919 թթ.)

Իր կենսագործունեության ողջ ընթացքում՝ հատկապես 1918–1920 թթ., Լեռնային Ղարաբաղում տիրող իրավիճակը խորապես մտահոգել է Դ. Անանունին, և նա քանիցս այցելել է երկրամաս, ապա իր տպավորությունները հոդվածաշարերի միջոցով հաղորդել հանրությանը:

---

[45] *«Մշակ», 20. II. 1919: Այս հոդվածը կրճատումներով և տարընթերցված տպագրվել է «Հովհաննես Թումանյանի կյանքի և ստեղծագործության տարեգրություն (1915–1919)» գրքում. 2019, 665–666: Հմմտ. Զ ա ք ա ր յ ա ն. 2020 բ, 432–433:*

[46] *Զ ա ք ա ր յ ա ն. 1997, 434–435:*

[47] *Տե՛ս «Գրական-գեղարվեստական ալմանախ» (Թիֆլիս), 1919, 128–144:*

«Համաշխարհային պատերազմից հայ ժողովրդի կրած վնասների քննիչ հանձնաժողովի» նախագահ Հովհ. Թումանյանի՝ Դ. Անանունին հասցեագրած 1918 թ. դեկտեմբերի 10-ին ռուսերենով գրված նամակից, մասնավորապես, հայտնի է դառնում, որ, ըստ պայմանավորվածության, հանձնաժողովը նրան նշանակել է իր լիազոր ներկայացուցիչը և հանձնարարել է ուսումնասիրել Ղարաբաղի (Շուշիի և Ջևանշիրի գավառների) հայ բնակչության կրած նյութական վնասները և տվել է մեկամսյա ժամկետ[48]*:*

Հովհ. Թումանյանը դեկտեմբերի 14-ին զորավար Անդրանիկին գրած նամակում խոսելով հայ ժողովրդի ծանր վիճակի մասին՝ նաև նշում է. «Գրաբերս՝ պ. Դավիթ Անանունը, մեր կողմից գալիս է լիազոր՝ Ղարաբաղում կազմակերպելու էս գործը (խոսքը «Համաշխարհային պատերազմից հայ ժողովրդի կրած վնասների քննիչ հանձնաժողովի» աշխատանքների մասին է— Ա. Զ.): Խնդրում եմ աջակցություն ցույց տաս նրան, եթե հարկավոր լինի»[49]*:*

1918 թ. դեկտեմբերի վերջին Դ. Անանունը Թիֆլիսից մեկնում է Ղարաբաղ, վերադառնում՝ 1919 թ. փետրվարի սկզբին: Ի դեպ, Հովհ. Թումանյանը Ղարաբաղի կառավարությանը հասցեագրած փետրվարի 26-ի նամակում հայտնում է. «Քննիչ հանձնաժողովիս լիազոր պ. Դ. Անանունը վերադարձավ և զեկուցեց, որ Դուք արդեն կազմակերպել եք վնասները որոշելու գործը, սակայն նյութական կարիք ունեք և խնդրում եք Հանձնաժողովիս օգնությունը:

Սրանով Հանձնաժողովս խնդրում է Ձեզ հայտնել Ձեր նյութական կարիքի չափի մասին և տեղեկացնել, թե Ղարաղշլաղ գյուղի և ազգաբնակության դրության և թե նրանց համար անհրաժեշտ օգնության չափի մասին»[50]*:*

Նկատենք նաև, որ Դ. Անանունն ակտիվորեն մասնակցել է Քննիչ հանձնաժողովի աշխատանքներին: Այդ մասին են վկայում բյուրոյի նախագահ Հովհ. Թումանյանի նամակները Դ. Անանունին: Այսպես, 1919 թ. հոկտեմբերի 9-ին Թումանյանը գրում է. «Մեծարգո պարոն // Դավիթ Անանուն // Քննիչ հանձնաժողովս իր գործունեության սկզբնական շրջանում լիազորներ էր

---

[48] *Տե՛ս Հայ ժողովրդի կորուստները Առաջին աշխարհամարտի տարիներին («Համաշխարհային պատերազմից հայ ժողովրդի կրած վնասների քննիչ հանձնաժողովի» փաստաթղթերի և նյութերի ժողովածու). 2005, 44—45:*

[49] *Թ ո ւ մ ա ն յ ա ն. 1999, 299:*

[50] *Հայ ժողովրդի կորուստները Առաջին աշխարհամարտի տարիներին … . 2005, 124: 1919 թ. հունիսի 7-ին Քննիչ հանձնաժողովի նախագահ Հովհ. Թումանյանը դիմում է Հայաստանի Հանրապետության նախարարապետ Ալ. Խատիսյանին՝ հանձնաժողովին ֆինանսական աջակցություն ցուցաբերելու խնդրանքով, որտեղ, ի դեպ, գրում է. «… մեր կենտրոնական Քննիչ հանձնաժողովի նախաձեռնությամբ Շուշի քաղաքում կազմակերպված համանման հանձնաժողովը ստացել է մոտ 10.000 հայտարարություն Ղարաբաղի բնակիչներից և քննելուց հետո ներկայացրել է անգլիական հրամանատարությանը: Այդ աշխատանքների վրա Շուշվա հանձնաժողովը ծախսել է 50.000 ռ., որը փոխարինաբար վերցրել է մասնավոր անհատներից, ուստի մեր միջոցով խնդրում է Հայաստանի Հանրապետությունից 50.000 ռ. այդ պարտքը վճարելու համար» (Թ ո ւ մ ա ն յ ա ն. 1999, 325): Հունիսի 28-ին էլ Թումանյանը դիմում է Վրաստանում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությանը՝ հանձնաժողովին ֆինանսական աջակցություն ցուցաբերելու խնդրանքով, ի մասնավորի՝ «… 3. 50 հազար ռուբլի՝ հանձնաժողովի Ղարաբաղի ճյուղին ուղարկելու» համար (Թ ո ւ մ ա ն յ ա ն. 2019, 54):*

նշանակել այս կամ այն գավառի համար, որ տեղնուտեղը ուսումնասիրեն տաճկական արշավանքից հայ ժողովրդի կրած վնասները և իրենց ուսումնասիրության արդյունքը գրավոր ու մանրամասն զեկուցանեն Հանձնաժողովին: Սուրմալուի գավառի համար նշանակվել էր պ. Հովհաննես Խոջաէյնաթյան, որը և սիրով հանձն էր առել կատարել այդ կարևոր ու պատասխանատու գործը, իբրև իրազեկ ու լավատեղյակ անձնավորություն: Սակայն պ. Խոջաէյնաթյանը մեզ անհայտ պատճառով մինչև օրս էլ ոչ մի նյութ չի ուղարկել Հանձնաժողովին, չնայած որ նա լիովին ստացել է իր ռոճիկը ու ճանապարհածախսը և որ ահա 6–7 ամիս է անցել պայմանաժամից: Այս ցավալի երևույթի պատճառը, ինչպես ասացինք, մեզ անհայտ է, որովհետև նախկին լիազոր Խոջաէյնաթյանը չի պատասխանում մեր դիմումներին: Որովհետև պ. Խոջաէյնաթյանը ներկայումս ծառայում է Երևանի պետակ<ան> հիմ<նարկներից> մեկում, Հանձնաժողովս վճռեց դիմել Ձեզ, հարգելի պարոն, որ նեղություն կրեք պ. Խոջաէյնաթյանից ստանալու բոլոր եղած նյութերը և ուղարկելու Քննիչ հանձնաժողովին, որի կողմից վաղօրոք շնորհակալություն ենք հայտնում Ձեզ այս հանձնարարությունը կատարելու համար»[51]*: Իսկ նույն թվականի նոյեմբերի 28-ին էլ Թումանյանն Անանունին, մասնավորապես գրում է. «Շնորհակալ եմ մեր բյուրոյի հանձնարարությունը կատարելու համար»*[52]*:*

... 1919 թ. հունիսի սկզբին Շուշիում և շրջակա հայկական գյուղերում հայերի կոտորած տեղի ունեցավ: Դրա դեմ բողոքի մեծ ալիք բարձրացավ: Հատկապես հիշատակելի է հունիսի 22-ին Թիֆլիսի Վանքի բակում տեղի ունեցած համահայկական մեծ հավաքը, որին մասնակցում էին 40-ից ավելի ազգային կազմակերպություններ: Անկասկած, հավաքին մասնակցել է նաև Դ. Անանունը: Միջոցառման նախագահը Հովհ. Թումանյանն էր: Ընդունվեց բանաձև, որով հավաքի մասնակիցները՝ «... վստահ Անտանտայի ժողովուրդների, կառավարությունների և Փարիզի կոնֆերանսի նրանց ներկայացուցիչների արդարամտության ու բարեկամական զգացմունքին», խնդրում, պահանջում էին Ղարաբաղից հեռացնել Ադրբեջանի իշխանությանը, կոտորածի հեղինակներին ձերբակալել ու դատի տալ, թույլատրել, որ Ղարաբաղը կցվի Հայաստանին[53]*:*

Դ. Անանունը Հայաստանի գրական ընկերության անդամ (1919 թ.)

1919 թ. հուլիսի սկզբին Դ. Անանունը միանում է հայրենիքում համախմբվող մտավորականությանը՝ Թիֆլիսից փոխադրվում է Երևան ու ակտիվորեն մասնակցում Հայաստանի առաջին Հանրապետության գրական-մշակութային, հասարակական-քաղաքական կյանքին:

---

[51] *Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 221, ց. 1, գ. 38, թ. 131 և շրջ.: Թողոն: Ձեռագիր: Նաև՝ Հայ ժողովրդի կորուստները Առաջին աշխարհամարտի տարիներին... . 2005, 193:*

[52] *Տե՛ս* Թ ու մ ա ն յ ա ն. *1999, 340: Ի դեպ, «Հովհաննես Թումանյանի կյանքի և ստեղծագործության տարեգրություն (1915–1919)» գրքում տպագրված է՝ «Շնորհակալ եմ մեր բյուրոյի հանձնարարությունները կատարելու համար» (ընդգծումը մերն է – Ա. Զ., էջ 825):*

[53] *«Աշխատավոր» (Թիֆլիս), 19, 24. VI. 1919:*

«1918-ի վերջի և 1919-ի առաջին ամիսների սովից և համաճարակից հետո 1919-ի ամառվանից սկսած համեմատաբար տանելի պայմաններ ստեղծվեցին Հայաստանում և մշակութային եռուզեռ սկսվեց Երևանում,– գրել է հասարակական գործիչ, իրավաբան, գրող, մանկավարժ, Հայաստանի Հանրապետության բարձրագույն դատական մարմնի՝ Երևանի շրջանային դատարանի դատախազ Վարդգես Ահարոնյանը:– Հիմնվեց Հայաստանի Գրողների Ընկերությունը (Հայաստանի գրական ընկերությունը – Ա. Զ.), «Պանդոկ» գրական ակումբը և Հայաստանի Հրատարակչական Ընկերությունը, որին Կովկասի Հայոց Հրատարակչականը (Թիֆլիսում) հանձնեց իր գույքերի մի չոչափելի մասը, 40 հազար հատոր գիրք, որը փոխադրվեց Հայաստան:

Գրեթե ամեն շաբաթ սկսեցին տեղի ունենալ Հայաստանի Գրողների Ընկերության և «Պանդոկ» գրական ակումբի գրական գեղարվեստական երեկույթները, դասախոսությունները և հավաքույթները:

Երևանում սկսեց հրատարակվել «Հառաջ» օրաթերթը: ...

Դարձյալ Երևանում սկսեց լույս տեսնել «Հայաստանի Կոոպերացիա» («Հայաստանի համագործակցական») ամսագիրը (երկշաբաթաթերթը – Ա. Զ.): Պայմանները դեռևս թուլատու չէին զուտ գրական գեղարվեստական ամսագրի հրատարակության համար և այդ պատճառով «Հայաստանի Կոոպերացիա»-ն մասամբ լրացնում էր և այդ պակասը ամեն թիվի մեջ կանոնավորապես տալով գրական-գեղարվեստական մի բաժին»[54]*:*

Հանրապետության գրական կյանքի կազմակերպման գործում որոշիչ դեր կատարեց 1919 թ. հուլիսի 4-ին հայ գրողների նախաձեռնությամբ գումարված Հայաստանի գրական ընկերության հիմնադիր ժողովը, որին մասնակցում էին 30 հոգի՝ գրողներ, լրագրողներ և մտավորականության այլ ներկայացուցիչներ: Ընտրվում է ժամանակավոր վարչություն՝ Ն. Աղբալյանի նախագահությամբ: Վարչության հայտարարության մեջ ասվում էր, որ ընկերության անդամ կարող են լինել Հովհ. Թումանյանի գլխավորությամբ Թիֆլիսում գործող Հայ գրողների կովկասյան ընկերության անդամները, որոնք բնակություն են հաստատել Հայաստանում, ինչպես նաև՝ այն գրողները, գիտնականներն ու լրագրողները, ովքեր գրավոր դիմում կներկայացնեն: Նախատեսվում էր սեպտեմբերին հրավիրել ընկերության ընդհանուր ժողով, որտեղ կատարվելու էր ընդունելություն, հաստատվելու էր կանոնադրությունը[55]*:*

Սեպտեմբերի 29-ին տեղի ունեցավ Հայաստանի գրական ընկերության առաջին ընդհանուր ժողովը, որը, որոշ փոփոխություններ կատարելով, իբրև ժամանակավոր կանոնադրություն հաստատեց Հայ գրողների կովկասյան ընկերության կանոնադրությունը. ընկերության անդամներ դարձան ևս 10 հոգի: Պատվավոր նախագահ ընտրվեց Ն. Աղբալյանը (մինչ այդ նա նշանակվել էր ՀՀ հանրային կրթության և արվեստի նախարար), վարչության անդամներ՝ Դ. Անանունը, Ա. Աբեղյանը, Վ. Խորենին, Վ. Ահարոնյանը, Վեսպերը և ուրիշներ[56]*:*

---

[54] Ա հ ա ր ո ն ե ա ն. 2019, 167–168:

[55] «Զանգ» (Երևան), 08, 17. VII. 1917, «Հայաստանի աշխատավոր» (Երևան), 08. VII. 1919, Վ ա ր դ ա ն յ ա ն. 2003, 129:

[56] «Հառաջ» (Երևան), 04. X. 1919, Վ ա ր դ ա ն յ ա ն. 2003, 129:

Ընկերության կազմակերպած գրական բազմաթիվ միջոցառումներին Դ. Անանունը հանդես է եկել և՛ զեկուցումներով, և՛ բացման խոսքերով:

Նկատենք՝ հայ գրողների նյութական ծանր վիճակից ելնելով՝ Հայ գրողների կովկասյան ընկերության նախագահ Հովհ. Թումանյանը 1919 թ. հունիսի 15-ին դիմում է ՀՀ նախարարապետ Ա. Խատիսյանին՝ խնդրելով՝ «մի գումար հատկացնել» ընկերությանը՝ «էս նեղ օրերին օգնության հասնելու մեր գրողներին, գիտնականներին ու հրապարակախոսներին»[57]: Հայաստանի կառավարությունը, հուլիսին անդրադառնալով այդ հարցին, ընդունեց օրենք՝ «Հայ գրողներին, գիտնականներին և հրապարակախոսներին օգնություն հասցնելու համար 100.000 ռ. հատկացնելու մասին»: Գումարը փոխանցվելու էր Հայ գրողների կովկասյան ընկերությանը, որն այն բաժանելու էր ոչ միայն ընկերության անդամներին, այլև՝ «հայ իրականության մեջ աշխատող» մտավորականներին[58]: 1919 թ. օգոստոսին Վրթ. Փափազյանը Դ. Անանունին հայտնել է, որ գրողներին հատկացվելիք 100.000 ռուբլու շահառուներից մեկն էլ նա է, և որ նրա համար նախատեսված է 7000 ռուբլի[59], այդ գումարը հետագայում կրճատվել է ու դարձել 5000 ռուբլի[60]: Հովհ. Թումանյանը «1919, նոյեմբերի 28, Թիֆլիս» թվակիր նամակով Դ. Անանունին հայտնում է. «Սիրելի բարեկամ, // Ձեզ հասանելիք դրամից ուղարկում եմ առայժմ երեք հազար ռուբլի: ... Մի խոսքով՝ երեք հազարը ղրկում եմ – հարյուր հազարից նշանակած 5 հազարի հաշվին, մնում է երկու հազարը, էն էլ կղրկեմ բյուրոյից (Քնիչ հանձնաժողովից – Ա. Զ.) տալիք գումարի հետ մոտ օրերս»[61]: Դ. Անանունին՝ «... կառավարության նպաստից մնացած երկու հազար ռուբլին», Հովհ. Թումանյանն ուղարկել է 1920 թ. հունվարի երրորդ տասնօրյակին[62]: Այդ կապակցությամբ ՀՀ հանրային կրթության և արվեստի նախարարության դիվանի պաշտոնյա Կարապետ Մելիք-Օհանջանյանը պաշտոնական գրությամբ Դ. Անանունին խնդրել է նախարարություն ուղարկել ստացականը[63]:

Հովհ. Թումանյանի նամակները «Հայաստանի կոոպերացիա» երկշաբաթաթերթի խմբագիր Դ. Անանունին (1919–1920 թթ.)

1919 թ. օգոստոսին Դ. Անանունը նշանակվում է Հայկոոպի պաշտոնաթերթ «Հայաստանի կոոպերացիա» երկշաբաթաթերթի խմբագիր[64]: Այս

---

[57] *Թ ո ւ մ ա ն յ ա ն. 1999, 329:*

[58] *Վ ա ր դ ա ն յ ա ն. 2003, 132:*

[59] *ԳԱԹ, Դ. Անանունի ֆ., թիվ 104–106, թ. 2, տե՛ս նաև՝ Թ ո ւ մ ա ն յ ա ն. 2019, 56–57:*

[60] *Տե՛ս Հովհաննես Թումանյանի կյանքի և ստեղծագործության տարեգրություն (1915–1919). 2019, 783, 808, 812:*

[61] *Թ ո ւ մ ա ն յ ա ն. 1999, 340: Ի դեպ, «Հովհաննես Թումանյանի կյանքի և ստեղծագործության տարեգրություն (1915–1919)» գրքում տպագրված է՝ «... Ձեր հասանելիք գումարից ...» (ընդգծումները մերն են – Ա. Զ., էջ 825):*

[62] *Տե՛ս Թ ո ւ մ ա ն յ ա ն. 1999, 342:*

[63] *ԳԱԹ, Դ. Անանունի ֆ., թիվ 81, թ. 1:*

[64] *«Հայաստանի կոոպերացիա» երկշաբաթաթերթը լույս է տեսել 1919 թ. հունվարից 1920 թ., նախ որպես Երևանյան նահանգի կոոպերատիվների միության, ապա՝ Հայաստանի կոոպերատիվների միության օրգան, հիմնադիր խմբագիրն էր ՀՅԴ գործիչ, հրապարակագիր Սիմոն Վրացյանը (1882–1969): 1919 թ. օգոստոսից երկշա-*

բազմաժանր պարբերականում արծարծվում են տնտեսական, հողային, սոցիալական բնույթի խնդիրներ, բերվում են վիճակագրական տվյալներ Հայաստանում տնտեսական տեղաշարժերի, կոոպերացիայի տարբեր ձևերի զարգացման վերաբերյալ: Հրապարակախոսական-խմբագրական աշխատանքի հսկայական փորձ ունեցող Դ. Անանունի ջանքերով «Հայաստանի կոոպերացիա»-ն էլ ավելի հետաքրքիր բովանդակություն է ստանում, երբ նա դիմում է հայ մտավորականության նշանավոր դեմքերին՝ պարբերականին աշխատակցելու խնդրանքով: Ստեղծվում է «Գրական բաժին», որն «առանձնանում է ինչպես տպագրվող գրողների հեղինակավոր կազմով. Հովհ. Թումանյան, Վ. Տերյան, Վրթ. Փափազյան, Լեո, Ստ. Զորյան, Ե. Չարենց, Կ. Միքայելյան, Գ. Քալաշյան, Վեսպեր … + Դ. Դեմիրճյանի, – այնպես էլ հրապարակախոսական ընդհանուր (ներառյալ լեզվական) մակարդակով: Ըստ այդմ, օրինակորեն կարելի է այն համարել «Նորք» հանդեսի արժանավոր նախորդը Հայաստանի հողի վրա»[65]*,– իրավացիորեն նկատում է Ավ. Զաքարյանը:*

Հովհ. Թումանյանը 1920 թ. հունվարի երրորդ տասնօրյակին Դ. Անանունին հայտնում է. «Գրել էիք «Հայկոոպին» աշխատակցելու մասին: Ես ի՞նչ գրեմ «Հայկոոպում» և դրանից ինչ եմ հասկանում, թեկուզ շատ էլ հավանում եմ ու մինչև անգամ շատ եմ համակրում: Իսկ անունս տալը քանի գրոշ արժի, որ վրեն լինի, դրանից ինչ է դուրս գալու»[66]*:*

1920 թ. մայիսի 29-ին Թումանյանն Անանունին գրում է. «Սիրելի Դավիթ, // Ախպեր, ես քեզ մոտ սևերես դուրս եկա: // Խոստացա թե «Հայկոոպի» համար «Մերոնք»[67] *կգրեմ կուղարկեմ ու չարի: // Միշտ էսպես է լինում, երբ որ մարդ ուրիշի տեղակ խոսք է տալիս: Ես էլ իմ մուսայի տեղակ խոսք տվի – ու նա չեկավ, ես էլ մնացի սևերես: … Էսքան տարի մտածել եմ պարապեմ (գրականությամբ– Ա. Զ.) ու չեմ կարողացել պարապեմ, միշտ հետաձգել եմ: Սրանից դենն էլ հետաձգել չի լինիլ: Ոչ միայն ժամանակս է անց կենում, այլև հենց ինքս էլ եմ անց կենում: Բայց ինձ ուժեղ կերպով էսպես է դրդում ու տրամադրում մեր նոր կյանքը, նոր Հայաստանը: Ամեն մարդ այժմ պետք է իր տեղը ամուր կանգնի և ավելի եռանդով անի իր անելիք գործը: Եվ մենք շատ*

բաթաթերթը հրատարակել է խմբագրական կոլեգիան, բայց փաստացի խմբագիրը եղել է Դ. Անանունը, իսկ քարտուղարի պաշտոնը վարել է գրող Ստ. Զորյանը: Հանդեսի բնաբանն է՝ «Միությունը ուժ է»: Տպագրվել է Էջմիածնում, խմբագրությունը գտնվել է Երևանում: Երկշաբաթաթերթի էջերում ամենից հաճախակի տպագրվում են Դ. Անանունի հոդվածները և նյութերն ամենատարբեր թեմաներով՝ սկսած հողային խնդրից ու կոոպերատիվներից, վերջացած Հայկական հարցով, միջազգային քաղաքականության հիմնախնդիրներով, հասարակական-քաղաքական, ազգային-կուսակցական, գրական-մշակութային բնույթի բազում հարցերով:

[65] *Զ ա ք ա ր յ ա ն. 1997, 706:*

[66] *Թ ո ւ մ ա ն յ ա ն. 1999, 342:*

[67] *«Մերոնք»-ն անավարտ պատմվածքաշար է: Այս խորագրի ներքո 1910 թ. «Հորիզոն»-ում տպագրվել են «Նեսոյի քարաբաղնիսը» և «Քեռի Խեչանը» պատմվածքները: «Թ<ումանյանը> ծրագրել էր այս շարքից գրել նաև «Ստորոժ Մաթոսը» (պահպանվել է մի հատված), «Մելիքի կարծիքը», «Ռուսեթի խիարը», «Հանելուկը» (Ալեքի ու Ռամազի Սաքոյի), «Ռամազի Սաքոյի անքնությունը», «Մարցրցի պառավը (սպրդաթության ժամանակ)» (տե՛ս «Հովհաննես Թումանյան. հանրագիտարան». 2020, 304):*

բան պետք է անենք ու կարող ենք անել: Ես զարմանալի մեծ հավատ ունեմ ու մեծ կարծիք մեր ցեղի հոգևոր ու բարոյական կարողության (պոտենցիա) վրա: // Թե տաճկական վերջին փորձանքից էլ ազատվեցինք – ամեն բան շատ լավ կգնա, իմն էլ ընդհանուրի հետ: // Բայց էս խորհրդածությունից ... քեզ օգուտ չկա, եթե նաղդ մի օգուտ կա քեզ էդ էն է, որ նամակիս հետ երկու քառյակ եմ ուղարկում[68]*, գուցե թե դրանով կարողանամ քու խմբագրական ցաստմը մեղմել, մինչև Աստված ողորմած է, հետո էլ՝ այսինքն ամառը – «Մերոնք» կուղարկեմ: Իհարկե, եթե գրեմ»*[69]*:*

Թումանյանի «Քառյակներ»-ն Անանունի գնահատմամբ (1920 թ.)

1920 թ. լույս է տեսնում Հովհ. Թումանյանի «Քառյակներ» վերնագրով գրքույկը: Դ. Անանունը դրա մասին «Իմացության թախիծը (Հովհ. Թումանյան՝ «Քառյակներ», Թիֆլիս, 1920, գինը 30 ռ.)» վերնագրով քննադատական ուշագրավ հոդված է տպագրել: «Հովհ. Թումանյանի տաղանդի այս արտադրություններին կարելի է մոտենալ երկու եղանակով: Եղանակներից մեկը, դժվարինը, այն է, թե հասարակական որպիսի պայմանների ազդեցության տակ մեր բանաստեղծը եկել կանգ է առել դատավորի կոչման վրա: Այո, դատավորի, որի մեջ մարել է վրեժխնդրության կիրքը և որը իր համար կյանքի կանոն է դարձրել բոլոր իմաստությամբ բեռնավորված մարդկանց հայեցակետը – ամենը հասկանալ, ամենը ներել: Մյուս եղանակը, հեշտագույնը, նրա քառյակների բովանդակության պարզ պատմումն է, համեմած որոշ կարգի դատողություններով, որոնք՝ նայած քննադատի կարողության ու շնորքին՝ կարող են այն միտքը հաղորդել ընթերցողին, թե բանաստեղծը բողոքում է մսակերության դեմ և քարոզում բանջարակերություն, – գրում է Դ. Անանունը: – Այդպես է նայել, օրինակ, տասներկուերորդ քառյակին պ. Տ. Փիրումյանը «Աշխատավորում» տպագրած իր հոդվածի մեջ[70]*: Պարզ է, որ քննադատին այս դեպքում փրկում է նրա պարզամտությունը:*

---

[68] *Խոսքը «Ինչ իմանաս Ստեղծողի գաղտնիքները անմեկին. ...» (գրել է 1920 թ. մարտի 30-ին) և «Երնեկ էսպես՝ անվերջ քեզ հետ – իմ կյանքի հետ լինեի» (գրել է 1920 թ. մայիսի 12-ին) սկզբնատողերով քառյակների մասին է, որոնք տպագրվել են «Հայաստանի կոոպերացիա» երկշաբաթաթերթի 1920 թ. հուլիսի 15-ի № 13-ում (էջ 512):*

[69] *Թ ու մ ա ն յ ա ն. 1999, 349–350: Ի դեպ, նամակն ավարտվում է հետևյալ ձևակերպումով՝ «Քո Հովհ. Թումանյան»:*

[70] *«Խոսքը «Աշխատավոր» (Թիֆլիս) թերթի 1920 թ. հունվարի 29-ի համարում տպագրված Տ. Փիրումյանի «Գրական նկատողություններ» հոդվածի երկրորդ մասի՝ Հովհ. Թումանյանի «Քառյակներ» գրքույկի մասին է: Հեղինակը գրում է. «... նոր լույս տեսած «Քառյակները» ոչ մի նոր բան չեն ավելացնում մեր քանքարավոր բանաստեղծի տաղանդին: Սակայն արդարությունը պահանջում է ասել, որ պ. Թումանյանի այդ գրքույկում կա մի հատիկ, մեր գրականության մեջ դեռևս չպատահած սրտառուչ ու շատ ազդու նախադասություն (12-րդ քառյակը – Ա. Զ.), ահա նա. –*

Երազումըս մի մաքի
Մոտըս եկավ հարցմունքի,
Աստված պահի քո որդին,
Ո՞նց էր համը իմ ճաղի ...

Մենք կարծում ենք, որ Հովհ. Թումանյանի քառյակներին կարելի է և պետք է մոտենալ քննադատության առաջին եղանակով: Նրա անունը այլևս որակումներ չի ընդունում. բանաստեղծ է առանց տիտղոսների: Եվ քննադատից պահանջվում է պարզել, թե ինչ երևույթներ են դրավել բանաստեղծի ուշադրությունը, մրրկել նրա հոգին և վճռի արժանացել: Այս աշխատանքը անպայման դժվարին է և կարող է պատահել, որ քննադատը զոհ գնա գռեհիկ բացատրությունների:

Մեր բանաստեղծը անուն է նվաճել նրանով, որ ազգային միջավայրի երևույթները իր տաղանդով կոկել է ու դարձրել գերազանցորեն մարդկային, ուրեմն և ընտանի բոլոր ազգերին: Տաղանդը ազգային նեղ շրջանակից նրան առաջնորդել է դեպի համամարդկային զգացումների ու խոհերի ասպարեզ: Այս բարերար հանգամանքին զուգադիպել է մարդկային ցեղի արդի վիճակը, երբ ավերվել են բոլոր ինքնամփոփ դրությունները և աշխարհի մի վայրում տեղի ունեցած երևույթը գալիս է մղումներ հաղորդելու հեռավոր անկյունների մարդկային համախմբումներին: ...

Ընտրյալը, ներկա դեպքում բանաստեղծ Հովհ. Թումանյանը, զգում է մարդկության չզգացածը և նրան կոչում դեպի կատարելագործում: Ճանաչիր շրջապատդ, ինքդ քեզ և քո ձեռքերի գործը, ասում է նա մարդուն, ճանաչի՛ր և կտեսնես, որ աշխարհը ոչ ոքի չի մնացել և պետք չկա այլանդակել փոխադարձ ինքնասպառումով նրա «չեն ու լի» հարկը:

Երանի՜ նրանց, որոնք հասել են իմացության այս կատարին և խաղաղավետ հոգով դիտում են մարդու արարքները, դիտում, թախծում և աղո՛թում ...»[71]*:*

... Երևանում գտնվող որդուն՝ Արեգին ուղղված <1921, հուլիսի 11, Թիֆլիս> թվակիր նամակում Հովհ. Թումանյանը գրում է. «Բարևիր բոլոր ընկեր-բարեկամներիս: Դավթին հատկապես, ...»[72]*:*

1923 թ. մարտի 28-ին Դ. Անանունը Ե. Շահազիզի, Ե. Լալայանի, Մ. Սարյանի, Ստ. Զորյանի, Մ. Էփրիկի հետ հեռագրով «անկեղծ ցավակցություն» են հայտնել «մեր թանկագին բանաստեղծ Հովհ. Թումանյանի մահվան առիթով»[73]*:*

Շահարկումներ՝ կապված Հովհ. Թումանյանի ստեղծագործությանը տրված գնահատականների շուրջ

1927 թ. Դ. Անանունի դատապարտվելուց հետո էլ[74] *շարունակվել են նրա անվան շահարկումները՝ նաև կապված Հովհ. Թումանյանի ստեղծագործությանը տրված գնահատականների հետ: Այսպես, օրինակ, «Գրական թերթ»-ի 1938 թ. հունվարյան համարներից մեկում Ա. Մակարյանը «Մինչև վերջ մեր-*

Հեղինակը կարող է պարծենալ, որ այդ քառյակով շատ հաջող բողոք է բարձրացնում կենդանիներ մորթելու սովորության դեմ, այսինքն քարոզում է վեգիտարիական (բանջարակերական) փիլիսոփայություն»: Թումանյանի «Քառյակներ»-ի մասին հանգամանորեն տե՛ս Մ ն ա ց ա կ ա ն յ ա ն. 2021, 95–110:

[71] «Հայաստանի կոոպերացիա» (Երևան), № 4, փետրվարի 29, 1920, էջ 126–128, Զ ա ք ա ր յ ա ն. 2020 բ, 433–436:

[72] Թ ո ւ մ ա ն յ ա ն. 1999, 388:

[73] «Մարտակոչ» (Թիֆլիս), 28. III. 1923:

[74] Մանրամասն տե՛ս Հ ա կ ո բ յ ա ն. 2020, 147–159:

կացնել նացիոնալ-բուրժուական գրականության վնասակար հետքերը» վերնագրով հոդվածում, խոսելով, մասնավորապես, Հովհ. Թումանյանին «նահապետականության» մեջ մեղադրող «Մեր ժողովրդի թշնամիների՝ նացիոնալիստական, դաշնակցական, սպեցիֆիկյան, տրոցկիստական տականքների «գրականագիտական» խարդախ ... մարգանքները» մինչև վերջ մերկացնելու մասին, գրում է. «Այստեղ կարևոր ենք համարում միայն նշել քաղաքական այն ստոր նպատակը, որի համար մեր մեծանուն հեղինակը (Հովհ. Թումանյանը – Ա. Զ.) քավության նոխազ է դարձել: Մակինցյանն աշխատում է արժեզրկել Թումանյանի հատկապես ա՛յն գործերը (խոսքը, ամենայն հավանականությամբ, բանաստեղծի 60-ամյակի առթիվ 1929 թ. Պետհրատի հրատարակած Թումանյանի «Ընտիր գրվածներ» գրքում Պ. Մակինցյանի «Ժողովրդական բանաստեղծ» վերնագրով առաջաբանի՝ «ուսումնասիրության» մասին է – Ա. Զ.), որոնց մեջ անդրադարձել են հայ կապիտալիստական գյուղի սոցիալական հակասությունները («Հառաչանքը», պատմվածքները և այլն): Այս կերպ դաշնակ Մակինցյանը շարունակում էր նաև սպեցիֆիզմի կազմակերպիչներից մեկի՝ հակահեղափոխական Դ. Անանունի անփառունակ գործը. վերջինս Թումանյանի գործունեությունը համարել է «Անցյալի մեծարանքը», նրան որակել է սոսկ իբրև «նահապետական երգիչ»: Մակինցյանը ամբողջովին միանում է Դ. Անանունին: Սպեցիֆիկներն ամեն կերպ մասսայականացրել են այդ հակաժողովրդական տեսակետը: Ե. Զարենցը, իբրև Անանունի վիժվածքը Թումանյանի մասին գրել է՝ «Հնի, անցյալի, նահապետական գյուղի մութ ու խավար կենցաղի հայելին էր Թումանյանը»[75]:

Եզրակացություն

Հանրագումարի բերելով վերը շարադրված նյութը՝ կարելի է արձանագրել. Անանունի և Հովհ. Թումանյանի գրական-հասարակական առնչությունները, մասնավորապես, դրսևորվել են հետևյալ ուղղություններով. ա) Անանունը մի շարք հոդվածներ է գրել Թումանյանի ստեղծագործությունների մասին՝ ըստ արժանվույն գնահատելով դրանք, բ) «Մշակ» թերթի և Հովհ. Թումանյանի գլխավորած Հայ գրողների կովկասյան ընկերության փոխհարաբերության հետ կապված հարցերի շուրջ վերջինիս հետ ունեցել է սուր բանավեճ, գ) մասնակցել է Թումանյանի ղեկավարած «Համաշխարհային պատերազմից հայ ժողովրդի կրած վնասների քննիչ հանձնաժողովի» աշխատանքներին, դ) տարբեր առիթներով Թումանյանը ֆինանսական աջակցություն է ցուցաբերել Անանունին, ե) բանաստեղծն աշխատակցել է վերջինիս խմբագրած «Հայաստանի կոոպերացիա» երկշաբաթաթերթին և այլն:

Դ. Անանունի և Հովհ. Թումանյանի գրական-հասարակական առնչությունները ոչ միայն նրանց կյանքի ու գործունեության կարևորագույն դրվագներից են, այլև լրացնում են հայագիտության ու Թումանյանագիտության սպիտակ էջերից մեկը:

Անուշավան Զաքարյան – բ. գ. դ., ՊԲՀ-ի գլխավոր խմբագիր, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի սփյուռքահայ արվեստի և միջազգային կապերի բաժնի ավագ գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունները՝ XX դարասկզբի առաջին քառորդի հայ իրականության հարցեր, Հայկական հարց և

[75] *«Գրական թերթ» (Երևան), 18. I. 1938:*

Հայոց ցեղասպանություն, հայ-ռուս պատմագրական, մշակութային կապեր: Հեղինակ է 22 մենագրության ու ժողովածուի, ավելի քան 260 հոդվածների և հրապարակումների: patmhandes@rambler.ru

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Աբրահամյան Հ. Բ. 2001, Հայ գրողների նամակները Դավիթ Անանունին. – ՀՀ ԳԱԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», № 2, էջ 198–213:

Ահարոնեան Վ. 2019, Յովհաննէս Թումանեան. մարդը եւ բանաստեղծը, Երեւան, Համազգային Հայ Կրթական եւ Մշակութային Միություն, 320 էջ:

«Աշխատավոր» (Թիֆլիս), 19, 24. VI. 1919, 29. I. 1920:

«Բաքվի ձայն», 09, 18, 21. IV, 26. IV, 19. V, 02, 05. VI. 1913:

«Գարուն» (Մոսկվա), 1912, գիրք III, էջ 99–128:

«Գրական-գեղարվեստական ալմանախ» (Թիֆլիս), 1919, № 5, էջ 128–144:

«Գրական թերթ» (Երևան), 18. I. 1938:

Դավիթ Անանունի նամակագրությունից (հրապարակում՝ Գ. Հ. Ազնավուրյանի). 1984. – ՊԲՀ, № 1, էջ 171–177:

«Զանգ» (Երևան), 08, 17. VII. 1917:

Զաքարյան Ալ. 1997, Եղիշե Չարենց: Կյանքը, գործը, ժամանակը, գիրք 1, Երևան, ՀՀ ԳԱԱ հրատ., 968 էջ:

Զաքարյան Ա. 2010 ա, Հուշեր Դավիթ Անանունի մասին (ծննդյան 130-ամյակի առթիվ).– ՊԲՀ, № 1, էջ 245–252:

Զաքարյան Ա. 2010 բ, Սերգեյ Գորոդեցկին Արևմտյան Հայաստանում և Անդրկովկասում, Երևան, Հեղ. հրատ., 202 էջ:

Զաքարյան Ա. 2020 ա, Դավիթ Անանուն. մարդը և գործը (ծննդյան 140-ամյակի առթիվ).– ՊԲՀ, № 1, էջ 90–127:

Զաքարյան Ա. 2020 բ, Դավիթ Անանունը Հովհաննես Թումանյանի մասին (Դ. Անանունի ծննդյան 140-ամյակի առթիվ). – ՀՀ ԳԱԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», № 1, էջ 430–436:

Զաքարյան Ա. 2023 ա, Դավիթ Անանուն. նամակների ընտրանի. – ՊԲՀ, № 1, էջ 207–246:

Զաքարյան Ա. 2023 բ, Ավետիք Իսահակյանի և Դավիթ Անանունի առնչությունների շուրջ. – ՀՀ ԳԱԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», № 1, էջ 106–113:

Զորյան Ստ. 1985, Երկերի ժողովածու 12 հատորով, հ. 11, Երևան, «Սովետական գրող» հրատ., 560 էջ:

Թումանյան Հովհ. 1999, Երկերի լիակատար ժողովածու տաս հատորով, հ. 10, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 771 էջ:

Հակոբյան Վ. 2012, Դավիթ Անանունի հուշերը Ստեփան Շահումյանի մասին.– «Պատմություն և մշակույթ» հայագիտական հանդես (Երևան), Գ, էջ 123–135:

Հակոբյան Վ. 2020, Դավիթ Անանուն, Երևան, Հեղ. հրատ., 210 էջ:

Հակոբյան Վ. 2021, Դավիթ Անանունի նամակագրությունից.– «Պատմություն և մշակույթ» հայագիտական հանդես, №1, էջ 206–218:

Հայ ժողովրդի կորուստները Առաջին աշխարհամարտի տարիներին («Համաշխարհային պատերազմից հայ ժողովրդի կրած վնասների քննիչ հանձնաժողովի» փաստաթղթերի և նյութերի ժողովածու). 2005: Կազմող, առաջաբանի և ծանոթագրությունների հեղինակ Անուշավան Զաքարյան, Երևան, ՀՀ ԳԱԱ հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, 239 էջ:

Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 221, ց. 1, գ. 38, թ. 131 և շրջ.: Թողոն: Ձեռագիր:

«Հայաստանի աշխատավոր» (Երևան), 08. VII. 1919:

«Հայաստանի կոոպերացիա» (Երևան), № 4, փետրվարի 29, 1920, էջ 126–128, № 13, հուլիսի 15, 1920, էջ 512:

Հայաստանի Հանրապետության գրականության և արվեստի թանգարան, Կ. Միքայելյանի ֆ., թիվ 732, 2 թ., Դ. Անանունի ֆ., թիվ 68, թ. 1, թիվ, 81, թ.1, թիվ 104–106, թ. 2:

«Հառաջ» (Երևան), 04. X. 1919, 18. III. 1920:

Հովհաննես Թումանյան. 2019, Նորահայտ փաստաթղթեր: Աշխատասիրությամբ՝ Հ. Կ. Սուքիասյանի, Երևան, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 120 էջ:

Հովհաննես Թումանյանի կյանքի և ստեղծագործության տարեգրություն (1909–1914). 2016, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 859 էջ + 8 էջ նկ.:

Հովհաննես Թումանյանի կյանքի և ստեղծագործության տարեգրություն (1915–1919). 2019, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 867 էջ:

Հովհաննես Թումանյանը ժամանակի գրաքննադատական մտքի գնահատությամբ (1890–1913). 2019, հ. 1: Կազմեց, ծանոթագրեց և հրատարակության պատրաստեց Եվա Մնացականյանը, Երևան, ՎՄՎ-Պրինտ, 680 էջ:

«Հովհաննես Թումանյան. հանրագիտարան». 2020, Երևան, Հայկական հանրագիտարան. հրատարակչություն, 1224 էջ:

Հովհաննիսյան Ս. 2007, Թումանյանը և հայ գրողների կովկասյան ընկերությունը, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 340 էջ:

Հովհաննիսյան Ս. 2020, «Առաքելյան Համբարձում Աստվածատուրի» բառահոդված. – «Հովհաննես Թումանյան. հանրագիտարան», Երևան, Հայկական հանրագիտարան. հրատարակչություն, էջ 772–776:

«Հորիզոն» (Թիֆլիս), 07, 08. IX. 1912, 23. II. 1914, 14. II. 1916:

«Մարտակոչ» (Թիֆլիս), 28. III. 1923:

Մնացականյան Ե. 2016, Դավիթ Անանունի «Անցյալի մեծարանքը».– «Բանբեր հայագիտության» (Երևան), № 3, էջ 159–173:

Մնացականյան Ե. 2017, Թումանյանի 50-ամյակի հոբելյանական հանդիսությունների արձագանքները մամուլում (ծննդյան 150-ամյակին ընդառաջ). – ՊԲՀ, № 3, էջ 91–103:

Մնացականյան Ե. 2020, «Անանուն Դավիթ» բառահոդված.– «Հովհաննես Թումանյան. հանրագիտարան», Երևան, Հայկական հանրագիտարան. հրատարակչություն, էջ 763–765:

Մնացականյան Ե. 2021, Հովհաննես Թումանյանի քառյակները ժամանակի գրաքննադատության գնահատմամբ.– «Էջմիածին», հ. Թ, էջ 95–110:

«Մշակ» (Թիֆլիս), 26. IX. 1912, 17. I. 1916, 06. II. 1916, 01. III. 1916, 15. XI. 1916, 18. XI. 1916, 20. II. 1919:

«Նոր աշխատավոր» (Թիֆլիս), 14. XII. 1919:

«Նոր կյանք» (Բաքու), 1911–1912 թթ.:

Զրբաշյան էդ. Մ. 1964, Թումանյանի պոեմները, Երևան, ԵՊՀ հրատ., 508 էջ:

Զրբաշյան է. Մ. 1979, Հովհ. Թումանյանը և 1910-ական թվականների գրական քննադատությունը.– ՊԲՀ, № 2, էջ 28–44:

Զրբաշյան է. Մ. 1982, Չորս գագաթ: Թումանյան, Իսահակյան, Տերյան, Չարենց, Երևան, «Սովետական գրող» հրատ., 468 էջ:

Սարինյան Ս. 1989, Հայոց գրականության երկու դարը, գիրք 2, Երևան, «Խորհրդային գրող» հրատ., 568 էջ:

Սուրխաթյան Հ. Դարձյալ գրական քննադատության առիթով.– «Մշակ», 15, 16. V. 1913:

Սուքիասյան Հ. 2019 ա, Հայ հայրենակցական միությունների միության հոբելյանական միջոցառումները՝ նվիրված Հովհաննես Թումանյանի 50-ամյակին. – ՊԲՀ, № 1, էջ 227–235:

Սուքիասյան Հ. 2019 բ, Հին ու նոր տոմարների տարբերությունը և Հովհաննես Թումանյանի ծննդյան ամսաթվի հարցը 1910–1930-ական թվականներին. – ՊԲՀ, № 2, էջ 47–56:

Վարդանյան Գ. 2003, Մշակույթը Հայաստանի առաջին Հանրապետությունում (1918–1920 թթ.), Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 158 էջ:

Քալանթարյան Ժ. 2020–1, Նոր ազդակ թումանյանագիտության զարգացման համար. – «Գրականագիտական հանդես» (Երևան), Ի, էջ 240–265:

Закарян А. 2016, Армения в литературно-общественной деятельности В. Брюсова. Ереван, Изд. «Гитутюн» НАН РА, 168 с.

Закарян А. 2019, О праздновании 50-летия Ованеса Туманяна в Тифлисе. – ИФЖ, № 1, с. 205–226.

ДАВИД АНАНУН И ОВАНЕС ТУМАНЯН: ЛИТЕРАТУРНО-ОБЩЕСТВЕННЫЕ СВЯЗИ

АНУШАВАН ЗАКАРЯН

Р е з ю м е

Ключевые слова: Д. Ананун, Ов. Туманян, письма, Кавказское общество армянских писателей, газета «Мшак», статьи, Следственная комиссия, двухнедельная газета «Кооперация Армении», четверостишия.

Арменовед Давид Ананун [Давид Оганович (Ованесович) Тер-Даниелян, 1880–1943] – выдающийся представитель армянской общественно-политической, литературно-культурной действительности первого тридцатилетия XX в. На протяжении всей своей содержательной деятельности он поддерживал тесные связи со многими представителями армянской реальности того времени. Особый интерес представляют его литературно-общественные связи с поэтом всех армян Ованесом Туманяном, вектор которых был весьма широк: а) Ананун написал ряд статей о Туманяне и его творчестве, дав ему достойную оценку, б) в связи с вопросами об отношениях между редакцией газеты «Мшак» и возглавляемым Ов. Туманяном Кавказским обществом армянских писателей развернул с последним острую полемику, в) принимал участие в работе возглавляемого Туманяном «Бюро по установлению потерь армян от всемирной войны», г) Туманян по разным поводам оказывал Анануну финансовую поддержку, д) поэт сотрудничал с редактируемой Д. Анануном двухнедельной газетой «Кооперация Армении» и т. д.

Литературно-общественные связи Д. Анануна и Ов. Туманяна не только составляют важнейшую часть их жизни и деятельности, но и восполняют одну из белых страниц арменоведения и туманяноведения.

Анушаван Закарян – д. филол. н., главный редактор ИФЖ, старший научный сотрудник отдела искусства армянской диаспоры и международных связей Института искусств НАН РА. Научные интересы: вопросы первой четверти армянской действительности XX века, Армянский вопрос и Геноцид армян, армяно-русские историко-литературные и культурные связи. Автор 22 монографий и сборников, более 260 статей и публикаций. patmhandes@rambler.ru

DAVID ANANUN AND HOVHANNES TUMANYAN: LITARARY AND PUBLIC RELATIONS

ANUSHAVAN ZAKARYAN

S u m m a r y

Keywords: D. Ananun, H. Tumanyan, letters, Caucasian society of Armenian writers, newspaper "Mshak", articles, Commission of inquiry, biweekly newspaper "Cooperation of Armenia", quatrians.

Armenologist David Ananun [David Hovhanovich (Hovhannesovich) Ter-Danielyan, 1880-1943] is a distinguished representative of Armenian social-political, literary and cultural reality of the first thirty years of the XX century. Throughout all his substantive activity he maintained close ties with many representatives of the Armenian reality of that time. His literary and public relations of extremely wide vector with the poet of all Armenians Hovhannes Tumanyan are of particular interest: (a) Ananun wrote a number of articles about Tumanyan highly appreciating his works of art; (b) in connection with the issues about relations between the editorial staff of the newspaper "Mshak" and Caucasian society of Armenian writers headed by Tumanyan, he unfolded a heated debates with the latter; (c) he took part in the work of the "Commission for establishing losses of Armenians during the world war" led by Tumanyan; (d) Tumanyan provided financial support to Ananun on different occasions; (e) the poet contributed to the biweekly newspaper "Cooperation of Armenia" edited by Ananun, etc.

Literary and public ties of D. Ananun and H. Tumanyan do not only form the most important part of their life and work but also fill one of the white pages of Armenian and Tumanyan studies.

Anushavan Zakaryan – Doctor of Sciences in Philology, Editor-in-Chief of the HPHJ, Senior Researcher at the Department of Arts of the Armenian Diaspora and International Relations at the NAS RA Institute of Arts. Scientific interests: issues of the first quarter of the Armenian reality of the 20th century, the Armenian Question and the Armenian Genocide, Armenian-Russian historical-literary and cultural ties. Author of 22 monographs and collections, over 260 articles and publications. patmhandes@rambler.ru

Պատմաբանասիրական հանդես • Историко-филологический журнал • Historical and Philological Journal • 2023 № 2

ՀՏԴ : 919.81

Doi:10.54503/0135-0536-2023.2-202

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆԻ՝ ԽՆԴՐԱՌՈՒԹՅԱՄԲ ԵՐԿԱՐԺՈՒՅԹ ՉԵԶՈՔ ՍԵՌԻ ԲԱՅԵՐԸ*

ԼԱԼԱ ԳՐՔԻԿՅԱՆ

Բանալի բառեր՝ արժույթ, չեզոք սեռի բայեր, անուղղակի խնդիր, կապակցելիություն, կառավարում, անմիջական կառավարում, միջնորդական կառավարում, կապական կառույց:

Նախաբան

Հայերենի բայի խնդրառական արժույթին հայ լեզվաբաններից առաջինն անդրադարձել է անվանի լեզվաբան Գևորգ Ջահուկյանը՝ ժամանակակից հայերենում առանձնացնելով միարժույթ և երկարժույթ բայեր[1]*: Դրանից բացի՝ նա տարանջատում է «կառավարության» երկու տեսակ՝ միակի և բազմակի*[2]*, դրանք համարելով ուժեղ կառավարության արտահայտություն*[3]*: Գ. Ջահուկյանին մասնակիորեն հետևում է հայտնի լեզվաբան Հմայակ Օհանյանը: Նախընտրելով ոչ թե կառավարություն, այլ խնդրառություն եզրույթը՝ նա նույնպես առանձնացնում է խնդրառության երկու տեսակ, սակայն միակի խնդրառություն և կրկնակի խնդրառություն ձևակերպումներով*[4]*: Լեզվաբան Հենրիկ Հարությունյանը նախապատվությունը տալիս է կառավարում եզրույթին*[5]*, որը մեր օրերում գործածվում է ժամանակակից հայ լեզվաբանների մեծ մասի կողմից: Իրենց հեղինակած բուհական ուսումնասիրություններում իմաստային տեսանկյունից ուժեղ կառավարմամբ միարժույթ և երկարժույթ չեզոք սեռի բայերին անդրադարձել են նաև լեզվաբաններ Ռաֆայել Իշխանյանը, Մանվել Ասատրյանը, Սիրաք Գյուլբուդաղյանը, Սիլվա Մուրադյանը և այլք, սակայն նոր դիտարկումներ չունեն*[6]*: Վաստակաշատ լեզվաբան Գուրգեն Խաչատրյանն այդ հարցը քննության է առել գրաբարի վերլուծական բայերի արժույթին վերաբերող մենագրությունում*[7]*:*

---

* *Ներկայացվել է 22. II. 2023 թ.: Հոդվածը տպագրության է երաշխավորել գիտական ղեկավար, բ. գ. դ., պրոֆ. Գ. Խաչատրյանը (03. III. 2023 թ.): Ընդունվել է տպագրության 19. VI. 2023 թ.:*

[1] *Ջ ա հ ո ւ կ յ ա ն. 1974, 473:*

[2] *Ջ ա հ ո ւ կ յ ա ն. 1974, 425:*

[3] *Ջ ա հ ո ւ կ յ ա ն. 1974, 425:*

[4] *Օ հ ա ն յ ա ն. 1987, 26:*

[5] *Հ ա ր ո ւ թ յ ո ւ ն յ ա ն. 1983, 28:*

[6] *Ի շ խ ա ն յ ա ն. 1986, 267–268, Ա ս ա տ ր յ ա ն. 1987, 222–246, Գ յ ո ւ լ բ ո ւ դ ա ղ յ ա ն. 1988, 23, Մ ո ւ ր ա դ յ ա ն. 2019, 335–342:*

[7] *Խ ա չ ա տ ր յ ա ն. 2000, 136–175:*

Ժամանակակից հայերենի քերականական արժույթի ուսումնասիրությամբ արձանագրվում են բառապաշարի, մասնավորապես՝ բայերի կապակցական հնարավորությունները հայերենի զարգացման ներկա շրջանում: Ինչպես տեսնում ենք, նշված տեսանկյունից առկա են որոշակի ձեռքբերումներ, որոնք էլ վկայում են թեմայի արդիականության մասին: Սակայն չեզոք սեռի բայերի մասնավորապես խնդրառական արժույթն առ այսօր համակողմանի քննության չի ենթարկվել:

Կուսումնասիրենք ժամանակակից հայերենի՝ խնդրառությամբ երկարժույթ չեզոք սեռի բայերը՝ նպատակ հետապնդելով վեր հանել նշված բայերի կապակցական հնարավորություններն ու առանձնահատկությունները: Նշենք՝ քննությունը կատարելիս առաջնորդվել ենք նկարագրական, վերլուծական, համադրական, *երբեմն էլ՝* վիճակագրական *մեթոդներով:*

Ժամանակակից հայերենի՝ խնդրառությամբ երկարժույթ չեզոք սեռի բայերն ու նրանց ուժեղ կառավարմամբ կապակցվող հոլովական և կապական լրացումները

Ուսումնասիրությունը կատարելիս հիմք ենք ընդունել «Հայերեն բացատրական բառարանը»[8]*, «Արդի հայերենի բացատրական բառարանը»*[9]*, «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանը»*[10]*, «Արդի հայերենի նորաբանությունների բառարանը»*[11]*, Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի խմբագրական-հրատարակչական հանձնախմբի կազմած բարբառային բառարանը*[12] *և այլն: Ըստ մեր հաշվարկների՝ նշված բառարաններում ժամանակակից հայերենի չեզոք սեռի բայերի թիվը հասնում է մոտավորապես 5500-ի, որոնցից շուրջ 3500-ը պատկանում են ե, իսկ ավելի քան 2000-ը՝ ա խոնարհման: Հատկանշական է նաև, որ վերջիններիս կազմում գերակշռում են* — ան- *սոսկածանցավոր կազմությունները (շուրջ 1500 բայ): Սակայն չեզոք սեռի՝ խնդրառությամբ երկարժույթ բայերի քննությունից պարզվում է, որ դրանցից ոչ բոլորն են բնորոշվում ուժեղ կառավարմամբ խնդրառական արժույթով:*

Այսպես՝ ժամանակակից հայերենի չեզոք սեռի մի շարք բայեր կա՛մ ընդհանրապես զուրկ են խնդրառական արժույթից, կա՛մ առանձնանում են թույլ կառավարմամբ խնդրառությամբ: Դրանցից են՝ ամառնանալ, աշունանալ, աշունվել, առավոտանալ, արևել, բանաստեղծանալ, գարունանալ, գժդմնել, գիշերանալ, դեմոկրատանալ, երեկոյանալ, իրիկնանալ, լեռնամագլցել, ծիծաղել, կայծակել, կարկտել, ձմեռնանալ, մահանալ, տխրել, ցերեկանալ *և այլն:*

Մի խումբ բայեր առանձնանում են ուժեղ կառավարմամբ և խնդրառությամբ միարժույթ են. ենթադրում և պահանջում են մեկ բնության (անուղղակի) խնդիր, ինչպես՝ հավատիանալ, հավատալ, ծանոթանալ *և այլն: Իսկ չեզոք սեռի մի շարք բայեր, պայմանավորված իրենց բառիմաստով, խնդրա-*

[8] *Մալխասեանց. 1944–1945:*
[9] *Աղայան. 1976:*
[10] *Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան. 1969–1980:*
[11] *Էլոյան. 2002:*
[12] *Հայոց լեզվի բարբառային բառարան. 2001–2007:*

ռությամբ երկարժույթ են. ենթադրում և պահանջում են երկու բնության խնդիր՝ առանձնանալով կապակցական տարբեր հնարավորություններով:

1. Մի դեպքում, արտահայտված լինելով հոլովաձևերով, երկու բնության խնդիրն էլ միևնույն բային կապակցվում են անմիջական կառավարման եղանակով:

2. Մյուս դեպքում բնության խնդիրներից մեկը, արտահայտված լինելով հոլովաձևով, միևնույն բային կապակցվում է անմիջական, իսկ մյուսը՝ միջնորդական կառավարման եղանակով, քանի որ արտահայտված է կապային կառույցով:

3. Երրորդ դեպքում, արտահայտված լինելով կապային կառույցներով, երկու բնության խնդիրն էլ միևնույն բային կապակցվում են միջնորդական կառավարման եղանակով:

Ելնելով վերոնշյալից՝ ներկայացնենք միևնույն բայ գերադաս անդամի հետ անմիջական ու ոչ անմիջական կամ միջնորդական կառավարման եղանակներով կապակցելիության տարբեր դրսևորումներ, որոնք ուժեղ կամ համեմատաբար ուժեղ կառավարման արտահայտություններ են և ընդհանուր առմամբ ներկայացնում են «չեզոք սեռի բայ – անուղղակի խնդիր – անուղղակի խնդիր» կաղապարը: Վերջինս, ինչպես նշեցինք, ունի արտահայտության երեք տարբերակ՝ հետևյալ մասնակաղապարներով:

1. Չեզոք սեռի բայ – անմիջական կառավարմամբ անուղղակի խնդիր – անմիջական կառավարմամբ անուղղակի խնդիր

I *Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նշված մասնակաղապարով արտահայտվող երկարժույթ չեզոք սեռի բայերի շարքում առավել տարածված է* չեզոք սեռի բայ – տրական հոլովով անուղղակի խնդիր – այլ հոլովով անուղղակի խնդիր *ենթամասնակաղապարը: Որպես առաջին բաղադրիչ՝ նկատի ունենք հանգման և դրան հարակից քերականական հարաբերություն արտահայտող տրականները: Նշված ենթամասնակաղապար ձևավորվում է* աղաչել, աղոթել, աչակերտել, ապավինել, աջակցել, առարկել, արժանանալ[13], բարեխոսել, բարևել, բողոքել, գանգատվել, դավակցել, դավաճանել, դավել, դիմադրել, դիմել, ելնել, երևալ, ընդառաջել, ընդդիմախոսել, թշնամանալ, ծանոթանալ, կառչել, կասկածել, կարեկցել, հակաճառել, հակառակել, համապատասխանել, հանել, հավատալ, մատնակցել, նախանձել, նույնանալ, չարախոսել, վերաբերել, վերաբերվել, վշտակցել, օգնել, օժանդակել *և այլ բայերով:*

Նկատենք, որ բերված շարքում առկա են իմաստային տարբեր խմբերի (ասացական, ուղղության, միասնական գործողության ու այլն) բայեր, և ներկայացնենք դրանցով ձևավորված ու հաճախակի հանդիպող ենթամասնակաղապարները, որոնցում երկրորդ անուղղակի խնդիրն արտահայտվում է.

1. Բացառական հոլովով: Օրինակ. «Փոքր անց, կոտրած կուժն ու ունկը ձեռին, նա բարձրանում էր դյուղ՝ դուրդար Մովսեսին ու կնկան իրենց լիրբ

---

[13] *Այս բայը կարող է հանդես բերել նաև կրավորական սեռի քերականական նշանակություն՝ պահանջելով ներգործող անուղղակի խնդիր: Օրինակ. «Այն ջերմ ընդունելության արժանացավ հանդիսատեսի կողմից» (ԱռՄ):* Արժանանալ *բայն այստեղ իրականում փոխարինում է արժանացնել պատճառականի* արժանացվել *կրավորականին:*

տղից գանգատվելու» *(ՍՉԵԺ1)*: *Բացառականով խնդիրը սովորաբար արտահայտում է վերաբերության իմաստ:*

2. Գործիական հոլովով: Օրինակ. «Փաստերով չեմ առարկում պատմաբանին ...» *(ՄԳ)*: *Գործիականով խնդիրը սովորաբար արտահայտում է միջոցի կամ միանության իմաստ:*

3. Ներգոյական հոլովով: Օրինակ՝ «... *Ֆաշիստներն այսօր իրենց հանցագործ* գործողություններում աչակերտում են երիտթուրքերին ...» *(ՄՍ)*: *Ներգոյականով խնդիրը սովորաբար արտահայտում է սահմանափակման իմաստ:*

2. Չեզոք սեռի բայ – անմիջական կառավարմամբ անուղղակի խնդիր – միջնորդական կառավարմամբ անուղղակի խնդիր

Այս դեպքում խնդիրներից մեկն արտահայտված լինի որևէ հոլովով, իսկ մյուսը՝ կապային կառույցով:

II *Նշված մասնակաղապարով ևս որպես առաջին բաղադրիչ առավել հաճախ գործածվում են հանգման և դրան հարակից քերականական հարաբերություն արտահայտող տրականներ, որոնց զուգորդվում է երկրորդ անուղղակի խնդիրը՝ ձևավորված հետևյալ կապերով ու կապական բառերով.*

ա) առումով՝ «... այս առումով *միայն կարեկցել կարելի է բնապահպանության* նախարարին» *(ԱՄ)*:

բ) Գծով՝ «*Այստեղ, Ստ. Մալխասյանցի դասընկերը լինելով,* հայապետության գծով աչակերտում է Քերովբե Պատկանյանին» *(ԷԱ)*:

գ) Գործում՝ «... *խոստացել է հայ* բարեկամներին օգնել այդ գործում ...» *(ՍրՄ)*:

դ) Դեմ՝ «*Թե չէ գնացել ես* գայլի դեմ գանգատվել *գայլի* եղբորը» *(ՆՉ)*:

ե) Իբրև՝ «*Նա* ինձ պատկերանում է ... իբրև *Զապաևի ու Լազոյի, Ղուկաս Ղուկասյանի ու Կամոյի* ժառանգորդը ...» *(ՄՔՀ)*:

զ) Խնդրում՝ «*Ընթերցանությունն* այդ խնդրում օգնում էր նրան» *(ՇԹ)*:

է) Կողմից՝ «... *նա աղջկան պատվիրել էր* իր կողմից բարևել տիկին Խաչիկյանին ...» *(ՍվՍ)*:

ը) Համար՝ «*Եթե դուք* ինձ համար չաղոթեք աստծուն՝ *ինձ այդ չի ներվի*» *(ՋԲ)*:

թ) Հարցում՝ «... օժանդակել նրանց այդ հարցում ...» *(ԱռՄ)*:

ժ) Հետ՝ «... *ինքը* կնոջ հետ դավել է *խաղաղ քնած* մարդուն» *(ԱՊ)*:

ժա) Մասին՝ «*Դա մեկն էր հենց այն հարցուփորձերից,* որոնց մասին *Սմերդյակովը դեռ նոր* գանգատվում էր Իվան Ֆյոդորովիչին ...» *(ՖԴ)*:

ժբ) Մեջ՝ «... *այնուհետև* աչակերտել է հորը հյուսնության մեջ ...» *(ՄԽ)*:

ժգ) Մոտ՝ «... *հակառակորդներս կարողացան* ինձ չարախոսել Մաքսուդ բեկի մոտ ...» *(ԳԴ)*:

ժդ) Որպես՝ «*Նա* ինձ պատկերանում է որպես *Մաքսիմ Գորկու, Նիկոլայ Օստրովսկու հարազատ* սանը» *(ՄՔՀ)*:

ժե) Տեղը՝ «*Համ էլ էն օրը արդեն* մեկին բարևել եմ քո տեղը ...» *(ԱՖ)*:

ժզ) Փոխարեն՝ «... *որը ճշմարտությունն* ընդունելու փոխարեն *նախընտրում է* հաճոյախոսել *ոճրագործ* թուրքերին» *(ԱՄ)*:

Վերը բերված օրինակների քննությունը ցույց է տալիս, որ՝

1. կապային կառույցներով գերազանցապես արտահայտվում են հանգման, սահմանափակման և վերաբերության խնդրային իմաստներ: Դա պատահական չէ, քանի որ հենց վերջինների դեպքում է գերազանցապես կատարվում ուժեղ կառավարում, որն էլ կարևոր է արժույթի տեսանկյունից:

2. Որոշ բայեր տրականին զուգահեռ կարող են պահանջել տարբեր կապային կառույցներով խնդիրներ, որոնք արտահայտում են միևնույն քերականական իմաստը: Այս դեպքում որպես կապակցման միջոց գործածվում են համանիշ կամ հոմանիշ կապեր ու կապական բառեր: Այսպես՝ առումով, գծով, գործում, խնդրում, հարց(եր)ում, *մեջ կապերով ու կապական բառերով ձևավորվում է սահմանափակման խնդիր,* մասին, շուրջ, *վերաբերյալ կապերով ու կապական բառերով՝ վերաբերության խնդիր և այլն (հմմտ. վերը բերված համապատասխան օրինակները):*

Վերոնշյալ «չեզոք սեռի բայ – տրական հոլովով անուղղակի խնդիր – միջնորդական կառավարմամբ անուղղակի խնդիր» մասնակաղապարով կապակցությունները ուժեղ կամ համեմատաբար ուժեղ կառավարման արտահայտություններ են: Առկա են նաև համեմատաբար թույլ կառավարմամբ կապակցություններ (օրինակ՝ բացի, միջոցով, շնորհիվ *և այլ կապերի դեպքում), ինչպես՝*

ա) Բացի՝ «… *«Գելափի»* տվյալներին *որևէ այլ թեկնածու և կուսակցություն* չի հավատում, բացի ՀՀԿ-ից» *(ԱռՄ):*

բ) Միջոցով՝ «*ԳԹԿ-ի բաժնի* վարիչների միջոցով *տաջիկները* ծանոթացել են *կառույցի ստորաբաժանումներից յուրաքանչյուրի* առաքելությանը» *(ԱռՄ):*

գ) Շնորհիվ՝ «… *պղնձագործության արհեստի* գաղտնիքներին *և* նրբություններին ծանոթացել է հոր շնորհիվ …» *(ԱՄ) և այլն:*

• «Բացառական հոլովով անուղղակի խնդիր+կապային կառույցով անուղղակի խնդիր» *պահանջող բայերից են՝* բողոքել, գանգատվել, դժգոհել, ելնել, զրուցել, հիասթափվել, մնալ, տրտնջալ *և այլն, որոնց պահանջով՝ բացառականով անուղղակի խնդիրներին զուգորդվում են կապային կառույցներով անուղղակի խնդիրներ՝ արտահայտված հետևյալ կապերով.*

ա) առումով՝ «*Այն* որոշ առումով *դուրս* մնաց ուշադրությունից …» (ՆՏՄ):

բ) Գծով՝ «*Փաստորեն կամի արտաղրության անցած հնգամյակի պլանը զգալիորեն թերակատարվել է, և* այդ գծով *ետ* ենք մնում *հանրապետական միջին* արդյունքից» *(ՋՄ):*

գ) Խնդրում՝ «… հիասթափվեց եկեղեցու խնդրում *նաև Խոմյակովի* ուսմունքից …» *(ԼՏ):*

դ) Հարցում՝ «*Իսկ ԱՄՆ-ը դա անել չի կարող և ետ* է մնում այդ հարցում Ռուսաստանից» *(ՆՏՄ):*

ե) Հետ՝ «… *ամբողջ գիշեր մեծ* հարսիս հետ որսորդությունից էր «զրուցում» *(ՍՎ):*

զ) Մոտ՝ «*Նա* ծնողների մոտ տրտնջում է *իր* կյանքից …» *(ՎԲ):*

Նշված կապային կառույցներն ունեն գործածության տարբեր հաճախականություն: Այսպես խնդրում *կապական բառով արտահայտված՝ բնության խնդիրները հաճախակի են գործածվում, մինչդեռ* գծով *կապական բառով արտահայտվածները հազվադեպ են:*

Դա պայմանավորվում է նրանով, որ խոսքի մեջ քերականական տարբեր հարաբերություններ տարբեր չափով են կարևորվում:

• «Գործիական հոլովով անուղղակի խնդիր+կապային կառույցով անուղղակի խնդիր» *պահանջող բայերից են՝* արդարանալ, բողոքել, զբաղվել, հոխորտալ, պայքարել *և այլն: Վերջիններիս պահանջած երկրորդ անուղղակի խնդիրները ձևավորվում են հետևյալ կապերով.*

ա) անունից՝ «... *այդ* մարդկանց անունից զբաղվեն *համազգային կարևորություն ունեցող հարցերի* լուծմամբ» *(ԱՌՄ):*

բ) Դեմ՝ « *Կարծես* երկուսով դաշնակցել էին մոր դեմ» *(ԱՍ):*

գ) Համար՝ «... *ընկերները այլ դեպքեր էլ* էին *վերհիշում ... և* դրանով արդարանում ծեծի համար» *(ՁԽ):*

դ) Խնդրում՝ «Իրաքի խնդրում *Հայաստանը* պետք է խստորեն *առաջնորդվի ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի* որոշումներով ...» *(ԱՄ):*

• «Ներգոյական հոլովով անուղղակի խնդիր-կապային կառույցով անուղղակի խնդիր» *պահանջող բայերից են՝* դաշնակցել, զինակցել, համագործակցել, համաձայնել, հարմարվել, ձայնակցել, մրցել, մրցակցել *և այլն: Վերջինների պահանջած երկրորդ անուղղակի խնդիրները հիմնականում ձևավորվում են* հետ *կապով՝* «*Թուրքիան ռազմական* բնագավառում համագործակցում է Վրաստանի հետ ...» *(ԱՄ):*

3. Չեզոք սեռի բայ-միջնորդական կառավարմամբ անուղղակի խնդիր-միջնորդական կառավարմամբ անուղղակի խնդիր

Այս դեպքում միջնորդական կառավարմամբ անուղղակի խնդիր բաղադրիչներն արտահայտվում են կապային կառույցներով: Նշված տեսանկյունից առավել ակտիվ են ժամանակակից հայերենի բարեխոսել, բողոքել, գանգատվել, դաշնակցել, զրուցել, խոսակցել, ծառայել, համագործակցել, համընկնել, հասունանալ, մրցակցել, մրցել, չարախոսել, տրտնջալ *և չեզոք սեռի այլ բայեր:*

Պայմանավորված բառիմաստով՝ հիշյալ բայերի պահանջով միևնույն նախադասության մեջ զուգորդվում են հանգման ու վերաբերության, հանգման ու սահմանափակման, վերաբերության ու սահմանափակման, միասնության ու հանգման, միասնության ու վերաբերության, միասնության ու սահմանափակման, շահի ու ընդդիմության և այլ քերականական իմաստներ արտահայտող բնության խնդիրներ: Վերջիններիս ձևավորմանը մասնակցում են կապերի ու կապական բառերի մի շարք զույգեր: Դրանցից են՝

ա) Անունով – դեմ՝ «*Էապես է ասում ձեզ մինը էն բանտարկյալներից,* որոնց անունով *դուք* Ռուսաստանի դեմ բողոքում եք *սահմանադրական Տաճկաստանից» (ՀԹԵ6):*

բ) Առաջ – դեմ՝ «*Հիմա թշնամիները* սուլթանի առաջ չարախոսում են իր դեմ» *(ՍԽ):*

գ) Առաջ – համար՝ «... *կարող էի* բարեխոսել վարչության առաջ *այս կամ այն* կալանավորի համար» *(ԵՁԸԵ):*

դ) Առաջ – մասին՝ «Արամի մասին բարեխոսում է Արամի առաջ ...» *(ԽԳ):*

ե) Առթիվ – մոտ՝ «... *Ահարոնին խստագույնս արգելել էր* այդ առթիվ որևէ մեկի մոտ տրտնջալ ...» *(ՍԽ):*

զ) Առջև – համար՝ «… *հնարավորություններ կունենանք որևէ* մեկի համար բարեխոսելու *նոր* նախագահի առջև …» *(ԱռՄ):*

է) Դեմ – հանուն՝ «*Եվ ահա մենք ստիպված ենք* բողոքելու հանուն ճշմարտության թե մեկի, թե մյուսի դեմ …» *(ՀԹԵ6):*

ը) Համար – առ՝ «… քեզ համար բարեխոսում է առ աստված» *(ՃԴ):*

թ) Համար – իբրև՝ «*Տան առաջին հարկի կտուրը երկրորդ հարկից մեծ է և* երկրորդի համար ծառայում է իբրև բակ» *(ԴԴ):*

ժ) Հետ – առումով՝ «… *ակնհայտորեն տեղական արտադրողները* գնային առումով *չեն կարողանում* մրցակցել ներկրողների հետ» *(ԱռՄ):*

ժա) Հետ – գործում «*Բժշկական սարքավորումների* ձեռքբերման գործում *կենտրոնը* համագործակցում է «Սիմենս»-ի հետ» *(ՀԺՄ):*

ժբ) Հետ – ընդդեմ՝ «Դաշնակցել է խաչակիրների հետ՝ ընդդեմ սելջուկների» *(ՀՍՀ, 3):*

ժգ) Հետ – հարցում՝ «Այս հարցում *մենք* համագործակցում ենք *կրթության* նախարարության հետ» *(ԱռՄ):*

ժդ) Հետ – խնդրում՝ «*Ո՛չ Դոյլը, ո՛չ Ռետերերը և ո՛չ էլ Կինսելլան* այս խնդրում *չէին կարող* մրցել նրա հետ …» *(ԹԴ):*

ժե) Հետ – մասին՝ «… *և երբեմն, շներին ջուր կամ լափ տալիս,* զրուցում է նրանց հետ Մարտին ապոր մասին» *(ՍՁԵԺ1):*

ժզ) Հետ – շուրջ(ը)՝ «*Ուզում եմ գիտնական* Ադրիանի հետ զրուցել *այս իմ* ենթադրության շուրջը …» (ԱՇԵ):

ժէ) Մոտ – դեմ՝ «… *երբեմն չէին վարանում կողմնակի* անձանց մոտ դանդաղվել *իրանց* կուսակցության դեմ …» *(ՇԵ5):*

ժը) Մոտ – համար՝ «*Զմոռանաս սուլթանի* աղջկա մոտ բարեխոսել *խեղճ* Օմարի համար» *(ՁԴ):*

ժթ) Մոտ – հաշվով՝ «*Հովհաննես Մելքոնյանն ու Ռաֆիկ Արամյանն* Անժիկի մոտ բանաստեղծություններիդ հաշվով բարեխոսել են» *(ԱռՄ):*

ի) Մոտ – հասցեին՝ «… նրա հասցեին գործատիրոջ մոտ չարախոսում էին …» *(ԹԴ):*

իա) Մոտ – մասին՝ «*Հետո Զեյնաբը միշտ* չարախոսում էր իր մասին փաշայի մոտ» *(ՀՍ)*[14]*:*

Նշենք, որ կարծիք, վերաբերմունք արտահայտող ասացական իմաստ ունեցող մի շարք բայեր (բարեխոսել, բողոքել, դանդաղվել, դժգոհել, թոնթորալ, չարախոսել, տրտնջալ *և այլն) կարող են ենթադրել և պահանջել անգամ երրորդ անուղղակի խնդիր: Այսպես՝*

ա) Դանդաղվել *բայը եռարժույթ խնդրառությամբ հանդիպում է* կապային կառույցով անուղղակի խնդիր+գործիականով անուղղակի խնդիր+տրականով անուղղակի խնդիր *մասնակաղապարով՝* «*Այդպես էր այն դառն ժամանակ,* որի մասին *հայ ոմն Շամախի քաղաքից անստորագիր* նամակով դանդաղվել է իրեն …» *(ԱԲԵ):*

---

[14] *Մեր պատկերացմամբ՝ բերված զույգ խնդիրները ուժեղ կամ համեմատաբար ուժեղ կառավարման արտահայտություններ են: Սակայն խոսքի մեջ գործածվում են նաև մեկ ուժեղ և մեկ թույլ կամ երկու թույլ կառավարմամբ խնդիր լրացումներով կապակցություններ, որոնց մենք այս հոդվածում չենք անդրադառնում:*

բ) Հետևյալ օրինակում համադրվել չեզոք սեռի բայի պահանջած երեք անուղղակի խնդիրներն էլ ձևավորվել են միջնորդական կառավարմամբ «... որքանով են ցանկանում համադրվել ԵՍ-ի հետ մարտյան իրադարձություններ հետաքննության հարցում ԵՍ մասնակցության առումով» (ԱՄ):

Եզրակացություն

Չեզոք սեռի՝ խնդրառությամբ երկարժույթ բայերը ենթադրում և պահանջում են երկու բնության (անուղղակի) խնդիր: Վերջիններիս հետ կապակցումն իրականանում է երեք տարբերակով: Առաջին դեպքում երկու բնության խնդիրն էլ միևնույն բային կապակցվում են անմիջական կառավարման եղանակով: Երկրորդ դեպքում հոլովաձևով արտահայտված բնության խնդիրը միևնույն բային կապակցվում է անմիջական, իսկ մյուսը՝ միջնորդական կառավարման եղանակով, քանի որ արտահայտված է կապային կառույցով: Երրորդ դեպքում երկու բնության խնդիրն էլ միևնույն բային կապակցվում են միջնորդական կառավարման եղանակով: Երկարժույթ խնդրառությունը հաճախադեպությամբ զիջում է միարժույթ խնդրառությանը: Չեզոք սեռի բայի և անուղղակի խնդիրների կապակցումը արտահայտվում է ուժեղ կամ թույլ կառավարմամբ: Կարծիք, վերաբերմունք արտահայտող բայերը երբեմն ենթադրում և պահանջում են երեք բնության խնդիր, որը, սակայն, ժամանակակից հայերենին բնորոշ չէ:

Լալա Գրքիկյան – ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի հայցորդ, Գյումրիի թիվ 1 ավագ դպրոցի հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի: Գիտական հետաքրքրությունը՝ ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն: Հեղինակ է 3 հոդվածի: grkikyan999@gmail.com

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Աղայան Էդ. 1976, Արդի հայերենի բացատրական բառարան, Ա–Ձ, Ղ–Ֆ, Երևան, «Հայաստան» հրատ., 1615 էջ:

Ասատրյան Մ. 1987, ժամանակակից հայոց լեզու. Շարահյուսություն, Երևան, Երևանի համալս. հրատ., 368 էջ:

Գյուլբուդաղյան Ս. 1988, ժամանակակից հայերենի շարահյուսություն. Պարզ նախադասություն, Երևան, Երևանի համալս. հրատ., 290 էջ:

Զորյան Ստ. 1977, Երկերի ժողովածու, հ. 1, Երևան, «Սովետական գրող» հրատ., 520 էջ:

Էլոյան Ս. 2002, Արդի հայերենի նորաբանությունների բառարան, Երևան, «Նաիրի» հրատ., 492 էջ:

Թումանյան Հովհ. 1994, Երկերի լիակատար ժողովածու 10 հատորով, հ. 6, Երևան, «Գիտություն» հրատ.:

Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան. 1969–1980, Երևան, Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի հրատ., հ. 1, 601 էջ, հ. 2, 714 էջ, հ. 3, 574 էջ, հ. 4, 828 էջ:

Իշխանյան Ռ. 1986, Արդի հայերենի շարահյուսություն. Պարզ նախադասություն, Երևան, Երևանի համալս. հրատ., 338 էջ:

Խաչատրյան Գ. 2000, Գրաբարի վերլուծական բայերի արժույթը, Երևան, «Վան Արյան» 306:

Հայկական սովետական հանրագիտարան. 1977, հ. 3, Երևան, Հայ սովետական հանրագիտարան հրատ., 720 էջ:

Հայոց լեզվի բարբառային բառարան. 2001–2012, Երևան, 2792 էջ:

Հարությունյան Հ. 1983, Կառավարումը ժամանակակից հայերենում, Երևան, Երևանի համալս. հրատ., 336 էջ:

Մալխասեանց Ստ. 1944–1945, Հայերէն բացատրական բառարան, հ. 1–4, Երևան, Հայկական ՍՍՌ պետական հրատ., 2409 էջ:

Մուրադյան Ս. 2019, Ներգործական սեռի բայ-ստորոգյալների կապակցելիությունը տարբեր դասային խմբերի անուն-խնդիրների հետ. – «Գիտական Արցախ», Երևան, № 1, էջ 335–342:

Շիրվանզադե Ալ. 1988, Երկեր հինգ հատորով, հ. 5, Երևան, «Սովետական գրող» հրատ., 608 էջ (ՇԵ5):

Չարենց Ե. 1955, Ընտիր երկեր, Երևան, Հայպետհրատ, 484 էջ (ԵՉԸԵ):

Ջահուկյան Գ. 1974, ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., 587 էջ:

Օհանյան Հ. 1987, Մտածական և հոգեվիճակային բայերի խնդրառությունը ժամանակակից հայերենում. – «Լեզվի և ոճի հարցեր», հ. 10, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., էջ 5–122:

«ԱՐԵՎԱԿ»-ի համառոտագրություններ (հասանելի է 27. XI. 2022)

ԱՄ – Ազգ
ԱՇՇ – Աշոտ Շայբոն
ԱՌՄ – Առաւօտ
ԱՊ – Աննա Պետրոսյան
ԱՍ – Անահիտ Սահինյան
ԱՔ – Արտաշես Քալանթարյան
ԳԴ – Գևորգ Դևրիկյան
ԴԴ – Դերենիկ Դեմիրճյան
ԶԴ – Զարգանդ Դարյան
ԶԽ – Զորայր Խալափյան
ԶՄ – Զանգեզուր
ԷԱ – Էդվարդ Աղայան
ԹԴ – Թեոդոր Դրայզեր
ԼՏ – Լև Տոլստոյ
ԽԳ – Խաժակ Գյուլնազարյան
ՀԺՄ – Հայկական ժամանակ
ՀՍ – Հմայակ Սիրաս
ՄԳ – Մուշեղ Գալշոյան
ՄԽ – Մկրտիչ Խերանյան
ՄՍ – Մկրտիչ Սարգսյան
ՄՔՀ – Միքայել Հակոբյան
ՆԶ – Նաիրի Զարյան
ՆՏՄ – Նոյան տապան
ՇԹ – Շահեն Թաթիկյան
ՋԲ – Ջիովաննի Բոկաչչո
ՍԽ – Սերո Խանզադյան
ՍՎ – Սասուն Վարդանյան
ՍՎՍ – Սևդա Սևան
ՍրՄ – Սերգեյ Մելքումյան
ՎԲ – Վիկտոր Բալայան
ՖԴ – Ֆեոդոր Դոստոևսկի

ДВУХВАЛЕНТНЫЕ НЕПЕРЕХОДНЫЕ ГЛАГОЛЫ, ПРИНИМАЮЩИЕ КОСВЕННОЕ ДОПОЛНЕНИЕ, В СОВРЕМЕННОМ АРМЯНСКОМ ЯЗЫКЕ

ЛАЛА ГРКИКЯН

Р е з ю м е

Ключевые слова: валентность, непереходные глаголы, косвенное дополнение, сочетаемость, управление, прямое (беспредложное) управление, опосредованное (предложное) управление, предложная конструкция.

Двухвалентные непереходные глаголы подразумевают и требуют после себя два косвенных дополнения. Сочетание с последними осуществляется тремя способами. В первом случае оба дополнения сочетаются с одним и тем же глаголом посредством прямого (беспредложного) управления. Во втором случае дополнение, выраженное падежной формой, сочетается с одним и тем же глаголом посредством прямого управления, а другое дополнение – посредством опосредованного (предложного) управления, так как оно выражено предложной конструкцией. А в третьем случае оба типа дополнений сочетаются с глаголом посредством опосредованного управления. Двухвалентные непереходные глаголы, принимающие косвенное дополнение, встречаются реже, чем одновалентные. Сочетание непереходного глагола и косвенного дополнения осуществляется посредством сильного или слабого управления. Глаголы, выражающие мнение, отношение, иногда подразумевают и требуют после себя три типа дополнений, что, однако, не характерно для современного армянского языка.

Лала Гркикян – соискатель Ширакского центра арменоведческих исследований НАН РА, учитель армянского языка и литературы Гюмрийской старшой школы № 1. Научные интересы: синтаксис современного армянского языка. Автор 3 статей. grkikyan999@gmail.com

BIVALENT INTRANSITIVE VERBS THAT TAKE INDIRECT OBJECT IN MODERN ARMENIAN

LALA GRKIKYAN

S u m m a r y

Keywords: valency, intransitive verbs, indirect object, collocability, government, direct (non-prepositional) government, indirect (prepositional) government, prepositional construction.

Bivalent intransitive verbs suggest and require two types of indirect objects. Bivalent intransitive verbs collocate with the latter in three ways. In the first case, objects are collocated with the same verb by means of direct (non-prepositional) government. In the second case, the object expressed by a declensional form is collocated with the same verb by means of direct government, while the other object is collocated by means of indirect (prepositional) government, since it is expressed by a prepositional construction. And in the third case, both types of objects are collocated with the verb by means of indirect government. Bivalent intransitive verbs that take indirect object are less common than univalent ones. The intransitive verb is collocated with indirect object by means of strong or weak government. Verbs expressing an opinion or an attitude sometimes suggest and require three objects, which, however, is not typical for Modern Armenian.

Lala Grkikyan – Degree Competitor of the Shirak Center for Armenological Studies of NAS RA, Teacher of Armenian Language and Literature of Gyumri High School No.1. Scientific interests: Syntax of Modern Armenian. Author of 3 articles. grkikyan999@gmail.com

ՀՏԴ : 902(479.25)+947.25

Doi:10.54503/0135-0536-2023.2-213

СЕМАНТИКА ЖЕНСКОГО БРОНЗОВОГО ПОЯСА ГОСУДАРСТВА УРАРТУ*

ЭММА ПЕТРОСЯН

Ключевые слова: праздник, танец, музыкальные инструменты, акробат, богиня,служанки-жрицы, ритуальный хлеб, вино, жертвоприношение.

Вступление

Иконография артефактов государства Урарту (Биаинили, IX–VII до н. э.) представляет важный визуальный источник для изучения ритуальной жизни урартов. На основе клинописных данных и изобразительного искусства того периода опубликован ряд работ Б. Б. Пиотровского, Н. В. Арутюняна, С. А. Амаякяна, А. Бобохяна, Е. Грекяна и др. Наиболее интересны в этом отношении бронзовые пояса. Они имеют традиционную композицию, но иногда встречаются варианты.

Рассмотрим женские пояса с нанесенными на них графическими сюжетами в свете армянской ритуальной традиции. Обычно в центре композиции перед жертвенным столом сидит женщина, а справа и слева к ней идут женщины-музыканты, танцовщицы, акробат и служанки-жрицы с подношениями. В разных поясах персонажи варьируются, но иконография приводит к выводу, что был разработан ряд художественных приемов.

Не исключено, что существовало несколько вариантов трафаретов, поэтому реконструкция отсутствующих деталей пояса, который мы хотим рассмотреть, несколько облегчена. Это один из четырех женских поясов – № 4 (VIII в. до н. э.), опубликованный Ирит Зиффер в статье «Четыре новых пояса страны Арарат и праздник женщин на Эсфирь 1: 9»[1].

В отличие от ряда статей, посвященных поясам Урарту, мы рассматриваем семантику пояса в контексте верований армян как наследников культуры Урарту, и показываем, как постепенно они передавались пос-

* Представлена 21. XII. 2022 г., рецензирована 16. I. 2023 г., принята к печати 19. VI. 2023 г.

[1] Ziffer. 2002, 645–657. Пояс хранился в Eretz Israel Museum, в Shlomo Moussaieff Collection, Тель-Авив, Израиль. Фото Л. Падрул, копия Д. Капеллиан. И. Зиффер сообщила мне, что ныне пояс продан неизвестному лицу. Выражаю искреннюю благодарность И. Зиффер за представленную возможность публиковать копию пояса, № 4.

ледующим поколениям. Хотя Урарту как государство к VI в. до н. э. пало, но народ не ассимилировался. Он продолжал жить и творить, сохраняя свои традиции. Заметим, что аргументы археологов – датировка, а этнографов – традиция, которая консервативна.

Для реконструкции сюжетов урартских поясов наиболее важны памятники Тейшебаини (Кармир блур) как административного центра, Эребуни (Арин берд) как религиозного центра и урартский могильник, обнаруженный в Ереване. В 1984 г. в результате раскопок были найдены бронзовая посуда, утварь, части мебели, железные мечи, ножи, множество керамических сосудов, светильники и пр. В тайных кладовых находились агатовые бусинки, цилиндрическая печать, браслеты со змеиными головами, детали бронзовых поясов, браслетов, ведерки и удила.

Урартские графические бронзовые пояса были описаны и классифицированы Г. Й. Кельнер[2]. У. Заидл систематизировала изображения музыкальных инструментов[3]. Большинство последующих исследователей использовали публикацию поясов из их работ.

Женщины-музыканты изображены на семнадцати урартских бронзовых поясах.

Пояса хранятся в собраниях музеев Армении, Турции, Германии, Японии, Израиле и в частных коллекциях. Некоторые пояса были обнаружены в результате археологических работ, но большинство из них – случайные находки. Датируются они IX–VI до н. э.

Семантика пояса

Поскольку предметом изучения является пояс, то рассмотрим его функцию в традиции урартов и армян. Среди поясов есть массовая продукция, но есть и ритуальные. Их легко различить по орнаментации и графическим рисункам[4]. Те пояса, на которых изображены мужчины в сценах охоты, животные, фантастические существа, царский выезд, несомненно, мужские. На женских поясах изображены процессии женщин-музыкантов, танцовщиц и служанок-жриц.

Мужской пояс как часть одежды, в первую очередь, предназначен, чтобы поддерживать брюки. За пояс можно заложить какой-либо небольшой предмет, например, кисет, как до сих пор принято на Востоке. Металлические пояса характеризуются как военные – защита в бою от ранения. Поэтому большинство мужских поясов имеет несколько регистров.

Пояс всегда был символом мужского достоинства. За право обладать им у армян на праздники имели место состязания, которые назывались *gotemart* – борьба за пояс или поясосхватка[5].

---

[2] Kellner. 1991.
[3] Seidl. 2004.
[4] Пиотровский. 1962, 72–77.
[5] Арутюнян. 2009, 43.

Несколько иная функция у женских поясов. Их не обязательно носить. Это хорошо видно на графике урартских поясов – кто-то опоясан, а кто-то – нет. Его завязывали под грудью или опоясывали талию. Бронзовые пояса были тяжелые и носились на талии.

Пояс в веровании армян и многих народов имел сакральное значение. Он делит торс на верх и низ, как бы составляя функциональную оппозицию. Замкнутый пояс – это круг, оберег от злого глаза. Развязать пояс – означает обладать женщиной. Во время свадьбы армян брат невесты развязывал пояс, символизируя ее переход в статус замужних женщин. В магию пояса верили и жители Урарту. Они хоронили пояс вместе с ее владелицей, чтобы он оберегал ее в потустороннем мире (рис. 1).

Рис. 1. Армянский серебряный женский пояс. Музей истории Еревана.

Реконструкция основных мотивов женских поясов

В текстах царства Урарту почти не сохранились описания ритуалов, поэтому воспользуемся описанием хеттских «царских» ритуалов населения Малой Азии. Хетты и армяне во 2-м тысячелетии до нашей эры были соседями, оказывали друг на друга языковое и культурное влияние[6]. Государства формировались и распадались, а народ оставался и сохранял свою идентичность.

Рассматриваемый нами пояс носила молодая женщина, так как он короткий и узкий[7]. Он нарядный, праздничный. Несомненно, его хозяйка имела в обществе высокий статус. Пояс не имеет надписи, неизвестно место его находки. Он дошел до нас разбитым на две части. Отсутствует, по всей вероятности, только одна деталь – центральная часть. Если сравнить с другими похожими поясами, то можно предположить, что отсутствует только изображение главного персонажа – женщины на троне перед столом.

Рассмотрим мизансцену участников праздника правой детали пояса (рис. 2). Все десять женщин, как изображено направление их фигур, вышли через ворота храма бога Халди (?). Вероятно, это жрицы-служанки, несущие дары царице. Семь из них приближаются к ней. Они в оди-

[6] Арутюнян. 1985, 122. На Армянском нагорье XVI по XIII вв. до н. э., во времена Ванского царства в летописи урартского царя Сардури II упоминается область Кум(м)ух (ху) – Куммаха. С Куммаха (арм. Ани-Куммах) хетты то торговали, то воевали.

[7] Ziffer. 2002, 647.

Պատմաբանասիրական հանդես • Историко-филологический журнал • Historical and Philological Journal • 2023 № 2

наковых платьях. Возможно, это «дресс-код». В хеттских ритуалах женщины-дароносицы назывались «люди подарка»[8].

Рис. 2. Правая деталь урартского женского пояса № 4.

Процессия движется к жертвенному столу. Он покрыт скатертью. Ножка стола в виде лапы льва (?). Полагаем, что стол с ножкой определенного животного должен был соответствовать его ритуалу. По мнению Б. Пиотровского, Халди изображали стоящим на льве[9]. Возможно, трон и стол – это сакральная мебель бога Халди.

На столе две пиалы, кусок жертвенного мяса (?) и хлеб в виде полумесяца, на котором круглый предмет, видимо, символизирующий небосвод или солнце[10]. Описание хеттских жертвенных хлебов сделал Г. Хоффнер. Известны хлебцы, называвшиеся «луна», «небо», антропоморфные и зооморфные[11].

В ритуалах хеттов часто устанавливали отдельно стол царя и стол царицы. «На хеттском празднике месяца во внутреннем сакральном помещении, куда входил царь, загодя готовили стол с тринадцатью хлебцами и одним хлебом в виде луны, завернутым в ткань. Подойдя к столу, царь начинал разламывать хлебцы, складывая одни половины на одной стороне стола, а другие – на противоположной. Во время разламывания хлеба певцы пели»[12].

В хеттской ритуальной практике в жертву приносили первины – первое зерно, первый испеченный хлеб, ритуально чистое животное, первого рожденного ягненка. Среди жертвенных напитков были молодое, неперебродившее вино, пиво или молоко[13]. Хлеб (зерно) и сама печь со времен собирательного хозяйства считались атрибутами культа Всеобщей матери зерна, а первый из готовых хлебов должен был быть принесен в

---

[8] Ардзимба.1982, 31.

[9] Пиотровский. 1959, 223.

[10] *Հմայակյան. 1990, 36:* Богу Халди жертвовали вино, хлеб, мясо. Его культ связан с почитанием луны и солнца. Бог Шиларди (Меларди) почитался в образе луны, чаще полумесяца.

[11] Ардзимба. 1982, 66.

[12] Ардзимба. 1982, 66.

[13] Ардзимба. 1982, 66.

дар богине[14]. И в наши дни, когда хозяйки пекут хлеб, первые 3 или 7 хлебов не оставляют дома, а отдают соседям или прохожим. Говорят, что если не раздать, то хозяин дома умрет[15]. Раздача хлеба очень древний обычай жертвоприношения.

contents of the diary, it is clear that he had a high reputation in the region, especially because of his own building style. Other documents kept in the Abovyan family archive also enrich the information we have about the events taken place in the region.

Ani Saratikyan – Junior Researcher at the Department of Early Archeology of the Institute of Archaeology and Ethnography of NAS RA. Scientific interests: Iron Age archeology of Armenia, water resources use in the Armenian Highlands. Author of 6 scientific articles. anisaratikyaniae@gmail.com

ՀՏԴ : 929:75(479.25)Հակոբյան

Doi:10.54503/0135-0536-2023.2-241

ՏՂԱՄԱՐԴՈՒ ԿԵՐՊԱՐԸ ՀՄԱՅԱԿ ՀԱԿՈԲՅԱՆԻ ԴԻՄԱՆԿԱՐՆԵՐՈՒՄ*

ԱՐՄԻՆԵ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Բանալի բառեր՝ Հմայակ Հակոբյան, դիմանկարի ժանր, գրաֆիկական և գեղանկարչական դիմանկարներ, ռեալիստական մոտեցումներ, տղամարդու կերպար:

Նախաբան

Կերպարվեստի պատմության ընթացքում մարդու կերպարը եղել է բոլոր ժողովուրդների գլխավոր թեմաներից: Մարդու առաջին պատկերները երևան են եկել նախնադարյան հասարակության մեջ: Դրա մասին են վկայում մարդկանց պարզունակ կյանքն արտացոլող բազմաթիվ ժայռապատկերներ՝ որսի տեսարաններ, մարտեր, պարեր, ծեսեր և այլն: Սակայն, ինչպես նշում է արվեստաբան Մ. Զոլոտիխը, հնագույն «գեղանկարներում» մարդուն միշտ պատկերել են անդեմ[1]: Այդ ժամանակաշրջանի նկարչին ամենից շատ հետաքրքրում էին աշխատանքի հետ կապված գործողությունները, շարժումները, որոնք նա կարողանում էր բավական մեծ վարպետությամբ փոխանցել պատկերին: Նման տեսարանների դինամիկան և ռիթմը հաճախ զարմացնում են իրենց արտահայտչականությամբ: Մարդկանց դիմանկարները հայտնվել են միայն այն ժամանակ, երբ մարդն իրեն գիտակցել է որպես բացառիկ երևույթ՝ որևէ այլ անձի հետ համեմատած: Արդեն հին Եգիպտոսում ստեղծվել են գեղեցիկ դիմանկարներ (գտնվելու վայրի անունով դրանք կոչվել են «ֆայում»), որոնք տպավորիչ էին նաև իրենց ճշմարտացիությամբ:

Ըստ Մ. Զոլոտիխի, տեսողական արվեստում դիմանկարի ժանրը համարվում է ամենադժվարը, ամենաիրականը: Բազմիցս խոսվել է այն մասին, որ հեռավոր անցյալում արված դիմանկարներն ավելի խորն են արտացոլում իրենց ժամանակաշրջանը, քան կոմպոզիցիոն գործերը: Դիմանկարի համար ամենակարևոր չափանիշը պատկերի նմանությունն է: Այն ձեռք է բերվում ոչ միայն պատկերված անձի արտաքին տեսքի մանրակրկիտ փոխանցմամբ, այլև նրա հոգևոր էության բացահայտմամբ, անհատական և ընորոշ հատկանիշների դիալեկտիկական միասնությամբ, որոնք արտացոլում են նաև որոշակի դա-

---

** Ներկայացվել է 09. VI. 2023 թ.: Հոդվածը տպագրության է երաշխավորել գիտական ղեկավար, արվ. թ. Մ. Կիրակոսյանը (12. VI. 2023 թ.): Ընդունվել է տպագրության 19. VI. 2023 թ.:*

[1] З о л о т ы х. 2016.

բաշրջան, սոցիալական միջավայր: Բացի այդ, ստեղծագործության վրա զգալի հետք են թողնում նկարչի վերաբերմունքը ընորդի նկատմամբ և այլն[2]*:*

Վերածննդի դարաշրջանի աշխարհահռչակ վարպետների՝ Ռաֆայել Սանտիի, Տիցիանո Վեչելլիոյի (Տիցիան), Պաոլո Վերոնեզեի, Լեոնարդո դա Վինչիի և այլոց դիմանկարները պատմում են իրենց ժամանակաշրջանի հասարակության, մարդկանց սոցիալական վիճակի, բարքերի ու սովորությունների մասին: Դիմանկարի ժանրի ռուս վարպետները՝ Ֆեոդոր Ռոկոտովը, Դմիտրի Լևիցկին, Վլադիմիր Բորովիկովսկին, Կառլ Բրյուլովը, Ալեքսեյ Վենեցիանովը, Իլյա Ռեպինը և այլք, մեզ են թողել իրենց ժամանակակիցների դիմանկարների անգնահատելի պատկերասրահ, որոնք ոչ միայն փոխանցում են անցյալ ժամանակների մարդկանց արտաքին տեսքը, այլև ունեն գեղարվեստական մեծ արժեք:

Դիմանկարչական ստեղծագործություններ են կերտել նաև հայ արվեստագետները, մասնավորապես՝ Հովնաթանյանները, որոնք հայ կերպարվեստում հիմք դրեցին դիմանկարի ժանրի զարգացմանը: Այն բարձրարվեստ ստեղծագործություններով շարունակեցին Վարդգես Սուրենյանցը, Եղիշե Թադևոսյանը, Զաքար Զաքարյանը, Գրիգոր Գաբրիելյանը, Ենոք Նազարյանը, Հմայակ Հակոբյանը, Հմայակ Արծաթպանյանը, Արշակ Ֆեթվաճյանը, Ստեփան Աղաջանյանը, Հովսեփ Փուշմանը, Մարտիրոս Սարյանը և այլք:

Արվեստաբան Ն. Խաչատրյանը նշում է. «Հայ դիմանկարը, որը նոր ժամանակի հաստոցային գեղանկարչության զարգացման սկիզբն է դրել, իր առաջին փուլում զարգացել է ոչ թե հայրենիքում, այլ Թիֆլիսում, որը բարդ և ծավալուն մշակութային շերտեր ունեցող քաղաք էր: Քանի որ այդ շերտերի ֆոնը կարևորագույն նշանակություն ուներ դիմանկարի ժանրի հատկանիշների ձևավորման մեջ, կարծում ենք՝ ավելի ճշգրիտ կլինի այդ երևույթն անվանել «Թիֆլիսյան հայ դիմանկար», որի մեջ ընդգրկված է ազգային՝ հայկական, վրացական, եվրոպական (ռուսական) և պարսկական սպեկտրը»[3]*:*

Այդ միջավայրի ավանդույթների վրա էլ ստեղծվել և հետագայում կատարելագործվել է Թիֆլիսաբնակ Հմայակ Հակոբյանի արվեստը:

Դիմանկարի ժանրը Հմայակ Հակոբյանի արվեստում

XIX դարավերջի – XX դ. առաջին քառորդի հայ կերպարվեստի նշանավոր ներկայացուցիչ է Հմայակ Ստեփանի Հակոբյանը (1871–1939)[4]*, որի ներդրումը անվիճելի է հայ ռեալիստական դիմանկարչության ժանրի զարգացման գործում: Նա կարևորել է ժանրը և խորապես տիրապետել դիմապատկերի կերտման նրբություններին՝ ստեղծելով հոգեբանական դիմանկարների մի շարք, որոնք իրենց մնայուն տեղն ունեն հայ կերպարվեստում:*

Նկարիչը ծնվել է Տրապիզոնում, հարուստ վաճառականի ընտանիքում: 1886–1891 թթ. սովորել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում՝ Հարություն Շամշինյանի արվեստանոցում: Մասնագիտական կրթություն է ստացել Մյունխե-

---

[2] Золотых. 2016.

[3] Хачатрян. 1985, 290.

[4] *Կենսագրական տվյալները տե՛ս* Մարտիկյան. *1983, 84–109, Հմայակ Հակոբյան (1871–1939). 1948, 3–24:*

նի գեղարվեստի ակադեմիայում (1891–1894 թթ.): Հաճախել է Շիմոն Հոլոշիի մասնավոր ստուդիան, ապա՝ ուսումը շարունակել տեղի Գեղարվեստի ակադեմիայում՝ Ֆրանց ֆոն Դեֆրեգերի ղեկավարությամբ[5]: Արվեստաբան Ե. Մարտիկյանը գրում է. «... բացառում եմ Դեֆրեգերի անմիջական ազդեցությունը, որի ստեղծագործության մեջ ակնհայտ է մտացածին տոնականությունը՝ կարմրաթուշ աղջիկների ու ճարպիկ տղաների դիմանկարներում, որպիսի հատկությունից զերծ են Հմ. Հակոբյանի այդ շրջանի դիմանկարները: Սակայն չի կարելի ժխտել, որ նա կրել է գերմանական արվեստին բնորոշ ազդեցություններ, որոնք արտացոլվում են հատկապես դիմանկարներում՝ կերպարների հոգեբանական խորությամբ, զսպվածությամբ, մշակման կշռադատված ձևերով, ոչ այնքան զգայական, որքան բանականության մղումով, գծի վստահությամբ, գույնի պնդությամբ»[6]:

Կարծում ենք, ինչպես Դեֆրեգերը, Հակոբյանը նույնպես նախընտրում էր դիմանկարել գեղջկական մոտիվներով՝ կերպարներ ընտրելով առօրյա կյանքից:

Հմ. Հակոբյանի 1948 թ. անհատական ցուցահանդեսի կատալոգի առաջաբանի հեղինակ՝ Ռ. Լոռիս-Մելիքյանը նույնպես գտնում էր, որ շոշափելի է Դեֆրեգերի ազդեցությունը. նախևառաջ Հակոբյանի վրձնահարվածները հաստատուն են դառնում, գույները՝ հագեցած, տոները մաքրություն և թափանցիկություն են ձեռք բերում: Հակոբյանը ձգտում էր յուրացնել նրա տեխնիկան ու գեղանկարչական ձևերը, նույնիսկ այդ շրջանում ընդունված շագանակագույն տոնայնությունը[7]: Նա նաև տպավորվել է իսպանացի նկարիչ Վելասկեսից (հատկապես «Երիտասարդ իսպանացի» դիմանկարի առջև նկարիչը ժամերով կարող էր կանգնել և զմայլված դիտել)[8]:

Հմ. Հակոբյանը բազմաժանր նկարիչ է: Նա ստեղծագործել է դիմանկարի, բնանկարի, նատյուրմորտի, կենդանային ժանրերում: Յուրաքանչյուր ժանրի անդրադարձել է յուրօրինակ մոտեցումներով և արտահայտչականությամբ:

Ինքնատիպ դիմանկարների վարպետ է Հմ. Հակոբյանը, որն ուներ իր յուրահատուկ գունաչխարհը: Ստեղծագործական գործունեության սկզբնական շրջանում նրան ոգեշնչել է Թիֆլիսի կոլորիտային միջավայրը, որտեղ ապագա նկարիչն առավելապես պատկերել է այլազգիներին:

Դիմանկար կերտելիս արվեստագետը ձգտում էր ճշմարտացիորեն ցույց տալ ոչ միայն պատկերված մարդկանց արտաքին տեսքը, այլև բացահայտել նրանց ներաշխարհը: Անշուշտ, դիմանկարների նմանության խնդիրը ներառում է փիլիսոփայական, հոգեբանական և գեղարվեստական ասպեկտներ, պլաստիկ անատոմիայի իմացություն, համամասնությունների փոխանցման վարպետություն, ձևը գույնով արտահայտիչ պատկերելու կարողություն: Տիրապետելով այս ամենին՝ Հմ. Հակոբյանը, հավատարիմ մնալով ռեալիստական արվեստին բնորոշ սկզբունքներին, ստեղծել է մեծաքանակ դիմանկարներ, որոնք բավական բազմազան են: Արվեստաբան Ս. Խանջյանը

[5] Ա ղ ա ս յ ա ն. 2009, 55:
[6] Մ ա ր տ ի կ յ ա ն. 1983, 87:
[7] Հմայակ Հակոբյան (1871–1939). 1948, 9:
[8] Հմայակ Հակոբյան (1871–1939). 1948, 10:

նկատում է. «Բազմաթիվ գեղանկարչական և գրաֆիկական դիմանկարների հեղինակ Հմայակ Հակոբյանը իր ողջ ստեղծագործական կյանքում հարազատ է մնացել դասական ռեալիստական արվեստին, որի վառ վկայությունն է նրա հայտնի «Ձկնորսը» կտավը»[9]*:*

Հմ. Հակոբյանը հավասարապես տիրապետել է մատիտի (հատկապես նախընտրել է իտալական մատիտ), կավճամատիտի և յուղաներկի տեխնիկաներին: Նրա կտավներից մեզ են նայում XX դարասկզբի տարբեր խավերին պատկանող մարդկանց կերպարներ՝ վաճառական, մտավորական, արհեստավոր և զինվորական, հայ ազնվական տիկնայք ու պարոնայք, նահապետական տարեց կանայք և տղամարդիկ: Նկարիչը դիմագծերի արտահայտիչ և ճշգրիտ վերարտադրությամբ փորձել է թափանցել մարդկային հոգու խորքերը՝ աչքերի, հայացքի, ժեստերի մեջ գտնել մարդու «բովանդակությունը», տեսնել և արտացոլել այն իր նկարներում: Մարդկային տառապած դեմքերը կարծես «կանչել են» նրան, ու նա փորձել է նկարել ամենքին: Նկարիչը մարդուն՝ որպես բնության ամենակատարյալ ստեղծագործություն, պատկերել է ամբողջ վեհությամբ:

Տղամարդկանց գեղանկարչական դիմանկարները

Վարպետը երփնագիր պատկերի գունային ներդաշնակությամբ ստեղծում է իրապաշտական դիմանկարներ: Պատկերված մարդու մասին խոսում են ոչ միայն դեմքը, կեցվածքը, ժեստը, այլև՝ տարածական միջավայրը: Նկարիչը յուրաքանչյուր պատկերի համար գտնում է գունային ընդհանուր բանալին, ստեղծում է այն պայմանավորող հոգեվիճակը՝ ներքին կենտրոնացում, հոգեկան հանգստություն, ուրախ կամ լավատեսական տրամադրություն: Դիմանկարում գեղեցկությունն ամբողջի ներդաշնակությունն է, որը ծնվում է չափի զգացումից, պատկերային լեզվի և պատկերի բովանդակության ներդաշնակ համադրումից[10]*:*

Հմ. Հակոբյանի ներկապնակը տեսողականի ու զգայականի միջոցով ի ցույց է հանում նրա վարպետությունը, աշխարհընկալումը, մտածողությունը և տաղանդը: Գեղանկարչի գունապնակը կառուցված է օքրայի, կինովարի, կրապլակի, ումբրայի, մոխրավունի, շագանակագույնի, սրճագույնի նրբերանգներով և, իհարկե, կապույտ, կանաչ, սպիտակ, սև ու այլ տոների համադրությամբ: Հիմնականում գերակշռում է սրճագույն կոլորիտը, որը կարելի է համարել նրա արվեստի երփնագրի դոմինանտն ու յուրահատկություններից մեկը: Ստեղծագործողը հազվադեպ է օգտագործել հակադիր գույներ. գերադասել է ներդաշնակ տոների հարուստ երանգավորում: Նրա կտավներում վրձնահարվածները դրված են վստահ, գիծը միշտ կարևորագույն տեղ է զբաղեցնում՝ գիծ+գույն+միտք+երևակայություն, և ստեղծվում է արվեստի ևս մի հայտնագործություն: Ե՛վ գունային, և՛ գծային մշակումները կարևորվում են Հակոբյանի արվեստում: Գերմանացի նշանավոր փիլիսոփա Հեգելը գրել է. «Գեղանկարչության առաջընթացը, սկսած նրա անկատար փորձերից, բաղկացած է դիմանկարի մշակումից»[11]*: Նկարիչը մեծ վարպետությամբ ու*

---

[9] *Դիմանկարը հայկական գրաֆիկայում. 2004, 12:*

[10] Неверова. 2008, 3.

[11] Гегель. 1958, 74; *Հմմտ. նաև* Золотых. 2016.

գույնի բացառիկ զգայողությամբ պատկերել է «Կարդինալի դիմանկարը» (նկ. 1): Այդ կտավը պահվում է Վրաստանի ազգային թանգարանում (ՎԱԹ) և ունի ևս մեկ անվանում՝ «Կարմիր թիկնոցով տղամարդ»[12]: Մեր կարծիքով, այս ստեղծագործությունը Հմ. Հակոբյանի հոգեբանական դիմանկարների շարքի գլուխգործոցներից է: Հոգեհուզական մեծ տպավորություն թողնելով՝ դիմանկարն ասես իր արտահայտչականությամբ տիրում է դիտողի սրտին ու մտքին: Նկարիչը մուգ ֆոնը համադրել է կարմիր թիկնոցի հետ: Հակոբյանը կարողացել է ներթափանցել բնորդի հոգու խորքերը՝ ցույց տալով նրա անթաքույց էությունը: Ընդհանուր առմամբ, կարդինալի կերպարը մտորելու տեղիք է տալիս: Տարիներն ակոսել են նրա դեմքը, բայց չեն կոտրել կամքը, և նկարչին հաջողվել է պատկերել այս ամենը՝ ստեղծելով չափազանց արտահայտիչ կերպար: Հետաքրքրական է, որ Հակոբյանը դարձերեսին մերկ կին է պատկերել՝ թեքված դիրքով, աչքերը ներքև խոնարհած: Դժվար է ասել՝ ինչով է դա պայմանավորված՝ արդյո՞ք կտավի բացակայությամբ, թե՞ այլ իմաստ է պարունակում:

Նկ. 1. Կարդինալի դիմանկար, երկկողմանի, 1894, կտավ, յուղաներկ, 42x35 սմ, ՎԱԹ:

Նկ. 2. Ծերունու դիմանկար, 1892, կտավ, յուղաներկ, 51x41 սմ, ՎԱԹ:

Հոգեբանական խոր դրսևորումներ ունեն հատկապես ծերունիների պատկերները: Հմ. Հակոբյանի ստեղծած դիմանկարներին հատուկ է կերպարների ու բնավորությունների խիստ բազմազանությունը: «Ծերունու դիմա-

[12] https://dspace.nplg.gov.ge/bitstream/1234/13081/1/Armenian_Artists_from%20Georgia.pdf

նկար»-ում (նկ. 2) արվեստագետը կարողացել է փոխանցել ալեհեր դեմքի դժգոհ արտահայտությունը՝ իրեն հատուկ մուգ ներկապնակով՝ համադրված լույս ու ստվերի չեչտադրմամբ: Նշենք, որ ծերության գաղափարը միշտ հուզել է նկարչին. հավանաբար այսպիսի կտավներում ստեղծագործողը մտորել է սեփական ծերության մասին:

Ռեալիստական արվեստի սկզբունքներով է ստեղծված «Տղամարդու դիմանկարը» (նկ. 3), որը պահվում է Հայաստանի ազգային պատկերասրահում (ՀԱՊ): Հմ. Հակոբյանի վաղ շրջանի գործերից է և 1893 թ. վրձնած «Ծեր տղամարդ» (նկ. 4) յուղանկարի էսքիզը: Աշխատանքը կիսադեմ է: Նկարիչն այս անգամ նախընտրել է իր սիրած մուգ գունային նկարագիրը փոխարինել բաց գուներանգներով: Ի տարբերություն այլ աշխատանքների, որտեղ գերիշխում է ետին պլանի մուգ ֆոնը, այստեղ նա գերադասել է բաց երանգներ:

Նկ. 3. Տղամարդու դիմանկար, անթվակիր, ստվարաթուղթ, մատիտ, սանգինա, 52x45 սմ, ՀԱՊ:

Նկ. 4. Ծեր տղամարդ, 1893, կտավ, յուղաներկ, 52x44,5 սմ, ՎԱԹ:

Նկարչի դիմապատկերները ի հայտ են բերում ժամանակաշրջանին բնորոշ կենցաղը, նիստուկացը, նաև՝ տարբեր ազգերին պատկանող անձանց տիպական հատկանիշները, բնավորության գծերը, հանդերձանքը: Ռ. Լոռիս-Մելիքյանի բնորոշմամբ՝ «Նրա դիմանկարների պերսոնաժները պատահականորեն հանդիպած մոդելներ չեն, նրանք գերազանցապես պարզ, աշխատավոր ժողովրդի դիտված ու սիրված կերպարներ են»[13]:

Հմ. Հակոբյանը հմտորեն է վրձնել «Գուրիացի» (նկ. 5) կտավը: Դեմքի ու դիմախաղի միջոցով նկարիչը կարողացել է բացահայտել կերպարի ընդգծված անհատականությունը: Կտավի կոլորիտն արտահայտվում է տաք գույներով: Տղամարդու գլուխը փաթաթված է վրացական ազգային գլխաշորով: Ակնառու է պատկերի ինքնավստահությունը:

Վարպետորեն ներկայացված այլազգիների մեջ աչքի է ընկնում «Կովկասցու գլուխ» (նկ. 6) դիմանկարը, որը տառապած մարդու կերպար է: Նկարչի

[13] *Հմայակ Հակոբյան (1871–1939). 1948, 15:*

դիմապատկերները ներկայացնում են բազմազգ պատկերասրահ, քանի որ Հմ. Հակոբյանի համար նշանակություն չի ունեցել բնորդի ազգային պատկանելությունը: Վարպետը նախևառաջ մարդ է պատկերել ու հետո միայն մարդկայինի մեջ երևան հանել ազգայինը: Յուրաքանչյուր դիմանկարի համար նա գտել է յուրատիպ լուծում՝ հանդես բերելով մասնագիտական կարողություններ ու հմտություններ: Ակնհայտորեն երևում է նկարչի մարդասիրական վերաբերմունքը դեպի շարքային, աշխատավոր մարդը՝ իր առօրյա կյանքով ու խնդիրներով:

Նկ. 5. Գուրիացի, անթվակիր, կտավ, յուղաներկ, 48x38 սմ, ՀԱՊ:

Նկ. 6. Կովկասցու գլուխ, անթվակիր, ստվարաթուղթ, յուղաներկ, 33,5x26,5 սմ, ՀԱՊ:

Նկ. 7. Կինտո, 1888, ստվարաթուղթ, յուղաներկ, 12x8 սմ, ՀԱՊ:

Հին Թիֆլիսի շունչը հաղորդելու համար կինտոների թեմային անդրադարձել են շատ հայ գեղանկարիչներ, ինչպես՝ Հովսեփ Կարալյանը, Վանո Խոջաբեկյանը, Գևորգ Գրիգորյանը, նաև՝ Հմայակ Հակոբյանը:

Հմ. Հակոբյանի վրձնած կինտոն ուշագրավ է նրանով՝ նկարիչը հերոսին պատկերել է ամբողջ հասակով, որն այնքան էլ հատուկ չէ նրա դիմանկարներին: «Կինտո» (նկ. 7) ստեղծագործության կոլորիտը հանդես է գալիս շագանակագույն երանգներով. նկարիչն, այս փոքր չափսի կտավի վրա աշխատել է մեծ վրձնահարվածներով: Նա նույնիսկ չի մանրամասնել ձեռքերը և

դեմքը, սակայն յուղանկարում կարողացել է տալ բնորդի մարդկային խառնվածքը, բնավորության հատկանշական գծերը, ինչպես նաև՝ դեմքի տխրությունը:

Գույնի ու գծի վարպետը ռեալիստական արտահայտչամիջոցներով է ստեղծել հոգևորականների, մտավորականների և պատմական անձանց դիմանկարների ծավալուն մի շարք, որոնց մեջ ուրույն տեղ ունի «Հոգևորականի դիմանկար»-ը (նկ. 8): Ծեր հոգևորականը կյանքը նվիրել է Աստծո խոսքը քարոզելուն և մարդկանց հոգիներում բարություն ու գթասրտություն սերմանելուն: Սակայն այժմ կարծես ինքն էլ է հոգնել և ընկել մտորումների մեջ: Կոլորիտը նորից շագանակագույն է, իսկ ամբողջ պատկերն ու ֆոնը միաձուլվել են՝ ընդգծելով դեմքի խորությունը և հայացքը:

Նկ. 8. Հոգևորականի դիմանկար, անթվակիր, կտավ, յուղաներկ, 72x53 սմ, ՀԱՊ:

Նկ. 9. Երկրաբան Անդրեաս Արծրունու դիմանկարը, 1894, կտավ, յուղաներկ, 51x37 սմ, ՀԱՊ:

Հմ. Հակոբյանը ստեղծել է «Երկրաբան Անդրեաս Արծրունու դիմանկարը» (նկ. 9), որը, հավանաբար, վրձնել է Մյունխենում, երբ Արծրունին տեղի համալսարանի ուսանող էր: Էտյուդային այս դիմապատկերի միջոցով նկարիչը հաղորդել է տվյալ պահի տպավորությունը: Կոլորիտը ներկայացվում է նկարչի նախընտրելի գույներով՝ օքրա, սև, շագանակագույն՝ տարբեր երանգավորմամբ: Դիմահայաց դիրքով պատկերված Անդրեաս Արծրունու դեմքը շատ արտահայտիչ է, հատկապես ընդգծված է խորաթափանց հայացքը: Ի դեպ, գեղանկարչի առաջին ճամփորդությունը դեպի Հայաստան եղել է պրոֆեսոր Անդրեաս Արծրունու արշավախմբի հետ, երբ միասին 1894 թ. բարձրացել են Փոքր Մասիսի գագաթը: Այդ մասին Ա. Արծրունին իր նամակներից մեկում գրել է Մարիամ-Մելիք Աղամալյանին[14]*:*

«Անհայտ նկարչի դիմանկար» (նկ. 10) կտավում կա դինամիկա: Հակոբյանը նրան պատկերել է ստեղծագործական աշխատանքի ընթացքում: Դատե-

[14] Վ ա ր դ ա ն յ ա ն. 1981, 109:

լով արտաքինից, միգուցե, նա վրացի է: Հակոբյանը պատկերը վերցրել է շրջանակի մեջ, ինչն ինքնին հետաքրքիր է նկարի կոմպոզիցիոն կառուցման տեսանկյունից: Քսածքները շատ անկաշկանդ են ու համարձակ, իսկ կոլորիտը շագանակագույնի երանգների մեջ է:

Տաղանդավոր արվեստագետի դիմանկարներում առկա են քնարականությունը, հուզականությունը, ինչպես նաև բնավորությունների խիստ բազմազանությունը: Նա ամեն մի կերպարի նկատմամբ ուրույն մոտեցում է դրսևորում, արտահայտչամիջոցներն էլ տարբեր են կոմպոզիցիայի, ներկապնակի, կատարման եղանակի առումով:

Հակոբյան արվեստագետի ստեղծագործության էությունը բխում է կյանքից, նա ձգտում է ցույց տալ կյանքն այնպիսին, ինչպիսին այն կա, բայց նաև դրան ավելացնում է իր՝ հակոբյանական գույները: Նկարչի գեղանկար-դիմանկարները նորովի են բացահայտում նրա տաղանդը:

Նկ. 10. Անհայտ նկարչի դիմանկար, անթվակիր, կտավ, յուղաներկ, 71x63 սմ, ՀԱՊ:

Նկ. 11. Նկարչի հոր դիմանկարը, անթվակիր, թուղթ, իտալական մատիտ, 29x24,2 սմ, ՀԱՊ:

Տղամարդկանց գրաֆիկական դիմանկարները

Հայտնի է, որ գրաֆիկայի մեծագույն վարպետներ են Ալբրեխտ Դյուրերը, Լեոնարդո դա Վինչին, Ռեմբրանդ վան Ռեյնը, Ֆրանցիսկո Գոյան և այլք: Հայ արվեստում գրաֆիկայի խոշորագույն ներկայացուցիչներից են Ստեփան Աղաջանյանը, Փանոս Թերլեմեզյանը, Ենոք Նազարյանը, Հմայակ Հակոբյանը, Դավիթ Օքրոյանցը, Վարդգես Սուրենյանցը, Գևորգ Բաշինջաղյանը, Հարություն Շամչինյանը, Սեդրակ Առաքելյանը և ուրիշներ:

Հմ. Հակոբյանի գրաֆիկական աշխատանքներն արված են ճշգրիտ, լակոնիկ, հստակ և ռեալիստական վարպետությամբ: Նրա թիֆլիսյան վաղ շրջանի գծանկարները փոքր-ինչ զիջում են Մյունխենում ստեղծված գործերին: Մյունխենյան շրջանի ստեղծագործությունները հանդես են գալիս պատկերման ծավալային լուծումներով և լուսաստվերային մանրամասն մշակումնե-

րով: Նա առավել մեծ ուշադրություն է դարձրել նաև կերպարների նմանությանը:

Դեռ պատանի հասակում նկարիչը զարմանալիորեն ճշգրիտ է պատկերել հոր գծանկարը: Իսկ ահա «Նկարչի հոր դիմանկարը» (նկ. 11) արված է վերջինիս պատկառելի տարիքում: Հոր կերպարում դրսևորված է նրա մտահույզ հոգեվիճակը:

Վաղ շրջանի գործերից ուշագրավ են «Պարսիկ» (նկ. 12) և «Կարթալինեցի» (նկ. 13) գծապատկերները, որոնք արված են կիսադեմ դիրքով: «Պարսիկ»-ը գծանկարում ընդգծված է փափախը, հնարավորինս օգտագործված է մատիտի մգությունը, բեղերն ու դիմագծերը կերտված են մանրամասնորեն, շտրիխների միջոցով, մուգ գծերով շեշտված են դեմքի միմիկան, կնճիռները: Դեմքն արտացոլում է նաև խստություն: Ի տարբերություն «Պարսիկ»-ը գծանկարի, «Կարթալինեցի» նկարն արված է ավելի նուրբ և բաց շտրիխներով: Հեղինակը «Կարթալինեցի» գծապատկերում ուշադրությունը նույնպես կենտրոնացրել է դիմագծերին և բացահայտել մարդկային բնավորության որոշակի տիպ:

Նկ. 12. Պարսիկ, 1889, թուղթ, իտալական մատիտ, 33,4x24 սմ, ՀԱՊ:

Նկ. 13. Կարթալինեցի, անթվակիր, թուղթ, իտալական մատիտ, 35x26,5 սմ, ՀԱՊ:

«Քրդի դիմանկար»-ը (նկ. 14) աչքի է ընկնում գծային մշակման ինտենսիվությամբ: Իր կերպարով ուշագրավ է «Տղամարդու դիմանկար (կրոքի)»-ն (նկ. 15): Նախաուրվագիծ ճեպանկարում պատկերված է ծեր տղամարդ, որի հայացքն ուղղված է ներքև: Այստեղ գծանկարիչը գտել է ևս մի բնավորություն:

Ըստ մշակութաբան Իրինա Նևերովայի՝ ժամանակակից մշակույթի համակարգում դիմանկարը կատարում է հետազոտական գործառույթ, որն իր բնույթով հանդես է գալիս որպես անձի մասին նոր ճշմարտություններ

հայտնաբերելու միջոց, այն բացահայտում է նոր իրողություններ և ոլորտներ, որոնք դեռևս չեն հասել բանավոր գիտելիքների մակարդակի[15]:

Նկ. 14. Քրդի դիմանկար, 1890, թուղթ, իտալական մատիտ, 26x20,8 սմ, ՀԱՊ:

Նկ. 15. Տղամարդու դիմանկար (կրոքի), անթվակիր, թուղթ, մատիտ, 16,8x12,5 սմ, ՀԱՊ:

Նկ. 16. Թումանյանի դիմանկարը, 1919, թուղթ, ածուխ, 29x40 սմ, Հովհ. Թումանյանի տուն-թանգարան:

Հայ մեծ բանաստեղծ Հովհաննես Թումանյանի կերպարին անդրադարձել են շատ արվեստագետներ[16], *սակայն Հմ. Հակոբյանը [«Թումանյանի դիմանկարը» (նկ. 16)] այն քչերից մեկն է, որը բանաստեղծին պատկերել է կենդա-*

[15] Неверова. 2008, 3–18.

[16] *Ըստ արվեստաբան Մ. Ղազարյանի՝ բանաստեղծի օրոք նկարված ու պահպանված դիմապատկերներից հայտնի են երեքը, որոնցից մեկը Հմայակ Հակոբյանինն է, մյուսը՝ Գրիգոր Շարբաբչյանինը, երրորդը՝ Ալեքսանդր Բաժբեուկ-Մելիքյանինը: Նշենք, որ ուշագրավ գործ է նաև Եղիշե Թադևոսյանի կերտած դիմանկարը (Ղ ա զ ա ր յ ա ն. 1969, 53): Ինչպես նշում է արվեստաբան Մ. Քամալյանը, թեև աշխատանքն արված է լուսանկարից, սակայն նկարչին հաջողվել է թեթև և աշխույժ վրձնահարվածներով ստեղծել լույսով ողողված, կենսախնդությամբ համակված, առինքնող պոետական կերպար Լոռվա հայրենի բնաշխարհի ֆոնին: Թումանյանի գեղարվես-տական կերպարին, նրա հետ իր անձնական հանդիպումների տպավորության տակ, հետագայում (1939 թ.) անդրադարձել է նաև Մարտիրոս Սարյանը՝ ստեղծելով գրաֆիկական երկու էջ (Ք ա մ ա լ յ ա ն. 2018, 109–115):*

նության օրոք: Թումանյանը ներկայացված է կիսադեմ, դեմքը խոնարհած է, հայացքը ներքև ուղղված, ասես մտամոլոր լինի: Արվեստագետը մանրամասն ներկայացրել է դիմագծերը, ապրած տարիներից ու հույզերից առաջացած կնճիռները ... Որքա՜ն վեհություն կա այս կերպարի մեջ: Հովհ. Թումանյանի տուն-թանգարանի մի գողտրիկ անկյունում է փակցված Հմ. Հակոբյանի պատկերած՝ Ամենայն հայոց բանաստեղծի գծապատկերը:

Հմ. Հակոբյանը ստեղծել է ճեպանկարների շարք, նաև պատկերել է բազմաքանակ տիպարներ՝ կատարելագործվելով որպես նկարիչ: Նրան հետաքրքրել են տվյալ մարդկանց խառնվածքը և բնավորությունը: Որոշ կերպարների արվեստագետն անդրադարձել է մի քանի անգամ, ասես այդ որոնումների մեջ փորձել է գտնել ինքն իրեն, և դրա արդյունքը դարձան նկարչի վեց հետաքրքիր ինքնանկարները, որոնցից յուրաքանչյուրն անկրկնելի ինքնաբացահայտում է:

Եզրակացություն

Տաղանդաշատ նկարիչ Հմ. Հակոբյանը հայտնի է ոչ միայն նատյուրմորտի, բնանկարի, կենցաղային ժանրի ստեղծագործություններով, այլև դիմանկարով: Ռեալիստ գեղանկարչի դիմապատկերների աշխարհը չափազանց ընդգրկուն է: Նա պատկերել է թե՛ կանանց և տղամարդկանց, թե՛ երեխաների ու ալեհերների, թե՛ երիտասարդների և թե՛ ինքն իրեն: Նրա ստեղծած յուրաքանչյուր դիմապատկեր ներկայացնում է մարդկային ճակատագիր, և կարծես յուրաքանչյուր կերպար առանձին պատմություն է, որը «խոսում է» նկարի միջոցով: Վարպետի կտավներում առկա է տվյալ ժամանակաշրջանի մթնոլորտը. մարդկային բազմապիսի դիմագծերում արտացոլվում են սոցիալական միջավայրը, տվյալ ժողովրդի ապրելակերպը, սովորույթները: Ինքնատիպ կոլորիտ են ստեղծում հայ և այլ ժողովուրդների տարազները:

Հմ. Հակոբյանի ստեղծագործությունները հնարավորություն են ընձեռում բացահայտելու ինչպես նրա վառ տաղանդը, այնպես էլ մի ողջ դարաշրջանի իրական պատկերը: Նրա բարձրարժեք ստեղծագործությունն ուրույն տեղ ունի կերպարվեստի պատմության մեջ:

Արմինե Պետրոսյան – ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի հայցորդ, Սփյուռքահայ արվեստի և միջազգային կապերի բաժնի կրտսեր գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունները՝ միջնադարյան, նոր և նորագույն շրջանի հայ կերպարվեստի ուսումնասիրություն, Հմայակ Հակոբյանի կյանքն ու ստեղծագործությունը: Հեղինակ է 6 հոդվածի: armine.pet21@mail.ru

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Աղասյան Ա. 2009, Հայ կերպարվեստի զարգացման ուղիները XIX–XX դարերում, Երևան, «Ոսկան Երևանցի», 292 էջ, 192 էջ նկար:

Դիմանկարը հայկական գրաֆիկայում. 2004, Հայաստանի ազգային պատկերասրահի հավաքածու, ցուցահանդեսի կատալոգ, Երևան, «Սարգիս Խաչենց», 62 էջ:

Հմայակ Հակոբյան (1871–1939). 1948, Հմայակ Հակոբյանի ստեղծագործությունների հետմահվան ցուցահանդեսի կատալոգ, ներածական հոդվածը Ռ. Լոռիս-Մելիքյանի, Երևան, Հայաստանի պետական պատկերասրահի հրատ., 90 էջ+11 նկ.:

Ղազարյան Մ. 1969, Ներշնչող կերպարներ. – ՊԲՀ, № 3, էջ 49–64:

Մարտիկյան Ե. 1983, Հայկական կերպարվեստի պատմություն, գիրք Գ, Երևան, «Սովետական գրող», 224 էջ, 34 թերթ ներդիր:

Վարդանյան Վ. 1981, Անդրեաս Արծրունու նամակները Մարիամ Մելիք-Աղամալյանին. – ՀՀ ԳԱԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», № 3, էջ 97–113:

Քամալյան Մ. 2018, Հովհաննես Թումանյանի դիմանկարները. – Երիտասարդ հայ արվեստաբանների գիտական տասներկուերորդ նստաշրջան, նվիրվում է Հովհաննես Այվազովսկու ծննդյան 200-ամյակին: Նստաշրջանի նյութեր (22–23 նոյեմբերի, 2017), Երևան, «Գիտություն», 291 էջ:

Гегель. 1958, Соч. т. XIV. Лекции по эстетике. Книга третья. М., «Соцэкгиз», 440 с.

Золотых М. С. 2016, О процессе создания портретного образа в живописи. Ученые записки. Электронный научный журнал Курского государственного университета, № 3, https://cyberleninka.ru/article/n/o-protsesse-sozdaniya-portretnogo-obraza-v-zhivopisi/viewer (дата обращения: 01.03.2023).

Неверова И. А. 2008, Художественный портрет как форма постижения человека в истории культуры. Автореферат диссертации на соискание ученой степени кандидата культурологии. СПб., с. 3–18.

Хачатрян Н. 1985, Четвертый международный симпозиум по армянскому искусству. Ереван, Изд. АН Арм ССР, с. 289–290.

https://dspace.nplg.gov.ge/bitstream/1234/13081/1/Armenian_Artists_from%20Georgia.pdf (дата обращения: 28.03.2023).

МУЖСКОЙ ОБРАЗ В ПОРТРЕТАХ АМАЯКА АКОПЯНА

АРМИНЕ ПЕТРОСЯН

Ключевые слова: Амаяк Акопян, портретный жанр, графические и живописные портреты, реалистические подходы, мужской образ.

В многожанровом творчестве известного живописца конца XIX – первой четверти XX века Амаяка Акопяна (1871–1939), внесшего неоценимый вклад в развитие армянского реалистического портретного жанра, особое место занимают мужские портреты (живопись и графика). Его портреты отражают как человеческие типажи, так и эпоху, в которой он жил и создавал свои полотна. Персонажами портретов являются люди разных национальностей и культур. Это психологические портреты, раскрывающие пласты человеческой души.

Армине Петросян – соискатель Института искусств НАН РА, младший научный сотрудник отдела искусства армянской диаспоры и международных связей. Научные интересы: изучение средневекового, нового и новейшего армянского изобразительного искусства, жизнь и творчество Амаяка Акопяна. Автор 6 статей. armine.pet21@mail.ru

MALE IMAGE IN THE PORTRAITS OF HMAYAK HAKOBYAN

ARMINE PETROSYAN

S u m m a r y

Keywords: Hmayak Hakobyan, portrait genre, graphic and picturesque portraits, realistic approaches, male image, psychological portrait.

In the multi-genre art of the famous painter of the late 19th and the first quarter of the 20th century, Hmayak Hakobyan (1871–1939), who made an invaluable contribution to the development of the Armenian realistic portrait genre, male portraits (painting and graphics) occupy a special place. His portraits reflect both human types and the era in which he lived and created his canvases. The characters of the portraits are people of different nationalities and cultures. These psychological portraits reveal the layers of the human soul.

Armine Petrosyan – Applicant at the Institute of Arts of NAS RA, Junior Researcher at the Department of Art of Armenian Diaspora and International Relations. Scientific interests: study of Armenian fine arts of the medieval, new and latest period, life and creativity of Hmayak Hakobyan. Author of 6 articles. armine.pet21@mail.ru

ՀՏԴ : 947.925

Doi:10.54503/0135-0536-2023.2-255

«ԲՅՈՒԶԱՆԴԱՀԱՅԻ ՏԵՍԻԼ»-Ն ՈՒ ԴՐԱ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅ ԵՎ ԲՅՈՒԶԱՆԴԱԿԱՆ ՎԱԽՃԱՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ*

ԱՐԵԳ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Բանալի բառեր՝ հայ վախճանաբանություն, բյուզանդական վախճանաբանություն, Կոմնենոսներ, բյուզանդահայ մատենագրություն, Դանիելի տեսիլ, Կեղծ-Մեթոդիոս, հայերը Բյուզանդիայում, 4-րդ խաչակրաց արշավանք, Նիկետաս Քոնիատես, օտարի ընկալումը:

Նախաբան

Մի քանի տարի առաջ «Բանբեր Մատենադարանի» հանդեսի 23-րդ համարում բ. գ. դ. Արամ Թոփչյանի կողմից հրատարակվել են Կեղծ-Մեթոդիոսի տեսիլի հայերեն տարբերակները[1]: Հոդվածում ներկայացվում է Կեղծ-Մեթոդիոսի տեսիլի հիմնական թարգմանությունը՝ համեմատված հունարեն տարբերակի հետ, ինչպես նաև նրա հեղինակությամբ ավանդված, սակայն հիմնական տարբերակից խիստ տարբերվող մի այլ բնագիր, որը պահվում է Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի (ՄՄ) № 2270 ձեռագրում:

Այս բնագրի «չեղումը» Կեղծ-Մեթոդիոսի հիմնական տարբերակից արտահայտվում է մի քանի ցայտուն հանգամանքներով[2]: Նախ՝ «Հռոմի վերջին կայսրի» դրվագի փոխարեն բնագրում առկա են իրար հաջորդող արքաներ[3], որոնք ունեն խորհրդանշային անուններ, ինչպիսիք են՝ «Բարի», «Մանկաղ»,

---

* *Ներկայացվել է 10. IV. 2023 թ.: Հոդվածը տպագրության է երաշխավորել գիտական ղեկավար, պ. գ. թ. Մ. Մալխասյանը (01. IV. 2023 թ.): Ընդունվել է տպագրության 19. VI. 2023 թ.: Շնորհակալություն ենք հայտնում պ. գ. դ., երջանկահիշատակ Գևորգ Տեր-Վարդանյանին, ում հետ առիթ ենք ունեցել քննարկել հոդվածի հիմնական դրույթները, ինչպես նաև՝ Ph.D Անդրաշ Կրաֆտին՝ իր ատենախոսության պատճեն մեզ տրամադրելու համար:*

[1] *Թ ո փ չ յ ա ն. 2016: Այս բնագիրը ծանոթ է եղել Աշոտ Հովհաննիսյանին և Բարսեղ Սարգիսյանին (տե՛ս Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. 1957, 22–23, Ս ա ր գ ի ս ե ա ն. 1894, Ս ա ր գ ի ս ե ա ն. 1898): Դրան հարևանցի անդրադարձել է նաև պատմաբան Ագոստինո Պերտուսին (տե՛ս* Pertusi. 1988, 136–137)*: Հարկ է ավելացնել, որ աղբյուրագետ Հակոբ Անասյանը, խոսելով բնագրի նախնական հատվածի մասին, գտնում է՝ այն կրել է Ագաթոնի (Ագադրոնի) տեսիլի ազդեցությունը (Ա ն ա ս յ ա ն. 1959, 148):*

[2] *Նշենք, որ ՄՄ-ի № 2270 ձեռագրի տարբերակը պակասավոր է (բացակայում է բնագրի սկզբնական մասը): Բնագրի ամբողջական տարբերակի միակ նույնականացված ձեռագիրը պահվում է Վենետիկի Մխիթարյան միաբանությունում՝ ձեռագրերի ցուցակի 259 համարի ներքո (տե՛ս Թ ո փ չ յ ա ն. 2016, 342):*

[3] *«Հռոմի վերջին կայսրի»* (“The Last Roman Emperor”) *մոտիվը Կեղծ-Մեթոդիոսի տեսիլի և, առհասարակ, բյուզանդական վախճանաբանության ու հայտնութենաբանության կարևոր մաս է (տե՛ս* Alexander. 1985, 151–184)*:*

«Արծիվ» և այլն: Բացի այդ, կան նաև տարբերություններ «Կորստյան Որդու» հետ կապված նկարագրություններում: Այս և բազում այլ տարբերություններից[4] ակնհայտ է, որ, չնայած Կեղծ-Մեթոդիոսի անվան հիշատակմանը վերնագրում՝ այս տեսիլը միանգամայն այլ բնագիր է՝ գրված այլ հանգամանքներում: Ինչպես ցույց կտանք ստորև, այն միայն շատ ընդհանրական կապ ունի VII դարում գրված Կեղծ-Մեթոդիոսի տեսիլի հետ: Ավելին, քննության առարկա բնագիրը մեծագույն հավանականությամբ կազմվել է 1204 թ. Կոստանդնուպոլսի առումից հետո՝ բյուզանդահայ մի անհայտ հեղինակի կողմից: Ավելացնենք միայն, որ այս բնագիրն ունի տեսիլներին հատուկ բավականին բարդ կազմություն և արտահայտում է մի քանի տեսիլների ու տեսլախմբերի[5] յուրահատուկ համադրություն:

Տեսիլի պատմական կորիզը

Ինչպես նշեցինք, այս բնագիրը ստեղծվել է 1204 թ. հետո և, ամենայն հավանականությամբ, Կոստանդնուպոլսի հայկական միջավայրի ծնունդ է[6]: Հիշյալ տեսակետի հիմքում է բնագրի պատմական կմախքը, որն ընդհանուր երանգներով նկարագրում է Բյուզանդիայի պատմության XII դ. և XIII դ. Դարասկզբի անցքերը: Բնագրի պատմական մասը սկսվում է հետևյալ կերպ. Հեղինակը նկարագրում է «քրիստոնյաների հաղթությունը անհավատների» դեմ պատերազմում, որը գլխավորելու է «Արծիվ» հորջորջվող արքան, որի մահից հետո արքայությունն անցնելու է նրա որդուն՝ «Զի» արքային.

«Թագաւորէ որ դրոշմեալ է Զի:

Յետ սորա թագաւորէ որդի սորա (իմա՝ «Արծիվ» արքայի – Ա. Վ.) և վարի սրբութեամբ և խաղաղութեամբ, զի ոչ ուստեք ունի հակառակողս իւր: Եւ թագաւորեսցէ ամս ԺԲ և ննջեսցէ. աստ դադարէ թագաւորութիւն Կոմնիանոսաց: Եւ սա ձի դրոշմեացաւ, զի ոչ աշխատեցաւ:

Այս Մանկաղ թագաւորն է:

Իսկ զկնի թագաւորեսցէ, որ դրրոշմեալն է «Մանկաղ ունելով ի ձեռն», զի աւուր կիրակէի ի Կոստանդինուպոլիս ընդ թագաւորելն նորայ կոտորեսցին սրով հոգիք խԲՌ (42 000 – Ա. Վ.), և լինի չփոթ յոյժ և խռովութիւն, և ոչ հաճի ընդ նա Տէր, և զկնի Գ (իմա՝ 3) ամաց մահուամբ ելանէ յաշխարհէ»[7]:

Կարծում ենք՝ «Զի» հորջորջվող արքան, ընդհանուր առմամբ, նույնական է Մանուել Ա Կոմնենոսին: Չնայած այն հանգամանքին, որ նա վերջին Կոմնենոսը չէր և կառավարել է ոչ թե 12, այլ՝ 37 տարի (1143–1180 թթ.), սակայն իր կառավարման տարիներին Բյուզանդիան հասավ հզորության մի կետի, որին էլ երբեք չի հասնի իր գոյության հաջորդ երեքհարյուրամյակում: Մինչ Մյուրիոկեֆալոնի պարտությունը նա իսկապես կարողացել էր այս կամ այն չափով զսպել Բյուզանդիայի բոլոր հարևաններին՝ Հունգարիայից մինչև Երու-

---

[4] *Դրանք նկատելի են հպանցիկ համադրության պարագայում:*

[5] *Այս եզրը ներմուծում ենք ընդհանուր առմամբ նման, սակայն իրարից որոշակիորեն տարբերվող տեսիլների ընդհանրությունը բնութագրելու համար: Որպես օրինակ՝ կարող ենք նշել Դանիելի հունարեն, Ագաթոնի, Կոզեռնի տեսլախմբերը:*

[6] *Բյուզանդահայության մասին տե՛ս Բ ա ր թ ի կ յ ա ն. 2003, 4–64:*

[7] *Թ ո փ չ յ ա ն. 2016, 370:*

սաղեմի թագավորություն[8]*: Այդ իսկ պատճառով նրա կառավարումը կարելի է ամփոփել «զի ոչ ուստեք ունի հակառակողս իւր» արտահայտությամբ: Բացի այս, ինչպես նշեցինք, բնագրում նա ներկայացվում է իբրև «Արծիվ» արքայի որդի, ում օրոք հույների ու լատինների միավորված բանակը հաղթանակ է տարել «պարսիկների» նկատմամբ*[9]*: Մանուելի հայրը՝ Հովհաննես Բ Կոմնենոսը, իրապես հաղթական պատերազմներ է մղել սելջուկյան պետությունների*[10] *դեմ և փորձել է խաչակրաց պետություններին միավորել Ասորիքի քաղաքները գրավելու նպատակով*[11]*: Ինչն առավել ուշագրավ է, «Մանկաղ» հորջորջվող արքան որոշ նմանություններ ունի Մանուելի հաջորդ կայսեր՝ Անդրոնիկոս Ա Կոմնենոսի հետ: Վերջինս իշխանության համար պայքարի շրջանակներում գլխավորում է 1182 թ. «լատինների» կոտորածը և մահանում է երեք տարի անց՝ 1185 թ.*[12]*: Հաջորդ արքայի մասին կարդում ենք.*

«Այս Եղն թագաւորէ:

Յետ սորա թագաւորէ, և միաբանին ընդ սա թագաւորք արևմտից և գան մտանեն ի քաղաքն ընդ ոսկի դուռն: Եւ լինի խաղաղութիւն և սէր մեծ ընդ ամենայն երկիր, և հնազանդի ամենայն երկիր: Եւ ոչ ոք է որ հակառակ գա նմա, զի հզոր է և հեզ և անմեղ և սուրբ և բարեգործ: Եւ թագաւորէ ամս ԻԲ և հանգիսցէ ընդ հայրս իւր ի թիւս սրբոց»[13]*:*

Կարծում ենք՝ «Եղն» արքան նույնական է Իսահակ Բ Անգելոսի հետ: Այս կռահման պատմական հիմքն է վերջինիս կառավարման ընթացքում տեղի ունեցած 3-րդ խաչակրաց արշավանքը, ինչի արձագանք պետք է համարել «միաբանին ընդ սա թագաւորք արևմտից և գան մտանեն ի քաղաքն ընդ ոսկի դուռն» արտահայտությունը[14]*: Հարկ է նշել, որ սրան հաջորդում են «Մերկ», ապա՝ «Բարեմիտ» արքան և «Պեղծ կինը»: Դժվար է ասել՝ արդյոք այս երեքն ունեն պատմական համատեքստ, թե՝ ոչ: Կարելի է պնդել, սակայն, որ «Պեղծ կնոջ» հիշատակումը վերջինիս իշխանության հետ Կոստանդնուպոլսի 1204 թ. առման աղետը զուգակցելու գեղարվեստական հնար է: Սա պատմական առումով հաստատվում է այնքանով, որ այս շրջանում բյուզանդական կայսրուհի չի հիշատակվում. հետևաբար, հեղինակը պատմականից տեղափոխվում է գեղարվեստական դաշտ: «Պեղծ կնոջ» դրվագում գրավման մասին անմիջական խոսք չկա, սակայն նկարագրվում է ավերիչ երկրաշարժ իբրև պատիժ կառավարման ընթացքին տեղի ունեցած մեղքերի համար:*

Առավել հետաքրքրական է բնագրի հաջորդ մասը, որ միանգամայն ցույց է տալիս՝ «Պեղծ կնոջ» շրջանի նկարագրությունը վերաբերում է Կոստանդնուպոլսի գրավմանը.

---

[8] Magdalino. 2019, 641–644.

[9] *Թոփչյան. 2016, 368:*

[10] *Սելջուկներին «պարսիկ» ցեղանվամբ կոչելը հատուկ է թե՛ հայ և թե՛ բյուզանդական մատենագրությանը (տե՛ս Ստեփաննոս Սիւնեաց Եպիսկոպոս. 1861, 244, 255,* Cinnamus. 1836, 5*):*

[11] Magdalino. 2019, 627–632.

[12] Magdalino. 2019, 649.

[13] *Թոփչյան. 2016, 370:*

[14] *Իհարկե, իրական պատկերը շատ հեռու էր միաբանությունից, քանզի խաչակիրների և Բյուզանդիայի հարաբերություններն այս շրջանում խիստ լարված էին (տե՛ս* Ostrogorsky. 1968, 406–407*:*

«Այս Բարի թագաւոր է:

Եւ փոխի թագաւորութիւն ի նոր Բաբելոնէ ի Նիկո[մե]դեայ (՞): Եւ ապա թագաւորէ քարձ ոմն մի մարդ բարեմիտ և նեղեալ տայ զթագաւորութիւն իւր այլում ումեմն մարդոյ բարեմտի և սրբոյ, որ լինի մարմնով տկար և չնորհաւքն Աստուծոյ զօրաւոր: Եւ թագաւորէ ամս Ի և փոխի բարի խոստովանութեամբ ի Քրիստոս:

Այս Զորաւորն է:

Յետ այսորիկ թագաւորէ հզօր զօրութեամբ հեզ և արդար Տիբերիոս: Ի սորայ թագաւորութեան հինգ ամին ծնանին Նեռն, և թագաւորեսցէ սա ամս ԼԶ: Եւ ի ԻԶ ամի թագաւորութեան սորա հերձի թագաւորութիւն ընդ Ժ յիշխանութիւն»[15]*:*

Կարծում ենք, նկարագրվում են 1204 թ. հետո Բյուզանդիայի քաղաքական դրության հիմնական երանգները: Բնագրի հեղինակը, Կոստանդնուպոլիսը նախորդ մասում կոչելով «մեծ Բաբելոն», այստեղ այլաբանորեն արձանագրում է, որ Բյուզանդական կայսրությունը Կոստանդնուպոլսից տեղափոխվեց «Նիկոդեայ»: Սա հղում է Թեոդորոս Լասակրիսի հիմնադրած Նիկեական կայսրությանը, որն առաջացել էր Փոքր Ասիայի առափնյա հունաբնակ մասում: Եթե համարենք, որ ձեռագրի «Նիկոդեայ» բառը վերաբերում է Նիկոմեդիա քաղաքին, ապա բնագրի կազմման ժամանակը կարելի է հստակեցնել 1204–1213 թվականներով, երբ Նիկոմեդիան դեռ մի կարճ ժամանակ (մոտավորապես՝ 1207 թ.) Թեոդորոս Լասակրիսի ձեռքում էր, քանի որ մոտավորապես 1211 թ. (ամրագրված 1213 թ. պայմանագրով) հետո ընկած ժամանակահատվածում քաղաքը մնալու է լատինների ձեռքում՝ ընդհուպ մինչև 1241 թ.[16]*: Այս ենթադրությունը հիմնավորվում է նաև Վենետիկի ձեռագրի օրինակում հանդես եկող «Նիկոմիդիա» տարբերակով*[17]*: Ինչ վերաբերում է «Զորաւոր» արքայի նկարագրությանը, ապա այստեղ ներկայացվում է կայսրության մասնատումը, ինչը զուգակցվում է Նեռի գալստեան հետ: Այսպիսով բնագրում անցում է տեղի ունենում դեպի աստվածաբանական դաշտ:*

Տեսիլի կապը բյուզանդական վախճանաբանության հետ

Բնագրական համեմատությունները ցույց են տալիս, որ սույն բնագիրը կապ ունի XII–XIII դդ. թվագրվող մի շարք բյուզանդական վախճանաբանական և հայտնութենական գրությունների ու գուշակությունների հետ. դրանք են[18]*՝ «Լևոն Իմաստունի հարցումները»*[19]*, «Ճշմարիտ կայսեր պատումը»*[20]*,*

---

[15] *Թ ո փ չ յ ա ն. 2016, 371:*

[16] П о п о в. 2022; К а р п о в. 2020; The Oxford Dictionary of Byzantium. 1991, 1483–1484.

[17] *Ս ա ր գ ի ս ե ա ն. 1894, 27:*

[18] *Անվանումների համար օգտագործում ենք հետևյալ հրատարակությունները՝* K r a ft. 2018; D i T o m a s s o. 2005.

[19] The Oracles of the Most Wise Emperor Leo & The Tale of the True Emperor. 2002, 56–88.

[20] The Oracles of the Most Wise Emperor Leo & The Tale of the True Emperor. 2002, 31, 90–100. *Այս բնագիրը նույնպես թվագրվում է XIII դարով:*

«Դանիելի պատումը»[21], *«Դանիելի վերջին տեսիլը»*[22], *«Դանիելի և այլ սրբերի տեսիլները»*[23], *«Կոստանդիանոս Մեծի հայտնությունը»*[24]*: Կարևոր աղբյուր է նաև Նիկետաս Քոնիատեսի*[25] *պատմական երկը, քանզի այն կարևոր զուգահեռներ ունի «Լևոն Իմաստունի հարցուկներ»-ի հետ: Ինչն առավել հետաքրքրական է, քննության առարկա բնագիրը չունի ուղիղ բնագրական փոխառություններ հունարեն բնագրերից: Այստեղ գործ ունենք համընկնող խորհրդանիշերի հետ, այսինքն՝ բնագիրը ոչ թե գրվել է հունարեն սկզբնաղբյուրների հիման վրա կամ պարզ թարգմանություն է հունարենից, այլ նույն հասարակական միջավայրի անկախ ծնունդ է: Սա ավելի հստակ կերևա ստորև՝ բնագրական համեմատությունների օրինակով:*

Ինչպես արդեն նշեցինք, քննության առարկա բնագիրը սկսում է «Արծիվ» կեղծանունով արքայից, ապա «Ձի»-ն է, հետո՝ «Մանկաղ»-ը, «Եզն»-ը, «Մերկ»-ը, «Բարեմիտ»-ը և այլք[26]*: Այս կեղծանուններից առաջին 5-ին նույն հաջորդականությամբ հղում են «Լևոն Իմաստունի հարցուկները» և «Ճշմարիտ կայսեր պատումը»: Հստակություն մտցնելու նպատակով հարկ ենք համարում նշել, որ «Լևոն Իմաստունի հարցուկներ» կոչվող գուշակությունների ժողովածուն՝ խրթին լեզվով գրված կանխատեսումների մի մատյան, որ պարունակում է VII–XV դդ. գրված 15 «հարցուկներ (գուշակություններ)», որոնք տարբեր հրատարակություններում և ձեռագրերում բաժանվում են տարբեր գլուխների*[27]*: Այսպես 3-րդ «հարցուկի» տեքստում կարդում ենք. «Երկակ է երրորդը և թռչուն ճիավոր, խաչակիր թռչուն, նաև ճի պոզավոր»*[28]*: Այս երկտողի «Երկակ է երրորդը» արտահայտությունը բնագրի հրատարակողները դիտարկում են իբրև հղում առ այն, որ 2-րդ և 3-րդ հարցուկները մեկ ընդհան-*

---

[21] Истрин. 1897, 145–150 *(ըստ ցանկի* Б *բաժնի). Այս բնագիրը թվագրվում է VIII–IX դդ. (տե՛ս* DiTomasso. 2005, 130–141*):*

[22] Истрин. 1897, 135–139 *(ըստ ցանկի* Б *բաժնի). Բնագիրն ունի տարբեր թվագրումներ* (DiTomasso. 2005, 192; Kraft. 2018, xii)*: Ամեն դեպքում գոյություն է ունեցել այս բնագրի XIII դ. խմբագրություն, որտեղ հիշատակվում են թաթարները (=մոնղոլները) [տե՛ս* Истрин. 1897, 273 *(ըստ ցանկի* А *բաժնի)]:*

[23] Pertusi. 1988, 172–201. *Այս բնագիրը թվագրվում XIII–XIV դարերով (տե՛ս* Kraft. 2018, xii*):*

[24] Pertusi. 1988, 54–56. *Բնագիրը թվագրվում է XIII դարով (տե՛ս* Kraft. 2018, xii*):*

[25] Nicetas Choniates. 1975; O City of Byzantium: Annals of Niketas Choniates. 1984. *Այս զուգահեռների վերլուծության համար տե՛ս* The Oracles of the Most Wise Emperor Leo & The Tale of the True Emperor. 2002, 32–35.

[25] O City of Byzantium: Annals of Niketas Choniates. 1984, 183.

[26] *Թոփչյան. 2016, 368–371:*

[27] The Oracles of the Most Wise Emperor Leo & The Tale of the True Emperor. 2002, 25–26.

[28] διττόν τὸ τρίτον καὶ γάρ ὄρνις [ἱππότης] στ(αυ)ροῦχος ὄρνις ἵππος δ' αὖ κερασφόρος, The Oracles of the Most Wise Emperor Leo & The Tale of the True Emperor. 2002, 60–61.

րություն են կազմում[29]: Ավելին, սա բացատրում է այն հանգամանքը, թե ինչու է Քոնիատեսը մեջբերում 3-րդ «Հարցուկ»-ից տողեր թե՛ Հովհանես Կոմնենոսի, թե՛ Մանուել Կոմնենոսի վերաբերյալ[30]: Ինչպես արդեն նշեցինք, քննության առարկա բնագրի պատմական հղումներն արդեն թույլ են տալիս զուգահեռներ անցկացնել «Արծիվ» / Հովհանես Կոմնենոսի և «Ձի» / Մանուել Կոմենոսի միջև, ինչն ավելի ցայտուն է դառնում Քոնիատեսի և «Լևոն Իմաստունի հարցուկներ»-ի տեղեկության հիման վրա: Ավելին, եթե «Լևոն Իմաստունի հարցուկներ»-ում խոսքը գնում է «խաչակիր թռչնի և պոզավոր ձիու» մասին, և երկուսը մեկ գուշակության մաս են, ապա «Դանիելի և այլ սրբերի տեսիլներ»-ում «թռչնի» փոխարեն «արծիվ» է. «Արդ պատմվում է պոզավոր ձիու [մասին] և իր վերևում արծիվ է ձիու վզից բռնած, և խաչ է արծվի բերանում»[31]: Բնագրում սկզբից հետևում է «արծվի բանաստեղծությունը»[32] և հետո «ձիու բանաստեղծությունը»[33]: Հարկ է նշել, որ այստեղ էլ, ինչպես նախորդ դեպքերում, ո՛չ «արծվի բանաստեղծությունը», ո՛չ էլ «ձիու բանաստեղծությունը» ուղիղ բնագրային փոխկապակցվածություն չունեն և պատմում են միանգամայն այլ բաների մասին՝ հարցուկներին հատուկ ոճով:

Ինչպես նկատեցինք՝ «Մանկաղ» թագավորի անվան տակ հիշատակվող պատմական դեպքերն անուղղակի հղում են Անդրոնիկոս Ա Կոմնենոսի կառավարման շրջանին: Սակայն «Մանկաղ» կեղծանունը նույնպես կապված է «Լևոն Իմաստունի հարցուկներ»-ի և պատմիչ Նիկետաս Քոնիատեսի տեղեկությունների հետ: Այսպիսով, «Լևոն Իմաստունի հարցուկներ»-ի 6-րդ և 7-րդ «հարցուկներում» կարդում ենք՝ «մանկաղ և վարդ տանողը»[34], «մանկաղավորը»[35], «երրորդ տառը ձեռքն է, այսինքն՝ մանկաղը»[36]: Այս գուշակության՝ առաջին հայացքից «լղոզված» մեջբերումներն ավելի հստակ են դառնում Նիկետաս Քոնիատեսի տեղեկությունների լույսի տակ: Պատմիչը հաղորդում է, որ Անդրոնիկոս Կոմնենոսն իր պատկերն է պատրաստել տվել, որտեղ արքայական հագուստների փոխարեն կրում էր գյուղացու հագուստ. նրա մի ձեռքին մանգաղ է, որին պատկերված է սպանված տղայի մարմին[37]: Այսպիսով,

---

[29] The Oracles of the Most Wise Emperor Leo & The Tale of the True Emperor. 2002, 33.

[30] O City of Byzantium: Annals of Niketas Choniates. 1984, 24, 125; The Oracles of the Most Wise Emperor Leo & The Tale of the True Emperor. 2002, 62–63.

[31] Ἐνταῦθα ἱστορεῖται ἵππος κεράστης καὶ ἐπάνω αὐτοῦ ἀετός ἱστάμενος ἐπι τοῦ τραχήλου τοῦ ἵππου καὶ ἐν τῷ στόματι τοῦ ἀετοῦ σταουρός (P e r t u s i. 1988, 175).

[32] Στίχοι τοῦ ἀετοῦ (P e r t u s i. 1988, 175).

[33] Στίχοι τοῦ ἵππου (P e r t u s i. 1988, 175).

[34] δρέπανον καὶ ῥόδον ὅπερ φέρει (The Oracles of the Most Wise Emperor Leo & The Tale of the True Emperor. 2002, 68).

[35] δρεπανηφόρε (The Oracles of the Most Wise Emperor Leo & The Tale of the True Emperor. 2002, 68).

[36] ... τὸ τρίτον στοιχεῖον ἡ χεὶρ, καὶ δρέπανον αυτόγε (The Oracles of the Most Wise Emperor Leo & The Tale of the True Emperor. 2002, 70).

[37] O City of Byzantium: Annals of Niketas Choniates. 1984, 183.

«Մանկաղ» / Անդրոնիկոս Կոմնենոս զուգադրումը համապատասխանում է նաև բյուզանդական աղբյուրներին: Դարձյալ կարող ենք արձանագրել ընդհանուր իմաստային և ոչ ուղիղ բնագրային կապ:

Ինչպես նշեցինք, կային պատմական զուգահեռներ Իսահակ Բ Անգելոսի և «Եզն» արքայի միջև: «Եզն»-ի մասին է հիշատակում «Լևոն Իմաստունի հարցումներ»-ի 5-րդ «հարցումը». «Եզը հինգերորդն է ու վերջն է արջապանի, կազմությունը ցույց է տալիս տեղն ու ձևը»[38]: Ավելացնենք՝ Քոնիատեսը հաղորդում է, որ Իսահակ Անգելոս կայսրն իրեն համարում էր «եզի կազմությունով կայսրը»[39]: Ապա Քոնիատեսը մեջբերում է 5-րդ «հարցումը»՝ ամբողջությամբ բաց թողնելով միայն առաջին տողը («Եզը հինգերորդն է ու վերջն է արջապանի…»): Ինչպես նկատեցինք, «Եզն» / Իսահակ Անգելոս նույնացումը նույնպես տեղին է:

Տեսիլի պատմական կորիզը բնութագրելիս նշեցինք, որ «Պեղծ կնոջ» կառավարման շրջանը, ամենայն հավանականությամբ, կապված է 1204 թ. լատինների կողմից Կոստանդնուպոլիս առման հետ: Ենթադրությունն ավելի հիմնավոր է դառնում, երբ այս հատվածը զուգադրում ենք բյուզանդական մի քանի տեսիլների հետ: Ստորև ներկայացնում ենք «Պեղծ կնոջ» հատվածի մեջբերումը[40]:

«Վասն Պեղծ կնոջն

Եւ ապա կալնու զթագաւորութիւնն նորա ի չար ոստ կինն այն այրի Գ ամ: Եւ գործէ չարիս մեծամեծս, և ուսուցանէ գործել նախ պեղծութիւնս յարուականս և իգականս: Յանա[ր]գս ուսուցանէ, մինչև այնպիսի թագաւորացն այնպիսի սրբեալ ժողովն այնչափ խոտորին, մինչև զարուամոլութիւն և զիգականութիւն իբրև զանասունս յաւարի հրապարակի գործեսցեն: Եւ կախարդութիւն և դիւթութիւնս, մինչև ուրանալ տայ զԱստուած և զինքն աստուած տայ խոստովանել, և ապականութիւնս բազումս: Եւ լինու զաւազանս ջրով և լուանայ զպեղծութիւնս իւր տեռատեսութեան և սրսքէ ի վերայ ամենայն ժողովրդեանն և նշխարաց սրբոց և ուխտից և սուրբ սեղանոց, և պեղծէ զնոսա: Եւ քարոզել տա զինքն աստուած, և մտեալ ի մեծ եկեղեցոյն հանդերձ երգչաւք և կաքաւողոքն: Եւ արբեալ ժողովն, և ինքն նստի ի վերայ սեղանոյն և խօսի հայհոյութիւնս Աստուած Հայր և Որդի նորա և ի կոյսն Մարիամ և ի սուրբս: Եւ ժողովուրդքն իւր գործեն զանօրէն խառնակութիւնս: Յայնժամ հրամայէ Տէր սուրբ հրեշտակապետին, և շարժէ երիցս անգամ զԲաբելոն մեծն, այս ինքն Կոստանդինուպոլիս, և ընկղմի քաղաքն, և ծածկէ զնայ ծովն չար ժողովն: Եւ լինի մարգարեութիւն Դանիէլի, որ ասէ. «Վա՜յ քեզ, եօթնաբլուր Բիւզանդիայ, յորժամ այրին ի քեզ թագաւորեսցէ»: Եւ այս լինի, զի ծնաւ

[38] ἡ βοῦς δὲ πέμτον καὶ τέλος ἀκροτρόφου τὸ σχῆμα φαίνει τὸν τόπον καὶ τόν τρόπον (The Oracles of the Most Wise Emperor Leo & The Tale of the True Emperor. 2002, 64).

[39] βοοσχήμονος βασιλέως (Nicetas Choniates. 1975, 352).

[40] *Թ ո փ չ յ ա ն. 2016, 370–371:*

մայրն Նեռինն, և յայնմհետէ լինի քաղաքն ծով: Եւ երևի խաչն յեկեղեցւոջն միայն և սիւնն Կոստանդիանոսի մեծի»[41]*:*

Ստորև համեմատենք Վասիլի Իստրինի հրատարակած Դանիելի տեսիլի բյուզանդական պարականոն բնագրերի հետ՝ համապատասխան թարգմանությամբ:

«Դանիելի վերջին տեսիլը» Истрин. 1897, 138 *(ըստ ցանկի* Б *բաժնի)*	*«Դանիելի տեսիլը Կիպրոս կղզում»* Истрин. 1897, 141 *(ըստ ցանկի* Б *բաժնի)*	*«Դանիելի պատում»* Истрин. 1897, 147[42] *(ըստ ցանկի* Б *բաժնի)*
καὶ διὰ το μὴ εἶναι ἄνδρα χρήσιμον στέψουσιν μιαρώτατον γύναιον βασιλέα ἐν Ἑπταλόφῳ καὶ μιανεῖ τὰ ἅγια τοῦ θεοῦ θυσιαστήρια. καὶ φωνὴν δώσει λέγουσα τῇ γῇ "πλὴν ἐμοῦ θεὸς οὐκ ἔστι, ἤ τίς δύναται ἀντισῆναι τὴν ἐμὴν βασιλείαν". καὶ αὐθις ὀφθήσεται ἡ Ἑπτάλοφος ἀπολυμένη ἤτοι καταποντισθήσεται ἐν βυθῳ σύμψυχος καὶ ἔσται μόνον ὁ ξηρόλαφος φαινόμενος …	καὶ ἐν τῷ μὴ εἶναι ἄνδρα χρήσιμον βασιλεύειν ἐν τῇ Ἑπταλόφῳ γύναιον τρισκατάρατον καὶ μιανεῖ τὰ ἅγια θυσιαστήρια τοῦ θεοῦ καὶ σταθήσεται ἐν μέσω τῆς Ἑπταλόφου καὶ βοήσει φωνῇ μεγάλῃ λέγουσα "τίς θεὸς ἄλλος πλὴν ἐμοῦ; τὶς δύναται ἀντιστῆναι τῇ ἐμῇ βασιλείᾳ"; καὶ σειστήσεται ἡ Ἑπτάλοφος καὶ σύμψυχος καταποντισθῆ ἐν τῷ βυθῷ καὶ μόνος ὁ ξηρόλαφος ἔσται φαινόμενος …	καὶ ὀπίσω αὐτοῦ βασιλεύσει γυνὴ ἐπὶ τὴν Ἑπτάλοφον μιαρὰ καὶ ἀλλόφυλος καὶ συγκαθήσεται ἐπὶ τὸ πλευρὸν τοῦ νώτου τῆς Ἑπταλόφου. καὶ λοιπὸν οὐαὶ τὸ γένος τῶν χριστιανῶν καὶ οὐαὶ σοι, ἑπτάλοφε Βαβυλόν, ὅτι τὸ Βυζάντιον τοῦ θεοῦ ἀπό σου φεύξεται καὶ ἡ ἁγιοσυνὴ σου καὶ οἱ ναοί σου ἀπό σου φεύξονται καὶ ἡ δόξα σου πεσεῖται. καὶ οὐαὶ σοι, ἑπτάλοφε Βαβυλόν, τὸ νέον Βυζάντιον, καὶ οὐαὶ σοι, το γένος τῶν χριστιανῶν. πάλιν Ρωμαίων φόβος, πάλιν σφαγαὶ καὶ ταραχαί. ἐκκλησίαι συντριβήσονται ἡ πίστις ἐκαταλύθη γυναῖκες συνλαμβάνουσιν βρέφη τῶν κακοδόξων. καὶ λιοπὸν οὐαὶ σοι, ταλαίπορε Βαβυλόν, ἡ μήτηρ πασῶν τῶν πόλεων, ὅτι κλίνει κύριος τήν ὀργὴν αὐτοῦ ἐπιμπέμπουσα(ν) πυρός. καὶ τὰ ὑψηλὰ τὰ τείχη καταπεσεῖται καὶ οὐ μὴ ἀπομένει ἐν σοί, εἰ μὴ στύλος τοῦ Μεγάλου Κωνσταντίνου …

[41] *Թոփչյան. 2016, 370–371: Այս հատվածը, բացառությամբ չնչին ուղղագրական տարբերությունների, նույնական է վենետիկյան վերոնշյալ № 259 ձեռագրի տարբերակի հետ (տե՛ս Սարգիսեան. 1898, 148):*

[42] *Կա այս բնագրի մեկ այլ տարբերակ, որտեղ* γυνὴ *(կին) բառի փոխարեն հանդիպում ենք* ἀνὴρ *(տղամարդ) բառին (տե՛ս* Berger. 1976, I. 14)*:*

Եվ քանզի չի լինի արժանի այր, Յոթնաբլրում թագուհի կթագադրեն ամենապիղծ մի կնոջ. և կպղծի նա Աստծո սուրբ խորանները[43] *և ձայն կհանի՝ ասելով երկրին. «Բացի ինձանից չկա աստված, ո՞վ է կարող հակառակվել իմ արքայությանը»: Եվ անմիջապես կտեսնվի Յոթնաբլուրը կործանված, այն է, թե ամբողջությամբ կխորտակվի ծովի խորքը, և տեսանելի կլինի միայն քսերոլաֆոսը*[44] *…*	*Եվ [քանի-որ] չի լինի այր արժանի թագավորելու Յոթնաբլրում, կին մի երիցս անիծյալ. և կպղծի նա Աստծո սուրբ խորանները և կկանգնի Յոթնաբլրի մեջտեղում և կբղավի հզոր ձայնով՝ ասելով. «Ո՞վ է ինձանից բացի աստված. ո՞վ է կարող հակառակվել իմ արքայությանը»: Եվ երկրաշարժ կլինի Յոթնաբլրում, կխորտակվի [այն] ծովի խորքը, և տեսանելի կլինի միայն քսերոլաֆոսը …*	*Եվ նրանից հետո կթագավորի Յոթնաբլրին կին մի պիղծ և այլասեռ և կիջնի Յոթնաբլրի կողմի վրա*[45]*: Եվ ավելին, վա՛յ քրիստոնյաների ցեղին, և վա՛յ քեզ Յոթնաբլուր Բաբելոն, որովհետև Աստծո Բյուզանդիոնը քեզանից կփախչի, և քո սրբությունն ու քո տաճարները քեզանից կփախչեն, և քո փառքը կընկնի, և վա՛յ քեզ Յոթնաբլուր Բաբելոն՝ նոր Բյուզանդիոն, և վա՛յ քեզ քրիստոնյաների ցեղ. նորից վախ հռոմեացիների (իմա՝ բյուզանդացիների – Ա. Վ.), նորից զոհեր և անհանգստություններ: Եկեղեցիները կասանվեն, և հավատը ոչնչացվեց: Կանայք կկրեն [իրենց մեջ] անփառունակների սաղմը: Եվ ավելին, վա՛յ քեզ բազմաչարչար Բաբելոն, բոլոր քաղաքների մայր, որովհետև կարճակի Տերն իր զայրույթը կրակ ուղարկելով: Եվ կկործանվեն վերամբարձ պարիսպները, և ոչինչ չի մնա քեզ մեջ, բացի Կոստանդիանոս Մեծի սյունից …*

Ինչպես նկատեցինք, «Պեղծ կնոջ» մոտիվը կապված է Դանիելի հունարեն տեսլախմբի հետ: Հարկ է նշել, որ կրկին ականատես ենք լինում նույն երևույթին, բնագիրն ունի ընդհանրություններ, բայց ոչ փոխառություններ: Նույնը կարող ենք ասել նաև «վա՛յ քեզ, յոթնաբլուր…» բնագրային դարձվածքի մասին: Հետաքրքրական է, որ սա չնչին տարբերություններով («Վա՛յ քեզ, յայնմ ժամանակի, եաթնբլուր Բաբելովն, յորժամ այրի թագաւորեսցէ…») համընկ-

[43] Θυσιαστήριον *բառացի նշանակում է «զոհասեղան», քրիստոնեական իմաստով համապատասխանում է* алтарь *բառին, որին ամենամոտ եկեղեցական հատվածը հայոց մեջ «խորանն» է:*

[44] *Բառացի նշանակում է «չոր բլուր». Կոստանդնուպոլսի թաղամասերից մեկն է:*

[45] “ἐπὶ τὸ πλευρὸν τοῦ νώτου” *արտահայտությունը բառացի թարգմանվում է՝ «մակերևույթի/մեջքի կողմի վրա»:*

նում է «Դանիելի յոթներորդ տեսիլ»[46] *կոչվող բնագրի հետ: Ս. Լա Պորտան և այլ հետազոտողներ, ելնելով բնագրի վառ բյուզանդական համատեքստից, հունարենից թարգմանական աղճատման դեպքերից և հայկական նյութի բացակայությունից բնագրի մեջ, այն համարում են հունարենից թարգմանված բյուզադնական տեսիլ: Նշենք նաև որ, քննության առարկա բնագրում և այլ տեսիլներում հանդես եկող Կոստանդնուպոլիս–Յոթնաբլուր Բաբելոն նույնությունը նույնպես գալիս է բյուզանդական հայտնություններից*[47]*: Ի վերջո, ավելացնենք, որ խնդրո առարկա բնագիրը կապ ունի մեկ այլ բյուզանդական բնագրի՝ XIII դարով թվագրվող «Կոստանդիանոս Մեծի հայտնության» հետ: Այստեղ մասնավորապես կարդում ենք. «... և այնն Կոստանդիանոս Մեծի խաչի հետ միասին...»*[48]*, սակայն նորից միանգամայն այլ համատեքստում և առանց «Պեղծ կնոջ» դրվագի:*

Ի մի բերելով կապը բյուզանդական վախճանաբանական և հայտնութենական գրվածքների հետ, նշենք որ բնագրի հեղինակը ներկայանում է իբրև XII–XIII դարերում Կոստանդնուպոլսի միջավայրում շրջանառված գուշակություններին և Դանիելի տեսիլի այլևայլ տարբերակներին քաջածանոթ մեկը, որը հեշտ և դիպուկ միահյուսում է դրանք իրական պատմական իրադարձությունների հետ:

Տեսիլի կապը հայ վախճանաբանության հետ

Միջնադարյան Հայաստանի գրական ժառանգությունից գիտական լայն շրջանառության մեջ են մի շարք ինքնուրույն վախճանաբանական և հայտնութենական[49] *բնույթի գրվածքներ. դրանցից են՝ Սահակ Պարթևին*[50]*, Հովհաննես Կոզեռնին*[51]*, Ներսես Մեծին*[52]*, Եպիփան Կիպրացուն (Կեղծ-Եպի-*

---

[46] *Այս բնագիրը պահպանվել է միայն հայերեն տարբերակով և հրատարակվել Գրիգորիս Գալեմքյարյանի կողմից (տե՛ս* Kalemkiar. 1892, 125)*: Դրան մանրամասն անդրադարձել է Բարսեղ Սարգիսյանը (տե՛ս Սարգիսեան. 1898, 133–207), որոշ անդրադարձ են կատարել կրոնագետ Լորենցո Դի Թոմազոն և հայագետ Սերջիո Լա Պորտան, սակայն առանց դիտարկելու Սարգիսյանի հետևությունները (տե՛ս* DiTommaso. 2005, 100; La Porta. 2013, 410–434)*:*

[47] *Այս մասին ավելի մանրամասն տե՛ս* Kraft. 2018, 164.

[48] ... καὶ τὴν στήλην τοῦ μεγάλου Κωνσταντίνου σὺν τῷ σταυρῷ... (Pertusi. 1988, 55).

[49] *Հայ վախճանաբանությունը և հայտնութենաբանությունը քիչ ուսումնասիրված ոլորտ է. հիմնական աշխատություններն են՝ Հովհաննիսյան. 1957,* The Armenian Apocalyptic Tradition: A Comparative Perspective. 2014 *(ավելի համառոտ ակնարկի համար տե՛ս* Frasson. 1995, 390–393). *Վերջին շրջանում թեմային համակարգային անդրադարձ են կատարել պատմաբան Զարուհի Պողոսյանը և Սերջիո Լա Պորտան (տե՛ս* Pogossian. 2016; Pogossian. 2020; Pogossian. 2021, *որոշ առումներով նաև՝* Pogossian. 2019, La Porta. 2013; La Porta. 2016; La Porta. 2019; Pogossian & La Porta. 2017)*:*

[50] *Պատմութիւն վասն սրբոյն Սահակայ հայրապետին եւ Մեսրովբայ վարդապետին. 1853, Ակինեան. 1948,* Muradyan. 2014.

[51] *Հովհաննիսյան. 1957, 45–47,* Mapp. 1895; Andrews. 2017.

[52] *Հովհաննիսյան. 1957, 13–32, Ներսես Մեծի տեսիլ. 2010:*

փան)[53], Ագաթոնին[54] և Ագաթանգելին[55] վերագրվող տեսիլները, ինչպես նաև՝ Վարդան Այգեկցու «Խրատք առ Պաղտին իշխան» երկասիրության «Վասն Նեռին» գլուխը[56]: Սրանց կարելի է ավելացնել թարգմանական բնույթի մի քանի կարևոր բնագրեր՝ «Դանիելի յոթերորդ տեսիլը», Հիպպողիտոս Բոստրացուն (Կեղծ-Հիպպողիտոս)[57], Եփրեմ Ասորուն (Կեղծ-Եփրեմ)[58] և Մեթոդիոս Պատրացուն (Կեղծ-Մեթոդիոս) վերագրվող վախճանաբանական երկերը: Վերջին շրջանի հետազոտությունների արդյունքում այս շարքին են ավելացել նոր բնագրեր[59]: Հաշվի առնելով, որ թարգմանական բնագրերից երեքն ունեն հունարեն պահպանված ընօրինակ, ապա դրանց հետ համեմատությունը զանց ենք առնում: Չենք դիտարկում նաև «Դանիելի յոթներորդ տեսիլը», քանի որ այն, ըստ արդի գիտական հանրագումարի, բյուզանդական ծագման բնագիր է: Պետք է նշել, որ համեմատված երկերի հետ խնդրո առարկա բնագրի առնչությունները սակավ են: Ամենացցունը, թերևս, «Տիբերիոս» անունով արքայի հիշատակումն է Ագաթոնի տեսիլում[60]:

Տեսիլի հեղինակը և իր աշխարհայացքը

Ինչպես նկատեցինք, խնդրո առարկա բնագիրը բազում թելերով կապված է XII դարավերջի և XIII դարասկզբի բյուզանդական իրականության հետ: Նաև, որ այս կապերը հայ միջավայրի հետ շատ ավելի սակավ են և ընդհանրական: Այսպիսով հարց է ծագում. ինչո՞ւ չպետք է համարենք այս տեսիլը «Դանիելի յոթներորդ տեսիլի» նման հունարենից թարգմանված մի բնագիր, որի հունարեն օրինակը չի պահպանվել: Այս բնագրի հայկական ծագման օգտին է խոսում հեղինակի աշխարհայացքը, այն է՝ իր խաչակրամետ կողմնորոշումը:

Այսպես, քննության առարկա բնագրի հենց սկզբում՝ «Արծիվ» արքայի կառավարման շրջանում, հաղթանակում է հույների և խաչակիրների միացյալ բանակը[61], բացի այս՝ «Եղն» արքայի տարիներին հիշատակվում է «արևմտյան արքաների» մուտքը Կոստանդնուպոլիս և Բյուզանդիայի կայսեր հետ դաշինքը[62]: Հայտնի է, որ այս երկու իրադարձությունները թե՛ բյուզանդական գրականության մեջ և թե՛ պատմական առումով այլ համատեքստ են ունեցել: Հովհաննես Կոմնենոսը խաչակրաց պետությունների հետ գերակա-ստորակա

---

[53] *Ս. Եպիփան Կիպրացի. 2013,* Pertusi. 1988, 148–149.

[54] *Աւգեր. 1913, Հովհաննիսյան. 1957, 47–57,* Pogossian & S. La Porta. 2017.

[55] Pogossian & La Porta. 2017; *Անասյան. 1959, 150:*

[56] *ՄՄ, № 1880, թ. 175ա–181ա,* La Porta. 2014. *Վախճանաբանական բնույթի են Վարդան Այգեկցու նույն երկասիրության մաս կազմող «Վասն դժոխոց» և նույն թեմայով գրված «Վասն դժոխոցն և անքուն որդանց…» ճառերը (տե՛ս ՄՄ, № 1880, թ. 145ա–148ա, Էջեր հայ միջնադարյան գեղարվեստական արձակից. 1957, XIX):*

[57] Pogossian. 2020, 141–163.

[58] *ՄՄ, № 1357, № 5115:*

[59] *Տե՛ս Քյոսեյան. 2021, Շնորհալի. 2022:*

[60] *Աւգեր. 1913, 398, Թոփչյան. 2016, 371:*

[61] *Թոփչյան. 2016, 368:*

[62] *Թոփչյան. 2016, 370:*

հարաբերությունների կողմնակից էր. ըստ մի տեսակետի՝ նա անգամ ձգտում էր «յուրացնել» խաչակրության գաղափարը լատիններից[63]*: Ինչ վերաբերում է խաչակրաց երրորդ արշավանքի ընթացքում «դաշինքին», ապա այն բյուզանդացի ժամանակակիցներն ընկալում էին իբրև ներխուժում և ոչ դաշինք: Եվ, վերջապես, ինչը, թերևս, ամենակարևորն է, Կոստանդնոպոլսի 1204 թ. առումն ուղեկցվում է պատմական մասի շեղմամբ, այն է՝ թե հեղինակը կարծես միտումնավոր ընդհատում է պատմական իրադարձություններին հղումը, ներմուծում է Դանիելի տեսլախմբից հայտնի «Պեղծ կնոջ» պատումը և ստեղծված քառսը վերագրում «մեղացն մերոց»: Այսպիսով՝ նա ոչ միայն չի ողբում բյուզանդացի հեղինակների համար կենտրոնական նշանակություն ունեցող այս քաղաքի ավերումը խաչակիրների կողմից, այլ վերջիններիս ընդհանրապես հեռացնելով իր տեսիլից, մաքրում է նրանց «մեղսագործությունը» և կատարված աղետի մեղավոր է տեսնում մարդկանց շեղումը քրիստոնեական բարեվարքությունից: Վերն արված դիտարկումներն ավելի հիմնավոր են դառնում ժամանակի հայ և բյուզանդական գրականությունների՝ անգամ շատ մակերեսային համադրմամբ, որի արդյունքում պարզ է դառնում, որ XII–XIII դարերում բյուզանդացիները, ընդհանուր առմամբ, խաչակիրներին դիտարկել են որպես վտանգավոր ուժեր, որոնք միայն կարող են պիտանի լինել իբրև կայսեր հլու ծառաներ, իսկ հայկական աղբյուրներում հիմնականում դիտարկվում են իբրև ազատարարներ, որ պետք է նեցուկ կանգնեն մաքառող հայությանը:*

Այսպես՝ Ներսես Մեծին[64] *և Հովհաննես Կոզեռնին*[65] *վերագրվող տեսիլներում խաչակիրները հանդես են գալիս ազատագրողի դերում: Նույնպիսի տրամադրությամբ էր լցված Մատթեոս Ուռհայեցին*[66] *խաչակիրների նկատմամբ, հարկավ, մինչ վերջիններիս հետ մոտիկից ծանոթանալը: Խաչակիրներին իբրև ազատագրող ուժ են դիտարկում նաև Հովհաննես և Ահարոն գրիչները*[67]*, Ներսես Շնորհալին*[68] *և Սամուել Անեցին*[69]*: Նմանատիպ մի միտք է հայտնում նաև Ներսես Լամբրոնացին*[70]*: Այս տրամադրությունները հայոց մեջ ազդու էին նաև XIII դարասկզբին: Կոստանդնուպոլսի գրավումը նկարագրող 1204 թ. հայտնի հիշատակարանի գրիչ Գրիգոր դպիրը քաղաքի կործանման մեղավոր է համարում Բյուզանդիայի կայսրին. «Իսկ թագաւորն Կոստանդինուպոլսի ոչ կամեցաւ միաբանել ընդ նոսա սիրով ըստ աւրինի քրիստոնեից, այլ ներհակաբար զինէր ընդդէմ նոցա և մարտուցեալ պատերազմէր ընդ նոսա և ջանայր խափանիչ լինել փրկութեանն ճանապարհին»*[71]*: Նախորդիվ այս հեղինակը խաչակիրներին կոչում է «արիական ազգ»*[72]*: Նույն եզրույթը խաչա-*

---

[63] Papageorgiou. 2016, 42–46; *տե՛ս նաև՝* Vučetić. 2016, 80–81.

[64] *Ներսես Մեծի տեսիլ. 2010, 719:*

[65] Andrews. 2017, 206.

[66] *Ուռհայեցի. 1898, 253–254:*

[67] *Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. Ե–ԺԲ դար. 1988, 118, 120:*

[68] *Շնորհալի. 1973, 125–135, մասնավորապես՝ էջ 128:*

[69] *Սամուել Անեցի եւ շարունակողներ. 2014, 200:*

[70] *Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. Ե–ԺԲ դար. 1988, 250:*

[71] *Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. ԺԳ դար. 1984, 40:*

[72] *Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. ԺԳ դար. 1984, 40:*

կիրների՝ Կոստանդնուպոլիսը գրավելու առթիվ հանդիպում ենք Վարդան Այգեկցու «Խրատք առ Պաղտին իշխան» ժողովածուի «Վասն Նեռին» ճառում.

«Եւ ելցեն ազգն արիական և առցեն զթագաւորական քաղաքն յունաց Բիւզանդիոն, որ է Կոստանդնուպոլիս. եւ ապա, ի լնուլ ժամանակին առցեն զԵրուսաղէմ. եւ որպէս թէ մերձ է առ մեզ՝ այնպես յատուկ և ճշգրիտ պատմէ զքրիստոսապակ թագաւորէս մերմէ: Եւ թէ ի գալ արիական ազգին, ելցեն զորք երկրիս մերոյ և խառնեսցին ի բանակս նոցա. և ինձ թուի թէ, որ զայս գերութենէս, ասէ թէ, զԵրուսաղէմ ազատեսցեն ի ծառայութենէ և գայ բարի ժամանակն (բայց Աստուծոյ այս միայն է գիտելի)»[73]*:*

Ի հակադրումն սրան, բյուզանդացի հեղինակները որոշակի վերապահումով և զգուշությամբ են մոտեցել խաչակիրներին, համարել են մշակութապես «ստորադաս»[74]*: Ինչը, սակայն, ավելի հետաքրքիր է, խաչակիրները հստակորեն դիտվել են իբրև գավթիչներ: XII դ. մատենագիր Հովհաննես Ցեցեսն իր մի նամակում փորձում է մեկնել խորհրդանշական մի երազ՝ փորձելով համոզել, որ այն բնավ չի գուժում Կոստանդնուպոլսի գրավումը խաչակիրների կողմից*[75]*: Ցեցեսին ժամանակակից հեղինակների մոտ նույնպես կան ակնարկներ առ այն, որ կայսրությունը թուլանալու է (Գրիգոր Երեց), և որ խաչակիրները պետք է գրավեն Կոստանդնուպոլիսը (Օտտո ֆոն Ֆրեյզինգ)*[76]*: Բնական է, որ եթե իրերի նման դասավորությունը կարող էր «ցնծություն» առաջացնել «այլազգիների» տիրապետության դառը փորձությունը կրող, բյուզանդական վտանգի զգացումով ապրող և թագավորության վերականգնմանը ձգտող հայությանը, ապա բյուզանդական վերնախավի համար սա դիտվում էր իբրև հույժ աղետալի հեռանկար*[77]*:*

Բյուզանդիայի հայազգի բնակչության և բյուզանդական պետության աշխարհատեսությունների տարբերությունը նկատելի էր նաև պատմիչ Քոնիատեսին. «Թե մեկը մնացել էր (Փիլիպոպոլսում – Ա. Վ.), թշվառներից էր նա, և նրա ողջ ունեցվածքը հաշվվում է նրանով, ինչ որ հագել էր, կամ էլ հայերի թվին էր պատկանում: Իրականում, բոլորից միայն նրանք էին համարել ալամանների անցումը, ոչ իբրև ազգերի հարձակում, այլ իբրև բարեկամների ժամանում, քանզի հայերը ալամաններին գործակցում են[78] *և հերձվածների մեծ մասով իրար համամիտ են»*[79]*: Այսպիսով՝ ելնելով հեղինակի խաչակրամետ*

---

[73] *ՄՄ, № 1880, թ. 175բ.:*

[74] Müller. 2022, 308–338.

[75] Ioannes Tzetzes. 1972, 87–88.

[76] *Հովհաննիսյան. 1957, 61–65,* Magdalino. 2005, 46.

[77] *Ի լրումն կարելի է փաստել, որ XIII դարից մեզ հասած բյուզանդական բազում տեսիլներից միայն մեկն է «լատինամետ», մնացածները հստակ արտահայտված հակախաչակրաց գաղափարախոսություն ունեն (տե՛ս* Kraft. 2018, 173)*:*

[78] *Այստեղ Քոնիատեսը օգտագործում է* συγγράομαι *բայը, որ հաճախ նշանակում է դրական հարաբերություններ ունենալ. այսպիսով՝ կարելի է ենթադրել՝ խոսքը տնտեսական գործակցության մասին է:*

[79] “εἰ γάρ τις καὶ ὑπολέλειπτο, πτωχεύων ἦν οὗτος καὶ τὴν οὐσίαν πᾶσαν ἐν οἷς ἐνεδέδυτο ἀριθμῶν ἤ τοῖς Ἀρμενίοις καταλεγόμενος· οὗτοι γὰρ μόνοι τῶν ἁπάντων οὐκ ἐπιδρομὴν ἐθνῶν, ἀλλά φίλων παρουσίαν τὴν τῶν Ἀλαμανῶν διέλευσιν ἤγηντο, ἐπειδὴ καὶ συγχρῶνται Ἀρμενίοις Ἀλαμανοὶ καὶ κατὰ τῶν αἱρέσεων τὰς

աշխարհայացքից և գրվածքի բյուզանդական համատեքստից՝ կարող ենք համարել, որ քննության առարկա բնագիրը բյուզանդահայ գրականության մի նմուշ է: Անշուշտ, չի կարելի բացառել, որ բնագիրը գրվել է հունարեն, սակայն հստակ է՝ հեղինակը եղել է բյուզանդահայ:

Հեղինակը պատկանում է ոչ թե Բյուզանդիայի «գավառահայությանը», այլ, ամենայն հավանականությամբ, Կոստանդնուպոլսի հայերից է: Նախ, բնագրի հեղինակը ծանոթ է Կոստանդնուպոլսի քաղաքային կառույցներին. հիշատակում է ոսկե դարպասները[80] *և Կոստանդիանոսի սյունը*[81]*: Բացի այդ, նա դեպի Կոստանդնուպոլիս եկողների մասին ասում է՝ «... գան մտանեն ի քաղաքն ...»*[82]*, ինչը համապատասխանում էր կոստանդնուպոլսեցիների և, առհասարակ, բյուզանդացիների շրջանում քաղաքը* Πόλις *(քաղաք) կոչելու տարածված սովորույթին*[83]*: Հեղինակի հիշատակած հայտնությենական խորհրդանիշների և Քոնիատեսի պատմության զուգահեռները թույլ են տալիս ենթադրել, որ ծանոթ է եղել Կոստանդնուպոլսում շրջանառվող գուշակություններին, քանի որ Քոնիատեսը, ինչպես հայտնի է, XII դարավերջին բյուզանդական արքունի ատյանի բարձր պաշտոնյա էր: Նաև կարծում ենք՝ կարելի է բացառել հեղինակի պատկանելությունը Փիլիպպոպոլսի հայ համայնքին, որն այն ժամանակ բավականին զգալի էր*[84]*: Այս պնդումը անում ենք՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ հեղինակը հիշատակում է լատինների ջարդը Կոստանդնուպոլսում Անդրոնիկոս Կոմնենոսի կառավարման տարիներին, սակայն լռում է Իսահակ Անգելոսի կառավարման տարիներին Փիլիպպոպոլիսի հայերի դեմ ուղղված հալածանքների մասին: Եվ եթե հաշվի առնենք, որ հեռավոր Հռոմկլայում Գրիգոր Տղա կաթողիկոսը տեղյակ էր այս ճնշումների մասին և թղթակցում էր Իսահակ Անգելոսի հետ՝ դրանք մեղմելու համար*[85]*, ապա դժվար թե դրանք որևէ կերպ մաս չդառնային լատինների ջարդի մեջ Անդրոնիկոսին մեղադրող հայ հեղինակի համար: Այդ իսկ պատճառով կարելի է ենթադրել, որ նա կամ ընդհանրապես ծանոթ չի եղել այդ դեպքերին, կամ շատ արժեք չի տվել դրան: Հեղինակի՝ Կոստանդնուպոլսեցի լինելու վարկածի օգտին է խոսում նաև ավելի ուշ մի աղբյուր: Ֆլանդրիացի ճանապարհորդ Ռուբրուքի մի տեղեկության համաձայն՝ Կոստանդնուպոլսի հայերի շրջանում տարածված են եղել նմանատիպ տեսիլներ. նա նշում է երկու հեղինակ՝ Մեթոդիոս և Ակակրոն*[86]*: Եթե Ակակրոնի մասին իր պատումը Ռուբրուքը մեծ հավանականությամբ կառուցում է Ներսես Մեծի և Ագաթոնի տե-*

πλείστας ἀλλήλοις συμφέρονται” (Nicetas Choniates. 1975, 403; *տե՛ս նաև՝* O City of Byzantium: Annals of Niketas Choniates. 1984, 222; *Բոզոյան. 1995, 218–219).*

[80] *Թոփչյան. 2016, 370:*

[81] *Թոփչյան. 2016, 371:*

[82] *Թոփչյան. 2016, 370:*

[83] Georgacas. 1947, 347–367.

[84] *Բոզոյան. 1995, 206–219:*

[85] *Բարթիկյան. 1958, 285–397:*

[86] The Mission of Friar William of Rubruck: His Journey to the Court of the Great Khan Möngke. 1990, 266–267.

սիլի հիման վրա շրջանառվող մի տեսիլի շուրջ[87]*, ապա Մեթոդիոսի բովանդակության մասին նա լռում է: Այսպիսով՝ բացառված չէ, որ հենց այս տեսիլը կամ դրան մոտ մեկ այլ երկ էր շրջանառվում Ռուբրուքի պղսահայ զրուցակիցների շրջանում:*

Եզրակացություն

Այսպիսով ՄՄ-ի № 2270 ձեռագրի բնագիրը ոչ թե Կեղծ-Մեթոդիոսի տեսիլի մի պարականոն տարբերակ է, այլ բյուզանդահայ գրականության մի եզակի նմուշ: Պատմական և հայտնութենական խորհրդանիշների լայն զուգահեռները թույլ են տալիս նրա ստեղծումը կապել 1204 թ. Կոստանդնուպոլսի առման հետ՝ այն հաստատապես թվագրելով XIII դարով: Նիկոմեդիա քաղաքի հիշատակումից ելնելով՝ կարող ենք բնագիրը թվագրել 1204–1213 թ.՝ մինչև Նիկոմեդիայի վերջնական անցումը խաչակիրներին: Բնագրի հեղինակի աշխարհայացքի քննությունը ցույց է տալիս, որ սա ոչ թե հունարենից թարգմանված բյուզանդական տեսիլ է, այլ հենց բյուզանդահայ միջավայրի ծնունդ: Հարակից մի քանի փաստեր թույլ են տալիս այս բնագրի ստեղծումը տեղայնացնել Կոստանդնուպոլսի հայ համայնքով: Այսպիսով՝ Կեղծ-Մեթոդիոսի հայերեն բնագրից այն տարանջատելու նպատակով առաջարկում ենք բնագիրն անվանել «Բյուզանդահայի տեսիլ»:

Արեգ Վարդանյան – ԵՊՀ պատմության ֆակուլտետի ասպիրանտ: Գիտական հետաքրքրությունները՝ Միջնադարյան Հայաստանի պատմություն, պատմական ընկերաբանություն, քաղաքական մտքի և գաղափարների պատմություն:
vardanyanareg1@yahoo.com

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ակինեան Ն. 1948, Տեսիլ ս. Սահակայ. մատենագրական-պատմական քննութիւն, Վիեննա, Մխիթարեան տպարան, 93 էջ:

Անասյան Հ. 1959, Հայկական մատենագիտություն, հ. Ա, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1228 էջ:

Աւգեր Յ. 1913, Ագաթոն կամ Ագադրոն. – «Բազմավէպ» (Վենետիկ), թիւ 9–10, էջ 396–400:

Բարթիկյան Հ. 1958, Նոր նյութեր Կիլիկիայի հայկական պետության և Բյուզանդիայի փոխհարաբերությունների մասին. – «Բանբեր Մատենադարանի» № 4, էջ 285–295:

Բարթիկյան Հ. 2003, Բյուզանդիա, Հայ գաղթաշխարհի պատմություն, հ. 2, խմբ. Վ. Միքայելյան, Երևան, «Գիտություն» հրատ., 518 էջ:

Բոզոյան Ա. 1995, Հայ-բյուզանդական եկեղեցական բանակցությունների վավերագրերը (1165–1178), Երևան, «Գիտություն» հրատ., 255 էջ:

Էջեր հայ միջնադարյան գեղարվեստական արձակից 1957, աշխ. Կ.Մելիք-Օհանջանյանի, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 284 էջ:

[87] *Հովհաննիսյան. 1957, 84–85:*

Թոփչյան Ա. 2016, Կեղծ-Մեթոդիոսի «Հայտնության» հին հայերեն թարգմանությունը. – «Բանբեր Մատենադարանի», № 23, էջ 330–378:

Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. Ե–ԺԲ դար 1988, աշխ. Ա. Մաթեւոսյանի, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 366 էջ:

Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. ԺԳ դար 1984, աշխ. Ա. Մաթեւոսյանի, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 987 էջ:

Հովհաննիսյան Ա. 1957, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, հ.1, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 525 էջ:

Մաշտոցյան Մատենադարան, ձեռագիր 1357, 1880, 5115:

Մատթեոս Ուռհայեցի. 1898, ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 448 էջ:

Ներսես Մեծի տեսիլ 2010 – Մեսրոպ Վայոցձորեցի, Պատմութիւն սրբոյն Ներսիսի հայոց հայրապետի. (ՄՀ, ԺԱ. հատոր, Ժ դար), աշխ. Գ. Տեր-Վարդանյանի, Անթիլիաս, ԵՊՀ հրատ., էջ 719–727:

Ներսես Շնորհալի. 1973, Ողբ Եդեսիոյ, աշխ. Մ. Մկրտչյանի, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 154 էջ:

Ներսես Շնորհալի. 2022, Ի հանդերձեալ գալուստն Քրիստոսի (ՄՀ, ԻԲ. հատոր, ԺԲ դար), աշխ. Հ. Իրիցյանի, Երևան, Մատենադարան հրատ., էջ 674–688:

Պատմութիւն վասն սրբոյն Սահակայ հայրապետին եւ Մեսրովբայ վարդապետին. 1853, Վենետիկ, Ս. Ղազար, էջ 43–67 (Սոփերք հայկականք Բ):

Ս. Եպիփան Կիպրացի. 2013, Ճառք, աշխ. Հ. Քյոսեյանի, Ս. Էջմիածին, Մայր աթոռ հրատ., 2013, էջ 745–780:

Սամուել Անեցի եւ շարունակողներ. 2014, ժամանակագրություն, աշխ. Կ. Մաթեւոսյանի, Երևան, «Նաիրի» հրատ., 502 էջ:

Սարգիսեան Բ. 1894, Մեծին Ներսիսի ընծայուած մարգարէութեան յոյն բնագիրն եւ անոր վերայ եղած կրկին խմբագրութիւնք. – «Բազմավէպ» (Վենետիկ), թիւ 52, էջ 25–32:

Սարգիսեան Բ. 1898, Ուսումնասիրութիւնք Հին Կտակարանի անվաւեր գրոց վրայ, Վենետիկ, Ս. Ղազար, 484 էջ:

Ստեփաննոս Սիւնեաց Եպիսկոպոս 1861, Պատմութիւն տանն Սիսական, աշխ. Մ. Էմինի, Մոսկվա, Լազարյան Ճեմարանի տպարան, 385 էջ:

Քյոսեյան Հ. 2021, Նորահայտ էջեր Դավիթ Քոբայրեցու մատենագրական ժառանգությունից. – Բանբեր Մատենադարանի, թ. 32, էջ 363–401:

Истрин В. 1897, Откровение Мефодия Патарского и апокрифические видения Даниила в византийской и славяно-русской литературах: исследования и тексты. М., Университетская типография, 546 с.

Карпов С. П. 2020, Латинская Империя. – Православная энциклопедия, www.pravenc.ru, 10. 04. 2020.

Марр Н. Я. 1895, Сказание о католикосе Петре и ученом Иоанне Козерне. – «Восточные заметки» (СПб.), с. 9–34.

Попов И. Н. 2022, Никомедия. – Православная энциклопедия, www. pravenc.ru 27. 12. 2022.

Alexander P. J. 1985, The Byzantine Apocalyptic Tradition, ed. Dorothy deF. Abrahamse, Berkley/Los Angeles/London, University of California Press, 239 p.

Andrews T. L. 2017, Mattʿēos Urhayecʿi and His Chronicle: History as Apocalypse in a Crossroads of Cultures. Leiden/Boston, Brill, 258 p.

Berger K. 1976, Die Griechische Daniel-Diegese, Leiden, Brill, 163 p.

DiTommaso L. 2005, The Book of Daniel and the Apocryphal Daniel Literature. Leiden/Boston, Brill, 547 p.

Frasson G. 1995, Mistica imperiale ed escatologica medievale con particolare riguardo al regno d'Armenia. – Բազմավէպ, էջ 375–401:

Georgacas D. J. 1947, The Names of Constantinople. – Transactions and Proceedings of the American Philological Association, 78, pp. 347-367.

Ioannes Cinnamus 1836, Epitome rerum ab Ioanne et Alexio Comnenis Gestarum, ed. A. Meineke. Bonnae, 244 p.

Ioannes Tzetzes 1972, Epistulae, ed. P. A. M. Leone. Leipzig, Teubner, 218 p.

Kalemkiar Gr. 1892, Die Siebente Vision Daniels. –Wiener Zeitschrift für die Kunde des Morgenlandes, 6, pp. 109-136.

Kraft A. 2018, Apocalyptic Horizon in Byzantium: Philosophy, Prophesy and Politics during the eleventh through thirteenth centuries, Ph.D. dissertation, Central European University, Budapest, 307 p.

La Porta S. 2013, The Seventh Vision of Daniel: A New Translation and Introduction. – Old Testament Pseudepigrapha: More Noncanonical Scriptures, v. I, ed. R. Bauckham, J. Davila, and A. Panayotov, Grand Rapids/Cambridge, Eerdmans, pp. 410–434:

La Porta S. 2014, Vardan Aygekc‘i’s Counsel and the Medieval Armenian Apocalyptic Tradition. – The Armenian Apocaliptic Tradition: A Comparative Perspective, ed. K. B. Bardakjian & S. La Porta. Leiden/Boston, Brill, pp. 504–537.

La Porta S. 2016, The Sense of an Ending: Eschatological Prophecy and the Armenian Historiographical Tradition (7th-10th c.). – Le Muséon, 129 (2–3), pp. 363–393:

La Porta S. 2019, The Persistence of History: Two Armenian Reactions to the Failure of Prophesy. – Les récits historiques entre orient et occident XIe-XVe siècle, ed. I. Bueno & C. Rouxpetel. Roma, École française de Rome, pp. 267–303:

Magdalino P. 2005, Prophesies on the Fall of Constantinopole. – Urbs Capta: The Fourth Crusade and its Consequences, ed. A. Laiou. Paris, Lethielleux, pp. 41–54.

Magdalino P. 2019, The Empire of the Komnenoi (1118-1204). – The Cambridge History of the Byzantine Empire, ed. J. Shepard. Cambridge, Cambridge University Press, pp. 627–663.

Müller S. P. 2022, Latins in Roman (Byzantine) Histories. Leiden/Boston, Brill, 566 p.

Muradyan G. 2014, The Vision of St. Sahak in the History of Łazar P‘arpec‘i. – The Armenian Apocaliptic Tradition: A Comparative Perspective, ed. K. B. Bardakjian & S. La Porta. Leiden/Boston, Brill, pp. 313–325.

Nicetas Choniates 1975, Historia Pars Prior, ed. I. A. van Dieten. Berlin, Walter de Gruyter, 656 p.

O City of Byzantium: Annals of Niketas Choniates 1984, tr. H. J. Magoulias. Detroit, Wayne University Press, 441 p.

Ostrogorsky G. 1968, History of the Byzantine State. Oxford, Basil Blackwell, 616 p.

Papageorgiou A. 2016, The Political Ideology of John II Komnenos. – John II Komnenos, Emperor of Byzantium, ed. A. Bucossi & A. R. Suarez. London, Routledge, pp. 37–52.

Pertusi A. 1988, Fine di Bisanzio e fine del mondo, a cura di E. Morini. Roma, Istituto storico italiano per il Medioevo, 280 p.

Pogossian Z. 2016, Jews in Armenian Apocalyptic Traditions of the 12th Century: A Fictional Community or New Encounters? – Peoples of the Apocalypse, ed. W. Brandes, F. Schmieder & R. Voß. Berlin, 2016, pp. 147–192.

Pogossian Z. 2019, Gli ebrei e il giudaismo nelle fonti armene: un breve panorama. – Rassegna degli Armenisti Italiani, 20, pp. 7–15.

Pogossian Z. 2020, The Armenian Version of Ps.-Hippolytus 'De Consummatione Mundi' and its Impact on the Armenian Apocalyptic Tradition: A First Appraisal. – Le Muséon, 133 (1–2), 2020, pp. 141–163.

Pogossian Z. 2021, Eschatology and Anti-Jewish Polemic. Examples from the Armenian Tradition. – Eschatology in Antiquity: Forms and Functions, ed. H. Marlow, K. Pollmann, H. van Noorden. London, Routledge, pp. 515–527.

Pogossian Z. & La Porta S. 2017, Apocalyptic Texts, Transmission of Topoi, and Their Multi-Lingual Background: The Prophecies of Agat‘on and Agat‘angel on the End of the World –The Embroidered Bible: Studies in Biblical Apocrypha and Pseudepigrapha in Honour of Michael E. Stone, ed. L. DiTommaso, M. Henze, & W. Adler. Leiden/Boston, Brill, pp. 827–851.

The Armenian Apocalyptic Tradition: A Comparative Perspective. 2014, ed. K. B. Bardakjian & S. La Porta. Leiden/Boston, Brill, 797 p.

The Mission of Friar William of Rubruck: His Journey to the Court of the Great Khan Möngke. 1990, tr. P. Jackson, London, The Hakluyt Society, 312 p.

The Oracles of the Most Wise Emperor Leo & The Tale of the True Emperor Leo 2002, ed. W. G. Brokkaar et al. Amsterdam, 122 p.

The Oxford Dictionary of Byzantium 1991, ed. A. P. Kazhdan. Oxford, Oxford University Press 1991, 2366 p.

Vučetić M. M. 2016, Emperor John II’s encounters with foreign rulers. – John II Komnenos, Emperor of Byzantium, ed. A. Bucossi & A. R. Suarez. London, Routledge, pp. 71–90.

«АРМЯНО-ВИЗАНТИЙСКОЕ ОТКРОВЕНИЕ» И ЕГО СВЯЗЬ С ВИЗАНТИЙСКОЙ И АРМЯНСКОЙ ЭСХАТОЛОГИЧЕСКИМИ ТРАДИЦИЯМИ

АРЕГ ВАРДАНЯН

Р е з ю м е

Ключевые слова: армянская эсхатология, византийская эсхатология, Комнины, армяно-византийские памятники, Откровение Даниила, Псевдо-Мефодий, армяне в Византии, 4-й крестовый поход, Никита Хониат, образ другого.

Среди армянских текстов «Откровения Мефодия Патарского» имеется весьма «апокрифичная» версия. Данный текст, как показывает филологический анализ, представляет собой отдельное произведение апокалиптического/эсхатологического характера. Наличие ссылок на события византийской истории периода 1130–1210 гг. и множество общих мотивов с

византийскими апокрифами Даниила, «Пророчествами Льва мудрого» и «Историей» Хониата указывают на византийское происхождение данного текста. С другой стороны, «пролатинская» позиция автора, более характерная для армянской книжности XII–XIII вв., указывает на связь текста с армянами Византии. Исходя из этого, предлагаем новое название для данного текста: «Армяно-византийское откровение». Его вероятная датировка: 1204–1213 гг.

Арег Варданян – аспирант факультета истории ЕГУ. Научные интересы: история средневековой Армении, историческая социология, история политической мысли и идей. vardanyanareg1@yahoo.com

THE "ARMENIAN-BYZANTINE APOCALYPSE" IN THE CONTEXT OF BYZANTINE AND ARMENIAN ESCHATOLOGICAL TRADITIONS

AREG VARDANYAN

S u m m a r y

Keywords: Armenian eschatology, Byzantine eschatology, Komnenoi, Armenian-Byzantine written tradition, Vision of Daniel, Pseudo-Methodius, Armenians in Byzantium, The Fourth Crusade, Niketas Choniates, The Image of the Other.

Among the Armenian texts of the "Apocalypse of Pseudo-Methodius, there exists a very "apocryphal" version. This text, as shown by philosophical analysis, is a separate work of an apocalyptic/eschatological nature. The existence of references to the events of the Byzantine history of the period from 1130 to 1210 and many common motives with Byzantine apocrypha of Daniel, "Oracles of Leo the Wise" and "History" of Choniates, point to the Byzantine origin of this text. On the other hand, the "pro-Latin" position of the author, more characteristic of the Armenian book writing of the XII-XIII centuries, indicates to the connection of the text to the Armenians of Byzantium. Correspondingly, we suggest a new name for this text: "Armenian-Byzantine Apocalypse". Further textological analysis makes it plausible to date the text with a considerable precision to 1204–1213.

Areg Vardanyan – Ph.D. student at Yerevan State University, Faculty of History. Scientific interests: history of medieval Armenia, historical sociology, history of political thought and ideas. vardanyanareg1@yahoo.com

Պատմաբանասիրական հանդես • Историко-филологический журнал • Historical and Philological Journal • 2023 № 2

ՀՏԴ : 947.922+947.925
Doi:10.54503/0135-0536-2023.2-274

ՎՐԱՍՏԱՆԻ ԱՐՏԳՈՐԾՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐԸ՝ 1919 Թ. ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ՊԱՏԿԱՆԵԼՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ*

1918 թ. մայիսին՝ Հայաստանի անկախության վերականգնումից հետո, նորաստեղծ հանրապետության առջև ծառացած առանցքային խնդիրներից մեկը հարևան պետությունների հետ սահմանների որոշման հարցն էր: Հատկապես սուր էր Հայաստանի և Ադրբեջանի միջև եղած հակասությունը, որի հիմնական պատճառը Լեռնային Ղարաբաղի, Զանգեզուրի և Նախիջևանի պատկանելության վերաբերյալ վեճերն էին: Դրանք այնքան խորն էին, որ 1918–1920 թթ. ընթացքում Հայաստանի Հանրապետությունը և Ադրբեջանական Դեմոկրատական Հանրապետությունը միմյանց սահմանները ճանաչելու մասին որևէ համաձայնագիր կամ պայմանագիր չեն ստորագրել:

Հայ-ադրբեջանական հակամարտության վճռորոշ հանգրվաններից էր 1919 թ. երկրորդ կեսը: Տեղի տալով Անդրկովկասում բրիտանական հրամանատարության հորդորներին և ադրբեջանական վերջնագրերին՝ 1919 թ. օգոստոսի 12–22-ին Շուշ գյուղում տեղի ունեցած Արցախի հայության 7-րդ համագումարը որոշում կայացրեց փոխզիջումային ճանապարհով համաձայնության գալ Ադրբեջանի հետ: Համագումարի կողմից ընտրված պատվիրակությունը օգոստոսի 22-ին Ադրբեջանի կողմից Ղարաբաղի գեներալ-նահանգապետ նշանակված Խոսրով-բեկ Սուլթանովի հետ ժամանակավոր համաձայնագիր ստորագրեց, որի համաձայն՝ Լեռնային Ղարաբաղը ժամանակավորապես (մինչև Փարիզի հաշտության վեհաժողովի կողմից հարցի վերջնական որոշումը) ընդունեց Ադրբեջանի իշխանությունը՝ ապահովվելու էր հայերի իրավունքները, Ղարաբաղի գեներալ-նահանգապետությանը կից ստեղծվելու էր 6 անդամից (3 հայ և 3 մուսուլման) կազմված խորհուրդ, որի մասնակցությամբ ու վերահսկողությամբ էին լուծվելու կարևոր հարցերն ու այլն[1]: Սակայն ադրբեջանական կողմը կարճ ժամանակ անց խախտեց պայմանավորվածությունները:

Ոգևորվելով Ղարաբաղը, թեկուզ ժամանակավոր, իրեն ենթարկվելու հանգամանքից՝ Ադրբեջանը գործուն քայլեր ձեռնարկեց զենքի ուժով Զանգեզուրում իր իշխանությունը հաստատելու նպատակով: Շարուր–Նախիջևանում կազմակերպված մուսուլմանական խռովությունների պատճառով սույն տարածաշրջանը ևս փաստացի դուրս էր եկել Երևանի վերահսկողությունից: Այն է՝ մերկացել էր Զանգեզուրի թիկունքը:

1919 թ. սեպտեմբերի կեսերից Ադրբեջանը սկսեց պատրաստվել Զանգեզուրի դեմ ռազմական արշավանքի՝ ադրբեջանական բանակի ընդհանուր

** Ներկայացվել է 12. VI. 2023 թ., ընդունվել է տպագրության 19. VI. 2023 թ.:*

[1] Нагорный Карабах в 1918–1923 гг.: Сборник документов и материалов, отв. ред. В. А. Микаелян, Ереван, 1992, с. 323–327.

հրամանատար, գեներալ Ալի-Աղա Շիխլինսկու և Խոսրով-բեկ Սուլթանովի ղեկավարությամբ կենտրոնացնելով կանոնավոր զորամասերն ու քրդական անկանոն ջոկատները: Փոխարենը՝ հայկական կառավարությունը կողմ էր արտահայտվում գոյություն ունեցող խնդիրները բանակցային ճանապարհով լուծելուն: Ասվածի հավաստումն է երկու հանրապետությունների միջև առկա վեճերը լուծելու նպատակով հայ-ադրբեջանական կոնֆերանս հրավիրելու մասին ՀՀ արտաքին գործերի նախարար Ալեքսանդր Խատիսյանի՝ 1919 թ. հոկտեմբերի 7-ի դիմումն իր ադրբեջանցի պաշտոնակից Մամեդ Յուսուֆ Ջաֆարովին, ինչպես նաև իր կառավարության անունից Բաքվում ՀՀ դիվանագիտական ներկայացուցիչ Տիգրան Բեկզադյանի հոկտեմբերի 15-ի դիմումը Ադրբեջանի վարչապետ Նասիբ-բեկ Ռսուբբեկովին[2]*:*

Տևական պատրաստությունից և տեղային մարտերից հետո՝ արդեն նոյեմբերի 4-ին, ադրբեջանական զինուժը Շուշիի, Ջաբրայիլի ու Նախիջևանի կողմերից լայնածավալ հարձակում սկսեց Զանգեզուրի հայկական բնակավայրերի վրա՝ գրավելով Բայանդուր, Խնածախ, Կոռնիձոր, Տեղ և այլ գյուղերը: Նրանց հիմնական նպատակը Գորիսը գրավելն էր: Սակայն ադրբեջանցիների հաջողությունը ժամանակավոր էր. անակնկալ հարձակումից սթափված՝ հայկական զորաջոկատներն Արսեն Շահմազյանի ու Գարեգին Նժդեհի հրամանատարությամբ նոյեմբերի 6-ին հակահարձակման անցան՝ հաջորդ օրերին ադրբեջանական ուժերին ստիպելով մեծ կորուստներով վերադառնալ ելման դիրքեր[3]*:*

Հայ-ադրբեջանական հակամարտությունը Զանգեզուրում լայնածավալ պատերազմի հանգեցնելու հեռանկարն անհանգստություն էր առաջացնում Թիֆլիսում գտնվող բրիտանական ու ամերիկյան առաքելությունների ղեկավարների և Վրաստանի կառավարության մոտ: Նոյեմբերի 4-ին Վրաստանի արտաքին գործերի նախարար Եվգենի Գեգեչկորին իր հայ և ադրբեջանցի պաշտոնակիցներին զգուշացրեց զենքի ուժով խնդիրները լուծելու անթույլատրելիության մասին, իսկ նոյեմբերի 13-ին բրիտանական ներկայացուցիչ Օլիվեր Ուորդրոպն ու Դաշնակիցների գերագույն հանձնակատարի փոխանորդ, ամերիկացի գնդապետ Ջեյմս Ռեյը երկու երկրների կառավարություններին հրահանգեցին անմիջապես դադարեցնել արյունահեղությունը: Արդեն նոյեմբերի 16-ին Ռեյը ՀՀ վարչապետ Ալ. Խատիսյանին և Ադրբեջանի վարչապետ Ն. Ռսուբբեկովին առաջարկեց Թիֆլիս ժամանել ու նոյեմբերի 20-ին իր հետ հանդիպել: Ռեյի մասնակցությամբ տեղի ունեցած չորսօրյա բանակցություններից հետո՝ նոյեմբերի 23-ին, Խատիսյանը և Ռսուբբեկովը ռազմական գործողություններին վերջ տալու ու նոր ընդհարումների չդիմելու մասին համաձայնագիր ստորագրեցին, որը հիմք հանդիսացավ դեկտեմբերի 14-ին Բաքվում հայ-ադրբեջանական կոնֆերանսի գումարման համար: Կոնֆերանսում Ադրբեջանի պատվիրակությունը ղեկավարում էր նախկին վարչապետ Ֆաթալի Խան-Խոյսկին, ՀՀ պատվիրակությունը՝ պառլամենտի անդամ Մար-

---

[2] *Յու. Վ. Ղուլյան. Հայաստան–Ադրբեջան հարաբերությունների պատմությունից, Երևան, 2009, էջ 265–266:*

[3] *Ռ. Գ. Հովհաննիսյան. Հայաստանի Հանրապետություն, հ. II, Երևան, 2014, էջ 256–258, Ա. Հ. Սիմոնյան. Զանգեզուրի գոյապայքարը 1917–1920 թթ., Երևան, 2017, էջ 489–530:*

տիրոս Հարությունյանը: Առանց էական արդյունք արձանագրելու՝ դեկտեմբեր 23-ին կոնֆերանսն ընդհատվեց՝ Թիֆլիսում աշխատանքները շարունակելու նպատակով: Սակայն այդպես էլ չվերսկսվեց[4]:

Հրապարակվող փաստաթուղթը Զանգեզուրում ծավալվող պատերազմական իրադարձությունների ընթացքում Վրաստանի կառավարության, ԱԳ նախարարության, Բաքվում և Երևանում վրացական դիվանագիտական ներկայացուցիչների 1919 թ. հոկտեմբերի 22-ից նոյեմբերի 17-ի գրագրություններն են, որոնք նոյեմբերի 20–23-ին ՀՀ վարչապետ Ալ. Խատիսյանի և Ադրբեջանի վարչապետ Ն. Ուսուբբեկովի հանդիպման նախօրեին Վրաստանի արտաքին գործերի նախարարության ինֆորմացիոն բաժնում ի մի է բերվել: Այն հնարավորություն է տալիս հայ-ադրբեջանական հակամարտությանը ծանոթանալ երրորդ կողմի, այս դեպքում՝ Վրաստանի տեսանկյունից: Հայ-ադրբեջանական հակամարտությունը Զանգեզուրում լայնածավալ պատերազմի վերածվելու հեռանկարն անհանգստություն էր առաջացնում Թիֆլիսում: Վրաստանի կառավարությունը ելնում էր այն կանխադրույթից, որ անդրկովկասյան հանրապետությունների միջև պատերազմական գործողություններն ու շարունակական արյունալի ընդհարումները կարող են բացասաբար ազդել հանրապետությունների միջազգային վարկանիշի վրա, խոչընդոտել նրանց դե յուրե ճանաչմանն ու հանգեցնել անկախության կորստի: Հենց այս հանգամանքով է պայմանավորված Զանգեզուրում հայ-ադրբեջանական զինված ընդհարման խնդրում վրացական կողմի սկզբունքային խաղաղարար մոտեցումը:

«Զանգեզուրի շուրջ» խորագիրը կրող հրապարակվող փաստաթուղթը պահվում է Վրաստանի ազգային արխիվի (ՎԱԱ) թիվ 1864 ֆոնդում (Արտաքին գործերի նախարարություն): Այն վրացերենից հայերեն է թարգմանել Ջեննի Թամարյանը՝ հնարավորինս հարազատ մնալով բնագրին: Տեքստում մեր կատարած հավելումները բերվում են ուղղանկյուն փակագծերում ([ ]):

ՀԱՄՈ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ,
ՋԵՆՆԻ ԹԱՄԱՐՅԱՆ

ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ՇՈՒՐՋ

Հոկտեմբերի 22-ին Վրաստանի արտաքին գործերի նախարարը[5] Ադրբեջանի կառավարությունում Վրաստանի դիվանագիտական ներկայացուցչից[6]

---

[4] *Ս. Վրացյան. Հայաստանի Հանրապետություն, Երևան, 1993, էջ 353–355, Ա-Դո. Հայության երկունքը, Երևան, 2019, էջ 670–671, Ռ. Գ. Հովհաննիսյան. նշվ. աշխ., էջ 259–264, 273–276:*

[5] *Գեգեչկորի Եվգենի (1882–1954) – 1918 թ. նոյեմբերից 1921 թ. փետրվարը՝ Վրաստանի Դեմոկրատական Հանրապետության արտաքին գործերի նախարար: 1919 թ. աշնանը կարևոր դեր է կատարել Զանգեզուրում հայ-ադրբեջանական հրադադարի հաստատման գործում:*

[6] *Ալչիբայա Գրիգոլ (1881–1957) – 1919–1920 թթ. եղել է Վրաստանի դիվանագիտական ներկայացուցիչը Ադրբեջանական Դեմոկրատական Հանրապետությունում, իսկ 1920–1921 թթ.՝ Խորհրդային Ադրբեջանում:*

ստանում է հետևյալ հեռագիրը. «Կառավարությունը որոշեց Զանգեզուր ուղարկել յոթ հազար տարբեր ազգություններից բաղկացած զորք՝ [Խ.] Սուլթանովի[7] կարգադրության տակ՝ գեներալ [Ա.] Շիխլինսկու[8] հրամանատարությամբ: [Խ.] Սուլթանովն ունի մինչև հինգ հազար քուրդ և երեք հազար ապստամբ նախիջևանցիներից բաղկացած զորք: Բայազետ-Սուրմալուի շրջանում հայտնվել են նաև օսմանյան ջոկատներ: Ադրբեջանական բանակը հարձակման անցավ [հոկտեմբերի] 19-ին, իսկ մյուսները հարձակվելու են այս օրերին: Ռազմական երթուղին անցնելու է Գյանջա-Թարթար-Աղդամ-Շուշի-Գորիս գծով: Գորիսում կա հայկական երկու գումարտակ՝ չորս թնդանոթներով՝ Փիրումովի գլխավորությամբ: Ադրբեջանական բանակը կարող է նշանակված վայր հասնել տասը օրից: Բախումն անխուսափելի է: Միջոցներ եմ ձեռնարկում հարցը խաղաղ ճանապարհով լուծելու համար:

Խնդրում եմ միջոցներ ձեռք առնել պատերազմը կանխելու համար:

[Գ.] Ալշիբայա»:

Հոկտեմբերի 23-ին Բաքվում Վրաստանի ներկայացուցիչ պարոն [Գ.] Ալշիբայան ստանում է հետևյալ հեռագիրը. «Ադրբեջանի կողմից Զանգեզուրը գրավելու համար զորք ուղարկելն անխուսափելիորեն կհանգեցնի Ադրբեջանի և Հայաստանի միջև զինված հակամարտության: Նման բախման արդյունքն ուղղակիորեն աղետալի կլինի ողջ Անդրկովկասի համար: Մինչդեռ մեր հարցը բարձրացված է Փարիզի համաժողովի օրակարգում, այստեղ երկու ազգերի բախումը կխաթարի մեր անկախության գործընթացը: Ձեր պարտքն է նախարարի անունից ստանձնել բոլոր միջոցառումները՝ արյունահեղությունը կանխելու համար: [Մ.] Ջաֆարովին[9] փոխանցեք նախարարի տեսակետը և այս հարցի հետ կապված ամեն մի մանրունք:

Նախարարի տեղակալ՝ [Ն.] Քարցիվաձե»[10]:

Հոկտեմբերի 24-ին Երևանում մեր դիվանագիտական ներկայացուցիչ [Գ.] Մախարաձեին[11] ուղարկվել է հետևյալ հեռագիրը. «Հոկտեմբերի 22-ին Բաքվից [Գ.] Ալշիբայան հեռագրով մեզ տեղեկացնում է հետևյալը. «Ես ձեզ տեղ-

---

[7] Սուլթանով Խոսրով-բեկ (1879–1947) – 1918 թ. մայիս-հունիսին՝ Ադրբեջանական Դեմոկրատական Հանրապետության ռազմական նախարար: 1919 թ. հունվարի 15-ին Ադրբեջանի կողմից նշանակվել է Ղարաբաղի գեներալ-նահանգապետ:

[8] Շիխլինսկի Ալի-Աղա (1863–1943) – 1918 թ. դեկտեմբերից 1920 թ. ապրիլն Ադրբեջանի ռազմական նախարարի օգնական, ադրբեջանական բանակի հրետանու գեներալ:

[9] Ջաֆարով Մամեդ Յուսուֆ (1885–1938) – 1918 թ. մայիս-հունիսին եղել է Ադրբեջանական Դեմոկրատական Հանրապետության առևտրի ու արդյունաբերության նախարար, ապա՝ նշանակվել Վրաստանում Ադրբեջանի դիվանագիտական ներկայացուցիչ: 1919 թ. մարտ-դեկտեմբերին եղել է Ադրբեջանի արտաքին գործերի նախարար:

[10] Քարցիվաձե Նիկոլոզ (1884–1937) – 1918 թ. նշանակվել է Ադրբեջանական Դեմոկրատական Հանրապետությունում Վրաստանի դիվանագիտական ներկայացուցիչ: 1919–1920 թթ. զբաղեցրել է Վրաստանի արտաքին գործերի նախարարի օգնականի (տեղակալ) պաշտոնը:

[11] Մախարաձե Գերասիմ (1881–1937) – 1919 թ. հուլիսի 27-ին նշանակվել է ՀՀ-ում Վրաստանի դիվանագիտական ներկայացուցիչ՝ պաշտոնավարելով մինչև 1920 թ. ապրիլը, այնուհետև՝ Խորհրդային Ռուսաստանում Վրաստանի Դեմոկրատական Հանրապետության դիվանագիտական ներկայացուցիչ:

յակ եմ պահում, խնդրում եմ ձեռնարկեք բոլոր նախազգուշական միջոցները ռազմական բախումից խուսափելու համար: Մենք հեռագրով հրահանգել ենք [Գ.] Ալշիբայային՝ կիրառել ամեն միջոց և համոզել Ադրբեջանի կառավարությանը, որ իրենց մտադրության իրականացումն ուղղակիորեն աղետալի կլինի ողջ Անդրկովկասի համար:

Նախարարի տեղակալ՝ [Ն.] Քարցիվաձե»:

Հոկտեմբերի 27-ին Բաքվից՝ [Գ.] Ալշիբայայից, ստացվել է հետևյալ հեռագիրը. «Ինչպես իմ ձեռնարկած բոլոր միջոցառումներին՝ Զանգեզուրի գավառում ռազմական բախումն անխուսափելի է: Հայերն ամրացել են Տեղում և Գորիսում: Ադրբեջանական բանակը երեք ուղղություններով առաջ է շարժվում՝ հայկական դիրքերը կամարաձև շրջափակման մեջ վերցնելու նպատակով: [Ն.] Ուսուբբեկովի[12] հետ զրույցի ընթացքում ինձ պարզ դարձավ, որ Ադրբեջանի կառավարությունը բրիտանացիների հովանավորությամբ որոշել է ռազմական գործողություններ սկսել»:

Նոյեմբերի 4-ին Վրաստանի արտաքին գործերի նախարարությունը Ադրբեջանի և Հայաստանի կառավարությունների ներկայացուցիչներին[13] հետևյալ նոտան է հղում. «Մեր տեղեկություններով՝ երկու հարևան հանրապետությունների՝ Հայաստանի և Ադրբեջանի միջև Զանգեզուրի գավառում հնարավոր զինված ընդհարման մասին լուրեր են տարածվում: Վիճելի հարցերն այս կերպ լուծելու փորձը կխաթարի Անդրկովկասի ժողովուրդների խաղաղության ու ստեղծագործ աշխատանքի ճգտումը և, անկասկած, կործանարար ազդեցություն կունենա անկախության շեմին գտնվող հանրապետությունների ընդհանուր ճակատագրի վրա, քանի դեռ վերջիններիս անկախությունը չի ստացել միջազգային պաշտոնական ճանաչում ու կավելացնի ևս մեկ օղակ դժբախտ իրադարձությունների շղթային, որից օգտվում են Անդրկովկասի հանրապետությունների ընդհանուր թշնամիները՝ առաջադեմ աշխարհի առջև ծաղրելով այս հանրապետությունների կենսունակությունը: Անդրկովկասյան հանրապետությունների միջև նոր ռազմական բախումը կդառնա մեր նկատմամբ անվստահության և արդարացի նախատինքի պատրվակ նրանց[14] կողմից, ովքեր ներկայումս տիրապետում են ողջ տարածաշրջանի քաղաքական նժարներին և նոր խոչընդոտ կստեղծեն Անդրկովկասի հանրապետությունների անկախության հարցի ցանկալի լուծման համար: Ուստի միայն ընդհանուր և միահամուռ համագործակցության ու ներքին խաղաղության և պետության հզորացման արդյունքում Անդրկովկասի ժողովուրդները կարող են հաղթահարել բազմաթիվ խոչընդոտներ, ապրել արդարացի պահանջներով և թշնամիներից խլել իրենց համար գերեզմաններ փորող զենքը: Մենք կարծում ենք, որ խաղաղ հաշտեցումը միակ ցանկալի և համապատասխան ճանապարհն է անդրկովկասյան բոլոր հանրապետությունների

---

[12] Ուսուբբեկով Նասիբ-բեկ (1881–1920) – 1919 թ. ապրիլից 1920 թ. մարտը եղել է Ադրբեջանական Դեմոկրատական Հանրապետության վարչապետ և ներքին գործերի նախարար:

[13] Այն է՝ Վրաստանում ՀՀ դիվանագիտական ներկայացուցիչ Լևոն Եվանգուլյանին և Ադրբեջանի դիվանագիտական ներկայացուցչի պարտականությունները կատարող (տեղակալ) Ֆարիս-բեկ Վեքիլովին:

[14] Այն է՝ Անտանտի ներկայացուցիչների:

շահերի համար, հետևաբար՝ խնդրում ենք տեղեկացնել ձեր ներկայացրած կառավարությանը՝ Հայաստանի և Ադրբեջանի միջև վեճը փոխադարձ համաձայնությամբ կամ պարտադիր արբիտրաժով լուծելու մեր առաջարկի մասին»:

Նոյեմբերի 5-ին Վրաստանի արտաքին գործերի նախարարը Փարիզի կոնֆերանսի գերագույն հանձնակատարին, Մեծ Բրիտանիայի գերագույն հանձնակատարին, Ֆրանսիայի և Իտալիայի առաքելությունների ղեկավարներին հղում է հետևյալ նոտան. «Մեր տեղեկություններով՝ Զանգեզուրի գավառում այնպիսի լուրեր են պտտվում, որոնք, անշուշտ, վատ հետևանքներ են ունենալու: Կարծում ենք, որ Անդրկովկասի հանրապետությունների միջև առկա բոլոր թյուրիմացություններն ու ապակողմնորոշումը կարող են հարթվել պայմանագրով, և անցանկալի ենք համարում վիճելի հարցերը զենքով լուծելու փորձը: Ուստի մենք փորձել և փորձում ենք համոզել Հայաստանի ու Ադրբեջանի Հանրապետությունների կառավարություններին, որպեսզի Զանգեզուրի գավառում իրենց միջև ծագած վեճը խաղաղ ճանապարհով հանգուցալուծեն:

Բայց քանի որ մենք մեծ հույս չունենք, որ մեր միջնորդությունը ցանկալի արդյունք կունենա, հետևաբար պատիվ ունենք խնդրելու ձեզ՝ օգտագործել ձեր ողջ ազդեցությունը, որպեսզի Հայաստանի ու Ադրբեջանի միջև զինված հակամարտություն տեղի չունենա, ամեն գնով խուսափել դրանից և հնարավորության դեպքում Անտանտի այլ ներկայացուցիչների հետ կոլեկտիվ հայտարարությամբ դիմել նշված հակամարտությունը խաղաղ ճանապարհով լուծելու համար»:

Նոյեմբերի 5-ին Բաքվում Վրաստանի ներկայացուցչից ստացվել է հետևյալ հեռագիրը. «Այսօր՝ նոյեմբերի 5-ին, ադրբեջանական բանակը Զանգեզուրում կհատի Բարկուշատ և Հազարի գետերը: Հայերն ուժեղ ամրացված դիրքեր են զբաղեցնում: Նրանք զորք են հավաքում նաև Ղազախի շրջանում և սպառնում են երկաթգծին՝ ակնկալելով ամերիկյան միջամտությունը: Ադրբեջանի կառավարությունը զորքեր է ուղարկում ճանապարհը պաշտպանելու համար: Ադրբեջանի կառավարության դրդմամբ Շարուր-Նախիջևանի բնակիչները չեն ընդունել ամերիկացի գեներալ-նահանգապետին[15] և պահանջել են դրանցել Օրդուբադի գլխավոր նահանգապետարանում»:

Նոյեմբերի 7-ին արտաքին գործերի նախարարը պարոն [Ջ. Օ.] Ուորդրոպից[16] ստացավ հետևյալ նոտան. «Նորին Գերազանցություն պարոն Եվգենի Գեզեչկորիին:

Նոյեմբերի 8-ին այնտեղից[17] եկել է հետևյալ տեղեկությունը. «Առաջին հարձակումն ավարտվեց գետն անցնելով, սակայն հաջորդ գրոհը հանդիպեց կատաղի դիմադրության, ադրբեջանական բանակը կորցրեց մոտ քսան մարդ: Քրդերը մեծ կորուստներ կրեցին»:

Նորին Գերազանցություն: Նոյեմբերի 5-ի Ձեր № 8282 գրությանն ի պատասխան՝ պատիվ ունեմ տեղեկացնելու, որ այս ընթացքում շատ էի ցանկա-

---

[15] *Դաշնակիցների կողմից Շարուր–Նախիջևանի գեներալ-նահանգապետ էր նշանակվել գնդապետ Էդմունդ Դեյլին: Սակայն տեղական մուսուլմանները հրաժարվել են ճանաչել նրա իշխանությունը:*

[16] *Ջոն Օլիվեր Ուորդրոպը 1919 թ. հուլիսի 22-ին նշանակվել էր Անդրկովկասում Մեծ Բրիտանիայի գլխավոր հանձնակատար:*

[17] *Այն է՝ Բաքվից:*

նում խաղաղ ճանապարհով կարգավորել այն հարցերը, որոնց մասին գրել էիք ինձ:

Ես կշարունակեմ ապագայում ուղիներ փնտրել և օգտագործել բոլոր միջոցները՝ այս ուղղությամբ ցանկալի արդյունքների հասնելու համար:

Օ. Ուորդրոպ»:

Նոյեմբերի 12-ին Ե. Գեգեչկորին Հայաստանի արտաքին գործերի նախարարից[18] հեռագիր է ստանում հետևյալ բովանդակությամբ. «Պատիվ ունեմ հաստատել Ձեր նոյեմբերի 4-ին № 8248 գրության ստացումը, որն ուղարկվել է մեր հանրապետության Թիֆլիսի ներկայացուցչի անունով: Հայաստանի կառավարությունը քաջ գիտակցում է վիճելի հարցերը զենքի միջոցով լուծելու վտանգավորությունն Անդրկովկասի երիտասարդ հանրապետությունների ապագայի համար: Հայաստանի կառավարությունը մշտապես համարել և այժմ էլ համարում է, որ զինված բախումները սպառնալիք են ողջ Անդրկովկասի ճակատագրի համար: Հայաստանի կառավարությունը, ինչպես նախկինում, այնպես էլ ներկա ժամանակներում եղել և պատրաստ է ապահովելու, որ բոլոր վիճելի հարցերը, հատկապես՝ Զանգեզուրի հարցը, լուծվեն խաղաղ ճանապարհով՝ հաշվի առնելով և ուշադրություն դարձնելով երկու կողմերի շահերին: Հայաստանի կառավարությունը Զանգեզուրի գավառի նկատմամբ ունի պատմական և էթնիկ անձեռնմխելի իրավունքներ: Նա այս իրավունքներն անձեռնմխելի է պահել մինչև համաշխարհային պատերազմի ավարտը՝ օսմանցիների վերջին արշավանքի ժամանակ: Բացի այդ, այս գավառի բնակիչների անսասան կամքը վկայում է, որ Զանգեզուրի բնակիչները նույնպես ցանկանում են այս գավառը միացնել Հայաստանի Հանրապետությանը: Այդուհանդերձ, Հայաստանի կառավարությունը, ելնելով Անդրկովկասի ընդհանուր շահերից և հունվարի 24-ին Խաղաղության կոնֆերանսի նստաշրջանում ընդունված սկզբունքներից, զերծ մնաց Զանգեզուրում նախ բրիտանական բարձրագույն հրամանատարության, ապա Դաշնակիցների գերագույն հրամանատար, գնդապետ [Ու.] Հասկելի[19] կողմից հաստատված կարգը խախտելուց, քանի որ վստահ էր՝ Ադրբեջանի կառավարությունը ևս կիսում է այն կարծիքը, որ Անդրկովկասում խաղաղ մթնոլորտը պետք է պաշտպանված լինի, ինչն Անդրկովկասի ազգերի խնդիրն է, և, իր հերթին, ձեռք կքաշի Հայաստանի դեմ ուղղված ցանկացած ագրեսիվ գործողություններ կատարելուց: Սակայն Ադրբեջանի նախկին ներկայացուցիչն[20] ու նրանց բազմաթիվ գործակալները պարբերաբար անհնազանդություններ են հրահրել և գումարով աջակցել Շարուրում ու Նախիջևանում բնակվող մահմեդականներին, որպեսզի ապստամբություն կազմակերպեն Հայաստանի կառավարության դեմ,

---

[18] *1919 թ. հունիսից 1920 թ. ապրիլը ՀՀ արտաքին գործերի նախարարն Ալ. Խատիսյանն էր:*

[19] *Հասկել Ուիլյամ Նեֆյու (1878–1952) – 1919 թ. հուլիսին նշանակվել է Հայաստանում Դաշնակից պետությունների գերագույն կոմիսար, այնուհետև նրա իրավասությունը տարածվել է ողջ Անդրկովկասի վրա:*

[20] *1919 թ. հունվարի 29-ին Երևանում Ադրբեջանի դիվանագիտական ներկայացուցիչ էր նշանակվել Մամեդ-խան Թեքինսկին: Պաշտոնավարել է մինչև հոկտեմբերի 10-ը: 1919 թ. հոկտեմբերի 11-ից մինչև 1920 թ. ապրիլի 28-ը հանդիսացել է Ադրբեջանի արտաքին գործերի նախարարի օգնական:*

ինչը փաստագրված է: Զանգեզուրի պարագայում ևս Ադրբեջանի կառավարությունն ընտրեց մի ճանապարհ, որը սպառնում է ողջ Անդրկովկասի խաղաղ կյանքին ու ամենևին չի ապացուցում վեճը խաղաղ ճանապարհով լուծելու Ադրբեջանի կառավարության անկեղծ ցանկությունը: Ի պատասխան Հայաստանի կառավարության հարցադրմանը՝ ինչո՞վ է պայմանավորված Զանգեզուրի՝ ափամերձ[21] շրջաններում ադրբեջանական զորքերի կենտրոնացումը, Ադրբեջանի կառավարությունը մեզ զուտ ձևական պատասխան տվեց, որը բոլորովին չի համապատասխանում խնդրի էական վիճակին և չի մոտեցնում մեզ՝ երկու հանրապետություններիս, իսկ վիճելի հարցերի խաղաղ հանգուցալուծման հետ կապված գործընթացը, ըստ Ադրբեջանի կառավարության հայտարարության, պետք է միջոց լինի հարևան հանրապետությունների միջև բարեկամական հարաբերություններ հաստատելու համար:

Գիտակցելով Հայաստանի և ողջ Անդրկովկասի ժողովրդի համար ծանր պատասխանատվությունը՝ Հայաստանի կառավարությունը ստիպված է եղել ևս մեկ անգամ դիմել Ադրբեջանի կառավարությանը՝ հրավիրել Հայաստանի ու Ադրբեջանի ներկայացուցիչների համաժողով՝ վիճելի հարցերը խաղաղ ճանապարհով լուծելու նպատակով: Ադրբեջանի կառավարությունն ընդունել է այս առաջարկը, սակայն, այնուամենայնիվ, չի դադարեցրել զորք ուղարկել Զանգեզուրի ու Բաշքենդի[22] շրջաններ, և հաղորդվում է, որ Զանգեզուրը զենքով գրավելու ռազմական գործողությունն արդեն սկսվել է: Հայաստանի կառավարությունը կարծում է, որ Ադրբեջանի կառավարությունը չի կարող չհասկանալ ու չգիտակցել ողջ Անդրկովկասի համար նոր արյունահեղության աղետալի հետևանքները, իսկ վերջին պահին էլ իր ձեռքը կվերցնի ռազմական օպերացիան և կկանգնեցնի արդեն սկսված մարտական գործողությունները: Հայաստանի կառավարությունն Ադրբեջան–Հայաստան համաժողովի գումարման վերաբերյալ իր կոչով հստակ ապացուցել է Ադրբեջանի Հանրապետության հետ բարեկամական հարաբերություններ պահպանելու իր անխախտ ցանկությունը, ուստի Հայաստանի կառավարությունը փորձեց բոլոր հնարավոր միջոցները հակամարտության խաղաղ կարգավորման համար, և այս պահին էլ սեփական իրավունքի լիարժեք գիտակցումով ու ապագա արյունահեղության և ողջ Անդրկովկասի համար դրանից բխող աղետալի հետևանքների պատասխանատվությունն ամբողջությամբ կրում է Ադրբեջանի կառավարությունը:

Արտաքին գործերի նախարար՝ [Ա.] Խատիսով»:

Հասկելի տեղակալ [Ջ.] Ռեյն[23] այցելել է արտգործնախարար [Ե.] Գեգեչկորիին և նրան ասել, որ ինքը շատ գոհ է Զանգեզուրի հարցը խաղաղ ճանապարհով լուծելու վրացական կառավարության ձեռնարկած միջոցառումներից:

Նոյեմբերի 14-ին Երևանում Վրաստանի կառավարության ներկայացուցչից ստացել ենք հետևյալ հեռագիրը. «Այսօր ինձ այցելեց Հայաստանի կա-

---

[21] *Այն է՝ Արաքսի հովիտը:*

[22] *Հետագայի՝ Արծվաշենը:*

[23] *Ամերիկացի գնդապետ Ջեյմս Ռեյը Ու. Հասկելի ղեկավարած առաքելության շտաբի ղեկավարն էր և վերջինիս բացակայության ժամանակ փոխարինում էր նրան:*

ռավարության նախագահ Խատիսովը և Վրաստանի կառավարությանը խնդրեց ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ Զանգեզուրի շուրջ Հայաստանի ու Ադրբեջանի միջև հակամարտությունը խաղաղ ճանապարհով կարգավորելու համար՝ հակառակ դեպքում, ցավոք, հանգեցնելու է անիմաստ արյունահեղության երկու հարևան ժողովուրդների միջև: Պետք է հաստատակամորեն դիմել, որպեսզի նոյեմբերի 20-ին Բաքվում նախատեսված համաժողովն անպայման կայանա: Հայաստանի ներկայացուցիչներն արդեն մեկնել են Բաքու: Զանգեզուրում բախումն արդեն սկսվել է, և եթե այն չդադարեցվի այս երկուերեք օրվա ընթացքում, ապա պատերազմն անխուսափելի է»:

Նույն օրը Բաքվից ստացանք հետևյալ հեռագիրը. «Զանգեզուրի ռազմաճակատում իրավիճակը բարդացել է: Նոր ուժեր են ուղարկվում՝ հրետանու երեք գումարտակ գնդապետ [Կ.] Զիսեիձեի[24] հրամանատարությամբ: Մուլկևիչը մեկնեց ռազմաճակատ: Ամբողջ ջոկատի պետ է նշանակվել ռազմական նախարար Միխլինսկու[25] օգնականը: Խնդրում ենք բովանդակության մասին զեկուցել ռազմական նախարարին: № 271»:

Գնդապետ [Կ.] Զիսեիձեին Հայաստանի դեմ գործող բանակային ստորաբաժանման ղեկավար նշանակելու կապակցությամբ նոյեմբերի 14-ին Բաքվում Վրաստանի ներկայացուցչին ուղարկվել է հետևյալ հեռագիրը. «Ամեն միջոց ձեռնարկեք, որ գնդապետ [Կ.] Զիսեիձեին Զանգեզուր չուղարկեն: Առհասարակ, պայմանագրի ուժով Ադրբեջանն իրավունք չունի մեր սպաներին օգտագործել ներքին ճակատում: Համոզվեք, որ պայմանագիրը չի խախտվում: Ոչ մի վրացի սպա չպետք է մասնակցի Զանգեզուրի գործողությանը:

Նախարարի տեղակալ՝ [Ն.] Քարցիվաձե»:

Նոյեմբերի 17-ին Բաքվից ստացանք հետևյալ պատասխանը. «№ 8489-ով ուղարկված հեռագրին մանրամասն պատասխան և բացատրություններ է ուղարկել ռազմական կցորդ [Ա.] Նացվալովը[26] գեներալ [Ա.] Զաքարիաձեի[27] անունով: [Ն.] Ուսուբբեկովն ինձ ասաց, որ [Կ.] Զիսեիձեն գտնվում է Ադրբեջանի կառավարության ծառայության մեջ, ուստի պայմանագրի 7-րդ կետը չի կարող վերաբերել նրան: Խնդրում եմ ինձ ուղարկել պայմանագիրը:

Վրաստանի ներկայացուցիչ՝ [Գ.] Ալշիբայա»:

Նոյեմբերի 16-ին Բաքվից Վրաստանի ներկայացուցիչը հայտնել է հետևյալը. «Նոյեմբերի 14-ին ինձ այցելեց Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչի տեղակալ Ատամանովը և խնդրեց ինձ ստանձնել Զանգեզուրի գավառում ռազմական գործողությունների դադարեցման մասին միջնորդությունը՝ արյունահեղությունից խուսափելու համար, որը միտում ունի Զանգեզուրից տարածվել ամբողջ Ղարաբաղում: Նոյեմբերի 15-ին ես հանդի-

---

[24] *Զիսեիձե Կոնստանտին (1853–1920) – ռուսական բանակի գնդապետ: 1918–1920 թթ. ծառայել է Ադրբեջանի զինված ուժերում, 1920 թ. մարտին ստացել է գեներալ-մայորի կոչում:*

[25] *Փաստաթղթում այդպես է: 1918 թ. դեկտեմբերից մինչև 1920 թ. ապրիլը Ադրբեջանի ռազմական նախարարը Սամեդ-բեկ Մեհմանդարովն էր:*

[26] *Նացվալիշվիլի (Նացվալով) Անտոն (ծնվ. 1883 թ.) – 1919–1920 թթ. Բաքվում Վրաստանի ռազմական կցորդ, գնդապետ:*

[27] *Զաքարիաձե Ալեքսանդր (1884–1957) – 1919–1921 թթ. Վրաստանի ռազմական ուժերի գլխավոր շտաբի պետ:*

պեցի Ադրբեջանի արտաքին գործերի նախարար [Մ.] Ջաֆարովի և կառավարության նախագահ [Ն.] Ռասուլբեկովի հետ, նրանց խնդրեցի ռազմական գործողությունները դադարեցնել և վիճելի հարցերը տեղափոխել Բաքվում կայանալիք Հայաստան–Ադրբեջան համաժողովին քննարկելու կամ հիշյալ հարցերը լուծել արբիտրաժային ճանապարհով»:

Կառավարության նախագահ [Ն.] Ռասուլբեկովն իր հերթին ինձ խնդրեց տեղեկացնել Հայաստանի կառավարությանը հետևյալի մասին. «Ադրբեջանի կառավարությունը Զանգեզուրում ռազմական գործողություններ չի իրականացնում: Զանգեզուրն Ադրբեջանի Հանրապետության անբաժանելի մասն է: Այսպես է դիտարկում Ադրբեջանը, ինչպես նաև Դաշնակիցները՝ ի դեմս բրիտանական հրամանատարության: Նույնիսկ խաղաղության կոնֆերանսի գերագույն հանձնակատար գնդապետ Հասկելը ճանաչեց Զանգեզուրի գավառի նկատմամբ մեր լիարժեք իրավունքը: Նախիջևանի հարցով համաձայնագրի[28] կետերից մեկում նա Հայաստանի կառավարությունից պահանջել է օգնել Ադրբեջանի կառավարությանը՝ Զանգեզուրի գավառում ապստամբական շարժումը խաղաղ ճանապարհով վերացնելու համար, և, ի վերջո, Զանգեզուրի գավառի հայ բնակչությանը ենթարկեցնել Ադրբեջանի Հանրապետության կառավարությանը: Ադրբեջանի կառավարությանը հասած վերջին տեղեկությունների համաձայն՝ հայկական կառավարությունը ոչ միայն չի կատարել գնդապետ [Ռ.] Հասկելի հանձնարարությունը, այլև հակառակը՝ իր կանոնավոր զորքերն է ուղարկում Զանգեզուրի գավառ՝ աջակցելու և ամրապնդելու այդ շարժումը: Այս ամենի հետևանքով Ադրբեջանի կառավարությունը ստիպված եղավ ռազմական ուժ ուղարկել Ղարաբաղի գեներալ-նահանգապետին՝ կարգուկանոնը վերականգնելու և անարխիստ-բոլշևիկյան ավազակախմբերի վրա ազդելու համար: Ադրբեջանի կառավարությունը մտադիր է վերջ դնել Զանգեզուրում հայ ապստամբների կողմից մահմեդական գյուղերի ավերմանը, և 60 հազար անօթևան մուսուլման փախստականներին վերադարձնել իրենց հայրենիք և վերականգնել կարգուկանոնը: Մեզ համար անհասկանալի է, – ասել է կառավարության ղեկավար [Ն.] Ռասուլբեկովը, – Հայաստանի կառավարության բողոքը Զանգեզուրի գավառում ռազմական միջոցներ ձեռնարկելու դեմ, մինչդեռ իրենք մինչև օրս զենքով դաժան միջոցներ են ձեռնարկում այն մահմեդականների նկատմամբ, ովքեր չեն ցանկանում ճանաչել իրենց իշխանությունը Սուրմալուում, Երևանի գավառում և Կարսի մարզում: Ի հավելումն՝ կառավարության ղեկավարը և Ադրբեջանի կառավարությունը դեմ չեն հայ-ադրբեջանական համաժողովին, որը նախատեսվում է գումարել այս ամսվա 20-ին, Բաքվում: Կառավարության նախագահն ինձ խնդրեց այս ամենի մասին տեղեկացնել Վրաստանի կառավարությանը:

Ադրբեջանում Վրաստանի դիվանագիտական ներկայացուցիչ՝ [Գ.] Ալչիբայա»:

---

[28] *Խոսքը Շարուր–Նախիջևանում ու Դարալագյազում չեզոք գոտի ստեղծելու՝ Ադրբեջանի վարչապետ Ն. Ռասուլբեկովի և Հայաստանի գերագույն կոմիսար նշանակված Ռ. Հասկելի միջև 1919 թ. օգոստոսի 29-ին ստորագրված համաձայնագրի մասին է:*

Վերջին անգամ նոյեմբերի 17-ին Բաքվից ստացանք հետևյալ հեռագիրը. «Այսօր՝ նոյեմբերի 17-ին, հանդիպեցի արտաքին գործերի նախարար [Մ.] Ջաֆարովին և վարչապետ [Ն.] Ռասուլբեկովին: Մեր, [Ջ. Օ.] Ռորդրոպի ու [Ջ.] Ռեյի միջնորդության շնորհիվ նրանք համաձայն են ծայրահեղ պայմաններում դադարեցնել ռազմական գործողությունները Զանգեզուրում: Որպեսզի ռազմական բախումները դադարեցվեն, [Ն.] Ռասուլբեկովը, Մամեդ-Հասան Հաջինսկին[29] և ես վաղը երեկոյան ժամը 9-ին արագընթաց գնացքով գալիս ենք Թիֆլիս:

[Գ.] Ալշիբայա»:

Նոյեմբերի 19-ին Թիֆլիս են ժամանել Ադրբեջանի կառավարության նախագահ [Ն.] Ռասուլբեկովը և Հայաստանի կառավարության ղեկավար [Ա.] Խատիսովը:

Ինֆորմացիոն բաժնի վարիչ՝ (ստորագրություն)

ՎԱԱ, ֆ. 1864, ց. 2, գ. 79, թթ. 1–5 շրջ.: Բնագիր: Մեքենագիր:

---

[29] *Ադրբեջանական Դեմոկրատական Հանրապետության արտաքին գործերի առաջին նախարար (1918 թ. մայիս–հոկտեմբեր): 1919 թ. դեկտեմբերի 22-ին նշանակվել է ներքին գործերի նախարար:*

ՀՏԴ : 929:891.981Թումանյան

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԿՅԱՆՔԻ ԵՎ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԳՐՈՒԹՅՈՒՆ. Հ. I (1869–1908), *Երևան, «Գիտություն» հրատ., 2010, 670 էջ,* Հ. II (1909–1914), *Երևան, «Գիտություն» հրատ., 2016, 859 էջ,* Հ. III (1915–1919), *Երևան, «Գիտություն» հրատ., 2019, 866 էջ,* Հ. IV (1920–1923), *Երևան, «Գիտություն» հրատ., 2020, 883 էջ*:*

Բանալի բառեր՝ Հովհ. Թումանյան, կյանքի և ստեղծագործության տարեգրություն, քառահատոր, գիտական սկզբունքներ, ժամանակագրական պարբերացում, օբյեկտիվություն, վավերականություն, անթվակիր նամակներ, արխիվային նոր նյութեր:

Մեկ դարից ավելի է՝ Հովհ. Թումանյանը գտնվում է հայ գրականության պատմության մշտական ընթացքի մեջ: Հայ գրականագիտության մեջ և՛ հընթացս, և՛ հետագայում նրա մասին ստեղծվել են բազմաթիվ արժեքավոր ու լրջագույն ուսումնասիրություններ, որոնք վստահաբար հիմք են տալիս խոսելու նախընթաց թումանյանագիտության պատմության, հնարավորինս հավաքված ու համակարգված քննադատական ահռելի նյութի մասին: Բազմաթիվ երախտավորներ տպագրել, հետազոտել ու հանրության սեփականությունն են դարձրել արխիվային տարատեսակ նյութեր, փաստաթղթեր, նամակներ և այլն, ստեղծել դրանց մեկնաբանման համահավաք բնագիրը: Թումանյանագիտության այդ հսկայածավալ ժառանգության մեջ առանձնահատուկ տեղ է զբաղեցնում Թումանյանի կյանքի և ստեղծագործության ամբողջական տարեգրությունը ներկայացնող հիմնարար աշխատությունը՝ չորս հատորով:

Տարեգրության հիմքը դրվել է երկու տասնամյակ առաջ՝ երջանկահիշատակ ակադեմիկոս Էդ. Ջրբաշյանի նախաձեռնությամբ: Նրա գործուն ղեկավարությամբ ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում ձևավորվել է Թումանյանի կյանքի և ստեղծագործության տարեգրությամբ զբաղվող գիտահետազոտական խումբ, որի անդամները Թումանյանագիտության երախտավորներ էին, հայ գրականագիտության կարկառուն դեմքեր՝ Լ. Կարապետյան, Վլ. Կիրակոսյան, Հ. Աբեղյան, Ա. Վարդանյան, Ի. Վարժապետյան, Ս. Հովհաննիսյան և ուրիշներ: Հատորների կազմման աշխատանքներն ավելի ուշ շարունակվում են Թումանյանագիտական խմբի նոր անդամների ջանքերով:

Հովհ. Թումանյանի կյանքը և ստեղծագործությունն անխզելիորեն կապված են XIX դարի վերջին քառորդի և XX դարի առաջին տասնամյակների հայոց կենսագրության փոթորկալի իրադարձությունների հետ: «Չափազանցություն չի լինի, եթե ասենք,– մեկնաբանել է Տարեգրության պատասխանատու խմբագիր, Թումանյանագիտական խմբի ղեկավար Վլ. Կիրակոսյանը տարեգրության ստեղծման անհրաժեշտության մասին խոսելիս,– որ Թուման-

---

* *Ներկայացվել է 13. III. 2023 թ., ընդունվել է տպագրության 19. VI. 2023 թ.:*

յանի կյանքի և ստեղծագործության տարեգրությունը միաժամանակ այդ իրադարձությունների տարեգրությունն է՝ խմաստավորված հանճարեղ արվեստագետի անձնական ու ստեղծագործական ընկալումներով: Այս իրողությունը առավել ևս մեծացնում է տարեգրության գիտական–ճանաչողական նշանակությունը»[1]*:*

Բավական բարդ և դժվարին ճանապարհ է անցել տարեգրության առաջին հատորը: «Հատորի պատրաստման համար տևական ժամանակ է պահանջվել,– նշում է Վ. Կիրակոսյանը,– նոր նախաձեռնություն էր. սկզբունքները, սահմանները պետք է ճշտվեին»[2]*: Առհասարակ, գրողի կյանքի և ստեղծագործության տարեգրությունը գրականագիտական ոչ այնքան տարածված ժանրերից է՝ որոշ ընդհանրություններ ունենալով ակադեմիական հրատարակության, գիտական կենսագրության, ժամանակագրության հետ՝ ընույթով, խնդիրներով, նպատակով ու մեթոդով տարբերվում է դրանցից: Տարեգրությունը գրականագիտական ամենաօբյեկտիվ ժանրն է, որի կարևորագույն պայմանը տարեգրողի լիակատար չեզոքությունն է: Նա աներևույթ ու անարձագանք հետևում է գրողի յուրաքանչյուր քայլին՝ ուղղամիտ վկայագրողի անկողմնակալությամբ ներկայացնելով նրա անձնական, հասարակական, ստեղծագործական կյանքի բոլոր մանրամասները: Տարեգրողն այդ ամենը փաստագրում է՝ առաջնորդվելով որոշակի սկզբունքներով:*

Թումանյանի տարեգրությունն ունի իր գիտական սկզբունքները, հետազոտության առարկան ու մեթոդը: Բանաստեղծի երկրային կյանքի ճանապարհը՝ ծնունդից մինչև վախճան, ստեղծագործական բազմահոսք ուղին դարձել են հետազոտության առարկան, որի ընույթով էլ պայմանավորվել է ուսումնասիրության մեթոդը: Առաջնահերթ պահանջը, որով առաջնորդվել է աշխատանքային խումբը, ամեն ինչ տառացի ճշտությամբ, առանց լրացուցիչ մեկնաբանությունների կամ սրբագրումների ներկայացնելն էր: Սկզբունքը խախտվել է միայն մի պարագայում, եթե առկա է եղել տարակարծություն՝ ժամանակագրության, բովանդակային ստուգության, տեղագրության հետ կապված: Այս դեպքում գործադրվել է համադրական մեթոդը՝ համաժամանակյա զուգադրությամբ ներկայացնելով արժանահավատ բոլոր աղբյուրները:

Աշխատանքային խմբի որոշմամբ տարեգրության կառուցվածքային հիմքում դրվել է բանաստեղծի կյանքի ու ստեղծագործական ուղու ժամանակագրական պարբերացման սկզբունքը՝ հետևյալ շրջանաբաժանումներով՝

1. 1869–1908 թվականներ *[Հատորի պատասխանատու խմբագիր և ծանոթագրությունների հեղինակ՝ Վ. Կիրակոսյան: Կազմել են Հ. Աբեղյանը (1869–1890, 1895–1897), Ս. Հովհաննիսյանը (1891–1894), Ա. Գևորգյանը, Ե. Մնացականյանը (1898–1900), Լ. Կարապետյանը, Ա. Վարդանյանը (1901–1908), Ի. Վարժապետյանը (Անվանացանկ)]:*

2. 1909–1914 թվականներ *[Հատորի պատասխանատու խմբագիր և ծանոթագրությունների հեղինակ՝ Վ. Կիրակոսյան: Կազմել են Լ. Կարապետյանը (1909), Հ. Աբեղյանը, Ե. Մնացականյանը (1910–1911), Ս. Հովհաննիս-*

---

[1] *Հովհաննես Թումանյանի կյանքի և ստեղծագործության տարեգրություն. հ. I (1869–1908), Երևան, 2010, էջ 6:*

[2] https://www.aravot.am/2019/10/25/1073942

յանը (1912–1913), Ի. Վարժապետյանը, Վ. Կիրակոսյանը (1914, Անվանացանկ)]:

3. 1915–1919 թվականներ *[հատորի պատասխանատու խմբագիր և ծանոթագրությունների հեղինակ՝ Վ. Կիրակոսյան: Կազմել են Հ. Աբեղյանը, Ե. Մնացականյանը (1915, 1917, 1919, Անվանացանկ), Ի. Վարժապետյանը, Վ. Կիրակոսյանը (1916), Ն. Մկրտչյանը (1918)]:*

4. 1920–1923 թվականներ *[հատորի պատասխանատու խմբագիր և ծանոթագրությունների հեղինակ՝ Վ. Կիրակոսյան: Կազմել են Ի. Վարժապետյանը (1920, Հավելված 2. նախորդ հատորներից դուրս մնացած նյութեր), Հ. Աբեղյանը, Ե. Մնացականյանը (1921, 1922, 1923, Հավելված 2. նախորդ հատորներից դուրս մնացած նյութեր, Անվանացանկ), Ն. Մկրտչյանը (Հավելված 1. անթվակիր նամակներ)]:*

Ժամանակագրական յուրաքանչյուր պարբերացում կատարվել է Թումանյանի կյանքի ու ստեղծագործական աշխարհին առնչվող հիմնախնդիրների հաշվառմամբ: Տարեգրության կառուցվածքը պարզ է. յուրաքանչյուր տարեթվի ներքո նշվել է ամսաթիվը, ապա հաջորդել փաստը, որին հետևել են փաստի մասին վկայությունը, անհրաժեշտության դեպքում՝ համապատասխան մեջբերումը, երբեմն՝ հակիրճ ծանոթությունը: Իբրև աղբյուր նշվել է մեկը, իսկ փաստի իսկության հավաստիության համար՝ նաև լրացուցիչ աղբյուրներ:

Տարիներ ձգվող բարդ ու պատասխանատու ժամանակահատվածում տարեգրության կազմողները փորձել են լիարժեք օգտագործել Թումանյանագիտության, հայագիտության, թանգարանների, ազգային արխիվի, գրադարանների ու գրապահոցների ընձեռած փաստական ողջ նյութը՝ այսօրվա հնարավորությունների սահմաններում հավաքելով և հավաքագրելով բանաստեղծի կյանքին ու ստեղծագործությանն աղերսվող բոլոր նյութերը և մասունքները: Հատկապես մեծ բծախնդրությամբ են ներկայացվել բանաստեղծի անձնական կյանքի մանրամասները, որոնք ուսումնասիրողները սովորաբար նրբորեն շրջանցում էին, և որոնք, այնուամենայնիվ, «հաճախ բաց են անում ստեղծագործական հոգեբանության անակնկալ կողմեր»[3]:

Թումանյանագիտության խմբի ուշադրության կենտրոնում դրված է եղել ու էական նշանակություն ստացել տարեգրության ժամանակագրության ճշգրտման խնդիրը: Այս առիթով Վ. Կիրակոսյանը նկատում է. «Իհարկե, Թումանյանի կյանքի և ստեղծագործության հետ կապված փաստերի ու եղելությունների ժամանակագրությունը հիմնականում հայտնի է և հատուկ ճշգրտման կարիք չունի: Բայց քիչ չեն նաև այնպիսիք, որոնց վերաբերյալ աղբյուրներում եղած տվյալները հաճախ անորոշ են կամ հակասական: Այդպիսի դեպքերում կազմողներից պահանջվել է երկար ժամանակ և ծավալուն աշխատանք, ընդ որում այստեղ էլ նպատակը եղել է հասնել եթե ոչ բացարձակ ստուգության, ապա գոնե առավելագույն մոտավորության: Իսկ առհասարակ կազմողներն աշխատել են հնարավորինս խուսափել մոտավոր ժամանակագրությունից: Այսպես, օրինակ, Թումանյանը սովորություն է ունեցել իրեն հասցեագրված նամակների վրա նշել ստացման օրը կամ դրա մասին ակնարկել պատասխան նամակներում: Բայց մեծ մասամբ անհայտ է մնում

[3] *Հովհաննես Թումանյանի կյանքի և ստեղծագործության տարեգրություն. հ. I, էջ 6:*

նամակների ստացման ժամանակը: Այդպիսի դեպքերում կազմողները նպատակահարմար են համարել նշել բանաստեղծին ուղղված նամակների գրության օրը՝ խուսափելով ստացման օրվա վերաբերյալ մոտավոր ենթադրություններից ու հաշվարկներից»[4]*:*

Այսպիսի բծախնդիր մոտեցումը, սակայն, չի ենթադրում, որ տարեգրությունը գրողի կյանքի ժամերի, օրերի, ամիսների ու տարիների՝ միմյանց հաջորդող և փոխլրացնող երկարաձիգ ժամանակագրություն է սոսկ: Կազմողները հետապնդել են էական մի նպատակ. ընդարձակ մեջբերումներով ընթերցողների առջև բացել գրողի, նրան շրջապատող հասարակության աշխարհատեսության հոգեբանական նրբերանգները, անտեսանելի խմորումները, թույլ տվել, որ «ժամանակագրությունը խոսի, պատմի իր մասին»[5]*:*

1. *Տարեգրության առաջին շրջափուլը ներառում է 1869–1908 թթ.՝ բանաստեղծի ծննդից մինչև նրա կայացման, ստեղծագործության աստիճանական բյուրեղացման և համընդհանուր ճանաչման ժամանակահատվածը, որը բավական հարուստ է եղել «դրամատիկ ու բերկրալի պահերով, անկումներով ու վերելքներով» (էջ 7). դեռ պատանի՝ բազմանդամ ընտանիքի հոգս, բանաստեղծական երկու ժողովածուների լույսընծայման բերկրանք, անաչառ ու կողմնակալ քննադատություն, աբասթումանյան աշնան ստեղծագործական վերելք, բանաստեղծությունների երրորդ ժողովածուի հրատարակում, 1905–1907 թթ. ազգամիջյան արյունահեղություններ և դրանց առիթով ցավ ու մտահոգություն և այլն:*

2. *Թումանյանի կյանքի և ստեղծագործության տարեգրության երկրորդ փուլը, որ ներկայացված է երկրորդ գրքում, ամփոփում է 1909–1914 թվականները: Այդ տարիներին բանաստեղծի կյանքը լեցուն է եղել տարաբնույթ իրադարձություններով, որոնք անդառնալի հետք են թողնել նրա բանաստեղծական աշխարհի վրա՝ քաղաքական հետապնդումներ, բանտարկություններ, դատավարություն Պետերբուրգում, ազգային-հասարակական գործունեության ընդլայնում, հրապարակախոսական ու քննադատության անկրկնելի էջերի հրատարակում, որը հնարավորություն է տվել ճիշտ կողմնորոշվելու բանաստեղծի գրաքննադատական հայացքների, բուն գեղարվեստական մտածողության, ստեղծագործական հոգեբանության խնդիրների մասին խոսելիս: Այս ամենին հավելենք նաև «մեծ քաղաքացու և հումանիստի մշտական պատրաստակամությունը՝ հասնելու ամեն տեղ, ձեռք մեկնելու ամենքին, ով օգնության համար դիմում էր իրեն» (էջ 4–5): «Բանաստեղծը՝ բարեհոգի, ժպտերես, նորից ամենուրեք էր ու ամենքի հետ,– գրում է Վ. Կիրակոսյանը:– Իսկ ներսից, ամենքից թաքուն, հոգին կրծում էր հարկադրաբար լռեցրած արարչական կոչումի ձայնը, մի մեծ դրամա, որ հանդիպում ենք նրա շատ խոստովանություններում» (էջ 5):*

3. *Թումանյանի կյանքի և ստեղծագործության տարեգրության երրորդ փուլն ընդգրկում է 1915–1919 թվականները՝ հայ ժողովրդի համար ողբերգական իրադարձություններով լեցուն բախտորոշ մի ժամանակահատված: Երրորդ գիրքը նոր էջեր է բացահայտում Հովհ. Թումանյանի անձնական և անանձնական կյանքից, նորովի արժևորում բանաստեղծի բազմաբեղուն և*

---

[4] *Նույն տեղում, էջ 6–7:*
[5] *Նույն տեղում, էջ 7:*

ինքնամոռաց գործունեությունը ժամանակի ազգային, հասարակական, քաղաքական, մշակութային հորիզոններում: Ամենայն հայոց բանաստեղծը շարունակում է ապրել ու գործել այն համապարփակ, անանձնական կյանքով, որ տրված էր նրան՝ թե՛ իբրև բանաստեղծի, թե՛ իբրև հասարակական-քաղաքական անօրինակ գործչի: «Այրող ցավերից ու տագնապներից նա մեծապես ընկճված էր,– նկատում է հատորի խմբագիրը,– որ երևում է հատկապես Էջմիածնի օրագրերից: Բայց իր խոսքով ու գործով, բուն իսկ ներկայությամբ այդ իրական դժոխքում հույս ու հավատ էր ներշնչում շրջապատին: Այդ ոգով են շնչում այդ տարիների նրա բոլոր բանավոր ու գրավոր հրապարակային ելույթները: Նա ժողովրդի բանաստեղծն էր և մեծ պատասխանատվությամբ էր վերաբերվում ամեն իրադրության մեջ նրա հավատն ու ոգին կենդանի պահելու իր նախասահմանված կոչումին: Ժողովրդական մի ասացվածք կա, որ միանգամայն ճիշտ է բնութագրում Թումանյանի այդ օրերի կյանքը՝ սևս ներս եմ արել, սպիտակս՝ դուրսը: Դեպի դուրս ուղղված սպիտակով նա ներշնչում էր իրենից հույս ակնկալողներին, թե՝ «պիտի գա հանուր կյանքի արշալույսը վառ հագած», դեպի ներս ուղղված սևը ոչ մի լավ բան չխոստացող մռայլ ամպերով ճնշում էր հոգին: Այդ էր առհասարակ հայ բանաստեղծի բաժինը ճակատագրից ...»[6]*:*

Տարեգրության երրորդ պարբերացումը կազմված է նույն սկզբունքով, որը հատուկ էր նախորդ երկու շրջափուլերին, պարունակում է տարբեր աղբյուրներից քաղված հսկայածավալ նյութ, որը հնարավորինս ներկայացվել է ամբողջական և առանց կողմնակի միջամտության: Օբյեկտիվությունն ու վավերականությունը հասցված են առավելագույնի: Նյութերի մեծ մասը՝ նամակներ, Գրողների ընկերության, Հայկազյան ընկերության, Հայրենակցական միությունների միության ժողովների արձանագրություններ, Թումանյանի՝ նիստերի ժամանակ հնչեցրած ելույթներ, տպագրվում են առաջին անգամ, և իբրև արժեքավոր վավերագրեր բացառիկ հնարավորություն են ընձեռում նորանոր ուսումնասիրությունների համար:

Առանձնահատուկ է 1919 թվականը, երբ մեծ խանդավառությամբ նշվում է Հովհ. Թումանյանի ծննդյան 50-ամյակը: Չնայած բանաստեղծն ընդդիմանում է հանդիսավոր և ճոխ հավաքույթներին, այնուամենայնիվ հոբելյանը վերածվում է մի իսկական տոնի. փետրվարից մինչև գրեթե ապրիլի վերջը մամուլը, գրական-հասարակական հանդեսները հեղեղված էին Թումանյանի հոբելյանին նվիրված համաժողովրդական ինքնաբուխ միջոցառումների, ցերեկույթների ու երեկույթների մասին պատմող նյութերով, շնորհավորական հեռագրերով և նամակներով, մեծ կամ փոքր ծավալի բազմաթիվ նյութերով, որոնք հագեցած էին մեծարման շնչով ու տրամադրությամբ:

4. Տարեգրության վերջին՝ չորրորդ գիրքը, ամփոփում է բանաստեղծի անձնական, ստեղծագործական և հասարակական կյանքի իրադարձությունները 1920–1923 թվականներին: Դրանք, ինչպես մյուս դեպքերում, ուղղակիորեն աղերսվում էին հայ ժողովրդի ճակատագրին: 20-ականների սկզբին Թումանյանի առաջին հոգսը հայ որբերն ու գաղթականներն էին, 1921 թ.՝ Հայաստանում նորաստեղծ խորհրդային իշխանության դեմ Փետրվարյան ապստամբության օրերին հաշտարարի առաքելությունը, ապա ՀՕԿ-ի հանձնարարութ-

[6] https://www.aravot.am/2019/10/25/1073942/

յամբ, որպես կազմակերպության նախագահ, հոկտեմբերի 29-ին Կ. Պոլիս մեկնելը: Հալածանքներից և արյունահեղ բախումներից ուժասպառ ժողովրդին սովից ու համաճարակներից փրկելու համար որոշվում է դիմել աշխարհասփյուռ հայրենակիցների օժանդակությանը: Առաքելությունը դարձյալ ստանձնում է վատառողջ բանաստեղծը: Մոտ մեկուկես ամսվա ընթացքում Պոլսում հաջողությամբ ավարտելով գործը՝ արդեն հիվանդ բանաստեղծը վերադառնում է Թիֆլիս: Այս ամենով հանդերձ՝ 20-ական թվականների առաջին երեք տարիները, թեև ոչ այնքան բեղմնավոր, բայց և այնպես նշանակալից եղան Թումանյանի ստեղծագործական կյանքում: Թումանյանագիտության մեջ այդ տարիները ընդունված է անվանել քառյակների շրջան. պատահական չէ, որ բանաստեղծը կյանքի վերջին օրերին ամենից շատ ախոսում էր չգրված քառյակների համար:

1923 թ. մարտի 23-ին Թումանյանը վախճանվում է՝ հետը տանելով անավարտ ու դեռևս չծնված ստեղծագործությունների դառը կսկիծը: 1923 թվականը դառնում է Թումանյանական յուբիլինակ տարի: Չորրորդ գրքում ընդգրկված փաստացի վկայությունները ներկայացնում են, որ ինչպես 1919 թ. բանաստեղծի ծննդյան 50-ամյա հոբելյանը վերածվել էր համաժողովրդական տոնահանդեսի, նույն կերպ նրա անժամանակ մահվանը համընդհանուր ցավով են արձագանքում ոչ միայն հայ, այլև Կովկասի բոլոր ժողովուրդները: Մինչև տարեվերջ մամուլը ողողված էր մնում բանաստեղծի մասին հրապարակումներով, որոնք տարբեր դիտանկյուններից վերլուծում ու արժեքավորում էին բացառիկ գրական մի երևույթ, որն արդեն դառնում էր պատմություն:

Տարեգրության չորրորդ գիրքն ընդգրկում է նաև հավելվածներ: Յուրաքանչյուր հատորի տպագրվելուց հետո՝ հաջորդի վրա աշխատելիս, պրպտումների արդյունքում կազմողները հայտնաբերել են փաստական նորանոր նյութեր, որոնք դուրս են մնացել նախորդ երեք հատորներից: Անշուշտ, տարեգրության ժանրի բնույթով պայմանավորված՝ տարաբնույթ նյութերի հայտնաբերումը անակնկալ չի եղել Թումանյանագիտական խմբի անդամների համար: Ընդհակառակը, ամփոփիչ չորրորդ գիրքը կազմելիս խումբն աշխատել է առավել մեծ պատասխանատվությամբ՝ հնարավորինս աչքաթող չանելու ուսումնասիրության դաշտում առկա բոլոր նյութերը՝ տարեգրությունը ամբողջականությամբ ներկայացնելու համար: Հավելենք նաև, որ տպագրված բոլոր հատորների առաջաբաններում խմբագիր Վ. Կիրակոսյանը դիմել է ընթերցողներին՝ իրենց նկատած բացթողումների ու վրիպումների մասին տեղյակ պահելու խմբագրությանը: Որոշ արձագանքներ եղել են, անշուշտ, սակայն հիմնականում կազմողներն իրենք են հայտնաբերել նախորդ ժամանակահատվածներին վերաբերող փաստանյութերը:

Հավելված 1-ում ներկայացվել են բանաստեղծին հասցեագրված 170-ի չափ անթվակիր նամակներ, որոնք պահպանվում են Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում: Հնարավորության դեպքում աշխատել ենք պարզել դրանց ճշգրիտ կամ մոտավոր ժամանակը և ծանոթագրել:

Հավելված 2-ում, ըստ ժամանակագրական հաջորդականության, ներկայացրել ենք նախորդ հատորներից դուրս մնացած նյութերը: Իհարկե, սա չի ենթադրում, թե Թումանյանագիտության խումբն անթերի աշխատանք կատարած լինելու հավակնություն ունի: Ինչպես նկատում է Վ. Կիրակոսյանը,

«Ժանրի բնույթն է այդպիսին. ավելի քան հարյուրամյա վաղեմության տասնյակ հազարավոր վավերագրերի, վկայությունների, անունների, թվերի հորձանքում կազմողների ուշադրությունից չի կարող ինչ-որ մի բան դարձյալ վրիպած չլինել: Բացառված չէ նաև, որ մինչև օրս անհայտ նոր վավերագրեր էլ դեռ կարող են հայտնաբերվել: Ո՞վ կարող էր մտածել, օրինակ, որ Գյոթեի նման մեկի մի ինքնագիր պատառիկ կարող էր հանկարծ հայտնաբերվել Հայաստանի գրապահոցներում... Թումանյանական մի մասունք էլ այդպես կարող է հանկարծ հայտնաբերվել գերմանական կամ մի այլ արխիվային, անգամ անհատական հավաքածուներում... Այս ամենով հանդերձ կազմողների խումբը համոզված է, որ ավելի քան մեկ տասնամյա ջանադիր աշխատանքի արդասիք այս չորս ստվար հատորները հուսալի ուղեցույց ու վավերական սկզբնաղբյուր կարող են լինել Թումանյանագետների այսօրվա և վաղվա սերունդների համար: Իսկ որ այդ ուսումնասիրողները դեռ լինելու են, անկասկած է» (էջ 10):

Այսպիսով՝ Տարեգրության քառահատորը ոչ միայն ի մի է բերում Հովհ. Թումանյանի կյանքի և ստեղծագործության ողջ ժամանակագրությունը՝ ծննդից մինչև մահ, այլև նոր լույս է սփռում Թումանյանի ազգային–քաղաքական մտածողության ու մարդկային նկարագրի, իրականության Թումանյանական ընկալման վրա և այդ համապատկերում նախանշում ժամանակի ամբողջական շրջապտույտը: Բոլոր փուլերում էլ, անկախ ժամանակաշրջանին բնորոշ պատմաքաղաքական առանձնահատկություններից, կենտրոնում Թումանյանի ստեղծագործական-հասարակական, քաղաքական-անձնական կյանքն է, որն ըստ էության մի մեծ համահավաք բնագիր պատմություն է բացառիկ շռայլ և տիեզերական մեծությամբ մի մարդու մասին, որի կյանքի բոլոր օրերը իմաստավորվել են կա՛մ ստեղծագործական, կա՛մ հասարակական, կա՛մ ազգային առաքելության շատ հետաքրքիր ներքին շարժման մի քանի հոսքերով: Հատկապես բանաստեղծի ծավալած ազգանվեր գործունեությունը մեկ անգամ ևս ապացուցում է, որ նա եղել է խոսքի ու գործի մարդ՝ պատրաստ մինչև վերջ կիսելու իր ժողովրդին բաժին հասած տառապանքն ու անվերջանալի փորձությունները: Կյանքի տարբեր փուլերում նա թղթին է հանձնել գեղարվեստական մի շարք ստեղծագործություններ, հոդվածներ, հուշեր, օրագրային գրառումներ, որոնցում քննել է հայ ժողովրդի անցած ճանապարհը, հայ մարդու ճակատագիրը, մեծ ազգերի կեղծ ու շահախնդիր գործունեությունը, մարդ արարածի էությունն առհասարակ:

Տարեգրության չորս շրջափուլերն ընդգրկող նյութերը գալիս են մեկ անգամ ևս հաստատելու այն իրակությունը, որ Թումանյանն իրապես մեծ է ու հանճարեղ ոչ միայն իբրև բանաստեղծ, այլև ազգին նվիրված մարդ–անհատականություն, որի ողջ գիտակցական կյանքը եղավ ողջակեզ իր ժողովրդի համար: «Նա կռվում էր,– գրում է Վ. Կիրակոսյանը,– որ աշխարհը կատարյալ ու գեղեցիկ լինի ոչ միայն իր մայր ժողովրդի, այլև ամբողջ մարդկության համար, և դրման ծագում էր այն տխուր գիտակցությունից, որ իր նմանները դեռ անզոր են աշխարհը վերափոխելու, որովհետև դեռ հեռու է մարդու ճանապարհի «մինչև Մարդը», որովհետև՝ «Մարդակեր գազան» մարդը՝ դեռ երկար էսպես կըմնա» (էջ 10): ... Թումանյանն ամբողջ կյանքում չդադարեց

մանրացած մարդուն վերածնության իր հոգու լույսով ուղեցույց լինելուց, որովհետև «ծով բարություն, շնորհք ու սեր ճոխ պարգև էր առել վերուստ»[7]:

Այսպիսով՝ քառահատոր Տարեգրությունը, ըստ էության, սերունդների համար արված գործ է: Այն վստահելի սկզբնաղբյուր կարող է լինել նաև ապագա ուսումնասիրողների համար: Թումանյանի կյանքին և ստեղծագործությանը վերաբերող վավերական փաստերի ու վկայությունների մեծ մասն ուղեկցվել է համապատասխան ծանոթագրություններով, որոնք հատկապես հատորների խմբագիր Վ. Կիրակոսյանից[8] բավական ջանքեր ու ժամանակ են պահանջել: Վերջին քսան տարիներին Վ. Կիրակոսյանն անձանձիր աշխատանքով ու անխոնջ տքնությամբ, անսպառ և անօրինակ նվիրումով էր աշխատում Տարեգրության հատորների վրա, խստապահանջ գիտնականի բծախնդրությամբ ստուգում, համեմատում, վերծանում, խմբագրում բանաստեղծի գրչին կամ նրա կյանքին ու ստեղծագործությանը պատկանող ցանկացած նյութ, փաստաթուղթ, նամակ, պատառիկ:

Այսօր անվարան կարող ենք հաստատել՝ ընթերցողի սեղանին դրված քառահատոր Տարեգրությունը՝ իբրև հիմնարար աշխատություն, բացառիկ ներդրում է ինչպես թումանյանագիտության, այնպես էլ հայ գրականության պատմության մեջ:

ԵՎԱ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

Բ. գ. դ., ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվ. գրականության ինստիտուտի թումանյանագիտական խմբի ղեկավար, Խ. Աբովյանի անվ. ՀՊՄՀ մայրենիի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դոցենտ: Գիտական հետաքրքրությունները՝ ժամանակակից հայոց լեզու, հայ գրականության պատմություն և քննադատություն, թումանյանագիտություն: Հեղինակ է 3 մենագրության, 3 ուսումնամեթոդական ձեռնարկների և ավելի քան 80 հոդվածի:
MnacakanyanEva@mail.ru

---

[7] *Թումանյան Հովհ. Երկերի լիակատար ժողովածու, հ. 1 (վերախմբագրված հրատարակություն), Երևան, 2018, էջ 317:*

[8] *2019 թ. հոկտեմբերի 25-ին «Առավոտ» թերթին տված հարցազրույցում երջանկահիշատակ Վ. Կիրակոսյանն այն հարցին, թե «չի՞ ափսոսում արդյոք, որ այդքան տարիների ժամանակ ու եռանդ է տրամադրել Հովհ. Թումանյանի կյանքի ու ստեղծագործության տարեգրությանը. չէ՞ որ այդ ընթացքում շատ հեղինակային հոդվածներ ու գրքեր կարող էր գրել», պատասխանել է. «Ոչ, չեմ ափսոսում: Ինչ էլ գրեի, ժամանակի ընթացքում պիտի հնանար ու մոռացվեր, որովհետև նոր ժամանակները միշտ էլ նոր խոսք են պահանջում: Իսկ տարեգրությունը վավերագրերի ժողովածու է և երբեք չի հնանալու, մեկ անգամ է ստեղծվում, բայց մշտապես մնալու է սեղանի գիրք: Հաճախ ինձ ասում են, թե դա իմ կյանքի գիրքն է: Շատ կուզենայի, որ այդպես լիներ»* (https://www. aravot.am/2019/10/25/1073942/)*:*

Ժամանակակիցները չէին սխալվում. չնայած Վ. Կիրակոսյանի գիտական մեծ ժառանգությանը՝ Տարեգրությունն իրապես եղավ նրա ստեղծագործական որոնումների վերջին ու բացառիկ հանգրվանը՝ նրա «կյանքի գիրքը»:

ՀՏԴ : 947.925

Վայոց ձոր. Պատմամշակութային ժառանգության դրվագներ *(հավաքական մենագրություն՝ խմբագրությամբ Տորք Դալալյանի), Եղեգնաձորի երկրագիտական թանգարան, 2021, Երևան, ՀԱԻ հրատ., 296 էջ*:*

Բանալի բառեր՝ Վայոց ձոր, ազգագրություն, բանահյուսություն, հնագիտություն, Արենի, Շատին, Քաջբերունի:

Ներկայացվող հավաքական մենագրությունն ընդգրկում է ավելի քան երկու տասնյակ հետազոտողների ուսումնասիրություններ՝ կապված Վայոց-ձորի մարզի բանահյուսական, ազգագրական, ճարտարապետական, պատմական անցյալի ու ներկայի հետ: Ինչպես գրքի առաջաբանում գրում են ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Պավել Ավետիսյանն ու խմբագիր, բ. գ. թ. Տորք Դալալյանը, «Յուրաքանչյուր հոդված, ըստ էության, կազմում է Վայոց-ձորի պատմամշակութային ժառանգության մի դրվագը, և այդ դրվագները, տրամաբանական շղթայով դրվելով կողք-կողքի ու ամբողջանալով՝ դառնում են իր տեսակի մեջ եզակի կոլեկտիվ մենագրություն, որն իրականացել է տարբեր գիտական հաստատությունների աշխատակիցների միջգիտակարգային հետազոտական ջանքերով» (էջ 12): Այդ գիտական կենտրոններն են՝ ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտը (ՀԱԻ), ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտը (ԱԻ), Մատենադարան Մ. Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտը (ՄՄ), Երևանի պետական համալսարանը (ԵՊՀ), Հայոց ազգագրության պետական թանգարանը (ՀԱՊԹ), ՀՀ պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայությունը (ՊԱԹՊՄՊԾ), Երևանի ռուսական արվեստի թանգարանը (ԵՌԱԹ), Հայաստանի ազգային գրադարանը (ՀԱԳ), Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանը (ՀՊՄՀ), Լոնդոնի Բիրբեքի համալսարանը (ԼԲՀ):

Գիրքը բաղկացած է հինգ մասից (ա. «Վայոց-ձոր. ընդհանուր տեղեկությունները», բ. «Վայոց-ձորի միջնադարյան քրիստոնեական մշակութային ժառանգությունը», գ. «Վայոց-ձորի ոչ-նյութական մշակութային ժառանգությունը», դ. «Վայոց-ձորի հնագիտական ժառանգությունը», ե. «Հաղորդումներ»), որոնք ամբողջանում և դառնում են համալիր աշխատանք՝ լույս սփռելով Վայոց-ձորի պատմության վրա:

Ա. «Վայոց-ձոր. ընդհանուր տեղեկությունները»

Գրքի առաջին մասում զետեղված հոդվածները Վայոց-ձորը հիմնականում քննում են ժողովրդագրական տեսանկյունից, որը, կարծես, հիմք է նախա-

---

* *Ներկայացվել է 21. II. 2023 թ., ընդունվել է տպագրության 19. VI. 2023 թ.:*

պատրաստում հետագա հոդվածների երևան գալու համար՝ դառնալով գրքի իմաստաբանական շղթայի առաջին օղակը: Այդ առումով ուշագրավ է բանագետ, բ. գ. թ. Էսթեր Խեմչյանի (ՀԱԻ) «Վայոց-ձոր տեղանվան ստուգաբանական ավանդազրույցները» (էջ 24–30) հոդվածը, որը թեպետ բանագիտական ժանրի ուղղվածություն ունի, բայց միաժամանակ պարունակում է նաև մատենագիտական ու պատմական հարուստ աղբյուրներ (Խորենացի, Գանձակեցի, Մանանդյան և այլք), որոնք էլ ավելի արժանահավատ են դարձնում մարզի անվան ստուգաբանական պնդումները: Հեղինակը մանրամասն քննում է մարզի անվան ծագումը՝ հենվելով մեր նշանավոր պատմիչների հաղորդած տվյալներին, որոնք նա համադրում է առկա ազգագրական-բանագիտական նյութին և հանգում կարևոր եզրահանգումների: «Այսպիսով, Վայոց-ձորի՝ մեզ հասած ստուգաբանական ավանդազրույցների քննությունը ցույց է տալիս, որ դրանց վերջնական ձևավորումը ժամանակագրորեն հանդես է եկել 8-րդ դ. Մոզի երկրաշարժից հետո, ուստի դրանք իրենց նախնական ենթադրյալ տարբերակներից շատ են հեռացել» (էջ 27), – եզրակացնում է Է. Խեմչյանը:

Հետաքրքրական տվյալներ է պարունակում ժողովրդագրության մասնագետ, ազգագրագետ, պ. գ. թ. Համլետ Սարգսյանի (ՀԱԻ) «Վայոց-ձորի բնակչության էթնոժողովրդագրական գործընթացները 1873–1939 թթ.» (էջ 31–45) խորագրով հետազոտությունը, որը փաստական հարուստ նյութի առկայությամբ լույս է սփռում մարզի՝ ավելի քան հարյուր տարվա ժողովրդագրական տվյալների վրա: Ուշագրավ է այն հանգամանքը՝ հեղինակն իր ուսումնասիրության մեջ օգտագործել է ոչ միայն փաստական կարևոր սկզբնաղբյուրներ (մարդահամարի տվյալներ, ազգագրական նյութեր և այլն), այլև մատնանշել է որոշ աղբյուրներ, որոնք ժամանակին (հիմնականում՝ ցարական շրջանում) ոչ ճիշտ տեղեկություններ են հաղորդել: Ամփոփելով իր ուսումնասիրությունը՝ Հ. Սարգսյանը գրում է, որ նշված ժամանակաշրջանում Վայոց-ձորի բնակչության թիվը, որոշ տատանումներով, ավելացել է 1.8 անգամ կամ 80.7 %-ով: Տարեկան միջին աճի տեմպերը 1886–1897 թթ. կազմել են 3.6 %, 1905–1914 թթ. արձանագրվել է միջին տեմպ՝ 11.6 %, իսկ 1926–1939 թթ. առանձնապես բարձր տեմպ՝ 53.3 %: Շատ կարևոր է հեղինակի բերած այն փաստը, ըստ որի՝ հայերն այդ շրջանում կազմել են բնակչության 81 %-ը, այսինքն՝ ճնշող մեծամասնությունը: Այս հոդվածը կարևոր է նաև հարևան թշնամական երկրի հակահայկական քաղաքականության դեմ պայքարի առումով:

Ուշագրավ է պ. գ. թ. Սուսաննա Ադամյանի (ՀԱԻ) «1905–1906 թթ. «Հայ-թաթարական» ընդհարման պատմությունից» (էջ 46–56) ուսումնասիրությունը, որը նորովի է մեկնաբանում անցյալ դարասկզբին Արևելյան Հայաստանում կազմակերպված հայության զանգվածային ջարդերը, որոնք, ինչպես հաստատում են հեղինակի բերած աղբյուրները, հրահրված են եղել Օսմանյան կայսրության կողմից: Հոդվածում նշվում է, որ Բաքվում, Գանձակում, Նախիջևանում և այլուր հայության ջարդերի կազմակերպման համար թուրքական իշխանությունները սկզբում զենք ու զինամթերք են բաժանել հետագայում աղրբեջանցի հորջորջված կովկասյան մուսուլմաններին՝ նախօրոք ամեն քայլը համաձայնեցնելով ավելի վաղ ընտրված պարագլուխների հետ:

Ընթերցելով ուսումնասիրությունը՝ հասկանալի է դառնում, որ այդ ողբերգական անցքերի անպատժելիությունն ավելի ուշ՝ դարավերջին, նոր ցեղասպանություններ և էթնիկ զտումներ ծնեց հայության դեմ Բաքվում, Սումգայիթում, Լեռնային ու Դաշտային Արցախի տարածքներում: Հոդվածագրի եզրակացություն-պնդումը հետևյալն է. պետք է ապավինել սեփական ուժերին, քանի որ «1905–1906 թթ. ընթացքում, որտեղ որ հայերը դիմադրեցին և ինքնապաշտպանություն ցուցաբերեցին՝ ունեցանք քիչ զոհեր և վնասներ» (էջ 53):

Գրքի առաջին մասը եզրափակում է էթնոսոցիոլոգ, պ. գ. դ. Միհրան Գալստյանի *(ՀԱԻ) «Աշխատանքային միգրացիան և սոցիալ-մշակութային փոփոխությունները Վայոց-ձորում» (էջ 57–65) չափազանց արդիական ուսումնասիրությունը: Հեղինակը համակողմանի քննության է ենթարկել հետանկախության շրջանում Վայոց-ձորում տեղի ունեցած միգրացիոն շարժերն ու հանգել եզրակացության, համաձայն որի, միջին հաշվարկով Վայոց-ձորից ամեն տարի հեռացել և չի վերադարձել 391 մշտական բնակություն ունեցող մարդ (էջ 57): Ուսումնասիրողի համար, բացի պետական մարդահամարներից, հարուստ փաստական աղբյուրներ են հանդիսացել նաև տեղում՝ Վայոց-ձորի հինգ գյուղերում (Արենի, Գլաձոր, Ագարակաձոր, Արփի, Աղավնաձոր) բնակիչների հետ 2005 և 2014 թթ. իրականացված թվով 23 հարցազրույցները: Մ. Գալստյանը, հենվելով փաստական նյութի վրա, գտնում է, որ դեռևս XIX դարի երկրորդ կեսից արդեն արտագնացությունը պայմանավորված է եղել աղքատությամբ (էջ 57): Նա գրում է, որ այսօր էլ մարզում արտագնացությունը շարունակում է մեծ ցուցանիշներ գրանցել. «Արենի գյուղից ամեն տարի աշխատանքային արտագաղթի է մեկնում միջին հաշվով 300 մարդ, Գլաձորից՝ 800, Ագարակաձորից՝ 300, Արփիից՝ 300, Աղավնաձորից՝ 400 մարդ» (էջ 58): Այսպիսով, գիտնականը եզրակացնում է, որ աշխատանքային միգրացիան ազդել և ազդում է մարզի բնակչության տնտեսական վիճակի ու սոցիալ-մասնագիտական կառուցվածքի վրա:*

Բ. «Վայոց-ձորի միջնադարյան քրիստոնեական մշակութային ժառանգությունը»

Գրքի երկրորդ մասում անդրադարձ է կատարվել միջնադարում մարզում ստեղծված քրիստոնեական ժառանգությանը, որոնք կարևոր են մի քանի հայեցակետերով: Առաջին ուսումնասիրությունը՝ «Վանքերի և ուսումնական կենտրոնների ծաղկումը Վայոց-ձորում» (էջ 68–77), պատկանում է պատմաբան-արվեստաբան, պ. գ. դ. Կարեն Մաթևոսյանին *(ՄՄ), ով, անդրադառնալով միջնադարյան Վայոց-ձորին, ներկայացնում է այնտեղ տիրող քաղաքական, մշակութային կյանքին և դրանից բխող դրական ու բացասական հետևանքներին: Հեղինակը նախ գրում է Օրբելյան և Խաղբակյան (Պռոշյան) իշխանական տների միջև առկա մրցակցության մասին՝ ընդգծելով նրանց դիրքորոշումները՝ կապված մոնղոլական աշխարհակալության հետ և գավառի տարածքում ունեցած դիրքերը: Կարևոր անդրադարձ է կատարված նաև Վայոց-ձորի մյուս վանքերին ու եկեղեցիներին (Նորավանք, Սբ. Աստվածածին, Արատեսի վանք, Ցախաց քարի վանք, Աղավ անապատ, Քարկոփի վանք, Թանատի վանք, Սբ. Հովհաննես Կարապետի վանք), որոնք, իհարկե, ոչ Գլաձորի ու*

Հերմոնի չափ, բայց բավական դրական ազդեցություն են թողել ժամանակի հայ իրականության վրա:

«Թորոս Տարոնցին՝ Գլաձորի համալսարանի նշանավոր գործիչը» (էջ 78 – 89) ուսումնասիրության մեջ արվեստաբան Նաիրա Նազարյանն *(ԱԻ) անդրադառնում է XIV դարում ստեղծագործած մանրանկարիչ, Գլաձորի համալսարանի սան, Եսայի Նչեցու աշակերտ Թորոս Տարոնցուն: Չնայած մի շարք ուսումնասիրողների (Սիրարփի Տեր-Ներսեսյան, Լիդա Դուռնովո, Արամ Ավետիսյան, Էմմա Կորիմացյան և ուրիշներ) կողմից Տարոնցու թողած ժառանգությունը քննվել է, սակայն, ըստ հեղինակի, այն ցայսօր պատշաճ չի ուսումնասիրվել և կարիք կա հիմնովին ուսումնասիրության: Հոդվածում հեղինակը մանրամասն ներկայացնում է Տարոնցու դերն ու դիրքը Գլաձորի համալսարանում: Գնահատելի են հատկապես քննությունները՝ կապված Տարոնցու՝ Տերունական և Ավետարանիչների պատկերների ստեղծման առանձնահատկությունների հետ: Նա մանրամասն զննության է ենթարկել նաև մանրանկարչի գունապնակը, դրանցով ստեղծված կերպարները, դեմքերը, միջավայրը և դեկորացիան:*

Տիգրան Գրիգորյանի *(ԵՌԱԹ) հետազոտությունը վերաբերում է Վայոց-ձորի Սբ. Աստվածածին (Բուրթելաշեն) եկեղեցու արևելյան ճակատին պատկերված բարձրաքանդակի խորհրդաբանությանը («Ճանկող արծիվը» և «Երկնային Թագավորության» խորհրդանշանները Նորավանքի պատկերաքանդակներում») (էջ 90–100): Հեղինակն անդրադառնում է Նորավանքի վանական համալիրում առանցքային դիրք ունեցող Բուրթելաշեն Սբ. Աստվածածին եկեղեցուն՝ ընդգծելով տեղակայման յուրահատուկ սկզբունքն ու երկհարկ պաշտամունքային կառույցների տիպին պատկանելու փաստը: Մանրամասնորեն ներկայացնում է արևելյան ճակատի պատկերագրական համակարգը, աստղակերպ մարմինների խորհրդաբանություններն ու զուգահեռները, խաչային հորինվածքները: Այնուհետև Եռագոտի քանդակային հարդարանքը մեկնաբանում է աստիճանական հաջորդականությամբ: Երրորդ գոտին, ըստ նրա, խորհրդանշում է «Երկնային Թագավորության» մեծ համապատկերի մաս կազմող «փոքր տիեզերքի» մոդելը: Երկրորդ գոտում պատկերված Խաչի մեծաղիր հորինվածքը խորհրդանշում է «Փրկության» գաղափարը: Իսկ առաջին գոտում «Ճանկող արծվի» պատկերն է, որը եզրափակում է բարձրաքանդակի հորինվածքը (էջ 100): Ուսումնասիրողն ամենաշատն անդրադարձել է այս գոտուն՝ այն դարձնելով ուսումնասիրության հիմնական առանցքը: Հղում անելով Կ. Մաթևոսյանին՝ նշում է՝ արծիվը կերպափոխված հրեշտակն է, որն Ահեղ Դատաստանի ժամին պետք է հափշտակի և երկնային արքայություն տանի հանգուցյալի մարմինը (էջ 95): Հեղինակը մանրամասն ցույց է տալիս հորինվածքի ներդաշնակությունն ու գաղափարական համապատասխանությունը՝ նշելով, որ չկան ավելորդ զարդանախշեր: Այնուամենայնիվ, հոդվածի հիմնական նպատակն արծվաքանդակի խորհրդաբանական քննությունը, բացահայտումն ու տարածման ուղիների փնտրտուքն է արևելաքրիստոնեական արվեստում, որը հաջող սկսել և ավարտել է Տ. Գրիգորյանը:*

«Հոգու փրկության համար մատուցվող պատարագները Վայոց-ձորի վիմական արձանագրություններում և հայ վիպական բանահյուսության մեջ» (էջ 101–108) խորագրով հոդվածում Սիրանույշ-Նռանե Առաքելյանն *(ՀԱԻ)*

անդրադառնում է Վայոց-ձորի վիմական արձանագրություններում առկա հոգու փրկության համար պատվիրված Պատարագի արձանագրություններին, որոնք հեղինակը զուգահեռել է համապատասխան բանահյուսական նյութին: Առաքելյանն անդրադարձել է վիմագիր տեքստերի սոցիալ-մշակութային առանձնահատկություններին, հավատալիքներին և պատկերացումներին, Պատարագի ընկալմանը հայ վիպական բանահյուսության մեջ, կրոնական ծեսերին ու դրանց փոխակերպմանը: Նկատենք, որ հայ վիպական բանահյուսության մեջ բավական ծավալուն ընդգրկում ունեցող այս թեման մշտապես գրավել է բանագետների ուշադրությունը: Այս հոդվածի արժանիքներից մեկն էլ դա է, մանավանդ որ նա աշխատանքին մոտեցել է գիտական բարեխղճությամբ, որոնք առավել հավաստի են դարձնում իր պնդումները: Ուսումնասիրության առավելությունը կարող է հիմք ծառայել հետագա՝ առավել ծավալուն ու երկարատև հետազոտությունների համար:

Ժողովածուի երկրորդ մասն իր «Վայոց-ձորի եկեղեցաշինական ավանդազրույցները և սրբավայրերը» (էջ 109–115) ակնարկով եզրափակում է բանագետ, բ. գ. թ. Է. Խեմչյանը (ՀԱԻ): Այստեղ նա անդրադառնում է Վայոց-ձորի գավառի եկեղեցիների և մյուս սրբավայրերի հետ կապված ավանդազրույցներին, որոնք հիմնականում շոշափում են դրանց շինարարության կամ շինարարության գաղափարի հղման, մղման կամ պատվերի հետ կապված զրույցները: Գավառի բազմաթիվ եկեղեցիների մասին առկա ավանդազրույցները, ինչպես նաև հեղինակի տասնամյակների փորձը թույլ են տվել նրան կատարել համապարփակ ուսումնասիրություն՝ մեկտեղելով բազմաթիվ ավանդազրույցներ, և մեկ օբյեկտիվի տակ առնել մարզի եկեղեցաշինությանն առնչվող բանավոր զրույցները: Է. Խեմչյանն անդրադառնում է Գնդեվանքի, Նորավանքի և մյուս եկեղեցիների ու սրբավայրերի կառուցմանը՝ չմոռանալով նաև սրբավայր-ուխտավայրերը, որոնք նույնպես հավատքի հզոր կենտրոններ են Վայոց-ձորի և, առհասարակ, Հայաստանի բոլոր շրջանների համար:

Գ. «Վայոց-ձորի ոչ-նյութական մշակութային ժառանգությունը»

Գրքի երրորդ մասը ներկայացնում է Վայոց-ձորի բանահյուսական-ազգագրական ժառանգությունը, որը շատ հարուստ է և ուսումնասիրված տարբեր հետազոտողների կողմից: Բայց պետք է նկատի ունենալ՝ ի տարբերություն, օրինակ, ճարտարապետական կոթողների, որոնք մեկ անգամ ստեղծվում են և մնում այնպիսին, ինչպիսին կան, բանահյուսական ժառանգությունն անընդհատ զարգացման ընթացքի մեջ է գտնվում՝ փոփոխվելով, աշխարհագրական տիրույթները մեծացնելով, հաճախ նաև, ցավոք, մոռացվելով: Այդ առումով խիստ հետաքրքրական և արդիական է գրքի այս մասը:

Բանագետներ, բ. գ. թ. Լուսինե Ղռեջյանն (ՀԱԻ) ու բ. գ. թ. Լուսինե Հայրիյանն (ՀԱԻ) իրենց «Վայոց-ձորի բանահյուսական մշակույթը բանագետ-բանահավաքների գրառումներում» (էջ 118–127) ուսումնասիրության մեջ անդրադառնում են XIX դարավերջին և XX դարի կեսերին Վայոց-ձորում բանահավաքչություն իրականացրած բանագետ-բանահավաքների ահռելի աշխատանքին, որոնք կարևոր են եղել ոչ միայն տվյալ ժամանակաշրջանում, այլև՝ այսօր: Հատկապես մեծ ուշադրություն է դարձված տարածաշրջանի, թերևս, առաջին բանահավաք-ազգագրագետ Քաջբերունուն, ով, մասնագիտությամբ լինելով բժիշկ, գրառել և մոռացությունից փրկել է բանահյուսա-

կան մեծաքանակ նյութ, որն այսօր էլ պիտանի է նոր ուսումնասիրություն-ների համար: Անդրադարձ է կատարված նաև անվանի ազգագրագետ-բանա-հավաք Երվանդ Լալայանին, ով բացառիկ կերպար է ոչ միայն հայ բանա-գիտության մեջ, այլև՝ հենց վայոցձորյան բանավոր ժառանգության գրառ-ման ու դասակարգման գործում: Հեղինակների ուսումնասիրությունը վերս-տին ցույց է տալիս Վայոց-ձորի բանավոր մշակույթի կարևորությունն ու ա-ռանձնահատկությունը՝ միաժամանակ մեկ շրջանակի մեջ լույս սփռելով այդ անգնահատելի հարստությունը գրառողների և սերունդներին ժառանգողների վրա:

Բանագետ, բ. գ. թ. Մարինե Խեմչյանի *(ՀԱԻ) ուսումնասիրությունը՝ «Բա-նագետ Սարգիս Հարությունյանի վայոցձորյան բանահյուսական հավա-քածուն» (էջ 128–141) նվիրված է հայ բանագիտության հսկաներից Ս. Հա-րությունյանի՝ Վայոց-ձորում գրառած հավաքածուին: Հեղինակը նախ ընդ-գծում է հայ բանագիտության ասպարեզում նրա ունեցած մեծ ավանդը: Այ-նուհետև գրում է, թե ինչպես է անցյալ դարի 50-ականների վերջին դեռ ասպիրանտ Ս. Հարությունյանը հայտնվել Վայոց-ձորում և զբաղվել բանա-հավաքչությամբ: Շատ կարևոր է այն հանգամանքը, որ հանելուկներով հետաքրքրվող ասպիրանտը չի զլացել գրի առնել նաև բանահյուսական այլ նմուշներ: Հոդվածին առավել արժեք է հաղորդում և այն, որ ուսումնասիրողն աղյուսակների միջոցով ներկայացրել է բանասացների անունները, տարիքը, սեռը, բնակության վայրը և նյութի ժանրը: Այդ հավաքածուն մասնակիորեն ցույց է տալիս անցյալ դարի 50-ականներին Վայոց-ձորում կենցաղավարող բանահյուսական նյութերի պատկերը:*

Զափազանց ուշագրավ ուսումնասիրություն է «Հովհան Օձնեցու վիպա-շարի վայոցձորյան տարբերակն ըստ Քաջբերունու գրառման» (էջ 142–154) հոդվածը, որը կատարել է բանագետ-լեզվաբան, բ. գ. թ. Տորք Դալալյանը *(ՀԱԻ)՝ անդրադառնալով Քաջբերունու «Ճանապարհորդական նկատողու-թիւնք» աշխատությանը և դրանում տեղ գտած, Վայոց-ձորի մարզի Խաչիկ գյուղում բանասաց Թադոսից գրառած՝ Հովհաննես Օձնեցուն վերաբերող պա-տումներին: Ուսումնասիրողը, հենք ունենալով Քաջբերունու գրառած պա-տումնաշարը, անդրադառնում է Օձնեցու՝ որպես ռազմիկ-պատանիների հո-վանավոր ընկալմանը՝ վերլուծելով և մեկնաբանելով Վայոց-ձորում փեսայի գլուխը սափրելու ծիսակատարությունը՝ ընթերցողին ներկայացնելով նաև դրա նշանակությունը: «Ցորենը՝ որպես ազգային ինքնության խորհրդանիշ» ենթավերնագրի ներքո Տ. Դալալյանն անդրադառնում է բանահավաքի կող-մից գրառած «հոռոմների» կողմից հայերին ցորենի հաց թխելու արգելքի մասին՝ հիշատակելով մահամերձ որդու համար հաց խնդրող և «հոռոմ» ջրա-ղացպանից մերժվող պառավի ավանդազրույցն ու Օձնեցու «ներկայութ-յունն» այդ ավանդազրույցում: Հաջորդիվ ներկայացնում է ավանդազրույցի վայոցձորյան տարբերակը, որտեղ նա նկարագրվում է որպես ոսկեփայլ մո-ռուքով մարդ: Այնուհետև հաջորդաբար անդրադառնում է ոսկու և ոսկեփայլ մորուքի խորհրդանիշին, նրա՝ «թուղթ ու գիր» անելու կարողությանը, «հո-ռոմների» դեմ կռվում նշանակած արաբ հրամանատար կարմրախաչ Ալուն ու խաչանիշ թրին, կամրջի մոտիվին և խորհրդավոր կամրջի վրա յոթ հայ մարդու չզոհաբերման խնդրի լուծմանը: Հետաքրքրական է նաև Տ. Դալալ-*

յանի՝ գլխի մազափնջի խորհրդաբանական ընկալման վերլուծությունը: Ուսումնասիրողը նաև սահմանում է այդ սովորույթի աշխարհագրությունը՝ Հունաստանից մինչև Իրան, անդրադառնում թեման ուսումնասիրած հայ և օտարազգի ուսումնասիրողներին, «հոռոմների» եպիսկոպոսներին պղնձի մեջ խաչելու մոտիվին՝ այն համեմատելով Լոռիում գրառված մի պատմի հետ, որում Հունաց պատրիարքն էր սպառնացել պղնձի մեջ եռացնել հենց իրեն: Հոդվածում ուսումնասիրողը նաև ներառել է Քաջբերունու գրառած Օձնեցու և արաբների դաշինքի մասին առկա ավանդազրույցը, ըստ որի՝ ամեն հայ հարկատու էր խալիֆին, իսկ արաբներն անցնելիս, եթե քնած հայ տեսնեին, պետք է իրենց հագուստի քղանցքով ստվեր գցեին նրա վրա, մինչև արթնանար: Ի պատասխան դրա՝ հայերը պարտավոր էին փողոցում արաբի հանդիպելիս դուրս գալ ճանապարհից և գիջել նրան՝ ի պատիվ արաբական ցեղի (էջ 150): Այս ավանդազրույցը շատ հետաքրքրական ու արժեքավոր է, մանավանդ՝ ժողովրդական մտածողության տեսանկյունից, քանի որ քնած հայերին ստվերելու դրվագը, թվում է, մի տեսակ բանահյուսական սփոփանք է, իղձ, ժողովրդի հավաքական երազանք, որը ժամանակին ավելացվել է բուն տարբերակին՝ երևի մեղմելու համար արաբների հանդեպ մեր հարկային պարտավորությունների պատիվ չբերող դրվագը, որը, ցավոք, իրականություն է: Այսպիսով՝ Տ. Դալալյանը նոր լույսի տակ շահեկան քննության է ենթարկում Քաջբերունու՝ Օձնեցուն վերաբերող վայոցձորյան պատումնաշարը՝ բանահավաքի նյութը համեմելով արժանահավատ տեսակետներով և գիտական վերլուծություններով:

Հենց այս առումներով շնորհակալ գործ է նախաձեռնել պատմագիտության դոկտոր, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի փոխտնօրեն և ԵՊՀ Հայաստանի հարակից երկրների պատմության ամբիոնի պրոֆեսոր Կարեն Խաչատրյանը՝ ընթերցող լայն հասարակության դատին ներկայացնելով արժեքավոր «ԽՍՀՄ կազմավորումը և Հայաստանը: Գործընթացը, արդյունքներ (ԽՍՀՄ կազմավորման 100 ամյակին)» ռուսալեզու աշխատությունը: Այն ունի հավասարապես կարևոր և արդիական նշանակություն ինչպես պատմագիտական, այնպես էլ՝ քաղաքական տեսանկյունից:

Նախաբանից, երկու գլխից, վերջաբանից և հավելվածից բաղկացած ուշագրավ աշխատության մեջ հեղինակն անաչառ ու անկողմնակալ մոտեցմամբ, խորը և նուրբ դիտողականությամբ, փաստառատ նյութերի ու արժանահավատ վավերագրերի հիման վրա լուսաբանել է Հայաստանի պատմությունը Անդրկովկասյան Խորհրդային դաշնության և ԽՍՀՄ-ի կազմավորման գործընթացում: ԽՍՀՄ կազմավորումը շրջադարձային պատմափուլ եղավ ինչպես խորհրդայնացված մյուս հանրապետությունների, այնպես էլ՝ Խորհրդային Հայաստանի կյանքում: Անդրդաշնության միջոցով ԽՍՀՄ-ի կազմի մեջ մտնելը Խորհրդային Հայաստանի համար նշանավորվեց թե՛ նկատելի կորուստներով և թե՛ նշանակալի ձեռքբերումներով: Դրանք երկուստեք բխում էին բոլշևիկյան ունիտար պետության ստեղծման գաղափարների տրամաբանությունից: Ամփոփ ներկայացնելով որոշ արդյունքներ՝ պատմաբանը մատնանշում է Խորհրդային Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի տեղն ու դերը հայ ժողովրդի և հայոց պետականության պատմության մեջ:

Հավատարիմ պատմահետազոտության առանցքային հարացույցին՝ պատմականությանը՝ Կ. Խաչատրյանին հաջողվել է օբյեկտիվորեն վեր հանել մեր ժողովրդի ոչ հեռավոր անցյալի՝ ուղիղ մեկ հարյուրամյակ առաջ տեղի ունեցած բախտորոշ իրադարձություններն ամբողջության մեջ և այժմեականության մի շարք բարդ իրողություններ մատուցել դրանց լույսի ներքո:

Աշխատության շարադրանքի բուն նյութին չզիջող նախաբանում Կ. Խաչատրյանը խիստ համառոտ, բայց համոզիչ ու հստակ ներկայացնում է Խորհրդային Հայաստանի պատմության ուսումնասիրության ներկա վիճակը և հարցադրումների միջոցով ապագա պատմաբանների առջև հետազոտության լայն դաշտ բացում Խորհրդային Հայաստանի՝ այդ դարաշրջանի պատմության ճշմարիտ, համակողմանի վերարժևորման համար:

Աշխատանքի առաջին գլխում, ուր ներկայացվում է Հայաստանի խորհրդայնացումն ու Ռուսաստանի հետ միջպետական և Անդրկովկասյան խորհրդային հանրապետությունների հետ նույն բնույթի հարաբերությունների հաստատմանը զուգահեռվող գործընթացները, պատմաբանը միանգամայն իրավացիորեն ընդգծում է այն անհերքելի միտքը, որ հանրապետությունների միավորման նախապատրաստման ընթացքում կենտրոնական կուսակցական ղեկավարության որոշումները տեղերում ընդունվում էին առանց որևէ փոփո-

խության, գրեթե կրկնվում էին նաև հանրապետությունների միջև կնքված նմանատիպ պայմանագրերը և այլն: Նման մոտեցումն ինքնին հատկանշում է ապագա ձևաչափով միության ներպետական հարաբերությունների բնույթն ու զարգացման հեռանկարները՝ վերածվելով յուրօրինակ չափորոշիչային մեկնաբանության նախահիմքի՝ հասկանալու ապահնտեգրման և ինտեգրման ակադեմիական առանձնահատկությունները և ընկալումները:

Կարծում ենք, որ առավել ուժեղավոր է նաև աշխատանքի երկրորդ գլուխը, որտեղ լուսաբանվում է Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի ձևավորման գործընթացը՝ պատմաքաղաքական և իրավական վերահմաստավորման դիտանկյունից: Այն կարող է բանալի հանդիսանալ մեր օրերում Արցախի հիմնախնդրի արդարացի լուծման համար: Կ. Խաչատրյանն ընդգծում է՝ Լեռնային Ղարաբաղի՝ որպես ինքնավար մարզ կարգավիճակը բավականին բարձր էր ԽՍՀՄ կազմում. այն գիջում էր միայն միութենական ազգային հանրապետության և նրա կազմում գտնվող ինքնավար հանրապետության կարգավիճակին: Բացառապես դրա շնորհիվ էր, որ խորհրդային տարիներին արցախահայությանը հաջողվեց դիմակայել Ադրբեջանի սադրանքներին և ազգային խտրականության քաղաքականությանը, ինչը հատկապես դրսևորվում էր մարզի ժողովրդագրական գործընթացներում: Արցախը զերծ մնաց Նախիջևանի ճակատագրից, իսկ արցախահայությունը հնարավորություն ստացավ հռչակել իր անկախ պետականությունը: Կարևոր է նաև՝ օտարալեզու ընթերցողներին հասցեագրված այս աշխատությունում ցույց է տրվում, որ տասնամյակներ շարունակ անփոփոխ է մնացել Լեռնային Ղարաբաղը (Արցախը) հայաթափելու, հայկական երկրամասն ամբողջությամբ նվաճելու թուրք-ադրբեջանական ազգայնամոլական քաղաքականությունը:

Հարկ է նկատել, որ աշխատության ռուսերենով հրատարակումը հնարավորություն է ընձեռում խնդրո առարկա հիմնահարցերը խորությամբ և հանգամանալից ներկայացնելու նաև ռուս ընթերցողին: Կարծում ենք, որ հրատապ անհրաժեշտություն է գիրքը հրատարակել նաև օտար այլ լեզուներով, մասնավորապես՝ անգլերենով, ֆրանսերենով և այլն՝ միջազգային հանրությանը աշխատության մեջ արծարծված հիմնախնդիրն առավել պարզորոշ ու հստակ ներկայացնելու նպատակով:

Վերջաբանում Կ. Խաչատրյանը համոզիչ, առանց ընթերցողի ուշադրությունը ծանրաբեռնելու, հիմնավոր փաստերով ամփոփում է իր կողմից ներկայացվող հիմնախնդիրը՝ հանգուցալուծման բոլոր տեսանելի և նվազ տեսանելի դրսևորումներով:

Աշխատանքը գալիս է լրացնելու քննարկվող հիմնախնդրի հետազոտության այն բացը, որը հաճախ տարընթերցումների տեղիք է տվել:

ԷԴՈՒԱՐԴ ԶՈՀՐԱԲՅԱՆ

Պ. գ. թ., դոցենտ, ԵՊՀ Հայաստանի հարակից երկրների պատմության ամբիոնի վարիչ: Գիտական հետաքրքրությունները՝ Խորհրդային Հայաստանում գիտության զարգացման, Հայաստանի Հանրապետության սոցիալական կառուցվածքի ձևավորման, Վրաստանի, Ադրբեջանի պատմության և այլ հիմնահարցեր: Հեղինակ է 1 մենագրության և շուրջ 50 հոդվածի:
eduardzohrabyan@ysu.am

ՀՏԴ :929:891.981Միքայելյան

ԿԱՐԵՆ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
(Ծննդյան 140-ամյակի առթիվ)*

Գրական, հասարակական և մշակութային ակտիվ գործիչ, արձակագիր, դրամատուրգ, թարգմանիչ, հրապարակախոս Կարեն Սարգսի (ռուսական միջավայրում՝ Գերասիմ Սերգեևիչ) Միքայելյանը (1883–1941) ապրել և ստեղծագործել է պատմական մի ժամանակաշրջանում, որը հագեցած էր քաղաքական բուռն զարգացումներով:

XX դարի առաջին կեսի հայ գրականության ու մշակույթի պատմության մեջ Կ. Միքայելյանն իր գրական, հասարակական-հայրենասիրական գործունեությամբ արժանի տեղ է գրավում:

Կարեն Միքայելյանը ծնվել է հոկտեմբերի 19-ին Երևանի նահանգի Նախիջևանի գավառի Վերին Ագուլիս գյուղաքաղաքում: Սովորել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում, 1905 թվականից՝ Մոսկվայի համալսարանում՝ որպես ազատ ունկնդիր, ապա՝ Ենայի (Գերմանիա) համալսարանի փիլիսոփայության ֆակուլտետում:

Երիտասարդը թևակոխում է նոր հարյուրամյակ, որը լի է ճակատագրական իրադարձություններով՝ 1905 թ. ռուսական հեղափոխություն և ցարական իշխանությունների կողմից հրահրված հայ-ադրբեջանական ջարդեր, Առաջին համաշխարհային պատերազմ ու 1915 թ. Հայոց ցեղասպանություն, 1917 թ. Հոկտեմբերյան հեղափոխություն, ապա քաղաքացիական պատերազմի քաոս, երեսունականներին աստիճանաբար սաստկացող տոտալիտար ռեժիմ…

Միքայելյանի՝ 1900–1937 թթ. ինքնատիպ գեղարվեստական ստեղծագործությունը (պատմվածքներ, նովելներ, գեղարվեստական ակնարկներ, էսսեներ) գրավել է հայ և ռուս ընթերցողի, ինչպես նաև գրաքննադատների ու մամուլի ուշադրությունը, արժանացել նրանց դրական գնահատականների: Առաջին գործերը մամուլում («Նոր դար», «Մշակ» և այլն) տպագրվել են դեռ 1900–1903 թթ., իսկ հասուն գրական երկերը՝ «Հացթուխ Սիմոնը», «Հեռավոր որոտներ», «Փորձության ժամին» ու այլ պատմվածքներ, լույս են տեսել 1907-ին Թիֆլիսում տպագրված ստեղծագործությունների առաջին՝ «Զրկանքի հույզեր» գրքում: Այդ շրջանի երկերում նկարագրված տրամադրությունները պատահական չէին՝ դարասկզբի եվրոպական ու ռուսական հասարակական-քաղաքական կյանքը մեծ ազդեցություն էր թողել Մոսկվայի և Ենայի համալսարաններում ուսանած տարիներին:

1910–1912 թթ. Միքայելյանը մոսկովյան «Գարուն» գրական-գեղարվեստական ալմանախի նախաձեռնողներից, հիմնադիրներից և ակտիվ մասնա-

---

* Ներկայացվել է 03. III. 2023 թ., ընդունվել է տպագրության 19. VI. 2023 թ.:

կիցներից է: Տարեգրքի նպատակն է եղել հայ հասարակությանը ծանոթացնել ազգային գրականության նոր դեմքերին, համախմբել տաղանդավոր երիտասարդներին, գեղարվեստական միջավայր ստեղծել ոչ միայն Ռուսաստանում, այլև հայկական այլ համայնքներում՝ Եվրոպայում, Ամերիկայում, Մերձավոր Արևելքում: Խմբագրությունում, բացի Միքայելյանից, ընդգրկվել են Ալ. Ծատուրյանը, Վ. Տերյանը, Յ. Խանզադյանը, Պ. Մակինցյանը, Կ. Կուսիկյանը, Ա. Մյասնիկյանը և այլք: Ալմանախում տպագրվել են Ավ. Իսահակյանը, Ալ. Ծատուրյանը, Վ. Տերյանը, Հ. Հակոբյանը, Շ. Կուրղինյանը, Ա. Ահարոնյանը, Դ. Դեմիրճյանը, Վրթ. Փափազյանը, Լ. Շանթը, Ալ. Շիրվանզադեն, Ռ. Սևակը, Հ. Անոփյանը, Մ. Մանվելյանը և ուրիշներ:

Նշված տարիներին լույս տեսած տարեգրքի երեք հատորները վառ երևույթ էին հայ գրական, գեղարվեստական և հասարակական-քաղաքական կյանքում: Մտավորականությանը, ժողովրդավարական մտածողությամբ երիտասարդությանը և կրթված հանրությանը ծանոթացրեցին ազգի իսկական հոգևոր արժեքներին՝ հայ ժողովրդի ճակատագրի համար պատմական բավականին լարված ու տագնապալի ժամանակաշրջանում: Անկասկած, «Գարունը» նորոգվող, թարմ հոսք էր արդի հայ գրականության պատմության մեջ: Հայ ընթերցողը հզոր ազդակ ստացավ, զգաց դարաշրջանի երիտասարդ սրտերի բաբախյունը: Ալմանախը հայտնաբերել է գրական թարմ ուժեր, նոր անուններ, գրչի՝ վաղուց հայտնի և սիրված վարպետների նոր գործեր տպագրել:

«Գարունը» լիովին կատարեց իր գրական, իսկ ավելի լայն՝ հասարակական-քաղաքական դերը Վ. Տերյանի հռչակած «Հոգևոր Հայաստան» ծրագրի իրականացման գործում, որը հնարավոր դարձրեց ողջ հայ գրականությանը հաղորդել նոր շունչ, նոր միտք, բեղմնավորել գեղարվեստական գրականությունը: Միքայելյանի ավանդը և կարևոր դերը համազգային այս մեծ ու վեհ ձեռնարկում ակնառու է:

1912-ին Միքայելյանը նաև պատրաստում է իր պատմվածքների երկրորդ գիրքը՝ «Ցմռան երեկո» խորագրով, որի մեջ ներառվել էին «Վերջին հորձանքներ», «Սաքուլի խումբը», «Կախաղանի վրա» և այլ պատմվածքներ: Այն լավ արձագանք ունեցավ հայ մամուլում, գրաքննադատների և ընթերցողների շրջանում:

Գրքի հաջողությունով ոգևորված՝ Միքայելյանը շարունակում է ստեղծագործել, և 1929 թ. լույս է տեսնում նրա նոր ժողովածուն՝ «Գույների կռիվը»:

Մինչ այդ մեծ հետաքրքրություն էր առաջացրել նրա «Մաժեստիկ» գիրքը, որը ծնվեց 1925–1927 թթ. Եվրոպա և Ամերիկա Հայաստանի օգնության կոմիտեի (ՀՕԿ) պատվիրակության կազմում գրողի ուղևորության արդյունքում:

Կ. Միքայելյանը հասարակական և գրական-մշակութային կյանքի ասպարեզ է դուրս եկել շատ հետաքրքիր ժամանակաշրջանում, երբ Ռուսաստանում, որտեղ հաստատվել է գրողը, և Անդրկովկասում, Հայաստանում ապրել ու ստեղծագործել են գրականության, արվեստի և այլ բնագավառների ականավոր գործիչներ: Ռուս և հայ գրողների վերնախավը (Վ. Բրյուսով, Մ. Գորկի, Հովհ. Թումանյան, Ավ. Իսահակյան, Ալ. Ծատուրյան, Վ. Տերյան և շատ այլ վարպետներ) իրենց երկերով, անձնական ու բարեկամական ջերմ շփումներով ազդել է Միքայելյանի առաջընթացի և ստեղծագործական աճի վրա: Իր հերթին, հայ գրողն ակտիվորեն ներգրավել է, մասնավորապես, ռուս բանաստեղծ-

ներին և թարգմանիչներին հայ մշակութային կյանքում: Բավական է հիշատակել նրա անգնահատելի ներդրումն անցյալ դարի 1916-ին և 30-ական թվականներին հայ պոեզիայի անթոլոգիաների ռուսերենով պատրաստման և հրատարակման գործում:

1915 թ. Եղեռնի ողբերգությունից հետո Հայաստանը խորհրդային տարիներին մեծ հաջողություններ է հասել կյանքի բոլոր ոլորտներում. հնարավորություն ստեղծվեց հայ ժողովրդի հոգևոր նոր վերելքի համար, որն առաջացրեց մի փայլուն շարան՝ գրականության, արվեստի և գիտության ամենավառ անուններ: Հայրենանվեր Միքայելյանը, բնակվելով մշտապես Մոսկվայում, մեծ եռանդով գործում է ի օգուտ Հայաստանի և հայ ժողովրդի՝ սերտ կապեր պահպանելով Ավ. Իսահակյանի, Ե. Չարենցի, Ստ. Զորյանի և այլոց հետ:

Հայ գրողը կամուրջներ է կապել խորհրդային գրական-մշակութային «Օլիմպոսի» ամենաազդեցիկ գործիչների ու բարձր պաշտոնյաների հետ՝ Մոսկվայում, Լենինգրադում, այլուր ... Նա համախմբել է հայ մշակույթի և գրականության շուրջ Ռուսաստանի գեղարվեստական խոսքի բազմաթիվ արվեստագետների՝ Ն. Տիխոնովին, Պ. Անտոկոլսկուն, Կ. Սիմոնովին, Ա. Տարկովսկուն, Բ. Պաստեռնակին, Ա. Ախմատովային ...

Կ. Միքայելյանն անցյալ դարի 10–30-ական թվականներին հաջողությամբ զբաղվում է նաև թարգմանչական գործունեությամբ: Փայլուն տիրապետելով հայերենին և ռուսերենին՝ նա կատարել է մի շարք թարգմանություններ, որոնք գրավել են այն ժամանակվա ընթերցողների, գրողների, հայ քննադատների ուշադրությունը: Գեղարվեստական գրականությունը թարգմանելու առաջին բավականին հաջող փորձերից մեկը (հենց բնօրինակից, այլ ոչ թե՝ ռուսերենից, ինչպես հաճախ արվում էր օտար գրականությունը հայերեն թարգմանելիս) անգլիացի նշանավոր գրող Օսկար Ուայլդի հեքիաթներն էին: 1920 թ. Մոսկվայում լույս է տեսել Միքայելյանի թարգմանությամբ Ուայլդի հրաշալի հեքիաթների մի ամբողջ ժողովածու՝ գրականագետ Ա. Կարինյանի առաջաբանով: Միքայելյանի թարգմանությամբ Ուայլդի հեքիաթները արժանացել են հայ լայն ընթերցողի հավանությանը, և դրանց հաջողությունը հիմք է ծառայել նրան արդեն 30-ականներին ավելի լուրջ և մեծածավալ գործի անցնել՝ «Գուլիվերի ճանապարհորդությունները» վեպի թարգմանությանը՝ կրկին կենտրոնանալով անգլերեն բնօրինակ աղբյուրի և ոչ թե առկա ռուսերեն թարգմանությունների վրա:

«Հայպետհրատի» գեղարվեստական գրականության բաժնի վարիչ Չարենցի առաջարկով Միքայելյանը ձեռնամուխ եղավ համաշխարհային գրականության նշանավոր գործի թարգմանությանը: Վեպը հայերենով լույս է տեսել 1934 թվականին, գրավել ընթերցողների ուշադրությունը, նկատվել ու գնահատվել Ստ. Զորյանի, Ավ. Իսահակյանի և խոսքի այլ ականավոր վարպետների կողմից: Թարգմանչի՝ այս ծավալուն ու բարդ աշխատանքի անվերապահ հաջողության մասին են վկայում գրքի վերահրատարակումները 1950 և 1958 թվականներին:

Միքայելյան-թարգմանիչը կանգնած է եղել նույնքան բարձր, ինչքան իր ստեղծագործական գործունեության այլ բնագավառներում: Նրան բնորոշ էր ձեռնարկված աշխատանքի նկատմամբ բացառիկ պատասխանատվությունը,

արդյունավետությունը, բարեխղճությունը, բարձր պրոֆեսիոնալիզմը՝ հիմնված ռուսական և հայկական թարգմանչական դպրոցի վրա:

Ուրույն հետք է թողել Կ. Միքայելյանն իր ազգային-հայրենասիրական գործունեությամբ Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին: Հայրենասերի հոգին չէր կարող չզգալ սեփական ժողովրդի ցավն ու տառապանքը. պետք էր ինչ-որ բան անել, ակտիվ գործել, եթե ոչ՝ զենքը ձեռքին, ապա՝ գոնե հմուտ գրչով, ոգևորիչ խոսքով: Փորձելով հնարավորինս զգալի օգուտ բերել տանջված ու հալածված ժողովրդին՝ նա թողնում է բարեկեցիկ Մոսկվան և շտապում Անդրկովկաս: Գրողի հիմնական նպատակն էր այցելել այն վայրերը, որտեղ կուտակվել էին ողջ մնացած հայերի զանգվածները: «Ինձ այդ վայրերը մղողը, մի կողմից, քաղաքացիական պարտքի զգացմունքն էր՝ մի կերպ օգտակար լինել հանդեպ այն ծով կարիքների, որ բաժին ընկան իմ ցեղին, մյուս կողմից՝ գրական մարդու՝ դիտելու և ճանաչելու ներքին պահանջը»[1],– գրում է Միքայելյանը:

1916–1917 թթ. նա այցելում է Երևանում, Էջմիածնում, Ալեքսանդրապոլում, Թիֆլիսում, Բաքվում և այլ քաղաքներում բացված մանկատները: Լավ ծանոթ լինելով Անդրկովկասի հայ մտավորականության ներկայացուցիչներին՝ Միքայելյանն իր նախաձեռնությամբ աջակցություն է գտնում նրանց մոտ, տարբեր հարցերի շուրջ խորհրդակցում հայտնի մարդկանց հետ, մշակույթի գործիչներին տեղեկացնում իր ծրագրերի և մտադրությունների մասին:

Կ. Միքայելյանն անձնուրաց նվիրվում է հոգեբանորեն և ֆիզիկապես հյուծող, բայց վեհ գործին, որի արդյունքում ծնվում է «Հոշոտված Հայաստան» պատմվածքների շարքը՝ տառապյալ հայ մանկան «Հոգու ճիչը»: Առանձին պատմություններ տպագրվեցին Բաքվի հայկական գրական-քննադատական և հասարակական-քաղաքական «Գործ» ամսագրում (1917, № 2–6, №2, էջ 141–146, № 3, էջ 110–134, № 4, էջ 95–99 և այլն): Այդ պատմվածքները, որոնք առաջին անգամ թարգմանվել են ռուսերեն մեր կողմից և ներառվել մենագրության մեջ[2]:

Եզակի վավերագրական նյութերի մեծ մասը, ցավոք, մնացել է ձեռագրերում, քանզի գրառումները մատիտով են արված, խիստ մաշված են և գրեթե անընթեռնելի:

Գրողի ձեռնարկած աշխատանքը, իրադարձությունների ու փաստերի հիման վրա ստեղծված «Հոշոտված Հայաստան» շարքից հրատարակված պատմվածքները գրավեցին հայ ընթերցողի ուշադրությունը ոչ միայն Հայաստանում, այլ նաև Ռուսաստանում և Եվրոպայում:

Անցյալ դարի 20-ական թվականներին աննախադեպ է Կ. Միքայելյանի գործունեությունը ՀՕԿ-ում: Սփյուռքում հայտնի այս կազմակերպության պատվիրակության կազմում հայրենասեր գրողը՝ իր համար նոր ու պատասխանատու առաքելության շրջանակներում, երկարատև գործուղումների է

---

[1] *ՀՀ գրականության և արվեստի թանգարան, Կ. Միքայելյանի ֆ., գ. 21. – «Գործ» (Բագու), 1916, № 2:*

[2] Р. Багдасарян. Геноцид и армянская интеллигенция России. Ереван, 2003, с. 227–242.

մեկնում ԱՄՆ, Եվրոպա, Մերձավոր Արևելք: Բարձր և վեհ նպատակն է՝ ներկայացնել Խորհրդային Հայաստանի առկա հաջողությունները սոցիալական, մշակութային և այլ ոլորտներում, բոլոր հնարավոր միջոցներով ներգրավել ֆինանսներ նորածին հանրապետության տնտեսական արագ զարգացման համար, իհարկե, հայ գաղութների մեծահարուստ ու ազդեցիկ գործիչների և գործարարների ներգրավմամբ: ՀՕԿ-ի պատվիրակության անդամների հանդիպումները հայ համայնքների տարբեր հասարակական-քաղաքական ուղղվածության մի շարք ականավոր գործիչների հետ իրենց որոշ դրական պտուղները տվեցին նաև անձամբ Կ. Միքայելյանի աշխատասիրության, հռետորության, փորձառության, հեղինակության շնորհիվ:

Միքայելյանի ներգրավումն այդ հեղինակավոր պատվիրակության մեջ բնական ու տրամաբանական էր: Հասարակական-մշակութային գործչին լավ գիտեին ու բարձր էին գնահատում և՛ Ռուսաստանում, և՛ Եվրոպայում, և՛ Ամերիկայում, և՛ Մերձավոր Արևելքում ... Տասնամյակներ շարունակ նա անձնական կամ նամակագրական սերտ կապեր է պահպանել XX դարի ամենահայտնի ու ազդեցիկ դրական-մշակութային և հասարակական-քաղաքական գործիչների՝ Հովհ. Թումանյանի, Ալ. Ծատուրյանի, Հ. Հակոբյանի, Վ. Տերյանի, Ավ. Իսահակյանի, Ե. Չարենցի, Ա. Զոպանյանի, Յ. Խանզադյանի, Պ. Մակինցյանի, Լ. Շանթի, Զ. Եսայանի, Ստ. Զորյանի, Դ. Դեմիրճյանի, Գ. Լևոնյանի, Ա. Ամատունու, Ա. Խանջյանի, Ս. Կամսարականի, Ս. Տեր-Գաբրիելյանի, Մ. Գորկու, Վ. Բրյուսովի, Ն. Տիխոնովի, Պ. Անտոկոլսկու, Մ. Լոզինսկու և այլոց հետ:

Սակայն գրողի գործունեության այս ասպարեզը մի քանի տարի անց դաժան կատակ խաղաց նրա հետ: Արտասահմանում Գյուլբենկյանի, Նուբար փաշայի, Ա. Ահարոնյանի, Ա. Զոպանյանի և այլ «կապիտալիստների» հետ սերտ շփումները, գործնական ու ընկերական հանդիպումները եղան հայ մտավորականի անվստահության դատավճռի գլխավոր «հաղթաթղթերը»: Միքայելյանին վերագրվում էր նաև հայ «ազգայնականներ» Ա. Խանջյանի, Ս. Տեր-Գաբրիելյանի, Ա. Հովհաննիսյանի, Ե. Չարենցի՝ իր վրա ունեցած ուժեղ ազդեցությունը ... Այդպիսով նա ինքն էլ դարձավ ստալինյան ռեժիմի անմեղ զոհ: Ցավոք, անգամ նրա հայ և ռուս ընկերների՝ Մ. Սարյանի, Մ. Շահինյանի, Պ. Անտոկոլսկու և այլոց գրավոր միջնորդագրերը մոսկովյան բարձրագույն իշխանություններին չհեշտացրին գրողի ճակատագիրը...

1937 թ. ամռանը Կ. Միքայելյանը մեղադրվում է «հակասովետական», «ազգայնական» գործունեության մեջ և ձերբակալվում, Երևանի ու Մոսկվայի պետանվտանգության մարմիններում երկարատև նվաստացուցիչ հարցաքննություններից հետո ուղարկվում է քաղբանտարկյալների ճամբարներից մեկը:

Գրողը, ըստ պատկան մարմինների պաշտոնական տեղեկանքի, մահացել է «սրտի անբավարարությունից» և թաղվել Ռուսաստանի Կիրովի մարզի Զուեվկա կայարանի մոտ գտնվող քաղբանտարկյալների ընդհանուր գերեզմանոցում...

Միակ մխիթարանքն եղավ 1960 թ. Երևանում լույս տեսած Միքայելյանի՝ տարբեր տարիների լավագույն պատմվածքների ժողովածուն՝ «Կեցցե՛ն հաղթվածները» խորագրով:

Կ. Միքայելյանը հայ մտավորականության էլիտար ներկայացուցիչներից մեկն է՝ ոչ միայն իր ժամանակի, այլ պատմաքաղաքական կատակլիզմներով նշանավորվող մի ամբողջ դարաշրջանի: Նրա գեղարվեստական ինքնատիպ ժառանգությունը, գրական-հասարակական ու ազգային-հայրենասիրական բեղմնավոր գործունեությունը XX դարի հայ գրականության և մշակույթի զարգացման պատմության բաղկացուցիչ մասն են:

ՌՈԲԵՐՏ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Բ. գ. դ., ՀՀ Ազգային ժողովի Հասարակայնության հետ կապերի և հաղորդակցության վարչության թարգմանիչ: Գիտական հետաքրքրությունները՝ հայ-ռուսական հասարակական և գրական-մշակութային կապեր, հայ և ռուս գրականության պատմություն, Հայոց ցեղասպանության խնդիրներ: Հեղինակ է 12 գրքերի և ավելի քան 200 հոդվածի: rob.bagdasaryan73@rambler.ru

ՀՏԴ : 929:+947.925Սիմոնյան

ՀՐԱՉԻԿ ՍԻՄՈՆՅԱՆ
(Ծննդյան 95-ամյակի առթիվ)*

Լրացավ հասարակական-քաղաքական և ազգային անվանի գործիչ, աշխիվ մտավորական, ՀՀ պետական մրցանակի դափնեկիր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Հրաչիկ Ռուբենի Սիմոնյանի ծննդյան 95-ամյակը:

Հ. Սիմոնյանը ծնվել է 1928 թ. դեկտեմբերի 8-ին Գորիսի շրջանի Շինուհայր գյուղում: Տեղի միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո ընդունվել է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետը և գերազանց առաջադիմությամբ ավարտել 1952 թվականին: Նույն թվականին աշխատանքի է անցել «Խորհրդային Հայաստան» թերթում՝ որպես գրական աշխատող, այնուհետև՝ գործուղվել ծննդավայր՝ որպես շրջանային թերթի պատասխանատու քարտուղար: 1953 թ. աշխատանքի է անցել ՀԿԿ Գորիսի շրջկոմում. նախ՝ որպես հրահանգիչ, ապա՝ բաժնի վարիչ: 1957 թ. ընտրվել է շրջկոմի գաղափարական գծով քարտուղար: 1959 թ. Հ. Սիմոնյանն ընդունվել է ԽՄԿԿ Կենտկոմին առընթեր հասարակական գիտությունների ակադեմիան (Մոսկվա), որն ավարտել է 1962 թ.: Այնտեղ էլ նույն տարում պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն՝ ստանալով պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան և հրատարակել այն որպես առաջին գիտական աշխատություն [«Перевооружение промышленности Армянской ССР в послевоенный период (1945–1950 гг.)»]*:*

Վերադառնալով Հայաստան՝ Հ. Սիմոնյանն աշխատանքի է անցել ՀԿԿ Կենտկոմին առընթեր կուսակցության պատմության ինստիտուտում. 1962–1966 թթ.՝ որպես ավագ գիտաշխատող, իսկ 1977–1990 թթ.՝ տնօրեն և գիտական աստիճաններ շնորհող մասնագիտական խորհրդի ղեկավար: 1966–1977 թթ. տարբեր պաշտոններ է զբաղեցրել ՀԿԿ Կենտկոմում: 1990–1991 թթ. վարել է ՀՀ ԳԱԱ պատմության և տնտեսագիտության բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղարի պաշտոնը, իսկ 1991–1994 թթ. եղել է Սփյուռքահայության հետ մշակութային կապերի կոմիտեի նախագահ:

1970 թ. Հ. Սիմոնյանը պաշտպանել է դոկտորական ատենախոսություն («Սփյուռքահայ առաջադիմական ուժերը խաղաղության, դեմոկրատիայի և սոցիալիզմի համար մղվող պայքարում») և ստացել պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճան, իսկ 1971 թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում: 1986 թ. ընտրվել է ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ, 1996 թ.՝ ՀՀ ԳԱԱ

---

* *Ներկայացվել է 03. IV. 2023 թ., ընդունվել է տպագրության 19. VI. 2023 թ.:*

ակադեմիկոս: 1994–2006 թթ. եղել է ՀՀ ԳԱԱ նախագահի խորհրդական՝ միաժամանակ 1999–2003 թթ. ղեկավարելով Երևանի պետական համալսարանի հայոց պատմության ամբիոնը:

Տարբեր ժամանակներում Հ. Սիմոնյանը եղել է շրջանային և քաղաքային խորհուրդների, ՀԽՍՀ Գերագույն խորհրդի և ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր, ՀԿԿ Կենտկոմի անդամ, ՀԽՍՀ Գերագույն խորհրդի ներման հանձնաժողովի նախագահ:

1964 թվականից Հ. Սիմոնյանը դասավանդել է ԵՊՀ պատմության և փիլիսոփայության ֆակուլտետներում, հանրապետության այլ բուհերում, գիտական զեկուցումներով հանդես է եկել Մոսկվայում, Լենինգրադում, Թբիլիսիում, Բաքվում, ԱՄՆ-ում, Ֆրանսիայում, Գերմանիայում և այլուր՝ ըստ արժանվույն ներկայացնելով հայրենի գիտության նվաճումները: Նրա աշխատանքներից մի քանիսը լույս են տեսել Չեխոսլովակիայում, ԱՄՆ-ում, Լիբանանում, Իրանում:

Ակադեմիկոս Հ. Սիմոնյանն անգնահատելի դեր է ունեցել մեր ժողովրդի պատմության նոր և նորագույն շրջանի շատ հիմնահարցեր խորությամբ ուսումնասիրելու գործում: Նրա գրչին են պատկանում ավելի քան 40 մենագրություն և շուրջ 400 գիտական հոդված:

1960-ական թվականներին անվանի ակադեմիկոսի գիտական հետաքրքրությունների ոլորտը հայկական սիյուռքն էր, հատկապես՝ այնտեղ գործող հայ քաղաքական ուժերը, նրանց գործունեությունը, փոխհարաբերությունները, Խորհրդային Հայաստանի նկատմամբ վերաբերմունքը: 1968 թ. հրատարակում է «Սիյուռքահայությունը սոցիալ-քաղաքական պայքարի ուղիներում» գիրքը:

1970-ական թվականների սկզբներից Հ. Սիմոնյանի գիտական հետաքրքրությունների կենտրոնում են եղել քաղաքական-փիլիսոփայական բնույթի հարցերը: Նա ընթերցողներին է ներկայացրել ծավալուն մենագրություններ՝ «Ինդուստրիալ հասարակության տեսությունները» (1973), «Արդի բուրժուական գաղափարախոսության քննադատական ուրվագծեր» (2 հատորով, 1977, 1980), «Գիտատեխնիկական հեղափոխությունը և նրա սոցիալական հետևանքները» (1982) և այլն: Այդ աշխատություններում տրվել են բուրժուական գաղափարական մի շարք ուղղությունների ծագման և զարգացման պատմությունը, դրանց հետագա փոխակերպումների փուլերն ու սոցիալ-դասակարգային էությունը:

1970-ականների վերջերից Հ. Սիմոնյանի գիտական ուսումնասիրությունների միակ բնագավառը հայագիտությունն էր: Իրար հետ սերտորեն կապված են գիտնականի երկու՝ «Թուրք ազգային բուրժուազիայի գաղափարաբանությունը և քաղաքականությունը» (1986) և «Թուրք-հայկական հարաբերությունների պատմությունից» (1991) ուսումնասիրությունները: Աղբյուրագիտական հարուստ հենքի, ժամանակի մամուլի և գիտական աշխատությունների օգտագործումով այդ ուսումնասիրություններն աչքի են ընկնում գիտական խոր ընդհանրացումներով: Առաջին աշխատության մեջ բացահայտված է թուրքական բուրժուազիայի առաջացման ու ձևավորման պատմական ժամանակաշրջանը, որը ճակատագրական և բախտորոշ եղավ հայ ժողովրդի համար: Հանգամանորեն քննարկված են «օսմանիզմ», «իսլամիզմ», «պանիսլամիզմ»,

«նոր օսմանիզմ», «թուրքիզմ», «պանթուրքիզմ» հասկացությունները, որոնք ներկայացված են իբրև թուրքական բուրժուազիայի գաղափարախոսության հիմնական տարրերը տարբեր ժամանակահատվածներում: «Թուրք-հայկական հարաբերությունների պատմությունից» ուսումնասիրությունում հեղինակը, ներառելով նախորդ աշխատության հիմնական ելակետային դրույթները, շեշտը դրել է պանթուրքիզմի՝ հայ ժողովրդի համար այսօր էլ խիստ վտանգավոր գաղափարախոսության բացահայտման վրա:

Հետագա տարիներին ակադեմիկոս Հ. Սիմոնյան գիտնականի հետազոտություններն ուղղված էին հարազատ ժողովրդի ազգային-ազատագրական շարժումների ուսումնասիրմանը: Հայ ժողովրդի ազատագրական պայքարի խորհրդանիշ մեծ հայդուկապետ Անդրանիկը և նրա ժամանակը դարձան երկհատորանոց աշխատության թեման: Այն լույս է տեսել 1996 թվականին, որում լուսաբանված են 1865–1927 թթ. հայ հասարակական-քաղաքական կյանքի, ազատագրական պայքարի բազմաթիվ իրադարձություններ:

Շարունակելով հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմության խորքային պեղումները՝ Հ. Սիմոնյանը ստեղծել է «Ազատագրական պայքարի ուղիներում» հնգհատոր աշխատությունը (առաջին 2 հատորները լույս են տեսել 2003 թ., մյուս 2-ը՝ 2009 թ. և 2010 թ., հինգերորդը՝ 2013 թ.): Ժամանակաշրջանի համաշխարհային իրադարձությունների լույսի ներքո այդ հատորներում բացահայտված են 1905–1914 թթ. հայոց պատմության նորանոր շերտեր: Հազարից ավելի էջեր ընդգրկող յուրաքանչյուր հատորում օգտագործված են բազմաթիվ աղբյուրներ՝ Հայաստանի ազգային արխիվի, Մաշտոցի անվան Մատենադարանի, ազգային գործիչների անձնական արխիվների բազմաթիվ նյութեր, ժամանակի մամուլում զետեղված փաստեր, որոնց մեծ մասն առաջին անգամ է շրջանառության մեջ դրվում: Հ. Սիմոնյանը վերլուծել և համակողմանիորեն քննության է առել XX դարասկզբից մինչև Առաջին համաշխարհային պատերազմն ընկած ժամանակահատվածում Արևելյան ու Արևմտյան Հայաստանում տեղի ունեցած դեպքերը և իրադարձությունները, կատարել արժեքավոր եզրահանգումներ: Արժևորելով ականավոր գիտնականի մեծածավալ հնգհատորյակը՝ անհրաժեշտ է նշել, որ բոլոր հատորներն էլ աչքի են ընկնում իրենց ինքնատիպությամբ, գիտական խորաթափանցությամբ, փաստական հարուստ նյութերի բազմակողմանի վերլուծությամբ, եզրակացությունների տրամաբանությամբ, գիտական նորույթով և ունեն քաղաքական կարևոր նշանակություն՝ հատկապես պատմությունից դասեր քաղելու առումով: Աշխատանքն արժանացել է ՀՀ պետական մրցանակի:

2009 թ. ապրիլին, երբ լրանում էր Կիլիկիայի հայերի ջարդերի 100-ամյակը, այդ առիթով լույս է տեսել Հ. Սիմոնյանի «Հայերի զանգվածային կոտորածները Կիլիկիայում (1909 թ. ապրիլ)» արժեքավոր ծավալուն մենագրությունը՝ իր վրա բևեռելով պատմաբանների և, առհասարակ, ընթերցող հասարակայնության ուշադրությունը: Այն նաև թարգմանվել է անգլերեն և հրատարակվել Մեծ Բրիտանիայում (2012 թ.):

2014 թ. հրատարակվել է Հ. Սիմոնյանի «1912–1913 թթ. Բալկանյան պատերազմները և հայերը» ստվարածավալ աշխատությունը, որտեղ հեղինակն իր առջև խնդիր էր դրել տալ Բալկանյան երկու պատերազմների նկարա-

գրությունը՝ հենվելով գերազանցապես ժամանակի հայկական, հատկապես՝ պոլսահայ մամուլի հրապարակումների վրա: Վերջինիս էջերում օր օրի լայնորեն լուսաբանվել են պատերազմական իրադարձությունները Բալկանյան ռազմաճակատներում և դրանց անդրադարձը թիկունքում: Հայաստանի, Ռուսաստանի և Բուլղարիայի արխիվներում պահպանված փաստաթղթերի ու նյութերի հիման վրա ներկայացված և վերլուծված է հայերի մասնակցությունը պատերազմական իրադարձություններին:

2014 թ. նաև լույս է տեսել Հ. Սիմոնյանի «Ադրբեջանցիների պատմության «հերոսական» էջերից մեկը լուսանկարներում» գիրքը, որում ներկայացված են Բաքվում 1905 թ. փետրվարին ադրբեջանական ազգայնամոլների կողմից քաղաքի խաղաղ հայ բնակչության դեմ սանձազերծված արյունալի ոճրագործությունները և հայերի արժանի հակահարվածը: Նշենք՝ առաջին անգամ գիտական շրջանառության մեջ են դրվել և տպագրվել այդ արյունալի դեպքերը պատկերող ֆոտովավերագրեր:

Արդարև, նշանավոր գիտնականի կեղարյա վաստակը ծանրակշիռ է և ուսանելի:

Ակադեմիկոսը, լինելով ՀՀ առաջին գումարման Գերագույն խորհրդի պատգամավոր, հեղինակել և քննարկման է ներկայացրել որոշումների բազմաթիվ նախագծեր: Իր ակտիվ մասնակցությամբ նա որոշակի նպաստ է բերել Հայաստանի երրորդ Հանրապետության հռչակման ու կայացման գործընթացին: Այդ տարիների պատմության շատ վավերագրեր ու նյութեր, որոնք արտացոլում են քաղաքական գործչի ու գիտնականի գործունեությունը, պահպանվում են Ազգային արխիվի «Հ. Սիմոնյանի ֆոնդ»-ում:

Հ. Սիմոնյանի անմիջական ղեկավարությամբ հեղինակային խումբը 2000 թ. հրատարակել է հայոց պատմության բուհական ծրագիրն ու դասագիրքը ոչ մասնագիտական ֆակուլտետների ուսանողության համար: Նրա խմբագրությամբ պատրաստվել և 2012 թ. հրատարակվել է հայոց պատմության բուհական դասագրքի լրամշակված ու ամբողջացված տարբերակը: Տարիներ շարունակ դասավանդելով ԵՊՀ պատմության ֆակուլտետում՝ նա իր գիտելիքներն ու իմացությունն անմնացորդ նվիրումով հաղորդել է ուսանողությանը, ասպիրանտներին՝ ղեկավարելով մի շարք ավարտական, թեկնածուական և դոկտորական աշխատանքներ, հոգածությամբ նպաստելով գիտական կադրերի պատրաստմանը:

2008–2012 թթ. ղեկավարել է ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի ցեղասպանագիտության բաժինը:

Հ. Սիմոնյանը մահացել է 2016 թ. հունվարի 29-ին Երևանում:

Ակադեմիկոսը չհասցրեց հրատարակել ավարտին հասցրած մի քանի աշխատություններ, որը նախաձեռնեց և հրատարակեց որդին՝ Արամ Սիմոնյանը (պ. գ. դ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ): «Из истории «политического оправдания» полководца Андраника» *(2016) աշխատության մեջ մանրամասն ներկայացված են Զորավարի կյանքի և գործունեության մասին յուրահատուկ փաստեր ու Խորհրդային Միության պաշտոնական ձեռնարկումները՝ քաղաքական արդարացման վերաբերյալ: «1905–1912 թթ. պարսկական հեղափոխությունը և հայերը» (2017) հետազոտության մեջ բազմակողմանի քննության են առնված Պարսկաստանում սահմանադրական*

հեղափոխության (1908–1914 թթ.) գործընթացները և, հատկապես, հայերի դերն այդ շարժման մեջ, Եվրասիայում տեղի ունեցող աշխարհաքաղաքական գործընթացների համատեքստում դիտարկված են սահմանադրականների ու միապետականների երկարատև անցիջում պայքարը, սոցիալ-տնտեսական անմխիթար վիճակը, կառավարման ճգնաժամը և տարածաշրջանի խոշոր դերակատարների՝ Անգլիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի ու Ռուսաստանի նկրտումները և Թուրքիայի գործողություններն ու տարածքային հավակնությունները: Նյութը հիմնականում քաղված է հայկական և ռուսական արխիվային փաստաթղթերից ու ժամանակի հայալեզու և ռուսալեզու մամուլից: Այս երկու հիմնարար աշխատությունները ևս խոսում են վաստակաշատ գիտնականի թողած հարուստ պատմագիտական ժառանգության մասին:

Հ. Սիմոնյանի բեղուն գործունեությունը հայագիտությանն անմնացորդ նվիրյալի դաստիարակչական փայլուն օրինակ է գիտակրթական լայն հանրույթի, առավելապես՝ երիտասարդության համար:

ՍՈՒՐԵՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Պ. գ. թ., դոցենտ, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի նորագույն պատմության բաժնի ավագ գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունները՝ նորագույն շրջանի և միջազգային հարաբերությունների պատմության ուսումնասիրություն: Հեղինակ է 4 մենագրության և ավելի քան 2 տասնյակ հոդվածի: suren-avetisyan@mail.ru

ՀՏԴ : 929:330(479.25)Սուվարյան

ՅՈՒՐԻ ՄԻՔԱՅԵԼԻ ՍՈՒՎԱՐՅԱՆ
(Ծննդյան 80-ամյակի առթիվ)*

Լրացավ վաստակաշատ գիտնական, ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Յուրի Սուվարյանի ծննդյան 80-ամյակը: Ծնվել է 1943-ի մայիսի 25-ին ԼՂ Սղնախ գյուղում: 1960-ին ավարտել է Ավետարանոց գյուղի միջնակարգ դպրոցը, 1965-ին՝ Երևանի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետը, 1968-ին՝ ասպիրանտուրան:

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Յուրի Միքայելի Սուվարյանը, իր ավելի քան 55 տարիների գիտական գործունեությամբ, մեծ նվաճումների է հասել տնտեսագիտության ասպարեզում, ակտիվ գիտահետազոտական աշխատանք է կատարել տնտեսագիտության և կառավարման տեսության հիմնարար խնդիրների վերաբերյալ:

Նրա գիտական հետաքրքրությունների ոլորտում են կառավարման տեսության և հայ կառավարչական մտքի պատմության արդի հիմնահարցերը: Նա ցուցաբերել է նոր մոտեցումներ ռազմավարական կառավարման էության և սկզբունքների մեկնաբանման, գործարարության ծրագրի մշակման մեթոդաբանության զարգացման ասպարեզում: Հայ իրականության մեջ պրոֆ. Յու. Սուվարյանը առաջինն է անդրադարձել հանրային կառավարման էության, մեթոդաբանության ու պատմական զարգացման հարցերին և առաջարկել յուրօրինակ լուծումներ:

Անդրադառնալով «Հանրային կառավարման տեսություն և պատմություն» գրքի անգլերեն հրատարակությանը, Կանադայի Կարլտոնի համալսարանի Հանրային քաղաքականության և կառավարման դպրոցի պրոֆեսոր, Կառավարման և հանրային մենեջմենթի կենտրոնի տնօրեն Լեսլի Փալը գրել է. «Շատ տպավորված եմ դրա լայն ընդգրկունությամբ: Շատ հազվադեպ կարելի է հանդիպել մեկին, ով տվյալ ոլորտի պատմությունը տեսնում է նման պատմական խորությամբ և, իհարկե տարածաշրջանային պատկերը շատ հետաքրքիր էր ինձ համար»:

Մասնակցել է հանրապետական, համամիութենական և միջազգային գիտաժողովների, որոնցում ներկայացրել է իր հետազոտությունների արդյունքները, իսկ դրանց մի մասը լույս է տեսել միջազգային հրապարակումներում: Պրոֆ. Յու. Սուվարյանը հրատարակել է 305 գիտական աշխատություն, այդ թվում՝ 48 մենագրություն, դասագիրք և ուսումնական ձեռնարկ: Նրա գիտա-

* Ներկայացվել է 07. VI. 2023 թ., ընդունվել է տպագրության 19. VI. 2023 թ.:

կան ղեկավարությամբ ու խորհրդատվությամբ տնտեսագիտության դոկտորի և թեկնածուի գիտական աստիճաններ են ստացել հարյուրից ավելի ասպիրանտ ու հայցորդ: Կառավարման մասնագիտությամբ գիտական կադրերի մեծ մասը նրա սաներն են, հեղինակել է կառավարման տեսության հիմնարար աշխատություններ, ահա թե ինչու Յու. Սուվարյանը համարվում է կառավարման գիտության արդի հայկական դպրոցի հիմնադիրը:

2006 թ. Յու. Սուվարյանը, դառնալով Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ռեկտոր, մեծ եռանդով ձեռնամուխ եղավ կրթահամակարգի բովանդակային և կառուցվածքային արմատական վերափոխումների՝ համահունչ միջազգային պահանջներին: 2006 թ. նա ընտրվել է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, 2010 թ.՝ իսկական անդամ, 2011 թ.՝ ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար:

Յու. Սուվարյանը 2006–2018 թթ. ՀՊՏՀ-ում գործող գիտական աստիճաններ շնորհող մասնագիտական խորհրդի նախագահն էր, 2006–2011 թթ. եղել է «Բանբեր ՀՊՏՀ» գիտական հանդեսի գլխավոր խմբագիրը, հայրենական ու միջազգային գիտական հանդեսների խմբագրական խորհուրդների, հայրենի բարձրագույն խորհրդի անդամ է:

Ակադեմիկոս Յու. Սուվարյանի մասնագիտական բարձր կարողությունները, գիտամանկավարժական վաստակը գնահատված են «Անանիա Շիրակացի» (2000), ԼՂՀ «Մայրական երախտագիտության» (2007), «Վաչագան Բարեպաշտ» (2013), միջազ. փիլիս. Ակադեմիայի «Դավիթ Անհաղթ», «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 1-ին աստիճանի (2011), ՀՀ Ազգային ժողովի «Պատվո մեդալ» (2013 թ.) մեդալներով և «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 2-րդ աստիճանի (2017) շքանշանով: 2014 թ. արժանացել է Հայաստանի Հանրապետության Գիտության վաստակավոր գործչի կոչման: Նա ընտրվել է Բնական գիտությունների ռուսական (2016 թ.) և Եվրոպական (2017 թ.) ակադեմիաների արտասահմանյան անդամ, Դոնի Ռոստովի պետական տնտեսագիտական, Ռուս-հայկական, Արցախի և այլ համալսարանների պատվավոր պրոֆեսոր է:

Ներկայումս Յուրի Սուվարյանը մեծ ծավալի գիտակազմակերպչական աշխատանքներ է կատարում ՀՀ ԳԱԱ համակարգում:

Սիրով շնորհավորում ենք մեծ գիտնականին՝ ծննդյան հոբելյանի առթիվ: Ցանկանում ենք քաջառողջություն, երկար տարիների կյանք, անսպառ եռանդ, արևշատություն և գիտական նորանոր հաջողություններ:

ՀՀ ԳԱԱ Մ. ՔՈԹԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀՏԴ : 929:891.981.09Դևրիկյան

ԿԱՐԵՆ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ
(Ծննդյան 65-ամյակի առթիվ)*

Պատմական գիտությունների դոկտոր (2008), պրոֆեսոր (2015), Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի գիտական գծով փոխտնօրեն (2018), տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար (2023 թ. մարտից) Կարեն Արտաշեսի Մաթևոսյանը 65 տարեկան է:

Ծնվել է 1958 թ. մարտի 7-ին Երևանում, մտավորականի ընտանիքում: Հայրը՝ պատմաբան, աղբյուրագետ Արտաշես Մաթևոսյանը (1922–2004), պատմական գիտությունների թեկնածու, Մատենադարանի երկարամյա գիտաշխատող և գլխավոր ավանդապահ է եղել, մայրը՝ Սեդա Մարաբյանը (1933–2011), ՀԽՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի աշխատակից էր:

Կ. Մաթևոսյանը միջնակարգ կրթությունը ստացել է Երևանի թիվ 125 դպրոցում, ապա 1975–1979 թթ. ուսանել և ավարտել է Խ. Աբովյանի անվ. մանկավարժական ինստիտուտի պատմության ֆակուլտետի պատմահասարակագիտական բաժինը: 1989 թ. ԳԱ պատմության ինստիտուտում պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն՝ «Անի քաղաքի գրչության կենտրոնը», իսկ 2008 թ.՝ դոկտորական ատենախոսություն՝ «Սամվել Անեցու Ժամանակագրության ձեռագրերի աղբյուրագիտական քննություն» թեմայով:

Աշխատանքային գործունեությունը սկսել է Բյուրականի միջնակարգ դպրոցում որպես պատմության ուսուցիչ (1979–1982), 1980–2004 թթ. աշխատել է Հայաստանի ազգային պատկերասրահում որպես գիտաշխատող, 1987–1995 թթ.՝ հայ հին և միջնադարյան արվեստի բաժնի վարիչ, 1995-ից՝ գիտքարտուղար: 2007–2008 թթ. եղել է Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի մշակույթի բաժնի տնօրեն: 2005 թվականից աշխատել է Մատենադարանում, նախ՝ որպես գիտաշխատող, ապա՝ 2009-ից՝ արվեստի պատմության և գրչության կենտրոնների ուսումնասիրության բաժնի վարիչ:

Կ. Մաթևոսյանը զբաղվել է մանկավարժական-դասախոսական աշխատանքով՝ 1985–1991, 1994–2001, 2011–2014 թթ. դասախոսել է Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի Գևորգյան հոգևոր ճեմարանում՝ դասավանդելով «Հայ ժողովրդի պատմություն» և «Հայ եկեղեցական արվեստ» առարկաները: 2009–2022 թթ. դասավանդել է Խ. Աբովյանի անվ. հայկական պետական մանկավարժական համալսարանում՝ «Հայ ճարտարապետության պատմություն», «Հայերեն ձեռագիր գիրքը», «Ուշ միջնադարյան հայկական մանրանկարչությունը»

---

* Ներկայացվել է 24. III. 2023 թ., ընդունվել է տպագրության 19. VI. 2023 թ.:

առարկաները: 2016–2018 թթ. Երևանի պետական համալսարանում դասավանդել է «Կիլիկիայի հայկական պետությունը և մերձավորարևելյան տարածաշրջանը» առարկան: Գիտամանկավարժական գործունեության համար 2015 թ. Խ. Աբովյանի անվ. հայկական պետական մանկավարժական համալսարանում արժանացել է պրոֆեսորի կոչման:

Գիտական և մանկավարժական գործունեությանը զուգընթաց Կ. Մաթևոսյանը զբաղվել է խմբագրական աշխատանքով: 1994–1996 թթ. եղել է «Լուսաւորիչ» թերթի գլխավոր խմբագիր, 1997–2000 թթ.՝ Սբ. Էջմիածնի «Քրիստոնեայ Հայաստան» երկշաբաթաթերթի գլխավոր խմբագիր, 2001 թ.՝ «Գիտելիք» ուսումնական ամսագրի գլխավոր խմբագիր, և վերջապես 2002–2008 թթ.՝ իր իսկ հիմնադրած «Հայ արվեստ» եռամսյա մշակութային հանդեսի գլխավոր խմբագիր:

Դեռևս 1990-ականներից Կ. Մաթևոսյանն զբաղվել է նաև հասարակական գործունեությամբ. 1991–2000 թթ. եղել է արվեստագետների միավորող «Մոմիկ» մշակութային միություն ՀԿ-ի փոխնախագահ, 2000–2007 թթ.՝ նախագահ: Կազմակերպել է հայ արվեստագետների ցուցահանդեսներ Հայաստանում և արտասահմանում՝ Լիբանան, Կանադա, ԱՄՆ, Սիրիա, Դանիա, Ավստրալիա: Ցուցահանդեսների, գիտաժողովների և այլ գիտամշակութային միջոցառումների մասնակցելու նպատակով եղել է մի շարք երկրներում (Վրաստան, Ռուսաստան, Ֆրանսիա, Շվեյցարիա, Իտալիա, Չեխիա, Իրան, Թուրքիա): 2012–2014 թթ. երեք գիտարշավի է մասնակցել Արևմտյան Հայաստանում:

Կ. Մաթևոսյանը 2012-ից եղել է ԲՈՀ-ի (այժմ՝ ԲՈԿ)՝ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում գործող «Հայոց պատմության» մասնագիտական խորհուրդի անդամ, իսկ 2017-ից մինչև այժմ հանդիսանում է «Պատմագրություն և աղբյուրագիտություն» մասնագիտական խորհուրդի անդամ, միաժամանակ Հայաստանի պատմության թանգարանի և Մատենադարանի գիտական խորհուրդների, Հայաստանի ազգային գրադարանի կառավարման խորհրդի անդամ է: Նրա գործունեությունը գնահատվել է Հայ Առաքելական եկեղեցու «Սբ. Սահակ և Սբ. Մեսրոպ» շքանշանով՝ «հայագիտական վաստակի և մանկավարժական բեղուն գործունեության համար» (2019 թ.) և ՀՀ ԿԳՄՍՆ ոսկե մեդալով՝ «Թանգարանային ոլորտում ունեցած նշանակալի ավանդի և մշակույթի բնագավառում երկարամյա գործունեության համար» (2021 թ.):

Կ. Մաթևոսյանը հեղինակ է միջնադարյան Հայաստանի պատմությանը, մատենագրությանը, ճարտարապետական, որմնանկարչական և մանրանկարչական արվեստին, ձեռագրական մշակույթին նվիրված շուրջ երկու տասնյակ գրքերի և 100-ից ավելի գիտական հոդվածի, որոնց ամբողջական ցանկը կարելի է տեսնել համացանցում՝ Վիքիպեդիա ազատ հանրագիտարանի՝ նրան նվիրված հոդվածում:

Կրթությամբ լինելով պատմաբան՝ իր գիտական և մշակութային-հասարակական գործունեությունը Կ. Մաթևոսյանը սկսեց մանրանկարչությանը, գրչության արվեստին և որմնանկարչությանը նվիրված աշխատություններով, որին նպաստեցին թեկնածուական ատենախոսությունը և 24 տարի Հայաստանի ազգային պատկերասրահում աշխատելը:

Առաջին իսկ գործում ի հայտ եկավ գիտահետազոտական արդյունքները հանրայնացնելու նրա մղումը, որը բացատրվում է նաև 1990-ական թվականների ընդհանուր իրավիճակով, երբ հայ միջնադարյան հոգևոր արվեստը և պատկերագրությունը մեծապես անծանոթ էին ո՛չ միայն հասարակական լայն խավերին, այլև արվեստասեր հասարակայնությանը: Հայ միջնադարյան եկեղեցական արվեստը հարկավոր էր դուրս բերել լայն ուղեծիր, վերջինիս պատկերները ընկալելի դարձնել: Այս նպատակին են ուղղված Կ. Մաթևոսյանի առաջին աշխատանքները:

Առաջին նման աշխատանքն էր «Որմանկարչությունը Հայաստանի պետական պատկերասրահում» (Երևան, 1990) գիրք-ուղեցույցը, որում ներկայացվում են Ազգային պատկերասրահում պահվող հայկական 16 որմնանկարների պատճենները, և դրանք վերլուծվում են հայ ու ընդհանուր քրիստոնեական որմնանկարչության շրջագծում: Այս նույն նպատակին էր ծառայում Հայաստանի ազգային պատկերասրահի տնօրեն Շահեն Խաչատրյանի համահեղինակությամբ 1992 թ. լույս տեսած ուղեցույցը, որի «Հայ հին և միջնադարյան կերպարվեստը» բաժինը գրել էր Կ. Մաթևոսյանը:

Կ. Մաթևոսյանը, որպես գիտական խորհրդատու, մասնակցել է Թբիլիսիի Սբ. Գևորգ հայկական եկեղեցու որմնանկարների վերականգնմանը: Այս եկեղեցուն է նվիրված 2015 թ. Թբիլիսիում նրա առաջաբանով անգլերեն, հայերեն, վրացերեն և ռուսերեն տպագրված «Սուրբ Գևորգ տաճարը. Որմնանկարները» գիրքը:

Քրիստոսի կյանքի գլխավոր դրվագները՝ Ավետումից մինչև Հոգեգալուստ, ներկայացնող 12 պատկերներին է նվիրված նրա «Տերունական պատկերներ» (Երևան, 1993) գիրքը՝ հեղինակակցությամբ Ավետ Ավետիսյանի: Տերունական պատկերներից յուրաքանչյուրը ներկայացվում է հետևյալ կառուցվածքով: Տվյալ թեմայով բնորոշ մի պատկեր, պատկերի անվանման վկայակոչումը, ուր ներկայացված է այդ թեման, վերջինիս պարունակած հոգևոր խորհուրդը, տվյալ պատկերին մաս կազմող դրվագների խորհրդաբանական նշանակությունը և յուրաքանչյուրի սկզբնաղբյուրն ըստ միջնադարյան մատենագրության: Այնուհետև այդ պատկերին բնորոշ մի շարք օրինակներ են բերվում հայ և համաշխարհային արվեստից: Յուրաքանչյուր պատկերին նվիրված բաժինը սկսվում է նույն թեմայով շարականով, որը ցույց է տալիս գրական և արվեստի ստեղծագործությունների ներքին միասնությունն ու ընդհանրությունները:

Այս գրքի շնորհիվ ընթերցողը պատկերացում է կազմում միջնադարյան արվեստի կանոնի մասին: Գիրքը լիովին ծառայեց իր նպատակին՝ հաղորդակցություն հաստատելու անցյալի եկեղեցական արվեստի ավանդների հետ:

Այս նույն շրջագծում է ստուգաբանվում «Հայաստան. ուղեցույց ուխտավորների և զբոսաշրջիկների համար» (1998) գրքում Կ. Մաթևոսյանի Հայ եկեղեցու պատմությանը նվիրված բաժինը:

Արվեստի բնագավառում գիտահանրամատչելի հաջորդ երկու գործերն արդեն տեղայնացել են նրա մյուս գիտական նախընտրությունների շրջանակում: Նորավանքին վերաբերող հետաքրքրությունների շրջագծում է գրված ճարտարապետ, մանրանկարիչ Մոմիկին նվիրված գիրք-ալբոմը (Երևան, 2010), ուր Մոմիկի ստեղծագործությունները ներկայացվում են Այունիքում՝

Օրբելյանների գործունեության շրջանակում: Հակիրճ և ընդհանրացված շարադրանքով թվարկվում են Մոմիկի ընդօրինակած և նկարազարդած ձեռագրերը, բերվում են մի շարք պատկերներ ու կատարվում է դրանց արվեստագիտական վերլուծությունը:

Նույն կառուցվածքն ունի «Հաղբատի Ավետարանը» դարձյալ գիրքալբոմը (Երևան, 2012): Այս գիրքը ընորոշ օրինակ է, թե ինչպես կարելի է ներկայացնել և վերլուծել առանձին մեկ Ավետարանը: Կ. Մաթևոսյանի առանձնահատուկ ուշադրությունն այս ձեռագրի հանդեպ բացատրվում է վերջինիս՝ Անիի ձեռագրային միջավայրին պատկանելով, որովհետև գրվել ու նկարազարդվել է Հոռոմոսում, իսկ անվանումը ստացել է Հաղբատում գրված լինելու շնորհիվ:

Մատենադարանի հայկական ձեռագրերի մանրանկարներին է նվիրված Է. Վարդանյանի հետ կազմված «Հայկական մանրանկարչություն» ֆրանսերենով հրատարակված ծավալուն ալբոմը (Երևան, 2018):

Կ. Մաթևոսյանի գիտական հետաքրքրությունների առանցքում Բագրատունյաց մայրաքաղաք Անին է, որտեղ նա յուրաքանչյուր քայլը կատարում է զգույշ, բայց՝ հաստատուն՝ առաջնորդվելով միջգիտակարգային համադրական քննությամբ՝ պատմագիտության, հայ մատենագրության, հնագիտական նյութերի, հայ արվեստի, հայկական ձեռագրերի հիշատակարանների և հայ վիմագրական արձանագրությունների տվյալների միահյուսված քննությամբ: Դեպի Անի տանող երկու գլխավոր ճանապարհներն են հայ գրչության վանական մի քանի կենտրոնները և միջնադարյան ժամանակագրությունը: Պատահական չէ, որ նրա թեկնածուական ատենախոսությունը նվիրված էր Անիի գրչության կենտրոնին, իսկ առաջին գիրքը միջնադարյան հայտնի աշխարհիկ և վանական կենտրոններից Արուճին, որը նաև իր հայրական ծննդավայրն է, որի հանդեպ սերը ընտանեկան ավանդներ ունի:

«Արուճ» (Երևան, 1987) ուսումնասիրության մեջ պատմաքննական անդրադարձ է կատարվում այս բնակավայրի անցյալին և միջնադարյան ճարտարապետական հուշարձաններին, վերջիններիս վիմական արձանագրություններին և հայ մատենագրության մեջ եղած հիշատակություններին: Մեծ տեղ է հատկացված աշխարհիկ շինություններին, որովհետև Գրիգոր Մամիկոնյան իշխանի 661–685 թթ. կառավարման շրջանում Արուճը եղել է Հայաստանի վարչական կենտրոնը:

Կ. Մաթևոսյանի գիտական հետաքրքրությունների շրջագծում կարևոր տեղ է գրավում Նորավանքը՝ որպես միջնադարյան հայտնի գիտական և ձեռագրային կենտրոն, ուր ստեղծագործել է նաև Մոմիկը: Պատմաբանն իր գործուն մասնակցությունն է բերել Նորավանքի նորոգման հետ կապված աշխատանքներին, ապա՝ նորոգման տասնամյակին նվիրված հանդիսություններին՝ կազմելով «Նորավանք» (Երևան, 2009) ժողովածուն, որում վանքի պատմությանը նվիրված բաժնի հեղինակն է:

Այս վանքին է նաև նվիրված «Նորավանքի վիմագրերը և հիշատակարանները» (Երևան, 2017) արժեքավոր ուսումնասիրությունը, որը կրկնակիորեն է կարևորվում: Նախ, որովհետև այստեղ մեկտեղվել են նախկինում Սեդրակ Բարխուդարյանի, Սուրեն Սաղումյանի և Մայքլ Սթոունի հրատարակած Նորավանքին վիմական արձանագրությունները, դրանց հավելել է վերջին

շրջանում շինարարական աշխատանքների, պեղումների և իր իսկ որոնումների արդյունքում ի հայտ եկած ևս երկու տասնյակ վիմական արձանագրություն, ինչպես նաև՝ նորովի վերընթերցել ու տարբեր տողատումներ և բառաճշտումներ կատարել մինչ այդ հայտնի վիմական արձանագրություններում, միաժամանակ դրանք բոլորն օժտելով համապատասխան ծանոթագրություններով՝ երկրորդ կյանք է հաղորդել պահպանված և հայտնի վիմագրերին: Երկրորդ՝ վիմագրերին զուգահեռ բերել է Նորավանքին վերաբերող հայտնի հիշատակարանները՝ իրար հետ զուգադրելով վիմական և ձեռագրային հիշատակությունները և ցույց տալով, թե դրանք ինչպես են փոխլրացնում իրար:

Արուճին և Նորավանքին վերաբերող ուսումնասիրություններում մշակված եղանակով է գրված «Հավուց Թառի վանքը» (Երևան, 2012) աշխատությունը, որում դարձյալ մատենագրական հարուստ նյութի հիման վրա բերվում է այս վանքի հիմնումը, անվան ստուգաբանությունը, ավանդությունները, ապա և՝ բուն պատմությունը վանական համալիրին մաս կազմող միավորներով: Հեղինակը փորձել է վերականգնել նաև վանքի առաջնորդների ցուցակը կամ Գավազանագիրքը: Այս գործն առանձնահատուկ կարևորություն ունի ոչ միայն Հավուց Թառի միջնադարում խաղացած դերով, այլև պայմանավորված հանգամանքով՝ այն եղել է նաև Երևանի թեմական կենտրոնը, որի առաջնորդի նստավայրն այստեղ է գտնվել: Ուստի Հավուց Թառի պատմությունն ուղղակիորեն հարաբերվում է Երևանի պատմության հետ:

«Աղթամար» (Երևան, 2013) գիրքը կարելի է անվանել Աղթամարին նվիրված հանրագիտարան, ուր հանգամանալից տեղեկություններ կան այս, ինչպես նաև՝ Վանա ծովի մյուս կղզիների, համալիրի աշխարհիկ ու եկեղեցական շինությունների, տաճարի պատկերանշանների խորհրդաբանության, կղզում գրված ձեռագրերի և Աղթամարի կաթողիկոսության մասին: Համակարգմամբ ի մի է բերվում առկա ողջ գիտական գրականությունը և ամբողջական պատկերացում տրվում ողջ կղզու և այնտեղ գտնվող կառույցների մասին:

Գիտական հիմքի և աղբյուրագիտական քննության վրա խարսխված հանրամատչելի տեղեկատվական աշխատանք է «Մուղնու Ս. Գևորգ» գրքույկը (Երևան, 2000): Իր ընդգրկունության և գիտահանրամատչելի ոճով շարադրված լինելու համար այն թարգմանվել է նաև ռուսերեն ու անգլերեն (Երևան, 2009):

Կեչառիսի վանական համալիրի հիմնման հազարամյակին նվիրված «Կեչառիս 1000» ժողովածուի մեջ (համահեղինակներ՝ Մուրադ Հասրաթյան, Վարդան Դևրիկյան) (Սբ. Էջմիածին, 2004) Կ. Մաթևոսյանը գրել է վանքի պատմությունը և այստեղ Պահլավունիների գործունեությանը նվիրված բաժինը:

Կ. Մաթևոսյանը պատկանում է հայագիտության և, ի մասնավորի, պատմագիտության բնագավառում Ղևոնդ Ալիշանին ու Գարեգին կաթողիկոս Հովսեփյանին հետևող այն գիտնականների թվին, ովքեր կատարում են պատմության երևույթների և իրար փոխկապակցված փաստերի առավել խորքային քննություն՝ ընդհուպ մինչև պատմագրական ավելի փոքր միավորների՝ վիմական արձանագրությունների, ձեռագրերի հիշատակարանների ու Մանր ժամանակագրությունների հաղորդած տեղեկությունների կիրառմամբ:

Հայկական ժամանակագրություններից Սամվել Անեցու «Հաւաքմունք ի գրոց պատմագրաց» ժամանակագրությունը, որը հասնում է մինչև 1163 թ., ապա շարունակվում և հետագա հավելողների կողմից ձգվում մինչև XVIII դար, թե՛ ամենածավալունն է հայկական ժամանակագրությունների շարքում և թե՛ բոլորից խոր տեղեկություններ է պարունակում անիական միջավայրի մասին, որը երևում է նաև հեղինակի Անեցի անվանումից: Հանգամանքը կարևոր դեր է խաղացել, որ Կ. Մաթևոսյանը հանգամանորեն զբաղվի այս երկով՝ ուսումնասիրելով վերջինիս ձեռագրերի խմբագրությունները՝ առկա հավելումներով և տարընթերցումներով: Կատարված հսկայական աշխատանքի նախապատրաստությունն է «Սամվել Անեցու ժամանակագրության ձեռագրերը և նորահայտ լրացումները» (Երևան, 2009) ուսումնասիրությունը: Այս գործի տրամաբանական շարունակությունը դարձավ ժամանակագրության գիտաքննական բնագրի հրատարակությունը («Սամուէլ Անեցի եւ շարունակողներ, Ժամանակագրութիւն», աշխատասիրությամբ Կարեն Մաթևոսյանի, Երևան, 2014): Ժամանակագրությունների քննական բնագրերի կազմումը կրկնակիորեն է դժվար: Բացի բոլոր բնագրերին բնորոշ տարընթերցվածներից, Ժամանակագրություններն ունեն մի շարք յուրահատկություններ: Դրանց խմբագիր-գրիչները ընդօրինակությունների ժամանակ բնագրերի մեջ կատարել են երկու բնույթի հավելումներ: Առաջին՝ հավելումներ են կատարվել տարեթվերի ներքո բերված շարադրանքում՝ այն ընդլայնելով կամ կրճատելով: Երկրորդ՝ նոր փաստեր կամ իրադարձություններ են հիշատակվել որևէ տարեթվի ներքո: Երրորդ կարգի փոփոխությունները, որոնք վերաբերում են ժամանակագրությունների շարունակմանը որևէ ժամանակագրության ավարտի տարեթվից հետո, բնականաբար, պարզ են: Ավածը վերաբերում է նաև Անեցու Ժամանակագրությանը, որն ավարտվում է 1163 թվով, որից հետո հիշվող տարեթվերը, հասկանալի է, որ հետագա հավելողների կողմից են ավելացվել: Առավել բարդ է բուն ժամանակագրության կազմումը՝ անջատելով հետագա շրջանի հեղինակների բուն ժամանակագրության մեջ կատարած հավելումները, որոնք մանրակրկիտ քննությամբ վեր է հանել Կ. Մաթևոսյանը՝ դրանք ընդհանուր բնագրի մեջ բերելով այլ շարվածքով և յուրաքանչյուր հավելման կողքին նշելով, թե այն որ ձեռագրում է հանդիպում: Նման հանգամանալից աշխատանքի շնորհիվ ընթերցողը միանգամից տեսնում է հետագա հավելումների շերտը և թե դրանցից յուրաքանչյուրը որ ձեռագրում է կատարվել:

Նույն սկզբունքով է կազմված նաև Կիլիկյան Հայաստանի XIII դարի հեղինակ Հեթում Պատմիչի կամ Կոռիկոսցու Ժամանակագրությունը, որը Կ. Մաթևոսյանը դիտարկում է նրա գործունեության ու գրական ժառանգության համապատկերում՝ «Հեթում պատմիչ Կոռիոսցին և նրա ժամանակագրությունը» գրքում (Երևան, 2011):

Ինչպես վերն ասացինք, Կ. Մաթևոսյանի գիտական հետաքրքրությունների առանցքում Բագրատունյաց արքայանիստ և Հայոց քաղաքամայր Անին է, որի հետ են հարաբերվում և, ասես, մի ճյուղը լինեն հայ վանական տարբեր կենտրոններին ու առանձին տոհմերին և անհատներին նվիրված ուսումնասիրությունները:

Անիական շարքն սկսվեց թեկնածուական ատենախոսության ընդլայնված տարբերակը եղող «Անի. եկեղեցական կյանքը և ձեռագրական ժառանգությունը» (Սբ. Էջմիածին, 1997) մենագրությամբ: Ինչպես վերնագիրն է հուշում, գիրքն ունի երկմաս կառուցվածք: Առաջին մասը նվիրված է հոգևոր-եկեղեցական կյանքին: Ներկայացվում են Անիի կաթողիկոսական կենտրոնը, թեմական ընդգրկումը, վանքերն ու եկեղեցիները և քաղաքում հիշատակվող կրոնական տարբեր հարանվանությունները: Նման աշխատանքը միանգամայն նորություն էր, քանի որ անիագիտությունը առավել զարգացել էր նյութական մշակույթի և պեղումների արդյունքում գտնված նյութերի հիման վրա: Նշենք՝ նաև խորհրդային շրջանում եկեղեցուն վերաբերվող հարցերի ուսումնասիրությունը չէր խրախուսվում: Շնորհիվ այս գրքի՝ ընդգրկուն պատկերացում է կազմվում Անիի եկեղեցական կյանքի և կառույցի մասին, որն իր հերթին օգնում է ավելի ճիշտ ըմբռնելու Անիի համար ասվող՝ «Հազար ու մի եկեղեցիների քաղաք» արտահայտությունը:

Գրքի երկրորդ մասը նվիրված է Անիի ձեռագրային գրչագրական ժառանգությանը: Ձեռագրային նյութը ըստ գրչության վայրերի այնպես է ցույց տրվում, որ երևում է, թե որ վանքերն են եղել առավել նշանակալից գրչության կենտրոններ և թե ձեռագրերի գրության թիվն ինչպես է ուղիղ համեմատական եղել քաղաքի վանքերին, աղքատացմանն ու անկմանը, որը մեկ անգամ ևս գալիս է վկայելու՝ հայկական ձեռագրերի գրության ընթացքն ուղիղ համեմատական է եղել ժողովրդի անցած պատմական ուղուն:

«Անի-Շիրակի պատմության էջեր» (Երևան, 2010) գրքում տեղ են գտել Անիի պատմությանը և Բագրատունյաց թագավորության կազմում եղած մի շարք վանքերին ու բնակավայրերին և Անիի հետ կապված տարբեր գործիչներին նվիրված հոդվածները: Հեղինակի ելակետը միայն այդ բնակավայրերի աշխարհագրական մերձավորությունը և վարչաքաղաքական կապվածությունը չի եղել Անիի հետ, այլ որ դրանք սերտորեն հարաբերվել ու իրենց մեջ պահել են Անիի պատմության շատ էջեր: Կ. Մաթևոսյանը բերում է Հոռոմոսի և Բագայրի վանքերի օրինակը, որոնց վիմական արձանագրություններում Անիի փողոցների և քաղաքամասերի անուններն ավելի շատ են պահպանվել, քան բուն քաղաքի արձանագրություններում: Գրքում այն դրույթն է ընդգծվում, որ Անիի գրային և մշակութային կապերը շատ ավելի հեռուն են գնում և, ըստ այդմ, անիագիտական ուսումնասիրությունները տարածական ու խորքային առումով ավելի լայն ընդգրկում պետք է ունենան:

Որոշակիորեն հետադարձ հայացքով է գրված և նախորդ աշխատանքների հանրագումարն է «Պատմագիտական դիտարկումներ. Արուճ, Հավուց Թառ, Անի, Աղթամար, Վայոց Ձոր» (Երևան, 2020) գիրքը: Ինչպես առաջաբանում նշում է, հեղինակն այս գիրքը գրել է համավարակի օրերին և ընթերցողին բերում է իր կատարած աշխատանքները, նաև շեշտադրում, թե պատմամշակութային այդ տեղավայրերի հետ կապված ինչ խնդիրներ կան և դրանք ինչպես պետք է լուծել:

Ռաֆֆին «Սամվել» վեպի առաջաբանում գրում է՝ մեր պատմագրության մեջ անտեսված է եղել ժողովուրդը և հիշատակություններ չկան: Կ. Մաթևոսյանն Անիի օրինակով պեղել և հանել է ոչ միայն իշխանական ու ազնվականական տոհմերի, այլև ժողովրդի տարբեր խավերի, արհեստավորների և

անգամ ընտանեկան գերդաստանների մասին եղած հիշատակությունները: Այս հարցին են նվիրված նրա երկու գրքերը՝ «Անիի ազնվականության պատմությունից կամ երեք Գրիգոր Մագիստրոս» (Երևան, 2015) և «Անին և անեցիները» (Երևան, 2021):

Առաջին գրքում հեղինակն անդրադառնում է Պահլավունիների տոհմին և Գրիգոր Մագիստրոս անունը կրող անձնավորությունների հետ կապված շփոթին, երբ մեկի գործերը վերագրվել են մյուսին կամ հակառակը: Նաև ներկայացնում ու նշանավորում է Պահլավունյաց տոհմի պատմությունը և դերակատարությունը X–XIII դարերում: Գրքի առաջաբանում հեղինակը կարևորում է նաև հայ ազնվականության պատմության ուսումնասիրությունը:

Եթե նախորդ աշխատություններում Կ. Մաթևոսյանն Անին ներկայացնում էր ըստ աշխարհագրական ընդգրկման ու պատմամշակութային շերտերի, ապա «Անին և անեցիները» գրքում արդեն քաղաքի բնակչությունն է ըստ հասարակության շերտերի՝ թագավորական ընտանիք, ազնվականներ և իշխաններ, հոգևոր դասը, իր բազմաստիճանությամբ ու ամենաբազմազան ժողովրդական մասը՝ Անիի գերդաստան-տոհմերը, ընտանիքները, արհեստավորներն ու առևտրականները: Քննվող նյութի վերհանման նույն սկզբունքով ներկայացվում են նաև Անիի քաղաքամասերն ու փողոցները: Հեղինակը Ռաֆֆուն համահունչ նշում է, որ պատմագրական տվյալները հնարավորություն չեն տալիս գրել ժողովրդի մասին, սակայն գրական ավելի փոքր ժանրերը՝ վիմական արձանագրությունները, հիշատակարանները, Մանր ժամանակագրությունների հիշատակություններն արդեն ուրվագծում են ժողովրդական կյանքի խճանկարը: Այսօր պատմագիտության կարևոր ուղղություններից է առևտրականության պատմությունը, և Անիի տոհմերին, գերդաստաններին, արհեստավորների դասերին ու վաճառականներին նվիրված բաժիններով՝ Կ. Մաթևոսյանի ջանքերով գրվում է նաև Անիի նմանօրինակ պատմությունը, որը առաջին նման աշխատանքն է՝ նվիրված միջնադարյան Հայաստանում առևտրականության պատմությանը:

Կարեն Մաթևոսյանին սրտանց շնորհավորում եմ ծննդյան 65-ամյակի առիթով՝ մաղթելով գիտական և աշխատանքային նորանոր հաջողություններ:

ՎԱՐԴԱՆ ԴԵՎՐԻԿՅԱՆ
Բանասիրական գիտությունների դոկտոր

ՀՏԴ : 929:891.981Թումանյան

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՄԱՀՎԱՆ 100-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ*

Ապրիլի 12–14-ին Երևանում տեղի ունեցավ Հովհաննես Թումանյանի մահվան 100-րդ տարելիցին և հիշատակի ոգեկոչմանը նվիրված հանրապետական գիտաժողով, որը կազմակերպել էին ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտը (ԳԻ), Երևանի պետական համալսարանը (ԵՊՀ), Հովհաննես Թումանյանի թանգարանը (ՀԹԹ), Հայաստանի գրողների միությունը (ՀԳՄ):

Գիտաժողովը բացվեց ՀՀ ԳԱԱ նախագահության նիստերի դահլիճում: ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ակադեմիկոս Յուրի Սուվարյանն *իր խոսքում արժևորեց Հովհ. Թումանյանի հասարակական գործունեությունն ու գրական ժառանգությունը և կարևորեց գիտաժողովի նշանակությունը՝ որպես նոր ուսումնասիրությունների մեկնակետի: Նա նշեց, որ գիտաժողովի կազմակերպման աշխատանքներում իր մեծ ներդրումն է ունեցել ԳԻ տնօրեն, բ. գ. դ.* Վարդան Դևրիկյանը*:*

Ողջույնի խոսքով հանդես եկան նաև ՀԳՄ նախագահ Էդվարդ Միլիտոնյանը*, ԳԻ փոխտնօրեն, բ. գ. թ.* Հերիքնազ Որսկանյանը*, որը ներկայացրեց ինստիտուտի տնօրեն Վ. Դևրիկյանի ուղերձը, ԵՊՀ Հ. Թամրազյանի անվան հայ գրականության պատմության ամբիոնի պրոֆ., բ. գ. դ.* Սամվել Մուրադյանը*, ՀԹԹ տնօրեն, բ. գ. թ.* Անի Եղիազարյանը*, Հայկական հանրագիտարանի գլխավոր խմբագիր, քիմ. գ. դ.* Հովհաննես Այվազյանը*, ԳԻ առաջատար գիտաշխատող, բ. գ. դ.* Ալբերտ Մուշեղյանը*:*

Լիագումար նիստում լսվեց չորս զեկուցում: ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, բ. գ. դ., պրոֆ. Աելիտա Դոլուխանյանը *ներկայացրեց «Հովհ. Թումանյանի մանկագրության առանձնահատկությունները» թեմայով զեկուցումը, լսվեցին բ. գ. դ., պրոֆ.* Ավիկ Իսահակյանի՝ *«Հանճարի ավագ դուստրը. Աշխեն Թումանյան», բ. գ. դ., պրոֆ.* Ազատ Եղիազարյանի՝ *«Վեճ երեք թումանյանագետների հետ «Թմկաբերդի առումը» պոեմի գնահատման շուրջ», բ. գ. դ., պրոֆ.* Հենրիկ Էդոյանի՝ *«Պուշկինի «Ջմեռվա իրիկունը» բանաստեղծության թումանյանական թարգմանությունը» խորագրերով զեկուցումները:*

Այնուհետև գիտաժողովի աշխատանքները շարունակվեցին ԳԻ-ում: Զեկուցումներով հանդես եկան՝ բ. գ. դ., պրոֆ. Մադլենա Ջանփոլադյանը *(«Ռուս քննադատությունը Հովհ. Թումանյանի բանագիտական սկզբունքների մասին»), բ. գ. դ., պրոֆ.* Սուրեն Դանիելյանը *(«Թումանեանը՝ «կոտախնձոր» բանաստեղծական աւանդոյթի եւ գալիք օրերի բախումներում»), բ. գ. դ.* Անուշավան Զաքարյանը *(«Դավիթ Անանուն և Հովհաննես Թումանյան. գրական-հասարակական առնչություններ»), բ. գ. դ.* Պետրոս Դեմիրճյանը *(«Հովհաննես Թումանյանի անհատականությունն ու ստեղծագործությունը՝ Հրանտ Թամ-*

---

* *Ներկայացվել է 02. IV. 2023 թ., ընդունվել է տպագրության 19. VI. 2023 թ.:*

բազյանի գնահատությամբ»), բ. գ. դ., պրոֆ. Վանո Եղիազարյանը *(«Մի քանի դիտարկումներ «Բզեզի դպրոցը» փոխադրության շուրջ»), բ. գ. դ.* Մարգարիտա Խաչատրյանը *(«Հովհաննես Թումանյան և Համաստեղ. հեքիաթի երկու մշակում»), բ. գ. թ., դոցենտ* Վահան Նավասարդյանը *(«Հովհ. Թումանյանի տաղաչափական արվեստը»), բ. գ. դ., դոցենտ* Եվա Մնացականյանը *(«Մ. Խոստիկյանի «Կրոնափիլիսոփայականը Հովհ. Թումանյանի բանաստեղծությունների մեջ» խորագրով հոդվածի շուրջ»), բ. գ. թ., դոցենտ* Թեհմինա Մարությանը *(«Հովհաննես Թումանյան–Ակսել Բակունց. կենսագրական նոր փաստեր և առնչություններ»), բ. գ. թ., դոցենտ* Քնարիկ Աբրահամյանը *(«Թումանեան արուեստագէտը արեւմտահայ նամակագրութեան մէջ») և բ. գ. թ.* Գայանե Աթանեսյանը *(«Անցավորի և անանցի թումանյանական ընկալումը»):*

Ապրիլի 13-ին գիտաժողովի աշխատանքները շարունակվեցին ԵՊՀ-ում: Իրենց զեկուցումները ներկայացրին բ. գ. դ., պրոֆ. Սամվել Մուրադյանը *(«Հովհ. Թումանյանը և «մեծ հավերժի ձևերը»»), բ. գ. դ.* Սուսաննա Հովհաննիսյանը *(«Հովհաննես Թումանյանի քաղաքագիտական դիրքորոշումների գրական և գործառական դրսևորումները 20-րդ դարասկզբին»), բ. գ. թ., դոցենտ* Նվարդ Վարդանյանը *(«Հովհ. Թումանյանի կուտակային հեքիաթների և ծիսերգային բանահյուսության որոշ զուգահեռներ»), բ. գ. թ., դոցենտ* Գրիգոր Ղազարյանը *(«Տարածության ընկալման նշանագիտական հայեցակերպը «Լոռեցի Սաքո» պոեմի օրինակով»), փ. գ. թ.* Դավիթ Մոսինյանը *(«Հ. Օշականը Հ. Թումանյանին դեմ հանդիման»), պ. գ. թ., դոցենտ* Հասմիկ Հարությունյանը *(«Արյան վրեժը հայոց մշակույթում՝ ըստ Հովհ. Թումանյանի ստեղծագործությունների»), սոցիալ-մշակութային գործունեության մագիստրոս* Արմեն Այվազյանը *(«Նոր բացահայտումներ Թումանյանի 1921 թվականի հասարակական գործունեությունից»):*

Գիտաժողովի երրորդ՝ եզրափակիչ նիստը, տեղի ունեցավ ապրիլի 14-ին ՀԹԹ-ում: Զեկուցումներով հանդես եկան բ. գ. թ. Անի Եղիազարյանը *(«Հովհ. Թումանյանի՝ Մաշտոցյան Մատենադարանում պահպանվող հավաքածուն»), բ. գ. թ., դոցենտ* Աբգար Ավինյանը *(«Հովհ. Թումանյանի պոեզիան ժամանակակից նշանագիտության լույսի ներքո»), բ. գ. թ.* Կարինե Առաքելյանը *(«Ժողովրդական հեքիաթները Հովհաննես Թումանյանի և Նշան Պեշիկթաշլյանի մշակումներում»), բ. գ. թ., դոցենտ* Սիրանուշ Մարգարյանը *[«Սրբազան ամուսնության միֆոլոգեմը եվրոպական գրականության մի քանի գործերում և Թումանյանի «Ախթամար»-ում (զուգադիր քննության փորձ)»], բ. գ. թ., դոցենտ* Նունե Մկրտչյանը *[«Հովհ. Թումանյանի նամակներում (1885–1900) արծարծված մի քանի հիմնահարցերի քննություն»], բ. գ. թ.* Արմեն Մանուկյանը *[«Երկու ճշտում «Հովհ. Թումանյանի կյանքի և ստեղծագործության տարեգրության (1869–1908)» վերաբերյալ»]:*

Գիտաժողովի ավարտին Ամենայն հայոց բանաստեղծի հիշատակին մատուցվեց հոգեհանգստյան կարգ:

ԵՎԱ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

ՀՏԴ : 947.925

ԳԻՏԱԺՈՂՈՎ՝ ՆՎԻՐՎԱԾ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ «ՍՊԻՏԱԿ ԷՋԵՐԻՆ»*

Վերջին տարիներին ակնհայտորեն մեծացել է հումանիտար հետազոտողների և լայն հանրության հետաքրքրությունը Հայաստանի պատմության խորհրդային ժամանակաշրջանի նկատմամբ: Դրա վկայություններն են հրատարակված բազմաբնույթ ուսումնասիրությունները, որոնք նոր լույս են սփռում այդ ժամանակահատվածի պատմության բազում կնճռոտ խնդիրների վրա: Հայոց պատմության խորհրդային ժամանակաշրջանն առանձնահատուկ է ոչ միայն սոցիալ-տնտեսական կյանքում տեղի ունեցած փոփոխություններով, այլ՝ քաղաքական ամբողջատիրական համակարգի ներդրմամբ, որի արդյունքում հաստատվեց կոմկուսի մենատիրությունը: Այս փոփոխություններն իրենց ուղղակի ազդեցություններն էին թողնում մարդկանց կյանքում՝ ձևավորելով հասարակական առանձնահատուկ հարաբերություններ, մարդկանց թելադրելով յուրօրինակ մտածելակերպ ու կենսակերպ:

Խորհրդային Հայաստանի հատկապես հետպատերազմյան շրջանի որոշ հիմնախնդիրներ դուրս են մնացել պատմաբանների ուշադրությունից, ինչի արդյունքում մնացել են բազմաթիվ «սպիտակ էջեր» և «մութ անցքեր», որոնց բացահայտումը, արժևորումն ու անաչառ գիտական գնահատականը հայ պատմագիտության կարևորագույն, արդիական խնդիրներից է: Ասվածն առավել քան վերաբերվում է խորհրդային պետության գոյության վերջին քառորդին (1965–1991 թթ.), որը խորհրդային Հայաստանի պատմության առավել քիչ ուսումնասիրված փուլերից է: Այս ժամանակաշրջանի վերաբերյալ տարիներ շարունակ հետազոտություններ են իրականացվում, հոդվածներ, գրքեր հրատարակվում և գիտաժողովներ կազմակերպվում ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում (ՊԻ):

ՀՀ ԿԳՄՄՆ գիտության կոմիտեի ֆինանսավորմամբ Պատմության ինստիտուտում իրականացվող «Խորհրդային Հայաստանի պատմության «սպիտակ էջերը». ազգային զարթոնքից մինչև անկախություն (1965–1991 թթ.)» գիտական թեմայի (ղեկավար՝ Կարեն Խաչատրյան, անդամներ՝ Համո Սուքիասյան, Գագիկ Ժամհարյան, Գայանե Ղազարյան) շրջանակներում 2023 թ. ապրիլի 30-ին Կոտայքի մարզի Ծաղկաձոր քաղաքում անցկացվեց «Խորհրդային Հայաստանի առօրյա կյանքի «սպիտակ էջերը»» խորագրով միջազգային գիտաժողով և կլոր սեղան-քննարկում:

Գիտաժողովի առաջին նիստում (նիստավար՝ Կ. Խաչատրյան) լսվեց 4 զեկուցում: Պ. գ. դ., պրոֆ. Կարեն Խաչատրյանը (ՊԻ) «Խորհրդային Հայաստանի առօրեականության պատմության ուսումնասիրումը արդի պատմագիտության մեջ» զեկուցման մեջ կարևորեց առօրեականության պատմության ուսումնասիրումը որպես պատմագիտական ուսումնասիրությունների նոր

* *Ներկայացվել է 12. VI. 2023 թ., ընդունվել է տպագրության 19. VI. 2023 թ.:*

ուղղություն: Նա համառոտ գծերով ներկայացրեց 2009 թ. սկսած Հայաստանում առօրեականության պատմության ուսումնասիրման ընթացքը՝ շեշտադրելով այն կարևորագույն ձեռքբերումները, որոնք արձանագրվել են անկախ Հայաստանում պատմագիտական հետազոտությունների արդյունքում: Պ. գ. թ. Վիկտոր Իշչենկոն *(ՌԴ ԳԱ ընդհանուր պատմության ինստիտուտ)* «Повседневная забава или политический инструмент? Как большевики конструировали спортивную жизнь в СССР» *զեկուցման մեջ անդրադարձավ ԽՍՀՄ սպորտային կյանքին՝ ցույց տալով, թե ինչպես էին խորհրդային իշխանությունները կարևորում սպորտն ու այն դարձնում կարևորագույն քաղաքական գործիք: Զուգահեռներ անցկացնելով ԽՍՀՄ միութենական հանրապետությունների միջև՝ նա ընդգծեց, որ խորհրդային մամուլը ծավալուն տեղեկատվություն է պարունակում բնակչության սպորտային առօրյայի վերաբերյալ: Պ. գ. թ.* Գագիկ Ժամհարյանը *(ՊԻ) «Խորհրդային առօրեականության պատմության ուսումնասիրության տեսական հարցերը» զեկուցման մեջ անդրադարձավ առօրեականության պատմության՝ որպես պատմագիտական հետազոտությունների ինքնուրույն ոլորտի ձևավորման պատմությանը, պատմագիտական հետազոտություններում առօրեականության պատմության մեթոդաբանության կիրառության հեռանկարներին: «Խորհրդային Հայաստանի պատմության «սպիտակ էջերի» բացահայտումը արխիվային փաստաթղթերով» զեկուցման մեջ պ. գ. դ.* Ամատունի Վիրաբյանն *(Հայկական պետական մանկավարժական համալսարան) ընդգծեց արխիվային փաստաթղթերի կարևորությունը՝ որպես Խորհրդային Հայաստանի պատմության չուսումնասիրված խնդիրների՝ «սպիտակ էջերի» բացահայտման սկզբնաղբյուր: Պ. գ. դ., պրոֆ.* Արմենակ Մանուկյանը *(Երևանի պետական համալսարան) «Այլախոհությունը Խորհրդային Հայաստանում 1960–1980-ական թվականներին (պատմության «սպիտակ էջերը»)» զեկուցման մեջ անդրադարձավ Խորհրդային Հայաստանի ազգաբնակչության շրջանում այլակարծության դրսևորումներին, կարևորեց այլախոհության ուսումնասիրումը՝ իբրև Խորհրդային Հայաստանի պատմության «սպիտակ էջ»: Նա զուգահեռներ անցկացրեց միութենական այլ հանրապետությունների այլախոհական շարժումների հետ՝ ցույց տալով ընդհանուր օրինաչափություններն ու տարբերությունները:*

Երկրորդ նիստում (նիստավար՝ Հ. Սուքիասյան) լսվեց 5 զեկուցում: Պ. գ. թ. Ավագ Հարությունյանը *(Հայաստանի ազգային արխիվ) «Խորհրդային Հայաստանում ազգային զարթոնքի արտացոլումը կինոֆոտո նյութերում» զեկուցման ընթացքում ընդգծեց Հայաստանի ազգային արխիվի կինոֆոտոֆոնո փաստաթղթերի և ապահովագրական պատճենների մասնաճյուղում պահվող նյութերի կարևորությունը Խորհրդային Հայաստանում ազգային զարթոնքի ժամանակահատվածն ուսումնասիրելու գործում: Նա շեշտեց, որ կինո, ֆոտո և ֆոնո փաստաթղթերն առավել ամբողջական ու զգացական են պատկերում բնակչության առօրյա կյանքը՝ նիստուկացը, կենցաղը, աշխատանքը, տոները և այլն: Այս առումով զեկուցողը կարևորեց «Սովետական Հայաստան» կինոխրոնիկան՝ իբրև բնակչության առօրյա կյանքի ուսումնասիրության աղբյուր: Պ. գ. թ., դոց.* Հովհաննես Ալեքսանյանը *(ՊԻ) «Դրվագներ հայրենադարձների խորհրդահայ առօրյայից» զեկուցման մեջ անդրա-*

դարձավ 1946–1948 թթ. Մեծ հայրենադարձության շրջանում ներգաղթի կառույցների կազմակերպմանն ու գործունեության հարցերին, հայրենադարձների դրությանը, հայրենիքում ունեցած խնդիրներին: Նա կարևորեց հայրենադարձների կենցաղի ու գործունեության ուսումնասիրությունը՝ որպես Խորհրդային Հայաստանի նոր իրականություն ձևավորողների: Պ. գ. թ., դոցենտ Լիլիթ Զաքարյանը *(ՊԻ) «Ինքնահրատը վերակառուցման տարիների Հայաստանում» զեկուցման մեջ անդրադարձ կատարեց գորբաչովյան ժամանակափուլում Խորհրդային Հայաստանում տպագրվող ինքնահրատ թերթերին՝ որպես այլախոհության դրսևորում: Նա զուգահեռներ անցկացրեց ինչպես նախընթաց շրջանի (1960–80-ականների սկիզբ), այնպես էլ հաջորդ ժամանակափուլի (1990-ականների սկիզբ) միջև՝ ցույց տալով «Վերակառուցման» շրջանի ինքնահրատ պարբերականների առջև ծառացած խնդիրները: Պ. գ. թ., դոցենտ* Համո Սուքիասյանը *(ՊԻ) «Պաշտոնական դիրքի չարաշահումները Խորհրդային Հայաստանում 1960–1980-ական թվականներին» զեկուցման մեջ անդրադարձ կատարեց նշյալ ժամանակահատվածում Խորհրդային Հայաստանում տարածված պաշտոնական դիրքի չարաշահումների դրսևորումներին, որը թեև բնորոշվում էր իբրև պետական-կուսակցական մակարդակում բույն դրած չարիք, այդուհանդերձ, այդ բացասական երևույթի դեմ պայքարը դրական արդյունք չէր ունենում: Այն համակել էր պետական և հանրային կյանքի բոլոր բնագավառները: Հայցորդ* Գայանե Ղազարյանը *(ՊԻ) «Խորհրդային տոները Հայկական ԽՍՀ բնակչության առօրյա կյանքում» զեկուցման մեջ ներկայացրեց խորհրդային տոները՝ որպես Խորհրդային Հայաստանի առօրեականության պատմության բաղկացուցիչ մաս, անդրադարձավ սովորական քաղաքացիների առօրյայում պետական տոների ունեցած նշանակությանը, կարևորեց տոնի առօրյայի ուսումնասիրությունը:*

Գիտաժողովի վերջում ցուցադրվեց 1960-ականների խորհրդահայ առօրյան պատկերող երկու վավերագրական տեսանյութ նվիրված Սարդարապատի հուշահամալիրի բացմանը (1968 թ.) և Մեծ Եղեռնի 50-ամյա տարելիցի ոգեկոչմանը (1965 թ.):

Գիտաժողովի արդյունքների ամփոփումից հետո Կ. Խաչատրյանի ղեկավարությամբ անցկացվեց կլոր սեղան–քննարկում՝ «Առօրեականության պատմության ուսումնասիրության խնդիրներն ու հեռանկարները» թեմայով: Ելույթ ունեցան ՀՀ ԳԱԱ «Պատմաբանասիրական հանդեսի» գլխավոր խմբագիր, բ. գ. դ. Անուշավան Զաքարյանը, *ՀՀ ԳԱԱ ՊԻ գիտքարտուղար, պ. գ. թ., դոցենտ* Հակոբ Մուրադյանը, *երիտասարդ գիտաշխատողների խորհրդի նախագահ* Վահե Սարգսյանը, Ա. Վիրաբյանը, Ա. Մանուկյանը, Ա. Հարությունյանը, Լ. Զաքարյանը, Գ. Ժամհարյանը, Հ. Սուքիասյանը: *Նրանք կարևորեցին ՀՀ-ում առօրեականության պատմության ուսումնասիրության հեռանկարները, պատմության անհայտ էջերի բացահայտումը, նոր մեթոդների յուրացումն ու կիրառումը, ինչը կարող է թարմություն բերել պատմագիտական հետազոտություններում, նպաստել գիտական արդյունքների դյուրին հանրայնացմանը:*

ՀԱՄՈ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ,
ԳԱՅԱՆԵ ՂԱԶԱՐՅԱՆ

ՀՏԴ : 061.12

ՀՀ ԳԱԱ ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

ՀՀ ԳԱԱ տարեկան ընդհանուր ժողովի նախօրեին՝ ս. թ. ապրիլի 20-ին, կայացան ակադեմիայի Մաթեմատիկական և տեխնիկական, Ֆիզիկայի և աստղաֆիզիկայի, Բնական, Քիմիայի և Երկրի մասին, Հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքների տարեկան ընդհանուր ժողովները: Բաժանմունքների ակադեմիկոս-քարտուղարներ Լենսեր Աղալով-*յանը,* Ռաֆիկ Կոստանյանը, Ռուբեն Հարությունյանը, Լևոն Թավադյանը *և* Յուրի Սուվարյանը *ներկայացրին բաժանմունքների 2022 թ. գիտական և գի-տակազմակերպական գործունեության հիմնական արդյունքները:*

Զեկուցումների շուրջ ծավալվեցին քննարկումներ, ներկայացվեցին երկու տասնյակից ավելի գիտական ուշագրավ զեկուցումներ:

Ապրիլի 21-ին տեղի ունեցավ ՀՀ ԳԱԱ տարեկան ընդհանուր ժողովը: ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Աշոտ Սաղյանը *ողջունեց ժողովի մասնակից-ներին՝ ՀՀ նախագահ* Վահագն Խաչատուրյանին, *ՀՀ Ազգային ժողովի նախա-գահի տեղակալ* Հակոբ Արշակյանին, *ՀՀ գիտության կոմիտեի նախագահ՝* Սարգիս Հայոցյանին, *բուհերի ռեկտորներին, ՀՀ ԳԱԱ արտասահմանյան ան-դամներին, գիտնականներին, հյուրերին:*

Ժողովը սկսվեց ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Աշոտ Սաղյանի *տարե-կան հաշվետու և ծրագրային ընդգրկուն զեկուցումով:*

ՀՀ ԳԱԱ ՆԱԽԱԳԱՀ, ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ԱՇՈՏ ՍԱՂՅԱՆԻ ՀԱՇՎԵՏՈՒ ԶԵԿՈՒՅՈՒՄԸ

Հաշվետու տարում ՀՀ ԳԱԱ-ն գործել է 2011 թ. ապրիլի 14-ին ընդունված ՀՀ օրենքով սահմանված կարգավիճակով, համաձայն որի. «Ակադեմիան Հայաստանի Հանրապետության հիմնադրած՝ հատուկ կարգավիճակ ունեցող, ինքնակառավարվող բարձրագույն գիտական կազմակերպություն է, որը կազմակերպում, իրականացնում և համակարգում է գիտելիքի վրա հիմնված տնտեսական, սոցիալական և մշակութային զարգացման համար անհրաժեշտ հիմնարար և կիրառական հետազոտությունները»:

2022 թ. Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակա-դեմիան իր գործունեությունն իրականացրել է փոփոխվող ու ձևավորվող նոր աշխարհաքաղաքական իրողությունների, երկրի առջև ծառացած նոր մարտա-հրավերների ու խնդիրների պայմաններում, որոնց հաղթահարմանն ուղղված քայլերը ենթադրում են նաև նոր մոտեցումներ, մոտեցումներ, որոնք պետք է առաջին հերթին պարունակեն արագ փոփոխվող աշխարհաքաղաքական զար-գացումներին ու մարտահրավերներին համարժեք արձագանքներ և լուծում-ներ:

Հարգելի՛ գործընկերներ, հաշվետու տարում մեր հիմնական առաքելությունը պետք է լիներ Գիտությունների ազգային ակադեմիայի նոր կանոնա-դրության ընդունումը և դրա հիման վրա ակադեմիայի նախագահությունում

և համակարգում նախատեսվող բարեփոխումների ծրագրի սկիզբը: Սակայն դա կապված էր կրթության և գիտության նոր օրենքի ընդունման կամ Գիտությունների ազգային ակադեմիայի մասին գործող օրենքում որոշ փոփոխություններ կատարելու հետ, ինչը, ցավոք, տեղի չի ունեցել, թեկուզ դրա համար ակադեմիայի ղեկավարությունը իր լիազորությունների շրջանակներում արել է ամեն ինչ:

Միևնույն ժամանակ ուզում եմ ընդգծել, որ ներկայումս Գիտության կոմիտեի կողմից մշակված «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որտեղ կան նաև ԳԱԱ-ի կառավարման մոդելի փոփոխության տարբեր, գտնվում է Ազգային ժողովում, ակնկալում ենք, որ այն շուտով կընդունվի, և մենք կսկսենք բարեփոխումների գործընթացը:

Զեկույցը բաժանված է երկու անհավասար մասերի. առաջին մասում հակիրճ ներկայացվելու են ԳԱԱ 2022 թ. գիտական գործունեության հիմնական արդյունքները, իսկ երկրորդում՝ ավելի մանրամասն ընթացքի մեջ գտնվող կամ նախատեսվող փոփոխությունները, այդ թվում նաև 2023–2027 թթ. իրականացվելիք միջոցառումները:

Կառուցվածքը

Ակադեմիայի կազմում գործում են՝

– 32 գիտական ինստիտուտներ և կենտրոններ, որոնք ներառված են հինգ բաժանմունքներում:

– Ինչպես նաև Փորձաքննությունների ազգային բյուրոն, Գիտակրթական միջազգային կենտրոնը, Հիմնարար գիտական գրադարանը, «Գիտություն» հրատարակչությունը, Գիտության զարգացման հիմնադրամը, Հայագիտական համահայկական հիմնադրամը և Սևանա լճի պահպանության փորձագիտական հանձնաժողովը:

Հաշվետու տարում ԳԱԱ նախագահության կողմից ընդունվել է երկու գիտական կենտրոնների ստեղծման որոշում՝

1. Մոլեկուլային կենսաբանության և Կենսաքիմիայի ինստիտուտների միավորմամբ ստեղծել Մոլեկուլային կենսաբանության և կենսաքիմիայի գիտական կենտրոն,

2. Բուսաբանության և Հիդրոպոնիկայի պրոբլեմների ինստիտուտների միավորմամբ ստեղծել Բույսերի հետազոտությունների գիտական կենտրոն:

Որոշումները ներկայացված են Գիտության կոմիտե:

Ակադեմիայի կադրային կազմի մասին

2023 թ. հունվարի 1-ի դրությամբ ԳԱԱ համակարգում աշխատում են 3451 մարդ, որոնցից 2152-ը կամ ընդհանուրի 62.4 %-ը գիտական աշխատողներ են: Գիտական աշխատողներից 1294-ը (60.1 %) ունեն գիտական աստիճան, որից 282-ը՝ գիտությունների դոկտորի, իսկ 1012-ը՝ թեկնածուի գիտական աստիճան:

Ասպիրանտների մասին

Գիտությունների ազգային ակադեմիայի կազմակերպություններում ներկայումս սովորում են 95 ասպիրանտներ, որոնցից 26-ն ընդունվել են 2022 թ.: Պետք է նշել, որ վերջին տարիներին ասպիրանտական շատ տեղեր թափուր են մնում: Եթե համեմատենք ասպիրանտուրայում սովորողների ընդհանուր թիվը ոլորտի աշխատողների և մասնավորապես գիտական աստիճան ունեցողների

թվաքանակի հետ, ապա ներկայումս ասպիրանտների պատրաստման դինամիկան ավելի բարձր է, քան 1980-ականների վերջերին: Հետևաբար՝ խնդիրն այսօր ոչ թե քիչ քանակի ասպիրանտ պատրաստելն է, այլ գիտության ոլորտում նրանց հետագա ամրապնդումը: Ակադեմիան նախատեսում է իրականացնել մի շարք ծրագրեր, որոնք ուղղված են հենց այդ խնդրի լուծմանը:

2022 թ. ԳԱԱ գիտական կազմակերպությունները շարունակել են իրականացնել իրենց հիմնական գործառույթները. կատարվել են հիմնարար և կիրառական բնույթի հետազոտություններ գիտության բոլոր հիմնական բնագավառներում, բյուջետային և արտաբյուջետային ֆինանսավորման հաշվին որոշ չափով արդիականացվել են գիտական ենթակառուցվածքները, զարգացել է միջազգային համագործակցությունը, ակտիվացել է հանրապետության ռազմարդյունաբերության համակարգի տարբեր օղակների աշխատանքներին մասնակցությունը:

ԳԱԱ և նրա համակարգի ինստիտուտների՝ 2022 թ. գիտական գործունեության արդյունքները ներկայացվելու են համառոտ, քանի որ դրանք մանրամասն շարադրված են ակադեմիայի տարեկան հաշվետվությունում, որը տեղադրված է մեր ինտերնետային կայքում և հասանելի է բոլորին:

Ֆինանսավորման ծրագրերը

2022 թ. ընթացքում ակադեմիայի համակարգի գիտական կազմակերպությունները և կենտրոնները գիտական և գիտատեխնիկական գործունեությունն իրականացրել են ֆինանսավորման հետևյալ ձևերի շրջանակներում՝ բազային ֆինանսավորման ծրագրեր – 43, նպատակային ֆինանսավորման ծրագրեր – 7, Գիտության կոմիտեի դրամաշնորհային թեմատիկ ծրագրեր – 325, տնտեսական պայմանագրային ծրագրեր – 141:

Բյուջետային ֆինանսավորմամբ ծրագրերի քանակը նախորդ տարվա համեմատ հիմնականում չի փոխվել, իսկ տնտեսական պայմանագրային ծրագրերի քանակը նվազել է, ինչը հավանաբար պայմանավորված է պետական գույքի վարձակալության տրման պահանջների փոփոխություններով:

Հրապարակումները

Եթե անդրադառնանք թվային համեմատություններին, ապա 2021 թ. ակադեմիայի կազմակերպությունների կողմից տպագրվել է 1550 հոդված գրախոսվող ամսագրերում, որից 615-ը՝ արտասահմանում, 160 մենագրություն և ժողովածու, որից 20-ը՝ արտասահմանում, 21 ուսումնական ձեռնարկ և դասագիրք: Իսկ 2022 թ.՝ 1486 հոդված գրախոսվող ամսագրերում, որից 623-ը՝ արտասահմանում, 152 մենագրություն և ժողովածու, որից 19-ը՝ արտասահմանում, 14 ուսումնական ձեռնարկ և դասագիրք:

«SCOPUS» գիտատեղեկատվական շտեմարանում ընդգրկված գիտական ամսագրերում վերջին երկու տարիների ընթացքում Ֆիզիկայի և աստղաֆիզիկայի բաժանմունքների կազմակերպությունների հրապարակումների քանակը նույն մակարդակի է, իսկ Մաթեմատիկայի և տեխնիկական գիտությունների, Բնական գիտությունների, Քիմիայի և Երկրի մասին գիտությունների, ինչպես նաև Հայագիտության և հասարակական գիտությունների բնագավառներում նկատվում է հրապարակումների թվաքանակի աճ:

Անշուշտ, գիտության բնագավառի ձեռքբերումների գիտաչափական գնահատման համար անհրաժեշտ է առաջնորդվել միջազգային գիտական հան-

րության կողմից ընդունված չափանիշներով, մասնավորապես բարձր ազդեցության գործակից ունեցող ամսագրերում կամ հայտնի գիտաժողովների նյութերում ունեցած հրապարակումներով և այդ հրապարակումների վրա արված հղումներով:

Կիրառական գործունեության մասին

Եթե դիտարկենք կոնկրետ կիրառական արդյունքի ձեռքբերմանը միտված ծրագրերը, ապա 2022 թ. ընթացքում ԳԱԱ կազմակերպությունները ստացել են ընդամենը 16 արտոնագիր: Իհարկե, գիտական արդյունքների հետագա առևտրայնացումը կախված է ոչ միայն հետազոտության առանցքը հանդիսացող գաղափարի արդիականությունից, այլ նաև ներդրման համար անհրաժեշտ կադրային, ֆինանսական, իրավական և տնտեսական ռեսուրսների առկայությունից, ինչպես նաև շուկայական պահանջարկից և շուկայում մրցունակ լինելուց: Եվ այդ շղթայի տարբեր օղակների փոխգործակցության արդյունավետության բարձրացումը պետք է դառնա մեր գործունեության հիմնական ուղղություններից մեկը:

Պետք է փաստենք, որ կիրառական գործունեությունը համարվում է Գիտությունների ազգային ակադեմիայի և ընդհանրապես հայկական գիտության զարգացման թույլ կողմերից մեկը: Բայց, այնուամենայնիվ, ակադեմիայի համակարգում առկա են գիտական արդյունքների ապրանքայնացման մի շարք հաջողված օրինակներ:

Օրինակ, «Հայկենսատեխնոլոգիա» գիտաարտադրական կենտրոնը, որտեղ շարունակվել և զարգացվել են օպտիկապես ակտիվ ոչ սպիտակուցային ամինաթթուների, «Նարինե» պրոբիոտիկի տարատեսակների, դեղապատրաստուկների, բուսական յուղերի, կենսապարարտանյութերի փոքրածավալ արտադրությունները: Հաշվետու տարում սկսվել է պատիճավորված լիոֆիլիզացված պրոբիոտիկի սերիական արտադրությունը, արտադրանքներն իրացվում են տեղական և եվրոպական շուկայում: Առանձնահատուկ ուշադրության է արժանի «ՆԱՐԱՐԳԻՆ» նոր կոմպլեքս պրեպարատը, որը երկու շտամների կուլտիվացման արգասիք է, շտամներից մեկն արտադրում է պրոբրոտիկ, իսկ մյուսը՝ արգինին, և արտադրանքը երաշխավորված է որպես պրոբիոտիկ շաքարային դիաբետով հիվանդների համար: Պրեպարատը բավականին մեծ հետաքրքրություն է առաջացրել եվրոպական շուկայում, վերջերս մոտ 50000 հազար նմուշ փոխանցվել է տարբեր օտարերկրյա ընկերությունների փորձարկման նպատակով, մասնավորապես չեխական «ԳԵՍՄԵԴ», լեհական «Թոմաս ՋՄԲՀ», ավստրիական «ՎԻՎԱՍԱՆ», բելոռուսական «Միկոնիկ Թեքնոլոջի», ռուսական «ԲԻՈՆԱ» ընկերություններին:

Հայաստանի Հանրապետությունում այսօր խիստ հրատապ և պահանջված խնդիր է մնում կենսապարարտանյութի արտադրությունը, պայմանավորված ամոնիումային սելիտրայի գնի կտրուկ աճով, այն մոտ 4 անգամ թանկացել է, իսկ դա լուրջ խնդիր է մեր գյուղատնտեսության համար: Մյուս կողմից, ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա» գիտաարտադրական կենտրոնն ունի այլընտրանքային տարբերակ՝ կենսապարարտանյութ, որն իր արդյունավետությամբ չի զիջում սելիտրային և էկոլոգիապես անվտանգ է: Սակայն կենտրոնի արտադրական հնարավորությունները բավարարում են հանրապետությունում առկա պահանջարկի մինչև 5%-ը: Այդ կապակցությամբ անցած տարի ես կառա-

վարությունում կենսատեխնոլոգիական գործարան կառուցելու հարց եմ բարձրացրել, սակայն մոտ երկու ամիս ակտիվ քննարկումներից հետո այն կարծես թե մոռացության է մատնվել: Այսօր կենտրոնի ղեկավարությունն աշխատում է մասնավոր սեկտորի ներգրավմամբ կենտրոնի բազայի վրա մինի գործարան կառուցելու ուղղությամբ, մասնավորապես բանակցություններ են տարվում «ՊրոմԲիոտ ՖԱՐՄԱ» ընկերության հետ:

Գիտական արդյունքների ապրանքայնացման հաջողված օրինակներից է նաև Օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոնում շարունակվող «Դիտիլին», «Գանգլերոն», «Տիոդին» և «Կապրոֆեր» դեղապատրաստուկների արտադրությունը, որոնք այսօր արտահանում են Բելառուս:

Կիրառական գործունեությամբ արդյունավետ զբաղվում է նաև Քիմիական ֆիզիկայի ինստիտուտը, որտեղ իրականացվում են մի շարք հատուկ նշանակության ծրագրեր: Նույն կարգի աշխատանքներ իրականացվում են նաև Ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտում:

Ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտում նախատեսվում է համատեղ քվանտային կենտրոնի կազմավորում ՌԴ Սկոլտեխի հետ, գործընթացները բանակցությունների փուլում են:

Կիրառական արդյունքների ձեռքբերմանն ուղղված հետազոտությունների խթանման հետաքրքիր օրինակ է Մաթեմատիկայի ինստիտուտի նախաձեռնությամբ ստեղծված համագործակցային հարթակը, որի շրջանակներում կազմակերպությունը կամ անհատ գիտնականը կարող են ձևակերպել իրենց խնդիրները, որոնք լուծում կարող են ստանալ Մաթեմատիկայի ինստիտուտի հետ համագործակցությամբ: Մենք նախատեսում ենք ավելի ընդլայնել այդ նախաձեռնությունը և կազմակերպել ԳԱԱ կազմակերպությունների ձեռքբերումների ու ունակությունների ցուցադրման խոշոր միջոցառումներ՝ կրթական, գիտակրթական, գիտատեխնոլոգիական և այլ շահագրգիռ կազմակերպությունների ներգրավմամբ:

Ապրանքայնացման ենթակա մշակումներ առկա են նաև ակադեմիայի այլ ինստիտուտներում, սակայն դրանցով լուրջ չեն զբաղվել ոչ ինստիտուտները, ոչ էլ նախագահությունը: Այսօր դա մեր գլխավոր ռազմավարական խնդիրներից մեկն է, աստիճանաբար ֆունդամենտալ հետազոտությունների արդյունքները տեղափոխել կիրառական դաշտ, ինչը, իմ խորին համոզմամբ, ակադեմիայի զարգացման գլխավոր գրավականը կլինի:

Բոլորս էլ լավ հասկանում ենք, թե գիտության կիրառական ուղղության զարգացումն ինչպիսի ռազմավարական նշանակություն ունի Հայաստանի Հանրապետության համար, մի երկրի համար, որը չունի բնական հարստություններ: Սովետմիության տարիներին կային մեծ թվով ճյուղային ինստիտուտներ, այդ թվում նաև Հայաստանում, որոնք զբաղվում էին հիմնարար հետազոտությունների արդյունքները կիրառական դաշտ տեղափոխելու և դրանց հետագա ներդրման հիմնահարցերով: Այսօր այդ ինստիտուտները չկան, անկախության առաջին տարիներին, ես կասեի, մասնավորեցման ոչ պետականամետ քաղաքականություն կիրառելու հետևանքով, այդ ինստիտուտները վերացան որպես այդպիսին: Եվ այսօր ՀՀ-ում այլ հետազոտական ինստիտուտներ չկան, միայն ԳԱԱ-ի համակարգի գիտական կազմակերպություններն են մնացել, և դրանք էլ պետք է օգտագործել կիրառական գիտութ-

յան զարգացման համար, եթե իհարկե մտածում ենք գիտահենք տնտեսություն կամ գիտահենք ռազմարդյունաբերություն ունենալու մասին: Ցավոք, պետական գերատեսչությունների կողմից պահանջարկով պայմանավորված որևէ պատվեր առ այսօր ակադեմիան չի ստացել:

ԳԱԱ-ի ղեկավարությունը, լավ հասկանալով խնդրի հրատապությունն ու կարևորությունը, այսուհետև ինքն է հանդես գալու ծրագրերի նախաձեռնությամբ: Դրանց մասին ես կխոսեմ ելույթի երկրորդ մասում:

Այս ուղղությամբ մենք պլանավորում ենք կազմակերպել քննարկումներ մասնավոր սեկտորի հետ, գործարարների և արտադրողների հետ, արդյունքում, համոզված եմ, կգտնվեն համագործակցության եզրեր: Առաջին հանդիպումը նախատեսվում է մայիս ամսին, և այդ հանդիպումները կունենան շարունակական բնույթ:

Սարքավորումները

2022 թ. շարունակվել է Գիտության կոմիտեի կողմից իրականացվող գիտության ոլորտի ենթակառուցվածքի, նյութատեխնիկական բազայի արդիականացման ծրագիրը, որոնց շրջանակում մրցութային հիմունքներով ֆինանսական աջակցություն է տրամադրվում գիտական կազմակերպություններին՝ խոշոր սարքեր և սարքավորումներ ձեռք բերելու նպատակով:

2019–2022 թթ. ընթացքում կազմակերպված մրցույթների արդյունքում ԳԱԱ համակարգի կազմակերպություններին տրամադրվել են ֆինանսական միջոցներ՝ 50 սարքավորումների ձեռքբերման համար: Դրանցից 8-ը հատկացվել է Քիմիական ֆիզիկայի ինստիտուտին, 6-ը՝ Բուսաբանության ինստիտուտին, 5-ը՝ Օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոնին, 4-ական՝ Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտին ու Երկրաֆիզիկայի և ինժեներական սեյսմոլոգիայի ինստիտուտին և այլն: Սակայն, ինչպես տեսնում եք, կան նաև գիտական կազմակերպություններ, այդ թվում առաջատար ինստիտուտներ/կենտրոններ, որոնք որևէ սարքավորում չեն ստացել: Այս խնդրին թեթև արձագանքել են ինստիտուտների ներկայացուցիչները բաց հարթակում քննարկումների ժամանակ, ինչը լրացուցիչ քննարկումների առարկա է:

Գիտական կազմակերպության ենթակառուցվածքների արդիականացումը սկզբունքային նշանակություն ունի՝ արդյունավետ գիտահետազոտական աշխատանքներ իրականացնելու և կազմակերպության շարունակական կայուն զարգացումն ապահովելու համար: Եվ այս իմաստով այն պետք է շաղկապվի նաև կազմակերպության ռազմավարության, լուծվելիք խնդիրների կարևորության ու հիմնավորվածության և կադրային կազմի հնարավորությունների հետ: Հետևաբար՝ ներկա պայմաններում, երբ գիտական կազմակերպությունների բազային ֆինանսավորման այլ ծախսեր հոդվածով նախատեսված ֆինանսական միջոցները կազմում են ընդհանուրի 10–15 %-ը, անհրաժեշտ է գիտության ոլորտի ենթակառուցվածքի արդիականացման ծրագրի մրցույթի ժամանակ հաշվի առնել ինչպես կազմակերպության հայտը, այնպես էլ ակադեմիայի կարծիքը:

Միջազգային համագործակցությունը

2022 թ. ԳԱԱ-ն շարունակել է միջազգային համագործակցությունն արտասահմանյան գիտական կառույցների և գիտությունների ակադեմիաների հետ: Մասնավորապես ստորագրվել է գիտական համագործակցության պայ-

մանագիր Ուզբեկստանի գիտությունների ակադեմիայի հետ, նախապատրաստվել է համաձայնագիր Զեռնոգորիայի ակադեմիայի հետ, այն կստորագրվի ս. թ. հունիսին, մշակվում են համագործակցության պայմանագրեր Ռումինիայի, Չեխիայի, Ավստրիայի, Լիտվայի և Վրաստանի ակադեմիաների հետ: Պայմանավորվածություն ենք ձեռք բերել դրանք ստորագրել ս. թ. հոկտեմբերին Երևանում ՀՀ ԳԱԱ-ի 80-ամյա հոբելյանին նվիրված միջոցառումների շրջանակներում:

Քննարկման փուլում են Ռոսատոմ կորպորացիայի և «Կուրչատովի ինստիտուտ» ազգային հետազոտական կենտրոնի հետ համագործակցությունների ձևաչափերը:

Ուզում եմ անդրադառնալ ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի և Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի միջև 2021 թ. ստորագրված գիտատեխնիկական համագործակցության ճանապարհային քարտեզի ներդրմանը, որը ներառված է հայ-ռուսական միջկառավարական տնտեսական համագործակցության պայմանագրում: Համագործակցային ծրագրերի արդյունավետությունը զգալիորեն կբարձրանար, եթե ստեղծվեր երկկողմ գիտական համագործակցության հարթակ, ինչը հնարավոր է իրականացնել մասնավորապես ՀՀ գիտության կոմիտեի և Ռուսաստանյան գիտական հիմնադրամի միջև պայմանագրի ստորագրման պարագայում: Այդ հարցով մեզ բազմիցս դիմել են ինչպես մեր, այնպես էլ Ռուսաստանի գիտությունների ակադեմիաների ինստիտուտների տնօրեններ և առանձին գիտաշխատողներ:

2022 թ. ակադեմիայի ինստիտուտների կողմից իրականացվել են 65 միջազգային դրամաշնորհային ծրագրեր, կազմակերպվել են 51 միջազգային գիտաժողովներ, սիմպոզիումներ և այլ միջոցառումներ: Իրականացման ընթացքում են եվրոպական «Հորիզոն 2020» ծրագրի 9 և Միջազգային գիտատեխնիկական կենտրոնի 5 նախագիծ: Մի քանի օր առաջ խոշոր ՄԳՏԿ դրամաշնորհ է շահել ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա» ԳԱԿ-ը:

Միջազգային համագործակցության բազմաբնույթ գործիքակազմեր են ընդգրկում Եվրոպական միության հետազոտությունների և նորարարությունների շրջանակային, մասնավորապես «Հորիզոն 2020» և «Հորիզոն Եվրոպա» ծրագրերը, որոնց ակտիվ մասնակցություն է ունեցել Հայաստանի Հանրապետությունը:

«Հորիզոն 2020»-ի շրջանակներում դրամաշնորհներ են հատկացվել ՀՀ 53 պետական և մասնավոր կազմակերպությունների, որից 12-ը ներկայացնում են Գիտությունների ազգային ակադեմիան, ընդհանուր ֆինանսավորման ծավալը կազմել է 11 մլն 762 հազար եվրո, որում ԳԱԱ-ի և նրա համակարգի կազմակերպությունների չափաբաժինը կազմում է 6 մլն 244 հազար եվրո կամ ընդհանուրի 53.1%-ը:

Ֆինանսական ամենամեծ հատկացումները տրվել են Ֆիզիոլոգիայի ինստիտուտի, Ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտի, Ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտի, ակադեմիայի նախագահության և էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոնի ծրագրերին:

Անհրաժեշտ եմ համարում նշել, որ միջազգային համագործակցությունը ԳԱԱ կարևորագույն գործառույթներից մեկն է. այն կարգավորվում է Միջազ-

գային կապերի վարչության կողմից, որը ներառում է Միջազգային կապերի, Սկյուռքի և Միջազգային դրամաշնորհների աջակցության բաժինները: Վարչությունը նախապատրաստում է գիտական և գիտատեխնիկական համագործակցության տարաբնույթ պայմանագրեր և փաստաթղթեր, սահմանում է հնարավոր համագործակցության շրջանակներ: Այն նաև տրամադրում է աջակցություն ակադեմիայի կազմակերպություններին, առանձին գիտական խմբերին ու անհատ աշխատողներին ինչպես համագործակցային սխեմաներ մշակելու և ներդնելու, այնպես էլ տարբեր դրամաշնորհային ծրագրերի հայտեր կազմելու ուղղությամբ:

Ֆինանսավորումը

– ԳԱԱ բյուջետային և արտաբյուջետային ընդհանուր ֆինանսավորումը 2022 թ. կազմել է 17 մլրդ 251 մլն դրամ, ինչը 2021 թ. համեմատ աճել է 68.1 %-ով: Նշենք, որ արտաբյուջետային ֆինանսավորման մեջ ներառված են նաև ԿԳՄՍ նախարարության խողովակներից դուրս պետական բյուջեից ֆինանսավորված ծրագրերը կամ ծառայությունները:

– Բյուջետային ֆինանսավորումն ավելացել է 56.4 %-ով, իսկ արտաբյուջետայինը՝ 131.9 %-ով:

– Բյուջետային ֆինանսավորման մեջ բազային ֆինանսավորումն աճել է 35.0 %-ով, նպատակային-ծրագրայինը՝ 50.1 %-ով, իսկ թեմատիկ ֆինանսավորման և պետական այլ դրամաշնորհային ծրագրերի ծավալներն աճել են համապատասխանաբար՝ 88.1 % և 97.8 %-ով:

Բազային ֆինանսավորման ավելացումը պայմանավորված է գիտաշխատողների աշխատավարձերի զգալի բարձրացումով, ինչը շատ կարևոր քայլ է գիտության ոլորտն ավելի գրավիչ դարձնելու տեսանկյունից: Քիչ կարևոր չէ նաև դրամաշնորհային ծրագրերի ֆինանսական ծավալների աճը՝ որպես լրացուցիչ խրախուսում առանձին գիտահետազոտական խմբերին: Սակայն դրա հետ մեկտեղ անհրաժեշտ է ավելացնել նաև բազայինի ֆինանսավորման այլ ծախսերի հոդվածով նախատեսված ֆինանսավորման ծավալները, քանի որ այն կոչված է ապահովելու գիտական կազմակերպության ինստիտուցիոնալ զարգացումն ավելի երկար ժամանակային հորիզոնի համար: Ակնկալում ենք, որ 2024 թ. համարժեք կբարձրանա նաև բազային ֆինանսավորման այլ ծախսերի մասնաբաժինը:

2021–2022 թթ. արտաբյուջետային ֆինանսավորման ներքին կառուցվածքում զգալի է արտադրանքների կամ ծառայությունների մասնաբաժինը, ինչը կարևոր առաջընթաց է: Այդ բաղադրիչը պետք է ավելի զարգացնել՝ որպես պահանջարկով պայմանավորված հետազոտությունների իրականացում կամ ծառայությունների մատուցում, ինչն էլ իր հերթին կնպաստի ԳԱԱ ֆինանսավորման աղբյուրների դիվերսիֆիկացիայի աստիճանի բարձրացմանը:

Համեմատության համար մի քանի խոսք ՀՀ պետական բյուջեից գիտական և գիտատեխնիկական գործունեության բնագավառին հատկացված ֆինանսական ծավալների, այն է՝ հաստատված բյուջեով հատկացումների մասին:

Սկսած 2021 թ. զգալիորեն աճել են ֆինանսավորման ծավալները և 2021–2023 թթ. կազմել են համապատասխանաբար՝ 17 մլրդ 947 մլն, 24 մլրդ 501 մլն և 24 մլրդ 62 մլն դրամ:

Տնտեսապես զարգացած երկրներում հետազոտությունների և մշակումների բնագավառին հատկացումները որպես ՀՆԱ-ի տոկոս Եվրոպական միության համար այն կազմում է մոտ 2.5 %, իսկ, օրինակ, Կորեայի և Իսրայելի դեպքում՝ 4.5 %–5 %: Իսկ Հայաստանի Հանրապետության դեպքում, չնայած վերջին տարիներին գիտությանը հատկացված միջոցների կտրուկ աճին, այն դեռևս բավականին ցածր է: Իհարկե, պետք է ընդգծել, որ տնտեսապես զարգացած երկրների դեպքում գիտության հատկացումների մեջ ներառված են նաև արտաբյուջետային հատկացումները, իսկ մեր դեպքում միայն բյուջետային հատկացումներն են բերված, քանի որ արտաբյուջետային հատկացումների մակարդակը շատ ցածր է, և դրանց ավելացումն առանձնակի չի փոխի պատկերը:

Այժմ մի քանի խոսք գիտության ոլորտում ՀՀ կառավարության վերջին նախաձեռնությունների մասին, որոնք վերաբերում են գիտության և բարձրագույն կրթության ինտեգրմանը: Այդ ուղղությամբ ընդունված է պաշտոնական 3 փաստաթուղթ՝ 1 օրենք և 2 որոշում:

Ինչպես գիտեք, ստեղծվել է աշխատանքային խումբ, որը պետք է ՀՀ վարչապետին ներկայացնի բուհական համակարգի արդիականացման վերաբերյալ վերլուծական տեղեկանք: Աշխատանքային խումբն ավարտել է իր աշխատանքը, և նախապատրաստվում է համապատասխան տեղեկանքը:

Ակադեմիական կազմակերպությունների և բուհերի ինտեգրման վերաբերյալ ՀՀ ԳԱԱ-ն ներկայացրել է իր տարբերակը: Հաշվի առնելով Հայաստանի աշխարհաքաղաքական դիրքը, հայկական Սփյուռքի հնարավորությունները, ՀՀ գիտության և բարձրագույն կրթության բնագավառների ավանդույթները, դրանց ունեցած ուրույն տեղը միջազգային գիտակրթական տարածքում և գիտության ու կրթության անցնցում զարգացման անհրաժեշտությունը՝

ՀՀ-ի համար գիտության և բարձրագույն կրթության ինտեգրման արդյունավետ մոդելն ակադեմիական կազմակերպությունների պահպանումն է մեկ համակարգի մեջ, անշուշտ բարեփոխված ու նոր բովանդակությամբ և դրա սիներգետիկ փոխգործակցությունը գիտակրթական կազմակերպությունների և տնտեսվարող սուբյեկտների հետ *(բովանդակային առումով այն նման է Ֆրանսիայի Գիտական հետազոտությունների ազգային կենտրոնի՝ CNRS-ի մոդելին):*

Համաձայն առաջարկվող մոդելի՝ ԳԱԱ-ն կապող կամրջակի դեր է կատարում կրթության և տնտեսության միջև.

– հիմնարար հետազոտությունների մասով այն ինտեգրվում է բուհական համակարգի հետ, իսկ

– կիրառական հետազոտությունների ուղղությամբ համագործակցում է պետական կառավարման մարմինների և գերատեսչությունների, ինչպես նաև տնտեսվարող սուբյեկտների հետ:

Մոդելը նախատեսում է.

– բուհի հետազոտական բաղադրիչի հզորացում և արդիականացում. դրա համար ակադեմիայի համակարգի և այլ գերատեսչությունների այն գիտահետազոտական ինստիտուտները կամ դրանց ստորաբաժանումները, որոնց գիտական գործունեությունը բովանդակային առումով լիարժեքորեն համընկնում են բուհի մասնագիտական ուղղվածությանը, կարող են իրենց գիտական

ներուժով և նյութատեխնիկական բազայով տեղափոխվել բուհի հետազոտական մաս՝ փոխադարձ համաձայնության պարագայում:

– Ակադեմիայի գիտական ինստիտուտները և բուհերի համալրված ու արդիականացված գիտահետազոտական ինստիտուտները համագործակցում են համատեղ գիտական, գիտատեխնոլոգիական լաբորատորիաներ կամ կենտրոններ ձևավորելու, համատեղ դրամաշնորհային և այլ ընույթի ծրագրերի շրջանակում: Գիտության կոմիտեն մրցութային կարգով ֆինանսավորում է նշված ուղղություններով ԳԱԱ-ի և բուհերի գիտահետազոտական խմբերի ներկայացրած համատեղ ծրագրերը (համատեղությունը՝ որպես պարտադիր պայման): Համատեղ հետազոտությունների իրականացման ընթացքում ձեռք բերված նվաճումները (հոդվածներ, մենագրություններ, գյուտեր, մշակումներ և այլն) արձանագրվում են որպես ԳԱԱ-ի և բուհի համատեղ գիտական արդյունքներ:

– ԳԱԱ-ն համագործակցում է պետական կառավարման մարմինների հետ՝ գիտական պետական պատվերի ձևավորմանը մասնակցելու և այդ պատվերները կատարելու նպատակով, համակարգի ինստիտուտները կիրառական հետազոտությունների շրջանակում համագործակցում են տնտեսական գործունեություն ծավալող սուբյեկտների (պետական և մասնավոր) հետ:

Առաջարկվող մոդելը բավարար չափով ապահովում է նաև ակադեմիական միջավայրի ստեղծումն ուսանողների, դասախոսական կազմի և գիտական աշխատողների համար, որոնք կարող են անարգել և առանց սահմանափակումների մասնակցել ԳԱԱ-ի և բուհի կրթական գործընթացներին ու հետազոտական աշխատանքներին՝ ներառյալ ավարտական, մագիստրոսական և ատենախոսական աշխատանքների կատարումը, գործնական պարապմունքները, լաբորատոր աշխատանքները, արտադրական պրակտիկաները և այլն:

Մոդելը հնարավորություն է ընձեռում նաև ԳԱԱ-ի ինստիտուտներում և բուհերում առկա սարքավորումներն ու նյութական ռեսուրսներն օգտագործել համատեղ՝ պայմանագրային հիմունքներով դրանք գրանցելով որպես երկու կողմի գույք, նշելով յուրաքանչյուր կողմին տվյալ գույքի պատկանելության ֆինանսական չափաբաժինը: Միջազգային պրակտիկայում նման մոդել հաճախ են օգտագործում, նախադեպերն առկա են:

Հատկանշական է, որ Եվրոպական հանձնաժողովի Հետազոտությունների և նորարարությունների գլխավոր տնօրինության փորձագիտական հանձնաժողովի իրականացրած ուսումնասիրության արդյունքում («Նշաձողի բարձրացում. գիտության նոր առաքելությունը Հայաստանի զարգացման մեջ», 2020 թ.) ՀՀ-ի համար որպես գիտության, կրթության և տնտեսության ինտեգրված զարգացման տարբերակ առաջարկվել է հենց այդ մոդելը:

Հետևաբար, հաշվի առնելով ՀՀ գիտական կազմակերպությունների և բուհերի ինստիտուցիոնալ կարողությունների ժամանակակից մակարդակը, ներկայում ավելի նպատակահարմար է ակադեմիական գիտահետազոտական կազմակերպությունները պահպանել որպես մեկ միասնական համակարգ, որը մի կողմից համագործակցում է բուհերի հետ՝ գիտական արդյունքի ձեռքբերման և կրթության համար ակտիվ գիտական միջավայր ապահովելու նպատակով, մյուս կողմից՝ պետական կառավարման մարմինների և տնտեսության մասնավոր հատվածի հետ՝ կիրառական գիտությունը զարգացնելու և տնտե-

սական շրջանառության մեջ գիտական արդյունքները ներդնելու նպատակով: Իհարկե, այս դեպքում պետք է վերաբաշխել ԳԱԱ գործառույթները և ակադեմիան դարձնել գիտական նախաձեռնությունները խրախուսող, միջազգային մակարդակի հիմնարար և կիրառական հետազոտություններ իրականացնող, պետական պատվեր կատարող, միջազգային գիտատեխնոլոգիական տարածքում իր ուրույն տեղն ունեցող ու ժամանակակից մարտահրավերներին արագ արձագանքող համակարգ:

ՀՀ կառավարության հաջորդ նախաձեռնությունը ակադեմիական քաղաքի ստեղծումն է՝ որպես որակյալ բարձրագույն կրթության և հետազոտության համար արդիական կրթական միջավայրի ապահովման կամպուսային կլաստերների համախումբ: Գաղափարն իհարկե արդիական է. այն կխթանի համապատասխան ստեղծագործ միջավայրի ձևավորումը, հնարավորություն կտա լուծելու երկրի համար կարևորագույն նշանակություն ունեցող խնդիրներ, կնպաստի կրթության և գիտության զարգացմանը: Սակայն, միևնույն ժամանակ ակադեմիական քաղաքի ստեղծումը չպետք է խաթարի գիտության ոլորտի անցնցում զարգացումը:

ՀՀ կառավարության երրորդ նախաձեռնությունը Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի ձևավորումն է: Այն ստեղծվում է ԿԳՄՄՆ կազմում և ներառելու է Գիտության կոմիտեն, Բարձրագույն որակավորման կոմիտեն ու ԿԳՄՄՆ բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության վարչությունը:

Ներկայումս Ազգային ժողովում է գտնվում «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը:

Օրենքի նախագիծը պարունակում է մի շարք դրույթներ, որոնք նոր մոտեցումներ են գիտության բնագավառի համար, և կան դրույթներ, որոնք անմիջապես վերաբերում են ԳԱԱ-ին: Մասնավորապես սահմանումների մակարդակով ներմուծվել են գիտական դրամաշնորհ, ճարտարագիտատեխնիկական և գիտամանկավարժական (գիտակրթական) աշխատող հասկացությունները:

Որպես կառավարության լիազորություն սահմանված է նաև՝

– Գիտական պետական կազմակերպությունների տեսակների, դրանց կառուցվածքներին ներկայացվող պահանջների և դասակարգման չափանիշների հաստատումը:

– Ակադեմիայի կանոնադրության՝ ներառյալ կառավարման և գործունեության առանձնահատկությունների, համակարգի կազմակերպությունների ցանկի և դրանց կանոնադրությունների օրինակելի ձևի հաստատումը:

– Գիտական կադրերի ատեստավորման կարգի, պետական կազմակերպություններում գիտական և ճարտարագիտատեխնիկական կադրերի պաշտոնների և դրանց գնահատման նվազագույն չափանիշների հաստատումը:

Համաձայն նախագծի՝ ակադեմիայի կառավարման համակարգում նախատեսվում է կատարել փոփոխություն՝

– Ակադեմիան ձևավորում է կառավարման խորհուրդ՝ ներառելով ակադեմիայից, կրթության, գիտության և էկոնոմիկայի ոլորտների լիազոր մարմիններից առաջադրված ներկայացուցիչներ:

– Կառավարման խորհուրդն իրականացնում է ակադեմիայի համակարգի կազմակերպությունների ընդհանուր կառավարումը, այդ թվում՝ դրանց կառավարման մարմինների ձևավորումը և լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը:

– Ակադեմիան ունի ղեկավար կազմ, որն իրականացնում է ակադեմիայի գիտական, գիտատեխնիկական և գիտաօժանդակ գործունեության ընթացիկ ղեկավարումը: Ղեկավար կազմի մեջ մտնում են Ակադեմիայի նախագահը, փոխնախագահը, ակադեմիկոս-քարտուղարը, նախագահի տեղակալները և բաժանմունքների ակադեմիկոս-քարտուղարները: Ղեկավար կազմում ընդգրկված անձի լիազորությունները դադարեցվում են իրավասու մարմնի որոշմամբ, եթե լրացել է նրա 75 տարին:

Հաշվետու տարում՝ 2022 թ. հոկտեմբերի 14-ին, կայացած նախագահության նիստում հաստատվել է ՀՀ ԳԱԱ 2022–2026 թթ. զարգացման ռազմավարությունը: Հիմնական ռազմավարական ուղղությունները հակիրճ ներկայացված են, բովանդակությանը դուք իրազեկված եք: Ակադեմիայի ռազմավարության հիման վրա համակարգի կազմակերպությունները մշակում են իրենց ռազմավարությունները հնգամյա ժամանակահատվածի համար:

Հաշվետու տարում նախատեսվել և արդեն իսկ ներդրվել են մի շարք նոր նախաձեռնություններ, դրանցից են՝

– Գիտական և գիտատեխնիկական գործունեության բնագավառին վերաբերող հարցերի քննարկման մշտական բաց հարթակի ստեղծում: Քննարկումներին մասնակցում են ակադեմիայի և ակադեմիայից դուրս գործող կազմակերպությունների տնօրենները, գիտական և ճարտարագիտատեխնիկական կազմի ներկայացուցիչները: Առաջին թեման վերաբերել է ԳԱԱ բարեփոխումների ծրագրին:

Նշեմ որ, բավականին ակտիվ և արդյունավետ քննարկումներ են կազմակերպվել սկզբում բաժանմունքների ինստիտուտների, իսկ այնուհետև՝ ընդհանրացված համակարգի բոլոր կազմակերպությունների ներկայացուցիչների հետ: Եղել են բազմաթիվ տարաբնույթ առաջարկություններ, որոնց գերակշռող մասը համահունչ էին մեր կողմից նախատեսված բարեփոխումների ծրագրին, իհարկե, կային նաև նոր հետաքրքիր առաջարկություններ: Դրանք հաշվի կառնվեն ակադեմիայի նոր կանոնադրության մշակման և բարեփոխումների իրականացման ժամանակ: Որոշ առաջարկությունների մասով, որոնք կապված են նախարարության և Գիտության կոմիտեի գործառույթների հետ, մենք մեր դիրքորոշումը կուղարկենք նախարարություն: Դա վերաբերում է կիրառական գիտության ոլորտին, ինստիտուտների նյութատեխնիկական բազաների արդիականացմանը և այլ հարցերի:

Հաջորդ քննարկման թեման վերաբերելու է ինստիտուտների գիտական և ղեկավար պաշտոնների պարտականությունների հստակեցմանը, գիտական ստորաբաժանումների՝ լաբերի, սեկտորների, խմբերի ձևավորման չափանիշների սահմանմանը, ԳԱԱ աշխատակազմի պարտականությունների հստակեցմանը: Արդյունքում նախատեսվում է մշակել ընդհանուր չափանիշներ գիտահետազոտական և գիտատեխնոլոգիական հետազոտություններով զբաղվող ստորաբաժանումների համար: Քննարկումները սկսվելու են մայիսի առաջին կեսին:

Մենք փորձում ենք ակտիվացնել ինստիտուտների տնօրենների կամ առաջատար մասնագետների մասնակցությունը ակադեմիայի կառավարման գործընթացներին: Հետագայում դա կարտացոլվի ակադեմիայի կառավարման մարմիններում նրանց ներգրավմամբ:

– Հաջորդ նախաձեռնությունը վերաբերում է գիտական և գիտատեխնոլոգիական խոշորամասշտաբ ծրագրերի մշակման մշտական հարթակին: Քննարկումներ են կազմակերպվել բաժանմունքների ինստիտուտների տնօրենների և առաջատար մասնագետների մասնակցությամբ, որոշ քննարկումների մասնակցել են նաև մասնավոր սեկտորի ներկայացուցիչներ: Քննարկվել են տնտեսության զարգացման, պետության անվտանգության ամրապնդման, առողջապահության համակարգի արդիականացման և այլ կարևոր ռազմավարական նշանակության հիմնախնդիրներին վերաբերող ծրագրեր մշակելու հնարավորությունները: Արդյունքում ներկայացվել են 6 նպատակային ծրագրեր, և մշակման փուլում են գտնվում հինգ հանրային-ներդրումային խոշոր ծրագրեր: Յուրաքանչյուր ծրագրում ներառված են մի քանի ակադեմիական ինստիտուտների, բուհերի և այլ գիտահետազոտական կենտրոնների գիտական խմբեր և առանձին գիտնականներ, ինչպես նաև մասնավոր կազմակերպություններ: Նախատեսվում է մայիս ամսին ՀՀ ԳԱԱ-ի կողմից ներկայացնել երկու խոշորամասշտաբ հանրային-ներդրումային ծրագիր: Այս նախաձեռնության կարևորությունը պայմանավորված է նաև նրանով, որ ԳԱԱ-ի բաժանմունքները սկսել են ակտիվ համակարգել իրենց կազմ ներառված գիտական կազմակերպությունների, ինչպես նաև մասնագիտությամբ մոտ այլ գիտական խմբերի համագործակցությունը, ինչը բաժանմունքների հիմնական պարտականությունն է: Դա նախկինում պատշաճ չէր կատարվել, ինչը, իմ կարծիքով, մեր ակադեմիայի ամենաթույլ կողմերից էր:

Մյուս նախաձեռնությունը մասնագիտական պրոբլեմային խորհուրդների ձևավորումն է: Խորհուրդների ստեղծման նպատակը տարբեր ոլորտներում առկա հիմնախնդիրների վերաբերյալ քննարկումների կազմակերպումն է և պետական մարմիններին, գերատեսչություններին և մասնավոր ընկերություններին գիտամեթոդական և փորձագիտական խորհրդատվությունների տրամադրումն ու համապատասխան ծառայությունների մատուցումը: Խորհուրդներում ներգրավված են ԳԱԱ համակարգի, բուհերի և ոչ ակադեմիական գիտական կազմակերպությունների առաջատար գիտնականներ, պետական կառավարման մարմինների և տնտեսության մասնավոր հատվածի ներկայացուցիչներ, ԳԱԱ արտասահմանյան անդամներ: Ձևավորվել են վեց պրոբլեմային խորհուրդներ.

– հատուկ նշանակության հիմնախնդիրների,

– ներդրումային հիմնահարցերի,

– սեյսմաբանության, սեյսմակայուն շինարարության, բնական և տեխնածին աղետների,

– կենսաբազմազանության և կենսաանվտանգության,

– տերմինաբանության,

– պատմագիտության և մշակութաբանության:

Մոտ ժամանակներս խորհուրդների գործառույթների մասին տեղեկատվություն կուղարկենք համապատասխան պետական կառավարման մարմին-

ներին և գերատեսչություններին՝ ակնկալելով արդյունավետ համագործակցություն, հուսով ենք, որ նրանք կօգտվեն մեր կողմից առաջարկվող ծառայություններից: Ինչպես տեսնում եք, խորհուրդները մասնագիտական տեսակետից բավականին ընդգրկուն են, խորհուրդներ ներառված մեր արտասահմանյան անդամները կաջակցեն միջազգային փորձաքննությունների կազմակերպմանը, եթե դրանց անհրաժեշտությունը լինի:

Մենք սկսել ենք նաև քննարկումներ ՀՀ բուհական համակարգի ներկայացուցիչների հետ՝ գիտության և բարձրագույն կրթության բնագավառների զարգացման հեռանկարների, ինտեգրման եղանակների, ինչպես նաև դրանց կայուն զարգացումն ապահովող միջոցառումների քննարկման ու համատեղ առաջարկների մշակման նպատակով:

Մյուսը գործարարների և արտադրողների հետ շարունակական հանդիպումների շարքն է՝ ԳԱԱ համակարգում կիրառական հետազոտությունները խրախուսելու, համագործակցության հնարավորությունները և համատեղ ծրագրերը քննարկելու նպատակով: Հույս ունենք, որ այդպիսի հանդիպումների, քննարկումների և այլ համատեղ միջոցառումների արդյունքում կկարողանանք մշակել համագործակցային սխեմաներ և ներդնել պահանջարկով պայմանավորված հետազոտությունների իրականացումը:

Առանց այդ էլ որոշ գործարարներ այսօր համագործակցում են մեր առանձին ինստիտուտների հետ: Սակայն դա ոչ համակարգային բնույթ է կրում, և այն պետք է ընդլայնել և համակարգել:

Նորից եմ ուզում անդրադառնալ կիրառական գիտության կարևորությանը մեր երկրի համար: Բոլորս էլ ողջունում ենք ֆունդամենտալ գիտությունը, առաջատար գիտական ամսագրերում հոդվածների տպագրությունը, բայց դա չպետք է լինի միակ չափանիշը գիտության ոլորտի, գիտահետազոտական ինստիտուտների գործունեության գնահատման համար: Իհարկե, ամեն ինչ դրանից է սկսվում, բայց ես բազմիցս ասել եմ տարբեր հարթակներում և նորից կրկնում եմ՝ հոդված տպելով մեր տնտեսությունը չի զարգանա, մեր ռազմարդյունաբերական կոմպլեքսը չի հզորանա, մենք պետք է հիմնարար գիտությանը զուգահեռ լուրջ ուշադրություն դարձնենք գիտության կիրառական ոլորտի զարգացմանը, գիտական հետազոտությունների արդյունքների ապրանքայնացմանը, տեխնոլոգիաների և մշակումների ներդրմանը: Դա այլընտրանք չունի, քանի որ Հայաստանը հարուստ չէ ընդերքով և գտնվում է ոչ բարվոք աշխարհաքաղաքական վիճակում, իսկ դա նշանակում է՝ պետք է զարգացնել բարձր տեխնոլոգիական կիրառական գիտությունը և հետազոտական արդյունքները տանել դեպի արտադրություն: Իսկ դա պետք է անեն մեր ակադեմիական ինստիտուտները, քանի որ այլ հետազոտական ինստիտուտներ Հայաստանում չկան: Եվ դա մենք կարող ենք անել Ձեզ հետ միասին, համատեղ, հարգելի գործարարներ, մասնավոր սեկտորի ներկայացուցիչներ: Այդ կապակցությամբ մոտ ժամանակներս մենք Ձեզ հրավիրելու ենք քննարկումների, ակնկալում ենք Ձեր ակտիվ մասնակցությունը:

Կցանկանայի մի քանի խոսք ասել ակադեմիայի կառավարման համակարգի փոփոխությունների մասին, փոփոխություններ, որոնց անհրաժեշտությունը ժամանակի հրամայականն է, և փոփոխություններ, որոնց ներդրման անհրաժեշտության մասին հարց է բարձրացվել նաև ԳԱԱ գիտական կազմա-

կերպությունների տնօրենների կողմից: Այդ կապակցությամբ մենք ուսումնասիրում ենք մի շարք առաջատար ակադեմիաների փորձը, ինչպես եվրոպական, այնպես էլ ԱՊՀ երկրների, արդյունքում կմշակվի տարբերակ՝ առավել լավ հարմարեցված մեր գիտության առկա վիճակին և ավանդույթներին: Նախնական վերլուծությունների հիման վրա կանխատեսվում է՝

– փոփոխել ակադեմիայի կառավարման բարձրագույն մարմնի՝ ընդհանուր ժողովի ձևավորման կարգը. այն պետք է դառնա ավելի «բաց» և ընդգրկուն, նախատեսվում է ընդհանուր ժողովի մասնակիցների ցանկ ներառել պետական կառավարման մարմինների և տնտեսության մասնավոր հատվածի ներկայացուցիչներ,

– պետք է կատարել լիազորությունների վերաբաշխում ակադեմիայի կառավարման խորհրդի և նախագահության միջև՝ կառավարման խորհրդին վերապահելով ԳԱԱ և համակարգի գիտական կազմակերպությունների ղեկավարման կառավարչական գործառույթները, իսկ նախագահությանը՝ ԳԱԱ կազմակերպությունների գիտական գործունեությունը համակարգող և կարգավորող մարմնի գործառույթները,

– պետք է սահմանել ակադեմիայի անդամության թեկնածուներին առաջադրվող շեմային պայմաններ՝ ըստ գիտական և գիտատեխնիկական գործունեության արդյունավետության և կազմակերպել ԳԱԱ անդամների ընտրություն, ինչն ավելի քան 9 տարի տեղի չի ունեցել,

– պետք է վերասահմանել ակադեմիայի հիմնական կառուցվածքային միավորի՝ բաժանմունքի կամ բաժնի ձևավորման և կառավարման կարգն ու լիազորությունները,

– պետք է սահմանափակել ակադեմիայի ղեկավար կազմի համար ընտրովի պաշտոնների թվաքանակը և ավելացնել նշանակովի պաշտոնները՝ նպատակ ունենալով բարձրացնել համակարգի կառավարման արդյունավետությունը:

Մենք կնախապատրաստենք փոփոխությունների փաթեթ, դրանք կքննարկվեն ինստիտուտների ներկայացուցիչների հետ, և ակադեմիայի ընդհանուր ժողովի կողմից ընդունվելուց հետո կսկսվի փոփոխությունների ներդրման գործընթացը:

Իհարկե, առաջարկվող փոփոխությունները պետք է ունենան իրավական հենք, ինչը, հուսով եմ, հնարավոր կլինի ապահովել «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի ընդունումից հետո՝ ՀՀ ԳԱԱ նոր կանոնադրության շրջանակում:

Վերջում անհրաժեշտ եմ գտնում նշել, որ հաշվետու տարում իրականացրել ենք նաև մի շարք այլ նախաձեռնություններ, մասնավորապես՝

– ձևավորվում է գիտության ոլորտում երիտասարդ գիտնականների ամրապնդման խրախուսման ֆոնդ՝ ԳԱԱ խնայողությունների և արտաբյուջետային միջոցների հաշվին:

– Ներդրվում է էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության «Mulberry» *համակարգ, այն կգործի հաջորդ ամսվա ընթացքում: Ապագայում նպատակ ունենք թվայնացնել ԳԱԱ բոլոր գործառույթները:*

— Կատարվել են վերանորոգման աշխատանքներ ՀՀ ԳԱԱ նախագահության շենքում, դրանց շարքում կուզենայի առանձնացնել այս դահլիճի արդիականացումը, արդյունքում այժմ ունենք ժամանակակից բազմաֆունկցիոնալ դահլիճ, որը կարող է օգտագործվել ինչպես գիտական, այնպես էլ մշակութային միջոցառումների անցկացման համար:

Ակադեմիայի ընդհանուր ժողովի հարգելի մասնակիցներ: Ելույթի վերջում ուզում եմ տեղեկացնել, որ այս տարի՝ հոկտեմբերի 12-ին և 13-ին, նշվելու է Գիտությունների ազգային ակադեմիայի հիմնադրման 80-ամյա հոբելյանը, ինչի համար ստեղծված է հանձնաժողով ԿԳՄՍ նախարար տիկին Ժաննա Անդրեասյանի գլխավորությամբ: Արդեն հոբելյանական միջոցառումներին մասնակցելու համաձայնություն ենք ստացել մի քանի տասնյակ եվրոպական և ԱՊՀ երկրների ակադեմիաներից և խոշոր գիտաարտադրական և գիտահետազոտական կազմակերպություններից: Ակնկալում ենք նաև Ձեր ակտիվ մասնակցությունը ՀՀ ԳԱԱ-ի հոբելյանական միջոցառումներին:

(*Խմբ. կողմից — ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Ա. Սաղյանի զեկուցումն ուղեկցվում էր սլայդների ցուցադրությամբ, ինչն առավել հետաքրքիր և բովանդակալից դարձրեց ասելիքը: Հաշվետու զեկուցումը տպագրվում է մասնակի կրճատումներով*):

Տարեկան ժողովի ընթացքում ՀՀ ԳԱԱ 2022 թ. գիտակազմակերպական գործունեության մասին զեկուցեց ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս-քարտուղար, թղթակից անդամ Արթուր Իշխանյանը:

Նա նշեց, որ ԳԱԱ նախագահության նիստերում ընտրվել և վերընտրվել են 20 գիտական կազմակերպությունների տնօրեններ: Հաստատվել են «ՀՀ ԳԱԱ տեղեկագիր. Ֆիզիկա» հանդեսի գլխավոր խմբագիր և ՀՀ ԳԱԱ «Ֆիզիկայի հայկական հանդես»-ի գլխավոր խմբագրի ժամանակավոր պաշտոնակատար, նշանակվել է ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտական ղեկավար:

2022 թվականին ականավոր կենսաբան, Նոբելյան մրցանակի դափնեկիր, պրոֆեսոր Արդեմ Սարգսի Փաթափուտյանն ընտրվել է ԳԱԱ պատվավոր անդամ:

ՀՀ ԳԱԱ բաժանմունքներում մշտապես քննարկվել են գիտական աշխատանքների արդյունավետության բարձրացման, կիրառական նշանակություն ունեցող ուսումնասիրությունների ընդլայնման, գիտական կազմակերպությունների աշխատանքի գնահատման հարցերը: Քննարկվել են բաժանմունքների բարեփոխումների հնարավոր ուղղությունների հարցերը: Լսվել և ընդունվել են որոշումներ ինստիտուտների ներքին կառուցվածքի օպտիմալացման՝ գործող գիտական լաբորատորիաների և խմբերի լուծարման, միավորման, խոշորացման և նորերի ստեղծման հարցերի վերաբերյալ: Շարունակաբար քննարկվել են ինստիտուտների միջև հնարավոր միջառարկայական հետազոտություններ իրականացնելու, բուհերի համապատասխան ամբիոնների հետ համագործակցելու հարցերը:

Ակադեմիան անդրադարձել է ՀՀ կառավարությունից և վերադաս մարմիններից ստացված բոլոր փաստաթղթերին, ներկայացրել է իր առաջարկություններն ու դիտողությունները: Հատուկ ուշադրությամբ և մանրամասն քննարկվել են բարձրագույն կրթությանը, գիտությանը, երկրի պաշտպանությանը,

առաջավոր տեխնոլոգիաներին, գիտության ֆինանսավորմանն առնչվող օրենսդրական և իրավական ակտերի նախագծերը, և ներկայացվել են համապատասխան դիտողություններ և առաջարկություններ:

ՀՀ ԳԱԱ տարեկան ժողովին ելույթ ունեցավ ՀՀ նախագահ Վահագն Խաչատուրյանը*: Նա մասնավորապես նշեց. «Հայաստանի զարգացման ուղին պայմանավորված է գիտական ներուժն օգտագործելով: Եթե մենք ուզում ենք աշխարհում ունենալ մեր տեղը, միայն գիտության շնորհիվ կարող ենք դա անել: Կարևոր է հասկանալ՝ ինչ գիտություն ենք ուզում: Այսօրվա տնտեսության զարգացման գործում մեծ խնդիր ունենք գիտահետազոտական ինստիտուտների բացակայության, օրինակ՝ ռազմարդյունաբերության: Մենք պետք է ունենանք լուրջ գիտահետազոտական բազա՝ ռազմարդյունաբերություն ունենալու համար: Ակադեմիան իր յուրահատուկ դերն ունի և շարունակելու է ունենալ: Մենք ուզում ենք, որ ակադեմիան ավելի արդյունավետ աշխատի, այլ կարծիք չկա: Մենք շատ լավ հասկանում ենք, որ ունենք այդ հնարավորությունը, բազան, միտքը և պետք է օգտագործենք այն: Միջազգային մեր հանդիպումներում մենք հանդես ենք գալիս որպես մշակույթ և գիտություն կրող ժողովուրդ: Եկեք աշխատենք միասին»:*

Տարեկան ժողովի ժամանակ ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ Վեհարի Սաքանյանը *հանդես եկավ «Կենսատեխնոլոգիան բժշկության համար. քաղցկեղի թիրախավորված թերապիա» զեկուցմամբ:*

Ելույթներով հանդես եկան ՀՀ ԳԱԱ մոլեկուլային կենսաբանության ինստիտուտի տնօրեն Արսեն Առաքելյանը*, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի տնօրեն* Արսեն Բոբոխյանը*, ՀՀ ԳԱԱ Վիկտոր Համբարձումյանի անվան Բյուրականի աստղադիտարանի տնօրեն* Արեգ Միքայելյանը*, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն* Աշոտ Մելքոնյանը*, «Այբ» կրթական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահ, «Գիտուժ» նախաձեռնության անդամ* Արամ Փախչանյանը:

«ԳԻՏՈՒԹՅՈՒՆ», ԱՊՐԻԼ, № 4, 2023 Թ.

ՀՏԴ : 929:891.981.09Դևրիկյան

ՎԱՐԴԱՆ ԴԵՎՐԻԿՅԱՆ

59 տարեկանում անժամանակ ընդհատվեց ճանաչված գրականագետ, բանասիրական գիտությունների դոկտոր, ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի տնօրեն Վարդան Գևորգի Դևրիկյանի կյանքը:

Ծնվել է 1964 թ. մայիսի 18-ին Վանաձոր քաղաքում: Երևանի Ակ. Շիրվանզադեի անվ. թիվ 21 դպրոցն ավարտելուց հետո՝ 1981 թ., ընդունվել է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետ, 1986–1988 թթ. եղել է համալսարանի հայ գրականության ամբիոնի ասպիրանտ: 1989 թ. աշխատել է Մ. Մաշտոցի անվան Մատենադարանում: 1990–1992 թթ. եղել է «Լուսավորիչ» թերթի գլխավոր խմբագիրը:

Մասնակցել է Արցախյան պատերազմին: 1994 թ. մայիսի 28-ին պարգևատրվել է ՀՀ «Մարտական խաչ» երկրորդ աստիճանի շքանշանով: Երկրապահ կամավորական միության կողմից պարգևատրվել է «Սպարապետ Վազգեն Սարգսյան» շքանշանով (2014 թ.), «Գարեգին Նժդեհ» (2014 թ.), «Վաչագան Բարեպաշտ» մեդալներով (2018 թ.) և այլն: ՀՀ մշակույթի նախարարության կողմից պարգևատրվել է «Գրիգոր Նարեկացի» հուշամեդալով: Եղել է ՀՅԴ անդամ (1991–1998 թթ.): 2012–2023 թթ. Հայաստանի գրողների միության անդամ էր:

1993–2009 թթ. աշխատել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում՝ նախ որպես «Էջմիածին» ամսագրի փոխխմբագիր (1993–1999 թթ.), ապա՝ խմբագիր (2002–2009 թթ.), միևնույն ժամանակ եղել է Մայր Աթոռի Ձեռագրատան պատասխանատուն (1997–2009 թթ.):

2009 թ. աշխատել է ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում՝ հայ հին գրականության բաժնում որպես ավագ գիտաշխատող, ապա՝ բաժնի վարիչ, 2009 թ. դեկտեմբերից՝ գիտական գծով փոխտնօրեն, 2015–2023 թթ.՝ ինստիտուտի տնօրեն:

1996 թ. պաշտպանել է թեկնածուական՝ «Ղևոնդ Ալիշանը և հայ հին գրականությունը», 2013 թ.՝ դոկտորական՝ «Հայ միջնադարյան գանձերը և «Գանձարան» ժողովածուն» թեմաներով:

Աշխատանքային գործունեության բերումով տարիներ շարունակ կամրջելով երկրի երեք կարևորագույն հաստատությունները՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը, Մ. Մաշտոցի անվան Մատենադարանը, Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտը, Վ. Դևրիկյանը բազմաթիվ հիմնարար ծրագրեր է իրականացրել նաև տարբեր բուհերի, թանգարանների, արտասահմանյան գիտական կենտրոնների հետ: Զբաղվել է հայ միջնադարյան գրականության միջազգային կապերով՝ Գրականության ինստիտուտում նախաձեռնելով «5-

18-րդ դարերի հայկական աղբյուրները եվրոպական երկրների մասին» մատենաշարը, ուր ներկայացվում են հայ միջնադարյան գրականության մեջ եվրոպական տարբեր երկրների մասին հայտնված տեղեկությունները ու նկարագրությունները:

Վ. Դերիկյանը նախագահել է Գրականության ինստիտուտում գործող մասնագիտական խորհուրդը, ընդգրկված է եղել տարբեր գիտական կենտրոնների գիտխորհուրդների կազմում, քննական հանձնաժողովներում: Գիտական պարբերականների խմբագրական խորհուրդների անդամ էր, բազում գրքերի խմբագիր:

Կարճատև կյանքի ընթացքում գրականագետը հեղինակել է 60-ից ավելի գիտական հոդվածներ, 5 տասնյակ գրքեր՝ տարբեր լեզուներով՝ հայերեն, անգլերեն, ռուսերեն, ֆրանսերեն, ռումիներեն:

Վ. Դերիկյանի պատկառելի գիտական ժառանգությունն աչքի է ընկնում աղբյուրների քաջիմացությամբ, մտքի փաստարկվածությամբ, միջնադարյան ձեռագրերում սփռված բազմաբնույթ նյութը գիտական թեմատիկ դասակարգման ենթարկելու, տիպաբանական հատկանիշները վեր հանելու մասնագիտական վարպետությամբ, ընտրված դիպուկ բնաբաններով և պատկերավոր, բայց միևնույն ժամանակ գիտական խորագրերով ասելիքի շեշտադրումն ընդգծելու կարողությամբ:

Իր մարդկային անմիջականությամբ, պարզությամբ, գրականագետին վայել ազնվությամբ ու գիտնականին ընորոշ համեստությամբ Վ. Դերիկյանը երբևէ իրեն վեր չդասեց իր գործընկերներից. հնարավորինս աջակցեց երիտասարդ գիտնականներին՝ թե՛ իբրև ատենախոսությունների ղեկավար, թե՛ պարզապես գիտական խորհրդատու: Երախտագիտության ու մեծարումի իր խոսքը մշտապես հղեց համալսարանական սերունդների առաջ ճանապարհ բացած իր ուսուցիչներին, այդ թվում՝ Հրանտ Թամրազյանին ու Էդվարդ Ջրբաշյանին, որոնց նվիրեց «Թումանյանը և հայոց հոգևոր ավանդույթը» գիրքը (2010 թ.):

Մարդու, գիտնականի և աննկուն սպայի արժեհամակարգի ձևավորմանը նպաստել էին ոչ միայն նրա հայրը՝ արձակագիր և հրապարակախոս Գևորգ Դերիկյանը, համալսարանական ուսուցիչները, այլև երկու այնպիսի մեծ անհատականություններ, ինչպիսիք են Ղևոնդ Ալիշանն ու Խրիմյան Հայրիկը:

«Ղևոնդ Ալիշանը և հայ հին գրականությունը» թեկնածուական ատենախոսության մեջ Վ. Դերիկյանը ցույց տվեց Ալիշանի գիտական-գեղարվեստական ողջ ժառանգության կապը հայ հին գրականության հետ՝ անդրադառնալով նաև Ալիշանի հրատարակչական գործունեությանը, տեղագրական հատորներին, հայ հին գրականության ալիշանյան գնահատությանը, «Նահապետի երգեր»-ում առկա միջնադարյան պատկերների, խորհուրդների ազգային վերաիմաստավորումներին և համաեվրոպական օսեականության հետ այդ երգերի ունեցած աղերսին: Հանգելով այն եզրակացության, որ Ալիշանի գիտական և գեղարվեստական գործերն ունեն ներքին միասնություն, Վ. Դերիկյանն ամենայն խնամքով մատնանշեց դրանց ստեղծմանը նպաստած գործոնները և ցույց տվեց ժամանակի առաջադրած խնդիրների արձագանքը Ալիշանի գեղարվեստական ստեղծագործության մեջ: Ակնհայտ է երիտասարդ

գրականագետի ձգտումը՝ արժևորել Ղ. Ալիշանի գրական, գիտական ժառանգությունը նախևառաջ ազգային-հասարակական առումով:

2020 թ. Վ. Դևրիկյանը մեծ խանդավառությամբ կազմակերպեց «Հայր Ղևոնդ Ալիշան–200» հոբելյանական գիտաժողովը՝ մեկ անգամ ևս հանրագումարի բերելու և գիտական շրջանառության մեջ դնելու հայագիտության ու բնական գիտությունների բնագավառում նշանակալից դեր կատարած Մխիթարյան գիտնականի ստեղծագործություններն ու աշխատությունները՝ ունենալով այն խորին համոզմունքը, որ՝ «Այսօրվա մեր դժվարին իրականության մեջ Հ. Ղ. Ալիշանի գիտական ժառանգության յուրաքանչյուր նոր էջի բացահայտում և մեկնաբանություն մեզ օգնելու է մեր ժողովրդի համար փոթորկուն այս շրջանում ավելի ճիշտ կողմնորոշվել հայոց անցյալի, ներկայի և ապագայի Ալիշանյան փորձառությամբ»[1]: Այդ համոզմունքից ելնելով էլ՝ սիրով ու ոգևորությամբ խմբագրեց Ղ. Ալիշանի եռահատոր «Նամականին»:

Նույն նվիրական զգացումներով Վ. Դևրիկյանն իր «Վասպուրականի արծիվը հայ գրականության անդաստանում» գրքում (2021 թ.) կերտեց Խրիմյան Հայրիկի՝ իր բնութագրմամբ՝ «մեծ հայի», «անվեհեր, հայ կյանքը հեղաբեկելու ոգով լցված, բայց և միաժամանակ ամեն հայի կյանքի համար դողացող, մեր ժողովրդի ներկայի և ապագայի համար պատասխանատվությամբ լցված» (էջ 5) գործչի կերպարը: Գրքում ցույց է տրվում, թե ինչպես են ժամանակի պատմահասարակական նախադրյալները ծնունդ տվել Խրիմյանի գրական, գեղարվեստական, հոգևոր կրոնական բնույթի գործերին, քարոզներին: Գրականագետը պարզ, մատչելի շարադրանքով կատարում է Խրիմյանի ստեղծագործությունների խորքային վերլուծություններ՝ մատնանշելով այդ երկերի կապը հայ միջնադարյան գրականության ավանդների հետ:

Արցախյան պատերազմի չսպիացող վերքը Վ. Դևրիկյանին մղեց զինադադարից տասը տարի անց՝ 2004 թ., տպագրելու, ապա քսան տարի անց՝ 2014 թ., վերահրատարակելու «Ձսկված և չավարտված պատերազմը» գիրքը՝ ներկայացնելով ժողովրդի կրած տառապանքի, հերոսության և հայրենիքի հանդեպ նվիրվածության բացառիկ դրվագները և յուրաքանչյուր էջում ընդգծելով իր խոնարհումը մեր նորօրյա պատմության, հայ զինվորի, հայկական բանակի ու ժողովրդի առջև:

Վարդանանց շարունակական ներկայությունը տեսնելով հայոց պատմության, այդպիսով և նոր շրջանի հայ հասարակական ու հոգևոր մշակութային կյանքում՝ Վ. Դևրիկյանը ձեռնամուխ է լինում գրելու «Վարդանանք և հայ երիտասարդությունը» գիրքը (2008 թ.)՝ ազգային-հոգևոր վերիմաստավորումների ենթարկված Վարդանանց տոնը՝ իբրև հայ զինվորության և հայրենիքի պաշտպանների տոն, ուղղակիորեն կապելով երիտասարդների հետ ու կարևորելով նրանց կողմից Վարդանանց տոնի խորհրդի ընկալումը, այն է՝ ճանաչել հոգևոր-իմանալի լույսը: Մի շարք գրքեր, ինչպես, օրինակ, «Սուրբ Էջմիածինը հայ մատենագրությունում» (2003 թ., համահեղինակությամբ՝ Հ. Քյոսեյանի), «Պայծառակերպությունը և Վարդավառի տոնը» (2006 թ.), «Խորհրդավոր ընթրիք. հայկական ավանդույթից մինչև Լեոնարդո» (2008 թ.),

---

[1] *«Հայր Ղևոնդ Ալիշան–200» հոբելյանական գիտաժողովի նյութերի ժողովածու, Երևան, 2021, էջ 7:*

«Սուրբ Էջմիածինը արվեստում» (2015 թ.), գրված են նաև այդ նպատակադրումով:

Երկար տարիներ Վ. Դևրիկյանի գիտական հետաքրքրությունների շրջանակում են եղել գանձերը՝ հոգևոր երգեր, որ կատարվել են եկեղեցական տոների ու արարողությունների ժամանակ և գրվել հենց այդ նպատակով: Նա խմբագրել և հրատարակել է Էլեոնորա Հարությունյանի «Մխիթար Այրիվանեցի. Գանձեր և տաղեր» գիրքը, 2 հատորով հրատարակել է Գրիգոր Խլաթեցու վերախմբագրած «Գանձարանը», «Հայ միջնադարյան գանձերը և «Գանձարան» ժողովածուն». ուսումնասիրություն, որ կատարվել է «Գանձարանի»՝ իր կազմած համեմատական ընագրի հիման վրա: Ավելի ուշ կազմել և հրատարակել է «Սրբոց տոներին նվիրված գանձարանային կանոնները» ժողովածուն (2020 թ.) Գրեթե չորսհարյուրամյա ճանապարհ անցած բազմաշերտ ժողովածուի ուսումնասիրությունները կարող էին իրականացվել միայն մասնագիտական բարձր պատրաստվածության դեպքում՝ Հին ու Նոր Կտակարանների, ազգային մատենագրության, Հայ եկեղեցու պատմության, մեկնողական գրականության փայլուն իմացությամբ:

Վ. Դևրիկյանը հայ միջնադարյան գանձերն իրենց գեղարվեստապատկերային առաձնահատկություններով և արծարծված հարցերի շրջանակով դիտարկում է հայ մշակույթի ընդհանուր համատեքստում, ցույց տալիս, որ կրոնաեկեղեցական ապրումների արտահայտություն լինելով՝ դրանք հարաբերվում են տվյալ դարաշրջանի հայ կյանքի, ազգային ակնկալիքների հետ, ուստի և «Գանձարան» ժողովածուի տարբեր խմբագրությունների առաջ դալը պայմանավորված չի եղել միայն ընագրաձեռագրային տարընթերցվածներով. էական ազդեցություն է գործել Հայ եկեղեցու ազգայնացման ընթացքը:

Պատմական զարգացման մեջ դիտարկելու, հաջորդող դարերի խորհրդաբանական մտածողության նոր շերտերը տեսանելի դարձնելու նպատակադրումով է գրականագետը կազմել նաև «Սրբալույս Մյուռոնը հայ մատենագրության մեջ (V–XIX դդ.)» ժողովածուն (2021 թ.)՝ նվիրական այն բարեմաղթանքով, որ «իր բազմաղարյան պատմության ամենաղժվարին պահերից մեկը ապրող հայ ժողովրդի համար նոր օրհնվելիք մյուռոնը դառնա միասնականության և ազգային համախմբվածության մյուռոն» (էջ 12): Ժողովածուն Վ. Դևրիկյանի ավելի քան երկու տասնամյակի որոնումների արդյունքն է, թանկ նվեր ոչ միայն հետազոտողների, այլև յուրաքանչյուր հայ մարդու համար: Ներժանրային դասակարգմամբ և թեմատիկ խմբավորումների շնորհիվ գրականագետը կարողացել է իրագործել առաջադիր խնդիրը՝ ցույց տալ Սբ. Մյուռոնին ընծայված ազգային-եկեղեցական «բացառիկ հարգության» ձևավորումը դարերի ընթացքում:

Վ. Դևրիկյանի կազմած բազմաբնույթ ժողովածուների մեջ առանձնանում է «Հայ մատենագիրները Հայոց Գրի և Թարգմանչաց մասին» գիրքը (2019 թ.), որ պատրաստվել է հայագետ Հակոբ Քյոսեյանի համահեղինակությամբ: Տքնաջան աշխատանքի շնորհիվ միայն հնարավոր էր գտնել գրերի գյուտին, Հայոց Այբուբենին, Սբ. Սահակին և Սբ. Մեսրոպին նվիրված բոլոր վկայակոչումները տպագիր աշխատություններից և ձեռագրերից, ապա խմբավորել ու դասակարգել, ծանոթագրությունների միջոցով տեղեկություններ հաղորդել, բացատրել դժվարընկալելի հատվածները, տալ մեկնաբանություններ, որոնք

ուղղորդում են ուսումնասիրողներին և դյուրին դարձնում նրանց աշխատանքը:

Մինչ այս ժողովածուն՝ Վ. Դերիկյանն սկսել էր հրատարակել հայկական տպագրությանը նվիրված իր հիմնարար աշխատությունները՝ «Հայ գիրքը աշխարհի խաչմերուկներում» եռագրությունը՝ «Վենետիկից Հռոմ (16-րդ դար)» (2012 թ.), «Լվովից Ամստերդամ (17-րդ դար)» (2014 թ.), «Սուրբ Ղազարից Սուրբ Էջմիածին (18-րդ դար)» (2016 թ.), ապա նաև «Ոսկան վարդապետ Երևանցի. կյանքը և տպագրական գործունեությունը» (2015 թ.), «Լվովի հայկական տպագրության 400-ամյակը» (2016 թ.) գրքերը:

Վ. Դերիկյանը, ով խորությամբ ուսումնասիրել էր հայ-հռոմեական դաշինքի գրական սկզբնաղբյուրները, հայ-հռոմեական պատմական և հոգևոր առնչությունները («Հայ ուխտավորները Հռոմում», 2016 թ.), արձանագրում է պատմական այն իրողությունը, որ XVI–XVII դդ. բոլոր ազատագրական պատվիրակները, չհաջողելով իրենց առաքելության մեջ, սկիզբ են դրել հայկական տպագրությանն այն գիտակցությամբ, որ ազատագրական նպատակներին կարող է ծառայել նաև գիրքը: Ուստի բոլոր առումներով պատճառաբանված է Վ. Դերիկյանի հետազոտման ելակետը՝ տպարանների գործունեությունը դիտարկել տվյալ դարերի հոգևոր-մշակութային համատեքստում:

Հայկական տպագրությանը նվիրված վերը նշված աշխատությունների մեջ Վ. Դերիկյանը հանգամանորեն նկարագրում է հրատարակված գրքերը, ընդհանրացնում և մատնանշում հայկական տպագրության յուրահատկությունները՝ մի կողմից հայ ձեռագրային ավանդներին հետևելը, մյուս կողմից եվրոպական գրքարվեստի ազդեցությունը կրելը: Ուսումնասիրությունների հիման վրա նա առաջ է քաշում կարևոր մի դիտարկում, որ առաջին հայ տպագրիչների կողմից մանրանկարչական արվեստին չդիմելը ոչ թե պետք է բացատրել նրանց արևմտյան կողմնորոշմամբ կամ մանրանկարչության ու Վերածնության արվեստների ոճական անհամատեղելիությամբ, այլ զուտ տեխնիկական պատճառներով:

Հայկական տպագրության ունեցած դերն ու նշանակությունը հայ գաղթաշխարհում նոր հայեցակետով է ընկալելի դառնում Վ. Դերիկյանի այն պարզաբանումից հետո, որ առաջին հրատարակությունները ստուգաբանվել են որպես հավաքական ամբողջություն՝ հայ մարդուն կապելով Մայր եկեղեցու հետ՝ հուշելով, օգնելով, որ հետևի ազգային եկեղեցական տոներին, հայրենական հիշատակներին: Հաջորդ հրատարակիչները շարունակել են Հակոբ Մեղապարտի ավանդները՝ պատգամելով հայրենակիցներին, որ իրենց ճանապարհներին իբրև լուսատու փարոս ունենան Հայոց աշխարհը:

Հայկական գրատպությանը նվիրված շարքն ամբողջանում է դստեր՝ ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի ասպիրանտ Շողակաթ Դերիկյանի հետ կատարած աշխատությամբ՝ «Սուրբ Էջմիածնի տպարանի հիմնումը և գործունեությունը 18-րդ դարում», որ հրատարակվել է 2022 թ. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում: Հեղինակները լուսաբանում են եկեղեցապատմական այն բոլոր գործոնները, որոնք պայմանավորել են Սբ. Էջմիածնի՝ տվյալ շրջանի հրատարակությունները, կատարել են գրքագիտական, արվեստագիտական հանգամանալից վերլուծություններ, գտել են մի քանի հրատարակությունների՝ Մաշտոցի անվան Մատենադարանում պահվող ձեռագիր օրինակները: Հետաքրքիր հայաց-

քով դիտարկելիս իբրև պատգամ են հնչում Վ. Դևրիկյանի խոսքերը՝ ամփոփված այս գրքում. «… ազգային մեծ ծրագրերի իրականացման համար ժամանակի նպաստավոր պայմաններից առավել հարկավոր է գաղափարի մտասևեռում՝ ուժերի անօրինակ լարմամբ, նվիրումով և ապագայի հանդեպ աներեր հավատով» (էջ 10):

Վ. Դևրիկյանի կյանքի ամեն վայրկյանը իմաստավորելու, նորանոր իրագործումներով ու արարումներով հարստացնելու մղումով անցավ իր համար նախասահմանված առաքելության ճանապարհը տաղանդավոր գիտնականը՝ թողնելով գիտագործնական նշանակություն ունեցող այնպիսի հիմնարար աշխատություններ, որոնք աղբյուր են միջգիտակարգային նոր հետազոտությունների համար:

ՀԵՐԻՔՆԱԶ ՈՐՍԿԱՆՅԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Վարդան Ալեքսանյան – Հովհաննես Դրասխանակերտցին հայոց պետականության գաղափարախոս կաթողիկոս 3
Արգիշտի Վարդանյան – Հայ-աղվանական զինակցությունը պարսկական տիրապետության դեմ (V դարի կեսին) 35
Վահան Բայբուրդյան – Քրդերի և Քրդստանի միջնադարյան շրջանի պատմության մի շարք հարցեր քննական լույսի ներքո.....53
Անի Ոսկանյան – Ադանայի նահանգի հայերի 1915 թ. բնաջնջումը և ունեզրկումը 65
Գայանե Մախմուրյան –Ֆրանսիական քաղաքականությունը Հայաստանի Հանրապետությունում և Անդրկովկասում 1920 թվականին (անգլ.) 80
Մարիամ Հովսեփյան – Պոլսահայ պարբերականները «Նեմեսիս» գործողության մասին (1920–1922 թթ.) 100
Վահե Սարգսյան – Վրաստանի հայ բնակչության դինամիկան 1959–2014 թթ. (ըստ պաշտոնական մարդահամարների տվյալների) 114

ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Ալինա Ղարիբյան – Արտատեր Պառավի կերպարը «Սասնա ծռեր» էպոսում 128
Քնար Հարությունյան – Գրիգոր Բ. Վկայասերի ձեռագրական ժառանգությունը (ըստ մատենագրական և հիշատակարանային տեղեկությունների) 146
Պետրոս Դեմիրճյան – Գոյության առեղծվածի խնդիրը Եղիա Տեմիրճիպաշյանի մտածողության համակարգում 164
Անուշավան Զաքարյան – Դավիթ Անանուն և Հովհաննես Թումանյան. գրական-հասարակական առնչություններ.....175
Լալա Գրքիկյան – Ժամանակակից հայերենի՝ խնդրառությամբ երկարժույթ չեզոք սեռի բայերը 202

ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Էմմա Պետրոսյան – Ուրարտական պետության կանանց բրոնզե գոտու իմաստաբանությունը (ռուս.).....213
Անի Սարատիկյան – Հովսեփ Աբովյանցն ու նրա ջրաշինարարական գործունեությունը.....232

ԱՐՎԵՍՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Արմինե Պետրոսյան – Տղամարդու կերպարը Հմայակ Հակոբյանի դիմանկարներում 241

ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ

Արեգ Վարդանյան – «Բյուզանդահայի տեսիլ»-ն ու դրա առնչությունները հայ և բյուզանդական վախճանաբանության հետ 255

ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ

Համո Սուքիասյան, Զենոնի Թամարյան – Վրաստանի արտգործնախարարության տեղեկագիրը՝ 1919 թ. Զանգեզուրի պատկանելության վերաբերյալ 274

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Եվա Մնացականյան – Հովհաննես Թումանյանի կյանքի և ստեղծագործության տարեգրություն. հ. I (1869–1908), հ. II (1909–1914), հ. III (1915–1919), հ. IV (1920–1923).....285

Գևորգ Գյուլումյան – Վայոց ձոր. պատմամշակութային ժառանգության դրվագներ.....293

Անուշավան Զաքարյան – Դավիթ Գասպարյան. Եղիշե Չարենցի կյանքը և ժամանակը 305

Արմեն Շ. Սարգսյան – Սերգեյ Վարդանյան. Բանահյուսական պատումի միջավայրը (կրոնափոխ համշենահայերի մի զվարճապատումի տարբերակները) 315

Էդուարդ Զոհրաբյան – Կարեն Խաչատրյան. ԽՍՀՄ կազմավորումը և Հայաստանը: Գործընթացը: Արդյունքներ (ԽՍՀՄ կազմավորման 100 ամյակին) 318

ՄԵՐ ԵՐԱԽՏԱՎՈՐՆԵՐԸ

Ռոբերտ Բաղդասարյան – Կարեն Միքայելյան (ծննդյան 140-ամյակի առթիվ).....321

Սուրեն Ավետիսյան – Հրաչիկ Սիմոնյան (ծննդյան 95-ամյակի առթիվ) 327

ՄԵՐ ՀՈԲԵԼՅԱՐՆԵՐԸ

Յուրի Միքայելի Սուվարյան (ծննդյան 80-ամյակի առթիվ) 332

Վարդան Դևրիկյան – Կարեն Մաթևոսյան (ծննդյան 65-ամյակի առթիվ).....334

ԳԻՏԱԿԱՆ ԿՅԱՆՔ

Եվա Մնացականյան – Հովհաննես Թումանյանի մահվան 100-րդ տարելիցին նվիրված հանրապետական գիտաժողով.....342

Համո Սուքիասյան, Գայանե Ղազարյան – Գիտաժողով՝ նվիրված Խորհրդային Հայաստանի պատմության «սպիտակ էջերին» 344

ԼՐԱՏՈՒ

ՀՀ ԳԱԱ տարեկան ընդհանուր ժողովը.....347
Հերիքնազ Որսկանյան – Վարդան Դևրիկյան 364

СОДЕРЖАНИЕ

ИСТОРИЯ

Вардан Алексанян – Ованнес Драсханакертци – католикос-идеолог армянской государственности ……...…3
Аргишти Варданян – Армяно-алуанкское союзничество против персидского господства (в середине V века) …….....35
Ваан Байбуртян – Некоторые вопросы истории курдов и Курдистана средневековой эпохи в критическом свете ……53
Ани Восканян – Истребление армян и экспроприация их собственности в 1915 году в провинции Адана ……65
Гаянэ Махмурян – Французская политика в Республике Армения и Закавказье в 1920 г. (на англ. яз.)……...80
Мариам Овсепян – Армянские газеты Константинополя об операции «Немесис» (1920–1922 гг.) …….100
Ваэ Саркисян – Динамика армянского населения Грузии за 1959– 2014 гг. (по данным официальных переписей) ……...114

ФИЛОЛОГИЯ

Алина Гарибян – Образ хозяйки поля-старухи в эпосе «Сасна црер»……...128
Кнар Арутюнян – Рукописное наследие Григора II Вкаясера (по литературным и колофонным сведениям) …….146
Петрос Демирчян – Проблема загадки бытия в системе мышления Егии Темирчипашяна ……..164
Анушаван Закарян – Давид Ананун и Ованес Туманян: литературно-общественные связи …….175
Лала Гркикян – Двухвалентные непереходные глаголы, принимающие косвенное дополнение, в современном армянском языке ……202

АРХЕОЛОГИЯ

Эмма Петросян – Семантика женского бронзового пояса государства Урарту (на русск. яз.) ……213

Ани Саратикян – Овсеп Абовянц и его водостроительная деятельность ……232

ИСКУССТВОВЕДЕНИЕ

Армине Петросян – Мужской образ в портретах Амаяка Акопяна ……...241

ОБСУЖДЕНИЯ

Арег Варданян – «Армяно-византийское откровение» и его связь с византийской и армянской эсхатологическими традициями ……255

ПУБЛИКАЦИИ

Амо Сукиасян, Дженни Тамарян – Справка Министерства иностранных дел Грузии 1919 г. относительно принадлежности Зангезура ….……274

РЕЦЕНЗИИ

Ева Мнацаканян – Летопись жизни и творчества Ованеса Туманяна: т. I (1869–1908), т. II (1909–1914), т. III (1915–1919), т. IV (1920–1923 гг.).....285
Геворг Гюлумян – Изучение историко-культурного наследия Вайоц-дзора …….293
Анушаван Закарян – Давид Гаспарян: Жизнь и время Егише Чаренца ……...305
Армен Ш. Саргсян – Сергей Варданян: Среда фольклорного повествования (варианты одной сатирической сказки об исламизированных амшенских армянах) ……...315
Эдуард Зограбян – Карен Хачатрян. Образование СССР и Армения. Процесс. Итоги (к 100-летию образования СССР) ……318

НАШИ ЗАСЛУЖЕННЫЕ ДЕЯТЕЛИ

Роберт Багдасарян – Карен Микаелян (к 140-летию со дня рождения).....321
Сурен Аветисян – Грачик Симонян (к 95-летию со дня рождения) 327

НАШИ ЮБИЛЯРЫ

Юрий Михайлович Суварян (к 80-летию со дня рождения) 332
Вардан Деврикян – Карен Матевосян (к 65-летию со дня рождения).....334

НАУЧНАЯ ЖИЗНЬ

Ева Мнацаканян – Республиканская научная конференция, посвященная 100-летней годовщине смерти Ованеса Туманяна ……342
Амо Сукиасян, Гаянэ Казарян – Научная конференция, посвященная «белым страницам» истории Советской Армении.....344

ХРОНИКА

Общее годичное собрание НАН РА.....347
Ерикназ Ворсканян – Вардан Деврикян.....364

CONTENTS

HISTORY

Vardan Alexanyan – Hovhannes Draskhanakertsi, Catholicos-Ideologist of Armenian statehood …….3
Argishti Vardanyan – Armenian-Caucasian Albanian alliance against Persian rule (In the middle of the V century) ……..35
Vahan Baibourdian – Several issues shedding light on the history of Kurds and Kurdistan in the medieval period ……53
Ani Voskanyan – Extermination of Armenians and expropriation of their property in Adana Province in 1915 ……65
Gayane Makhmourian – The French policy in the Republic of Armenia and Transcaucasia in 1920 (in Eng.) ……...80
Mariam Hovsepyan – Armenian newspapers of Constantinopole on "Nemesis" operation (1920–1922) …….100
Vahe Sargsyan – Dynamics of the Armenian population of Georgia in 1959 – 2014 (According to the official census data) …….114

PHILOSOPHY

Alina Gharibyan – The image of the Mistress of the field - the Old woman in the epic "Sasna Tsrer" ……128
Knar Harutyunyan – The manuscript heritage of Grigor II Vkayaser (According to the literary and colophon data) ……..146
Petros Demirchyan – The problem of the mystery of existence in the thinking system of Yeghia Temirchipashyan ……..164
Anushavan Zakaryan – David Ananun and Hovhannes Tumanyan: Litarary and public relations …….175
Lala Grkikyan – Bivalent intransitive verbs that take indirect object in Modern Armenian ……...202

ARCHAEOLOGY

Emma Petrosyan – Semantics of the women's bronze belt of the Kingdom of Urartu (in Russ.)……...213
Ani Saratikyan – Hovsep Abovyants and his water construction activities ……..232

ART

Armine Petrosyan – Male image in the portraits of Hmayak Hakobyan …….....241

DISCUSSIONS

Areg Vardanyan – The "Armenian-Byzantine Apocalypse" in the context of Byzantine and Armenian eschatological traditions 255

PUBLICATIONS

Hamo Sukiasyan, Jenny Tamaryan – Reference of the Ministry of Foreign Affairs of Georgia over the ownership of Zangezur, 1919……..274

REVIEWS

Yeva Mnatsakanyan – Chronicle of the life and works of Hovhannes Tumanyan: v. I (1869–1908), v. II (1909–1914), v. III (1915–1919), v. IV (1920–1923).....285
Gevorg Gyulumyan – Study of the historical and cultural heritage of Vayots Dzor …….293
Anushavan Zakaryan – Davit Gasparyan: Life and period of Yeghishe Charents……305
Armen Sh. Sargsyan – Sergey Vardanyan: Medium of folk storytelling (versions of a satirical tale about Islamized Hamshen Armenians) ……..315
Eduard Zohrabyan – Karen Khachatryan: Formation of the USSR and Armenia. Process. Results (to the 100th annivesary of the formation of the USSR) ……318

OUR HONOURED SCHOLARS

Robert Bagdasaryan – Karen Mikaelyan (on the occasion of his 140th birthday).....321
Suren Avetisyan – Hrachik Simonyan (on the occasion of his 95th birthday) 327

OUR JUBILEES

Yuri Mikayel Suvaryan (on the occasion of his 80th birthday) ……332
Vardan Devrikyan – Karen Matevosyan (on the occasion of his 65th birthday) ……..334

SCIENTIFIC LIFE

Yeva Mnatsakanyan – Republican scientific conference dedicated to the 100th of the death anniversary of Hovhannes Tumanyan 342
Hamo Sukiasyan, Gayane Ghazaryan – Scientific conference dedicated to the "white pages" of the history of the Soviet Armenia.....344

NEWS

RA NAS Annual General Meeting.....347
Heriknaz Vorskanyan – **Vardan Devrikyan** 364

Հայերեն բաժնի խմբագիրներ	Թամար Զաքարյան
	Լիանա Օհանյան
Ռուսերեն բաժնի խմբագիր	Կարինե Ալեքսանյան
Հայերենի սրբագրիչ	Աղավնի Շահինյան
Անգլերենի խմբագիր	Մարինե Ժամկոչյան
Համակարգչային ձևավորում և էջադրում	Գոհար Հովհաննիսյան

Редакторы армянского отдела	Тамар Закарян
	Лиана Оганян
Редактор русского отдела	Карине Алексанян
Корректор армянского отдела	Агавни Шагинян
Редактор английского отдела	Марине Жамкочян
Компьютерный дизайн и пагинация	Гоар Оганнисян

Editors of Armenian segment	Tamar Zakaryan
	Liana Ohanyan
Editor of Russian segment	Karine Aleksanyan
Proofreader of Armenian segment	Aghavni Shahinyan
Editor of English segment	Marine Zhamkochyan
Computer design and pagination	Gohar Hovhannisyan

Խմբագրության հասցեն՝ 0019, Երևան-19, Մարշալ Բաղրամյան պող. 24-գ, հեռ. (010)581872
Адрес редакции: 0019, Ереван-19, пр. Маршала Баграмяна, 24 г, тел. (010)581872
Address: 24G Marshal Baghramian av., 0019, Yerevan, Armenia, tel. (010)581872

Հանդեսի պաշտոնական կայքէջը՝ http://academhistory.am/hy/պատմաբանասիրական–հանդես.html
Официальный сайт журнала: http://academhistory.am/hy/պատմաբանասիրական–հանդես.html
Official site of the journal: http://academhistory.am/hy/պատմաբանասիրական–հանդես.html

Հանդեսի էլեկտրոնային հասցեն՝ patmhandes@rambler.ru, patmhandes@yahoo.com
Электронная почта журнала: patmhandes@rambler.ru, patmhandes@yahoo.com
E-mail of the journal: patmhandes@rambler.ru, patmhandes@yahoo.com

---

Հրատ. պատվեր № 1253
Ստորագրված է տպագրության 07. 07. 2023 թ.:
Տպագրական 23,75 մամուլ: Թուղթ № 1, 70x100:
Տպաքանակը՝ 250:

ՀՀ ԳԱԱ տպարան, 0019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24:

Изд. заказ № 1253
Подписано к печати 07. 07. 2023 г.
Печ. 23,75 л. Бумага № 1, 70x100.
Тираж −250.

Типография НАН РА, 0019, Ереван, пр. Маршала Баграмяна, 24.